Գ. Ե. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼԱՆԿ-ԹԱՄՈՒՐԻ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆ ՑԵՂԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

Նվիրում եմ ծնողներիս՝

ՄԱՐԻԱՄ և ԵՂԻՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐԻ

բարի հիշատակին

АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДОГОГИЧЕСКИЙ
ИНСТИТУТ им. Х. АБОВЯНА

Г. Е. КИРАКОСЯН

АРМЕНИЯ В ПЕРИОД НАШЕСТВИЙ ЛЕНК-ТИМУРА И ТУРКМЕНСКИХ ПЛЕМЕН (1386—1500 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН 1997

9(47.925)
Կ-53
3024

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Ե. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼԱՆԿ-ԹԱՄՈՒՐԻ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆ ՑԵՂԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1386—1500 թթ.)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1997

ԳՏՀ 941(479.25)
ԳՄԴ 63 . 3(2Հ)43
Կ—530

Հրատարակության են երաշխավորել Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Հայոց պատմության և ընդհանուր պատմության ամբիոնները:

Պատասխանատու խմբագիր՝ ակադեմիկոս Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

Գրախոս՝ պատմ. գիտ. թեկնածու Ա. Խ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Գ. Ե.

Կ—530 Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386—1500 թթ.)։ —Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 1997, 369 էջ:

Մենագրությունը նվիրված է հայոց պատմության միջնադարի քիչ ուսումնասիրված շրջանին:

Մատենագրական, վիմագրական և այլ աղբյուրների համադիր քննությամբ տրված են դեպի Հայաստան Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների պատմությունը: Ճշգրտված ու շարադրված է խնդրո առարկա շրջանի հայկական իշխանական տների պատմությունը:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների և Հայաստանի միջնադարի պատմությամբ զբաղվողների համար:

0503020913
Կ——————————Ձնայտ. ԳՄԴ 63 . 3(2Հ)43
703 (02)—97

ISBN 5-8080-0323-7

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1997

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայաստանի XIV դարի վերջին քառորդի և XV դարի ժամանակահատվածի պատմության ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում և խիստ արդիական նշանակություն ունի ինչպես քաղաքական, այնպես էլ պատմագիտական առումով: Մոնղոլ-թաթարական և կարա-կոյունլու ու ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի ամայացնող արշավանքների և ծանր հարկային քաղաքականության հետևանքով Հայաստանում վերելք ապրող ֆեոդալական հարաբերությունները մտան փակուղի: Այդ արշավանքների ընթացքում Հայաստանում հաստատված քոչվորական տնտեսաձևով ապրող նվաճողներին քիչ էին մտահոգում հողամշակման և տնտեսության զարգացման հարցերը: Նրանք առավելապես զբաղված էին ավարով ու թալանով և մեծ քանակությամբ անասնահոտեր պահելով, իսկ վերջինիս համար անհրաժեշտ էին ընդարձակ արոտավայրեր: Այս ամենի հետևանքով Հայաստանում ոչ միայն երկար ժամանակով արգելակվեց ֆեոդալական հարաբերությունների բնականոն ընթացքը, այլև մի քանի դարով հետ տարվեց:

Երկրի տնտեսական ծանր կացությունն իր բացասական հետևանքներն ունեցավ քաղաքական հարաբերություններում, մշակութային ու արհեստագործության բնագավառներում:

Երկրի քաղաքական կյանքում կարևոր դեր խաղացող իշխանական տներից մի քանիսը տնտեսապես ու ռազմական առումով թուլացան և կորցրեցին իրենց նախկին դիրքն ու ազդեցությունը:

XIV—XV դարերում Հայաստանն ապրում էր մի դժնդակ ժամանակաշրջան, երբ ժողովրդին մտահոգողը իր ֆիզի-

կական գոյության ապահովումն էր: Զանգվածային ավերումների, կողոպուտների ու սպանությունների տրամաբանական հետևանքը եղավ հայոց ստեղծագործ ոգու ժամանակյա թուլացումը: Հայոց պատմագրության մեջ չստեղծվեցին ամբողջական գործեր, բացառությամբ Թ. Մեծոփեցու աշխատության, իսկ ժամանակի գրիչները միայն խիստ համառոտ արձանագրում էին կատարված իրադարձությունները:

Համատարած քայքայման ու ավերումների այս ողբերգական ժամանակաշրջանում հայ ժողովուրդը չհրաժարվեց իր անկախության համար պայքարի գաղափարից: Այդ պայքարը մերթ դրսևորվում էր նվաճողներին խիստ անհավասար պայմաններում ցույց տված դիմադրությամբ, մերթ ժամանակի հայ հեղինակների կողմից արծարծված ազատագրական գաղափարներում:

Հայոց կողմից նվաճողներին ցույց տրված դիմադրության մասին են վկայում տարբեր վայրերում գրված հիշատակարանները: Դժբախտաբար, դիմադրության այդ փորձերը չկարողացան վերածվել համաժողովրդական շարժման:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ եկեղեցու գործիչները հարմար էին գտնում հայ եկեղեցու համագործակցությունը կարա-կոյունլուների պետության հետ, հույս ունենալով այդ ճանապարհով վերականգնել հայոց պետականությունը: Այդպիսի մտայնություն էին արտահայտում Սյունյաց հոգևոր դասի աչքի ընկնող ներկայացուցիչներ Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին, Վասպուրականի հոգևոր ներկայացուցիչներից՝ Թովմա Մեծոփեցին, իսկ էջմիածնի հոգևորականության այդ միտումի մասին է խոսում 1441 թ. կաթողիկոսական աթոռը Սսից էջմիածին տեղափոխելու փաստը: Եթե թվարկված շրջանների հայ ֆեոդալական տների ներկայացուցիչները՝ Ռուստամ Օրբելյանը, Սմբատ Սեֆիդինյանը և այլք քայլերի էին դիմում Սյունիքում, Արարատյան երկրում և Վասպուրականում հայոց պետականությունը վերականգնելու ուղղությամբ, և ժողովրդական զանգվածները գրեթե անհաղորդ էին այդ իրադարձություններին, ապա,

նույնիսկ այս դաժան ժամանակներում, Հայաստանում կային լեռնային շրջաններ, ուր ժողովրդական զանգվածները իրենց իշխանների հետ շարունակում էին մարտնչել ազատության համար: Այդ վայրերից էին Սասունը, Արցախը, Զեյթունը, Ոզմը, Լոռին և այլն:

Ցավ ի սիրտ պետք է արձանագրել, որ այդ շարժումներն արտաքին ու ներքին գործոնների հետևանքով չիրագործեցին իրենց խնդիրը, և հայ ազատագրական ու քաղաքական միտքը մինչև Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը շարունակում էր դեգերել և ուղիներ որոնել հայոց անկախ պետականությունը կերտելու համար: Այսօր, երբ իր ընթացքի մեջ է անկախ պետականության կերտումը, այդ գործընթացին մասնակից քաղաքական կուսակցությունների ու գործիչների սրբազան պարտքն է դաս առնել անցյալի սխալներից և ժողովրդի ու պատմության առջև պատասխանատվության մեծ զգացումով մոտենալ անկախ պետականության հիմնադրմանը:

Ձեռնամուխ լինելով խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրությանը, մեր խնդիրն ենք համարել հայ և օտարալեզու սկզբնաղբյուրների, թեկուզև կցկտուր, հաղորդած տեղեկությունների հիման վրա շարադրել դեպի Հայաստան Լանկ-Թեմուրի, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի արշավանքների, նրանց ծանր հետևանքների, նվաճողների վարած դաժան հարկային քաղաքականության պատմությունը: Աշխատել ենք, սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում, շարադրել քննվող ժամանակաշրջանի հայկական իշխանական տների պատմությունը, իսկ առանձին վիճահարույց խնդիրները լուսաբանելու նպատակով պատմական էքսկուրս ենք կատարել դեպի իշխանական տների պատմության խորքերը:

Հայ իշխանական տների պատմությունը շարադրելիս շոշափել ենք օտար տիրապետողների հետ նրանց փոխհարաբերությունների, երկրի քաղաքական, տնտեսական ու մշա-

կուլտային կյանքում կատարած ներդրումների գնահատման հարցերը։

Այս ամենին համընթաց կատարել ենք ժամանակագրական, աղբյուրագիտական ու բանասիրական բնույթի ճշգրտումներ։

Աշխատության ծավալը նկատի ունենալով չենք անդրադարձել նվաճողների վարած հարկային քաղաքականության, հարկերի տեսակների, հողատիրության ձևերի և սոցիալ-տնտեսական հարցերի պատմությանը։ Այդ խնդիրները կքննարկվեն առանձին։ Նյութերի խիստ սակավության պատճառով համառոտ է տրվել Արևմտյան Հայաստանի իշխանությունների պատմությունը։

Քննվող ժամանակաշրջանի հայոց պատմության խնդիրները վաղուց գտնվել են հայոց պատմությամբ զբաղվողների տեսադաշտում, և, պետք է ասել, քիչ գործ չի կատարվել այդ բնագավառում, սակայն նոր աշխատությունների հրապարակ գալը, սկզբնաղբյուրների նորովի մեկնաբանումն ու գիտական շրջանառության մեջ դնելն անհրաժեշտություն են առաջացնում նորովի քննարկել մի շարք խնդիրներ։

Այսուհանդերձ, հեռու ենք այն մտքից, թե ամբողջապես սպառել ենք հետազոտվող ժամանակաշրջանի պատմության խրթին հիմնահարցերը։ Դրանք ամբողջական կդառնան այն ժամանակ, երբ գիտական շրջանառության մեջ կդրվեն խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող բոլոր սկզբնաղբյուրները։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

XIV—XV դարերի հայոց պատմությանը վերաբերող սկզբնաղբյուրները բազմաբովանդակ են և հնկայական նյութ են պարունակում քննարկվող ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ։ Մենք հիմնականում օգտվել ենք հայկական աղբյուրներից՝ պատմագրական երկեր, վիմական արձանագրություններ, ձեռագրերի հիշատակարաններ, մանր ժամանակագրություններ և այլն, ինչպես նաև հայերեն և ռուսերեն թարգմանված օտարալեզու աղբյուրներից։

Հայաստանի XIV դ. վերջին քառորդի և XV դ. առաջին կեսի պատմության ուսումնասիրության համար բացառիկ կարևոր սկզբնաղբյուր են Թովմա Մեծոփեցու պատմական երկերը[1]։ Թովմա Մեծոփեցին ծնվել է XIV դ. երկրորդ կեսին Վասպուրական աշխարհի Քաջբերունյաց գավառի Աղխավիտ գյուղում։ Սկզբնական կրթությունը ստացել է Սուխարա վանքում, ապա նշանավոր փիլիսոփա Գրիգոր Տաթևացու մոտ՝ Մեծոփա վանքում։ Վերջինիս կողմից ձեռնադրվելով վարդապետ, Թ. Մեծոփեցին մոտ 35 տարի զբաղվել է ուսուցչությամբ և դասախարակել ու կրթել է բազմաթիվ աշակերտների։ Իր «Հիշատակարանում» նա մանրամասն տալիս է հայոց կաթողիկոսական աթոռը 1441 թ. Սսից Էջմիածին տեղափոխելու պատմությունը, որի նախաձեռ-

1 Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ, Փարիզ, 1860, Թովմա Մեծոբեցի, «Յիշատակարան», Թիֆլիս, 1892։

նողներից է եղել նաև ինքը: Հայաստանի XIV դ. վերջի և XV
դ. առաջին կեսի պատմությունն առանց Թովմա Մեծոփեցու
«Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» աշխա-
տության դժվար է ամբողջապես ուսումնասիրել:
Լինելով դեպքերին ժամանակակից, Մեծոփեցին ակա-
նատեսի կամ ականջալուրի ճշտությամբ նկարագրել է Լանկ-
Թամուրի արշավանքները և նրա գործադրած գազանություն-
ները հայ ժողովրդի նկատմամբ, ապա մանրամասն տվել
է կարա- կոյունլուների պայքարը Լանկ-Թամուրի և Թամուր-
յանների դեմ և հայ ժողովրդի զանգվածային բնաջնջումը: Այդ
գազանությունների հետևանքով. «Եւ երկիր եւ աշխարհ ամե-
նայն լցաւ գերեօք, լալով, սգով եւ կոծով, մանաւանդ միջա-
սահման գաւառս մեր հայրենի»[2],—գրում է պատմագիրը:
XIV դ. վերջում և XV դ. առաջին քառորդում հայտնի
մատենագիր էր Գրիգոր Ծերենց Խլաթեցին: Նա սովորել է
Հովհան Որոտնեցու մոտ, ապա Սուխարա վանքում՝ Սարգիս
վարդապետի մոտ: Գրիգոր Խլաթեցին քրդերի կողմից նա-
հատակվել է 1425 թ.՝ Արծկե քաղաքի մոտ գտնվող Ցիպնա
վանքում: Նա գրել է ճառեր, վկայաբանություններ, տաղեր
և այլ մանր գործեր, խմբագրել «Հայսմավուրք» ժողովա-
ծուն: Հիշյալ շրջանի պատմության ուսումնասիրության հա-
մար կարևոր սկզբնաղբյուր է Գրիգոր Խլաթեցու «Յիշատա-
կարան աղետից» ընդարձակ վիպասանությունը: Նրանում
նկարագրվում են Լանկ-Թամուրի, Ղարա-Յուսուֆի, Շահռու-
խի, Սպանի և Իսքանդարի արշավանքների ժամանակ
(1386—1422 թթ.) Հայաստանում կատարված իրադարձու-
թյունները: Գրիգոր Խլաթեցին տեղեկություններ է հաղոր-
դում դեպի Արցախի լեռնագավառները Լանկ-Թամուրի ար-
շավանքի ու Դոփյան Հասանի և նրա որդիների ցույց տված
դիմադրության ու սպանության մասին: Գրիգոր Խլաթեցու
«Յիշատակարան աղետից» պատմական վիպասանությունը

2 Թ. Մեծոփեցի. նշվ. աշխ., էջ 121:

1897 թ. «Արարատ» ամսագրում հրատարակել է Գրիգոր Խալաթյանցը[3]: 1901 թ. այդ գործը հրատարակվել է Ղ. Ալիշանի «Հայապատում» աշխատության Բ հատորում, իսկ ավելի լիակատար և ամբողջական՝ Լ. Խաչիկյանը[4]:

Միջնադարյան Հայաստանի, ինչպես նաև նրա հարևան երկրների ամբողջական պատմությունն ուսումնասիրելու տեսակետից, հարցերի բնդգրկման իրենց բազմակողմանիությամբ, բացառիկ արժեք ունեն ձեռագրերի հիշատակարանները: Դրանք հարուստ տեղեկություններ են հաղորդում Հայաստանի և հարևան երկրների քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի պատմության վերաբերյալ:

Գրիչները հիշատակարաններ գրելիս կամ դրանք նորոգելիս որոշ կենսագրական տեղեկություններ են հայտնել իրենց մասին, հիշատակել ժամանակի աշխարհիկ ու հոգևոր տերերին՝ նրանց մասին տալով ժամանակագրական տվյալներ, հաճախ նկարագրել իրենց ժամանակի պատմությունը՝ երկրի վիճակը, քաղաքական անցուդարձը և այլն[5]: Գրիչները, լինելով կատարվող իրադարձությունների ականջալուրն ու ականատեսը, տվել են դրանց համեմատաբար իրապատում նկարագիրն ու գնահատականը:

XIV—XV դդ. ձեռագրերի հիշատակարաններում հարուստ նյութեր կան Հայաստանի քաղաքական վիճակի՝ իլխանության քայքայման, Ջոբանյանների ու Ջելաիրյանների, Լանկ-Թամուրի, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմեն ցեղերի՝ երկիրն ամայացնող ասպատակությունների մասին: Հիշատակարաններից իմանում ենք, որ աշխարհա-

3 Յիշատակարան աղետից Գրիգորի Խլաթեցւոյ պատմական վիպասանութիւն, Վաղարշապատ, 1897:

4 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955 (այսուհետև ԺԵ, մասն Ա):

5 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950 (այսուհետև ԺԴ):

վեր այս արշավանքների հետևանքով Հայաստանի տնտեսությունն անկում ապրեց, բնակչության զանգվածային ոչնչացման ու գերեվարման հետևանքով ամայացան քաղաքներն ու գյուղերը։ Հիշատակարանները շահեկան նյութ են պարունակում նվաճողների հարկային քաղաքականության՝ հարկերի ու հարկահանման ձևերի ու հետևանքների, սոցիալ-տնտեսական ու իրավական նորմերը իմաստավորող տերմինների, կրոնական խտրականության և հալածանքների մասին։ Դրանցում արժեքավոր տեղեկություններ կան տեղական ֆեոդալական տների պատմության, դրանց աստիճանական քայքայման, եկեղեցական-վանքապատկան հողատիրության ընդարձակման, հոգևոր ֆեոդալական հիերարխիայի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ֆեոդալական շահագործման ձևերի, աշխատավոր ժողովրդի ծանր վիճակի, բնակչության արտագաղթի, գյուղական համայնքի և գյուղացիության իրավազրկության ու այլ հարցերի մասին։

Ձեռագրերի հիշատակարանները հարուստ տեղեկություններ են պարունակում նաև հայ գրչության կենտրոնների, միջնադարյան համալսարանների ու դպրոցների, ուսուցման մեթոդների և դրանցում սովորողների մասին։

Թուրքմենների հարկային քաղաքականությունը ու դրա հետևանքները գրիչ Հովհաննես Սեբաստացին Բագարանի Տիկրանա բերդում 1411 թ. գրած հիշատակարանում հետևյալ կերպ է բնութագրել. «...եղեալ կան հարկ ի վերայ քրիստոնէից և կան ի տառապանք յայլասեռից, և է ամենայն ուրէք քարեկարգութիւն նուազեալ և անիրաւութեան յամենայն կողմանց զաւրացեալ»[6]։ Իսկ 1464 թ. Ստեփանոս գրիչը գրել է, որ տաճիկները գազանից էլ չար են, ծարավ են քրիստոնյաների արյան, նորանոր չարիքներ պատճառեցին, խարջը դարձրին 4 ֆլորի և նրանց տարբերելու համար՝ գլուխներին կապույտ նշան հագցրեցին[7]։

6 ԺԵ, մասն Ա, էջ 124։

7 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 211 (այսուհետև ԺԵ, մասն Բ)։

Արարատյան գավառի Մուղնի գյուղում 1491 թ. Մկրտիչ գրիչը Յաղուբի վարած հարկային քաղաքականության մասին գրել է. «Ի սորա ժամանակիս բազում չարիք յայտնեցաւ, զի ամենայն կարգաւորէ՝ աբեղայից և ի յաշխարհականեաց, ի միայնակեցից եւ ի սարկաւագաց / հարկս պահանջէին կախելով և չարչարելով Ճ (100) Թ(ան)-կ (այ) և այլ աւելի և պակաս»[8]։

Գրիչները նկարագրել են նաև այն ավերածությունները, որ կատարում էին Թուրքմեն զորաբանակները իրենց արշավանքների ընթացքում։ Խոսելով Իսքանդարի՝ դեպի Հարավային Հայաստան կատարած ասպատակությունների մասին, գրիչ Թովմա Մինասենցը 1425 թ. գրել է, որ հայոց աշխարհը մեկ ամբողջ տարի թալանվեց, ավերվեց, սրածության ու գերեվարության մատնվեց անիծյալ նեռողների ազգի կողմից[9]։

Հայաստանի XIV—XV դդ. պատմության ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր հիշատակարանների նշանակությունը ավելի քան մեծ է, քանի որ, ինչպես ասվել է, հայ պատմագրությունն այս դարերում ապրում էր ամլության շրջան։ XIV—XV դդ. հիշատակարանները մեծ խնամքով հավաքել, կազմել և հրատարակության է պատրաստել Լ. Խաչիկյանը, մեծապես դյուրացնելով այս դարերի պատմությամբ (և ոչ միայն պատմությամբ) զբաղվողների գործը։

Հայաստանի միջնադարյան պատմության ուսումնասիրության համար մեծ արժեք ունեն մանր ժամանակագրությունները, որոնք հարուստ նյութ են պարունակում Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական պատմության մասին։ Մանր ժամանակագրությունները կարևոր տեղեկություններ են պարունակում Թուրք-թաթարական նվաճումների, վեր-

8 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 168 (այսուհետև ԺԵ, մասն Գ)։

9 ԺԵ, մասն Ա, էջ 326։

ջիններիս վարած հարկային ծանր քաղաքականության ու հետևանքների, երկրին ու հայ ժողովրդին պատճառած ավերածությունների, հայերի զանգվածային բնաջնջման ու գերեվարման, սովի, համաճարակների և այս ամենի պատճառով ծավալված արտագաղթի, ինչպես նաև սոցիալական հարցերի ու կենցաղային առանձին երևույթների վերաբերյալ։ Քանի որ ժամանակագրողները հաճախ ժամանակակից են կատարված իրադարձություններին, ուստի առանձին դեպքերի ու իրադարձությունների մասին նրանց հաղորդած ճշգրիտ տեղեկությունները հնարավորություն են ընձեռում շարադրելու տվյալ ժամանակաշրջանում կատարված իրադարձությունների, քաղաքական անց ու դարձերի ճշմարտացի պատմությունը։

Ժամանակագիրները հիմնականում գրի են առել ժամանակակից դեպքերը, որոնք մեծ մասամբ վերաբերում են այն բնակավայրերին (քաղաք, գավառ, գյուղ, վանք) որոնցում իրենք բնակվել են։ Քանի որ չկային պատմիչներ, որ շարադրեին երկրի ամբողջական պատմությունը, ուստի մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմության ամբողջականացման համար կարևոր նշանակություն ունեն ժամանակագիրների հաղորդած տեղեկությունները։

XIV—XV դդ. քաղաքական կյանքի մրրկածուփ ժամանակաշրջանում, երբ Հայաստանը դարձել էր անընդմեջ ասպատակությունների թատերաբեմ, պատմագրությունը ժամանակագրությունների բնույթ էր ստացել, և դա ուներ իր քաղաքական պատճառները։ Այդ պայմաններում, երբ հրաշեկ լավայի նման հաջորդաբար Հայաստան էին ներխուժում թուրք-թաթարական կիսավայրենի ցեղերը և մեծ հարված հասցնում հայ ժողովրդի ստեղծագործ մտքին, հնարավոր չէր շարադրել Հայաստանի ամբողջական պատմությունը։ Այդ պայմաններում հնարավոր չէր և չէր կարող հանդես գալ մի պատմիչ, որը կարողանար այդ ընդհանուր ասպատակությունների շրջանում գտնել կատարված իրադարձությունների պատճառական կապը և պատմական օրինաչափությունները, վեր բարձրանար իր ժամանակաշրջանից և տեղի ունեցող անցքերը շարադրեր որպես մեկ ամբողջական երկ։ Նշված դարերի ժամանակագիրներն արտացոլում էին իրենց ժամանակի հասարակական-քաղաքական իրականությունը[10]։ Մանր ժամանակագիրներից Կիրակոս Ռշտունեցին տեղեկություններ է հաղորդում Լանկ-Թեմուրի արշավանքների, Կարա-Յուսուֆի ասպատակությունների, ինչպես նաև Շահռուխի արշավանքների մասին։ Ժամանակագիրն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ջահանշահի կողմից 1440 թ. Շամշուլդեի գրավման և բնակչությանը կոտորելու ու գերեվարելու մասին[11]։

XV դ. վերաբերող Դավիթ Մերդինցու «Տարեգրությունը» արժեքավոր տեղեկություններ է հաղորդում կարա-կոյունլու Ջահանշահի և ակ-կոյունլու Ուզուն-Հասանի ու Ջահանգիրի միջև մղված կռիվների, ինչպես նաև Ուզուն-Հասանի և իր եղբոր որդու Ջահանգիրի միջև գոյություն ունեցող ներքին անհամաձայնության և Ջահանշահի կողմից Ջահանգիրին հովանավորելու մասին[12]։

1467 թ. Ուզուն-Հասանի դեմ Ջահանշահի արշավանքի և վերջինիս սպանության հանգամանքների մասին տեղեկություններ է հաղորդում Անանուն Սեբաստացու «Ժամանակագրության» XV դ. շարունակողը։ Ժամանակագրության հեղինակը խոսում է նաև օսմանյան թուրքերի և Եգիպտոսի սուլթանության դեմ Ուզուն-Հասանի 1472—1474 թթ. կատարած արշավանքի մասին։ Ժամանակագրությունում նկարագրվում է նաև դեպի Վրաստան Ուզուն-Հասանի կատարած արշավանքը[13]։

---

10 Մանր ժամանակագրություններ, հ. 1, կազմեց Վ. Հակոբյան, (այսուհետև ՄԺ, հ. 1), Երևան, 1951, էջ 11—12։

11 ՄԺ, հ. 1, էջ 118—119։

12 Մանր ժամանակագրություններ, հ. 2, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 210 (այսուհետև ՄԺ, հ. 2)։

13 Տե՛ս ՄԺ, հ. 2, էջ 152—153։

Հայաստանի միջնադարյան պատմության ուսումնասիրության համար, իբրև արժանահավատ աղբյուր, հույժ կարևոր արժեք ունեն նաև վիմական արձանագրությունները[14]։

Վիմական արձանագրությունները հարուստ փաստական նյութեր են պարունակում առավելապես Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության վերաբերյալ։ Դրանք արժեքավոր են նաև Հայաստանի XIV—XV դդ. պատմության աղբյուրագիտական առումով, հաճախ հանդես գալով իբրև եզակի սկզբնաղբյուր՝ խնդրո առարկա ժամանակաշրջանի Հայաստանի պատմությունը շարադրելու մարզում։

Արձանագրությունները հարուստ տեղեկություններ են հաղորդում Հայաստանի տնտեսական կյանքի, նվաճողների ագրարային ու հարկային քաղաքականության, հարկերի տեսակների, դրանց բնույթի, չափերի և հարկման ենթակա օբյեկտների սոցիալ-տնտեսական և իրավական նորմերն իմաստավորող տերմինների վերաբերյալ։ Դրանք կարևոր տեղեկություններ են պարունակում նաև ֆեոդալական հասարակության զարգացման աստիճանի, նրա ստորակարգության և վասալական կախվածության մասին։ Արձանագրությունների հաղորդած տեղեկություններն առանձնահատուկ արժեք ունեն XIV—XV դդ. հայկական իշխանական տների ամբողջական պատմության ուսումնասիրության տեսակետից։ Վիմական արձանագրությունների ընձեռած նյութերի հիման վրա հնարավոր է տալ Դոփյան, Հասան-Ջալալյան, Օրբելյան և իշխանական մյուս խոշոր ու մանր տների գրեթե ամբողջական և ճշգրիտ պատմությունը։

14 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, Դիվան հայ վիմագրության պրակ 1, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, պրակ. 2 կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, պրակ 3, Երևան, 1967, պրակ 4, Երևան, 1973, պրակ 5, Երևան, 1982, Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, Սանահնի վանքի արձանագրությունները, Երևան, 1957։

3024

Վիմական արձանագրությունները հարուստ փաստեր են պարունակում նաև աշխարհիկ ու հոգևոր կալվածատիրության, ինչպես նաև կալվածատիրական հողատիրության ընդարձակման սոցիալ-տնտեսական և քաղաքական դրդապատճառների վերաբերյալ, բազմակողմանիորեն արտացոլում են Հայաստանի միջնադարյան պատմությունը։ Արձանագրություններից իմանում ենք, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում վանքապատկան կալվածատիրության ընդլայնման հիմնական ուղիներից մեկը վանքերին տրվող նվիրատվություններն էին, որոնք լինում էին ամբողջական գավառ, ագարակ, արտեր, այգիներ, արոտավայրեր, ջրաղացներ, դինգեր և այլ հասութաբեր օբյեկտներ։

Հայաստանի ուշ միջնադարյան պատմության կարևոր սկզբնաղբյուրներից են նաև Թուրքմեն գահակալների ու սեֆյան շահերի կողմից հայ հոգևոր ֆեոդալներին ու վանքերին տրված հրովարտակները և կալվածագրերը, որոնք գիտական մեծ բարեխղճությամբ հրատարակության է պատրաստել ու հրատարակել Հ. Փափազյանը[15]։ Հիշյալ վավերագրերը մեծապես օգնում են պարզաբանելու ինչպես Իրանի, այնպես էլ նրա հարևան երկրների պատմությունը։ Սոցիալ-տնտեսական և ագրարային հարաբերությունների պատմության ուսումնասիրության գործում արժեք է ներկայացնում պարսկերեն վավերագրերի «Կալվածագրեր» շարքը, որի մի մասը վերաբերում է Հայաստանի վանքերին։ Կալվածագրերը առուծախի փաստաթղթեր են՝ կնքված վաճառողի և վանքի ներկայացուցիչների միջև։ Դրանցից իմանում ենք, որ հայկական իշխանական տների ունեզրկման պրոցեսը, որն ավելի խորացել էր XV դ., աշխարհիկ իշխանական տների ներկայացուցիչներին ստիպում էր վանքերին վաճառքի հանա-

15 Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 1, կազմեց Հ. Դ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, Երևան, 1956, պրակ 2, Երևան, 1959, Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը պրակ 1 (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1968։

պարհով իրենց կալվածքները դասելու արտոնյալ հողային ինստիտուտի շարքը։ 1400 թ. գրված կալվածագրով որոշվում է այն գյուղերի սահմանները (Խոտ, Շենուհեր, Հալիձոր), որոնք որպես մուլք պատկանել են Տաթևի վանքին[16]։ 1450 թ. կալվածագրով Շմավոն վարդապետը Ռուստամ Օրբելյանից գնել է Ավարի և Տանձատափ գյուղերի վեց դանգ, Տաշու և Աղանց գյուղերի երեք դանգ հողերը և նվիրել Տաթևի վանքին[17]։

Կալվածագրերից առանձնապես արժեքավոր են Էջմիածնին տրվածները, որոնք կարևոր տվյալներ են պարունակում ժառանգական հողատիրության վերաբերյալ։ Դրանցից առաջինը գրվել է 1430 թ., իսկ երկրորդը՝ 1431 թ.[18]։ Հիշյալ կալվածագրերը վկայում են, որ Էջմիածնի վանահայրերը գնումների ճանապարհով ավելացնում էին վանքի կալվածքները։ Գրքի առաջաբանում, խոսելով կալվածագրերի նշանակության մասին, Հ. Փափազյանը գրում է. «14—15 դդ. կալվածագրերը հողատիրության և հողային հարաբերությունների պատմության եզակի նշանակություն ունեցող սկզբնաղբյուրներ են։ Նրանց մեջ պաշտոնապես վավերացված են ոչ միայն խոշոր հողատիրության տարբեր ձևերի և հողատիրության առանձին ինստիտուտների սոցիալական և իրավական հիմունքները, այլև որպես նույն ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքն արտացոլող փաստաթղթեր, պարունակում են ավատատիրական հասարակության շատ հարցերի լուսաբանման համար բացառիկ արժեք ներկայացնող տվյալներ»[19]։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայոց պատմության ուսումնասիրության համար բացառիկ կարևոր արժեք ունեն եվրոպացի ճանապարհորդների նոթագրություն-

16 Տե՛ս Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ 1, էջ 56։

17 Նույն տեղում, էջ 79։

18 Տե՛ս նույն տեղում, էջ 45։

19 Նույն տեղում։

ները Հայաստանի մասին[20]։ Եվրոպացի ճանապարհորդների մեծ մասը դիվանագիտական միսիայով անցնելով Արևելք, եղել են Հայաստանում և իրենց ուղեգրություններում նկարագրել են թուրքմենների տիրապետության տակ տառապող հայ ժողովրդի ծանր վիճակը։ Այդպիսի ճանապարհորդներից էր Գոնզալես դե Կլավիխոն։ Նա Կաստիլիայի Հենրիխ Գ թագավորի պատվիրակն էր, որը 1404 թ. ուղևորվել էր Սամարղանդ՝ Լանկ-Թամուրի հետ բանակցելու։ Կլավիխոն իր ուղեգրություններում հետաքրքիր ու հավաստի տեղեկություններ է հաղորդում Լանկ-Թամուրի արշավանքների և հայ ժողովրդի ծանր ու անմխիթար վիճակի մասին։ Սամարղանդ գնալիս և վերադառնալիս Կլավիխոն անցել է Հայաստանով։ Նա Հայաստանի մասին գրում է, որ երկիրը անմարդաբնակ էր, դրա պատճառն այն էր, որ քրիստոնյաները կորցրել էին իրենց իշխանությունը ամբողջ մեծ Հայաստանում։ Նկարագրելով Ալաշկերտ քաղաքի վիճակը, նա գրում է. «Վերջապես յեկանք մի մեծ քաղաք, բայց այստեղ էլ տների մեծ մասը դատարկ էր բնակիչներից։ Այս քաղաքի անունը Ալաշկերտ էր։ Քաղաքի պարիսպները, որ յեղել էին շատ լայն ու շատ ամուր, բոլորը ավերակ էին, և քարից կառուցված ամրոցը բոլորովին բաց էր, ճեղքված շատ տեղերից, թեև մի քանի խեղճ մարդիկ տակավին ապրում էին նրա սենյակներում»[21]։

Թուրքմենների մոտ որպես դեսպաններ ուղարկվող վենետիկցի ազնվականները ևս եղել են Հայաստանում և տեղեկություններ հաղորդել հայ ժողովրդի մասին։ Իր «Ուղեգրությունում» Ջոզեֆ Բարբարոն կարևոր տեղեկություններ է հաղորդում Թավրիզից Շամախի գնացող կարավանային ուղու մասին։ Առանձնապես արժեքավոր են նրա հաղորդած տեղեկությունները դեպի Վրաստան 1477 թ. Ուզուն-Հասանի կատարած արշավանքի վերաբերյալ[22]։

20 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա., ԺԳ—ԺԶ դարեր, Երևան, 1932։

21 Նույն տեղում, էջ 138։

22 Նույն տեղում, էջ 204—205։

Ուզուն-Հասանի մոտ Վենետիկի հանրապետության կողմից 1471 թ. որպես դեսպան էր ուղարկված նաև Կատարինո Զենոն։ 1474 թ. նա Թավրիզից վերադառնալով Վենետիկ՝ ծերակույտին ներկայացրեց իր զեկուցագիրը, որում խոսվում էր նաև հայերի մասին։

Վենետիկցի ճանապարհորդ ու դիվանագետ էր նաև Ամբրոսիո Կոնտարինին։ Սա 1473 թ. Վենետիկի ծերակույտի կողմից ուղարկվեց Արևելք։ Թավրիզ է հասել 1474 թ. օգոստոսի 4-ին, իր ուղեգրությունում կարևոր տեղեկություն է հաղորդում Ուզուն-Հասանի դեմ Ուղուրլու Մահմադի բարձրացրած ապստամբության մասին[23]։

Ջովանի Մարիա Անջիոլելոն, որը որպես Վենետիկի դեսպան ուղևորվել է Ուզուն-Հասանի մոտ, հույժ կարևոր տեղեկություններ է հաղորդում օսմանյան թուրքերի և Ուզուն-Հասանի միջև տեղի ունեցած կռիվների մասին (1472—73 թթ)։ Այդ ընդհարումներն ու ճակատամարտերը, ինչպես նշում է Անջիոլելոն, հիմնականում տեղի էին ունենում Հայաստանի տարածքում, որից մեծապես տուժում էին հայերը։ Այսպես, նկարագրելով օսմանցիների արշավանքը և Ամասիա, Թոխաթ, Սեբաստիա, Շապինգարահիսար, Երզնկա և այլ քաղաքների գրավումն ու բնակչությանը հասցրած ծանր աղետը, նա գրել է. «Հեծելազորը ասպատակեց ու ոտնակոխ արավ երկիրը, այնպես որ գյուղացիների մեծ մասը իրենց տավարով ու ինչքերով փախավ լեռների ամրոցները և ուրիշ ապահով վայրեր»[24]։ Անջիոլելոն որպես ականատես նկարագրել է 1473 թ. Դերջանի դաշտում օսմանյան թուրքերի ու Ուզուն-Հասանի միջև տեղի ունեցած ճակատամարտը։ Նա կարևոր տեղեկություն է հաղորդում նաև 1477 թ. դեպի Վրաստան Ուզուն-Հասանի կատարած արշավանքի մասին և այլն։

Օտար աղբյուրների (հատկապես թուրք-պարսկական և արաբական) տեսությունն այստեղ մենք չենք տալիս՝ հաշվի

23 Նույն տեղում, էջ 229։

24 Նույն տեղում, էջ 264։

առնելով այն հանգամանքը, որ արևելագիտական գրականության մեջ տրված է պատմագիտության մարզում այդ աղբյուրների դերի, տեղի և նշանակության բավական հանգամանալից գնահատականը։ Այդ աղբյուրների՝ մեզ հետաքրքրող թեմայի վերաբերյալ պարունակած նյութերը մենք հիմնականում քաղել ենք Ի. Պետրուշևսկու աշխատություններից։

Խնդրո առարկա շրջանի պատմությամբ առաջինը զբաղվել է հայ նշանավոր պատմաբան Միքայել Չամչյանը։ Նա իր «Պատմութիւն հայոց» եռահատոր աշխատության երրորդ հատորում շարադրել է այս ժամանակաշրջանի պատմությունը[25]։ Օգտագործելով իրեն մատչելի բոլոր սկզբնաղբյուրները, Մ. Չամչյանը հիմնական ուշադրությունը դարձրել է թուրքմեն ցեղերի՝ միմյանց դեմ վարած պատերազմներին և հայ եկեղեցու պատմությանը։ Ամբողջությամբ վերցրած Մ. Չամչյանի աշխատությունը ինչպես գիտական, այնպես էլ փաստագրական առումով մեծ արժեք է ներկայացնում և արժանի է մեծ գովասանքի։

Անցյալ դարի 90-ական թվականներին քննվող ժամանակաշրջանի պատմությամբ զբաղվել է մեծավաստակ հայագետ Ղևոնդ Ալիշանը։ Նա իր «Այրարատ», «Սիսական», «Շիրակ», «Հայապատում» և մյուս աշխատություններում քննություն է արել Հայաստանի XIV—XV դդ. պատմությանը վերաբերող զանազան հարցեր։ Մի քայլ առաջ անցնելով իր նախորդից և օգտագործելով ավելի շատ սկզբնաղբյուրներ, իրեն հատուկ կուռ տրամաբանությամբ նա «Այրարատ»[26] աշխատությունում շարադրել է այս ժամանակաշրջանի Հայաստանի ճշգրիտ, բայց և համառոտ քաղաքական պատմությունը։ Ինչպես Մ. Չամչյանը, Ղ. Ալիշանը ևս համառոտակի շարադրել է Լանկ-Թամուրի արշավանքների պատմությունը, տվել թուրքմեն տիրապետողների հաջորդա-

25 Տե՛ս Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786։

26 Տե՛ս «Այրարատ», Վենետիկ, 1890։

կանությունը ու նրանց վարած պատերազմները: Ղ. Ալիշանն իր աշխատություններում անդրադարձել է նաև հայկական ֆեոդալական տներին և կազմել նրանց տոհմածառերը: Ընդհանուր առմամբ Ղ. Ալիշանի աշխատությունները փաստագրական հարուստ նյութ են պարունակում և մեծապես օգնում են հայոց պատմությամբ զբաղվող մասնագետներին:

Հայաստանի XIV—XV դդ. պատմության շատ կարևոր հարցերի պարզաբանման ու վերհանման գործում մեծ վաստակ ունի տաղանդավոր հայագետ Գարեգին Հովսեփյանը: Նա իր աշխատություններում[27] շարադրել է հայկական առանձին իշխանական տների առաջացման պատմությունը, կազմել նրանց տոհմածառերը, անդրադարձել սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային պատմության և այլ հարցերի լուսաբանմանը: Գ. Հովսեփյանի աշխատություններում շրջանառության մեջ են դրված փաստագրական հարուստ նյութեր, որոնք հեղինակի կողմից մեկնաբանվել են ճիշտ և լույս են սփռում Հայաստանի խնդրո առարկա շրջանի պատմության ամենակնճռոտ հարցերի վրա: Գ. Հովսեփյանի աշխատությունները, որոնք երկար տարիների արգասավոր աշխատանքի արդյունք են, մեծապես դյուրացնում են մասնագետների գործը:

Հայաստանի հիշյալ շրջանի պատմության առանձին հարցերին անդրադարձել են նաև այլ հեղինակներ, որոնց աշխատություններում եղած փաստական նյութը և տեսական ընդհանրացումները մեծապես նպաստում են խնդ-

27 Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, պրակ 1, Էջմիածին, 1928, պրակ 2, Երուսաղեմ, 1944, պրակ 3, Նյու Յորք, 1942—43, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմութեան, պրակ Ա, Երուսաղեմ, 1935, պրակ Բ, Նյու Յորք, 1943, պրակ Գ, Նյու Յորք, 1944, Հիշատակարան ձեռագրաց, հատոր Ա, Անթիլիաս, 1951, Աղիզբէկներ և նրանց շինարարական գործը (Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, Գիրք Ա, Բ, Էջմիածին, 1921—22), Հավուց Թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձանները հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937:

րո առարկա շրջանի պատմության ուսումնասիրությանը: Դրանք են՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի[28], Սարգիս Ջալալյանցի[29], Մեսրոպ Սմբատյանցի[30], Հովհաննես Շահխաթունյանցի[31], Կարապետ Կոստանյանցի[32], Մակար Բարխուդարյանցի[33], Ներսես Ակինյանի[34], Հարություն Թոփչյանի[35], Երվանդ Լալայանի[36], Ներսես Ճնտոյանի[37], Հակոբ Ոսկյանի[38], Գարեգին Սրվանձտյանի[39], Քերովբե Պատկանյանի[40], Ներսես Սարգսյանի[41] և այլոց աշխատությունները:

Ինչպես Լանկ-Թամուրի, այնպես էլ կարա-կոյունլուների և ակ-կոյունլուների արշավանքների ու դրանց հետևանք-

28 Նյութեր հայ մելիքութեան մասին, պրակ Բ, Դոփեանք և Մելիք-Շահնազարեանք, Էջմիածին, 1914:

29 Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, մասն Բ, Տփխիս, 1858:

29 Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, Երնջակ, Թիֆլիս, 1904.

31 Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հտ. Բ, Էջմիածին, 1842:

32 Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913:

33 Արցախ, Բաքու, 1895, Պատմութիւն Աղվանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, հ. Բ, Թիֆլիս, 1907:

34 Գավազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920:

35 Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետ Դադյանի, մասն Ա, Վաղարշապատ, 1898:

36 Նախիջևան գաւառ, Ազգագրական հանդէս, 1904, գիրք 11, Գողթն, Ազգագրական հանդէս, 1905, գիրք 12, Շարուր-Դարալագեազի գաւառ, Ազգագրական հանդէս, 1904, գիրք 12, Նոր-Բայազէտի գաւառ, Ազգագրական հանդէս, 1912, գիրք 18, գիրք 19, Սիսիան, Ազգագրական հանդէս, 1899, № 1:

37 Ամձեան ժամանակագրութիւն հին եւ նոր Տէրութեանց, Վենետիկ, 1880:

38 Վասպուրական-Վանի վանքերը, մասն Ա, Վիեննա, 1940, Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960:

39 Թորոս Աղբար, մասն Ա, Կ. Պոլիս, 1879, մասն Բ, 1884:

40 Նշխարք մատենագրութեան հայոց, Ս. Պետերբուրգ, 1884:

41 Տեղեկագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

ների պատմության վերհանման ու պարզաբանման ասպարեզում զգալի ավանդ ունեն նաև խորհրդային շրջանի պատմաբանները:

XIV դ. վերջին քառորդի և XV դ. Հայաստանի պատմության ամբողջական ուսումնասիրությունը դժվարանում է նրանով, որ հիշյալ ժամանակաշրջանում ծանր պայմաններով թելադրված՝ հայ պատմագրությունն ապրեց մի ամուլ շրջան: Թովմա Մեծոփեցուց բացի չկա մի պատմագիր, որ շարադրած լինի խնդրո առարկա շրջանի պատմությունը: Հետևապես, խնդրո առարկա ժամանակաշրջանի Հայաստանի պատմությունը ճշգրիտ կարելի է շարադրել ձեռագրերի հիշատակարանների, վիմական արձանագրությունների, մանր ժամանակագրությունների, եվրոպացի ճանապարհորդների և հայ ու օտար այլ սկզբնաղբյուրների ընձեռած նյութերի համադիր քննության միջոցով:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանն իր «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» կարևոր աշխատության Գ հատորի առաջաբանում, անդրադառնալով Հայաստանի XI—XV դդ. պատմությանը, գրում է. «Գիտական լրիվ ուսումնասիրությունն այս դարերի պատմության հնարավոր կլինի, անշուշտ, այն ժամանակ, երբ հրատարակված կլինեն այս ժամանակներին վերաբերող բոլոր վիմական արձանագրությունները, հայերեն ձեռագրերի 11—13-րդ և 15-րդ դարերի հիշատակարանները, հայ և օտար չհրատարակված սկզբնաղբյուրները ու նաև նյութական կուլտուրայի անհայտ մնացած հուշարձանները»[42]: Այժմ հրապարակի վրա են «Դիվան հայ վիմագրության», «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի, «Մանր ժամանակագրություններ, 8—18-րդ դարեր» հատորները, «Մատենադարանի պարսկերեն

42 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Գ, Երևան, 1977, էջ 12:

հրովարտակները», «Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը» և այլ հրապարակումներ:

Խորհրդային շրջանի պատմաբաններից Հ. Մանանդյանն առաջինն էր, որ անդրադարձավ այս ժամանակաշրջանի պատմությանը: Նա ավելի խորազնին, քան իր նախորդները, շարադրեց Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների պատմությունը: Հ. Մանանդյանը, օգտագործելով հայ և օտար բազմաթիվ սկզբնաղբյուրներ, շարադրել է Հայաստանի պատմության այս ժամանակաշրջանի համառոտ պատմությունը: Այս կապակցությամբ նա գրել է. «Պետք է ասեմ, որ խիստ համառոտ է և սոսկ ժամանակագրական ուրվագծի բնույթ ունի այս երրորդ հատորում հատկապես 15-րդ դարի պատմությունը, որը պետք է վերագրել աղբյուրների ու նյութերի անբավարարությանը»[43]: Չնայած հեղինակն իր շարադրանքը դիտում է որպես ժամանակագրական ուրվագիծ, այնուհանդերձ, պետք է նկատենք, որ այն, հայ պատմագիտության մեջ այդ դարերի չլուսաբանված ու բավականին բարդ պատմության առաջին լուրջ գիտական շարադրանքն է:

Հայաստանի XV դ. պատմության գիտական շարադրման ու ամբողջականացման գործում մեծ վաստակ ունի ականավոր պատմաբան Լ. Խաչիկյանը: Նա իր կազմած «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» հատորների առաջաբաններում, օգտագործելով բազմաթիվ հիշատակարաններ և այլ սկզբնաղբյուրներ, ընդհանուր գծերով շարադրել է թուրքմեն տիրապետողների ու քուրդ ամիրաների վարած պատերազմների պատմությունը և ցույց տվել դրանց ծանր հետևանքները հայ ժողովրդի համար: Լ. Խաչիկյանը առաջինն է անդրադարձել Հայաստանի XV դ. ներքին կյանքի պատմության բազմաթիվ հարցերին և տվել դրանց միանգամայն ճիշտ լուծումը: Մեծ է Լ. Խաչիկյանի գիտական վաստակը հոգևոր կալվածատիրության, հայ եկեղեցու ունեցած գրքի ու գրի, վանական հողատիրության ընդարձակ-

43 Նույն տեղում:

ման ուղիների, հայ կյանքում հոգևոր տերերի ունեցած ազդեցիկ դերի ու հարակից այլ հարցերի լուսաբանման գործում։ Բնութագրելով հայ եկեղեցու և հոգևորականության դիրքն ու դերը, Լ. Խաչիկյանը գրել է. «Այսպիսով, հայկական վանական հաստատությունները մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում զգալի տնտեսական ուժ էին ներկայացնում, նրանք ոչ միայն շարունակում էին պահպանել իրենց ձեռքում շարժական ու անշարժ մեծաքանակ կալվածքներ, այլև օգնության ձեռք էին կարկառում և իրենց շվաքի տակ պատսպարում երբեմնի հզոր հայ ֆեոդալական տների մասնատված և ուժասպառ շառավիղներին»[44]։ Լ. Խաչիկյանը փաստագրական հարուստ նյութերի հիման վրա նոր խոսք է ասել գյուղական համայնքի ներքին կառուցվածքի ու ֆունկցիաների, քաղաքների ներքին կյանքի՝ առևտրի և արհեստագործության հարցերի, նվաճողների վարած հարկային ծանր քաղաքականության, Հայաստանի տարածքում պահպանված քրդական ամիրայությունների, հոգևոր հաստատություններին կից գործող դպրոցների ու գրչության կենտրոնների և այլ հարցերի մասին։ Լ. Խաչիկյանն անդրադարձել է նաև XV դ. իրենց գոյությունը պահպանած հայ աշխարհիկ իշխանական տների պատմությանը։ Սակայն այդ տների պատմությունը տրված է շատ համառոտ, բացառությամբ Համշենի իշխանապետության պատմության[45] և Օրբելյան ֆեոդալական տան Բուրթելյան ճյուղի մասին ուսումնասիրության[46]։ Լ. Խաչիկյանը ճիշտ է բացահայտել սոցիալ-տնտեսական և քաղաքական այն պատճառները, որոնք աշխարհիկ տերերին ստիպում էին իրենց ունեցվածքը վանքերին նվիրելու ճանապարհով դրանք ազատել օտարների հափշտակումներից։ Հասկանալի է, որ առաջաբանի սահմաններում հնարավոր չէ ընդգրկել ու պարզաբանել բոլոր հար-

44 ԺԵ, մասն Բ, էջ LXXXIII։

45 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ XLVIII—L։

46 Տե՛ս Բանբեր Մատենադարանի, № 9, Երևան, 1969, էջ 173—98։

ցերը, մանավանդ բազմապիսի իրադարձություններով հագեցված մի այնպիսի ժամանակաշրջանի, ինչպիսին էր Հայաստանի պատմության XV դարը։ Հայաստանի XV դ. պատմության առանձին հարցեր իր մի քանի աշխատություններում պարզաբանել է Հ. Փափազյանը[47]։ Նա պարսկալեզու կալվածագրերի ընձեռած նյութերի հիման վրա ցույց է տվել, որ XV դ. Բեյթ ուլ-մալի կողմից հայկական իշխանական տների հողերի բռնագրավումը դարձել էր սովորական երևույթ, դրանք հետագայում պաշտոնական վաճառքի միջոցով դառնում էին Հայաստանում հաստատված քոչվոր ֆեոդալների գանձագին մուլքը։ Հ. Փափազյանը խոսում է Իսքանդարի արքունիքում մեծ վեզիրի պաշտոն վարող Ռուստամ Օրբելյանի մասին և հայտնում է այն միտքը, որ Ռուստամը ձգտել է Արարատյան երկրում ստեղծել վասալ թագավորություն։ Նա անդրադարձել է նաև կաթողիկոսական աթոռը Էջմիածին տեղափոխելու խնդրին, այդ կապակցությամբ առաջացած խմբավորումներին ու նրանց ծավալած պայքարին, նաև վանական հողատիրության ընդարձակման (հատկապես Էջմիածնի վանքի) սոցիալ-տնտեսական դրդապատճառներին և այլ հարցերին։

XIV դ. վերջին քառորդի և XV դ. Հայաստանի պատմության առանձին հարցերի անդրադարձել են Մ. Աբեղյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Երեմյանը, Ս. Պողոսյանը, Կ. Ղաֆադարյանը, Վ. Հակոբյանը, Լ. Բաբայանը[48]։

47 Տե՛ս «Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից», ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1955, № 8, «Բեյթ-ուլ-մալ»-ի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումը 15-րդ դարում», ՀՍՍՀ ԳԱ Պատմա-բանասիրական հանդես, 1958, № 2, «Օտար տիրապետողները Արարատյան երկրում», ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1960, № 7—8։

48 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, 1970, Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, գիրք երկրորդ, Երևան, 1959, Еремян Опыт периодизации истории Армении эпохи феодализма. см. «Вопросы истории», 1991, № 7. Армения до конца XV века, см. Очерки истории СССР, период феодализма. ч. II. (XIV—XV вв.), Москва, 1958 г.

Նշված առարկա ժամանակաշրջանի հայոց պատմության պրոբլեմները իրենց աշխատություններում քննության են առել Մ. Զուլալյանը, Բ. Ուլուբաբյանը, Գ. Գրիգորյանը, Ա. Շահնազարյանը[49]։

Աշոտ Հովհաննիսյանն իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատոր արժեքավոր աշխատության առաջին հատորում քննության է առել Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի ասպատակությունները, նրանց կատարած ավերածությունները, գործադրած բռնությունները ու դրանց ծանր հետևանքները հայ ժողովրդի համար։ Նա խոսում է այն դիմադրության մասին, որ Լանկ-Թամուրին ցույց էին տալիս Հայաստանի մի շարք բերդաքաղաքներ։ Հայ իշխանական տների նկատմամբ սկսված հալածանքների պատճառով, ինչպես ճիշտ նկատել է Ա. Հովհաննիսյանը, աշխարհիկ խոշոր ֆեոդալները երկրի քաղաքական կյանքում իրենց դիրքերը զիջեցին հոգևոր առաջնորդներին։ Նա խոսում է նաև հայ աշխարհիկ ֆեոդալների ունեզրկման և քոչվոր ցեղերի առաջնորդների կողմից նրանց կալվածքների բռնագրավման մասին։

Մ. Երեմյանն իր աշխատություններում ընդհանուր գծերով ուրվագծել է XIV—XV դդ. Հայաստանի պատմությունը և խոսել Լանկ-Թամուրի արշավանքների ու թուրքմենների տիրապետության բացասական հետևանքների մասին։

Լ. Բաբայանը պարզաբանել է զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում հոգևոր հաստատությունների շինության աճի և դրանց տրվող նվիրատվությունների սոցիալ-տնտեսական դրդապատճառները, ինչպես նաև քոչվորական ֆեոդալական տնտեսաձևի տիրապետության բացասական հետևանքները նստակյաց ժողովուրդների տնտեսական կյանքի վրա։

Տարալեզու աղբյուրների հիման վրա մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայոց պատմության խնդիրները իր աշխատություններում բազմակողմանի քննության է ենթարկել նշանավոր պատմաբան-արևելագետ Մ. Զուլալյանը։

Հայոց պետականության անկումից հետո Հայաստանի տարբեր շրջաններում իրենց գոյությունը պահպանած իշխանական կազմավորումները ծանր ու երկարատև պայքար մղեցին օտար ներխուժողների բռնացման դեմ։ Ժողովրդաազատագրական պատերազմի բնույթ ունեցող այդ պայքարը խնդիր ուներ թոթափել բռնակալների լուծը և, վերջին հաշվով, վերականգնել հայոց պետականությունը։ Մեզանում հույժ կարևոր է իշխանական տների քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ հարցերի պատմության ուսումնասիրման և ամբողջականացման շնորհակալ գործը։ Այս առումով շահեկան գործ են կատարել Բ. Ուլուբաբյանը, Գ. Գրիգորյանը, Ա. Շահնազարյանը, որոնք իրենց աշխատություններում հմտալից և համակողմանի քննության են առել Խաչենի իշխանության, Օրբելյանների և Վահրամյանների իշխանական տների պատմությունը։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմության իրենց աշխատություններում անդրադարձել են Վ. Բարթոլդը, Ա. Յակուբովսկին, Ի. Պետրուշևսկին, Ա. Նովոսելցևը, Ի. Մումինովը, Ա. Ալի-Զադեն, Գ. Իբրահիմովը, Ս. Աշուրբեյլին

Ս. Պողոսյան, *Հայ ժողովրդի պատմություն, պրակ 5, Երևան, 1960*, Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948։ Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957*, Լ. Բաբայան, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964, Ակնարկներ միջնադարյան Հայաստանի պատմությունից, Երևան, 1966*, Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ, հ. 1, [illegible], Երևան, 1951*։

[49] Մ. Զուլալյան, *Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ., Երևան, 1980, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների XIII—XVIII դարեր, գիրք Ա, Երևան, 1990*, Բ. Ուլուբաբյան, *Խաչենի իշխանությունը X—XV դարերում, Երևան՝ 1975 (այսուհետև՝ Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ.)*, Գ. Գրիգորյան, *Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981*, Очерки стории Сюника IX—XV вв. Ереван, 1990, Ա. Շահնազարյան, *Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990*։

և այլք, ինչպես նաև «Ադրբեջանի պատմություն» կոլեկտիվ աշխատության հեղինակները[50]:

Ի. Պետրուշևսկին մեծ վաստակ ունի Հայաստանի և հարևան երկրների մեջ հետաքրքրող ժամանակաշրջանի ու հետագա դարերի պատմության քաղաքական, տնտեսական կյանքի անկման պատճառների, սոցիալական և իրավական հարաբերությունների, Հայաստանի համար քոչվոր նվաճողների արշավանքների ու տիրապետության բացասական հետևանքների խնդիրների լուսաբանման հարցում: Այս ամենով հանդերձ, անհրաժեշտ է ասել, որ առանձին խնդիրների վերաբերյալ նրա մեկնաբանումներն ու մոտեցումները ճիշտ չեն:

Լանկ-Թեմուրի արշավանքների, Միջին Ասիայի ժողովուրդների պատմության համար նրա ստեղծած պետության տեղի, դերի և ունեցած նշանակության հարցերը քննության է առել Ա. Նովոսելցևը: Նրան հաջողվել է տարալեզու սկզբնաղբյուրների համադիր քննությամբ, խնդրո առարկա հար-

[50] *Бартольд В. В.* Сочинения, т. I, М., 1963, т. II, ч. 2, М., 1964, т. VII, М., 1971; *Якубовский А. Ю.* Тимур.—Вопросы истории, № 8—9, 1964; *Петрушевский И.* Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XIV—начале XIX вв. Л., 1949; Государство Азербайджана в XV в.—Сборник по истории Азербайджана, вып. I, Баку, 1949; Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIX вв. М.—Л., 1960; *Новосельцев А. П.* Об исторической оценке Тимура.—Вопросы истории, 1973, № 2; *Муминов И.* Роль и место Амира Тимура в Истории Средней Азии, Ташкент, 1968; *Али-заде А. А.* Социально-экономическая политическая история Азербайджнаа XIII—XIV вв., Баку, 1956; *Ибрагимов Дж.* Очерки из истории Азербайджана XV века, Баку, 1958; Культура Азербайджана в XV в. Баку, 1961; Феодальные государства на территории Азербайджана XV века /автореферат докт. дис./. Баку, 1963; Феодальные государства на территории Азербайджана XV века. Баку, 1962; История Азербайджана. Баку, 1979; *Ашурбейли С.* Государство Ширваншахов, Баку, 1983.

ցի վերաբերյալ հանգելու անկողմնակալ ու ճիշտ եզրակացությունների: Նշանավոր գիտնականը փաստացի ցույց է տալիս Չինգիզ խանի և Լանկ-Թեմուրի արշավանքների ու տիրապետության բացասական հետևանքները Միջին Ասիայի և նվաճված երկրների ժողովուրդների համար:

Իր աշխատության մեջ ուզբեկ գիտնական Ի. Մումինովը քննության առնելով Լանկ-Թեմուրի գործունեությունը խիստ դրական է գնահատում և իդեալականացնում այն: Հարավռուսական, հնդկական, միջին ասիական, անդրկովկասյան, փոքրասիական և Միջագետքի քաղաքներն ու գյուղերը ավերող ու ամայացնող այս նվաճողին, որը հողին էր հավասարեցնում մարդկային հանճարով ստեղծված ճարտարապետական կառույցները, հրի տալիս գրավոր մատյանները և գերեվարում հարյուր հազարավոր մարդկանց, Ի. Մումինովը բնութագրում է ամենադրական հատկանիշներով, համարում պատվի, ազնվության նախանձախնդիր, մեծ կառուցող և մշակույթը գնահատող մի անհատականություն:

Ադրբեջանցի պատմաբանները իրենց աշխատություններում հաճախակի են անդրադառնում Հայաստանի արևելյան շրջանների անցյալի պատմության զանազան խնդիրներին: Իհարկե, դա ինքնանպատակ չէ, նրանց խնդիրն է պատմական փաստերն ու իրադարձությունները կեղծելու ճանապարհով, ծուռ հայելու մեջ ներկայացնել Հայաստանի արևելյան շրջանների պատմության, մշակույթի, ճարտարապետության և այլ հարցեր: Ադրբեջանի XV դ. պատմության վերաբերյալ, ինչպես վերը տեսանք, մի քանի աշխատություններ է հրատարակել Ջ. Իբրահիմովը: Իր «Ֆեոդալական պետությունները Ադրբեջանի տարածքում XV դարում» աշխատության մեջ խոսելով Թ. Մեծոփեցու երկի մասին, նրան մեղադրում է բացահայտ ոչ օբյեկտիվության մեջ, սակայն առանց փաստարկման: Ինքը՝ Իբրահիմովը հերքում է իր այս կարծիքը, երբ գրում է, որ «Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի XIV—XV դդ. պատմության հետազոտողները չեն կարող շրջանցել Թ. Մեծոփեցու աշխատությունը, քանի

որ Թամարի և Թամուրյանների դեմ կարա-կոյունլու ցեղի պայքարի մասին նրանում պարունակում են փաստեր, որոնք հայտնի չեն մյուս ժամանակագիրներին»[51]: Ջ. Իբրահիմովն անդրադառնալով Ադրբեջանի տնտեսության, արհեստների և առևտրի հարցերին, գրում է. «XV դ. Շամախու հետ միասին երկրի խոշոր քաղաքներն էին Գյանջան, Նախիջևանը, Արդաբիլը, Մարաղան, Սուլթանիեն և Թավրիզը: Գյանջայի տնտեսության մեջ կարևոր տեղ էր գրավում մետաքսի արտադրությունը: Նախիջևանի փայտի արտադրությունը հռչակ էր ձեռք բերել ոչ միայն Ադրբեջանում, այլև արևելյան մի շարք երկրներում»[52]: Նախ ասենք, որ XV դ. Ադրբեջան որպես առանձին պետություն գոյություն չուներ, Արդաբիլը, Մարաղան, Սուլթանիեն և Թավրիզը XV դ. մտնում էին Թամուրյանների և ապա կարա-կոյունլուների պետությունների կազմում, իսկ, ինչ վերաբերում է Նախիջևանին, ապա Իբրահիմովը մոռանում է, որ Նախիջևանը հայկական քաղաք է, երկար ժամանակ Վասպուրականի իշխանության կազմում էր, 1006 թ. Սարգիս Սևանցի կաթողիկոսի հատուկ հրամանագրով հանձնվում է Սյունյաց թեմին[53]: Ինչպես Նախիջևանի, այնպես էլ Գանձակի և Շամախու բնակչության մեծ մասը հայեր էին և հիմնականում նրանք էին զբաղվում արհեստագործությամբ:

XV դ. Ադրբեջանի պետության տնտեսական հիմքը Ջ. Իբրահիմովը համարում է ֆեոդալական տնտեսությունը, իսկ բնակչության գլխավոր զբաղմունքը, ինչպես և անցյալում էր՝ հողագործությունը և անասնապահությունը: Նրա կարծիքով, XV դ. Ադրբեջանի պետությանը հատուկ էին բուռն զարգացած ֆեոդալական հարաբերություններ, և ժխտում է այն ուսումնասիրողների կարծիքը, ովքեր XV դ.

[51] *Ибрагимов Дж.*, Феодальные государства на территории Азербайджана XV в., с. 6.

[52] Նույն տեղում, էջ 58:

[53] Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 227:

Ատրպատականի և Հայաստանի տարածքներում կազմավորված թուրքմենական պետական միավորումների հիմքը համարում են անասնապահության քոչվորական տնտեսաձևը[54]: Ջ. Իբրահիմովի կարծիքը չի համապատասխանում խնդրո առարկա ժամանակաշրջանի իրականությանը: Բազմաթիվ են փաստերը, որոնք վկայում են, որ կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական պետությունների տնտեսական հիմքը քոչվորական անասնապահությունն էր, իսկ հողագործությամբ և արհեստներով զբաղվում էին տեղաբնիկ ժողովուրդները՝ իրանցիներ, հայեր և ուրիշներ: Իբրահիմովը 1963 թ. պաշտպանած դոկտորական թեզի ինքնաշարադրանքում գրում է, որ «Ինչ-որ ժամանակ Ադրբեջանի տարածքում բնակություն հաստատած քոչվոր ցեղերը XV դ. սահմանագլխին պահպանել էին միայն իրենց ցեղային անվանումները, որոնք հանդիպում են նույնիսկ մեր օրերում, ինչպես, օրինակ, բայանդուրի, բահարլի, տեկլե, ջանվանշիր, ստուզիկլի, մարջանլի, բոյատի, դաշիգլի, կենգերլի և այլն: Այդ ցեղերը հետագայում, խառնվելով, աստիճանաբար ձուլվեցին տեղական բնակչության հետ և իրենց համարում էին երկրի տեղաբնիկներ: Այդ ցեղերի ընդհանուր լեզուն հետագայում դարձավ ադրբեջանական լեզուն, որով խոսում և գրում էին նույնիսկ Իրանում և Փոքր Ասիայում»[55]: Տեղական ո՞ր բնակչության հետ ձուլվեցին եկվոր ցեղերը և կոնկրետ նրանք ե՞րբ թափանցեցին Ադրբեջանի տարածքը, ոչինչ չի ասվում: Այդ ցեղերը այն քոչվոր նվաճողներն էին, որոնք սկսած XI դ. եկան Անդրկովկաս, նվաճեցին Հայաստանի հյուսիս-արևելյան, արևելյան շրջանները և Աղվանքը, որտեղ XIV—XV դդ. նրանց տեղաշարժերը աստիճանաբար դադարեցին և նվաճված վայրերում դարձան մշտական բնակիչներ: Ինչ վերաբերում է ադրբեջանական լեզվին, ապա

[54] *Ибрагимов Дж.* նշվ. աշխ., էջ 66:

[55] *Ибрагимов Дж.* Феодальные государства на территории Азербайджана XV века /автореферат докт. дис./. с. 85.

այդպիսի ընդհանուր լեզու մինչև XX դ. 20-ական թվականները գոյություն չի ունեցել, եկվոր նվաճողները խոսել են թուրքալեզու բարբառներով:

Իբրահիմովը գրում է, որ՝ «Այդ եկվորներն իրենց կուլտուրական զարգացման մակարդակով ցածր էին կանգնած տեղաբնիկ ադրբեջանցի բնակչությունից, աստիճանաբար ընդունեցին նրա սովորությունները, մշակույթը, գիրը և, նույնիսկ, լեզուն»[56]: Նորից հիշեցնենք Իբրահիմովին, որ տեղաբնիկ ադրբեջանցիներ չկային, իսկ գոյություն ունեցող գիրն ու լեզուն թուրքական էր: Ադրբեջանցի ազգ հասկացողությունը XV դ. չի եղել: Այդ տերմինը գործածվել է 1920-ական թվականներից:

Խոսելով կարա-կոյունլու և ակ-կոյունլու պետական միավորումների բնակչության կազմի մասին, Իբրահիմովը գրում է. «Ինչպես առաջ, այնպես էլ XV դ. Ադրբեջանի բնակչության զգալի մասը կազմում էին ադրբեջանցիները: Ղարաբաղի լեռնային մասում, Նախիջևանում, Մակուի և Ղարաբաղի շրջաններում պահպանվել էր հայկական բնակչությունը»[57]: Նորից հիշեցնենք պատմության կեղծարարին, որ Ղարաբաղը և Նախիջևանը բուն հայկական տարածք են, այդ պատճառով էլ հայերը կազմում էին մեծամասնություն, իսկ այդ տարածքները XIV—XV դդ. նոր-նոր թափանցող թուրքալեզու ցեղերը, բնական է, որ պետք է կազմեին փոքրամասնություն: Քննադատության չի դիմանում նաև Իբրահիմովի հետևյալ դատողությունը. «Մոնղոլական երկարատև տիրապետությունից հետո, երբ Ադրբեջանի տարածքում առաջացան ինքնուրույն պետական միավորումներ, ադրբեջանական գրական լեզուն ստանում է ավելի մեծ նշանակություն: Սակայն պետական գործիչները և ֆեոդալ կառավարիչները պաշտոնական գրագրություններում օգտագործում էին ֆարսի լեզուն»[58]: Հարց է առաջանում, եթե ադրբեջանական գրական լեզուն ստանում է ավելի մեծ նշանակություն, այդ դեպքում ինչո՞վ բացատրել, որ այն չդարձավ պաշտոնական լեզու:

56 Նույն տեղում, էջ 85:

57 Նույն տեղում:

58 Նույն տեղում, էջ 86:

Բաքվում 1961 թ. լույս է տեսել Օ. Ա. Էֆենդիևի «Սեֆյանների ադրբեջանական պետության կազմավորումը XVI դարի սկզբին» աշխատությունը: Աշխատության վերնագիրը, ինքնըստինքյան վկայում է, որ նրա հեղինակը գնացել է պատմական իրադարձությունների ու փաստերը կեղծելու ճանապարհով: Պատմությանը շատ թե քիչ ծանոթ մարդուն հայտնի է, որ Սեֆյանների պետությունը ղզլբաշական-իրանական պետություն էր և ոչ թե ադրբեջանական:

Էֆենդիևի կարծիքով XV դ. Ադրբեջանի տարածքում գոյություն ունեին մի շարք ֆեոդալական պետություններ: Նրանցից առավել խոշորները եղել են Շիրվանշահերի պետությունը, կարա-կոյունլու պետությունը և XV դ. երկրորդ կեսին նրան փոխարինած ակ-կոյունլու պետությունը:

Քաղաքական իշխանությունը պետության մեջ պատկանում էր ակ-կոյունլու ադրբեջանական ցեղի ռազմաֆեոդալական ազնվականությանը[59]: Նախ ասենք, որ կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղային պետական կազմավորումները այսօրվա Ադրբեջանի բուն տարածքը չեն ընդգրկել իրենց կազմում, ապա՝ այդ պետությունները եղել են թուրքմենական պետություններ, պետությունների ղեկի մոտ եղել են կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ռազմաքոչվորական ազնվականության ներկայացուցիչները, ոչ Կարա Յուսուֆը և ոչ էլ Ուզուն Հասանը, ինչպես նաև նրանց հետնորդները իրենց ադրբեջանցի չեն համարել: Չէին կարող համարել այն պարզ պատճառով, որ նրանք ծագումով թուրքմենական տարբեր ցեղախմբերից էին սերում, այլև այն պատճառով, որ XV—XVI դդ. ադրբեջանցի ցեղ հասկացողություն գոյություն չուներ:

59 *Эфендиев О. А.* Образование азербайджанского государства Сефевидов в начале XVI века. Баку, 1961, с. 27.

«Սեֆյանների շեյխական տոհմը կազմավորվել է XIII դարի վերջին ադրբեջանական Արդաբիլ քաղաքում, որի նախնիները շատ վաղուց ապրել են ադրբեջանական Արդեբիլ քաղաքում և նրա շրջակայքում»[60],—գրում է Օ. Էֆենդիևը: Էֆենդիևին հայտնի է, որ Արդաբիլը ոչ թե ադրբեջանական քաղաք է, այլ պարսկական, սակայն նա Արդաբիլը հայտարարելով ադրբեջանական քաղաք հիմքեր է ստեղծում պատմական մեկ այլ կեղծիքի համար, որպեսզի Սեֆյանների ղզլբաշական, Թուրքալեզու ցեղը դարձնի ադրբեջանական: Օ. Էֆենդիևն ադրբեջանցի կառավարիչ է համարում նաև Թուրքմեն կարա-կոյունլու Ջահանշահին[61]: Իր աշխատության եզրակացության բաժնում Էֆենդիևը Սեֆյանների պետության ստեղծման վերաբերյալ անում է չհիմնավորված դատողություններ: Նա գտնում է, որ «Սեֆյանների ընդարձակ պետության միջուկը դարձավ սոցիալ-տնտեսական առումով առավել զարգացած Ադրբեջանը»[62]: Կամ տուրք տալով գռեհիկ սոցիոլոգիայի պատմահայեցողությանը, գրում է, որ «Սեֆյանները իշխանության մոտ եկան ժողովրդական լայն շարժումների կամքով, որոնք առաջացել էին ակ-կոյունլուների պետության մեջ քոչվոր ազնվականության կողմից տարվող ծանր շահագործման հետևանքով»[63]:

Պատմության կեղծարարների առաջնորդ Զ. Բունիաթովն իր «Ադրբեջանը VII—IX դդ.» աշխատության մեջ առաջ է քաշում և փորձում է հիմնավորել տեսակետներ, որոնք չունեն գիտական հիմք: Նա տքնում է ապացուցել, որ պատմական անհիշելի ժամանակներից Հայաստանի անբաժան մասը կազմող Սյունիքի ու Արցախի հայացումը իբրև թե սկսվել է XII դ. սկզբին[64]: Ադրբեջանական պատմագրության մեջ

60 Նույն տեղում, էջ 60—61:

61 Նույն տեղում, էջ 70:

62 Նույն տեղում, էջ 137:

63 Նույն տեղում:

64 Буниятов З. М. Азербайджан в VII—IX вв. Баку, 1965, с. 93.

Զ. Բունիաթովը առաջիններից էր, որ առաջ քաշեց աբսուրդի հասնող այն կարծիքը, թե «աղվանական հարուստ գրականությունը ոչնչացվել է Արաբական խալիֆաթի և հայ լուսավորչական եկեղեցականների կողմից»[65]: Պատմության կեղծարարը թե ի՞նչ ընդհանուր կապ է տեսնում Արաբական խալիֆաթի ու հայ եկեղեցական գործիչների միջև, մնում է անմեկնելի, ինչպես որ անմեկնելի են նրա շատ հարցադրումները VII—IX դդ. գոյություն չունեցող Ադրբեջանի պատմության վերաբերյալ:

1979 թ. լույս տեսած «Ադրբեջանի պատմություն» հեղինակային կոլեկտիվ աշխատության մեջ այն միտքն է զարգացվում, որ աղվանական այբուբենը V դ. ստեղծել են Բենիամինը և Երեմիան՝ աղվանական լեզուներից մեկի՝ Գարգարի բարբառի հիման վրա[66]: Թեև աշխատության հեղինակներին քաջ հայտնի է, որ աղվանական գիրը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը, որի մասին կան անհերքելի վկայություններ: Ադրբեջանցի պատմաբանների մտահանգումների աբսուրդը հասնում է այնտեղ, որ հայտարարում են, թե Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» երկը, որը մեզ է հասել հայերեն թարգմանությամբ, անկասկած, գրված է եղել աղվաներեն լեզվով[67]: Ինչպես Մ. Կաղանկատվացին է վկայում, Մաշտոցը եկել է Երեմիա հայրապետի և Եսվաղեն թագավորի մոտ, որոնք սիրով են ընդունել Մաշտոցին և «նրա մոտ ուսման են տվել ընտիր մանուկներ. Թարգմանիչ Բենիամինին Սյունիքից կանչեցին, որին Վասակ Մանուկը Անանիա եպիսկոպոսի միջոցով ուղարկեց: Նրանք եկան Մեսրոպի մոտ. Մեսրոպը նրանց հետ գարգառացիների կոկորդահունչ, կոշտ ու կոպիտ խժական լեզվի համար տառեր հնարեց: Այստեղ վերահսկիչ թողեց իր աշակերտ Հովնաթանին, քահանաներ նշանակեց պալատում

65 Նույն տեղում, էջ 98—99:

66 История Азербайджана. Баку, 1979, с. 51.

67 Նույն տեղում, էջ 51:

ու վերադարձավ Հայաստան»[68]: Այս հատվածից պարզ երևում է, թե ադրբեջանցի պատմաբանները ինչպես են կեղծում պատմական փաստերը և դրանք հարմարեցնում իրենց քաղաքական շահախնդրություններին: Ինչ վերաբերում է Մ. Կաղանկատվացու երկի աղվաներեն լեզվով գրված և նրա աղվան լինելու հիմնադրույթ դատողությանը, ապա հայագետ Վ. Առաքելյանը, որը դրաբարից աշխարհաբար է թարգմանել Կաղանկատվացու երկը, կուռ տրամաբանությամբ ու համոզիչ քննությամբ գրված առաջաբանում վեր է հանել Մ. Կաղանկատվացու և նրա աշխատության ժամանակաշրջանի տեղի ու դերի խնդիրը հայոց պատմության համար[69]:

XI—XII դդ. մշակույթի, մասնավորապես ճարտարապետության մասին խոսելիս աշխատության հեղինակներն այն կարծիքն են հայտնում, որ Նախիջևանի ճարտարապետական դպրոցն ադրբեջանական է և որպես օրինակ բերում են Նախիջևանում կառուցված ինչ-որ պաշտպանական աշտարակներ[70]: Աշխատության հեղինակները գիտակցաբար անտեսում են պատմական այն իրողությունը, որ Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձաններն առանձնակի տեղ են գրավում հին և միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքում: Դեռևս XIII դ. Նախիջևան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ու. Ռուբրուքը վկայում է. «Այնտեղ՝ կար ժամանակ, վոր ութսուն հայ յեկեղեցիներ կային, բայց հիմա մնացել են յերկու փոքրիկ յեկեղեցիներ միայն, վորովհետև Սարակինոսները փչացրել են»[71]: Հայտնի փաստ է, որ 705 թ. Նախիջևանի ս. Երրորդություն եկեղեցում արաբները կենդանի այրեցին հայ նախարարներին, այդ նույն եկեղեցին 1975 թ. հիմնահատակ քանդեցին ադրբեջանցինե-

68 Մ. Կաղանկատվացի, Պատմություն աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 88:

69 Նույն տեղում, Առաջաբան, էջ III—XVI:

70 История Азербайджана, с. 65.

71 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա էջ 16:

րը[72]: Արդ, հարց է առաջանում, եթե Նախիջևանի հուշարձանները պատկանում են ադրբեջանական ճարտարապետական դպրոցին, ինչու են հիմնահատակ ավերվում ադրբեջանցիների կողմից:

Խոսելով Լանկ-Թամուրի մահից հետո նրա ժառանգների միջև տեղի ունեցած պատերազմների մասին, աշխատության հեղինակները գրում են, որ «Իբրահիմ առաջինը ժամանակը հարմար նկատեց երկրից դուրս քշելու օտարերկրացիներին և իր իշխանության տակ միավորելու Ադրբեջանը: Նրա զորքերն անցան Կուրը, գրավեցին Գյանջան և Ղարաբաղի մեծ մասը»[73]: Ուրեմն մինչև XV դ. սկզբները Շիրվանշահերի իշխանությունը Կուրի աջափնյակի վրա չէր տարածվում: Իբրահիմը փորձեց գրավել Արցախը, իր իշխանությունը հաստատել նաև Ատրպատականում, սակայն Կարա-Յուսուֆը հակահարված տվեց նրա այդ փորձին:

Բաքվում 1983 թ. հրատարակված «Շիրվանշահերի պետությունը» գրքի հեղինակ Սառա Աշուրբեյլին, հետևելով իր նախորդներին, գնում է պատմության հորինելու և կեղծելու ճանապարհով: Նա ևս Մ. Կաղանկատվացուն համարում է VII դ. աղվան պատմիչ[74]: «Աղվան պատմիչ Մ. Կաղանկատվացին,—գրում է Ս. Աշուրբեյլին,—նկարագրում է Աղվանքը VII դ.: Դա վերաբերում է նաև Շիրվանին»[75]: Աշուրբեյլին այս եզրակացությանը հանգում է առանց փաստերի: Մ. Կաղանկատվացու նկարագրության մտացածին վերագրումը Շիրվանին նախապայման է պատմական իրողությունները կեղծելու համար:

Հայտնի է, որ մինչև VII դ. սկզբները Աղվանքում, կամ Հայոց Արևելից կողմանքում իշխել են Առանշահիկ տոհմի ներկայացուցիչները: VII դ. սկզբին Պարսկաստանից

72 Ա. Այվազյան, Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երևան, 1987, էջ 86:

73 История Азербайджана, с. 70.

74 Ашурбейли С. Государство Ширваншахов. Баку, 1983, с. 5.

75 Նույն տեղում, էջ 17:

եկած Միհրանյանները տիրացան Ուտիքի Գարդման գավառին, խնամիական կապեր հաստատեցին տեղաբնիկ Հայ Առանշահիկ տոհմի ներկայացուցիչների հետ և համաձայնվեցին միասին կառավարել Աղվանքը: Այս իրադարձությունների մասին Մ. Կաղանկատվացին վկայում է հետևյալը. «Ստույգ ու ճիշտ խոսքով այսպես իմացանք, որ Հայկազունները խնամիությամբ կապվեցին Միհրական տոհմի հետ և այս խնամիությամբ որոշեցին երկուսով տիրել արևելյան կողմերի պետությանը՝ Աղվանքին»[76]: Մ. Կաղանկատվացու վկայությամբ հայ արքաների թիվը «քաջ Վաչագանից մինչև բարեպաշտ Վաչագանը, տասն են, որոնցից միայն բարեպաշտ Վաչագանը արևելքում տարվա օրերի թվով եկեղեցիներ շինեց: Նրա մահից հետո այդ տոհմը սկսեց նվազել: Եվ Միհրյանը, որ Սասանյան տոհմից էր, գալով Պարսկաստանից՝ հաստատեց նախարարություն»[77]: Միհրանյանները հետագայում ընդունել են քրիստոնեություն և հայացել են:

Ս. Աշուրբեյլին գրում է, որ սկսած VI դ. թուրքական ցեղերը սկսել են թափանցել Շիրվան, իսկ ավելի հոծ եկել են VI—VIII դդ.[78]: Սակայն անմիջապես ժխտում է ճշմարտությանը մոտ իր այս տեսակետը և ավելացնում «նշված թուրքական ցեղերը մեր թվարկության սկզբից բնակեցրել են Շիրվանը և Առանը ու դարձել նշանավոր բաղադրամաս ադրբեջանական ժողովրդի ձևավորման գործում»[79], Ս. Աշուրբեյլին կեղծում է պատմությունը: Մեր թվարկության սկզբին Շիրվանում թուրքական ցեղեր չկային, նրանք Անդրկովկաս են թափանցել արաբական արշավանքների շրջանում, այսինքն VII դ. սկսած, իսկ ավելի զանգվածային եկել են սելջուկների, մոնղոլների և Լանկ-Թամուրի արշավանքների ժամանակ, այսինքն XI—XIV դդ.:

76 Մ. Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 265:

77 Նույն տեղում:

78 Ашурбейли С., նշվ. աշխ., էջ 22:

79 Նույն տեղում:

Ս. Աշուրբեյլին գրում է, որ տեղեկություն չունենք առաջին շիրվանշահերի մասին, որոնք ըստ ավանդության և արաբ հեղինակների հաղորդումների համաձայն Սասանյանների կողմից նշանակված էին պաշտպանելու լեռնանցքները թուրք քոչվոր ցեղերից, որոնք V—VI դդ. մշտապես հարձակվում էին Անդրկովկասի և Շիրվանի վրա[80]: Բնական է, որ աղբյուրներում տեղեկություն չկա առաջին շիրվանշահերի մասին, քանի որ նրանք V—VI դդ. գոյություն չունեին: Չկար նաև Շիրվանշահերի պետությունը:

V դ. Հայոց ազատագրական շարժումներից հետո պարսկական արքունիքը որոշ ինքնուրույնություն տվեց Պարսկաստանին ենթակա մի քանի շրջանների: Ահա այս ժամանակներում Հայոց Արցախ-Ուտիքում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ ստեղծվում է Առանշահիկների թագավորությունը, իսկ բուն Աղվանքում կազմավորվում են ցեղային պետական միավորումներ՝ խունձք, լփնիք, հեճմարանք, թավասպարք, աղուտականք, մազքութք, բաղասական, գեղայք, ղեկք և այլն: Իսկ Արաբական խալիֆաթի շրջանում բուն Աղվանքի տարածքում ստեղծվեցին Շաքիի, Շիրվանի և Դերբենդի ամիրայությունները: Ավելի ուշ ցեղային այս միավորումներից կազմավորվեց շիրվանշահերի պետությունը:

«Աշխարհացույցում» որոշակի գծված են բուն Աղվանքի սահմանները. «Ալբանիան, այսինքն Աղուանից աշխարհը սկսվում է Վրաց աշխարհից արևելք և Սարմատային սահմանակից Կովկասյան լեռներով, մինչև Կասպից ծովն ու Հայաստանի սահմանը Կուր գետով»[81]: Այսինքն Կուրից այս կողմ շիրվանշահերի պետության սահմանները չեն տարածվել:

Ս. Աշուրբեյլին գրում է. «Աղբյուրներում չի հաղորդվում, թե առաջին շիրվանշահերը ե՞րբ դադարեցին կառա-

80 Նույն տեղում, էջ 300:

81 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 105:

վարելու, և նրանց փոխարինեցին արաբ կառավարիչները։ Հավանաբար խալիֆաթի կողմից Շիրվանի նվաճման վաղ շրջանում (VII դ.) արաբները իշխանության գլուխ թողեցին շիրվանշահերին, որպես խալիֆի վասալներ։ Բայց հետո VIII դ., երբ արաբները ամրապնդեցին իրենց իշխանությունն Անդրկովկասում, շիրվանշահերը հեռացվեցին, և Շիրվանը սկսեցին կառավարել արաբական խալիֆները (կառավարիչները)»[82]։ Իր հետագա դատողություններով Ս. Աշուրբեյլին հաստատում է այն փաստը, որ մինչև արաբական տիրապետության թուլացումը շիրվանշահեր գոյություն չեն ունեցել։ Նա գրում է. «861 թ. Մութավաքիլ խալիֆի մահից հետո, օգտվելով ստեղծված անիշխանությունից, Շիրվանի կառավարիչ Խալիդ իբն Եզիդի որդի Հայսամը իրեն հռչակում է անկախ, ընդունում է շիրվանշահ տիտղոսը և հիմք է դնում Շիրվանշահ Մազյադիների դինաստիային։ Արաբական ծագում ունեցող շիրվանշահ Մազյադիները ամուսնության ճանապարհով աստիճանաբար ձուլվեցին տեղական ազնվականների հետ և մոռացան իրենց արաբական ծագման մասին»[83]։ Այսպիսով, փաստորեն ժխտվում է IX դ. վերջից առաջ շիրվանշահերի և նրանց պետության գոյության հարցը։

Պատմական կեղծիքներով ու անհիմն եզրակացություններով իր նախորդներին չի զիջում Ֆ. Մամեդովայի «Կովկասյան Ալբանիայի քաղաքական պատմություն և պատմական աշխարհագրություն» գիրքը, որը 1986 թ. լույս է տեսել Բաքվում[84]։ Ֆ. Մամեդովան գտնում է, որ Կովկասյան Աղվանքի տարածքները ձգվում էին «Արաքս գետից մինչև Դերբենդ—Ջոր՝ հյուսիսում։ Արաքս գետի ձախ ափում գտնվող Նախիջևան, Գողթ և Սյունիք գավառները մտնում էին Աղ-

82 Նույն տեղում, էջ 300։

83 Նույն տեղում, էջ 301։

84 *Мамедова Ф. Дж.* Политическая история и историческая география Кавказской Албании. Баку, 1986.

վանքի կազմում»[85]։ Իր այս հակագիտական տեսակետը հիմնավորելու նպատակով, Ֆ. Մամեդովան դիմում է նոր կեղծիքի, անելով թե իբր Ստեփանոս Օրբելյանի մոտ նշվում է, որ «I—VI դդ. Նախիջևանը և Գողթանը մտել են Սյունիքի կազմում և եղել են աղվանական մարզեր»[86], կամ Սյունիքը ներկայացնում էր «Հայաստանի աղվանական ծայրամասը»[87], իսկ Նախիջևանը՝ «Սյունյաց նահանգի կենտրոնը»[88]։ Սյունիքը որպես Հայաստանի հզոր նահանգներից մեկը մշտապես եղել է նրա կազմում և երբեք չի մտել Աղվանքի մեջ։ Իսկ Նախիջևանը Սյունիքի կենտրոնը չի եղել։ Նախիջևանը եղել է Վասպուրականի կազմում։ Ինչպես վերը ասվեց, 1006 թ. Սարգիս Սևանցի կաթողիկոսը հրամանագրով Տաթևի թեմին է վերադարձնում Նախիջևանը։ Իր հրաման-կոնդակում Սարգիս կաթողիկոսը թվարկում է այն գավառները, որոնք պատկանել են Սյունյաց թեմին. «Սրանք են նրանց ենթակա հոտի գավառների սահմանները՝ Սյունիք, Բաղք, Արևիք, Օրդավառ, Արգուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջևան, Ջուղա՝ որքան Երասխ գետն է կտրում, Ճահուկ, Վայոց ձոր, Խաչենախոտով, Գեղարքունիք՝ Կողաբակով, Երիշատ, Ջաղացաձոր, Փորակն էլ ամբողջովին»[89]։ Ինչպես տեսնում ենք, Ստ. Օրբելյանը չի նշում ոչ Սյունիքը Հայաստանի աղվանական ծայրամաս և ոչ էլ Նախիջևանը Սյունիքի կենտրոն լինելու մասին։ Սյունիքը մշտապես եղել է Հայաստանի կարևոր նահանգը, և պատմական փաստերը կեղծելու ճանապարհով այն օտարել հայոց աշխարհից չի համապատասխանում պատմական ճշմարտությանը։

Ֆ. Մամեդովան ևս Արաբական խալիֆաթի և հայ եկեղեցու փոխհարաբերության մասին անում է չհիմնավորված

85 Նույն տեղում՝ էջ 110—111։

86 Նույն տեղում, էջ 113։

87 Նույն տեղում, էջ 106։

88 Նույն տեղում, էջ 115։

89 Ստ. Օրբելյան. *Սյունիքի պատմություն*, Երևան, 1986, էջ 263։

դատողություններ, որ իբրև թե Արաբական խալիֆաթը հայ եկեղեցու օգնությամբ աղվանական եկեղեցին դարձնում է գրիգորյանական, իսկ հետագայում դա հանգեցրեց մշակութա-քաղաքական ձուլման և աղվանական քրիստոնեական բնակչության հայացմանը[90]: Իր այս կեղծ ու հակագիտական եզրակացությամբ Ֆ. Մամեդովան հիմք է ստեղծում մեկ այլ կեղծիքի: Ըստ նրա Արցախում, Նախիջևանում, Գանձակում և Սյունիքում ապրող հայերը եղել են աղվաններ, որոնց մի մասը ադրբեջանական ժողովրդի նախնիներն են[91]: Ֆ. Մամեդովայի կարծիքով այս գործընթացը սկսվել է VIII դ. և իր ավարտին հասել X—XI դդ., և, իբրև իր ասածի հաստատում, վկայակոչում է VIII դ. նշանավոր գիտնական Ստեփանոս Սյունեցու այն միտքը, որ իր ժամանակ Սյունիքում և Արցախում խոսել են սյունիքերեն և արցախերեն լեզուներով[92]: Ստեփանոս Սյունեցին լեզուներ ասելով նկատի է ունեցել այն խոսվածքները, որոնցով մինչև այսօր խոսում են սյունեցիները և արցախցիները:

Ադրբեջանցի գիտնականի, ուրիշի պատմությունն ու մշակույթի գործիչներին իր ժողովրդի սեփականությունը դարձնելու հոգեբանությամբ է Ֆ. Մամեդովան շարադրել իր աշխատանքը: Նա VII դ. հայ բանաստեղծ Դավթակ Քերթողին, հայ պատմագիրներ Մ. Կաղանկատվացուն, Մ. Գոշին և Կ. Գանձակեցուն համարում է աղվաններ[93]:

Արդ, հարց է առաջանում. Ֆ. Մամեդովան ինչո՞ւ չի փորձում որևէ սկզբնաղբյուրով հաստատել իր «հայտնագործությունները»: Չի փորձում, որովհետև այդպիսի սկզբնաղբյուր գոյություն չունի: Այս դեպքում մնում է դիմել կեղծիքի և հայ ժողովրդի ստեղծածը աղվան ժողովրդին վերագրելու միջոցին, ինչը նա անում է նաև հայոց ճարտա-

90 Мамедова Ф. Дж. նշվ. աշխ., էջ 244:

91 Նույն տեղում, էջ 240:

92 Նույն տեղում, էջ 108:

93 Նույն տեղում, էջ 8:

րապետական կոթողների հարցում. «XII—XVIII դդ. քրիստոնեական ճարտարապետական հուշարձանները դրանք ոչ թե Նախիջևանում ապրող հայերի հուշարձաններն են, այլ հայացած աղվանական բնակչության, որոնք ենթարկվում էին իրենց աղվանական կաթողիկոսին և ինքնուրույն աղվանական եկեղեցուն, որը գոյություն ուներ մինչև 1836 թ.»[94]: Եթե Ֆ. Մամեդովան գրչի մի հարվածով աղվանական է համարում XII—XVIII դդ. հայ ճարտարապետի ու քարագործի հանճարով ու տքնությամբ ստեղծված կոթողները, ապա ինչպե՞ս է ջնջելու, մաքրելու այդ կոթողների հայագիր բազմաթիվ արձանագրությունները, որոնք պատմության խոսուն վկաներն են: Միգուցե արդեն խորհուրդ է տվել իր հայրենակիցներին ֆիզիկական հաշվեհարդար տեսնել այդ հուշարձանների հետ, ինչպես ժամանակին տեսան հուշարձանները կերտող ժողովրդի նախիջևանյան հատվածի հետ:

Անշուշտ, Ֆ. Մամեդովային ու նրա նման կեղծարարներին քաջ հայտնի են, որ այսօրվա Նախիջևանի Հանրապետության տարածքը հնագույն ժամանակներից եղել է Հայաստանի կենտրոնական նահանգներից մեկը, ուր անհիշելի ժամանակներից ապրել ու կառուցել է հայ ստեղծագործ միտքը, թողնելով բազմաթիվ խաչքարեր, եկեղեցիներ և այլ հուշարձաններ, որոնք մինչև օրս հիացմունք են պատճառում նայողներին[95]:

Գիտական «հայտնագործություններով» ու պատմական կեղծիքներով լեցուն ադրբեջանցի պատմաբանների ուսումնասիրությունները հետապնդում են մեկ նպատակ՝ Կուրի և

94 Նույն տեղում, էջ 115:

95 Տե՛ս Ա. Այվազյան, Նախիջևանի պատմա-հնագիտական հուշարձանները, Երևան, 1978, նույնի՝ Նախիջևանի ԻՍՍՀ հայկական ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1981, նույնի՝ Ագուլիս, Երևան, 1984, նույնի՝ Ջուղա, Երևան, 1984, նույնի՝ Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երևան, 1987:

Արաքսի միջագետքը, որը հնագույն ժամանակներից կազմել է Հայաստանի անբաժանելի մասը, օտարել Հայաստանից և տրնել ապացուցել, որ թուրքացեղ-թուրքալեզու ադրբեջանցիները աղվանների հետնորդներն են։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XIV ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ ԵՎ XV ԴԱՐՈՒՄ

Լանկ-Թամուրի արշավանքներ Հայաստան

Հայաստանը, որին վիճակված էր կրելու նոր, ավելի սոսկալի սարսափներ, XIV դ. վերջերին նորից ասպատակությունների բեմահարթակ դարձավ. այս անգամ արդեն տափաստանի թուրքական անգուսպ հորդաների աշխարհավեր արշավանքների ու ասպատակությունների։ Ամայացնող այդ արշավանքները, որոնք ականատեսի վկայությամբ «չոլ» դարձրին Անդրկովկասի առանց այն էլ անկում ապրող քաղաքներն ու գյուղերը, իրագործում էր Տուղրիլ բեկի և Չինգիզ խանի արժանի հաջորդը՝ Լանկ-Թամուրը։

Թամուրի մասին սկզբնաղբյուրներում և պատմագիտական գրականության մեջ արտահայտված են հակասական կարծիքներ։ Աղբյուրների մեծ մասը, որոնք ստեղծվել են Թամուրի և նրա հետնորդների պալատական միջավայրում, իդեալականացնում են Թամուրի գործունեությունը։ Այդպես են վարվել Նիզամ-ադ-դին Շամին, Շերեֆ ադ-դին Եզդին, Մուին ադ-դին Նատանզին, Հաֆեզ Աբրուին, Աբդու ար-Ռեզակ Սամարղանդին, Միրխոնդը և ուրիշները։ Իսկ մյուս աղբյուրները, որոնք ստեղծվել են Թամուրի և նրա հետնորդների պալատական միջավայրից հեռու, Թամուրի և նրա գործունեության գնահատման հարցում ավելի օբյեկտիվ են։ Այդ կարգի սկզբնաղբյուրներ են եվրոպացի ճանապարհորդների նոթագրությունները, Իբն Արաբշահի և հայկական,

վրացական հեղինակների երկերը, ինչպես նաև հայկական և ռուսական տարեգրությունները: Շամին կամ Եզդին թողել են մեզ այն, ինչ որ ցանկացել են գալիք սերունդներին հայտնել ինքը՝ Թամուրը և իր հետնորդները, իսկ Իբն Արաբշահի խիստ և արդարացի գնահատականը համազոր է հայկական, ռուսական և այլ տարեգրությունների ու ժամանակակիցների գնահատականին: Դա պատահական չէ, քանի որ այդ հեղինակներին ներկայացնող երկրները կրել են ծանր հարվածներ և տեսել սարսափելի դաժանություններ[1]: Թամուրը պատմական ասպարեզ իջավ XIV դ. 60-ական թվականներին: Իսկ մինչ այդ նա մի ավազակախմբի առաջնորդն էր և զբաղվում էր թալանով ու կողոպուտով: 1361 թ. նա ծառայության մեջ մտավ Թուկլուղ-Թամուրի մոտ և նշանակվեց Կաշկա-Դարյան թումանի կառավարիչ: Այդ ժամանակ նա 25 տարեկան էր: Այդ նույն թվականին տեղի ունեցավ Թամուրի մերձեցումը Հուսեյն Կազագանի թոռան հետ, որն ավարտվեց բարեկամությամբ՝ Հուսեյնի քույրը դարձավ Թամուրի սիրած կինը[2]: 1365 թ. նրանք պարտություն մատնեցին Իլյասին: Սակայն սրանց համագործակցությունը երկար չշարունակվեց. 1370 թ. գժտվեցին, և Թամուրը մահապատժի ենթարկեց Հուսեյնին[3]: Այս հաղթանակներից հետո Թամուրը զինվորական առաջնորդների Ղուրուլթայում՝ համաժողովում, հռչակվեց Մավերաննահրի միանձնյա կառավարիչ[4]:

1370 թ. Թամուրը Կեշից տեղափոխվում է Սամարղանդ, ամրացնում է քաղաքը և այն դարձնում իր մայրաքաղաքը: 1372—1374 թթ. երկու արշավանքներից հետո Թամուրը

1 Տե՛ս *Новосельцев А. П.* Об исторической оценка Тимура. Вопросы истории, 1973, № 2, с. 4.

2 Տե՛ս *Якубовский*. Тимур. Вопросы истории. 1946, № 8—9, с. 55.

3 Տե՛ս նույն տեղում, էջ 56—59:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 59:

գրավում է Ուրգենչը, և Խորեզմը մտնում է նրա պետության կազմում[5]:

1387—1388 թթ. Մավերաննահրի վրա արշավող Թոխթամիշին միացավ նաև խորեզմշահ Սուլեյման Սուֆին, որը դավաճանեց Թամուրին: 1388 թ. Թամուրը վերջին անգամ արշավեց Խորեզմի վրա, գրավեց Ուրգենչը և հրամայեց քաղաքի բնակչությանը գաղթեցնել Սամարղանդ, իսկ քաղաքը հավասարեցնել հողին[6]:

Նվաճելով Միջին Ասիան և ստեղծելով մի հզոր պետություն, Թամուրը սկսեց իր արշավանքները դեպի Իրան և Անդրկովկաս: 1381 թ. նա նվաճեց Հերաթը և հրամայեց քանդել քաղաքի ամրությունները: Իսկ 1383 թ., երբ Հերաթում Թամուրի դեմ ապստամբություն բռնկվեց, նա արյան մեջ ճնշեց ապստամբությունը և գահընկեց արեց տեղական կառավարող դինաստիային[7]: Արևելյան Իրանը նվաճելուց հետո Թամուրը շարունակեց իր նվաճումները դեպի Իրանի խորքերը:

1386 թ. գարնանը Թավրիզի գրավումից հետո, որի Ահմադ իշխանը Թամուրից սարսափած, առանց դիմադրության թողնում է քաղաքը և փախչում Ոստան, ապա՝ Բաղդադ[8], Թամուրի հրոսակները ներխուժում են Հայաստան: Դեպի Հայաստան Թամուրի առաջին արշավանքը նկարագրում են XV դ. հայ հեղինակներ Գրիգոր Խլաթեցին, Թովմա Մեծոփեցին, Սամուել Անեցու շարունակողը և հիշատակարանների գրիչները: Առաջինն իր «Հիշատակարան աղետից» պատմական վիպասանության մեջ նկարագրելով Թոխթամիշի արշավանքը, նշում է, որ սրան հաջորդեց Սամարղանդից եկած թաթարների արշավանքը[9]:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 60—61:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 62—63:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 64—65:

8 Տե՛ս Թ. Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և հաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 13:

9 Տե՛ս ԺԵ, Հ. Ա, էջ 272—274:

4—16

Ժամանակակից հեղինակները դեպի Հայաստան Թամուրի առաջին արշավանքը նկարագրում են հետևյալ կերպ. ըստ նրանց Թամուրը Թավրիզից արշավում է Սյունիք, պաշարում է Երնջակ բերդը, այստեղից անցնում է Ճակատք գավառ, գրավում սուրբ Մարի (Սուրմալի) քաղաքը և հիմնահատակ ավերում է քաղաքն ու շրջապատի գյուղերը[10]։ Այստեղ Թամուրի հրոսակներին ուժեղ դիմադրում են Կողբ գյուղի բնակիչները, որոնք իրենց տանուտեր Մարտիրոսի ղեկավարությամբ ամրացել էին Բարդող կոչված լեռան վրա, որը Թամուրի զորքի համար մնում է անմատչելի։ Ճակատք գավառից Թամուրը մտնում է Արարատյան դաշտ, գրավում Կարբին, Կոտայքը, պաշարում և գրավում է Բջնի բերդը[11]։

Հ. Մանանդյանը, հիմք ունենալով 1386 թ. Երնջակում գրված մի հիշատակարանի, ինչպես նաև Սամուել Անեցու շարունակողի վկայությունները, գտնում է, որ 1386 թ. Թամուրի զորքը գրավում է Որոտան բերդը, որտեղ այդ ժամանակ իր 60 աշակերտների հետ էր Հովհան Որոտնեցին[12]։

Հ. Մանանդյանի այս կարծիքին համամիտ չենք։ Թամուրի հրոսակները 1385 թ. հասնում են Երնջակ բերդ, որտեղից մտնում են Ճակատք գավառ և ապա՝ Արարատյան երկիր։ Հիշյալ հիշատակագիրը, կարծում ենք, նկատի ունի ոչ թե Թամուրի, այլ Թոխթամիշի արշավանքը, որի բանակը Թավրիզից հեռանալիս մասամբ վերադառնում է Ահրի վրայով, իսկ մյուս մասը՝ Սյունիքի, ուր ըստ Թովմա Մեծոփեցու, Թոխթամիշի նահանջող զորքն ավերում է շատ գավառներ, կոտորում ու գերում բնակչությանը[13]։ Թոխթամիշի բանակը գրավել է նաև Որոտան բերդը։ Այստեղ դասավանդող Հովհան Որոտնեցին, ինչպես վկայում է նրա աշակերտներից Հակոբ գրիչը, հալածանքներից խուսափելու համար իր աշակերտների հետ երկու տարի (1385—86 թթ.) շրջել է տարբեր վայրեր։ Այս կապակցությամբ Հակոբ գրիչը գրել է. «Որ եկին առին զբերդն Որոտան, և հայրենազուրկ արարին զպարոն Սմպատն, որդի Նանիկին։ Եւ կամէին ձերբակալ առնել զսուրբ Րաբունին մեր զվան Հայրենեացն ժառանգութեան։ Եւ սա կամօքն աստուծոյ զերծաւ ի նոցանէ. և Բ (2) ամ բոլոր յայլ և յայլ տեղիս շրջէր աշակերտօք հանդերձ կարդալով և ուսուցանելով»[14]։ Ինչպես տեսնում ենք, 1386 թ. գրած հիշատակարանում, գրիչը հայտնում է, որ Որոտնեցին երկու տարի է, ինչ մի վայրից մյուսն է շրջում։ Ուրեմն նա Թամուրի առաջին արշավանքի մասին չէ, որ խոսում է, այլ Թոխթամիշի։ Սամուել Անեցու շարունակողը Թամուրի կողմից գրաված վայրերը թվարկելիս չի խոսում Որոտանի գրավման մասին։ Նրա վկայությամբ դեպի Սյունիք կատարած արշավանքը տեղի է ունեցել 1387 թ. «Ի սոյն ամի ՊԼԵ. (1386) թվին Լանկթամուրն եկն ի Թավրէզ և ի Նախջուան՝ և անտի ի միում՝ առեր կալաւ մինչև ի Կարբի և ի Բջնի. ի Գառնի՝ Սուրմարի, ի Կողբ. և անտի գնաց ի Վրացտուն՝ ...և ի գալ տարւոյն՝ յաւուրս աւագ զատկին եկ ի Սիւնիս...»[15]։ Հետևապես, Թամուրի արշավանքը դեպի Սյունիք տեղի է ունեցել 1387 թ. գարնանը և ոչ թե 1386 թ., ինչպես գրում է Հ. Մանանդյանը։ Թամուրի բանակն իր ճանապարհին ամայացնում ու մոխրակույտերի է վերածում Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, գերի քշում բնակիչներին։ Նկարագրելով Հայաստանի վիճակը, Մեծոփեցին գրում է, որ նվաճողները հավատացյալներին ենթարկեցին բազմաթիվ տանջանքների, սովի, սրածության, գերեվարության և բազմաթիվ այլ չարչարանքների, այդ պատճառով բնակչությամբ

10 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 17, ՄԺ, հ. 2, էջ 350։

11 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 275, Մ. Չամչյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 421—422։

12 Տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան 1977, էջ 358։

13 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 14։

14 ԺԴ, էջ 560։

15 Սամուէլ Քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց ժամանակագրութիւն շարունակողը, Վաղարշապատ, 1893, էջ 171։

լեցուն հայոց գավառները դատարկվեցին[16], իսկ Գր. Խլաթեցին գրում է.

«Զամուր տեղիսն յաւար առին
Եւ շատ ոճիրըս գործեցին»[17]։

Գր. Խլաթեցու վկայությամբ Թամուրի հրոսակները Կապուտից Բերդը գրավելուց հետո սպանել են 400, իսկ Երևան քաղաքում՝ 500 մարդ[18]։ Բջնիի գրավումից և ավերումից հետո Թամուրի բանակը շարժվում է դեպի Վրաստան։ Ասպատակության ենթարկելով Արևելյան Վրաստանի գյուղերն ու քաղաքները, Թամուրը գրավում է Տփխիսը։ Վրաց Բագրատ թագավորը չկարողանալով դիմադրել, հպատակվում է Թամուրին[19]։ Վրաստանից մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով (որոնց թվում էր նաև Բագրատ թագավորը) Թամուրը 1386 թ. նոյեմբերին գնաց Մուղան՝ ձմեռելու։

1386—1387 թթ. ձմեռը Մուղանում անցկացնելուց հետո, Թամուրը 1387 թ. գարնանը նորից վերսկսում է իր արշավանքը դեպի Հայաստան։ Նա իր բանակի մի մասը մի քանի էմիրների գլխավորությամբ ուղարկում է Թոխթամիշի դեմ, որը մտել էր Շիրվան և հասել Սամյուր գետը[20], իսկ մյուս մասը՝ Սյունիք։ Շիրվանում Թոխթամիշին պարտություն մատնելուց հետո Թամուրի Միրանշահ որդին նորից անցնում է Կուր գետը և շարժվում դեպի Սևանա լիճ[21]։ Ինչպես վկայում են աղբյուրները, 1387 թ. Թամուրի զորքը

16 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 19։

17 ԺԵ, մասն Ա, էջ 275։

18 ԺԵ, մասն Ա, էջ 276, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972, հ. 4, էջ 25։

19 Տե՛ս Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 19, ՄԺ, հ. 2, էջ 350, Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 25—26։

20 Տե՛ս Тизенгаузен В. Г., Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, том II, М.—Л., 1941, с. 151—152.

21 Տե՛ս Тизенгаузен В. Г. նշվ. աշխ., էջ 153։

Հայաստան է արշավել երկու ուղղությամբ, մեկը՝ դեպի Սյունիք[22], իսկ մյուսը՝ դեպի Սևանա լճի ավազան՝ Միրանշահի առաջնորդությամբ։

Սյունիք կատարած արշավանքի ժամանակ Թամուրի հրոսակները քարուքանդ են անում և հրի ու սրի մատնում հանդիպած գյուղերն ու քաղաքները։ 1387 թ. Շահապոնք ամրոցում ձեռագիր ընդօրինակող գրիչը կարևոր տեղեկություններ է հաղորդում այս արշավանքի ու կոտորածների մասին։ «Ոմանք ի գերութիւն վարեալ՝ արք և կանայք, և կէսք առ թուր դիաթաւալ սրախող գալարեալ առհասարակ, քահանայ և աշխարհականք, գէշ անկեալ դիակամբք, անթաղ ընկեցեալք և այլք ի բազմազան տանջանարանս մաշեալք։ Ոմանք հրով կիսայրեացք տոչորեալք, և այլ (ք) ի սովոյ զազանաբեկ վտանգեալք, կէսք խստամբեր կռոնիւք չարչարեալք, և այլք երկեղիւ պակուցեալք։ Որ և մերն ունելով իբր մեռաղս կամաւոր ի պահոց Շահապոնս կոչեցեալ ամրոցի, ոչ ինչ թեթևա բերելով ի մեզ զօրինակ մեծի աստուածաբանութեանն։ Նախ որպէս անդամոր ողջունեն զխաղաղութեան և զշինութեան գոլ, յեղակարծ ժամու հասնել բարկութեան, նմանապէս և աստ՝ աւուրն կիրակէի առաւօտին կրկնոյ զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խռովութեան զաւրաց, սաստագին գոչմամբ և ահագնատեսիլ, ասեղնամերկ կորվայիճ նետողաց, || որք պատեալ պահեալ պաշարէին զմեզ։ Ասացեալն նմանապէս և աստ կատարեալ, ոչ միայն անդ ի հեռաստան կամ աղալերկան, այլ և ի դռան կլայիս սակաւ ինչ դանդաղեալի, միոյն փրկեալ և միւսն գերեալ»[23]։

Սյունիքից Թամուրի հորդաները ներխուժեցին Արցախի լեռնագավառները։ Ծարում Թամուրի հրոսակներին դիմադրություն է ցույց տալիս Դոփյան Հասան իշխանը, որը կնոջ ու որդիների հետ ընկնում է անհավասար մարտում։ Հասա-

22 Տե՛ս Սամուել Անեցի, շարունակող, էջ 171։

23 ԺԴ, էջ 567—568։

նի, նրա կնոջ ու որդիների նահատակության մասին տեղեկություն են հաղորդում երկու աղբյուրներ։ Դրանցից առաջինը 1411 թ. Ծարի Գետամեջ վանքում գրված մի ճաշոց է, որում գրիչը հայտնում է, թե Հասանի և նրա կնոջ հետ զոհվել են նրանց որդիները՝ Գրիգորը, Սարգիսը, Շահնշեն, Ջահանշեն, Աղբուղեն, Երվանը և Թագադարմ իշխան Սադունը[24]։ Իսկ մյուս աղբյուրը Գրիգոր Խլաթեցու «Հիշատակարան Աղէտիցն» է[25]։ Հայաստանի արևելյան շրջանների նվաճումը ավարտելով, Թամուրի զորքերը Վայոց ձորով նորից մտնում են Արարատյան երկիր և առաջանում դեպի Արաքսի անցումները։

Արևելյան Հայաստանը նվաճելուց հետո, ինչպես վկայում է Գր. Խլաթեցին, Թամուրն անցնում է Երասխ գետը և սկսում իր արշավանքը դեպի Արևմտյան Հայաստան[26]։ Անցնելով Հայկական պարը, նա բանակ է դնում Ծաղկոտն գավառում, որտեղից արշավում է Դիադին և գրավում ու ավերում է Բայազետ քաղաքը։ Այնուհետև, առաջ ընթանալով Բայազետ-Կարին ուղեգծով և իրենց ճանապարհին մոխրակույտերի վերածելով Հայաստանի գյուղերն ու քաղաքները, Թամուրի հրոսակները հասնում են Էրզրում (Կարին) և նվաճում քաղաքը։ Երզնկացի Գևորգ գրիչն այս առթիվ գրում է. «Յայսմ ժամանակի, յորում էր թուականն Հայոց ՊԼԶ (1387), եկաւ ազգն խուժադուժ յարևելից, ի կողմանոց հիւսիսոյ, որ կոչէր Լանկ Թամուր, և եկն մինչև յԱրզրում, և բազում ածիրբս գործեաց»[27]։ Հարավային Հայաստանում Լանկ-Թամուրի զորքին ուժեղ դիմադրություն է ցույց տալիս XIV դ. վերջում Քաջբերունիքի, Տարոնի և Սասունի շրջաններում կազմակերպված կարա-կոյունլու թուրքմենների ցեղային միությու-

24 Տե՛ս ժե, մասն Ա, էջ 122—123։

25 Նույն տեղում, էջ 275—276։

26 Տե՛ս նույն տեղում, էջ 277։

27 ժԴ, էջ 570։

նը, որին այդ ժամանակ գլխավորում էր Ղարա Մահմադը՝ իր Ղարա-Յուսուֆ որդու հետ[28]։

Կարինից Լանկ-Թամուրի զորքը Խնուսի դաշտով մտնում է Մշո դաշտ և 1387 թ. անսպասելի հարձակվում Ղարա Մահմադի վրա։ Վերջինս չի դիմադրում և նահանջում է դեպի հարավ։ Սակայն Թամուրի զորքը սրընթաց գրոհով Ճապաղջրի մոտ կասեցնում է նրա ընթացքը և ստիպում ճակատամարտ տալ։ Այս ճակատամարտում Թամուրի զորքը ծանր պարտություն է կրում։ Շատ զինվորների հետ սպանվում է նաև զորավարներից Լողմադանը[29]։ Թամուրի պարտված զորքը Ճապաղջրից նահանջում է Մշո դաշտ և կողոպտում նրա անպաշտպան գյուղերը։ Մշո դաշտից Թամուրն արշավում է Բաղեշի վրա։ Բաղեշի և Խութի Ամիր Շարաֆ ամիրան առանց դիմադրության նրան է հանձնում քաղաքը[30]։ Բաղեշից Թամուրի զորքը արշավում է Վանա լճի ափերը։ Արծկեի Սահանդ իշխանը ևս առանց դիմադրության հնազանդվում է Թամուրին։ Օգտվելով առիթից, Ղարա-Յուսուֆը Մշո դաշտ իջնելով սկսում է ասպատակել գյուղերն ու կողոպտել բնակչությանը։ Թամուրն իր զորքի մի մասն ուղարկում է Մշո դաշտ ներխուժած Ղարա-Յուսուֆի դեմ։ Իմանալով այդ մասին, Յուսուֆը Խութի ամիր Շարաֆին հրամայում է Մշո դաշտի բնակչությանը քշել Խութի և Սասունի լեռները։ Խութի լեռներում Ղարա-Յուսուֆի բանակի և նրան հետապնդող Թամուրի զորամասերի միջև տեղի է ունենում մեծ ընդհարում, որի ժամանակ թուրքմենները կռվում էին քաջաբար։ Թամուրի զորքը պարտվում է և նահանջում[31]։ Ընդհարումից մեծապես տուժեցին հայ գաղթականները, որոնց մի մասը զոհ գնաց ընդհարման ժամանակ։

28 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 362, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 26։

29 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 21, Մժ, հ. 2, էջ 350։

30 Տե՛ս նույն տեղում, էջ 21—22, նույն տեղում։

31 Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 22—24։

Թ. Մեծոփեցին այս պատմությունը լսել է Կարապետ կրոնավորից, որը եղել է այն գաղթականներից մեկը, որոնց Յուսուֆը քշել էր Սասունի լեռները. «Աստ էր տեսանել զաղէտս տարակուսանաց ամենայն զրնդին. զի հայրն զորդին ուրացավ, և որդին՝ զհայրն. մայր՝ զդուստրն, և դուստր՝ զմայրն եղբայր՝ զեղբայրն, և սիրելին՝ զսիրելին, և զոչումն աղաղկի նոցա ելանէր յերկինս: Որ և ես ի ներս կայի»[32]: Մեծոփեցու վկայությամբ կռվի ընթացքում Թամուրի զորքից սպանվեց ավելի քան 2000 մարդ[33]: Մշո դաշտի բնակիչները Թամուրի զորքերի գերությունից խուսափելու համար գաղթեցին Սասունի լեռները: Պատմիչի վկայությամբ մշեցի մի կին, որը Թամուրի հրոսակների ձեռքը չընկնելու համար թաքնվել էր Խութի մթին անտառներում, տեսնելով, որ անօրենները կարող են գերել իրեն, առանց վարանելու սրով սպանել է իր տղային, ապա բարձրանալով մի ժայռի գագաթ՝ դահավիժել անդունդը[34]: Թամուրը լսելով իր զորքի պարտության մասին, շտապում է Մուշ, այնտեղից էլ ընդհարման վայրը, բայց թուրքմեններին հետամուտ չի լինում, որովհետև նրանք արդեն հեռացել էին Սասուն և ապաստանել Մարութա սարի անառիկ բարձունքներին: Այստեղից Թամուրը կրկին վերադառնում է Բաղեշ: Բաղեշից նա արշավում է դեպի Վանա լճի արևմտյան ափերը[35]: Նա գրավում է Խլաթը, Արծկեն, Արճեշը, Բերկրին, ապա Վանա լճի արևելյան ափով իջնելով դեպի հարավ՝ ասպատակում է այդ շրջանը և պաշարում Վանը[36]: Վանի Եզդին ամիրան ամրանում է բերդում և 40 օր դիմադրում բռնակալին: Թամուրին ի վերջո հաջողվում է կոտրել պաշարվածների դիմադրությունը և գրավել բերդը: Սովից ու ծարավից ուժասպառ պաշարվածները անձնատուր են լինում բռնավորի ողորմածությանը[37]: Վանը գրավելուց հետո Թամուրը անասելի դաժանությամբ վարվեց իրեն դիմադրած բնակչության հետ: Նրա հրամանով ողամարդկանց բերդի գլխից գցեցին անդունդը, իսկ կանանց ու երեխաներին՝ գերի քշեցին: «Եւ այնքան բարձրացաւ մեռեալն, մինչ զի վերջին անկեալքն ոչ մեռանէին, զոր տեսաք աչօք եւ լուաք ականջօք մերովք ի սուրբ հօրէն՝ սրբազան արքեպիսկոպոսէն Տէր Զաքարիայէ եւ ի հօրէն վարդապետ Տէր Պօղոս կոչեցեալ, որ եւ նոքա պատահեցան լինելով ի բերդին»[38]: Վանի պաշարման և գրավման մասին խոսում է նաև XVI դ. հեղինակ Շարաֆ—խան-Բիթլիսին: Նա վկայում է, որ Վանի բերդը Թամուրին 27 օր դիմադրել է: Բերդի գրավումից հետո նա հրամայել է շատերին մորթել և հիմնահատակ ավերել այն, սակայն բերդի ամրության պատճառով Թամուրի հրամանը չի իրագործվել[39]: 1391 թ. վանեցի գրիչ Թուման Վանում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում գրել է, որ Թամուրն առավել ավերեց Վասպուրական աշխարհը, գրավեց Վանի բերդը, չխնայելով ոչ մեծերին և ոչ էլ փոքրերին: Նա բերդը պաշտպանողների մի մասին բերդից ցած գցել ավեց, իսկ ոմանց էլ գերի տարավ[40]: Վանի պաշարումը և գրավումը տեղի է ունեցել 1387 թ. օգոստոս-սեպտեմբերին: Սամուել Անեցու «Ժամանակագրության» շարունակողի վկայությամբ Թամուրը Վանի բերդից ներքև է գցել 7000 մարդ[41]:

32 Նույն տեղում, էջ 23:

33 Նույն տեղում, էջ 25:

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում, էջ 27—28:

36 Տե՛ս ՄԺ, հ. 2, էջ 350:

37 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 30, Մ. Չամչյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 425 (Մ. Չամչյանը օտարալեզու աղբյուրների հիման վրա գտնում է, որ Վանի պաշարումը տևել է քսան օր: Մ. Զուլալյան, նշվ. աշխ., էջ 87, իսկ Լ. Խաչիկյանը գտնում է, որ պաշարումը տևել է 26 օր, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 26):

38 Նույն տեղում, էջ 30—31, Սամուել Անեցի. շարունակող, էջ 171:

39 См. Шараф-хан-Бидлиси, Шараф-Наме, т. I. Москва, 1967, с. 153—154.

40 ԺԴ, էջ 589—590:

41 Տե՛ս Սամուել Անեցի. շարունակող, էջ 171:

Թամուրի հրոսակները մահ ու ավեր տարածեցին ողջ Հայաստանում. նրանց ձիերի կործանիչ սմբակներից Հայաստանի ոչ մի շրջան չազատվեց։ Նկարագրելով Հայաստանի ծանր վիճակը, Մեծոփեցին գրում է. «Զի լցաւ աշխարհ ամենայն գերութեամբ Հայոց»[42]։ Թամուրի կողմից բերդերը գրավելու եղանակի և նրա զորքի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Աղթամարցի Կարապետ գրիչը՝ 1389 թ. գրած իր ձեռագիր հիշատակարանում։ Կարապետ գրիչի վկայությամբ Թամուրի հեծելազորը անթիվ և անհամար էր, որոնք «...զլայնանիստ տեղիս փակէին, աշխարհայուր գձայնս առնէին, զերկիր ողջոյն սատղակարկաչ և բոսորաներկ խորանաւք լնուին»[43]։ Նրանք քաղաքների ու բերդերի վրա գրոհում էին աղմուկ-աղաղակով, դհոլ ու զուռնա նվագելով։ Եթե դիմադրության էին հանդիպում, ապա գործ էին դնում քար նետող և պարիսպներ քանդող մեքենաներ։ Թամուրն ավելի դաժան էր վարվում այն բերդերի ու քաղաքների նկատմամբ, որոնք փորձում էին դիմադրել նվաճողին։ Այս կարգի քաղաքներն ու բերդերը նա պաշարում էր մեծաթիվ զորքով, որոնք հարձակվում էին աղմուկ-աղաղակով և նետերի տարափ տեղալով, ապա գործ էին դնում քար նետող ու քանդող սարքերը և մեկ օրվա ընթացքում հողին էին հավասարեցնում հազարավոր տարիների ընթացքում կառուցված ամրություններն ու շինությունները[44]։ Բաց բերդերը գրավելուց հետո, ինչպես վկայում է գրիչը, դաժան ձևերով սպանում և խողխողում էին բնակիչներին։ Տղամարդկանց սրի էին քաշում, կանանց բռնաբարում, իսկ երեխաներին կամ գերի էին տանում, կամ էլ «...բերեալ զկալ կամնասայլից զոգայոն ձիովք կոտէին, և փոխան ցորենոյ արիւնս գետոց բղխէին, և փոխանակ յարդի զոսկերս բերե զփոշի յերկիր հոսէին»[45]։

42 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 31։

43 ԺԴ, էջ 578։

44 Նույն տեղում։

45 Նույն տեղում, էջ 579։

Իրեն դիմադրող բերդերի և քաղաքների նկատմամբ Թամուրի դաժան վերաբերմունքը, ինչպես շատ ճիշտ նկատել է Հ. Մանանդյանը, նպատակ էր հետապնդում սարսափի մեջ պահելու դեռևս չնվաճված երկրների, քաղաքների ազգաբնակչությանը և դյուրացնելու դրանց նվաճումը[46]։ Հայաստանից Լանկ-Թամուրը հեռացավ 1387 թ. աշնանը՝ իր հետ տանելով մեծաթիվ գերիներ ու հսկայական հարստություն։ Այս ամենի հետևանքը եղավ այն, որ 1388 թ. երկրին տիրեցին սովի ու համաճարակը, որոնք հազարավոր մարդկային զոհեր խլեցին։ Սովը այն աստիճան սոսկալի տարածվեց, որ մարդիկ շներին ու կատուներին ուտելուց հետո սկսեցին իրար ուտել, իսկ վերջում դաժան սովից մահանում էին ողջ մնացածները[47]։

Լանկ-Թամուրի հեռանալուց հետո Հայաստանի հարավարևելյան նահանգները նորից գրավեցին կարա-կոյունլու թուրքմենները, այս անգամ իրենց նոր առաջնորդ Ղարա-Յուսուֆի գլխավորությամբ (1388—1420 թթ.)։

Դեպի Հայաստան Լանկ-Թամուրի երկրորդ արշավանքը տեղի է ունեցել 1394 թ.։ Լիմ կղզում ապաստանած մի անանուն գրիչ հաղորդում է, որ «...արինարբու զօրքն թաթարին, որոյ անուն գլխաւորին Լանկ-Թամուր կոչիւր...» հարձակվեց մեր երկրի վրա[48]։

Անդրկասպյան երկրում Թամուրը 1391 թ. հունիսի 18-ին պարտության մատնեց Ոսկե Հորդայի Թոխթամիշ խանին[49], իսկ 1392—93 թթ. Իրաքում և Ֆարսում՝ Մուզաֆարյան Շահ-Մանսուրին[50]։ Այս հաղթանակներից հետո նա արշավեց կարա-կոյունլուների դեմ։ Դուրս գալով Խորասանից, Թամուրը Պարսկաստանով մտավ Միջագետք, որտեղ գրավեց Բաղ-

46 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 363։

47 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 32։

48 Տե՛ս ԺԴ, էջ 607։

49 Տե՛ս Вопросы истории, 1946, № 8—9, с. 63.

50 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 364, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV էջ 28։

դադ, Ջեզիրան և Մուսուլ քաղաքները, ապա, ընթանալով դեպի հյուսիս, պաշարեց և գրավեց Մծբինը, Մերդինը, Ամիդը և Սասունի վրայով ուղևորվեց դեպի Մշո դաշտ։ Երբ Թամուրը բանակեց Մշո դաշտում, թանկարժեք նվերներով ու ձիերով նրա մոտ եկավ քուրդ Ամիր Շարաֆը և նրան հանձնեց Բիթլիսի, Ախլաթի և Մուշի բանալիները[51]։ Մշո դաշտից Լանկ-Թամուրի հրոսակներն արշավեցին Երզնկայի վրա։ Երզնկայում նրանք հիմնահատակ արեցին քաղաքի կաթողիկե եկեղեցին և ուրիշ այլ եկեղեցիներ ու թալանեցին դրանց ունեցվածքը, չնայած որ քաղաքի Թահերթեն իշխանը, ինչպես վկայում է Կլավիխոն, առանց դիմադրության հնազանդվել էր նրան[52]։ Երզնկայից Լանկ-Թամուրը Կարնո դաշտով մտավ Բասենի դաշտ և պաշարեց Ավնիկ նշանավոր բերդը, որի կառավարիչն էր Ղարա Մահմուդի որդին՝ Մսրը։ 1394 թ. հունիսի վերջերին Թամուրը մտնում է Ալաշկերտի դաշտ, որտեղից էլ Սուկավ լեռան ուղեգծով արշավում է դեպի Բասեն։ Նա Ավնիկի մոտ հասնում է հուլիսի 4-ին։ Երկու օրվա մարտերից հետո Թամուրը գրավում է քաղաքը։ Մսրը ամրանում է միջնաբերդում և շարունակում դիմադրությունը։ Երկար պաշարումից հետո Թամուրը միջնաբերդի դիմաց արհեստական բլուր է կառուցել տալիս և հրամայում է քար նետող սարքերով քարկոծել բերդը։ Պաշարվածները, համոզվելով, որ դիմադրելն իզուր է, օգոստոսի 20-ին բերդը հանձնում են Թամուրին[53]։ Այս կարևոր ամրոցը դարձավ դեպի Փոքր Ասիա և Միջագետք Թամուրի արշավանքների հենակետը։ Բասենից Լանկ-Թամուրի

51 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 44—45։ Լանկ-Թամուրի երկրորդ արշավանքը ըստ Թ. Մեծոփեցու տեղի է ունեցել 1395 թ.։ «Դարձեալ 844 թուականին շարժեցաւ դիւժ բռնաւորն Խորասանայ և եկն Պաղտատայ ճանապարհաւն»։

52 Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 96, Սամուել Անեցի. շարունակող, էջ 171, Մ. Չուպալյան, նշվ. աշխ., էջ 57։

53 Հանդես Ամսօրյա, 1948, էջ 432—437։

հորդաները մտան Վանանդի շրջան, ուր որոշ դիմադրություն հաղթահարելուց հետո գրավեցին ու ավերեցին Կարսի բերդը, իսկ բնակչությանը սրի քաշեցին։ Վանանդից Թամուրը Արշարունիքի վրայով արշավեց Ճակատք գավառի վրա, Նորից ավերեց Սուրմալի և Կողբ գյուղաքաղաքներն ու կողոպտեց դրանց բնակիչներին[54]։ Այս արշավանքի ընթացքում, ինչպես հաղորդում է Թ. Մեծոփեցին, «Եկն ի վերայ գաւառին Արարատեան, աւերեաց զաշխարհն ամենայն կողոպտելով յընչից, նաաւ ի վերայ բերդին Բագրատունւոյ, էառ զնա և բաժանեաց 300 տաճիկս եւ 300 քրիստոնեայս ի միմեանց»[55]։ Թ. Հակոբյանը գտնում է, որ «Բերդն Բագրատունւոյ» ասելով Թ. Մեծոփեցին նկատի է ունեցել երբեմնի հռչակավոր Անի մայրաքաղաքը[56]։

Այստեղ, երբ լուր ստացվեց, որ Թոխթամիշը մտել է Շիրվան, որի կառավարիչ Շիրվանշահ Իբրահիմը (1382—1417 թթ.) Լանկ-Թամուրի վասալն էր, նա շտապ ընթացքով արշավեց Թոխթամիշի դեմ։ Երբ Թամուրի բանակը մոտեցավ Շիրվանին, Թոխթամիշը նահանջեց դեպի Հյուսիսային Կովկաս։ Լանկ-Թամուրը իր բանակով 1394—1395 թթ. ձմեռն անցկացրեց Մուղանում։ Նա այս ընթացքում Միրանշահին, Ռուստամին և Ջահանշահ Բահաթուրին հարձակման ուղարկեց Երնջակ բերդի վրա, որը անառիկ էր մնացել նրա առաջին արշավանքի ժամանակ[57]։ 1394 թ., երբ Լանկ-Թամուրը հասավ Ճակատք գավառը, ինչպես հաղորդում է Թ. Մեծոփեցին, առաջապահ մի գունդ ուղարկեց Վասպուրական, որին Թամուրի հեռանալուց հետո, տիրացել էր Ղարա-Յուսուֆը։ Նա գրավել էր Արճեշ քաղաքը և սպանել քաղաքի ոստիկան Հիմաթին։ Լսելով կատարված դեպքերի և Յուսուֆի առաջխաղացման մասին, նրա դեմ է դուրս գալիս

54 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 45—46, Մ. Օրմանյան, Ազգապատում, Բեյրութ, 1960, էջ 203։

55 Նույն տեղում, էջ 46։

56 Թ. Հակոբյան, Անիի պատմություն, գիրք II, Երևան, 1982, էջ 334։

57 Տե՛ս Тизенгаузен В. Г., նշվ. աշխ., էջ 124—125։

Ոստանի տեր Ամիր Եզդինը, սակայն շուտով սրանք հաշտվում են[58]: Ոստանի Ամիր Եզդինին օգնության շտապող Թամուրի 400 հոգուց բաղկացած ջոկատը տեղեկանալով այդ հաշտության մասին, հետ դարձավ՝ իր ճանապարհին կողոպտելով Աղի գյուղը և հայկական այլ բնակավայրեր:

Իմանալով Թամուրի զորքերի արշավանքի մասին, Յուսուֆը իր եղբոր՝ Յար-Ալու հետ սրընթաց գրոհեց սրանց դեմ, գիշերով հարձակվեց և կոտորեց ամբողջ ջոկատը, իսկ նրա հրամանատարին՝ Աթալմիշին գերեց և ուղարկեց Մըսըր: Լսելով իր զորքի ջախջախման և հրամանատարի գերվելու մասին, Թամուրն իր Միրանշահ որդուն 15000-անոց բանակով ուղարկեց Յուսուֆի դեմ: Վերջինս փախավ Միջագետք և մինչև Թամուրի մահը՝ 1405 թվականը, այլևս չհամարձակվեց երևալ Հայաստանի սահմաններում[59]: Այս կապակցությամբ Շարաֆ խան Բիթլիսին գրում է, որ Լանկ-Թամուրը նամակով դիմում է սուլթան Բայազետին, պահանջելով պատժել Յուսուֆին: Սուլթան Բայազետը ըստ երևույթին վախենալով Լանկ-Թամուրի սպառնալիքներից, Ղարա-Յուսուֆին և Ջելաիրյան Ահմադին ուղարկում է Եգիպտոսի Ֆարաջ սուլթանի մոտ: Վերջինս երկուսին էլ բանտարկում է Մարա բերդում, ուր նրանք մնում են մինչև Լանկ-Թամուրի մահը[60]: Ինչպես ասվեց վերևում, 1394—1395 թթ. ձմեռը Թամուրն անցկացրեց Մուղանում, իսկ 1395 թ. գարնանը մեծ բանակով արշավեց Թոխթամիշի դեմ: Այդ նույն թվականի ապրիլին նա Թերեք գետի ափին ծանր պարտության մատնեց Թոխթամիշին և քշեց Հյուսիսային Կովկասից[61]:

1396 թ. ամռանը Թամուրը վերադարձավ Սամարղանդ, նվաճված երկրների վրա որպես կուսակալ նշանակեց իր

58 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 46—47:

59 Տե՛ս նույն տեղում, էջ 48:

60 Տե՛ս *Шараф-хан-Бидлиси*, Шараф-Наме, с. 417.

61 Տե՛ս *Якубовский А.*, Тимур, с. 63. Հ. Մանանդյան, նշված աշխ., էջ 365, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV էջ 28:

Միրանշահ որդուն, որի իշխանության սահմանները տարածվում էին Բաղդադից Դերբենդ և Համադանից մինչև Փոքր Ասիա: Շուտով, ըստ Հ. Մանանդյանի, Միրանշահի դեմ ապստամբեցին Ջելաիրյան Ահմադը և Ղարա-Յուսուֆը, որոնք ձգտում էին վերահաստատվել իրենց իշխանություններում: Ղարա-Յուսուֆը գործում էր Միջագետքում, իսկ սուլթան Ահմադը՝ հենված արաբ բեդուինների զինված ուժերի վրա, Ասորիքից մտավ Իրաք և գրավեց Բաղդադը[62]: Հ. Մանանդյանի այս կարծիքին համաձայն չենք, քանի որ Շարաֆ խան Բիթլիսիի վկայությամբ նրանք Եգիպտոսում մնացին մինչև Թամուրի մահը[63]:

Թամուրը երրորդ անգամ Հայաստանի սահմաններում երևաց 1400 թ.: Նրա այս արշավանքը հիմնականում ուղղված էր Վրաստանի դեմ: Դեռևս 1386 թ. Բագրատ V թագավորին հաջողվել էր իր Գեորգի, Կոստանդին և Դավիթ որդիների օժանդակությամբ ազատվել գերությունից և ջարդել Թամուրի 12 հազարանոց բանակը, իսկ 1399 թ. վրաց Գեորգի VII թագավորը հարձակվել էր Երնջակ բերդի վրա, որը պաշարել էր Թամուրի զորքը և նրան պարտության մատնելով, ազատել սուլթան Տահիրին և ուղարկել հոր՝ Ջելաիրյան Ահմադի մոտ[64]: Իմանալով այս մասին, Թամուրը, որը նոր էր վերադարձել դեպի Հնդկաստան կատարած հաջող արշավանքից, մեծ բանակով արշավեց դեպի Վրաստան: Ինչպես վկայում է Սամուել Անեցու «Ժամանակագրության» շարունակողը, և Իբն-Արաբշահը, Լանկ-Թամուրի բանակն ավերեց ու կողոպտեց Վրաստանը, սրի քաշեց ու գերեց հազարավոր մարդկանց[65]: Տաթևում ձեռագրի հիշատակարան

62 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 367, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 29:

63 *Шараф-хан-Бидлиси*, Шараф-Наме, с. 417.

64 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 279:

65 Տե՛ս Սամուել Անեցի, շարունակող, էջ 171, Իբն-Արաբշահ, Պատմութիւն Լէնկ-Թիմուրայ, թարգմանեաց ի տաճիկ բնագրէ Ա. վարդ. Տէր-Յովհաննիսեանց, Երուսաղեմ, 1873, էջ 98—99:

ընդօրինակող Սարգիս գրիչը 1401 թ. այս դեպքերի կապակցությամբ գրում է. «Եւ յանցեալ ամի... իշխանն անօրէն, որդին կորստեան, որ յազգէ խորազմին՝ Թամուր-Լանկ անուանեալ, որ զաշխարհս Հայոց երիցս անգամ կործանեալ էր, եկն յերկին բազում և անթիւ զօրօք և էառ զաշխարհն Վրաց,... և զամենեսեան առհասարակ ի սուր և ի գերութիւն վարեաց, թուով ՃՌ (100000)—ու գրեցաւ զկորուստն, և զեկեղեցիս քարահատակ կործանեաց»[66]։

Լանկ-Թամուրի արշավանքը Վրաստանի վրա տևել է 1399 թ. աշնանից մինչև 1400 թ. ամառը (յոթ ամիս)։ Այս կապակցությամբ 1400 թ. Խառաբաստա վանքում Գրիգոր Խլաթեցին իր ընդօրինակած ձեռագիր հիշատակարանում գրում է. «Եւ եկն, եկաց ի վերայ աշխարհին Վրաց, յաշնանային յեղանակէն, մինչև յամառնային, ամիսս է (7), աւելի և ոչ պակաս։ Եւ առեալ բազում ամրոցս, և սպան զբազումս ի նոցանէ, մինչև գրեթէ զամենայն արս կոտորեաց, զորոց զկանայս և զտղայս գերի խաղացոյց, անթիւ և անհամարս»[67]։

Վրաստանից Լանկ-Թամուրը արշավեց օսմանյան թուրքերի դեմ[68]։ Արշավանքի ավերիչ ուղիները Հայաստանը խաչաձևում էին հյուսիսից հարավ։ Սուլթան Բայազետ I-ը, օգտվելով Թամուրի բացակայությունից, գրավել էր Սեբաստիա, Մալաթիա և Երզնկա քաղաքները։ Ասվեց, որ դեպի Փոքր Ասիա Թամուրի արշավանքների համար կարևոր հենակետ էր Ավնիկը։ Գալով Ավնիկ, նա շարունակեց իր ռազմուղին՝ Կարին-Երզնկա-Սեբաստիա ուղեգծով։ 1400 թ. Լանկ-Թամուրն արշավեց Սեբաստիա քաղաքի վրա և պաշարեց այն։ Սեբաստիայի բնակիչներն ամրանալով քաղաքում, համառ դիմադրություն ցույց տվեցին նվաճողին։ Թամուրը

66 ԺԵ, մասն Ա, էջ 5։

67 ԺԴ, էջ 628։

68 Տե՛ս Սամուէլ Անեցի, շարունակող, էջ 171, Իբն-Արաբշահ, նշվ. աշխ., էջ 111։

բնակիչներից պահանջում է զենքը վայր դնել, խոստանալով ազատություն։ Քաղաքի բնակիչները դիմադրությունը շարունակելու հնարավորություն չունենալով և հավատալով նրա խոսքին՝ ապավինեցին բռնակալի ողորմածությանը։ Մարդակերպ այս հրեշը իսկապես «կատարեց իր խոստումը» և ոչ ոքի սրով չսպանեց, այլ քաղաքի պարիսպների տակ փորած փոսերում հրամայեց կենդանի թաղել 3000 մարդ և նրանց ծածկել հողով ու ջրով[69]։ Խալկ Կոնդիլեսը Սեբաստիայի կոտորածը նկարագրել է այսպես. Թամուրի հրամանով՝ «...առաջին հերթին սրի քաշվեցին բոլոր տղամարդիկ, այնուհետև հավաքելով կանանց ու երեխաներին մի մեծ հրապարակի վրա (Թամուրը) նրանց վրա բաց թողեց իր հեծելազորը, որը մի անողորմ կոտորած սարքեց, սպանելով մինչև վերջին մարդը։ Ահա այս տարաբախտ քաղաքի վախճանը, քանզի և ոչ մի կենդանի էակ չճողոպրեց սրից»[70]։

Սուլթան Բայազետը, իմանալով այդ մասին, իր որդու՝ Սուլեյման Չելեբիի գլխավորությամբ սավարաթիվ մի բանակ ուղարկեց Լանկ-Թամուրի դեմ։ Մինչև Սուլեյման Չելեբիի հասնելը, Լանկ-Թամուրն արդեն հեռացել էր դեպի Մալաթիա։ Սամուել Անեցու շարունակողը, ինչպես նաև Ոստանցի մի գրիչ, Սեբաստիայի գրավումը նշում են 1401 թ.։ Ոստանցի գրիչը 1401 թ. գրած հիշատակարանում Սեբաստիայի գրավման առթիվ գրել է. «ՊԾ. (1401) թուին սաստիկ և թանձր մարախ եկեկ ի Շամբէն...

Ի սոյն ամի Թամուր-Բէկն էառ զՍեբաստ քաղաք և քանդեաց և աւերեաց, և սրախողխող արար զամենեսեան, և զբազումս գերեաց՝ ի կանանց և ի տղայոց, և ԳՌ (3000) մարդ զերկիր բացեալ և կենդանոյն թաղեալ՝ զայնոսիկ, որ նետ արձակեցին ի նա։ Եւ զայս արարեալ բազմութեամբ զօրօք գնացեալ ի Շամբն՝ ի վերայ Հալպայ և Դամասկոսի. և

69 ԺԵ, մասն Ա, էջ 3, Իբն-Արաբշահ, նշվ. աշխ. էջ 110։

70 Մ. Զուլալյան, նշվ. աշխ., գիրք Ա, էջ 90։

մատնեաց սատակեալ ի ձեռս նորա, էառ և անչափ կոտորումն արար ի Հալպա քաղաք...»[71]։

Ս. Անեցու շարունակողը ևս գրում է, որ Սեբաստիան Լանկ-Թամուրի կողմից գրավվել է 1401 թ.։ Անեցու շարունակողը, խոսելով Թամուրի 1399—1400 թթ. Վրաստան կատարած արշավանքի մասին, գրում է, որ գրավեց Թբիլիսին, ավերեց նրա եկեղեցիները, Վրաստանից արշավեց Միջագետք, հասավ մինչև Երուսաղեմ, սակայն այն չգրավեց և մեծ ավարով գնաց դեպի Թոխատ։ Իսկ հաջորդ տարի գրավեց Կամախը, Սեբաստիան և այլ վայրեր։ Սեբաստիայի պատերի տակ կենդանի թաղեց ավելի քան երկու հազար մարդ[72]։

Թուրքերի հետ վճռական ճակատամարտ տալուց առաջ Թամուրը որոշեց իր թիկունքն ամրապնդել Միջագետքից և Ասորիքից[73], որտեղ գործում էին նրա հիմնական թշնամիները՝ Ղարա-Յուսուֆը, Ջելաիրյան Ահմադը և Եգիպտոսի սուլթանը։ Սեբաստիայից Լանկ-Թամուրն արշավեց Մալաթիայի վրա։ Քսաներեք օր քաղաքը պաշարելուց հետո նա գրավեց և ավերեց այն[74]։ Իր զորքի անցումը Եփրատից ապահովելու նպատակով Թամուրը հրամայեց քանդել Մալաթիայի կաթողիկե եկեղեցին և նրա քարերից ճանապարհ պատրաստել Եփրատի վրա։ Դեռ մինչև այսօր էլ մալաթիացի հայերը հիշում են այդ դեպքի հետ կապված հետևյալ քառատողը.

«Լանկ-Թամուրն եկավ
Սուրբ Փրկիչը քանդեց,
Քարերը ձեռքից ձեռք
Եփրատը թափեց»։

71 Ժե, մասն Ա, էջ 3։
72 Սամուել Անեցի, շարունակող, էջ 171—172։
73 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 371։
74 Տե՛ս Իբն-Առաբշահ, նշվ. աշխ., էջ 111։

Լանկ-Թամուրն այստեղից իջավ Կիլիկիա, ավերեց և ամայացրեց Կիլիկիայի հայկական շրջանները, մեծ վնաս պատճառելով տեղի հայ ազգաբնակչությանը։ Կիլիկիայից մտավ Ասորիք, գրավեց և թալանեց Հալեպ և Դամասկոս քաղաքները։ Դամասկոսը գրավելուց հետո թալանեց այն, մանուկներին ու կանանց գերեվարեց, տղամարդկանց կոտորեց և ապա հրամայեց հրդեհել քաղաքը[75]։ Ձմեռը Ասորիքում անցկացնելուց հետո, 1401 թ. գարնանը նա մտավ Միջագետք, գրավեց Մերդին և Բաղդադ քաղաքները և սոսկալի կոտորածի ենթարկեց բնակիչներին, 1401 թ. նոյեմբերի 29-ին վերադարձավ Ղարաբաղ՝ ձմեռելու[76]։ Երբ Լանկ-Թամուրը հեռացավ Փոքր Ասիայից, սուլթան Բայազետը նորից գրավեց Մալաթիան, Սեբաստիան ու Երզնկան և գերի տարավ Երզնկա քաղաքի իշխան Թահերթենի ընտանիքը։ Այդ մասին իմանալով, Թամուրը նամակ ուղարկեց Բայազետ I-ին՝ առաջարկելով հեռանալ գրաված վայրերից և հետ վերադարձնել իր վասալ Թահերթենի ընտանիքը։ Բայազետ I-ը արհամարհական մի նամակով հետ վերադարձրեց Լանկ-Թամուրի պատվիրակին, հայտնելով, որ ինքը պարտության կմատնի Թամուրի նման հիմարին և կգերի նրա գլխավոր կնոջը[77]։ 1402 թ. Լանկ-Թամուրը մեծ բանակով արշավանքի դուրս եկավ իր հզոր ախոյանի՝ օսմանյան թուրքերի դեմ։ Ինչպես իր առաջին արշավանքի ժամանակ, այս անգամ էլ նա գնաց նույն ճանապարհով՝ Ավնիկ-Կարին, ապա Երզնկայով մտավ Սեբաստիա։ Օսմանյան բանակը 120 հազար էր, որից 10 հազարը սերբեր էին՝ իրենց Լազար թագավորի առաջնորդությամբ[78]։ Սուլթան Բայազետն իր բանակով ուղևորվեց դեպի Անկարա, որը լավ ամրացված բերդ

75 Տե՛ս նույն տեղում, էջ 146։
76 См. Тизенгаузен В. Г. նշվ. աշխ., էջ 188։
77 Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 98—99։
78 Տե՛ս Պ. Այվազովսկի, Պատմություն օսմանյանց, Վենետիկ, 1841, էջ 66—67։

էր և ուներ մթերքի պաշար[79]։ Լանկ-Թամուրն իմանալով Բայազետ I-ի մտադրությունը, իր ռազմերթն ուղղեց դեպի հարավ։ Նա ութ օր լեռներով առաջ ընթանալով խուսափեց թուրքերին հանդիպելուց, ապա իջնելով լեռներից սրընթաց գրոհով արշավեց Անկարայի վրա։ Տակտիկական այս քայլով Լանկ-Թամուրը խաբեց թուրքական սուլթանին և նրա բանակը իր հետևից տարավ լեռները։ Սուլթան Բայազետը փորձեց Լանկ-Թամուրից առաջ հասնել Անկարա, բայց թուրքական հոգնած բանակն Անկարա հասավ ուշացումով։ Այս երկու ահռելի ախոյանների միջև ընդհարումը դարձավ անխուսափելի։ 1402 թ. հուլիսի 20-ին, տեղի ունեցավ Անկարայի ճակատամարտը, որը վերջացավ օսմանյան թուրքերի լիակատար պարտությամբ։ Լանկ-Թամուրն իր բանակը դասավորել էր հետևյալ կերպ։ Աջ թևի հրամանատարն էր նրա մեծ որդին՝ Միրանշահը, ձախինը՝ Միրզա Շահռուխը և Միրզա Խալիլը, կենտրոնը՝ իր թոռ Մուհամադ սուլթանը, իսկ ինքը ղեկավարում էր բանակի թիկունքը, որը բաղկացած էր 40 գնդից։ Թուրքական բանակի աջ թևի հրամանատարն էր սուլթանի Ամիր Սուլեյման որդին, ձախինը՝ սերբերի Լազար թագավորի որդի Վալքանը, կենտրոնին հրամայում էր սուլթան Բայազետ I-ը՝ իր Իսա Մուսա և Մուստաֆա որդիների հետ։ Վերջապահ զորքերի հրամանատարն էր սուլթանի մյուս որդին՝ Մահմադը[80]։ Ճակատամարտի ընթացքում Լանկ-Թամուրի կողմն անցան փոքրասիական մի քանի ամիրաներ (ըստ Կլավիխոյի, մոտ 40000 մարդ)[81]։ Փոքր Ասիայի ամիրաների դավաճանությունը, ինչպես նաև Լանկ-Թամուրի բանակի թվական գերազանցությունը թուրքական բանակի ջախջախման պատճառ դարձան։ Սուլթանն իր որդու հետ գերի ընկավ Լանկ-Թամուրի ձեռքը. «...գամիրապետն աշխարհին՝ Իլդրում անուն ըմբռնեաց և կա-

79 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 102։

80 Տե՛ս Գ. Այվազովսկի, նշվ. աշխ., էջ 68։

81 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 65։

պեաց՝ հանդերձ որդովն»[82],— գրում է Հովհաննես Խիզանցի գրիչը։ Սելջուկ այն ամիրաները, որոնք անցել էին Լանկ-Թամուրի կողմը, բոլորը վերահաստատվեցին իրենց իշխանություններում։ Այս հաղթությունից հետո Լանկ-Թամուրի գերիշխանությունը ընդունեց նաև Եգիպտոսի սուլթանը[83]։ Ճնշելով Փոքր Ասիան, Լանկ-Թամուրը մեծ ավարով և գերիների բազմությամբ 1403 թ. վերադարձավ Անդրկովկաս։ Ըստ Մեծոփեցու, նա Փոքր Ասիայից գերեվարեց 60000 տուն[84]։ Կարծում ենք, որ թվական այս տվյալը Մեծոփեցու մոտ չափազանցված է և խիստ անհավանական։ 1403 թ. Թամուրի հրոսակները սկսեցին ասպատակել Վրաստանի արևմտյան շրջաններն ու Աբխազիան։ Գեորգի VII թագավորը, չկարողանալով դիմադրել, Շիրվանշահ Իբրահիմ Դերբենդցու միջնորդությամբ հաշտվեց Լանկ-Թամուրին և մնաց գահին։ 1403—1404 թթ. ձմեռը Լանկ-Թամուրն անցկացրեց Ղարաբաղում, իսկ 1404 թ. գարնանը մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով, որոնց թվում կային շատ հայեր, վերադարձավ Սամարղանդ[85]։ 1405 թ. գարնանը նա արշավանքի դուրս եկավ դեպի Չինաստան, սակայն ճանապարհին ծանր հիվանդացավ և Օթրարում 70 տարեկան հասակում մահացավ[86]։

Լանկ-Թամուրի աշխարհավեր արշավանքներն ու դաժան տիրապետությունը խիստ ծանր հետևանքներ ունեցան Հայաստանի համար։ Այդ արշավանքների հետևանքով ամայացան հայկական բնակավայրերը, բնակչության որոշ մասը սրի քաշվեց, ոմանք զոհ գնացին սովին ու հիվանդություններին, իսկ հազարավոր արհեստավորներ ու երեխաներ գերի տարվեցին Սամարղանդ։ Աղբյուրներում բազմաթիվ վկա-

82 ԺԵ, մասն Ա, էջ 22, Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 66։

83 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 371, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 32։

84 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 66։

85 Տե՛ս Իբն-Արաբշահ, նշվ. աշխ., էջ 182—183։

86 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 72։

յությունները կան հայ ժողովրդի կրած անլուր տանջանքների մասին։ Որդի Ալեքսանի գրիչը 1388 թ. Սպատկեր անապատում գրած ձեռագրի հիշատակարանում նկարագրելով Թամուրի չարագործությունները, գրում է, թե «...զոմանս գերեաց, և զոմանս զաճավիժեաց, և զայլս ի սուր սուսերի մաշեաց և զերկիրն հրով ճարակեաց»[87]։ Այդ նույն թվականին Ավետարան ստացող ոմն Տիրացու կրոնավոր Թամուրին համեմատում է Նեռի հետ։ Նրա վկայությամբ այնքան շատ են ու բազմազան այդ «Նեռի» հասցրած տանջանքները, վիշտն ու դառնությունը, որ գրել հնարավոր չէ[88]։ Կարապետ գրիչը 1389 թ. Աղթամարում ընդօրինակած ձեռագիր հիշատակարանում Լանկ-Թամուրի բարբարոսությունների կապակցությամբ գրել է. «...զտղայսն սմբաթուր ձիոց առնէին, զկանայսն խայտառակէին, զմանկունս նոցին, գերի վարէին. իբրև զկալ կամնասայլից զտղայսն ձիովք կասէին, և փոխան ցորենոյ արիւնս գետոց բղխէին, և փոխանակ յարդի զոսկերս իբրև զփոշի յերկիր հոսէին»[89]։ Այդ նույն գրիչի վկայությամբ երկրին տիրեց սաստիկ սով ու թանկություն, այնքան, որ մարդիկ ստիպված խորովում և ուտում էին շներին, կատուներին, ձիերին, մինչև անգամ իրենց սիրասուն զավակներին[90]։ Գրիչ Թումա Վանեցին 1391 թ. նշել է, որ չորս տարի է ինչ բոլորս քաղցած և անօթևան ապաստանել ենք լեռների կատարներում և չնայած կենդանի, սակայն՝ մեռած ենք Թամուրի ահից[91]։ Թովմա Մեծոփեցին նկարագրելով գերվածների ծանր վիճակը, հայտնում է, որ նրանց հետ վարվում էին անգթորեն, օրերով քշում էին սոված, մերկ ու բոբիկ, իսկ ովքեր գործադրած բարբարոսությունից ուժասպառ ընկնում էին գետին, տեղն ու տեղը քարերով ջարդում

87 Տե՛ս ԺԴ, էջ 573։

88 Նույն տեղում, էջ 574։

89 Նույն տեղում, էջ 579։

90 Տե՛ս նույն տեղում։

91 Տե՛ս նույն տեղում, էջ 587։

էին նրանց գլուխները[92]։ Թումա Թավրիզեցի գրիչը Լանկ-Թամուրին անվանում է «Նեռի կարապետ», իսկ նրա անունը թարգմանում է «դա մուր», որովհետև որտեղ հասնում է՝ մրի նման սևացնում է, ոմանց կողոպտելով. ոմանց տանջելով, ոմանց սպանելով, ոմանց գերելով, հորը որդուց և որդուն հորից բաժանելով։ Գրիչը, շարունակելով նկարագրել Թամուրի հասցրած դառնությունները, ավելացնում է, որ նրանք, ովքեր մազապուրծ ազատվում էին Թամուրից և ապաստանում էին լեռներում ու քարայրներում, մեռնում էին սովից, ցրտից և կամ էլ, չկարողանալով տանել կյանքի անասելի դաժան պայմանները, ինքնասպանություն էին գործում[93]։

Գրիգոր Խլաթեցին տարիներ հետո Լանկ-Թամուրի գործած չարագործությունները նկարագրում է այսպես.

Ո՜, վայն վաղային զոր արարին
Արանց, կանանց և ընդ մանկտին,
Զարան թաղեալ մինչ կենդանին,
Հողով, ջրովըն հեղձուցին,
Իսկ բղմաստաղ որդայ մանկտին՝
Զայն կոխոտխս ձիոցն արկին[94]։

Լանկ-Թամուրի արշավանքները և դրանց հաջորդած թուրքմեն ցեղերի ասպատակությունները էլ ավելի խորացրին Հայաստանի բնակչության ազգային պատկերի փոփոխման ընթացքը։ Աղբյուրների վկայությամբ գրաված երկրների բնակչությանը մի երկրից մյուսը փոխադրելը Լանկ-Թամուրի քաղաքականության համար կարևոր էր։ Իբն-Արաբշահն այդ կապակցությամբ գրում է. «Երբ նա տիրում էր որևէ մի քաղաքի, անպատճառ զորքերի մի մասին այնտեղ

92 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 67։

93 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 31։

94 Նույն տեղում, էջ 279—280։

էր բնակեցնում և այդ երկրում էր թողնում, իսկ այդ աշխարհի մարդկանց մի մասը փոխադրում էր և բնակեցնում ուրիշ երկրում»[95]: Կլավիխոն, որը որպես Իսպանիայի Հենրիխ թագավորի դեսպան, 1404 թ. ուղևորվել է Թամուրի մոտ, անցել է Տրապիզոնից Երզնկա, ապա Էրզրումի, Բայազետի, Սուրմալուի և Մակուի վրայով՝ Խոյ, այնտեղից էլ Թավրիզ: Վերադարձին նա անցել է Ալաշկերտի, Ավնիկի, Թորթումի և Իսպիրի վրայով: Այս վայրերի բնակչության ծանր վիճակը նկարագրելիս, Սուրմալուի մասին նա գրում է. «Սուրմարիի բնակչության ստվար մեծամասնությունը նախապես յեղել են հայեր, վորովհետև Հայաստանի քաղաքներից մինն է, բայց վերջին տարիներս շատ քրիստոնյաներ տեղահանվել են այստեղից և իսլամներ են յեկել ու հաստատվել նրանց տեղը»[96]:

Կլավիխոն հաղորդում է, որ Թոխթամիշի արշավանքը ևս ծանր հետևանք է ունեցել Վերին Հայաստանի շրջանների համար: Նրա բանակները քար ու քանդ են արել շատ քաղաքներ, բերդեր ու գյուղեր: Նույնը վիճակվել նաև Սիսական շրջանի գլխավոր քաղաքին, ինչպես նաև Հայաստանի մյուս երկրամասերի[97]: Կլավիխոյի վկայությամբ Խոյից մինչև Ալաշկերտի երկրամասը ամայի էր դարձել: Դրա պատճառը միջֆեոդալական այն կռիվն էր, որը մղվում էր երեք եղբայրների միջև[98]: Իսկ ինչո՞ւ էր Հայաստանն ավերվել ու անմարդաբնակ դարձել: Այս հարցի պատասխանը ևս տալիս է Կլավիխոն. «Այդպես եր վոր իսլամները յեկել և գրավել եյին ամբողջ Հայաստանը, վորովհետև յերբ նրանք տիրապետել եյին քաղաքները, մահացրել եյին մեծավ մասամբ քրիստոնյա հայերին, վորոնք բնիկներ եյին և նրանից հետո նրանց տեղերը գրավել են»[99]: Ալաշկերտ քաղաքի մասին խոսելիս

95 Իբն-Արաբշահ, նշվ. աշխ., էջ 189:
96 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 109:
97 Տե՛ս նույն տեղում, էջ 124:
98 Տե՛ս նույն տեղում, էջ 138:
99 Նույն տեղում:

նա նշում է, որ տների մեծ մասը դատարկ էր բնակիչներից, քաղաքի պարիսպները քանդված էին, տների մեծ մասը փուլ էին եկած ու ավերված, որոնց մեջ դեռևս ապրում էին մի քանի խեղճ ու աղքատ բնակիչներ[100]: Նվաճված երկրների բնակչության զանգվածային ջարդերով Թամուրը գերազանցեց իր բարբարոս նախորդներին: Ակադեմիկոս Վ. Բարտոլդը, խոսելով Թամուրի դաժանությունների մասին, գրում է. «Թամուրը իր դաժանություններով գերազանցեց Չինգիզ խանին»[101]: Իսկ Ա. Նովոսելցևը բնութագրելով Թամուրին գրում է. «Փաստական նյութի բավարար և անաչառ վերլուծության դեպքում մեր առջև կանգնում է երկրորդ Չինգիզ խանը, խոշոր ռազմական առաջնորդը և զավթողը, որն ամեն ինչ անում էր իր երկրի բարեկեցության համար, սակայն անխնա կողոպտելով ու ավերելով շատ երկրներ»[102]:

Լանկ-Թամուրը Հայաստանից և այլ երկրներից հսկայական քանակությամբ բնակիչներ տարավ Միջին Ասիա, մասնավորապես Սամարղանդ: Հայաստանից բշված հայերի փոխարեն նա Հայաստան, հատկապես Ղարաբաղ փոխադրեց թուրքական ցեղեր[103]: Այսպիսով, XIV—XV դդ. Հայաստանի լեռնագավառները ներխուժած թուրք-թաթարական և թուրքմենական ցեղերի մի մասը աստիճանաբար հաստատվեց գրավված վայրերում և դարձավ այդ շրջանների մշտական բնակիչը: Նրանք ու նրանց հետնորդները դարեր շարունակ ճնշեցին ու հալածեցին տեղաբնիկ հայերին և այսօր, կեղծելով փաստերն ու պատմական ճշմարտությունը, անամոթաբար գրում և պնդում են, թե ի սկզբանե իրենց նախորդներն ապրել են պատմական Հայաստանի լեռնագավառներում:

100 Նույն տեղում:
101 Бартольд В. В., соч., т. II, ч. 1, с. 746.
102 Новосельцев А. П. նշվ. աշխ., էջ 20:
103 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 372:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՈՒՐՔՄԵՆ ՑԵՂԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Կարա-կոյունլուների իշխանությունը Հայաստանում

Լանկ-Թեմուրի հսկայածավալ տերությունը, որը ստեղծվել էր զենքի ուժով, միաձույլ ու միատարր չէր և միավորված էր տնտեսական ու էթնիկական թույլ կապերով, նրա մահից հետո արագ քայքայվեց։ Սրի ու մահվան սարսափով կառավարող կաղ բռնակալին չէր մտահոգում նվաճված երկրների տնտեսական ու մշակութային խնդիրները, նրանց զարգացումը։ Նա նվաճված երկրների կառավարումը հանձնել էր իր որդիներին ու թոռներին, որոնց միջև 1405—1409 թվականներին կատաղի պայքար ծավալվեց իշխանության համար։ Այդ պայքարի ընթացքում ակտիվ դերում էին Լանկ-Թեմուրի որդի Շահռուխը և թոռը՝ Միրանշահի որդի Խալիլը[1]։ Դեռևս կենդանության ժամանակ Լանկ-Թեմուրն իր Միրանշահ որդուն զրկել էր տիրույթների մի մասից, այն հանձնելով Միրանշահի Միրզա Օմար որդուն։ Միրանշահին մնացել էին Հայաստանը՝ Ղարաբաղով, Մուղանը և Վրաստանը։ Վերջինս Միրանշահին ենթակա վասալ պետություն էր[2]։ Լանկ-Թեմուրի մահից հետո Միրանշահը, կորցրած տարածքները վերադարձնելու նպատակով, պատերազմ սկսեց որդու դեմ։ Այս պայքարում Միրանշահին օգնում էր եղբայրը՝ Շահռուխը, որը միաժամանակ պատերազմում էր Միրանշահի Խալիլ որդու դեմ։ 1405 թ. ամառը բանտից ազատվեց Միրանշահի մեծ որդին՝ Միրզա-Աբու-Բաքրը, որը միացավ հորը, և նրանք երկուսով շարժվեցին դեպի Ատրպատական՝ Օմարի դեմ[3]։

Գահակալական այս ներքին խլրտումներն առաջ բերեցին շարժումներ՝ ընդդեմ կենտրոնական իշխանության։ Օմարի դեմ ապստամբեցին Բարա Նիկ դերվիշը, Շիրվանշահ Իբրահիմը, վրաց թագավորը, Շաքիի կառավարիչ Սիդի Ահմադը, կարամանլու ցեղի ամիր Յար Ահմադը՝ Ղարաբաղում և Ջագըլու քրդական ցեղի առաջնորդ Արդաբիլի տեր Բիստամ Ջագիրը[4]։ Օմարի բանակի մի մասը լքեց նրան ու անցավ Աբու-Բաքրի կողմը։ Վերջինս իր հորը՝ Միրանշահին, հռչակեց փադիշահ։ Ջախջախված Օմարը 1406 թ. Թեմուրյանների պետության արևելյան շրջաններից նոր ուժեր ստանալով շարժվեց Աբու-Բաքրի դեմ։ Այդ արշավանքի համար նա ծանր հարկեր հավաքեց Ատրպատականի բնակչությունից, որը նոր դժգոհություն առաջացրեց Օմարի դեմ[5]։ Օգտվելով իր համար բարենպաստ իրավիճակից, Արդաբիլի տեր Բիստամ Ջագիրը շարժվեց Թավրիզի վրա և 1406 թ. գրավեց այն[6]։ Սրա Թավրիզ մտնելուց մի քանի օր հետո լուր ստացվեց, որ Շիրվանշահ Իբրահիմը շարժվում է դեպի Թավրիզ։ Իբրահիմը, երբ Թավրիզ հասավ, Բիստամ Ջագիրի մերձավորները լքեցին նրան և քաղաքի մեծամեծերի հետ շապեցին Իբրահիմի բանակը։ Բիստամ Ջագիրը փախավ Արդաբիլ։ 1406 թ. մայիսին Շիրվանշահ Իբրահիմը մեծ հանդիսավորությամբ մտավ Թավրիզ[7]։

1 См. *Петрушевский И.* Государство Азербайджана в XV в., см. Сборник статей по истории Азербайджана, выпуск 1, Баку, 1949, с. 153.

2 Նույն տեղում, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 32։

3 Նույն տեղում, էջ 153—154, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 32։

4 Տե՛ս նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 155։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում, էջ 156։

1406 թ. Թավրիզ վերադարձավ Ղարա-Յուսուֆը[8]։ Նա Ջելաիրյան Ահմադի հետ բանտարկված էր սուլթան Ֆարաջի կողմից։ Թամուրի մահից հետո նրանք ազատ արձակվեցին և գործելու լայն հնարավորություն ստացան։ Ղարա-Յուսուֆին հաջողվեց կարա-կոյունլուներից և Քուրդիստանի ու Հայաստանի քուրդ ամիրաների զինական ուժերից իր շուրջը համախմբել մի հսկայական բանակ։ 1405 թ. օգոստոսի վերջերին, երբ Կլավիխոն Հայաստանի վրայով հետ էր վերադառնում, Ղարա-Յուսուֆն արդեն Հայաստանում էր և նվաճումներ էր կատարում Երզնկայում ու Վանա լճի շրջաններում[9]։ Մեծոփեցու վկայությամբ նա նախ մտավ Բաղեշ, որի ամիր Շամս-ադ-դինը Յուսուֆին օգնեց թե զենքով և թե պարենով, ինչպես նաև նրան տրամադրեց զինվորներ ու հանդերձանք[10]։ Շարաֆ-խան Բիթլիսին գրում է, որ երբ Ղարա-Յուսուֆը Դիարբեքիրից եկավ Բիթլիս, լավ ընդունելություն գտավ Շամս-ադ-դինի կողմից, իր աղջկան կնության տվեց նրան, Ղարա-Յուսուֆին նվիրեց Բաղեն գավառը՝ Ախնիկ բերդի հետ[11]։ Բաղեշից Ղարա-Յուսուֆը շարժվեց դեպի Ուշտունիք։ Այստեղ հնազանդեցրեց Եգդին ամիրային և նրա Մելիք որդուն, ապա գրավեց Վարագը։ 1406 թ. աշնանը Ղարա-Յուսուֆը պարտության մատնեց Աբու-Բաքրին և գրավեց Թավրիզը[12]։ Այս դեպքերին անդրադարձել է գրիչ Մատթեոս վարդապետը՝ 1407 թ. Տաթևի վանքում գրած ձեռագրի հիշատակարանում. «Եւ եւ գրել՝ ի թուականութեանն Հայոց ութհարիւրերորդի յիսներորդի և վեցերորդ թուի (1407), ի դառն ի նեղ ժամանակիս, որում ազգն Նետողաց անցինք կորուս և փոխանորդ նորին իշխեց աթոռոյս Ատրպատականի Թարգմածին Ղարա-Յուսուֆ անուամբ, որ և մարտեաւ երկու

8 Տե՛ս Босворт К. Э., Мусульманские династии, М., 1971, с. 221.
9 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 136—138։
10 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 70։
11 Шараф-хан-Бидлиси, Шереф-Наме, с. 418.
12 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 71։

անգամ և յաղթահարեաց զոմն ի թոռանց չար գազանին Թամուրին, չարաբարոյ ահեղատեսիլ և չարասիրտ, անուամբ Աբ(ու-Բ)աքրն[13]։ Աբու-Բաքրին պարտության մատնելուց հետո Յուսուֆը նվաճեց Արարատյան դաշտը, Մարանդը, Նախիջևանը, Շարուրը և Մակուն[14]։ 1407—1408 թթ. նվաճեց նաև Ատրպատականը և Հայաստանի մեծ մասը, պարտության մատնելով Օմարին, Միրանշահին ու Աբու-Բաքրին։ 1407 թ. Ղարա-Յուսուֆը արշավեց Վրաստան, քարուքանդ արեց երկիրը, սպանեց ու գերի տարավ բազմաթիվ մարդկանց։ Համաձայն գրիչ Հովհաննես Խիզանցու, այս արշավանքի ընթացքում սպանվեց 5 հազար (այդ թվում Գեորգի VII թագավորը) և գերվեց 15 հազար մարդ[15]։ Նա այրեց և հիմնահատակ արեց շատ վանքեր ու եկեղեցիներ։

Չհաշտվելով իշխանության և Թավրիզը կորցնելու մտքի հետ, Աբու-Բաքրը 1407 թ. արշավեց Յուսուֆի դեմ։ Այս արշավանքի մասին տեղեկություն է հաղորդում Սյունեցի Հովհաննես գրիչը՝ 1407 թ. գրած հիշատակարանում։ Համաձայն Հովհաննես գրիչի, Աբու-Բաքրը նորից պարտություն է կրում[16]։ Այս ընդհարման մասին խոսում է նաև Թովմա Մեծոփեցին։ Բայց, ըստ նրա Աբու-Բաքրի և Յուսուֆի միջև ընդհարումը տեղի է ունեցել ոչ թե 1407 թ., այլ՝ 1409 թ., Միրանշահի ջախջախումից ու սպանվելուց հետո։ Ըստ Մեծոփեցու Աբու-Բաքրը չհամարձակվեց ճակատամարտ տալ Ղարա-Յուսուֆի դեմ և մի օր գիշերով փախավ կովի դաշտից՝ Յուսուֆին թողնելով բավականաչափ ավար[17]։

Միրանշահը Շահռուխից 20 հազարանոց մի բանակ ստանալով շտապում է Աբու-Բաքրին օգնության։ Ղարա-Յուսուֆի և Միրանշահի բանակների միջև ճակատամարտ

13 ԺԵ, մասն Ա, էջ 76։
14 Տե՛ս Шараф-хан-Бидлиси, Шараф-Наме, с. 418.
15 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 68—69։
16 Տե՛ս նույն տեղում, էջ 82—83։
17 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 70—72։

տեղի է ունենում 1408 թ. ապրիլի 21-ին՝ Սարդրուդի մոտ, Ատրպատականում[18]: Ճակատամարտում Միրանշահի զորքը պարտվեց, իսկ ինքը սպանվեց: Ղարա-Յուսուֆը նորից մտավ Թավրիզ: Այս դեպքերին արձագանքել է Հակոբ Աստիճանեցի գրիչը, Տաթևի վանքում գրած հիշատակարանում: Նա գրել է. «Թվին ՊԾԷ (1408) յայս ամի Ղարա-Յուսուֆ էառ զԱտրպատիճան՝ Թավրէզ»[19]: Յուսուֆը 1409 թ. արշավեց դեպի արևմուտք: Նա հարձակվեց և առանց դիմադրության գրավեց Երզնկա քաղաքը, ապա՝ Մերդինը: 1410 թ. Մշո դաշտում նա պարտության մատնեց ակ-կոյունլուների առաջնորդ Ղարա-Յոլուք Օսմանին, և պաշարեց Դիարբեքիրն ու Արղնը: Այս քաղաքները գրավելիս գործին միջամտեց Երզնկայի Փիր-Օմար ամիրան և հաշտեցրեց նրանց[20]: Օգտվելով այն հանգամանքից, որ իր դաշնակից Ղարա-Յուսուֆը զբաղված է արևմուտքում, սուլթան Ահմադը 1410 թ. հարձակվեց Թավրիզի վրա և այնտեղից դուրս քշեց Յուսուֆի կայազորին: Յուսուֆի դեմ պատերազմը հաջող շարունակելու համար սուլթան Ահմադը կարողանում է իր կողմը գրավել Սյունյաց Սմբատ իշխանին՝ նրան պարգև տալով Անգեղակոթ գյուղը[21], և օժանդակ ուժեր խնդրել Շիրվանշահ Իբրահիմից: Իբրահիմը, ձգտելով սրել հարաբերությունները երկու դաշնակիցների միջև իր որդու՝ Կայումարսի գլխավորությամբ օժանդակ ուժեր է ուղարկում սուլթան Ահմադին օգնելու: Այդ քայլով նա ցանկանում էր թուլացնել Յուսուֆին և Ատրպատականում նորից հաստատել իր իշխանությունը[22]: Ղարա-Յուսուֆն իմանալով Թավրիզի գրավման մասին, հաշտություն է կնքում Ղարա-Յոլուք Օսմանի հետ և շտապ ուղևորվում դեպի Թավրիզ: Յուսուֆն ավելի շուտ է հասնում

18 Ժե, մասն Ա, էջ XI, И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 157:

19 Ժե, մասն Ա, էջ 87:

20 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 72:

21 Նույն տեղում, էջ 72—73:

22 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 158:

Թավրիզ, քան Շիրվանշահ Իբրահիմի զորքը: Ղարա-Յուսուֆի և սուլթան Ահմադի միջև ճակատամարտը տեղի ունեցավ 1410 թ. օգոստոսի 10-ին, Թավրիզից ոչ հեռու Շամբի Գազան վայրում: Սուլթան Ահմադը պարտվեց և գերի ընկավ: Ղարա-Յուսուֆը նրան ստիպեց հրաման ստորագրել իշխանությունն իրեն հանձնելու վերաբերյալ: Դրանից հետո, 1410 թ. օգոստոսի 31-ին սուլթան Ահմադն իր որդիների հետ մահապատժի ենթարկվեց[23]: Սուլթան Ահմադին օգնության շտապող Կայումարսը Թավրիզ հասավ ուշացումով: Մի գիշեր, երբ Կայումարսի բանակը հանգստանում էր, Ղարա-Յուսուֆն անսպասելի հարձակվեց, ջարդեց նրա բանակը և գերեց Կայումարսին: Ղարա-Յուսուֆը Կայումարսին ազատ արձակեց և մի նամակով ուղարկեց նրա հոր մոտ՝ առաջարկելով նրան անձնատուր լինել[24]: Այս իրադարձությունները Իբրահիմի համար անսպասելի էին և կասկածելի: Նա, որդուն մեղադրելով դավաճանության մեջ, սպանեց նրան: Այս հաղթություններից հետո, 1411 թ. Ղարա-Յուսուֆը գրավեց Բաղդադը և վերջ տվեց Ջելաիրյանների պետությանը Միջագետքում: Այսպիսով, 1405—1411 թթ. ընթացքում Ղարա-Յուսուֆի պետությունն իր սահմաններում ընդգրկում էր Արաբական Իրաքը, Պարսկական Իրաքը, Ատրպատականը, Քրդստանը, Առանը և Հայաստանի մեծագույն մասը: Թ. Մեծոփեցու հաղորդման համաձայն այս իրադարձություններից հետո. «Թէպէտ հարկապահանջութիւն բազում էր. սակայն խաղաղութիւն առանց խռովութեան էր»[25]: Ջելաիրյանների պետությունը կործանելուց հետո Ղարա-Յուսուֆը կրկին դեսպաններ ուղարկեց Իբրահիմի մոտ՝ պահանջելով հնազանդվել իրեն[26]: Իբրահիմը, վստահ իր ուժերին, մերժում է Յուսուֆի առաջարկը և նախապատրաստվում նրան դիմադրե-

23 Նույն տեղում, 158—159:

24 Նույն տեղում, էջ 159:

25 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 73:

26 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 159:

լու: Այդ նպատակով նա դաշն է կապում Շաքիի տիրոջ Ահմադի և վրաց Կոստանդին II թագավորի հետ: Լ. Խաչիկյանն այն կարծիքն է հայտնում, թե Իբրահիմին և վրաց թագավորին էին միացել նաև Վրաստանում ապաստանած Օրբելյան իշխանները[27]: Այս ճակատամարտում Յուսուֆի կողմից կռվում էին Արդաբիլի ամիր Բիստամ Ջագիրը, Կավերդինի ամիր Բարա Խոջան, Բիթլիսի ամիր Շամս-ադդինը և այլ ամիրներ, որոնց Յուսուֆը տվել էր դրամական առատ վարձատրություն, ինչպես նաև հողային տիրույթներ: Յուսուֆի կողմից էին կռվում նաև Ղարաբաղի, Մուղանի և Նախիջևանի ֆեոդալները[28]: Յուսուֆին հաջողվում է շրջապատել Իբրահիմի և նրա դաշնակիցների բանակը, ջարդել նրանց և մեծ մասին գերի վերցնել: Գերի է ընկնում Իբրահիմը՝ իր վեց որդիներով, ինչպես նաև վրաց Կոստանդին թագավորը՝ իր որդիներով, որոնց Յուսուֆը սպանում է անձամբ: Նա կոտորել է տալիս 300 վրացի գերիների[29]: Իբրահիմն իր որդիների հետ որպես ռազմագերի տարվում է Թավրիզ, որտեղ պահվում է մինչև 1413 թ. և միայն մեծ փրկագին տալուց հետո ազատվում: Իբրահիմը, որպես Յուսուֆի վասալ, պարտավորվում է նրան օժանդակել արշավանքների ընթացքում: Յուսուֆը ասպատակում է Շիրվանը, տանելով մեծ քանակությամբ ավար և մոտ մեկ միլիոն գլուխ անասուն[30]: Աբդուռեզակ Սամարղանդին հաղորդում է, որ թշնամի բանակների միջև ճակատամարտը տեղի է ունեցել 1412 թ. նոյեմբերի 6-ից մինչև դեկտեմբերի 4-ը, Կուր գետի ափին՝ Ջալաղանի դաշտում[31]: Ինչպես ճիշտ կերպով նկատել է Լ. Խաչիկյանը, ճակատամարտը տեղի է ունեցել ոչ թե

27 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ XIII, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 33:

28 Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 160:

29 Նույն տեղում:

30 Տե՛ս նույն տեղում:

31 Տե՛ս նույն տեղում, էջ 160:

1412 թ., ինչպես հաղորդում են պարսկալեզու աղբյուրները, այլ 1411 թ. աշնանը, ինչպես նշում են հայկական աղբյուրները: 1411 թ այս դեպքերի կապակցությամբ գրիչ Մատթեոս վարդապետը գրել է. «Յետոյ ամենայնի հարեալ զՎատնխաբեան դաշտն, և զկալաւ տէր նորա, և սպան զԹաւորն Վրաց Կոստանդին, և զբաղումս գերի վարեալ»[32]: Վիճելի է Լ. Խաչիկյանի այն կարծիքը, թե այդ շարժումը ապստամբություն էր, որին մասնակցել են նաև Անդրկովկասի ժողովրդական լայն զանգվածները[33]: Իրականում Ղարա-Յուսուֆի, Ջելաիրյան Ահմադի և Շիրվանշահ Իբրահիմի միջև պայքար էր մղվում Ատրպատականին տիրելու համար, որը սկսվել էր 1406 թ. և ընդհատումներով շարունակվեց մինչև 1411 թ.: Իր այս արշավանքով Յուսուֆն Իբրահիմից վրեժ էր լուծում այն բանի համար, որ նա իր որդուն ուղարկել էր օժանդակելու Թավրիզը գրաված Ջելաիրյան Ահմադին: Հայ ֆեոդալների մասնակցությունն այդ պատերազմներին պատճառաբանվում է բռնի ուժի այն քաղաքականությամբ, որը վարում էին ռազմաքոչվորական ցեղերի առաջնորդները՝ նվաճված երկրների ֆեոդալների նկատմամբ:

Յուսուֆի վարած պատերազմները ծանր հետևանքներ ունեցան Հայաստանի համար: Նրա զորքը որտեղ մտնում կողոպտում և սպանում էր հայ ազգաբնակչությանը: 1417 թ. Գանձասարում գրած հիշատակարանում այս դեպքերին անդրադարձել է Միքայել մոնոզոն գրիչը: Ահա նրա վկայությունը. «Զի դառնացաւ ժամանակս,—գրում է նա,—և թագաւորեաց ոմն թուրքման անունն Ուսուֆ, զի‖ճանաչիր բստ թոյլ տալոյն աստուծոյ լինել կշտամբիչ, բստ այնմ թէ զշարսն շարեաւ կորուսցէ, զի ի բառնալ գազանին չորրորդի Թամուրն կոչեցեալ Կաղն, բռնացեալ Ուսուֆն, պատերազմեալ ընդ որդիսն նորա երիցս անգամ, և սպան զնոսա, և մնացեալքն փախստական գնացին յաշխարհն իւրեանց: Իսկ զընական խանն Ահմատ կոչեցեալ, որ եկն կամաւն իւրով ի

32 ԺԵ, մասն Ա, էջ 119:

33 Տե՛ս նույն տեղում, էջ XIII:

Բաբելոնէ ի քաղաքն Թաւրէզ, և ի վերայ նորա եւ յարուցեալ Ուսուֆն, և սպան զնա։ Եւ մնացեալ ատանոր միայն ամիրայն Շըրւանայ, յորոյ յապստամբելն երիցս անգամ եկն ի վերայ նորա Ուսուֆն, և ի վերջին գալն՝ ձեռբակալ արար զնա և զբազումս ի միջի նոցա, եսպան զթշուառական թագաւորն Վրաց զԿոստանդին, որ եկեալ էր յօգնականութիւն իշխանին Շըրւանայ, և զերկիրն առ աւար և գնաց։ Զայս չափ չարիս առ գլխաւորս աշխարհիս հասոյց Ուսուֆն, իսկ առ փոքունսն զի՞նչ ասացից։ Զի վայրենացեալ զինուորք նորա ուր և հասանէին, ոչ զընտանիսն գիտեն և ոչ զօտարսն, թալանեն և կոփեն զձեռնհասն իւրեանց, թէ ի ճանապարհի, թէ ի տան, թէ առանձին թէ ի քաղաքի, և այսպէս ոչ գոյր թիւ աղաղակի մերոյ»[34]։

Յուսուֆի վարած երկարամյա պատերազմներից հետո Հայաստանում կարճ ժամանակով տիրում է խաղաղություն։ Շիրվանից վերադառնալուց հետո Յուսուֆը որպես նստավայր է ընտրում Հայաստանի Բագրևանդ գավառի Ալաշկերտ քաղաքը։ Այստեղից էլ 1416 թ. նա արշավում է Ախալցխայի վրա, ավերում քաղաքը, նրա շրջապատի գյուղերը և բազմաթիվ գերիներով ու մեծ ավարով վերադառնում Ալաշկերտ։ Վրաստանից բերած գերիներին, որոնց թիվն անցնում էր հազարից[35], մեծ օգնություն ցույց տվեցին հայերը, որոնք չխնայելով իրենց ունեցվածքը, բարձր գներով գնում էին վրացի գերիներին ու ազատում թուրքմենների գերությունից։ Ահա թե այս դեպքերի կապակցությամբ ինչ է գրում Մեծոփեցին. «Եւ նորա իբրեւ կատաղի եւ անագորմ գազան սուր եդեալ ի վերա նոցա իբրեւ զգառն անմեղ զենուին ի վեր քան զհամար եւ զթիւ մասցն մարդկան. եւ զամենայն աշխարհն գերի առեալ զկին և զողոյ՝ գերութեամբ լցին աշխարհն Հայկազեան սեռի. եւ զամենայն քրիստոնեայքն ազգիս ողորմելի արարին զկարգաւոր եւ զաշխարհա-

34 Նույն տեղում, էջ 194—195։

35 Տե՛ս նույն տեղում, էջ 281։

կան, եւ զհոգւոյ եւ զմարմնոյ ստացուածս ի գին գերւոյն տուին։ Եւ էր որ զողութեամբ, և էր որ փախստեամբ ազատանէին զքրիստոնեայսն, և էր որ գազանակուր լինէին։ Եւ ո՞վ կարէ պատմել եւ կամ ընդ գրով արկանել զաղէտս տարակուսանացն և զկսկիծ լալոյ եւ ողբոյ հարցն եւ մարցն, որդւոցն եւ դստերացն։ Եւ ես տեսեալ տեսանողքն ոչ կարէին ժուժկալել. կանայք զզարդարանս իւրեանց կողոպտէին, արք՝ զանասունս, քահանայք եւ կրօնաւորք զաղքատութիւնս իւրեանց ցուցին. ում ոչխարիկ եւ ում տաւարիկ կայր՝ տային եւ գնէին։

Եւ տեսեալ անօրինացն զյօժարութիւն նոցին՝ զամեն գերին հանեցին ի 10,000 եւ ի 20,000 մինչ զի քահանայի միոջ յԱրճէշ եւ յԱրծկէ երկերիւր երեսուն հազար դահեկան գնէին»[36]։

Յուսուֆը 1418 թ. Դիարբեքիրի վրայով արշավեց Հյուսիսային Միջագետք, Համկլայի մոտ պարտության մատնեց Ղարա-Յուլուք Օսմանին և մտավ Ասորիք։ Բայց այստեղ դեռևս իր նվաճումները չծավալած, լուր ստացավ իր Փիր-Բուդաղ որդու մահվան մասին, որին Թավրիզում որպես իրեն փոխանորդ էր կարգել և շտապ հետ վերադարձավ[37]։ 1419 թ. ակ-կոյունլուների առաջնորդ Օսմանն օգտվելով հարմար առիթից, արշավեց Յուսուֆի տերության արևմտյան սահմանների վրա, գրավեց Երզնկա քաղաքը և սպանեց քաղաքի կառավարիչ, Յուսուֆի հավատարիմ Փիր Օմարին[38]։ Օսմանի այս արշավանքը, ըստ երևույթին, նախօրոք համաձայնեցված էր Շահռուխի հետ, որն արդեն գրավել էր Ֆարսը և Մազանդարանը, 1420 թ. նա մտավ Ատրպատական և խանգարեց Յուսուֆի նոր արշավանքն ակ-կոյունլու Օսմանի դեմ։ Շահռուխի այս արշավանքի մասին վկայում են հայկական աղբյուրները։ Մեծոփեցին գրում է, որ Շահռուխը

36 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 77—78։

37 Նույն տեղում, էջ 79, Մ. Չամչյան. նշվ. աշխ., էջ 461։

38 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 78։

մեծ բանակով մտավ Սուլթանիե, իսկ այստեղից շարժվեց Թավրիզի վրա[39]: Գրիգոր Խլաթեցին ևս վկայում է, որ.

«Զարբ չաղաթին եկին հասին.
Որոց զրլուխ և առաջնորդ
էր Շախրուհ անուն նորին...»[40]:

Հիշատակարաններում ևս վկայություններ կան Շահռուխի այս արշավանքի մասին[41]: Մ. Չամչյանը գրում է, որ 1420 թ., երբ Յուսուֆը պատրաստություն էր տեսնում մեծ բանակով Ասորիք արշավելու, լուր է ստանում Շահռուխի հարձակման մասին: Նա ստիպված հրաժարվում է իր մտքից և Թավրիզի վրա հարձակումը կանխելու մտադրությամբ իր զորքերով արշավում է Շահռուխի դեմ[42], սակայն, աղմերթի ճանապարհին՝ Ուջան քաղաքի մոտ, 1420 թ. նոյեմբերին հանկարծամահ է լինում: Նրա զորքը խառնիճաղանջ նահանջում է՝ այնտեղ թողնելով իր առաջնորդի դիակը: Շահռուխի զորամասերի հետապնդումից փախչող թուրքմենները մտնում են Քաջբերունիք գավառ և հասնում մինչև Տարոն՝ ճանապարհին թալանի մատնելով հայկական բնակավայրերը: Մեծոփեցու վկայությամբ ողջ ձմեռը թուրքմեն զորքն ապրեց Քաջբերունիքի բնակչության հաշվին, իսկ գարնանը սկսեց ասպատակել հայկական գյուղերը և կողոպտել դրանց բնակիչներին: Սակայն, շուտով այստեղ են հասնում Շահռուխի զորամասերը: Իմանալով այդ մասին՝ թուրքմեններն փախչում են Մշո դաշտ՝ իրենց հետ տանելով բազմաթիվ գերիներ և մեծ ավար: Չաղաթա զորքը հետապնդելով թուրքմեններին, մտնում է Մշո դաշտ: Վերջիններս, վախենալով նոր ընդհարումից, թողնում են գերիներին և փախչում Միջագետք[43]: Յուսուֆի զորքի գործած ավերածությունների մասին Հովհաննես գրիչը 1421 թ. Լիմում գրել է, որ Յուսուֆի մահից հետո Հայաստան երկրում խռովություն և խառնաշփոթ վիճակ առաջացավ: Նրա հեծյալ գնդերի միջև եղան ընդհարումներ, սկսվեց կողոպուտ, այդ գնդերից մեկը ասպատակեց Քաջբերունիքը և տարավ շատ ավար ու գերիներ[44]:

* * *

Բաղդադի կառավարիչ Իսքանդարը, լսելով հոր մահվան բոթը, մեծ բանակ կազմելով շարժվում է Շահռուխի դեմ: Նա Միջագետքից եկավ Հայաստան, իր շուրջը համախմբեց հոր ցիրուցան զորքը և մտավ Բագրևանդ գավառ՝ հոր նստավայրը[45]: 1421 թ. օգոստոսի 1-ին Ալաշկերտի հովտում Իսքանդարի և Շահռուխի բանակների միջև տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ[46]: Այս ճակատամարտում Շահռուխի կողմից մասնակցում էին Շիրվանշահ Խալիլուլլահ I-ը և ակ-կոյունլու Օսման Յուլուքը: Իսքանդարի բանակը, ինչպես հաղորդում է գրիչներից մեկը, բաղկացած էր 150 հազար հեծելազորից[47]: Չնայած ճակատամարտի սկզբում հաղթանակն Իսքանդարի կողմն էր, բայց Շահռուխը հրամայում է մարտի մեջ մտցնել իր դրաստապահամակը, որը և վճռում է ճակատամարտի բախտը: Թ. Մեծոփեցին գրում է, որ Շահռուխի ծառաներից մեկը նրան հանդիմանում է այն բանի համար, որ ինքը հանգիստ նստել է խորանում, իսկ զորքը կոտորվում է քաջ մենամարտող Յուսուֆի որդու (Իսքանդարի—Գ. Կ.) կողմից: Շահռուխն այդ լսելով, դուրս է գալիս խորանից և հրամայում առաջ մղել դրաստապահամակը,

39 Տե՛ս նույն տեղում, էջ 78—79:
40 ԺԵ, մասն Ա, էջ 281:
41 Նույն տեղում, էջ 250—254:
42 Տե՛ս Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 461:

43 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 79:
44 ԺԵ, մասն Ա, էջ 254:
45 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 80:
46 См. *Шараф-хан-Бидлиси*, Шараф-Наме, с. 154, *Петрушевский*, նշվ. աշխ., էջ 163:
47 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 250:

իսկ Հեռևակը տանել նրա հետևից և ուժգին հարվածել Իսքանդարի բանակին[48]: Թիկունքի անսպասելի հարձակումից նեղված թուրքմենները սկսում են նահանջել, իսկ Իսքանդարը մազապուրծ փախչում է Մերդին, նրա եղբայր Սպանդիարը՝ Մոսուլ: Հաղթական այս պատերազմից հետո Շահռուխը 1421 թ. աշնանը թողնում է Հայաստանը և վերադառնում Սամարղանդ: Շահռուխի հեռանալուց հետո Յուսուֆի Սպանդիար որդին, որը ձգտում էր տիրանալ թուրքմենների գահին, Մոսուլից վերադառնում է Բաղեշ, ապա գրավում է Թավրիզը: Շուտով մեծ բանակով Բաղդադից վերադառնում է Իսքանդարը: Նա Ատրպատականից և Հայաստանից դուրս է քշում Սպանդիարին և իրեն հռչակում փադիշահ[49]: Ներքին այս կռիվները, Սպանդիարի Թավրիզ մտնելը և փախուստը, որոնք տեղի էին ունենում Հայաստանի վրայով, ավերածություն էին մատնում Հայաստանի գավառները: Թ. Մեծոփեցու վկայությամբ Թավրիզից վտարված Սպանդիարն ասպատակում է Բասենի դաշտը, ապա գրավում Ավնիկ բերդը[50]:

Գրիգոր Խլաթեցին Սպանդիարի ասպատակությունների ու գործած ավերածությունների մասին գրում է.

«Իսկ անիծեալն ամենևին՝
Կրտսեր որդի Միր Ուսուֆին՝
Սպանդիարն անուամբ չարին,
Լիրբ, անըզգամ, յիմար հոգին,
Էր վնասակար և աւերիչ
Շատ բարեկի չէն գաւառնին.
ԶԱրճէշ և զԱրծկէ աւերեց,
ԶԲասեն և զԱւնիկըն քակեց,
ԶԿարնոյ քաղաքըն՝ զԱրզրում
Քան զամենայն խիստ աւերեց»[51]:

48 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 80—81:
49 Տե՛ս նույն տեղում, էջ 82, Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 461:
50 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 82:
51 ԺԵ, մասն Ա, էջ 283:

Լ. Խաչիկյանը գտնում է, որ Սպանդիարի կողմից հիշյալ քաղաքների ու գավառների ասպատակումն ու ավերումը տեղի են ունեցել նախքան Թավրիզը գրավելը[52]: Այս կարծիքը բաժանել չենք կարող հետևյալ պատճառով: Ինչպես Թ. Մեծոփեցին, այնպես էլ Գրիգոր Խլաթեցին վկայում են, որ երբ Իսքանդարը Սպանդիարին դուրս վռնդեց Թավրիզից, նա մտավ Հայաստան և ասպատակեց Բասենը, Կարինը և Վանա լճի շրջանները[53]: Հայաստանի գավառներն ասպատակելուց հետո 1427 թ. Սպանդիարը գնաց Բաղդադ՝ իր Մահմադ եղբոր մոտ: Երկու տարի այնտեղ նախապատրաստվելուց և զորքը համալրելուց հետո նա գրավեց Միջագետքի մի շարք քաղաքներ, թալանեց և ավերեց Մոսուլը, Սանջարը, Թոխատը: Այնուհետև արշավեց Ջեզիրայի վրա, այն գրավեց և մեծ կոտորած ու ավեր գործեց: Ոգևորված իր հաջողություններով, այս թուրքմեն ասպատակողն արշավեց Մերդինի վրա, որտեղ իշխում էր Օսմանի որդի Համզան: Հենց այնտեղ էլ նրա զորքը ջախջախվեց և հետ շպրտվեց, վախկոտ ու անփառունակ Սպանդիարը փախուստի դիմելով մի կերպ փրկում է իր կյանքը[54]: Իսկ Ղարա-Յուսուֆի մյուս որդին՝ Ջահանշահը, որը Սուլթանիեում հպատակություն էր հայտնել Շահռուխին, հաշտվում է եղբոր հետ և նրան ճանաչում թուրքմենների փադիշահ: Հաղթելով իր եղբայրների դեմ մղած պայքարում՝ Իսքանդարը պատերազմ է սկսում քրդական կիսանկախ ամիրայությունների դեմ, որոնք արտաքին վտանգի դեպքում կարող էին թշնամական դիրք բռնել կարա-կոյունլուների պետության նկատմամբ: 1422 թ. Իսքանդարն արշավեց Խլաթի վրա: Սակայն, չկարողանալով գրավել բերդը՝ այրեց ու ավերեց քաղաքը: Առաջ ընթանալով, նա գրավեց Աղվանից կոչված բերդը և կոտորեց բնակչությանը[55]: Մեծոփեցու վկայությամբ Աղվանից

52 ԺԵ, մասն Ա, էջ XIX:
53 Տե՛ս նույն տեղում, էջ 283, Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 82:
54 Նույն տեղում, էջ 82—83:
55 Նույն տեղում, էջ 83, ԺԵ, մասն Ա, էջ 283—284:

բերդում սպանվել է 150 մարդ, իսկ Ծղաք գյուղում մորթվել 60 մարդ։ Գրիգոր Խլաթեցին Իսքանդարի այս արշավանքի կապակցությամբ գրել է.

«Հեծել արար շատ բազմութիւն
Ի եկն ի վերայ Խլաթայ բերդին.
Բերդին վնասել ոչ կարացին,
Այլ դքաղաքն այրեցին.
Ի յԱղուվանք արշաւեցին
Եւ չար ոճիրս անդ գործեցին,
Ըզբերդն առին, կոտորեցին,
Շատ քրիստոնեայք անդէն սպանին,
Քան զերկերիւրն այլ աւելի,
Զորս սրոյ ճարակ տուին,
Թող զորս ի ծովն խեղդեցան
Եւ քարաժէժ եղեալ կորեան»[56]։

Իսքանդարի այս արշավանքից տուժեց Խլաթի շրջանի հայ բնակչությունը։ Թումա Մինասենց գրիչի վկայությամբ բազմաթիվ քրիստոնյաների կամ գերի տարան, կամ սրի քաշեցին[57]։ Ըստ Ղ. Ալիշանի, Իսքանդարի այս արշավանքը տեղի է ունեցել 1423 թ.[58], սակայն, ինչպես վկայում են Թումա Մինասենցի Աղթամարում գրած հիշատակարանը[59] և այլ աղբյուրներ, այն տեղի է ունեցել 1422 թ.։ 1423 թ. Իսքանդարն արշավեց Ամրեկի վրա և գրավեց այն։ Գրիչ Թուման հաղորդում է, որ երկիրը փրկելու նպատակով տեղի իշխան Մելիք-Մահմադը մեծաքանակ ընծաներով գնում է Իսքանդարի մոտ, բայց նենգ ու խարդախ Իսքանդարը դեղամահ է անում նրան[60]։ Մեկ տարի անց՝ 1424 թ., Իսքանդարն արշավանք է սկսում Բաղեշի և Խլաթի ամիրաների դեմ։ Նա խաբեությամբ իր մոտ է կանչում Խլաթի Շամսադդին ամիրային և պահանջում իրեն հանձնել բերդը[61]։ Խլաթից Իսքանդարն արշավում է Ռշտունիքի վրա, գերում Ահմադ ամիրային, ապա շարժվում դեպի Վան։ Նա չորս ամիս պաշարեց քաղաքը և ասպատակեց նրա շրջակայքը։ Վան քաղաքի քաջարի բնակիչների ցույց տված հերոսական դիմադրության շնորհիվ նա չկարողացավ գրավել բերդաքաղաքը և վերադարձավ Թավրիզ։ Կատաղած Իսքանդարը ճանապարհին մտավ Երնջակ բերդը, սպանել տվեց գերված Ահմադին[62] և շարունակեց իր ավերածությունները։ Այս դեպքերի մասին տեղեկություն են հաղորդում նաև ժամանակակից գրիչները։ 1424 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...Եւ յայսմ ամի, որ թվականն Հայոց էր ՊՀԳ. (1424)... եկն Սքանդարն յերկիրն Ըռշտունեաց բազում հեծելօք, և զՎանայ բերդս խաբեաց, և շատ աւեր էած, զոր սպանմամբ և զոր գերութեամբ և զոր այրելով»[63]։

1425 թ. Թումա Մինասենց գրիչն իր գրած հիշատակարանում հաղորդում է որ չար բռնավոր Իսքանդարը Աղբակ, Քարպահ, Ռստան գավառները մինչև Բաղեշ անմարդաբնակ է դարձրել, իսկ բնակիչները, սոված մերկ ու բոբիկ, թողած տուն ու տեղ, թափառում են լեռներում ու ձերպերում[64]։ Իսքանդարը մեկ տարի հետո՝ 1425 թ., կրկին արշավեց Վանի վրա։ Բերդի վախկոտ ու թուլամորթ տեր Մելիք-Ասադը զգալով, որ երկար դիմադրել չի կարող՝ Իսքանդարին հանձնեց բերդը[65]։ Մտնելով քաղաք, բռնակալը թալանեց բնակչությա-

56 ԺԵ, մասն Ա, էջ 283—284։
57 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 375։
58 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 325։
59 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 375։
60 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 375։

61 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 83—84։
62 Տե՛ս նույն տեղում, էջ 84։
63 ԺԵ, մասն Ա, էջ 314։
64 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 326։
65 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 84, Չամչյան, նշվ. աշխ., էջ 454—465։

նը, ապա իր Արալի որդուն նշանակեց քաղաքի և նրա շրջանի կառավարիչ, իսկ ինքը նորից արշավեց Ուշականք, կողոպտեց ողջ գավառի հայկական գյուղերը։ Ուշականքից մտնելով Աղթամար կղզի կողոպտեց վանքի հարստությունները։ Հալածական հայ ազգաբնակչությունը, թողած տուն ու տեղ, ամրացավ երկրի անառիկ վայրերում, ուր թշնամու պակաս թողածը լրացնում էր սովը՝ խլելով հարյուրավոր մարդկանց կյանք։ «Եւ ոչ կարեմ ինդ թիւր արկանել զմեռեալսն և զողբումն, զլալն և զաղաղակն և զկորուստ ազգիս մեր, որ եղև ի չար բռնաւորէն»[66],—գրում է Թովմա Մեծոփեցին։ Վանի և այլ վայրերի գրավման և ավերման կապակցությամբ Թումա գրիչը գրում է, որ 1425 թ. Իսքանդարը գրավեց Վանը և ուրիշ այլ բերդեր և տիրեց մեր աշխարհին[67]։ Ի լրացումն Իսքանդարի գործած աղետների, 1425 թ., ինչպես հաղորդում է Թումա գրիչը, Ամիդի տեր ակ-կոյունլու Օսմանը հարձակվեց Արճեշի և Արծկեի վրա. «և զերկիրն Արճիշոյ և զԱրծկոյ բնաջինջ գերի վարեաց և սրոյ ճարակ արարեալ»[68]։

Ոգևորված ձեռք բերած հաջողություններից, Իսքանդարը Վասպուրականից արշավեց Ուրմիա, գրավեց քաղաքը և մեծ կոտորած ու ավեր գործեց այնտեղ. «Եւ բազում գերիս եառ եւ ջնջեաց զազգս Հայոց»[69],—գրում է Մեծոփեցին։ Օգտվելով Իսքանդարի կարճատև բացակայությունից, Բաղեշի Սավալա ամիրան քրդերի հետ հարձակվում է Արծկեի վրա, գրավում այն, կոտորում բնակչությանը և կողոպտում։ Այդ ժամանակ Ցիպնա վանքում սպանվում է Գրիգոր վարդապետ Խլաթեցին[70]։ Բաղեշի Սավալա ամիրայից վրեժ լուծելու նպատակով Իսքանդարը 1426 թ. կրկին արշավում է Բաղեշի վրա և

66 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 84։

67 ԺԵ, մասն Ա, էջ 376։

68 Նույն տեղում, էջ 326։

69 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 85։

70 Նույն տեղում։

երեք տարի պաշարած պահում այն[71]։ Այս ընթացքում Իսքանդարին հաջողվում է գրավել Մակվի բերդը և վերջ տալ այստեղ գոյություն ունեցող հայկական կիսանկախ իշխանությանը[72]։

Հարավային Հայաստանում որոշ չափով իր դրությունը ամրապնդելուց և քրդական մի քանի կիսանկախ ամիրայությունների վերջ տալուց հետո, Իսքանդարը պատերազմական գործողություններ սկսեց արևելքում։ 1427 թ. թուրքմենների ռազմատենչ առաջնորդն արշավանք սկսեց Թամուրյանների դեմ, գրավեց Սուլթանիեն, Զենջը և Ղազվինը։ Շահռուխը 1428 թ. Իսքանդարի դեմ ուղարկեց իր զորավար Ալիկե Կուկելտաշին, սակայն նրան չհաջողվեց կասեցնել Իսքանդարի հաղթարշավը, և պատերազմական գործողությունները ձգձգվեցին։ 1429 թ. մայիսին մեծ բանակով Իսքանդարի դեմ շարժվեց ինքը՝ Շահռուխը[73], որի բանակում կար մոտավորապես 100 հազար մարդ։ Այս բանակի մեջ մտնում էին նաև Շահռուխին միացած ամիրաների զորքերը։ Շահռուխին միացան նաև Շիրվանշահի զորքերը։ Թովմա Մեծոփեցին ևս վկայում է, որ Շահռուխը Իսքանդարի դեմ արշավել է մեծաթիվ զորքով. «Եկն անթիւ և անհամար զօրօք իբրև զաստեղս երկնից բազմութեամբ»[74]։ Իսքանդարը, սարսափած Շահռուխի բանակի ահռելի ուժից, նահանջեց դեպի Թավրիզ։ Վերջինս հետապնդեց նրան և ստիպեց ճակատամարտ տալ։ Սալմաստի մոտ տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում Շահռուխը ջախջախեց Իսքանդարին և տարավ փառահեղ հաղթություն[75]։ Իսքանդարի զինվորներից շատերը, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում հայերը, գերի ընկան։ Շահռուխը նահանջող թուրքմեններին հե-

71 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 376։

72 Տե՛ս նույն տեղում, էջ 353։

73 Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 164, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV էջ 37։

74 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 86։

75 Տե՛ս նույն տեղում։

տապալելով մտավ Հայաստան: 1429 թ. հոկտեմբերին պաշարեց և գրավեց Երնջակ բերդը, ապա այստեղից, գերիներ մեծ բազմությամբ, գնաց Ղարաբաղ՝ ձմեռելու[76]: 1430 թ. գարնանը նա իր զորքերի մի մասն ուղարկեց Քաջբերունիք՝ փախած Իսքանդարին հետապնդելու: Այդ նույն ժամանակ Իսքանդարի դեմ արշավեց ակ-կոյունլու Ղարա-Օսմանը, որը որպես Շահռուխի դաշնակից մտել էր Տարոն: Իսքանդարը տեղից տեղ փոխադրվելով մինչև 1430 թ. մանր պատերազմներ վարեց Շահռուխի ու նրա դաշնակիցների դեմ:

Անընդմեջ պատերազմներից, որոնք տեղի էին ունենում Վասպուրականի և Տարոնի շրջաններում, տուժում էր հայ բնակչությունը, ավերվում և ամայանում էին Հայաստանի գյուղերն ու քաղաքները: Սարսափահար բնակչությունն ապաստան էր գտնում լեռներում: Գրիգոր գրիչը Շահռուխի արշավանքի կապակցությամբ գրել է, որ 1430 թ. վերջինս բազմաթիվ զորքով արշավել է Իսքանդարի դեմ, գրավել Թավրիզը, իսկ պարտված Թուրքմեն զինվորներն ավերում էին հայկական բնակավայրերը, թալանում ու գերում բնակչությանը «...և ի խիստ վտանգի կայ ազգս, ահ ու երկիւղն պատել է, կու վախեն, թէ զամէն ազգս գերի վարեն յորժամ գարնանէ»[77]: Մխիթար գրիչը 1430 թ. հաղորդում է, որ ականատես է եղել այն չարագործություններին, որոնք Շահռուխը գործել է Հայաստանում: Շահռուխը գերի է տարել շատ հայերի[78]: Նկարագրելով Վասպուրականում և Քաջբերունիքում Շահռուխի զինվորների գործած դաժանությունները, Դավիթ գրիչը գրել է, որ քանդեցին ու ավերեցին շատ վայրեր և բնակչությանը գերեցին: Հատկապես մեծ թվով գերիներ (կին և տղա) Վասպուրականից և Քաջբերունիքից տարվեցին[79]: Իսքանդարի հետ Վասպուրական փախած

76 Տե՛ս նույն տեղում, էջ 87, И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 164:
77 ԺԵ, մասն Ա, էջ 391:
78 Նույն տեղում, էջ 396:
79 Նույն տեղում, էջ 419:

Թուրքմեն զինվորները, ինչպես վկայում է Մեծոփեցին, սկսում են անխնա կողոպտել ու թալանել հայկական գյուղերը, սպանել անզեն ու անպաշտպան բնակչությանը: Նրանք ողջ ձմեռը անարգել վայելեցին հայ գյուղացու դառն քրտինքով ստացած վաստակը՝ նրան և իր ընտանիքին զրկելով օրվա հացից: Մտնելով Քաջբերունիք, գրում է Մեծոփեցին, նրանք գրավեցին քաղաքներն ու գյուղերը, վանքերն ու ավանները, գազանաբար խլեցին բնակչության հացը և հարդը, աստծո բարկությունը վերևից և ներքևից պատել էր ծովի եզերքը՝ վերևից ձյուն էր ու տեղատարափ, իսկ ներքևում անօրենների գործադրած դաժանությունները[80]: Շարունակելով նկարագրել հայերի ողբալի վիճակը, Մեծոփեցին գրում է, որ հայ ազգաբնակչությունն անօրեններից ազատվելու նպատակով մի վայրից մյուսն էր փախչում: Ինքը՝ պատմագիրը, իր կյանքը ազատել է Լիմ փախչելով[81]: Հարավային Հայաստանի քուրդ ամիրաններն, օգտվելով երկրում ստեղծված խառն իրավիճակից, իրենց հերթին սկսեցին տապալել Հարավային Հայաստանի առանձին շրջանները: Թ. Մեծոփեցու վկայությամբ Ամյուկ բերդի քուրդ իշխան Հաջի բեկը նոր փորձության ենթարկեց Լիմ կղզում ապաստանած հայ բնակչությանը: Նա մտավ կղզի և հայերից ոսկի և արծաթ պահանջեց: Ինչպես վկայում է Մեծոփեցին, ավարառությունը կատարվել է երեկոյից մինչև առավոտ, և այդ ընթացքում Հաջի բեկը 40 000 դահեկան է վերցրել Լիմի բնակչությունից, իսկ նրա հավաքած ողջ գումարը կազմել է 100 000 դահեկան: Կողոպտիչները ծեծում էին բնակիչներին, երեխաների և կանանց ճիչը լսվում էր ամենուրեք[82]: Իմանալով Հաջի բեկի ապստամբությունների մասին, Իսքանդարը արշավում և դուրս է քշում ինչպես Հաջի բեկին, այնպես էլ Վանա լճի առափնյա շրջանները մտած Ղարա-Օսմանին:

80 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 87:
81 Տե՛ս նույն տեղում:
82 Տե՛ս նույն տեղում, էջ 88:

1430 թ. խաշի տոնին Իսքանդարը արշավում է Արճկե քաղաքի վրա, որտեղ իշխում էր քուրդ Սավալա ամիրան: Սկզբնական շրջանում քաղաքի հայ և քուրդ բնակիչները դիմադրություն են ցույց տալիս քաղաքը պաշարած Իսքանդարի զորքին: Բայց երբ քաղաքի հայ ազգաբնակչությունը համոզվում է, որ դիմադրությունը ցանկալի վախճան չի ունենա, արյունահեղությունից և զուր կոտորածից խուսափելու նպատակով որոշում է չդիմադրել և քաղաքը հանձնել Իսքանդարին[83]:

Քաղաքում ապաստանած հայ բնակիչներից առանձնացվում է մի պատվիրակություն, որի կազմում էին Արճեշի տանուտերերից Հովհաննեսը, Ակոռ գյուղի տանուտեր Գորգի Մելիքը և Արճկեի տանուտերերից Մուրադը: Պատվիրակությունը ներկայանում է Իսքանդարին և խնդրում, որ մոռանա քաղաքի բնակչության հանդեպ ունեցած թշնամանքը: Իսքանդարը խոստանում է Արճկեի բնակիչներին ձեռք չտալ, եթե նրանք քաղաքը հանձնեն իրեն: Պատվիրակությունն ընդունում է Իսքանդարի առաջարկը և առաջնորդում է նրան քաղաք: Իր խոստման համաձայն Իսքանդարը քաղաք է մտնում խաղաղությամբ և առանց արյուն թափելու: Նա միայն սպանել է տալիս քաղաքի քուրդ իշխան Սավալային, որն իր թշնամին էր[84]:

Երկարամյա այս պատերազմները քայքայեցին Հայաստանի տնտեսությունը: Հայ գյուղացին հնարավորություն չունեցավ մշակել հողը, որի պատճառով 1431 թ. երկրում ահավոր սով եղավ և խլեց հազարավոր մարդկանց կյանք: Շատ տեղերում մարդիկ կերան իրենց զավակներին. «Եւ պարապեալ պակասեցաւ անասունն, և դիմեցին ի յուտելս եւ դստերս իւրեանց»[85], գրում է Մեծոփեցին: Նույն հեղինակի վկայությամբ ստեղծված անտանելի ծանր պայմանների

83 Տե՛ս նույն տեղում, էջ 92—93:

84 Նույն տեղում:

85 Նույն տեղում, էջ 94:

պատճառով Հայաստանից սկսվեց բնակչության զանգվածային արտագաղթ դեպի այլ երկրներ: Ս. Երեմյանն այս դեպքերի կապակցությամբ նկատել է, որ կարա-կոյունլուների և Թեմուրյանների միջև երկարամյա պայքարը քայքայեց երկիրը: Հայաստանի բնակչության մի մասը 1431—1432 թթ. սովի պատճառով հեռացավ երկրից: Արարատյան երկրի և Սյունիքի բնակչության մի մասն այդ տարիներին գաղթեց Վրաստան[86]:

Շահռուխն Ատրպատականից հեռացավ 1430 թ. մայիսին՝ Իսքանդարի փոխարեն փադիշահ նշանակելով նրա Աբու-Սայիդ եղբորը: Իսքանդարը Ատրպատականում 1431 թ. սպանեց Աբու-Սայիդին և կրկին իշխանությունը վերցրեց իր ձեռքը[87]: Պահը հարմար նկատելով քուրդ Փիր բեկը 1431 թ. մտավ Աղթամար կղզին: Նա թալանեց վանքը և տարավ մեծ քանակությամբ գանձեր ու ավար[88]:

1434 թ. Իսքանդարը մեծ բանակով արշավեց Շիրվան: Մինչ այդ խալիլուլահն Իսքանդարի Արալի որդուն գերել էր և ուղարկել նրան՝ Շահռուխի մոտ: Իսքանդարն այս մասին իմանալով, մեծ բանակով մտնում է Շիրվան: Նա քարուքանդ է անում գյուղերն ու ավանները, բարբարոսաբար կտրել տալիս այգիները և անողորմաբար սրի քաշում բնակչությանը: Իսքանդարի արշավող բանակը, ամայացնելով ողջ Շիրվանը, հասնում է մինչև Դերբենդ: Ամբողջ մեկ տարի Շիրվանը ոտնատակ տալուց հետո նա մեծ ավարով և բազմաթիվ գերիներով վերադառնում է Սյունիք[89]: Իսքանդարի դեմ պայքարելու համար խալիլուլահը դիմում է իր դաշնակից Շահռուխի օգնությանը: Վերջինս 1434 թ. նոյեմբերին

86 С. Еремян, Армения до конца XV в., см.: Очерки истории СССР, М., 1958, с. 719.

87 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 94, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 37:

88 Տե՛ս ժե, մասն Ա, էջ 505:

89 Տե՛ս Թ. Մեծոփեցի. նշվ. աշխ., էջ 100, И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 165, Ղ. Ալիշան. Այրարատ, էջ 326:

Հերաթից մեծ բանակով շարժվում է դեպի Շիրվան՝ Իսքանդարի ոտնձգություններից իր հովանավորյալին պաշտպանելու համար։ Շահռուխը 1434 թ. ձմեռը անցկացրեց Ռեյում, որտեղ նրա մոտ եկավ Խալիլուլահը[90]։ 1435 թ. գարնանը Շահռուխի բանակը մտավ Սուլթանիե, որտեղից դեսպաններ ուղարկեց Իսքանդարի մոտ՝ առաջարկելով անհապաղ ներկայանալ և հպատակվել իրեն։ Քառասուն օր սպասելուց հետո, երբ համոզվեց, որ Իսքանդարը չի ներկայանում, ներխուժեց Շիրվան, ապա Սյունիք և պաշարեց Երընջակ բերդը, ուր գտնվում էին Իսքանդարի ընտանիքն ու մերձավորները[91]։ Իսքանդարն իր թիկնապահ զորքով գտնվում էր բերդից դուրս և 1435 թ. օգոստոսին փախավ Արծափ, այնտեղից էլ՝ Էրզրում։ Բերդում մնացած Իսքանդարի կինը և որդին բազմաթիվ ընծաներով մի պատվիրակություն են ուղարկում Շահռուխի մոտ և խոստանում նրան, որ հարմար առիթի դեպքում իրենք կսպանեն Իսքանդարին[92]։ Մինչ այդ Թավրիզում Շահռուխին հնազանդություն էր հայտնել Իսքանդարի Ջահանշահ եղբայրը, որին Շահռուխը ճանաչել էր կարա-կոյունլուների պետության կառավարիչ[93]։ Ականատես պատմագիրը հայտնում է, որ Ջահանշահն ինքն է անձամբ ներկայացել Շահռուխին և հպատակություն հայտնել։ Մենք այս հարցում չենք կարող համաձայնել Լ. Խաչիկյանի հետ։ Նա գրում է, թե Ջահանշահը գտնվում էր Վանի բերդում։ Երբ Շահռուխի զորքերը պաշարում են նաև Վանի բերդը, Ջահանշահն անհուսալի համարելով դիմադրելը, դուրս է գալիս բերդից և հպատակվում Շահռուխին[94]։ Լ. Խաչիկյանն այս միտքը հայտնում է՝ հիմք ընդունելով արծկեցի

90 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 101։

91 Տե՛ս նույն տեղում, էջ 101—102։

92 Տե՛ս նույն տեղում, էջ 102, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 326։

93 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 106, И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 165, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 326, Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 470։

94 Տե՛ս ԺԵ, մաս Ա, էջ XXVIII։

գրիչ Հովհաննեսի վկայությունը, որը 1438 թ. գրած իր ձեռագիր հիշատակարանում հայտնում է, թե Ջահանշահը գտնվում էր Վանի բերդում, և երբ Շահռուխի հեծելազորը պաշարեց բերդը, նա դուրս եկավ բերդից ու հնազանդվեց Շահռուխին[95]։ Կարծում ենք, որ գրիչն այս դեպքերը շփոթել է։ Մեծոփեցին հայտնում է, թե Ջահանշահը Թավրիզում էր և հպատակություն հայտնեց Շահռուխին։ 1435 թ. Վանում գրած ձեռագրի հիշատակարանում գրիչ Կարապետը Շահռուխի արշավանքի կապակցությամբ գրել է. «...եկեալ որդի Թամուրին՝ Շախռուխն ի յաշխարհս Հայոց, և որդիք Ղարա-Յուսուֆին՝ Իսքանդարն փախըս||տական գնաց ի ներքին աշխարհն և սպան զՂարա Օթմանն և զորդին և զայլ բազումք ընդ նմա. և միւս եղբայրն՝ Ջհանշայն գնաց հնազանդութեամբ մօտ ի Շախռուխին, և նստաւ նորին հրամանաւ ի Թավրէզ, և եղեն երկու եղբարքն թշնամիք միմեանց, և ոչ գիտեմք, թէ զինչ լինելոց եմք»[96]։ Կարապետ գրիչը, որ Շահռուխի երրորդ արշավանքի ժամանակ եղել է Վանում և հիշատակարան է գրել, ոչ մի խոսք չի գրում Վանի պաշարման և այնտեղ Ջահանշահի գտնվելու մասին։ Կարծում ենք, որ վանեցի գրիչն ավելի շատ պետք է արձագանքեր տեղի ունեցածին, քան տարիներ հետո, մեկ այլ վայրում ապրող ուրիշ գրիչ։ Պ. Գրյազնևիչի կարծիքով Շահռուխից Ջահանշահը իշխանությունը ստացավ 1436 թ. գարնանը, երբ գահընկեց արվեց Իսքանդարը[97]։ Իրականում 1435 թ., երբ Շահռուխը մտավ Ատրպատական՝ Թավրիզում նրան է ներկայանում Ջահանշահը, հպատակություն հայտնում և ստանում իշխանությունը։

Հարյուր հոգուն զինվորներով փախչելով Էրզրում, Իսքանդարը կարճ ժամանակամիջոցում կարողանում է իր շուրջը համախմբել 3000 հեծյալ։ Էրզրումի շրջանում 20 հազար

95 Տե՛ս նույն տեղում, էջ 484։

96 Նույն տեղում, էջ 457։

97 Տե՛ս К. Э. Босворт, նշվ. աշխ., էջ 221 (տողատակի ծանոթագրությունը)։

զորքով Իսքանդարի դեմ է դուրս գալիս Ղարա-Օսմանը, որը դաշնակցել էր Շահռուխին: Սակայն Իսքանդարին հաջողվում է անակնկալ հարձակումով իր փոքրաթիվ ուժերով ջարդել Ղարա-Օսմանի զորքը և փախուստի մատնել: Ընդհարման միջոցին սպանվում է Ղարա-Օսմանը՝ իր Բայազետ որդու հետ[98]: Ակ-կոյունլուները տալիս են 700 սպանված: Գերի ընկած 100 հոգի Իսքանդարի հրամանով մորթվում են: Ուշացումով Էրզրում է հասնում Օսմանին օգնության փութացող Շահռուխի 30 հազարանոց բանակը՝ նրա Ջոնգա որդու առաջնորդությամբ: Իսքանդարը, խուսափելով նոր ընդհարումից, փախչում է Փոքր Հայք: 1435 թ. ձմեռը նա անց է կացնում Թոխատում, իսկ գարնանը սկսում է ասպատակել Փոքր Հայքի քաղաքները, մտնում է Սեբաստիա, ուր մեծ կոտորած է սարքում, գրավում և թալանում է նաև Խարբերդ ու Դերջան քաղաքները[99]: Իսքանդարը Փոքր Հայքի բնակչության մի մասին կոտորեց, իսկ մի մասին էլ տեղահան արեց և գաղթեցրեց դեպի Արարատյան դաշտ ու Սյունիք: 1436 թ. խոր աշնանը Իսքանդարը տեղահան արված բնակչության հետ ճանապարհ ընկավ դեպի Արարատյան երկիր: Գաղթը տեղի ունեցավ անտանելի ծանր պայմաններում: Հայաստանի լեռներում արդեն ձմեռ էր և սաստիկ ցուրտ, որի պատճառով բազմաթիվ մարդիկ զոհվեցին: Մեծոփեցին այսպես է նկարագրում տեղահան արված հայերի ծանր վիճակը. «Եւ էին աւուրք դառնաշունչ և դժնդակ օդոյն ձմերային. և յետ երկուց աւուրց յանկարծակի ձիւն սաստիկ եկն ի վերայ նոցա. և ի գիշերին յայնմիկ պաղեցաւ երկիրն. և բազում քրիստոնեայք պաղեալ մեռանէին»[100]: Նույն հեղինակի վկայությամբ մեկ օրում մահացավ 700 մարդ, որոնց դիակներն անթաղ մնալով՝ կեր դարձան գազաններին[101]:

98 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 102—103, ժԵ, մասն Ա, էջ 457:

99 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 104:

100 Նույն տեղում, էջ 104—105:

101 Տե՛ս նույն տեղում:

Հիշյալ դեպքերին համառոտակի անդրադարձել է նաև գրիչ Սարգիսը՝ 1438 թ. Ախալցխայում գրած հիշատակարանում[102]:

Հատկապես Սյունիքի ամայացման մասին է հաղորդում Մեծոփեցին: Օրբելյան Սմբատ իշխանի որդին՝ Բեշքեն, Սյունիքից և շրջակա գավառներից 60 000 տուն հայ բնակչությամբ տեղափոխվել էր Լոռի[103]: Կարա-կոյունլուների գահակալն իր տիրապետության տակ գտնվող երկիրը աշխատող ձեռքերով ապահովելու նպատակով էր, որ հայերին գաղթեցրեց Փոքր Հայքից և Հարավային Հայաստանի այլ վայրերից:

Ջահանշահին կառավարիչ թողնելով Թավրիզում, Շահռուխը 1436 թ. գարնանը վերադարձավ Խորասան: Իմանալով այդ մասին Իսքանդարը շտապեց դեպի Ատրպատական: Երբ կենդանի մնացած գաղթականության հետ մտավ Արարատյան երկիր, նրա դեմ դուրս եկավ Ջահանշահը: Ընդհարման սկզբում Իսքանդարի զորքը անցավ Ջահանշահի կողմը, և նա մնալով սակավաթիվ զինվորներով, հազիվ կարողացավ փախչել և ապաստանել Երնջակ բերդում: Ջահանշահը վեց ամիս պաշարեց բերդը: Իսքանդարը դեսպաններ է ուղարկում Եգիպտոսի սուլթանի և օսմանյան թուրքերի մոտ՝ օժանդակություն խնդրելով իր եղբոր դեմ պատերազմելու համար: Սակայն 1438 թ. մի գիշեր Իսքանդարի որդի Շահ-Կուբադը մի խումբ զինվորների հետ սպանում է նրան և գլուխն ուղարկում Ջահանշահին: Իսքանդարին օգնության շտապող եգիպտական սուլթանի զորքերը Եկեղյաց գավառում լսելով նրա մահվան բոթը, հետ դարձան՝ ճանապարհին ասպատակելով հայկական բնակավայրերը[104]:

102 Տե՛ս ժԵ, մասն Ա, էջ 486:

103 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 117:

104 Տե՛ս նույն տեղում, էջ 107:

* * *

Իսքանդարի սպանությունից հետո իշխանությունն անցավ նրա եղբայր Ջահանշահին, որը 1435 թ. Թավրիզում այն առացել էր Շահռուխից: Ջահանշահն իշխեց մինչև 1467 թ.: Նա մինչև Շահռուխի մահը՝ 1447 թ., Թամուրյանների հետ պահպանեց լավ հարաբերություններ: Ջահանշահի ժամանակ Հայաստանի արևելյան շրջանները պատերազմներից համեմատաբար զերծ մնացին: Ավելի շատ տուժեցին Հայաստանի արևմտյան և Վրաստանի տիրապետության տակ անցած Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները: Այդ ժամանակ վրացական թագավորության հովանավորության տակ էր գտնվում Լոռին, ուր իշխում էր Օրբելյան իշխանաց-իշխան Բեշքենը:

Վրաց Ալեքսանդր թագավորն, օգտվելով իր համար ստեղծված բարենպաստ իրավիճակից՝ Շահռուխի և Իսքանդարի միջև մղվող երկարամյա պատերազմներից և այդ թուրքմեն եղբայրների միջև տեղի ունեցող ներքին պայքարից, փորձ արեց անկախանալ և հրաժարվեց սահմանված հարկը տալ: Ջահանշահը պատրվակ բռնելով այն, որ վրաց Ալեքսանդր թագավորը չէր ներկայացել իրեն հպատակություն հայտնելու և հրաժարվում էր սահմանված հարկը մուծելուց, 1440 թ. մարտին մեծ բանակով արշավեց Վրաստան: Ոտնատակ տալով ու ավերելով Վրաստանի գերիշխանության տակ գտնվող հայկական շրջանները՝ հասավ մինչև Շամշույլտե ամրոցը և պաշարեց այն:

Ըստ Թովմա Մեծոփեցու, Շամշույլտեի պաշարումը սկսվել է 1440 թ. Մեծ պահքի տոնից և շարունակվել մինչև սուրբ Հոգու գալստյան տոնը[105]: Հմուտ աղբյուրագետ Վ. Հակոբյանի հաշվարկներով 1440 թ. պահքը եղել է մարտի 27-ին, իսկ սուրբ Հոգու գալստյան տոնը՝ մայիսի 15-ին[106]: Ուրեմն, ըստ Թ. Մեծոփեցու, բերդի պաշարումը տևել է հի-

105 Տե՛ս նույն տեղում, էջ 120:

106 Տե՛ս ՄԺ, հ. 1, էջ 119:

սուն օր: Ինչպես բերդի պաշարման տևողության, այնպես էլ պաշտպանների և գերվածների թվական տվյալների մասին աղբյուրների հաղորդած տեղեկությունները հակասական են: Հովհաննես գրիչը հաղորդում է, որ բերդի պաշարումը տևել է 40 օր՝ ծաղկազարդի տոնից մինչև համբարձման տոնը[107]: 1441 թ. Հաղպատում ավետարան գրող անանուն գրիչը հաղորդում է, որ Շամշույլտեի պաշարումը տևել է երեք ամիս[108]: Իսկ Օհաննես Թմոգվեցի գրիչը 1442 թ. Արարատյան երկրի Սերկևիլի գյուղում գրած իր ձեռագիր հիշատակարանում հայտնում է, որ պաշարումը տևել է 4 ամիս[109]: Որոշ չափով համընկնում են Թ. Մեծոփեցու և Հովհաննես գրիչի հաղորդած տվյալները: Հովհաննես գրիչի հաղորդած ծաղկազարդի տոնը և համբարձման տոնը Վ. Հակոբյանի հաշվումներով ընկնում է 1440 թ. մարտի 20-ից մինչև մայիսի 5-ը, այսինքն ստացվում է 46 օր[110]: Թ. Մեծոփեցու և Հովհաննես գրիչի հաղորդումներում ստացվում է 4 օրվա տարբերություն: Ուստի, հիմք ընդունելով նշված երկու աղբյուրների արժանահավատությունը, գտնում ենք, որ բերդի պաշարումը տևել է 45—50 օր, այն է 1440 թ. մարտի վերջերից մինչև մայիսի առաջին տասնօրյակի վերջը:

Հին հայկական բերդ Շամշույլտեն համառ դիմադրություն է ցույց տվել Ջահանշահին: Տեսնելով, որ անկարող է կոտրել պաշարվածների դիմադրությունը, Ջահանշահը դիմում է խորամանկության: Նա խոստանում է ներել բերդի բնակիչներին, եթե վերջիններս անձնատուր լինեն: Ըստ երևույթին, պաշարվածները այլևս հնարավորություն չունենալով շարունակելու դիմադրությունը և հավատալով Ջահանշահի խոսքին, անձնատուր են եղել: Սակայն, մտնելով բերդ, նա գազանաբար սրի է քաշել բնակչության մեծ մասին: Աղբյուրների համադիր քննությունից երևում է, որ Շամշույլ-

107 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 507:

108 Տե՛ս նույն տեղում, էջ 514—515:

109 Տե՛ս նույն տեղում, էջ 532:

110 Տե՛ս ՄԺ, հ. 1, էջ 119:

տևի գրավումից հետո Ջահանշահը 12 հազար մարդ է սպանել և գերեվարել[111]։ Նա բերդի դռանը 1664 մարդկանց կտրած գլուխներից 3 բուրգ է պատրաստել տվել, իսկ վաթսուն քահանաների, իշխանների ու տանուտերերի, մեղադրելով դիմադրությունը կազմակերպելու մեջ, հրամայել է գազանաբար սպանել քաղաքի դռանը[112]։ Ինչպես հաղորդում են աղբյուրները, բերդում եղած բնակիչները գերազանցապես հայեր էին, իսկ եղած վրացիներն էլ փախել էին Աբխազիա[113]։ XV դ. Շամշուլդեն ուներ քսան հազար հայ բնակիչ[114]։ Գերվածները՝ ավելի քան 9400 մարդ, քշվել են Միջագետք, Բաղդադ, Խորասան, ուր և վաճառվել են[115]։ Թ. Մեծոփեցին հաղորդում է որ Շամշուլդեի գրավումից հետո Ջահանշահն արշավեց Տփխիսի վրա, գրավեց քաղաքը, քար ու քանդ արեց նրա եկեղեցիները և կողոպտեց դրանց հարստությունները[116]։ Սարսափած վրացիներն ապաստանում էին անմատչելի լեռներում ու անանցանելի անտառներում։ Բայց Ջահանշահի զորքերը նրանց դուրս են քշում թաքստոցներից ու շատերին գերեվարում[117]։

1442 թ. Ջահանշահը պատերազմական գործողություններ ձեռնարկեց ակ-կոյունլուների դեմ։ Սակայն այս մասին մանրամասն տեղեկություններ չկան։ Միայն 1442 թ. Վանեցի գրիչ Կարապետը հաղորդում է, որ «ի յայսմ ամի էառ զանառիկ բերդն զԸռել և զՋուլամերկ»[118]։ Ջահանշահը, ինչ-

---

111 Տե՛ս ԺՆ, մասն Ա, էջ 506, 507—578, 664 և այլն, Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 120, ՄԺ, հ. 1, էջ 119։

112 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 120։

113 Տե՛ս ԺՆ, մասն Ա, էջ 514։

114 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գիրք 1-ին, էջ 432։

115 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 120—121։

116 Հովհաննես գրիչը 1458 թ. իր շարադրած հիշատակարանում հայտնում է, որ Ջահանշահը նախ մտնում է Տփխիս, ավերում այն և ապա գալիս ու գրավում Շամշուլդեի բերդը։

117 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ. էջ 122։

118 ԺՆ մասն Ա, էջ 536։

պես հաղորդում է Թ. Մեծոփեցին, մահմեդական մոլեռանդ հոգևորականության դրդմամբ ծանր հարկեր էր դրել քրիստոնյաների վրա, որպեսզի նրանց կրոնափոխ անի[119]։ 1445 թ. Ջահանշահը նոր արշավանք ձեռնարկեց դեպի Վրաստան, հասավ մինչև Ախալցխա քաղաքը և գրավեց այն։ Այս արշավանքի կապակցությամբ Վանում Կարապետ գրիչը գրել է. «...ի յայսմ ամի գնաց բազում զօրօք յԱխըլցխայ և բազում քրիստոնեայս գերի առար, զոր տեսաք աչօք մերովք զխիղճ և զկսկիծ սոցա»[120]։

Մեկ տարի անց՝ 1446 թ., Ջահանշահը կրկին իր ուշադրությունը դարձրեց դեպի հարավ։ Այս անգամ նա արշավեց Բաղդադի վրա։ Թումա Մինասենցն Աղթամարում գրած իր հիշատակարանում հայտնում է, որ 1446 թ. Ջահանշահը գրավեց Բաղդադը[121]։ Բաղդադի գրավման ժամանակ, ինչպես հաղորդում է Հովսեփ գրիչը, նա կորցրեց 2000 զինվոր և 300 պարոն[122]։ Ջահանշահը, որն իշխանությունը ստացել էր Շահռուխից, մինչև վերջինիս մահը հավատարիմ մնաց նրան։ Շահռուխի մահից հետո՝ 1447 թ., երբ Թամուրյանների պետության ներսում սկսվեցին ներքին երկպառակություններ, Ջահանշահը որոշեց օգտվել ստեղծված բարենպաստ իրադրությունից և, ի հաշիվ Թամուրյանների պետության, իր տիրապետությունը ընդարձակել դեպի արևելք։ Նա միաժամանակ արևմուտքում պատերազմական գործողություններ սկսեց ակ-կոյունլուների դեմ։ 1449 թ., ինչպես հաղորդում է Հովհաննես գրիչը, Ջահանշահը արշավեց դեպի Հեր և Խորասան[123], իսկ 1450 թ.՝ դեպի Երզնկայի և Կամախի շրջանները։ Վերջին արշավանքի մասին տեղեկություն են հաղորդում երկու կարևոր աղբյուրներ. մեկը՝ XV դ. գրված Դավիթ Մերդինցու տարեգրությունն է, իսկ մյուսը՝ 1453 թ.

---

119 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 124։

120 ԺՆ, մասն Ա, էջ 584։

121 Տե՛ս նույն տեղում, էջ 595։

122 Տե՛ս նույն տեղում։

123 Տե՛ս նույն տեղում, էջ 639։

Դավիթ եպիսկոպոսի կողմից Խարբերդում գրված մի հայսմավուրքի հիշատակարանը։ Ըստ նշված հիշատակարանի, Ջահանշահը 1450 թ. 60 հազարանոց բանակով արշավեց արևմուտք, գրավեց Երզնկա քաղաքը, ուր սպանեց քաղաքի իշխանին՝ 40 անվանի մարդկանց հետ։ Այնուհետև Ջահանշահի զորքը ոտնատակ տալով Հայաստանի արևմտյան գավառները գրավեց Կամախը, ուր գերեց 10000 մարդ և սրի անցկացրեց շատերին, Ներքին և Վերին Դերջանները, Բաբերդը, Կեղին, Կոճակն, Գայլ գետը, Շիռեանը և Սատաղը, թալանեց ու գերեց նշված վայրերի բնակիչներին որոնց մեծ մասը հայեր էին[124]։

Շարունակելով իր արշավանքը դեպի հարավ, Ջահանշահը, ինչպես հաղորդում է Դավիթ եպիսկոպոսը, երկար ժամանակ պաշարեց Ամիդ, Արղն և Մերդին քաղաքները, որոնք ուժեղ դիմադրություն ցույց տվեցին նրան։ Երբ նա համոզվեց, որ դրանք չի կարող գրավել, հաշտվեց հետ վերադառնալու մտքի հետ[125]։

Այս դեպքերի ընթացքն այլ կերպ է նկարագրել Դավիթ Մերդինցին, որը, մեր կարծիքով, ավելի հավաստի է և ընդունելի։ 1450 թ. դեպի Երզնկա կատարած հաջող արշավանքից հետո, գրում է նա, Ջահանշահն իր Թարխան Օղլի զորավարին Երզնկայից ուղարկեց Մերդինի շրջակայքում պատերազմելու ակ-կոյունլուների դեմ։ Թարխան Օղլին 1450 թ. գրավեց Թլկուրանը, Ռասլենը, իսկ նոյեմբերի 29-ին պաշարեց Մերդինը։ Վեց օր քաղաքը պաշարելուց հետո քաղաքի բնակչությունը ապստամբեց քաղաքի կառավարիչ ակ-կոյունլու Ջահանգիրի դեմ, և 1450 թ. դեկտեմբերի 4-ին քաղաքը հանձնվեց Թարխան Օղլուն[126]։ Քաղաքի կառավարիչ Ջահանգիրը փախչում է, Թարխան Օղլին մտնում է քաղաք, թալանում այն. «...և բաւ արժանացն նոցա զոմանս տուգանեց և զոմանս թալանեաց և սկսաւ բանալ զզարանսն, որ կայր ինչք մերանոյն, և զինչ որ հաւանէր յափշտակէր և զինչ որ մնայր ի հնգից զմէկն առնէր. և կապուտ նշան եդիր ի վերայ քրիստոնէիցն և բազում չարիս արար»[127]։

Թարխան Օղլին իր բանակով 1450 թ. դեկտեմբերի 4-ից մինչև 1451 թ. մայիսի 23-ը մնաց Մերդինում[128]։ 1451 թ. գարնանն Ամիդում ապաստանած Ջահանգիրը հարձակվում է Մերդինի վրա, նպատակ ունենալով հետ նվաճել քաղաքը։ Բայց արշավանքն անհաջող է անցնում, և նա կրկին վերադառնում է Ամիդ։ 1451 թ. մայիսի վերջերին Թարխան Օղլին արշավում է Ամիդի վրա, ուր պատսպարվել էր Ջահանգիրը։ Ամիդի պարիսպների տակ 1451 թ. հունիսի 1-ին տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտը կողմերից և ոչ մեկին հաղթություն չբերեց[129]։ Ամիդի պաշարումը շարունակվեց մինչև 1452 թ., երբ Թարխան Օղլուն օգնության հասավ Ջահանշահի Մահմադ Միրզա որդին։ Կարա-կոյունլուների միասնական ուժերին հաջողվում է կոտրել ակ-կոյունլու Ջահանգիրի դիմադրությունը և գրավել քաղաքը։ Բայց շուտով, այն է 1452 թ. ապրիլի 3-ին, հակառակորդները հաշտվում են, և Ջահանշահը Մերդինը վերադարձնում է Ջահանգիրին[130]։ 1452 թ. գարնանը Թարխան Օղլին արշավեց Չերմուկ բերդի վրա, ուր իշխում էր Ջահանգիրի եղբայր Ուզուն-Հասանը, բայց այս արշավանքը հաղթանակով չպսակվեց. նա պարտվեց և հետ նահանջեց։ Հավանաբար, Ուզուն—Հասանի այս հաղթանակը կարա-կոյունլուներին ստիպեց հաշտվել Ջահանգիրի հետ և նորից Մերդինը վերադարձնել նրան։ Ինչպես շատ ճիշտ նկատել է Լ. Խաչիկյանը, այս ճանապար-

124 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 31։

125 Նույն տեղում։

126 Տե՛ս ՄԺ, հ. 2, էջ 210։

127 Նույն տեղում։

128 Ամսաթվերը նշանակելիս օգտվել ենք Վ. Հակոբյանի տոմարական հաշիվներից (տե՛ս ՄԺ, հ. 2, էջ 213)։

129 Տե՛ս ՄԺ, հ. 2, էջ 210։

130 Նույն տեղում։

նով Ջհանշահը ձգտել է սրել ներքին պայքարն ակ-կոյուն-լու եղբայրների միջև[131]:

Ինչպես տեսնում ենք, այս պատերազմը շոշափելի ար-դյունք չտվեց կարա-կոյունլուներին: Լ. Խաչիկյանը պատե-րազմի նման ելքը բացատրում է ոչ թե կարա-կոյունլուների թուլությամբ, այլ նրանով, որ կարա-կոյունլու Ջհանշահը ձգտում էր իր թիկունքն ապահովել՝ արևելքում մեծ մասշ-տաբի պատերազմներ վարելու համար[132]: Մենք, սակայն, կարծում ենք, որ կարա-կոյունլուների թուլությունն էր նրանց անհաջողությունների պատճառն արևմուտքում: Ընդունակ ու ռազմատենչ Ուզուն-Հասանին հաջողվել էր ստեղծել լավ պատերազմող մի բանակ, որը վճռական պահին, Ջերմուկի մոտ, հաղթեց կարա-կոյունլուներին, նրանց ստիպեց նա-հանջել ու ժամանակավորապես հրաժարվել ակ-կոյունլունե-րի հետ պատերազմելուց:

Ջհանշահը չկարողանալով արևմուտքում պատերազ-մել ահեղ հակառակորդի դեմ՝ իր զենքը դարձրեց դեպի արե-վելք: Շահռուխի մահից հետո Թեմուրյանների միջև սկսված ներքին սուր պայքարը թուլացրել էր նրանց պետությունը: Ջհանշահը առիթը հարմար գտավ դեպի արևելք իր տիրա-պետությունը ընդարձակելու: Նա 1452 թ. մեծ բանակով ձմեռեց Ոստանում, որտեղ և նախապատրաստվեց արևելյան արշավանքին: Ջհանշահ փադիշահը մի ամբողջ ձմեռ բազ-մաթիվ զորքով նստեց Ոստանում,—գրել է Գրիգոր գրիչը 1452 թ. Աղթամարում[133]: Աղջոց վանքում ընդօրինակած ավետարանում գրիչ Վարդանը հայտնում է, որ այս արշա-վանքին Ջհանշահը դուրս է բերել 200 հազար հեծելա-զոր[134]: 1453 թ. Ջհանշահը գրավեց Պարսկական Իրաքը և Ֆարսը, այսինքն ամբողջ Արևմտյան Իրանը, իսկ քիչ հետո՝

131 Տե՛ս ժն, մաս Բ, էջ IX:

132 Տե՛ս նույն տեղում, էջ X:

133 Տե՛ս նույն տեղում, էջ 21:

134 Տե՛ս նույն տեղում, էջ 131:

Արևելյան Իրանի մի մասը[135]: Ջհանշահն ուժեղ դիմադրու-թյան հանդիպեց Սպահան քաղաքում, որը լավ էր ամրացած և ուներ ուժեղ կայազոր: Սակայն, ինչպես հաղորդում է Թու-մաչա գրիչը, նրան հաջողվում է պարտության մատնել քա-ղաքի կայազորին և գրավել այն[136]: Ջհանշահը գրավված երկրամասերի վրա որպես կառավարիչներ նշանակեց իր որ-դիներին, իսկ ինքն արշավեց Բաղդադի վրա: «...որդիքն թա-գաւորեալ նստան ի Շիրազ, և յԱսպահան, և ի Քրման»[137],— գրում է Խաչատուր գրիչը:

Դեպի Բաղդադ Ջհանշահի արշավանքի պատճառն իր եղբոր որդու անհնազանդությունն էր, որը Բաղդադի կառա-վարիչն էր և ապստամբել էր նրա դեմ: Մինորսկին այս ար-շավանքը վերագրում է 1455 թ.: Այս հարցում Մինորսկու հետ համաձայն է Լ. Խաչիկյանը[138]: Դեպի Բաղդադ Ջհան-շահի արշավանքի մասին տեղեկություն է հաղորդում 1457 թ. Ցիպնա վանքում գրված մի հիշատակարան: Պարզվում է, որ Ջհանշահի արշավանքը տեղի է ունեցել ոչ թե 1455 թ., այլ 1457 թ.: «Յայսմ ամի Ջըհանշայ ղան էառ զԲաղդատ և Կ(60) պարոնութիւն կալան, և ԿՌ (60.000) ոգի ի սուրն քաշեցին, և ԼՌ (30.000) ջորէբեռն մալ ի Ղափանն տա-րան»[139]: Որ իսկապես դեպի Բաղդադ Ջհանշահի արշա-վանքը տեղի է ունեցել 1457 թ., հաստատվում է նաև Դավիթ Մերդինցու ժամանակագրության տվյալներով: Մերդինցին հաղորդում է, որ 1456 թ. Ուզուն—Հասանը, երբ հարձակվում է Մերդինի վրա, Ջհանգիրը դիմում է Ջհանշահի օգնու-թյանը: Վերջինս Ջհանգիրին հանձնարարում է գնալ Երզըն-կա և իր զորավար Արապշահին իր անունից հրամայել, որ զորքով Ջհանգիրին օժանդակի՝ Ուզուն-Հասանի դեմ կռ-

135 Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 166, К. Э. Босворт, նշվ. աշխ., էջ 221:

136 Տե՛ս ժն, մաս Բ, էջ 172:

137 Նույն տեղում, էջ 181:

138 Տե՛ս նույն տեղում, էջ XI:

139 Նույն տեղում, էջ 81:

վելու։ «Իսկ Արապշահ ոչ իշխեաց գալ պատերազմել ընդ Հասան պակն, այլ ապապրեաց զծնկայն ի Ճհանկիրն և ինքն գնաց առ Ճհանշահն, որ ի Ջաղաթայ էր»[140]։ Այսինքն Ջահանշահը 1456 թ. Խորասանում էր, որտեղից էլ 1457 թ. սկզբին արշավեց դեպի Բաղդադ։ Բաղդադում ծագած ապստամբությունը ճնշելուց հետո Ջահանշահն արշավեց դեպի Մուշի, Բաղեշի և Խլաթի շրջաններ, ուր քրդական ամիրաները ևս ապստամբել էին իր դեմ։ Այստեղ ևս նրան հաջողվում է ճնշել իր դեմ ծագած խռովությունը և գերի վերցնել 1500 մարդ։ Վերը վկայակոչած հիշատակարանի շարունակությունում կարդում ենք. «Եւ դարձեալ, արբանեակն սատանայի Ջհանշայ ղանն եբեկ ի վերայ Բաղըշու, Մշու և Ղլաթայ, առ՝ւ աւար արար և տարաւ ՌՇ. (1500) գերի՝ կին և այր և մանկունս. և զամէն գերի Շ. (500) թամուրի կու ծախին»[141]։ Ինչպես միշտ, այս անգամ էլ դարձյալ տուժողը հայ ազգաբնակչությունն էր, որը ոչ միայն սպանվում էր, այլև՝ որպես ապրանք վաճառվում։

Կենտրոնական իշխանության դեմ առաջացած ապստամբությունները ճնշելուց հետո Ջահանշահը 1457 թ. նորից վերսկսեց իր ընդհատված արշավանքն Արևելյան Պարսկաստանում։ Նա մեկը մյուսի հետևից գրավեց Ռեյը, Ղազվինը, Գիլանը, Քուշանը, Շիրազը, Քրմանը, Խորասանը և սպառնում էր գրավել Թամուրյանների պետության այլ նահանգները[142]։ 1458 թ., Ջահանշահը պարտության մատնելով Թամուրյանների ժառանգներից Միրզա Իբրահիմին, մտավ Հերաթ[143]։ Սակայն ներքին և արտաքին որոշ հանգամանքներ շուտով Ջահանշահին ստիպեցին հրաժարվել իր նվաճումների մի մասից։ Թամուրյանների մեջ մղվող ներքին գահակալական կռիվներում հաղթանակով դուրս եկավ

140 Մժ, հ. 2, էջ 211։
141 ԺՆ, մասն Բ, էջ 81։
142 Նույն տեղում, էջ 79։
143 Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 166։

սուլթան Աբու-Սայիդը։ Նա անցնելով իշխանության գլուխ՝ դեսպաններ ուղարկեց Ջահանշահի մոտ, նրան առաջարկելով թողնել իր պետության սահմանները[144]։ Հենց այս ընթացքում Ջահանշահը լուր ստացավ, որ Թավրիզում բանտարկված իր Հասան-Ալի որդին 1458 թ. բանտից դուրս գալով իր շուրջն է համախմբել Ջահանշահի բանտարկված ռազմական այլ առաջնորդների ու ապստամբել է իր դեմ և գրավել Թավրիզը[145]։ Ջահանշահը ստիպված 1459 թ. հաշտություն կնքեց սուլթան Աբու-Սայիդի հետ և վերադարձավ Թավրիզ։ Նա հրաժարվեց Արևելյան Իրանում կատարած իր նվաճումներից, որոնց փոխարեն ստացավ Պարսկական Իրաքը և Ֆարսը[146]։ Հասան—Ալու ու իր համախոհների բանտից դուրս գալու և ցարծած ապստամբությունների մասին խոսվում է նաև 1459 թ. Ոստանում ամն Աբդլ-Ազիզի ձեռք բերած ճաշոցի հիշատակարանում։ Արձակվեց երկաթյա կապանքներից Ջահանշահի Հասան—Ալի որդին, գրում է հիշատակագիրը, և շատ ավեր պատճառեց քաղաքներին, իր հոր կողմից բանտարկվածներին՝ Ղլիճ-Ասլանին և իր որդուն, Արապշահին և իր որդուն ազատեց բանտից ու համախմբեց իր շուրջը բազմաթիվ հեծելազոր։ Նա Ղլիճ-Ասլանին ուղարկեց Վանա բերդի վրա, սակայն այն գրավել չկարողացավ, ավերեց Վասպուրականը և հետ դարձավ[147]։ Ղլիճ-Ասլանի արշավանքին հաջորդեց ռոշկանցի քրդերի արշավանքը՝ դեպի Վանա լճի ափերը, նպատակ հետապնդելով գրավել Աղթամարը։ Սրանք Սեիդ-Ալու գլխավորությամբ Գավաշից երկիրը թալանելուց հետո 12 օր մնում են Ախվանց գյուղում։ Սեիդ-Ալուն հաջողվում է ձեռք բերել երկու լաստանավ, որոնցով պետք է մտնեին Աղթամար։ Զաքարիա կա-

144 Տե՛ս նույն տեղում, էջ 167, ԺՆ, մասն Բ, Առաջաբան, էջ XI, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 42։
145 Տե՛ս ԺՆ, մասն Բ, էջ 101։
146 Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 167։
147 Տե՛ս ԺՆ, մասն Բ, էջ 117։

թողիկոսը տեղեկանալով այս մասին, իր տրամադրության տակ եղած զինվորական ուժերով դուրս եկավ քրդերին ընդառաջ։ Զաքարիային հաջողվում է պարտության մատնել քրդերին, գրավել նրանց լաստանավերը և հեռացնել Վանա լճի ափերից։

Այնտեղից Զաքարիան գնում է Ատրպատական մոտ Ջահանշահին ընդառաջ։ Խոյում Զաքարիան տեսակցում է Ջահանշահի հետ, պատմում է այն բոլոր ասպատակությունների մասին, որոնք Ղլիճ-Ասլանը և Սեիդ-Ալին գործել էին Վանա լճի առափնյա շրջաններում[148]։ Այս հանդիպման ժամանակ Ջահանշահից Զաքարիան ստացավ էջմիածնի կաթողիկոսությունը։ Սա Վասպուրականի խմբակցության հաղթանակն էր։ Այդ նույն ժամանակ կաթողիկոսական աթոռի համար պայքար էր մղվում մի կողմից Արարատյան և Սյունյաց, իսկ մյուս կողմից՝ Վասպուրականի հոգևոր և աշխարհիկ տերերի միջև[149]։ Ջահանշահից էջմիածնի կաթողիկոսությունը ստանալու կապակցությամբ Զաքարիա կաթողիկոսն իր թեմերից մեկի ժողովրդին ուղղած մի կոնդակում գրում է. «Փադշահն (որ) տեսաւ ասաց՝ Երբ դու էնց լաւ մարդ ես՝ էջմիածին (և) աջն քեզ. մեք էլ յանձն առաք էջմիածնի սիրոյն հա(մար)»[150]։ Բազմավաստակ Ղ. Ալիշանը այս դեպքերը դնում է 1460—1461 թթ., իսկ Ջահանշահի և Զաքարիայի հանդիպումը, ըստ նրա, տեղի է ունեցել Թավրիզում[151]։ Կարծում ենք, որ Ալիշանը այս հարցում ճիշտ չէ։ Սխալ է նաև Չամչյանը։ Վերջինս այս դեպքերը, ինչպես նաև Ջահանշահի երկրորդ արշավանքը Արևելյան Պարսկաստան դնում է 1460—1461 թթ.[152]։ Վերը նշված հիշատակարանի տվյալները հաստատում են, որ այս դեպքերը տեղի են ունեցել 1459 թ.։

148 Նույն տեղում, էջ 117—128։
149 Տե՛ս նույն տեղում, էջ XIII։
150 Նույն տեղում, էջ 173։
151 Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 327։
152 Տե՛ս Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 503—504։

1461 թ. Բաղեշի ամիրը՝ Շարաֆը հրաժարվելով Ջահանշահին հարկ վճարելուց ապստամբում է նրա դեմ։ Ապստամբությունը ճնշելու համար Ջահանշահը 12 հազարանոց մի բանակ է ուղարկում։ Հասնելով Խլաթի շրջանը թուրքմեն զինվորները կողոպտում և ավերում են Խլաթի շրջակայքը։ «Ընդ այնմ ժամանակին եղև ցասումն փաթշահին ի վերայ ամիրային Բաղիշու, և բարկութեամբ առաքեաց Գ. (4()զաւրագլուխս երկոտասան հազար հեծելազօրօք ի վերայ քաղաքին Խլաթա. և գնացեալ՝ աւերեալ քանդեցին զնա և բազում աւար ի մի ժողովեալ՝ նստան ի վերայ բերդին, և նեղէին առնել զնա, և զնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղէշ և ի Մուշ, ի Խութ և ի Սասունք և յամենայն գաւառսն նոցա»[153], կարդում ենք 1461 թ. Արճեշում գրված մի հիշատակարանում։ Զաքարիա կաթողիկոսն զգալով, որ այս ընդհարումները նոր աղետներ են բերելու հայ ժողովրդին, որոշեց միջամտել և հաշտեցնել ախոյաններին։ Նախ նա գնաց Ջահանշահի մոտ և ստացավ նրա համաձայնությունը։ Վերջինս լիազորեց Զաքարիա կաթողիկոսին կարգավորելու այդ հարցը, ինչպես ինքը կցանկանա։ Ապա, գնալով ամիր Շարաֆի մոտ, համոզեց նրան, որ հնազանդվի Ջահանշահին և վճարի սահմանված հարկերը։ Այնուհետև ներկայանալով Ջահանշահի զորավարներին, հայտնեց իր առաքելության նպատակը և վերացնել տվեց քաղաքի պաշարումը։ Խլաթից գալով Բաղեշ նա գանձեց սահմանված հարկը և հանձնեց Ջահանշահին։ Այս առաքելությամբ հայրենասեր կաթողիկոսը կարողացավ իր ժողովրդին ազատել նոր արյունահեղությունից ու կոտորածից։

Ջահանշահի դեմ ապստամբությունները սրանով չվերջացան։ Նրա դեմ սկսեցին ապստամբել նույնիսկ իր հարազատները. այսպես, 1461 թ. ապստամբության դրոշ բարձրացրեց նրա որդի Փիր-Բուդաղը, որը Շիրազի կառավարիչն

153 ԺԵ, մասն Բ, էջ 174։

էր։ Ջահանշահը նորից արշավեց արևելք, ճնշեց ապստամբությունը և ապահովության նպատակով Փիր-Բուդաղին ուղարկեց Բաղդադ՝ որպես կառավարիչ[154]։

Երբ Ջահանշահը զբաղված էր Շիրազում Փիր-Բուդաղի ապստամբությունը ճնշելով, Արարատյան երկրում նորից հայտնվեց նրա Հասան-Ալի որդին։ Ինչպես գրում է Մ. Օրմանյանը, նա կամենում էր բռնել Զաքարիային և կողոպտել եկեղեցու ունեցվածքը։ Զաքարիա կաթողիկոսը իմանալով այդ մասին, վերցնում է կաթողիկոսարանի հարստությունը և փախչում Աղթամար[155]։ Բաղդադում Փիր-Բուդաղը 1463 թ. կրկին ապստամբում է Ջահանշահի դեմ։ Այս ապստամբությունը ճնշելու նպատակով Ջահանշահը 1463 թ. արշավեց դեպի Բաղդադ։ Բայց այս անգամ Փիր-Բուդաղը ապստամբությունը լավ էր նախապատրաստել, և Ջահանշահը երկու տարվա ընթացքում հազիվ կարողացավ ճնշել այն։ Այս դեպքերի կապակցությամբ 1465 թ. գրիչ Վարդանը գրում է. «...այս Բ. (2) ամ է, որ նստեր է ի վերայ Բաղդատ քաղաքին և խսարեր է զորդին իւր զՓիր-Պուտախն»[156]։ Ապստամբությունը ճնշելուց հետո Ջահանշահը մահապատժի ենթարկեց Փիր-Բուդաղին[157]։

Հաղթող դուրս գալով ներքին պայքարից, Ջահանշահը կրկին ուշադրությունը դարձրեց դեպի իր հիմնական թշնամին՝ ակ-կոյունլուները։ Նա նպատակ ուներ վերջնականապես ջախջախել ակ-կոյունլուներին և ապահովել իր տերության արևմտյան սահմանների անվտանգությունը։ Արևելյան հաջող արշավանքներով նա չեզոքացրեց Թեմուրյանների կողմից սպառնացող վտանգը։ Բայց արևմուտքում դեռևս մնում էին ակ-կոյունլուները, որոնք բավականին ուժեղ

154 Տե՛ս նույն տեղում, էջ XV։

155 Տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 2165։

156 ԺԵ, մասն Բ, էջ 234։

157 Նույն տեղում, էջ 236։

էին և լուրջ մրցակից Ջահանշահի համար[158]։ Տակավին 1454 թ., երբ վերջինս գտնվում էր արևելքում, Ուզուն-Հասանը ասպատակում է Վանա լճի հյուսիսային շրջանները և ծանր վիճակ ստեղծում տեղի հայ բնակչության համար։ Գրիչ Հովհաննես Մանկասարենցն այս դեպքերի կապակցությամբ 1454 թ. Արճեշում գրել է, որ իրենք ահ ու սարսափի մեջ են, որովհետև Ուզուն-Հասանի զորքը գերում և թալանում է[159]։ Թուրքմեն բանակի հրոսակները որտեղ ոտք էին դնում, թալանում ու կողոպտում էին բնակչությանը։ Ուզուն-Հասանի հրոսակներից ազատվելու նպատակով հայ բնակչությունը լքելով իր տուն ու տեղը, ապաստան է փնտրում անառիկ վայրերում։

Սուխարա վանքում 1454 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում ասվում է, որ հիշատակարանը գրվել է դառն ժամանակում, թշնամու ահից մարդիկ փախել են Լիմ կղզին և Ամյակ ամրոցը, սակայն հեծյալ ասպատակողները թալանել ու կողոպտել են նրանց, շատերին էլ սպանել[160]։ Երկու ախոյանները փոխադարձաբար հովանավորում և օժանդակում էին մերթ մեկի, մերթ մյուսի տերության ներսում ծագած ներքին խռովությունները։ Դեռևս 1456 թ., երբ ընդհարվել էին Ուզուն-Հասանն ու իր Ջահանգիր եղբոր որդին վերջինս դիմել է Ջահանշահին և նրանից զինական օժանդակություն խնդրել։ Ջահանշահը Ջահանգիրին է վերադարձրել Երզնկա քաղաքը և այնտեղ գտնվող իր Արապշահ զորավարին հրամայել օժանդակել Ջահանգիրին՝ Ուզուն-Հասանի դեմ պատերազմում։ Սակայն, Արապշահը հետո քաղաքը հանձնել է Ջահանգիրին, իսկ ինքը իր զինվորներով մեկնել Խորասան՝ Ջահանշահի մոտ[161]։ 1457 թ. Ջահանգիրը Ջահանշահի մոտ ուղարկեց իր եղբորը՝ Ուվայիս Բեկին։ Վերջինս ներկայանալով Ջահանշահին, բողոքում է Արապ-

158 Նույն տեղում, էջ XVII։

159 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 41։

160 Տե՛ս նույն տեղում, էջ 39։

161 Տե՛ս ՄԺ, հ. 2, էջ 211։

շահի գործելակերպի դեմ և նոր ուժեր խնդրում Ուզուն-Հասանի դեմ պայքարելու համար։ Ջահանշահը Ռուստամ բեկի, Ալիշաքար բեկի, Սավալու բեկի և Փիր բեկի գլխավորությամբ հեծելազոր է ուղարկում Ուզուն-Հասանի դեմ։ Գատերավանում, որը տեղի ունեցավ Ամիդի մոտ, Ջահանգիրն իր դաշնակիցների հետ պարտություն կրեց։ Գերի ընկածներից Ռուստամ բեկին Ուզուն-Հասանն անձամբ սպանեց, իսկ Ալիշաքար բեկին իր որդու հետ և Սավալա բեկին բանտարկել տվեց[162]։

Իր հերթին Ուզուն-Հասանը օժանդակեց Հասան-Ալուն՝ Ջահանշահի դեմ ապստամբության ժամանակ, իսկ ապստամբության անհաջող ելքից հետո ապաստան տվեց վերջինիս։ Ուզուն-Հասանն ընդդեմ Ջահանշահի հովանավորում էր նաև Բաղեշի քուրդ ամիրային[163]։

1457 թ. Ամիդի մոտ տարած հաղթանակից հետո Ուզուն-Հասանն իրեն ենթարկեց Ջահանգիրին, որով և վերջ տրվեց ակ-կոյունլուների պետության ներսում ներքին խռովություններին։ Մինչև 1460 թ. Ուզուն-Հասանը գրավեց և իր տերությանը միացրեց Հայաստանի ու Քուրդիստանի մի մասը[164]։ Այսպիսով, Ուզուն-Հասանը ստեղծեց մի ուժեղ տերություն, որը լուրջ վտանգ էր սպառնում կարա-կոյունլուներին։ Ջահանշահը, նախազգալով այդ վտանգի ծանր հետևանքը, որոշեց նախահարձակ լինել և կասեցնել ակ-կոյունլուների պետության հզորացումը։ Իր նպատակներն իրագործելու համար նա 1467 թ. մայիսին մեծ արշավանք սկսեց Ուզուն-Հասանի դեմ և իր բանակով Ատրպատականից մտավ Վասպուրական, որը վեց ամիս ասպատակելուց հետո աշնանը մտավ Մշո դաշտ, կարճ ժամանակում ասպատակեց այն ու շարժվեց դեպի Ճապաղջուր[165]։ Մատենագիտական

162 Տե՛ս նույն տեղում, հ. 2, էջ 211—212։

163 Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 168, ԺԵ, մասն Բ, էջ XVIII։

164 Տե՛ս նույն տեղում, էջ XVIII։

165 Տե՛ս նույն տեղում, էջ 168։

գրականության մեջ Ջահանշահի և Ուզուն-Հասանի ընդհարման մասին կան երկու իրարամերժ կարծիքներ. Ի. Պետրուշևսկին գտնում է, որ Մշո դաշտում Ուզուն-Հասանի և Ջահանշահի միջև տեղի է ունեցել ճակատամարտ, ուր Ջահանշահը պարտվել է և նահանջել Հարավային Ադրբեջան։ Ուզուն-Հասանը հետապնդելով նահանջող թշնամուն, 1467 թ. նոյեմբերի 10-ին, երբ Ջահանշահն իր զորքն ուղարկել էր առաջ, իսկ ինքը թիկնապահ զինվորների ջոկատով հանգստանում էր լեռնային մի գյուղում, գիշերը հարձակվեց նրանց վրա և կոտորեց բոլորին։ Այս ընդհարման ժամանակ իր Մահմադ որդու հետ սպանվեց նաև 70-ամյա Ջահանշահը[166]։

Լ. Խաչիկյանը, հայկական աղբյուրների ընձեռած նյութերի հիման վրա գտնում է, որ Ջահանշահի և Ուզուն-Հասանի միջև Մշո դաշտում ընդհարում չի եղել, այն տեղի է ունեցել Ճապաղջրի մոտ՝ Սանջախ կոչված վայրում։ Ջահանշահն իր գլխավոր ուժերը ուղարկել է Աղճաղալա՝ ձմեռելու, իսկ ինքը 2000 հոգով մնացել է Սանջախում։ Մի գիշեր նրանց վրա է հարձակվել Ուզուն-Հասանի բանակը և բոլորին կոտորել[167]։ Այս հարցում հակադրվելով Ի. Պետրուշևսկուն, Լ. Խաչիկյանը գտնում է, որ Մշո դաշտից Ադրբեջան (Ատրպատական—Գ. Կ.) նահանջող զորքը չէր կարող գնալ Ճապաղջրով[168]։

XV դ. վերաբերող անանուն մի տարեգրության մեջ մանրամասն տեղեկություն է հաղորդվում Ջահանշահի և Ուզուն-Հասանի ընդհարման վայրի մասին։ Այնտեղ կարդում ենք. «Ի ՋԺԷ (1468) երեկ Ճիհանշան ի վերայ Հասան պակին և հասեալ մինչ ի Ճապաղջուր|| և Հասան պակն էառ զառաջքն ի հեռուստ բարձր լերամբ և նայելի տեղին, որ կոչի Սանճախ. և զօրսն առաքեաց դէպ Աղջախալան և ինքն ԲՌ

166 Տե՛ս նույն տեղում, К. Э. Босворт, նշվ. աշխ., էջ 221։

167 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ XVIII։

168 Տե՛ս նույն տեղում, էջ XIX։

(2000) պարանոք եկաց անդ ուրս Գ(3) յուտել և ի խմել․ զի վաղին Հասանն զօրացն և եյանել Յեղնկան և անդի գալ ի վերա Հասանպակին։ Եւ Հասան պակն իմացեալ զչար խորհուրդ նորա ԺՌ (10000)-օ բոլորեց զՃիհանշան և եղև կռի, և բռնեցին զՃիհանշան Բ (2) որդովն և սպանին»[169]։ Այստեղ տարեգրողն ընդհարման թվականը սխալ է նշել, սակայն դեպքերի ընթացքը ճշմարտացի է նկարագրել։ Այս դեպքերին անդրադարձել է նաև Մկրտիչ Խիզանցի գրիչը՝ 1468 թ. գրած ձեռագիր հիշատակարանում։ Նա հաղորդում է, որ Ջահանշահը մտել է Մշո դաշտ, ուր մեծ ավերածություններ է գործել։ Նրա զորքը սփռվել է Մշո դաշտով մեկ և սկսել թալանել բնակչությանը։ Ջահանշահի հրոսակները մտնում են սբ. Ղազարի վանք, թալանում այն, իսկ լուսարարին այրում։ Անցնելով Մշո դաշտից դեպի հարավ, «Եւ ի ճանապարհին իջավանեցան. և զաւրքն ի յիրմէն ի բաց արձակեցայ», հենց այս ժամանակ նրա վրա է հարձակվել Ուզուն-Հասանը։ Ընդհարման ժամանակ սպանվել են Ջահանշահը և իր որդին[170]։ Ինչպես տեսնում ենք, բերված երկու աղբյուրներում էլ նկարագրված են Մշո դաշտում տեղի ունեցած իրադարձությունները, սակայն ոչ մի խոսք չկա Մշո դաշտում Ջահանշահի և Ուզուն-Հասանի ընդհարման մասին։ Ուստի Մշո դաշտում նրանց միջև ընդհարում տեղի չի ունեցել, հակառակ դեպքում և՛ տարեգրողը, և՛ գրիչն այդ մասին անպատճառ կնշեին։ Ջահանշահի սպանության կապակցությամբ 1472 թ. Մովսես Արծկեցի գրիչը գրում է.

«Իսկ Հասան-Բէկ քաջ փահլուանն,
Զօրքն իւրով որ գումարան,
Ի քուն եղիտ ըզՋըհանշայն,
Զօրացն ի զատ, անպահապան,

169 Մժ, հ. 2, էջ 152—153։
170 ԺԵ, մասն Բ, էջ 271։

Որ և սպան անդէն ըզայն
Եւ զՄուհամմատ՝ որդի նորայն»[171]։

Այսպիսով, 70-ամյա Ջահանշահն Ուզուն-Հասանի կողմից սպանվում է 1467 թ. նոյեմբերի 10-ին, ոչ թե Մշո դաշտում, այլ Սանջախ կոչված վայրում։ Ջահանշահից հետո կարա-կոյունլուների թույլ կապերով միավորված պետությունն արագորեն սկսեց քայքայվել, և շուտով նրա կազմի մեջ մտնող երկրների ու ժողովուրդների մեծ մասը նվաճվեց ակ-կոյունլուների կողմից։

Ակ-կոյունլուների հզորացումը քաղաքական առումով Իրաքում և Արևմտյան Իրանում վերջ տվեց Իլխանների տիրապետությանը, ինչպես նաև ձախողվեցին արևմուտքում իրենց տիրապետությունը պահելու Թամուրյանների փորձերը։ Իսկ էթնիկական առումով թուրքմենների համակենտրոնացումն արագացրեց արդեն խորացած այն պրոցեսը, որի հետևանքով Ատրպատականում թուրքական տարրը գերազանցեց թե էթնիկական, և թե լեզվի տեսակետից[172]։

171 Նույն տեղում, էջ 333։
172 Տե՛ս К. Э. Босворт, նշվ. աշխ., էջ 222։

ԱԿ-ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ջահանշահի սպանությամբ Ուզուն-Հասանը կործանիչ հարված հասցրեց կարա-կոյունլուների պետությանը։ Ջահանշահից հետո, գահին տիրելու համար ասպարեզ իջան երկու թեկնածուներ՝ Ջահանշահի Հասան-Ալի որդին և Բաքանդարի որդին՝ Հուսեյն-Ալին[1]։ Ներքին այս պայքարից հաղթանակով դուրս եկավ Հասան-Ալին։ Նրան հաջողվեց սպանել Հուսեյն-Ալուն, դատարկել պետական գանձարանը և դրամի օժանդակությամբ հավաքել ստվարաթիվ մի բանակ։ Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ Ուզուն-Հասանը դեպի Թավրիզ կատարելիք իր արշավանքը հետաձգեց մինչև գարուն։ 1468 թ. գարնանը նա մեծ բանակով շարժվում է դեպի արևելք։ Ուզուն-Հասանի և Հասան-Ալու միջև ընդհարումը տեղի է ունեցել Մարանդի մոտ, ուր Հասան-Ալու բանակը պարտվել է, իսկ նա փախչելով փրկել է կյանքը։ Նրա զորքի մնացած մասն անցել է Ուզուն-Հասանի կողմը։ Այս հաղթությունից հետո Ուզուն-Հասանն անարգել մտել է Թավրիզ։ Ըստ Ի. Պետրուշևսկու, Ուզուն-Հասանի և Հասան-Ալու միջև ընդհարում տեղի չի ունեցել։ Հասան-Ալու շուրջը համախմբված քոչվոր ավագանին և գյուղացիները հրաժարվել են նրան ենթարկվել։ Այս հանգամանքը, ըստ Ի. Պետրուշևսկու, դյուրացրել է Ուզուն-Հասանի գործը, որը 1468 թ. առանց դիմադրության մտել է Հարավային Ատրբեջան, ապա անցել Ղարաբաղ։ Հասան-Ալին փախել է Թավրիզ, իսկ

1 Ի. Պետրուշևսկին սխալվում է, երբ այդ երկուսին համարում է Ջահանշահի որդիները, տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 169։

Ուզուն-Հասանը հետամուտ լինելով, նրան դուրս է քշել այնտեղից և հաստատվել գահին[2]։ Այս հարցում ևս մենք համակարծիք չենք Ի. Պետրուշևսկու հետ։ Ինչպես արդեն ասվեց, Ուզուն-Հասանի և Հասան-Ալու միջև ընդհարումը տեղի է ունեցել Մարանդի մոտ։ Ահա թե ինչ է գրում այդ առթիվ XV դ. անանուն տարեգիրը. «Եւ ժամանակն այն ձմեռնամըտին էր։ Եւ ոչ կարաց գնալ Հասան պակն յարևելք, ապա գարուն եւ հասան պակն Լ (30000)—ու և գնաց մինչ ի դաշտն Խոււ և էառ զամենայն խաղաղութեամբ և սիրով։ Եւ գայ որդի Ճիհանշին Ալի պակն ընդէմ նորա Ճ (100000) մարդով ի Մարանդ և դիմամարտի և կռուվի և փաղչի, և Հասան պակն առն(ու) զզօրս նորա և զքսիպն և մտանէ ի Թօրէզ»[3]։ Չնայած իր գերազանց ուժերին, Հասան-Ալին չի կարողացել ծավալել լայն գործողություններ։ Նրա զորքը և առաջնորդները, որոնք հավաքվել էին փողի օգնությամբ, թողել են Հասան-Ալուն և անցել Ուզուն-Հասանի կողմը։ Հասան-Ալին փախչելով Թամուրյանների մոտ ապավինում է սուլթան Աբու-Սայիդի օժանդակությանը։ Վերջինս առիթը հարմար է նկատում գրավելու այն երկրները, որոնք կարա-կոյունլուները խլել էին Թամուրյաններից։ Նա իր նպատակն իրականացնելու հույսով որոշում է միջամտել և գահին նստեցնել Ջահանշահի որդուն, այդ պատճառով էլ մերժում է Ուզուն-Հասանի առաջարկը՝ հաշտության պայմանագիր կնքելու մասին[4]։

Նախապատրաստվելով արշավանքի, Աբու-Սայիդը 1468 թ. գարնանը դուրս եկավ Հերաթից։ Գրավելով և իրեն հպատակեցնելով Արևմտյան Պարսկաստանի երկրամասերը, նա 1468 թ. խոր աշնանը մտավ Ատրպատական։ Սակայն, ցրտերի պատճառով, նա ստիպված էր գնալ Դաշտային Ղարաբաղ՝ ձմեռելու, բայց, զգալով կերի պակասություն, անցավ Կասպիականի ափ, ուր հույս ուներ սննդամթերք և կե-

2 Տե՛ս նույն տեղում։

3 Մժ, հ. 2, էջ 153։

4 Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 169։

րի պաշար ստանալ Թամուրյանների հին դաշնակից Շիրվանշահ Ֆարուխ Յասարից[5]: Սակայն վերջինս ոչ միայն հրաժարվեց օգնելուց, այլև դաշինք կնքեց Ուզուն-Հասանի հետ՝ ընդդեմ Աբու-Սայիդի: Ուզուն-Հասանին էր միացել նաև Արդաբիլի տեր Սեյիդ-Հայդարը[6]: 1469 թ., երբ Աբու-Սայիդի քաղցած և բարոյալքված բանակը շարժվում էր դեպի Կասպիականի ափերը, փետրվար ամսին Կուր և Արաքս գետերից հարավ նրա վրա հարձակվեց Ուզուն-Հասանը և պարտության մատնեց: Սուլթան Աբու-Սայիդը գերի ընկավ և մահապատժի ենթարկվեց Ուզուն-Հասանի դաշնակիցների պահանջով[7]:

Այս հաղթությունից հետո Ուզուն-Հասանը ստեղծեց ընդարձակ մի պետություն, որը ձգվում էր Եփրատի ափերից մինչև Պարսկաստանի արևելյան սահմանները և Կովկասից մինչև Հնդկական օվկիանոս: Այս պետության կազմի մեջ մտնում էին Հարավային Ադրբեջանը (Ատրպատական), Հայաստանը, Քուրդստանը, Արաբական և Պարսկական Իրաքները, Լուրիստանը, Ֆարսը և Քրմանը, մինչև Խորասան և Պարսկական ծոց ընկած տարածքները[8]:

Այս իրադարձություններին անդրադարձել են նաև XV դ. հայ գրիչները: Այսպես, Հովհաննես Մանգասարենց գրիչը 1469 թ. գրել է. «Գրեալ յԱրճէշ քաղաքի..., ի ղանութիւն Ուզուն-Հասանին, որ յայս Ա. (1) տարի Գ. (3) փատշահ կորոյս զօրօք և զաւակօք՝ զՋհանշահն, զՀասան-Ալին և զսուլտան Բուսախն, և իշխեաց ի Շամայ դռնէն մինչև ի Խորասան...»[9]: Խարբերդցի Հակոբ գրիչը 1470 թ. գրում է, որ Ուզուն-Հասանը տիրում էր Բաբելոնից մինչև Շիրազ և Տրապիզոն: Մեկ տարում, շարունակում է գրիչը, պարտու-

5 Տե՛ս նույն տեղում, էջ 170:

6 Տե՛ս նույն տեղում:

7 См. И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 170—171:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 171: К. Э. Босворт, նշվ., աշխ., էջ 224:

9 ժԵ, մասն Բ, էջ 281:

թյան մատնեց և սպանեց Ջահանշահին, նրա որդուն և Աբու-Սայիդին[10]: Այս իրադարձությունների մասին տեղեկություններ են հաղորդում նաև մի քանի այլ հիշատակարաններ:

Ուզուն-Հասանը ժամանակակիցների վկայությամբ ընդունակ պետական գործիչ էր: Երկրի տնտեսությունը հզորացնելու, ինչպես նաև իր հետագա նվաճումներն իրագործելու և հսկայական պետության մեջ մտնող ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու նպատակով, նա որոշ չափով կարգավորեց բնակչությունից գանձվող հարկերը[11]: Այս ճանապարհով Ուզուն-Հասանը ձգտում էր իր կողմը գրավել նվաճված ժողովուրդներին: Հարկահավաքների կողմից կատարվող չարաշահումները վերացնելու նպատակով նա հրապարակեց հարկերի չափը սահմանող և գանձման եղանակը որոշող օրենքների ժողովածու՝ «Կանուննամե»[12]: Սակայն հիշյալ օրենքները շատ աննշան փոփոխություն մտցրեցին գոյություն ունեցող հարկային համակարգում:

Չեզոքացնելով ու անվտանգ դարձնելով Թամուրյաններին արևելքում, Ուզուն-Հասանն իր հիմնական ուշադրությունը դարձրեց դեպի արևմուտք, ուր այդ ժամանակ հաղթական նվաճումների էր հասնում Մահմադ Բ (1451—1482) սուլթանը: Նախքան թուրքերի դեմ պատերազմական գործողություններ սկսելը, Ուզուն-Հասանը իրեն հպատակեցրեց Հարավային Հայաստանում գոյություն ունեցող քրդական ամիրայությունները: Նա իր առաջին հարվածն ուղղեց Բաղեշի ամիրի դեմ: Արշավանքը տեղի ունեցավ 1470 թ. աշնանը, սակայն ավարտվեց անհաջող: Երկու ամիս ապարդյուն Բաղեշը պաշարելուց հետո Սուլեյմանը վերադարձավ Վան՝ ձմեռելու: Ողջ ձմեռն այստեղ նախապատրաստվելուց հետո 1471 թ. գարնանը Ուզուն-Հասանի երեք զորահրամանատարները նորից արշավանքի դուրս եկան

10 Տե՛ս նույն տեղում, էջ 237:

11 Տե՛ս ժԵ, մասն Բ, էջ XXIV:

12 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 171, ժԵ, մասն Բ, էջ XXV:

քրդերի դեմ՝ այս անգամ արդեն լավ կազմակերպված: Մուշի վրա արշավեց Խալիլ իշխանը, Բաղեշի վրա՝ Սուլեյմանը, իսկ Խլաթի վրա՝ Բայանդուր Ղոշ Միրզան.

«Ի Մուշ գնաց Խալիլ իշխանն,
Եւ ի Բաղէշ՝ քաջ Սուլէյմանն,
Եւ Բայանդուռ Ղօշ իմիրզայն՝
Կալաւ զբոլոր Խլաթայ թումանն»[13],

գրում է այս դեպքերի կապակցությամբ Մովսես Արծկեցի գրիչը: Սոֆի-Խալիլին շուտով հաջողվում է գրավել Մուշը: 1472 թ. նրա դեմ է արշավում քուրդ Քարիմ աղան[14] և, ինչպես գրում է Մովսես Արծկեցի գրիչը, պարտվում է: Բայանդուր Ղոշ ամիրան վեց ամիս Խլաթը պաշարելուց հետո գրավեց բերդը և ավերեց այն: Իր զորքերին միացնելով բերդի պաշտպաններին, Խալիլն արշավեց Ջեզիրա, գրավեց այն, ինչպես նաև յոթ բերդ Բոխտան երկրում, ապա վերադարձավ Բզնունյաց երկիր և բանակեց Արծկե քաղաքում:

Բաղեշի վրա արշավող Սուլեյման Բիժան-Օղլին մեկ տարի և հինգ ամիս քաղաքը պաշարելուց հետո 1473 թ. գրավեց այն և կոտորեց քրդերին: Ինչպես գրում է Շարաֆ-խան Բիթլիսին, Սուլեյման բեկը հանդիպել է ուժեղ դիմադրության. քաղաքի և նրա շրջակայքի կառավարիչ Իբրահիմն ամրանալով բերդում, համառ դիմադրություն է ցույց տվել Սուլեյման բեկին: Նա երեք տարի անընդմեջ՝ գարնանից մինչև ուշ աշուն պաշարել է քաղաքը: Ի վերջո, երկարատև պաշարումից հետո Բիթլիսում տարածվել է սով և խոլերա, քաղաքի պաշտպաններից շատերը զոհ են գնացել այդ համաճարակին, որը և Իբրահիմին ստիպել է անձնատուր լինել[15]:

13 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 235:

14 ԺԵ, մասն, Բ, էջ 335:

15 Տե՛ս *Шереф-хан-Бидлиси*, նշվ. աշխ., էջ 428—429:

Այս հաղթական արշավանքից հետո Ուզուն-Հասանը պատերազմ սկսեց իր հիմնական և ահեղ հակառակորդի՝ օսմանյան թուրքերի դեմ: Մահմադ II-ի կողմից 1453 թ. Կոստանդնուպոլսի գրավումից հետո 1471 թ. օսմանյան թուրքերը գրավեցին Միջերկրականի մի քանի կարևոր նավահանգիստներ, որոնք կարևոր նշանակություն ունեին միջազգային առևտրի համար: Յոթ տարվա ընթացքում, մինչև 1460 թ., Մահմադ II-ը գրավեց Պելեպոնեսը, Միջին Հունաստանը և Բալկանյան թերակղզու հյուսիսային ծայրամասը, մինչև Բեսարաբիա, 1461 թ. նա ջենովացիներից գրավեց Ամաստրիս քաղաքը և Կոմնենոսների Տրապիզոնի կայսրությունը: 1461 թ. սկսվեց Ղարամանյայի նվաճումը: Օսմանյան թուրքերի այս նվաճումներն անհանգստություն պատճառեցին Վենետիկին և Ջենովային, որոնց ձեռքին էր գտնվում Միջերկրականի առևտուրը: Այս նվաճումներով Վենետիկի և Ջենովայի համար փաստորեն փակվեցին արևելքի առևտրական ուղիները: Վենետիկի հանրապետությունը բնականաբար չէր կարող հաշտվել իր համար կենսական նշանակություն ունեցող առևտրական ուղիները կորցնելու հետ: Բայց Վենետիկը միայնակ անկարող էր կռվել օսմանյան մարտունակ բանակների դեմ: Նրա փորձերը՝ եվրոպական պետությունների հետ միություն կազմել իտալական ափերին մոտեցող օսմանյան բանակների դեմ, եվրոպական պետությունների միջև գոյություն ունեցող մրցակցության և շահերի ներհակության պատճառով անհաջողության մատնվեցին[16]: Վենետիկի հանրապետությունը մնում էր այդ դաշինքը փնտրել արևելքում, ուր այդ ժամանակ իրենից շատ թե քիչ իրական ուժ էր ներկայացնում Ակ-կոյունլուների պետությունը, որն Ուզուն-Հասանի գահակալության տարիներին գտնվում էր իր հզորության գագաթնակետին:

Ուզուն-Հասանն իր հերթին շահագրգռված էր միություն մեջ մտնել եվրոպական պետությունների հետ, հասկանալով,

16 Տե՛ս Հ. Հակոբյան. նշվ. աշխ., հ. Ա, էջ 148:

որ միայնակ անկարող է պայքարել օսմանյան հզոր պետության դեմ։ 1463 թ. Վենետիկի ծերակույտն Ուզուն-Հասանի մոտ է ուղարկում մի պատվիրակություն։ Սակայն, ըստ երևույթին, նկատի ունենալով կարա-կոյունլուների պետությունից դեռևս իրեն սպառնացող վտանգը, շրջահայաց Ուզուն-Հասանը բանակցություններին գործնական ընթացք չի տալիս։ Կարա-կոյունլուների և Թամուրյանների դեմ տարած հաղթանակներից հետո, երբ արևելքից Ուզուն-Հասանը իրեն ապահով էր զգում, 1469 թ. մի պատվիրակություն ուղարկեց արևմուտք։ Այդ պատվիրակության կազմում էր նաև հայ առևտրական խոջա Միրաքը։ Ուզուն-Հասանն իր դեսպանների միջոցով Վենետիկի հանրապետությանն առաջարկում էր պատերազմի դեպքում նավատորմով օսմանյան թուրքերի վրա հարձակվել արևմուտքից։ Ինչպես գրում է Կատերինո Զենոն, Վենետիկում Ուզուն-Հասանի դեսպանությանն ընդունեցին ուրախությամբ, և ծերակույտը որոշեց մի դեսպանություն ուղարկել Ուզուն-Հասանի մոտ[17]։ Ուզուն-Հասանի դեսպանները Վենետիկից անցան Նեապոլի թագավորություն և ապա Պապի մոտ։ Բանակցությունները արևմուտքում ընթացան հաջող։ Կազմված միության մեջ մտան Վենետիկի հանրապետությունը, Նեապոլի թագավորությունը, Հռոմի Պապը և Հունգարիան։ Իսկ արևելքում այս միության մեջ էին ակ-կոյունլուների պետությունը, Ղարամանյան և Կիպրոսը[18]։ 1471 թ. Վենետիկը որպես դեսպան Ուզուն-Հասանի մոտ ուղարկեց Կատերինո Զենոնին։ 1472 թ. օսմանյան թուրքերը նվաճեցին Ղարամանյան, որի կառավարիչ Փիր-Ահմադը փախավ Ուզուն-Հասանի մոտ։ Ուզուն-Հասանը 1472 թ. պատերազմական գործողություններ սկսեց թուրքերի դեմ։ Նրա 100000-անոց բանակը վեզիր Օմար բեկի և զորավար Յուսուֆի հրամանատարությամբ մտավ Տարոն, քանդեց Մշո բերդը։ Այնտեղից առաջ ընթանալով իր ճանա-

17 Տե՛ս նույն տեղում, էջ 156։

18 Տե՛ս И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 173։

պարհին ավերեց քաղաքներն ու գյուղերը և Դերջանի ու Երզնկայի վրայով մտավ Թոքատ քաղաքը, գրավեց այն և բնակիչներին, որոնց մեծ մասը հայեր էին, կողոպտեց ու անգթաբար կոտորեց։ Մովսես Արծկեցի գրիչն այս արշավանքի մասին գրում է.

«Եկն ի գաւառըն Տարօնեան,
Զբերդըն քակեաց ի խոր հիման,
Նըւէրս երեւ վանաց Գլակայն։
Զօրս առաքեաց ի Հոռմաց տուն,
Քաղաքըն մեծ Թողաթ հասան,
Ոսկի արծաթ եղև թաղթան,
Կումաշն ամէն հրով կիզան»[19]։

Կատերինո Զենոն, որը գտնվում էր Ուզուն-Հասանի բանակում, նրա այս արշավանքի մասին գրում է. «Պարսկական բանակը (Ուզուն-Հասանը.— Գ. Կ.) մտավ Դերջան, սեպտեմբեր ամսին և հուր ու սուր տարածեց այդ երկրում, մոտ ու հեռու կողոպտելով և կոտորելով ժողովրդին, ահաբեկելով բնակչությանը, այնպես, վոր ամեն վոր փախավ այս փոթորիկից։ Յետ անցնելով Յերզնկա և Թոքաթ, նույն կատաղությամբ ամեն տեղ այրեց քաղաքներն ու գյուղերը»[20]։ Ուզուն-Հասանը նպատակ ուներ Թոքաթից մտնել Ղարամանյա, ուր պետք է իր իշխանության մեջ վերահաստատեր Ղարամանյայի կառավարիչ Փիր-Ահմադին, ապա դուրս գալ Միջերկրականի ափը, որտեղից պետք է կապ հաստատեր արևմտյան իր դաշնակիցների հետ և նրանցից զինամթերք ստանար։ Երբ Ուզուն-Հասանի զորքը մտավ Ղարամանյա, այնտեղ կառավարիչ նշանակված Մահմադ Բ-ի որդին՝ Մուստաֆան, Ահմադ փաշայի հետ նահանջեց Կոնյա։ Իսկ երբ Ուզուն-Հասանի բանակը մոտեցավ Կոնյային, Մուստաֆան հոր հրամա-

19 ԺԵ, մասն Բ, էջ 336։

20 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 165։

նով նահանջեց Քութահիա, ուր կենտրոնացած էր օսմանյան բանակը[21]։ Ստանալով լրացուցիչ ուժեր՝ Քութահիայից 60 հազարանոց մի բանակով Մուստաֆան, Ահմադ փաշայի հետ, արշավեց դեպի Կոնյա, ուր գտնվում էր Ուզուն-Հասանի զորքի մի մասը։ Ըստ Ի. Պետրուշևսկու, թշնամի բանակների միջև ճակատամարտը տեղի է ունեցել 1472 թ. օգոստոսին՝ Կոնյայի մոտ[22]։ Կատերինո Զենոնը հաղորդում է, որ Ուզուն-Հասանի բանակը Կոնյա է մտել 1472 թ. սեպտեմբերին։ Ուրեմն, ճակատամարտը տեղի ունեցած պետք է լինի 1472 թ. սեպտեմբերին։ Ըստ Ջիովան Մարիո Անջիոլելլոյի, ճակատամարտի վայրը Բեհիսարն էր[23]։ Ճակատամարտում Ուզուն-Հասանի բանակը գլխովին ջախջախվեց, սպանվեցին նրա երեք որդիները, իսկ զորքերի հրամանատար Միրզա Յուսուֆը գերվեց թուրքերի կողմից[24]։ Ուզուն-Հասանն անհաջողություն կրեց նաև Եգիպտոսի սուլթանության դեմ սկսած պատերազմում։ Չնայած այն հանգամանքին, որ ճակատամարտում թուրքմեն զորքին առաջնորդում էր ինքը՝ Ուզուն-Հասանը, բայց և այնպես թուրքմեն զորքը այստեղ ես պարտվեց։

Պատերազմական գործողությունները նոր թափով վերսկսեցին 1473 թ. գարնանը։ Օսմանյան բանակի արշավանքը և նրա ընթացուղին նկարագրելիս առաջնորդվում ենք Ջիովան Մարիո Անջիոլելլոյի հաղորդած տեղեկություններով, որովհետև նա արշավանքի ժամանակ եղել է օսմանյան բանակում, իսկ օսմանյան բանակի պարտությունից հետո անցել է Ուզուն-Հասանի մոտ։ Օսմանյան բանակի այս արշավանքի ընթացքում ավերվեցին Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, մեծապես տուժեց հայ ազգաբնակչությունը։ Մեհ-

21 Նույն տեղում, էջ 166։

22 Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 174։

23 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 255։

24 Տե՛ս նույն տեղում, Գ. Այվազովսկի, Պատմութիւն օսմանյանց, հ. Ա, էջ 213, Петрушевский И., նշվ. աշխ., էջ 174։

մադ Բ-ն մեծ բանակով դուրս եկավ Ղազվայից և արշավեց Ամասիա, իսկ այստեղից շարժվեց Թոքաթի վրա։ Թուրքերը մինչև Թոքաթ հասնելը գրավեցին նիկսար ամրոցը, որը դիմադրություն էր ցույց տվել նրանց, ապա առաջ շարժվելով գրավեցին Շաբին-Գարահիսար քաղաքը։ Ահա թե այդ արշավանքի մասին ինչ է գրում Անջիոլելլոն. «Հեծելազորն ասպատակեց ու վռանակոխ արավ յերկիրը այնպես, վոր գյուղացիների մեծ մասը իրենց տավարով ու ինչքերով փախավ լեռների ամրոցները և ուրիշ ապահով վայրեր»[25]։ Շարունակելով իրենց ամայացնող արշավերթը Հայաստանում, օսմանյան հրոսակները մտան Երզնկայի դաշտ, գրավեցին Երզնկա քաղաքը և հրի մատնեցին։ Այստեղ բարբարոսները սպանեցին մի հայ գիտնական փիլիսոփայի, որի անունը Անջիոլելլոն չի հիշատակում[26]։ Երզնկայի գրավման ու ավերման, ինչպես նաև հետագա դեպքերի մասին կարևոր տեղեկություն է հաղորդում դեպքերի ժամանակակից մի անանուն հիշատակագիր։ «Յայսմ ամի, եկն անօրէն խոնդքարն, որ Չթախ կոչի՝ բազում և անթիւ զօրօք ի Հոռոմոց աշխարհէն յաշխարհս մեր։ Եւ եկն նախ ի յԵզնկայն և այրեաց զքաղաքն»[27]։ Երզնկայից շարունակելով իր ասպատակությունները, օսմանյան բանակը իջավ դեպի Մալաթիա, որտեղ հանդիպեց Ուզուն-Հասանի բանակին, ուր և այս երկու ահեղ հակառակորդների միջև տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ[28]։ Ուզուն-Հասանի կողմից ճակատամարտին մասնակցում էին նրա խալիլ, Ուղուրլու Մահմադ, Զեյնալ որդիները և Ղարամանիայի ամիր Փիր Ահմադը։ Օսմանյան բանակի աջ թևը գլխավորում էր խաս Մուրադ փաշան, որի հրամանատարության տակ կար 20 հազար ենիչերի՝ արքայորդի Բայազետի առաջնորդությամբ։ Բանակի ձախ թևը առաջնորդում էր Դավութ փաշան, արքայորդի Մուստաֆա փաշայի հետ։

25 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 264։

26 Տե՛ս նույն տեղում։

27 ԺԵ, մասն Բ, էջ 343։

28 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 265։

Սրանց տրամադրության տակ կար 20 հազար զինվոր, իսկ կենտրոնական մասին հրամայում էր ինքը՝ սուլթան Մահմադը[29]։ Ճակատամարտում օսմանյան բանակի ընդհանուր թիվը մոտ 100 հազար զինվոր էր։ Ուզուն-Հասանը ծուղակի մեջ գցելով, ջարդում է Խաս-Մուրադ փաշայի առաջապահ գունդը, որը հարձակման էր անցել Ալի-Բեկի հետ։ Սա խուճապ և իրարանցում է առաջ բերում օսմանյան բանակի շարքերում։ Այդ ընթացքում սպանվում է Մուրադ փաշան, և գերի են ընկնում շատ առաջնորդներ[30]։ Ճակատամարտում, որը տևեց մեկ ամբողջ օր, օսմանյան բանակը պարտվեց և նահանջեց Բաբերդ[31]։

Վերը հիշատակված տարեգիրը ճակատամարտի ընթացքը նկարագրել է հետևյալ կերպ. «Իսկ Ջթախն ոչ գիտէր զզարանամուտ զօրաց մերոց, և յառաջ եկան և մտան ի պատերազմ ընդ սակաւ զօրացն, որ ընդդէմ նոցա կայր, և զարանամուտքն հասին զկնի, փակեցին զզօրսն Ջթախին, և եղև սաստիկ պատերազմ յառաւօտէ մինչև ցերեկոյ։ Յառաջ յաղթեցան զօրքն մեր. և հրամանաւ աստուծոյ յաղթեցան զօրքն Ջթախին, վասն զի եւ հողմն սաստիկ և փչեաց զերկիրն փոշին ի վեր Ջթախին, և այնպէս փոշի եղև, որ մին զմին ոչ կարէր տեսանել։ Եւ զօրքն մեր զհետամտեալ սաստկապէս կոտորեց /// բանեալ և ածին Հասանին և սպանին»[32]։ Շարունակելով նկարագրել օսմանյան զորքերի փախուստը, տարեգիրն ավելացնում է, թե նրանց փադիշահը, որին Խոնդքար էին անվանում, 60 հազար զորքով փախչում և մտնում է ամրոց, զորքը դուրս գալով ամրոցից, լքում է սուլթանին և փախուստի դիմում։ Վերջինս փախչելով փրկում է իր կյանքը[33]։ Սակայն օսմանյան բանակի պար-

29 Տե՛ս Գ. Այվազովսկի. նշվ. աշխ., էջ 213։

30 Նույն տեղում, էջ 214։

31 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 265։

32 ԺԵ, մասն Բ, էջ 343։ Հիշատակարանի գրողը նկատի ունի Մուրադ փաշային, որը սպանվեց ընդհարման ժամանակ։

33 Տե՛ս նույն տեղում։

տությունը ժամանակավոր էր։ Իր բանակը համալրելով լավ վարժեցրած զինվորներով, Մահմադ II-ը նորից մտավ պատերազմի ասպարեզ։

Թշնամի բանակների միջև երկրորդ ընդհարումը տեղի է ունեցել 1473 թ. օգոստոսի 12-ին Դերջանի դաշտում[34]։ Ուզուն-Հասանի բանակի աջ թևին հրամայում էր իր Զեյնալ որդին, ձախին՝ Ուղուրլու Մահմադ որդին, օսմանյան բանակի ձախ թևի հրամանատարն էր արքայորդի Մուստաֆան, իսկ աջինը, որի կազմում էին եվրոպական զորքերն ու ենիչերիները՝ արքայորդի Բայազետը[35]։ Ուզուն-Հասանի բանակի աջ թևը, չդիմանալով օսմանցիների սրընթաց գրոհին, ջարդվեց և հետ նահանջեց։ Ճակատամարտում սպանվեց Զեյնալը։ Շուտով պարտվեց նաև ձախ թևը, որը մեծ խուճապ առաջացրեց թուրքմենների բանակում։ Նրանք սկսեցին նահանջել։ Ուզուն-Հասանը փորձեց կասեցնել նահանջը, բայց տեսնելով, որ իր ջանքերը զուր են, ինքը ևս դիմեց փախուստի և փրկեց իր կյանքը[36]։ Նահանջող թուրքմեններն օսմանցիներին թողեցին մեծ քանակությամբ ռազմական ավար, իսկ հազարավոր զինվորներ գերվեցին թուրքերի կողմից։

Քոչվոր ցեղերից կազմված Ուզուն-Հասանի բանակը, որը վատ էր զինված և ժամանակի ռազմավարությանը չէր տիրապետում, չկարողացավ դիմագրել լավ վարժեցված և թնդանոթներով զինված օսմանյան բանակին, որի հիմնական հարվածող ուժը լավ վարժեցված ենիչերիներն էին, որոնք կռվում էին մոլեռանդությամբ։ Մյուս կողմից, ստեղծված դաշնակցային միությունն իրեն չարդարացրեց։ Եվրոպական պետությունների խոստումները գործի չվերածվեցին։

34 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 265, Գ. Այվազովսկի. նշվ. աշխ., էջ 215, Петрушевский И. նշվ. աշխ., էջ 174, ԺԵ, մասն Բ, էջ XXX, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 50, Зулалян М. նշվ. աշխ., с. 60։

35 Տե՛ս Գ. Այվազովսկի. նշվ. աշխ., էջ 174։

36 Տե՛ս նույն տեղում։

Նրանք վճռական պահին չկարողացան օգնել Ուզուն-Հասանին։ Օսմանցիների ներխուժումը Հայաստան բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։ Հայաստանի մի մասին տիրելուց հետո, որոշ ժամանակ անց, թուրքերը նվաճեցին ողջ Արևմտյան Հայաստանը, ուր հաստատեցին կառավարման իրենց յուրահատուկ բարբարոսական ձևերն ու մեթոդները։

Թուրքերի դեմ Ուզուն-Հասանի անհաջողությունները երկրում ներքին խռովությունների պատճառ դարձան։ 1474 թ. Ուզուն-Հասանի դեմ ապստամբեց նրա որդին՝ Ուղուրլու Մահմադը, որը Շիրազի կառավարիչն էր։ Ուզուն-Հասանին հաջողվեց ճնշել ապստամբությունը, իսկ Ուղուրլու Մահմադը փախավ օսմանցիների մոտ[37]։ Կ. Պոլսում նրան լուր են բերում, որ իբր թե նրա հայրը մահացել է։ Հավատալով դրան՝ Ուղուրլու Մահմադը վերադառնում է Պարսկաստան, բայց դեռ Թավրիզ չհասած կալանավորվում է, բերվում Թավրիզ և մահապատժի ենթարկվում[38]։

1476 թ. Ուզուն-Հասանը մեծ արշավանք կատարեց դեպի Վրաստան, որի ընթացքում ավերեց և ամայացրեց երկիրը։ Չհանդիպելով լուրջ դիմադրության, նա գրավեց Տփղիսը, ապա Գորին, ուր կոտորեց 3000 մարդ[39]։ Վրաստանում Ուզուն-Հասանի կողմից սպանված ու գերված մարդկանց մասին աղբյուրները թվական տարբեր տվյալներ են հաղորդում։ Գրիգոր և Հովսեփ գրիչների վկայությամբ 36 հազար գերի տարան. «...թող զայլսն, զոր սպանանին և սրախոխ արարին»[40]։ Մելիքսեթ գրիչը հաղորդում է, որ 48 հազար սրի քաշեցին և 32 հազար գերի տարան, Զաքարիա գրիչի վկայությամբ 30 հազար սրի քաշեցին, 30 հազար էլ գերի տարան[41]։ Իսկ անանուն մի տարեգիր ոչինչ չասելով

---

37 Տե՛ս Петрушевский И. նշվ. աշխ., էջ 172։

38 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 265—266։

39 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 394—395։

40 ԺԵ, մասն Բ, էջ 392։

41 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 415, 418։

սպանվածների մասին, գրում է, որ Ուզուն-Հասանը 60 հազար մարդ Վրաստանից գերի տարավ[42]։ Ինչպես ճիշտ նկատել է Լ. Խաչիկյանը, եթե հաղորդած տվյալներից ընդունենք նվազագույնը, դարձյալ պարզ կլինի, թե ինչքան ծանր հետևանքներ է ունեցել Ուզուն-Հասանի արշավանքը վրացիների և Վրաստանում ապրող հայերի համար[43]։ Դեպի Վրաստան Ուզուն-Հասանի արշավանքի պատճառը Անչիսյանը համարում է այն, որ վրաց թագավորը նրան չէր օգնել օսմանցիների դեմ արշավանքի ընթացքում, որի համար էլ Ուզուն-Հասանը ուզում էր պատժել նրան[44]։

Ժողովուրդը դեռ աչք չէր բացել Ուզուն-Հասանի առաջին արշավանքից և չէր դարմանել նրա հասցրած վերքերը, երբ 1477 թ. նա նորից մտավ Վրաստան։ Այդ արշավանքի մասին տեղեկություն է հաղորդում 1478 թվակիր Հայսմավուրքի մի հիշատակարան, ուր ասվում է. Այս տարում Հասան բեկը եկավ Վրաստան, մեծ ավեր գործեց ու շատերին կոտորեց, իսկ 40 հազար անձ գերի տարավ, որոնց տառապանքն անհնարին է նկարագրել։ Քանդեց շատ եկեղեցիներ, հափշտակեց նրանց հարստությունները և գրքերը, իսկ ինքը չարաչար մահով մեռավ, ինչպես մանուկներին կոտորող, անիծյալ Հերովդեսը[45]։

Այս արշավանքի ժամանակ Ուզուն-Հասանը ծանր վիրավորվեց և 1478 թ. հունվարի 5-ին մահացավ Թավրիզում։

Ուզուն-Հասանի ստեղծած էթնիկական ու տնտեսական թույլ կապերով շաղկապված պետությունը նրա մահից հետո ապրեց գահակալական կռիվների փոթորկալի մի ժամանակաշրջան։ Արտաքինապես ամուր թվացող այդ պետության առանձին նահանգները, որոնց կապը կենտրոնի հետ թույլ էր, դրսևորեցին անջատողական ձգտումներ։ Ուզուն-Հասանի

---

42 Տե՛ս Մժ, հ. 1-ին, էջ 148։

43 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ XXXIII։

44 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 267։

45 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 425։

հինգ որդիների միջև գահի շուրջ ծավալվեց ներքին սուր պայքար։

Քոչվոր ցեղերի ազդեցիկ ու զորավոր ավագանին որպես գահի թեկնածու հովանավորելով եղբայրներից որևէ մեկին, նպատակ էր հետապնդում այս ճանապարհով իր ձեռքը վերցնել պետության ղեկը[46]։ Ուզուն-Հասանի մահից հետո մեծ որդին՝ Միրզա Խալիլը ժառանգեց հոր գահը։ Խալիլը վախենալով, որ եղբայրներից Մաքսուդը կարող է իրեն մրցակից լինել, սպանել տվեց նրան, բայց ինքն էլ կառավարեց ընդամենը վեց ամիս։ Նրա Յաղուբ եղբայրը Բայանդուրի և Մուսուլի քոչվոր ցեղերի զինական օժանդակությամբ ապստամբեց Խալիլի դեմ։ 1478 թ. հուլիսի 15-ին Խոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նա պարտության մատնեց Խալիլին, սպանեց նրան և գրավեց գահը[47]։

Քաղաքական այս անցքերը 1478 թ. համառոտագրել է Դավիթ գրիչը։ Նա հայտնում է, որ իր հիշատակարանը ավարտել է 1478 թ. Հասան-Բեկի որդու Յաղուբ բեկի խանության ժամանակ, որն այդ տարի սպանեց իր եղբայր Սուլթան Խալիլին և գրավեց սուլթանությունը[48], Յաղուբը կառավարեց 1478 թ. մինչև 1490 թ.։ Նա պոեզիայի սիրահար էր, դրան հակառակ՝ անընդունակ ռազմական և պետական գործերում։ Այս պատճառով էլ ռազմական գործի ղեկավարությունը հանձնեց քոչվորական ավագանու ընդունակ առաջնորդներին՝ Բայանդուր բեկին, Բայանդուր ցեղից, Սաֆի-Խալիլին՝ Մուսուլի ցեղից և Սուլեյման բեկ Բիժան Օղլուն։ Վերջինս ռազմական գործում ամենաընդունակն էր[49]։ Սուլեյման բեկ Բիժան Օղլին իր քաջությամբ աչքի ընկավ 1480 թ. Ուռհայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, ուր պարտության մատնեց Մսրա սուլթանի զորքերին։ Այս ճակատամարտում

46 Տե՛ս նույն տեղում, էջ XXXIV, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 51։

47 И. Петрушевский. նշվ. աշխ., էջ 175։

48 Տե՛ս ժե, մասն Բ, էջ 427։

49 И. Петрушевский. նշվ. աշխ., էջ 175։

զերի ընկավ եգիպտական զորքի հրամանատար Դաղը, որի գլուխը նա կտրեց և ուղարկեց թուրքական սուլթանին[50]։

Օսմանյան սուլթան Բայազետ II-ի զիջողական քաղաքականության շնորհիվ ակ-կոյունլուների պետության և Օսմանյան կայսրության միջև պատերազմական գործողությունները դադարեցին[51]։

1484 թ. Յաղուբը արշավեց Վրաստան, գրավեց Տփխիսը, քարուքանդ արեց շատ եկեղեցիներ ու կոտորեց բնակչությանը։ Ժողովրդի հետ նրա դաժանային վերաբերմունքի մասին մեծ ցավով է նշում Ստեփանոս գրիչը, 1484 թ. ընդօրինակած իր ձեռագրի հիշատակարանում. «...մտեալ ի մեծ քաղաքն Տփխիս, և սուր ի [վերայ եդ] եալ կոտորեցին առհասարակ զծերս և զտ[ղայս, ա]ռհասարակ՝ զքահանայքն և [սա] րկաւագ [ունքն] ի յեկեղեցո միջին զենուին»[52]։

Աղբյուրները վկայում են, որ Յաղուբի իշխանության տարիներին հայ ժողովրդի վիճակն ավելի ծանրացավ։ Սավալված ներքին գահակալական կռիվներից, միջցեղային ընդհարումներից և արտաքին պատերազմներից մեծապես տուժում էր հայ բնակչությունը։ 1484 թ. ճաշոց ստացող Ներսես Քանաքեռցի գրիչը մեկ քառատողով շատ դիպուկ բնութագրել է Հայաստանի վիճակը.

«Յորժ զորացան ազգն նետողիս
Եւ ոխացան դէմ Հայոց ազգիս,
Ժողովեցին զմեր զանգականիս
Եւ շատ աւեր ածին այս երկրիս»[53]։

1484 թ. Ազարիա երեց գրիչը դառն ու վշտաշատ է համարում իր ապրած ժամանակաշրջանը, որովհետև հայ ժողովուրդը մոլորվել է թունավոր օձերի մեջ և անորոշ է նրա

50 Տե՛ս ժե, մասն Գ, էջ 9։

51 Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 176։

52 ժե, մասն Գ, էջ 55։

53 Նույն տեղում, էջ 56։

հակառակորդը[54]։ Իսկ Սեբաստիայի Կովտան գյուղում Մխիթար գրիչը 1487 թ. հիշատակարանում գրել է. «...ի դառն և ի նեղ ժամանակիս», որովհետև օսմանյան սուլթանի և Շամի սուլթանի միջև տեղի ունեցան երեք պատերազմներ և երկու կողմից սպանվեց 20000 մարդ»[55]։

Այս նույն թվականին Բուդաղ-բեկը արշավում է դեպի Այնթափ և մեծ վնաս պատճառում Սեբաստիայի շրջանի հայերին։ Այս կապակցությամբ Սեբաստիայի Սուրբ Նշան վանքում նույն թվականին Փիլիպոս գրիչը գրում է, որ պիղծ Բուդաղ-բեկը, բազմաթիվ հեծելազորի գլուխ անցած, հարձակվեց Այնթափի և Սեբաստիայի վրա՝ կոտորեց բնակչությանը և ավերեց երկիրը[56]։ Այս կարգի բազմաթիվ վկայություններ կան, որոնք հաստատում են, որ արտաքին ու ներքին պատերազմներից տուժող հիմնական տարրը հայ ժողովուրդն էր։

XV դ. վերջին Պարսկաստանում ուժեղացավ Արդաբիլում կառավարող Սեֆյան տոհմը։ Այս տոհմի ներկայացուցիչները վայելում էին Արդաբիլի և նրա շրջակայքի թուրք բնակչության համակրանքը և մեծ հեղինակություն ու կշիռ ունեին նրանց մոտ։ Յաղուբի ժամանակ այս տոհմի առաջնորդն էր շեյխ Հեյդարը, որն ամուսնացել էր Ուզուն-Հասանի աղջիկներից մեկի հետ։ Նա 1488 թ. հազար ղզլբաշների գլուխ անցած մտավ Շիրվան, գրավեց Շամախին, բնակչությանը սրի քաշեց և կրակի մատնեց քաղաքը։ Շիրվանշահ Ֆարուխ Յասարը, չկարողանալով դիմադրել Հեյդարին, դիմեց փեսայի օգնությանը։ Յաղուբը Հեյդարի դեմ ուղարկեց իր զորավար Սուլեյման բեկ Բիժան Օղլուն։ Վերջինս մեծ դժվարությամբ, բազմաթիվ զոհերի գնով պարտության մատնեց Հեյդարի զորքին և դուրս քշեց Շիրվանից[57]։

54 Տե՛ս նույն տեղում, էջ 60։

55 Նույն տեղում, էջ 96։

56 Տե՛ս նույն տեղում, էջ 99։

57 Տե՛ս նույն տեղում, էջ 107—108։

Այս հանգամանքը Սեֆյան շեյխերին թշնամացրեց ակ-կոյունլու թուրքմենների հետ։

1490 թ. Յաղուբը թունավորվեց իր մոր ու եղբոր կողմից և մահացավ։ Ըստ Ի. Պետրուշևսկու, Յաղուբը թունավորվել է թյուրիմացաբար, այդ պատճառով էլ նրա մայրը թունավորեց նաև իրեն[58]։ Սակայն Ի. Պետրուշևսկու այս կարծիքը մերժելի է, քանի որ ժամանակակից հայ մի տարեգիր վկայում է, որ Յաղուբը զոհ է գնացել իր մոր և եղբոր կողմից կազմակերպված դավադրությանը, մի բան, որը յուրահատուկ էր ներքին հակամարտություններով ապրող ակ-կոյունլուներին։ Այս դեպքերի կապակցությամբ հիշատակագիրը գրել է, որ 1490 թ. Յաղուբ բեկը գնաց Ղարաբաղ, ուր իր մայրը և եղբայրը թունավորեցին նրան։ Իմանալով այդ մասին, մահամերձ Յաղուբ բեկը հրամայում է թունավորել իր մորը և եղբորը՝ Յասայի բեկին, և երեքը միասին մեռնում են Ղարաբաղում[59]։

Յաղուբի մահից հետո թուրքմեն արքայազնների միջև գահի համար սկսվեց ներքին պայքար, որն ակ-կոյունլուների պետությունը տարավ դեպի կործանում։ Դանիել Հովհաննես գրիչի վկայությամբ Յաղուբի մահից հետո ակ-կոյունլուների պետության ներսում առաջացած ներքին հակամարտությունները նպաստեցին պետության թուլացմանը և կործանմանը[60]։ Յաղուբի մահից հետո, Սոֆի-խալիլի անմիջական օժանդակությամբ, Թավրիզում գահ նստեց նրա Բայսունղուր որդին (1490—1492 թթ.)։ Իրաքում Բայանդուր բեկ Բիժան Օղլին սուլթան հռչակեց Հասանի Մեսիհի որդուն։ Փառնակ քոչվորական ցեղի ամիր Շահ-Ալին Համադանում փադիշահ հռչակեց Ուզուն-Հասանի թոռանը՝ Մահմադին։

Ուրիշ ամիրաների կողմից գահի թեկնածու է հանդես գալիս Միրզա Ռուստամը՝ Մաքսուդ բեկի որդին[61]։ Յուրա-

58 Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 176։

59 Մժ, հ. 1, էջ 194։

60 Տե՛ս ԺԵ, մասն Գ, էջ 165։

61 Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 176։

քանչյուր քոչվորական ցեղի առաջնորդ ձգտում էր գահին հասցնել իր թեկնածուին և այդ ճանապարհով փաստորեն իր ձեռքը վերցնել իշխանությունը: Սաֆի-խալիլի օժանդակությամբ Բայանդուրին հաջողվում է ջախջախել իր հակառակորդներին: Մեսիհ բեկը ու Մահմադ բեկը սպանվեցին, իսկ Ռուստամը գերվեց ու բանտարկվեց Երնջակ բերդում:

Երբ Սաֆի-խալիլը Իրաքում և Համադանում կռիվներ էր մղում գահի մյուս հավակնորդների դեմ, Վասպուրականում նրա դեմ գլուխ բարձրացրեց Սուլեյման բեկ Բիժան Օղլին: Ինչպես հաղորդում է Մովսես Արծկեցի գրիչը, այդ ժամանակ Ամիդի դաշտում Սուլեյման բեկ Բիժան Օղլին ջախջախեց Սաֆի-խալիլի եղբոր որդու՝ Գուլաբի զորքը և սպանեց նրան: Սաֆին իմանալով այդ մասին, շտապեց Հայաստան՝ Սուլեյման բեկից վրեժ լուծելու համար: Ներքին այս խժդժությունները, որոնց բեմահարթակը Հարավային Հայաստանն էր, հայ ժողովրդի համար մարդկային և նյութական նոր զոհաբերությունների պատճառ դարձան, Մովսես Արծկեցու վկայությամբ. «Եւ Սօֆին եկեալ կոխեաց զաշխարհս մեր, և գնացեալ եհաս առ||ափն Եփրատայ, ի դաշտին Մանծկերտու»[62]: Սուլեյման բեկը, իմանալով Սաֆի-խալիլի գալստյան մասին, հավանաբար իր զորքը համալրելու նպատակով անցավ Գավաշ: Իսկ Սաֆի-խալիլը, որը մտել էր Մանազկերտ, դուրս գալով այնտեղից, արշավեց Սուլեյման բեկի դեմ: Նա իր արշավանքի ճանապարհին ավերեց հայկական բնակավայրերը և սրի քաշեց բնակչությանը: Նա ավերեց և ամայացրեց «զերկիրս Արծկոյ», ուր բազմատեսակ ոճիրներ գործեց և սրի քաշեց շատ մարդկանց: Ապա գրավեց Վան, Ամյուկ և Ոստան քաղաքները ու թալանի մատնեց[63]:

Սուլեյման բեկը համալրելով իր բանակը, դուրս եկավ Սաֆի-խալիլի դեմ: Նա նախ հարձակվեց Ոստանի բերդ

62 ԺԵ, մասն Գ, էջ 173:

63 Տե՛ս ԺԵ, մասն Գ, էջ 173—174:

ամրոց Եղգինչերի վրա, որը Սաֆի-խալիլի դաշնակիցն էր, ու, ըստ նախնական համաձայնության պետք է Սուլեյման բեկին հարվածեր թիկունքից[64], և ջարդեց նրա 3000-անոց զունդը, իսկ Վանի մոտ 1491 թ. օգոստոսին տեղի ունեցած ճակատամարտում՝ Սաֆի-խալիլի բանակը: Ճակատամարտում սպանվեց Սաֆի-խալիլը: Մովսես Արծկեցի գրիչն այս կապակցությամբ գրում է. «Իսկ Սուլէյմանն կոտորեաց զքուրդըն Էզգինչէր, որ եկեալ էր յետնէ՝ դաւաճան գործել նմա, անձինս ԳՌ. (3000): Եւ անտի դարձեալ դիմեաց ի վերայ Սօֆուն, և եհաս ի դաշտն Վանայ, և կոտորեաց զնա անդ, և առեալ զորդի փադշահին և տարեալ եդ ի Թաղթըն»[65]: Այս հաղթանակներից հետո Սուլեյման բեկը փաստորեն ողջ իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում և իրեն հռչակեց ամիրաների ամիր[66]: Սակայն, ռազմավարական գործում ընդունակ Սուլեյման բեկ Բիժան Օղլուն էլ չհաջողվեց արմատախիլ անել ներքին խռովությունները և ամրապնդել ակ-կոյունլու թուրքմենների պետության երերացող գահը: 1492 թ. մայիսին նրա դեմ խռովություն ծագեց: Այն գլխավորում էր Բայանդուր ցեղի առաջնորդ Իբրահիմ Այբա-Սուլթանը: Վերջինս 1492 թ. մայիսի 15-ին հարձակվեց Երնջակ բերդի վրա, բանտից ազատեց Միրզա Ռուստամին և արշավեց Սուլեյման բեկի դեմ[67]: Երբ Այբա-Սուլթանը մոտեցավ Թավրիզին, քոչվոր ազնվականության մեծ մասը, որը, հավանաբար, դժգոհ էր Սուլեյման բեկից, լքեց նրան և անցավ Ռուստամի ու Այբա-Սուլթանի կողմը: Մնալով փոքրաթիվ ուժերով՝ Սուլեյման բեկ Բիժան Օղլին փախավ Դիարբեքիր, ուր և շուտով սպանվեց ամիր Նուրալի բեկի կողմից[68]: Իսկ Բայանդուրը փախավ Շիրվան՝ իր պապ Ֆարուխ Յասարի մոտ: 1492 թ. մայիսին Ռուստամը մտավ Թավրիզ և գրավեց գահը: Այս

64 Տե՛ս ԺԵ, Բ, էջ XLI:

65 ԺԵ, մասն Գ, էջ 174:

66 Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 176:

67 Տե՛ս ՄԺ, հ. I, էջ 195:

68 Տե՛ս նույն տեղում, Петрушевский И., նշվ. աշխ., էջ 177:

անգամ էլ իշխանությունը վարում էր նրա ամիրաների ամիր Այբա-Սուլթանը[69]։ Ռուստամն անցնելով իշխանության գլուխ, իր կողմն անցած քոչվոր ազնվականներին բաժանեց մեծ քանակությամբ սոյուրղալներ[70]։ Այս ճանապարհով Ռուստամ փադիշահը ձգտում էր ամրապնդել իր տիրապետությունը և ազնվականության շրջանում ամուր հենարան ստեղծել։ Օգտվելով քաղաքական այն խառն իրավիճակից, որը տիրում էր թուրքմենների պետության ներսում, վրաց Կոստանդին թագավորը 1491 թ. արշավեց Հայաստան, հասավ մինչև Գեղարքունիք և մեծ վնաս պատճառեց երկրին։ Ինչպես հաղորդում է Դսեղցի Հովհաննես գրիչը, Կոստանդինն այս արշավանքի ժամանակ մեծ ավար է տանում Հայաստանից, գրավում նաև Լոռվա բերդը[71]։

Այդ նույն ժամանակ Ղավրղավրե պարոնը 30 հազար զորքով արշավեց Էրզրում քաղաքի վրա և ավերեց երկիրը։ «Եւ եկեալ պարոնն վրաց Ղաւրղաւրէ ԼՌ. (30,000) մարդով ի վերայ քաղաքին Արզրումայ, և աւարի առ զերկիրն, և արար զքաղաքն հարկատու»[72],—այս դեպքերի կապակցությամբ 1491 թ. գրել է Մելիքսեթ գրիչը Գուգարք գավառում։ Ցարուխ Յասարի մոտ ապաստանած Բայսունղուրը չհաշտվեց գահից զրկվելու մտքին և 1493 թ. գարնանը Ցարուխ Յասարից ստացած օժանդակ զորքով շարժվեց դեպի Թավրիզ։ Տարեգիրը հայտնում է, որ Բայսունղուրը 1493 թ. գարնանը մտավ Բաղարշայ, ուր և ճակատամարտ տեղի ունեցավ Ռուստամի և նրան միացած շեյխ Հեյդարի որդու՝ Սեյիդ-Ալու զորքի և Բայսունղուրի զորքի միջև, որն ավարտվեց Բայսունղուրի պարտությամբ։ Բայսունղուրը գերվեց և քիչ հետո Թավ-

69 Տե՛ս նույն տեղում։

70 Տե՛ս Петрушевский И. Внутренняя политика Ахмета-Ак-Койунлу.—Известия Азербайджанского филиала. Баку, 1942, № 2 с. 23.

71 Տե՛ս ԺՆ, մասն Գ, էջ 165։

72 Նույն տեղում, էջ 166։

րիզում խեղդամահ արվեց[73]։ Հիմք ընդունելով խանդեմիրի վկայությունը, Ի. Պետրուշևսկին գտնում է, որ ճակատամարտը տեղի է ունեցել Ահարի մոտ, ուր և պարտվել է Բայսունղուրը[74]։ Մեր կարծիքով այս հարցում ընդունելի է հայ տարեգրի հաղորդած տեղեկությունը, ինչպես ճակատամարտի վայրի, այնպես էլ Բայսունղուրի գերվելու և Թավրիզում խեղդամահ արվելու մասին, քանի որ հիշյալ տարեգիրը դեպքերի ընթացքը շարադրել է անսխալ։

Թեև Ռուստամ փադիշահը պետական հողերից սոյուրղալներ բաժանելու ճանապարհով փորձեց սիրաշահել քոչվոր ազնվականությանը, բայց և այնպես նրա դեմ շուտով խռովություն ծագեց։ Այս անգամ էլ կենտրոնական իշխանության դեմ խռովությունը գլխավորում էր Բայանդուր ցեղի ներկայացուցիչը։

1497 թ. Ուղուրլու Մահմադի որդին՝ Ահմադը, եկավ Երզնկա, որտեղ նրան միացավ նախօրոք հավաքված քոչվոր ազնվականության մի մասը՝ Այբա-Սուլթանի գլխավորությամբ[75]։ Ահմադը քոչվոր ազնվականության գլուխ անցած Երզնկայից արշավեց դեպի Թավրիզ։ Ռուստամը փորձեց դիմադրել, բայց հաջողություն չունենալով պարտվեց ու փախավ Ալաշգերտ։ 1497 թ. գարնանը նա մեծ հեծելազորով մտավ Հայաստան՝ նպատակ ունենալով նորից հարձակվել և գրավել Թավրիզը։ Ռուստամի բանակը 1497 թ. մայիսի սկզբներին Ջուղայի գաշտում ճակատամարտ տվեց Ահմադի զորքերի հետ։ Ինչպես առաջին ընդհարման ժամանակ, այնպես էլ այս անգամ, բախտը չժպտաց Ռուստամին։ Նրա զորքը պարտվեց, իսկ ինքն սպանվեց։

Վերը նշված տարեգիրն այս դեպքերի կապակցությամբ գրում է, որ 1497 թ. Ուղուրլու Մահմադի որդին՝ սուլթան Ահմադը արշավեց դեպի Երզնկա։ Ռուստամը փորձեց դիմա-

73 Տե՛ս ՄԺ, հ. 1, էջ 195։

74 Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 177։

75 Տե՛ս ԺՆ, մասն Բ, էջ XLIV, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 54։

դրել նրան, սակայն անհաջողության մատնվեց և փախավ Ախալցխա։ Այնտեղից նա կրկին եկավ Իրան, հավաքեց հեծելազոր և փորձեց դուրս քշել Թավրիզ մտած սուլթան Ահմադին, սակայն Ջուղայի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում նրա զորքը պարտվեց, իսկ ինքն սպանվեց[76]։

1497 թ. հունիսին Ահմադը մտավ Թավրիզ և գրավեց գահը։ Իր իշխանությունը ամրապնդելու միտումով, նա ձգտեց չեզոքացնել քոչվոր ազնվականությանը, սահմանափակել նրա իրավունքները և այս ճանապարհով ուժեղացնել կենտրոնական իշխանությունը։ Այս նպատակով նա կրճատեց իր նախորդների կողմից քոչվոր ազնվականությանը տրված սոյուրղալները, իսկ մյուս կողմից թեթևացրեց գյուղացիությունից գանձվող հարկերը[77]։ Հիշյալ միջոցառումները քոչվոր ազնվականության և ամիրաների շրջանում դժգոհություն առաջացրին։ Ահմադից դժգոհ ազնվականները և ամիրաները Իրաքում և Ֆարսում ապստամբություն բարձրացրեցին։ Ապստամբությունը գլխավորում էին Այբա-Սուլթանը, որը փախել էր Իրաք և Ֆարսի կառավարիչ Ղասում-Բեկը[78]։ Ահմադը մեծ բանակով դուրս եկավ սրանց ընդառաջ։ Թշնամի բանակներն իրար հանդիպեցին 1497 թ. դեկտեմբերի 13-ին՝ Սպահանի մոտ։ Ճակատամարտում, իր ամիրաների դավաճանության պատճառով, Ահմադը պարտվում է և սպանվում։ Այբա-Սուլթանը 1497 թ. դեկտեմբերին Շիրվանում փադիշահ է հռչակում Յաղուբի Մուրադ որդուն, բայց շուտով վիճում է սրա հետ և բանտարկել է տալիս Ռեվանդուզի բերդում, իսկ նրա փոխարեն փադիշահ է հռչակում Ուզուն-Հասանի թոռանը՝ Ալվանդին[79]։ 1498 թ. գարնանը Մուրադը, որ բանտից փախել էր Շամախի, հեծելազոր է կազմում և արշավում Ալվանդի դեմ։ Նախիջևանի մոտ

76 Տե՛ս Մժ, հ. 1, էջ 195։

77 Петрушевский И., նշվ. աշխ., էջ 178։

78 Տե՛ս Մժ, հ. 1, էջ 195, Петрушевский И., նշվ. աշխ., էջ 179։

79 Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 179։

տեղի ունեցած ճակատամարտում Մուրադը պարտվում է և գերի ընկնում Ալվանդի ձեռքը։ Այբա-Սուլթանի ուղեկցությամբ Ալվանդը 1498 թ. մտնում է Թավրիզ և բազմում գահին։ Մուրադին Այբա-Սուլթանը այս անգամ բանտարկում է Մակվի բերդում[80]։ Մուրադ խանի այս արշավանքը դեպի Թավրիզ տեղի է ունեցել Հայաստանի վրայով։ Արշավանքի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Վանական գրիչը Ջուղավանքում ընդօրինակած իր ձեռագրի հիշատակարանում։ Դրանից պարզվում է, որ Մուրադի ասպատակությունները Հայաստանում տևել են հինգ ամիս։ Այս ընթացքում նա դաժան կողոպուտի է ենթարկել հայկական բնակավայրերը, իսկ բնակչությունից գանձել ծանր հարկեր. «Զի եկն Մուրատ խանն ի Շամախոյ, որդի Յաղուպ-Բէկին, և չուեալ եկն ի Բազարշայն՝ էած հալածումն ի վերայ ամենայն քրիստոնէից։ Տանջէր զաշխա[րհա]կանս և զկարգաւորքս և առէր. Տուք զչիրգայն, թամուղ-ի չիզրայն, թասխիր-ի թա[լա]լութ. զի ոչ գիտէին, թէ զինչ բարբանչեցեն և տանջեցեն զհաւատացեալս»[81]։ Թուրքմեն այս բռնակալն անասելի դաժան է վերաբերվել Վայոց ձորի բնակչության նկատմամբ. սարսափած բնակիչները ապաստանել են անառիկ լեռների ծերպերում։ Փախչողների թվում է եղել նաև Վանական գրիչը, որն այդ ընթացքում չորս վայր է տեղափոխվել մինչև ավարտել է իր հիշատակարանը[82]։ Գրիչը խոսում է նաև Այբա-Սուլթանի և Մուրադի ընդհարման մասին. պարզվում է, որ Մուրադի արշավանքը Հայաստանով դեպի Թավրիզ տևել է հինգ ամիս. «Ի ամսեանն հինգերորդի եկն Էպի-Սոլտանն ի Դաշեվրէժոյ, եւ եղեն ճակատ առ ճակատ, և յաղթահարեալ զՄուրադ-խանն, և արար զնա ձերբակալ, և եդ ի բանտի»[83]։

80 Տե՛ս ԺԵ, մասն Գ, էջ 257։

81 Նույն տեղում, էջ 259։

82 Տե՛ս նույն տեղում։

83 Նույն տեղում։

1498 թ. փետրվարին Ալվանդը նոր ասպատակություններ կատարեց Հայաստանով, որից շատ տուժեց Վասպուրական աշխարհը: Այս արշավանքը թալանչիական էր: Նորընծա փադիշահն այս ճանապարհով ձգտում էր լցնել անընդհատ պատերազմներից դատարկված պետական գանձարանը: 1498 թ. Քաջբերունիի Ասպիսնակ գյուղում գրիչ Բարսեղը թալանչիական այս արշավանքի մասին գրում է, որ թուրքմենների արյունարբու և գազանաբարո զորքն ու Պարսկաստանից հեծյալները ոտնատակ արին Հայաստան աշխարհը: Նախ շատ տուժեց Վասպուրականը, ուր 10000 հեծելազորով 15 օր մնաց Ալվանդ փադիշահը, որը մեծ վնաս պատճառեց հայ ժողովրդին՝ ծեծելով և խլելով նրանց ունեցվածքը[84]: Վան և Ոստան քաղաքները 15 օր անարգել կողոպտելուց հետո Ալվանդի հրոսակները փետրվարի կեսերին մտան Քաջբերունյաց գավառի սահմանները, կողոպտեցին բնակչությանը և դուրս քշեցին տներից մարդկանց ու անասուններին. «Եւ ի սաստիկ ցրտասառույց եղանակին՝ զմարդ և զանասունս ի տանէն հանէին և ինքնեանք մտանէին ի ներքըս...»[85]: Ալվանդի հրոսակները ծանր հարկապահանջությամբ ենթարկեցին բնակչությանը՝ ընդդիմացողներին ենթարկելով խիստ պատիժների: Նրանց կախում էին, խոշտանգում կամ էլ դնում երկաթյա շղթաների մեջ՝ յուրաքանչյուրից գանձելով 2000 դահեկան հարկ[86]: Ալվանդի երկամսյա ասպատակությունը ծանր վիճակ ստեղծեց հայ բնակչության համար: Նա վերադարձավ Թավրիզ, բայց մայիսի վերջին նորից արշավեց Հարավային Հայաստան՝ պատժելու ապստամբ Ղասում Բեկին, որն իշխում էր Ամիդի և Մերդինի շրջաններում: Ղասում Բեկն օգտվելով այն հանգամանքից, որ Այբա-Սուլթանը և Ալվանդը զբաղված են Մուրադի դեմ պատերազմներով, մեծ բանակով սկսեց ասպատակել Հարավային Հայաստանի

84 Տե՛ս նույն տեղում, էջ 256:

85 Նույն տեղում:

86 Նույն տեղում:

նահանգները: Մուրադի դեմ հաղթական պատերազմից անմիջապես հետո Այբա-Սուլթանն ու Ալվանդն արշավեցին Ղասում Բեկի դեմ: Ասպատակող այս բանակներն իրար հանդիպեցին Սուկավ լեռան ստորոտում: Նրանք 17 օր դեմ հանդիման կանգնած վախենում էին նախահարձակ լինել: Ղասումը, երբ համոզվեց, որ իր ուժերով անկարող է պատերազմել Այբա-Սուլթանի դեմ, հանկարծակի հետ նահանջեց: Այբա-Սուլթանը հետապնդեց փախչող Ղասումի բանակին, բայց հասնել չկարողացավ[87]: Գազազած այս հրոսակն իր ցասումը թափեց անպաշտպան և անզեն հայ բնակչության վրա: Նա ասպատակեց ու ավերեց Բասենի, Ավնիկի, Կարինի և Աղհովիտի շրջանները: Բարսեղ գրիչն այդ արշավանքի մասին գրում է. «Եւ շրջեցան հեծելազաւրքն ի յերկիրն ամենայն, և առին զամենայն առ ի զաւար մինչև ի Կառնոյ քաղաքն, որ Թէոդուպաւլիս, որ կոչի Արզրում: Եւ ապա անտի դարձաւ Իբայ-Սօլթանն և եկն ի յԱղոյհովիտն, ունելով ընդ իւր զնորընծայ փաթշահն զԱլուանդ... և եկեալ նստաւ յԱրճէշ»[88]: Այստեղ նա հրամայում է հայկական գերեզմանոցի քարերից գետի վրա կառուցել մի կամուրջ՝ հավանաբար իր զորքի անցումն ապահովելու նպատակով:

Օգտվելով Ալվանդի և Այբա-Սուլթանի բացակայությունից, Թավրիզում նրանց դեմ ապստամբեց քոչվոր ազնվականության մի խմբավորում և փադիշահ հռչակեց Ալվանդի եղբայր Մուհամադին: Ալվանդը և Այբա-Սուլթանը փութընթաց շարժվեցին դեպի Թավրիզ՝ ապստամբությունը ճնշելու համար: 1499 թ. Ակիզքենդի մոտ տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում Ալվանդի և Այբա-Սուլթանի բանակը պարտվեց: Ալվանդը մազապուրծ փախավ Քուրդստան, իսկ Այբա-Սուլթանը ճակատամարտում սպանվեց[89]:

Ակ-կոյունլուների ներքին երկպառակությունից օգտվելով Հարավային Հայաստանի քուրդ ամիրաները սկսեցին

87 Տե՛ս նույն տեղում, էջ 257:

88 Նույն տեղում:

89 Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 179:

ասպատակել Վանա լճի շրջակայքը. 1498 թ. նոյեմբերին նրանք մտան Ռշտունյաց երկիր և թալանեցին տեղի հայ բնակչությանը: Ապա չորս նավով մտան Աղթամար կղզի, կողոպտեցին կաթողիկոսարանը, որտեղից տարան մեծ թվով գանձեր և բազմաթիվ գրքեր[90]: Ջահիդ Բեկի թալանչիական արշավանքը տարածվեց նաև Հեշատի, Սալմաստի, Աղբակի, Վանի և Բաղեշի շրջանների վրա[91]: Ընչաքաղց քրդերի այս արշավանքը նկարագրել է Մարգար գրիչը՝ Աղբակի Երնկան գյուղում 1499 թ. գրած իր հիշատակարանում: Նա իր ապրած ժամանակը համարում է դառն ու նեղ, որովհետև չկար փադիշահ, և մարաց ազգը ավերեց և քանդեց Հեշատի, Սալմաստի, Աղբակի, Վանի, Ոստանի և Աղթամարի գավառները[92]:

Այբա-Սուլթանը և Ալվանդը պատերազմական ծախսերի համար ծանր հարկապահանջությամբ երկիրը դարձրել էին դժոխք: Հալածանքներից զերծ չմնացին նաև էջմիածինն ու նրա Սարգիս կաթողիկոսը, որը ստիպված փախավ Հաղպատ[93]: Էջմիածնի ավերման, Սարգիս կաթողիկոսի փախուստի և քրդերի ասպատակությունների մասին տեղեկություններ է հաղորդում նաև Հակոբ Նեռքարեց գրիչը՝ 1499 թ. Արծկեում գրած իր հիշատակարանում[94]:

Ալվանդի և Այբա-Սուլթանի դեմ տարած հաղթությունից հետո 1499 թ. մայիսին Մուհամմադը մտավ Թավրիզ և հաստատվեց գահին: Սակայն Այբա-Սուլթանի եղբայրները չհաշտվելով կատարվածի հետ, բանտից ազատում են Մուրադին, տանում Շիրազ Ղասում բեկի մոտ և վերջինից օժանդակ ուժեր ստանալով, արշավում դեպի Թավրիզ: 1499 թ.

90 Տե՛ս ԺԵ, մասն Գ, էջ 257:

91 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ XLVIII, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 55:

92 ԺԵ, մասն Գ, էջ 278:

93 Տե՛ս նույն տեղում, էջ 262:

94 Տե՛ս նույն տեղում, էջ 276:

վերջերին Սպահանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Մուհամմադը սպանվում է[95]:

Այսպիսով, թուրքմենների գահի համար մնում են երկու թեկնածու՝ Մուրադը և Ալվանդը, որոնք փոխադարձ համաձայնությամբ 1500 թ. պետությունը բաժանեցին երկու մասի: Ալվանդը ստացավ Ատրպատականը և Հայաստանը, իսկ Մուրադը՝ Արաբական Իրաքը, Պարսկական Իրաքը և Ֆարսը[96]:

Օգտվելով ստեղծված քաոսային իրավիճակից, 1500 թ. ակ-կոյունլուների իշխանությունը գրավելու փորձ է անում Ջահանշահի ժառանգորդներից Սուլթան Հուսեյնը, որը, համաձայն ժամանակագրի, իշխում էր Սևանա լճի շրջանում[97]: Հուսեյնը արշավեց դեպի Թավրիզ, բայց Ղոշ կոչված դաշտում 1500 թ. տեղի ունեցած ընդհարման ժամանակ պարտվեց և փախավ[98]: Այս կապակցությամբ Հակոբ Արծկեցի գրիչը գրել է. «Եւ արդ, գրեցաւ սա ի քաղաքս Արծկէ, ձեռամբ մեղապարտ գրչի Յակոբ սուտանուն քահանայի... ի դառն և ի նեղ ժամանակիս, որ աշխարհս ամէն յերերմանի և Աղ-օ[ղ]լուի թագաւորութիւն անհաստատ էր և յիրար անկած, և միւս դիմաց Ղարայ-օղլու ոմն եկաւ, և կռուեալ յայժ կոտորեցան և կորեան: Ի թուականիս մերում ՋԽԹ. (1500) ամի»[99]:

Ներքին անընդհատ պատերազմներից օգտվեց Արդաբիլի Սեֆյան շեյխերի տոհմը: Այս տոհմի նոր առաջնորդ շեյխ Իսմայիլը 1500 թ. արշավեց Շիրվան՝ Ֆարուխ Յասարից իր հոր վրեժը լուծելու համար: Ֆարուխ Յասարը պարտվեց և սպանվեց, իսկ Իսմայիլը տիրեց Շիրվանին: Իսմայիլը 1501 թ. իր զենքը դարձրեց Ալվանդի դեմ: 1501 թ. Նախիջևանի մոտ՝ Շարուրի դաշտում տեղի ունեցած վճռական ճակատամարտում Ալվանդի զորքը պարտվեց[100], իսկ ինքն իր ընտանիքի

95 Տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 179:

96 Տե՛ս նույն տեղում:

97 Տե՛ս ՄԺ, հ. 1, էջ 195:

98 Տե՛ս նույն տեղում:

99 ԺԵ, մասն Գ, էջ 296:

100 Տե՛ս Босворт К. Э., նշվ. աշխ., էջ 224:

հետ փախավ Ամիդ: Այս հաղթությունից հետո Իսմայիլը մտավ Թավրիզ և գրավեց գահը: 1502 թ. նա Համադանի մոտ հաղթանակ տարավ նաև Մուրադի դեմ և ողջ Պարսկաստանը միավորեց իր իշխանության ներքո:

Այսպիսով, ներքին միջցեղային պատերազմներից թուլացած ակ-կոյունլու թուրքմենների պետությունը, որը XV դ. վերջին մասնատվել էր Ուզուն-Հասանի թոռների և քոչվոր ցեղերի ռազմական առաջնորդների միջև, չկարողացավ դիմագրել ղզլբաշների թարմ զինվորական ուժին և կործանվեց: Այդ պետության փլատակների վրա XVI դ. արշալույսին երիտասարդ Շահ-Իսմայիլը հիմնադրեց նոր՝ Սեֆյան հարստությունը:

ԼԱՆԿ-ԹԱՄՈՒՐԻ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆ ՑԵՂԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

Քննվող ժամանակաշրջանում հայ ժողովրդի ծանր վիճակի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար համառոտակի անդրադառնանք Լանկ-Թամուրի և թուրքմենների վարած հարկային քաղաքականությանը: Հայտնի է, որ հարկերը լինում են ուղղակի և անուղղակի: Աղբյուրների վկայությամբ թուրքմենները գանձում էին ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարկեր: Թուրքմենները հպատակ ժողովուրդներից, այդ թվում և հայերից, գանձում էին մոտ 30 անուն հարկ և տուրք: Այդ հարկերի մեծ մասն անուղղակի էին, որոնք իրենց ծանրությամբ ու հարկահավաքման դաժան մեթոդներով թշվառ վիճակի էին հասցրել հպատակ ժողովուրդներին:

Հայ աշխատավոր գյուղացիությունը նվաճողների կողմից ենթարկվում էր բիրտ հարկապահանջության: Հայ գրիչները բազմիցս արձանագրել են հարկահավաքման այն դաժան ձևերը, որոնք գործադրվում էին XV դարում: Իր աշխարհավեր արշավանքների ընթացքում Թամուրը կողոպտում ու կեղեքում էր բնակիչներին: Իսկ շատ հաճախ որևէ պատրվակով նվաճված քաղաքների ու գյուղերի բնակիչներից փող էր կորզում: Այս մեթոդը ևս հարկահանման յուրահատուկ ձև էր: Թամուրը, երբ գրավում է Երզնկա քաղաքը, քաղաքի քահանային հրամայում է ընդունել մուսուլմանություն՝ պատճառաբանելով, որ քաղաքի մուսուլման բնակիչները բողոքում են նրա վերաբերմունքի դեմ: Քահանան

հրաժարվում է։ Զայրացած բռնակալը հրամայում է քաղաքի հայ բնակիչներին սրի քաշել։ Քաղաքի Թահերթեն իշխանը Թամուրին խնդրում է ներել բնակչությանը, փոխարենը վճարելով 9 հազար ասպր հարկ։ Թամուրը վերցնում է հարկը, բայց հրամայում է քանդել քաղաքում եղած եկեղեցիները[1]։ 1402 թ., երբ Թամուրը պաշարել էր Սեբաստիա քաղաքը, քաղաքի պաշտպանները, տեսնելով, որ դիմադրությունն անօգուտ է, բանակցում են նրա հետ, խնդրում վերացնել քաղաքի պաշարումը, փոխարենը խոստանալով մեծ քանակությամբ ոսկի և արծաթ։ Նա համաձայնվում է, բայց երբ ստանում է բերած ոսկին ու արծաթը, հրամայում է բերողներին կենդանի թաղել քաղաքի պարիսպների տակ փորած փոսերում, իսկ քաղաքը գրավելուց հետո հիմնահատակ ավերել[2]։ Բագարիչ գյուղի գյուղացիները Կլավիխոյին պատմում են, որ մեկ տարի առաջ այդտեղից անցել է Թամուրը և հրամայել քանդել եկեղեցիները։ Տեղի հայերն իրենց եկեղեցիներն ազատելու համար Թամուրին են վճարել 3 հազար ասպր։ Նա ընդունել է դրամը, բայց և այնպես եկեղեցիները քանդել է ավել[3], Թամուրն այս քաղաքականությունը գործադրում էր իր բոլոր արշավանքների ժամանակ։

Հայ ժողովրդի հարկային լուծն ավելի ծանրացավ Թուրքմեն ցեղերի տիրապետության շրջանում։ Անընդմեջ պատերազմների ծախսերը հոգալու, ինչպես նաև քոչվոր ազնվականության ռոճիկ տալու համար անհրաժեշտ էր պետական գանձարանը լիքը պահել։ Իսկ այն լցնելու առաջին միջոցը հպատակ ժողովուրդներից գանձվող ծանր հարկերն էին։

1409 թ. գրած հիշատակարանում գրիչ Հովհաննեսը հայտնում է, որ իր ժամանակը դառն է եղել, որովհետև «...պահանջումն անաւրինաց խստանայ ի վերայ քրիստոնէից»[4]։

1 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 96—97։
2 Տե՛ս նույն տեղում, էջ 100։
3 Տե՛ս նույն տեղում, էջ 105։
4 ԺԵ, մասն Ա, էջ 95։

Աղթամարցի Դանիել գրիչը դառնացած գանգատվում է, որ իսմայելացիների ազգը գրավել է մեր աշխարհը և անիրավաբեն նեղում է քրիստոնյաներին[5]։ 1411 թ. Բագարանի Աղճաղալա բերդում գրած հիշատակարանում գրիչը հայտնում է, որ Յուսուֆ բռնակալը և տեղի պարոն Փիր-Հուսեյնը քրիստոնյաների վրա հարկ են դրել, նրանք տառապում են, ամենուրեք պակասել է օրինականությունը, իսկ անիրավությունը՝ շատացել[6]։ 1413 թվականին Մոկաց երկրում Կարապետ գրիչը արձանագրում է, «...որ հարկապահանջութեամբ ազգս տապալի ի չար ազգէն նետողականի»[7]։ Կոտուց անապատում 1414 թվականին գրած հիշատակարանում գրիչ Հովսեփը գրում է, թե քրդերի և թաթարների խիստ հարկապահանջությունից հայ ազգը տապալվում է[8]։ Իսկ 1416 թվականին գրիչ Վարդանը նվաճողների հարկապահանջության կապակցությամբ գրում է. «...հանապազ ոչ դադարէին ի խնդրելոյ հարկս ի քրիստոնէից»[9]։ Հովհաննես Խիզանցի գրիչը հայտնում է, որ Յուսուֆը պահանջում է ոչ միայն հարկը, այլև տոկոսը[10]։ Մեծոփեցու վկայությամբ Ամյուկ բերդի տեր Փիր-Ալին հարկեր էր պահանջում բնակիչներից։ Նա նույնիսկ հարկ է վերցնում ծերերից ու երեխաներից, որբերից, այրի կանանցից, աղքատներից և տնանկներից. «...մինչ զի ամենայն մարդագլուխ 40 թանկայ առնուն թող զբարահայ և զշարէք (40) ի ծերոց եւ ի տղայոց, յորբոց և յայրեաց, ի կուրաց, յաղքատաց և ի տնանկաց»[11]։ 1421 թվականին Աղթամարում գրած ճաշոցում գրիչ Թովման հայտնում է, որ այլազգիները կեղեքում են, նեղում ու կողոպտում ազգաբնակչությանը, որի պատճառով իր ապրած ժամանակը հա-

5 Տե՛ս նույն տեղում, էջ 97։
6 Տե՛ս նույն տեղում, էջ 124։
7 Նույն տեղում, էջ 149։
8 Տե՛ս նույն տեղում, էջ 166։
9 Նույն տեղում, էջ 183։
10 Տե՛ս նույն տեղում, էջ 200։
11 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 111։

մարում է դառն և վշտաշատ, այլադավանների ձեռքից տառապում են, նեղվում և ազգի վշտով տանջվում[12]։ Այդ նույն թվականին մեկ այլ գրիչ Սուխարա վանքում գրում է, որ ուժեղ էր Ղարա-Յուսուֆի հարկապահանջությունը իրենց վրա[13]։ Մի շարք գրիչներ իրենց ապրած ժամանակաշրջանը համարել են դառնությամբ լի, որովհետև բազմապիսի փորձությունների հետ, նվաճողները պահանջում էին նաև հավատի վճար[14]։ Իսքանդարի ժամանակ էլ շարունակվել է խիստ հարկապահանջությունը հայ ժողովրդի նկատմամբ։ Այսպես, 1441 թ. գրիչ Սարգիսն արձանագրում է, որ հայ ազգը գտնվում է խիստ հարկապահանջության տակ[15]։ Աղթամարում 1444 թ. գրիչ Մինասենց Թուման գրում է, որ անողոք հարկապահանջությամբ ու կեղեքումով նեղում են քրիստոնյաների ազգին, իսկ ժամանակը համարում է դառն ու չար[16]։ Այս նույն գրիչը մեկ տարի հետո գրած հիշատակարանում Ջահանշահի և Վանի ու Ոստանի կառավարիչ Ղլիջ-Ասլան պարոնի հասցեին գրում է, որ նրանք խիստ հարկապահանջողներ են և քրիստոնյաներին կեղեքողներ[17]։ Արծկեցի մի անանուն գրիչ Ջահանշահի թագավորության տարիները բնութագրում է հետևյալ խոսքերով. «...յոյժ հարկապահանջութեամբ տառապի ազգս Հայոց»[18]։ Ջահանշահի իշխանության տարիներին հարկապահանջությունից ազատ չէր մնում նաև հոգևորականությունը, որը թեև օգտվում էր որոշ արտոնություններից, բայց նորից հարկատու էր։ Արճեշ գավառի Մեծոփա վանքում գրիչ Թուման այդ կապակցությամբ գրել է, որ հարկապահանջությունը ծանր էր քրիս-

12 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 251։
13 Տե՛ս նույն տեղում, էջ 256։
14 Տե՛ս նույն տեղում։
15 Տե՛ս նույն տեղում, էջ 519—520։
16 Տե՛ս նույն տեղում, էջ 563։
17 Տե՛ս նույն տեղում, էջ 579։
18 Նույն տեղում, էջ 608։

տոնյաների վրա[19]։ Իսկ անանուն մի գրիչ 1449 թ. գրած հիշատակարանում հաղորդում է, որ հոգևորականներից ավելի շատ հարկեր էին գանձվում, քան թե աշխարհականներից[20]։ Ջահանշահի կողմից տարվող ծանր հարկապահանջությունը հայ ժողովրդին հասցրել էր թշվառության աստիճանի, զրկել նրան ապրուստի տարրական միջոցներից։ Ստեփանոս գրիչը 1464 թ. Ավագ վանքում ավելի մռայլ գույներով է նկարագրում հայ ժողովրդի ծանր վիճակը։ Նա գրում է, որ տաճիկների անօրեն ազգը քրիստոնյաներին ենթարկում է հալածանքների։ Գազաններից ավելի չար դարձան և ծարավ են քրիստոնյաների արյան, խարջը 4 ֆլորի դարձրին և կապույտ նշան հագցրին քրիստոնյաների գլուխներին[21]։ Հայ ժողովրդի վիճակը շարունակեց ծանր մնալ նաև Ուզուն-Հասանի կառավարման տարիներին։ Ճիշտ է, նա փորձեց կարգավորել հարկերի գանձումը և տնտեսության վերաբերյալ հրատարակեց օրենքների ժողովածու, սակայն Ուզուն-Հասանի այս ձեռնարկումներն էական բարեփոխություններ չմտցրին և չէին էլ կարող մտցնել հպատակ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի կյանքում։ Նա, որպես նվաճող, շարունակեց ծանր հարկային քաղաքականությունը։ Նրա իշխանության տարիներին այնքան խիստ էր հալածանքն ու հարկապահանջությունը քրիստոնյաների նկատմամբ, որ վերջիններս տարբերվելու համար կրում էին հատուկ տարբերանշաններ։ Գրիչ Հովհաննեսը 1470 թ. գրել է, որ հալածանքը քրիստոնյաների նկատմամբ խստացավ, խափանվեց զանգի հնչելը, և քրիստոնյաները նշանով էին շրջում[22]։ Հարկահավաքները հարկերը հավաքում էին շատ բիրտ ձևերով, շատ անգամ գործադրելով ծեծն ու ահաբեկումը։ Այդ կապակցությամբ Ջմշկածագեցի գրիչ Ստեփանոսը գրում է.

19 Տե՛ս նույն տեղում, էջ 567։
20 Տե՛ս նույն տեղում, էջ 625։
21 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 211։ Քրիստոնյա ազգաբնակչությանը ստիպում էին կապույտ նշան կրել, որպեսզի տարբերվեն մուսուլմաններից։
22 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 299։

«Հարկապահանջն յամէն տեղի
Քաշէ ծեծէ զազգըս Արամի.
Խընդրէ արծաթ ու ընտիր ոսկի,
Յայնմ որ չունի փող պըղնձի։
Կապուտ նշան եդ քրիստոնէայց,
Չի բաժանին յանօրինաց.
Զմեռեալն ի ցած տանել ասայ,
Զուանով չափել զվիզս մանկանց։
Էանց զպատուէրն առաջնորդին
Զիւր կարծեցեալ փէղամբարին,
Էառ զխարաճ քահանային
Եւ զնորահաս սարկաւագին»[23]։

Հալածանքները և ծանր հարկապահանջությունը հայերի նկատմամբ շարունակվեցին նաև Յաղուբ բեկի իշխանության տարիներին։ Անանուն մի գրիչ Աղբակ երկրի Էրնկան գյուղում գրած հիշատակարանում ողբում է, որ դժվար ու նեղ է ժամանակը, որովհետև «...քրիստոնեայք նեղին և տաղնապին ի յանօրինաց վասն սաստիկ հարկապահանջութեանն»[24]։ Իսկ Յաղուբի մահից հետո, երբ ակ-կոյունլուների պետությունն արագ ընթանում էր դեպի կործանում, ստեղծված խառնաշփոթ վիճակը և գահի համար մղվող արյունահեղ պատերազմները երկրում հարկապահանջությունը հասցրին անսահման չափերի։ 1498 թ. Բարսեղ գրիչը հայտնում է, որ յուրաքանչյուր քրիստոնյայից գանձում էին 2000 դահեկան հարկ։ Հարկապահանջությունը կատարվել է անսահմանի դաժան միջոցներով, իսկ ովքեր փորձում էին խուսափել հարկերը վճարելուց, նրանց կախում էին, ծեծում և բանտում պահում էին երկաթյա շղթաներով, մինչև որ վճարեին պահանջված հարկը[25]։ Արարատյան գավառի Մուղնի գյուղում 1491 թ.

23 Նույն տեղում, էջ 394։
24 ԺԵ, մասն Գ, էջ 139։
25 Տե՛ս նույն տեղում, էջ 256։

Մկրտիչ գրիչը գրել է, որ Յաղուբի ժամանակ բազմաթիվ չարիքներ հայտնվեցին, որովհետև բոլոր կարգավորներից՝ աբեղաներից և աշխարհականներից, միայնակներից և սարկավագներից հարկ էին պահանջում կախելով, չարչարելով[26]։ Ստեփանոս Առնջեցին 1495 թ. ծաղկել է մի հիշատակարան, որում հայտնում է, որ ավետարանը գրել է դառն ժամանակներում, որովհետև քահանաներին կողոպտում էին և նրանցից գլխահարկ վերցնում[27]։

Յաղուբի որդի Մուրադ խանը 1498 թ. մտնելով Բագարչայ, անսահմանի ծանր հարկ հավաքեց հայերից։ Տանջում էին աշխարհականներին և կարգավորներին և ասում՝ տվեք ջիզան, ջիզայի տարբերությունը և տարբերության թերացումը[28]։ Այսպես է նկարագրել Մուրադ խանի հարկահավաքումը Վանական գրիչը Ջորավանքում 1498 թ.։ Ինչպես տեսնում ենք, այս ավազակն իր պատերազմական ծախսերի համար հայերից եռակի հարկ է հավաքել։ Այդ նույն նպատակի համար Այբա-Սուլթանը երեք տարվա հարկը երեք ամսում հավաքեց՝ ավերի ենթարկելով հայոց աշխարհը[29], գրել է Ալեքսիանոս գրիչը Մաքենացոց վանքում 1498 թ.։ Այսպիսով, աշխատավոր գյուղացիության համար XV դ. ստեղծվել էր սոսկալի ծանր կացություն։ Գյուղացիները ծանր հարկեր էին վճարում ոչ միայն թուրքմեն նվաճողներին ու քուրդ ցեղապետերին, այլև՝ տեղական հայ ֆեոդալներին ու եկեղեցուն[30]։

Լ. Խաչիկյանը ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների Բ մասի առաջաբանում ըստ ամենայնի քննության առնելով XV դ. հայ ազգաբնակչությունից գանձվող պետական և տեղական հարկերը, ցույց է տվել, որ հայ գյուղացիությունը վճարում էր տասներեք անուն հարկ։ Ըստ որում, դրանցից մի քանիսը ունեին իրենց ենթատեսակնե-

26 Տե՛ս նույն տեղում, էջ 168։
27 Տե՛ս նույն տեղում, էջ 200։
28 Տե՛ս նույն տեղում, էջ 259։
29 Տե՛ս նույն տեղում, էջ 261։
30 Տե՛ս Очерки истории СССР, ч. II, с. 721—722.

րը: 1488 թ. Յաղուբ բեկին ներկայացված բողոքագրում թվարկված է 27 անուն հարկ, իսկ տասը տարի հետո՝ 1498 թ. Ղասմ ակ-կոյունլուին ներկայացված բողոքագրում՝ 31 անուն հարկ[31]: Քանի որ ակ-կոյունլուների պետության մասն էր կազմում Հայաստանը, բնական է, որ այս հարկերը, եթե ոչ լրիվ չափով, ապա գոնե կիսով չափ գանձվում էին հայերից: Այսպիսով, XV դ. հայ բնակչությունն ընկած էր թյուրքմեն նվաճողների հարկային ծանր լծի տակ և անողոքաբար հարստահարվում ու կողոպտվում էր: Նվաճողները անողոք վամպիրի նման ծծում էին հայ բնակչության կենսահյութը՝ նրան մատնելով սովի ու թշվառության:

Հարկերից զատ, թյուրքմեն ռազմաքոչվորական ազնվականությանը շահույթ էր բերում գերիների վաճառքը: Նրանք գերի վերցրած հայերին ու վրացիներին վաճառում էին Թավրիզի, Բաղդադի, Ալեքսանդրիայի, Կոստանդնուպոլսի և այլ քաղաքների շուկաներում[32]:

XIII դ. կեսերին Զաքարյան Հայաստանի տնտեսական և քաղաքական վերելքը մոնղոլական աշխարհակալ արշավանքների հետևանքով խաթարվեց: Կիսաֆեոդալական, կիսանահապետական տնտեսաձևով կառավարող մոնղոլ նվաճողները, որոնց հիմնական զբաղմունքը քոչվոր անասնապահությունն էր, ծանր հարված հասցրին Զաքարյան Հայաստանի զարգացած ֆեոդալական հարաբերություններին: Հայաստանն այդ վիճակի մեջ շարունակեց մնալ նաև XIV—XV դդ.:

Մեծաքանակ անասնահոտերը պահելու համար քոչվոր ազնվականությանն անհրաժեշտ էր զրավել մեծ տարածությամբ արոտավայրեր: Այդպիսի վայրեր էին Հայաստանի տաք հովիտները և բուսականությամբ հարուստ ալպիական լեռնարոտավայրերը: Հայաստանը նվաճելուց հետո նրա փար-

[31] Տե՛ս *И. Петрушевский*. Внутренняя политика Ахмеда Ак-Коюнлу, с. 31.

[32] Տե՛ս Очерки истории СССР, ч. II, с. 721—722.

թամ արոտավայրերը և սքանչելի մարգագետինները դարձան ռազմաքոչվորական ազնվականության անասնահոտերի մշտական արոտատեղիները:

Խոսելով կարա-կոյունլու և ակ-կոյունլու պետությունների տնտեսաձևի մասին Դ. Իբրահիմովն այն կարծիքն է զարգացնում, թե այդ պետությունների տնտեսական հիմքը զարգացած ֆեոդալական տնտեսությունն էր և բնակչության հիմնական զբաղմունքը, ինչպես և անցյալում, մնում էր հողագործությունը: Շարունակելով իր հակագիտական և ոչ ճիշտ բնութագրումը, նա գրում է, որ XV դ. Ադրբեջանի (գոյություն չունեցած—Գ. Կ.) պատմությանը յուրահատուկ էին բուռն զարգացած ֆեոդալական հարաբերությունները[33]: Սակայն, աղբյուրները վկայում են, որ XV դ. այդ պետություններում շարունակվում էին պահպանվել մոնղոլական տիրապետության ժամանակ գոյություն ունեցող կիսաֆեոդալական հարաբերությունները: Ինչպես գիտենք, մոնղոլների հասարակական-տնտեսական կարգը կիսաֆեոդալական-կիսանահապետական էր, որի տնտեսական հիմքը քոչվորական ֆեոդալական տնտեսաձևն էր: Նրանք ընդարձակ հողային տարածությունները վերածել էին արոտավայրերի, ուր արածում էին նրանց բազմաքանակ անասնահոտերը: Ի. Պետրուշևսկին խոսելով XV դարի ֆեոդալական հողատիրության ձևերի մասին, գրում է. «15-րդ դարի Ադրբեջանի պետությունում հիմնականում պահպանվել էին հողատիրության այն ձևերը, որոնք կային այստեղ մոնղոլական տիրապետության ժամանակ»[34]: Ուրեմն, բուռն զարգացած ֆեոդալական

[33] Տե՛ս *Ибрагимов Д.* Феодальные государства на территории Азербайджана XV века (автореф. докт. дис.), Баку, 1963, с. 59—60.

[34] *Петрушевский И.* Госудерства Азербайджана в XV веке, с. 189. Ի. Պետրուշևսկին սխալվում է. ադրբեջանական պետություն XV դ. չկար, քանի որ չկար ադրբեջանական ազգություն կամ ժողովուրդ հասկացողությունը: Ատրպատականում և Հայաստանում կազմավորվեցին կարա-կոյունլու և ակ-կոյունլու թյուրքմենական ցեղերի պետությունները, իսկ այժմյան Ադրբեջանի տարածքում՝ Շիրվանշահերի պետությունը, որը կազմավորվել էր տարբեր ցեղախմբերից:

հարաբերություններ XV դ. Ատրպատականում, Շիրվանում և Հայաստանում կազմակերպված թուրքմենական պետություններում գոյություն ունենալ չէին կարող։

Սելջուկ թուրքերի, մոնղոլների, ապա Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի տիրապետության շրջանում Հայաստանի հողը անընդմեջ դոփում էին այս կիսաքոչվոր ցեղերի երիվարները։ Իսկ սպանելու և թալանի մոլուցքով տարված ռազմաքոչվորական ավագանին մոխրացնում էր նրա ծաղկած քաղաքներն ու գյուղերը։ XIV դարի հեղինակ Համդալլահ Ղազվինին վկայում է, որ ավերածություններն ու կոտորածները, որոնք տեղի էին ունենում մոնղոլների ժամանակ, այնքան մեծ մասշտաբներ էին ընդունել, որ Առաջավոր Ասիայի նախկին բարեկեցությունը չի վերականգնվելու մի քանի դարի ընթացքում[35]։ Մի քանի դար տևող ավերիչ արշավանքները քայքայեցին հայ ազգաբնակչությանը, թուլացրին նրա դիմադրողականությունը, իսկ իրենց գոյությունը մի կերպ պահպանած իշխանական տների ներկայացուցիչներին ստիպեցին ապաստան փնտրել կամ Հայաստանի անմատչելի լեռնադավաններում, կամ էլ նրա սահմաններից դուրս։

Նվաճողներն անխնա կոտորում էին հայ ազգաբնակչությանը, իսկ ֆեոդալական դասի նկատմամբ գործում էին ավելի անզիջում ու դաժան։ Հայկական ֆեոդալական տների մեծ մասը, որոնք ծագում էին հին նախարարական տներից, ոչնչացվեցին։ Նրանց փոխարինեց օտար ռազմաքոչվորական ազնվականությունը[36]։ Հայ ֆեոդալական տներից շատերը, չդիմանալով ստեղծված դժոխային պայմաններին և բիրտ հարստահարությանը, էժան վաճառքի հանեցին իրենց հողերը և հեռացան երկրից։ Քայքայվող մանր ու միջին հո-

[36] Տե՛ս *Петрушевский И.* Хамдалах Казвини как источник по социально-экономической истории Восточного Закавказья.—(Известия АН СССР, 1937, № 4, с. 839).

36 Տե՛ս *Еремян С.* Опыт периодизация истории Армении эпохи феодализма.—Вопросы истории, 1951, № 7, с. 62.

ղատերերի հաշվին հարստանում էին առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչները և ինչ-ինչ ճանապարհներով իրենց ապահով վիճակ ստեղծած ֆեոդալական մի քանի տներ[37]։

Հայաստանը նորանոր սարսափների թատերաբեմ դարձավ Լանկ-Թամուրի արշավանքների և սրան հաջորդող թուրքմեն ցեղերի տիրապետության շրջանում։ Թամուրն իր ճանապարհին ավերում ու անմարդաբնակ էր դարձնում Հայաստանի գյուղերն ու քաղաքները, բերդերն ու ամրոցները, սպանում ու գերեվարում բնակչությանը։ Այս կապակցությամբ Աշ. Հովհաննիսյանը գրում է. «Նվաճողների նժույգները դոփում էին ավերված բնակավայրերի մոխիրն ու փոշին, ճանապարհ բացելով թաթար չորրոտանիների առջև»[38]։ Թամուրի նման քաղաքականությունն Անդրկովկասի և Հայաստանի բնակչության մեջ առաջացրեց նոր փոփոխություն։ Դեպի Սամարղանդ և Միջին Ասիա գերի տարած տասնյակ հազարավոր բնակչության փոխարեն նա Խորասանից և այլ շրջաններից Հայաստան, հատկապես Ղարաբաղ տեղափոխեց թուրքական ցեղեր։ Իբրև նվաճող Թամուրին շատ քիչ էր հետաքրքրում նվաճված երկրների տնտեսական վիճակը, որովհետև այն, ինչ հարկավոր էր իրեն, նա խլում էր զենքի ուժով՝ ահաբեկելով ու սպանելով։ Նման քաղաքականությունն էլ ավելի քայքայեց երկրի տնտեսությունը։ Այս առթիվ Աշ. Հովհաննիսյանը նկատել է. «Տևապես իշխելու համար բավական չէ հիրավի արյուն ոթել, այլև առինքնել երկիրը աշխատանքի ուժով, բնակեցնել ու մշակել այն»[39]։

Թամուրն ազգաբնակչությանը ոչնչացնում էր ամենաբարբարոս ձևերով ու մեթոդներով, սպանում, կրակի վրա այրում, մաշկահան կամ խեղդամահ անում։ Դաժան այս խոշտանգումներից փրկվելու հույսով շատ քրիստոնյաներ

37 Տե՛ս Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 571։

38 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, էջ 413։

39 Նույն տեղում, էջ 415։

տրիպված մահմեդականություն էին ընդունում[40]։ Խոսելով Հայաստանին հասցրած ծանր հարվածի մասին, Կլավիխոն գրում է, որ իրենք անցել են բոլորովին անմարդաբնակ երկրով։ Հայաստանի այս մասերում բնակչության բացակայության պատճառն այն էր, շարունակում է ճանապարհորդը, որ բռնատերերը կորցրել էին իրենց իշխանությունն ամբողջ մեծ Հայաստանում[41]։

Թուրքմեն նվաճողները երկրին տիրելուց հետո այն, որպես ռազմական ծառայության դիմաց տրված պարգև, բաժանեցին ռազմաքոչվորական ազնվականության միջև, որոնք, մեծաքանակ անասնահոտերը պահելու համար իրենց ստացած տարածքը վեր էին ածում արոտավայրերի, որն էլ խիստ վնասեց երկրի տնտեսությանը։

Հայաստանի տաք և փարթամ բուսականությամբ հարուստ հովիտների հրապույրը թե՛ ամռանը, թե՛ ձմռանը դեպի իրեն էր ձգում թուրքմեն քոչվոր ցեղախմբերին, որոնք ձմեռում էին Մուղանի և Ղարաբաղի հարթավայրերում, Ջաղատա գետի հովտում և Տիգրիս ու Եփրատ գետերի վերին հոսանքներում։ Իսկ նրանց ամառանոցներն էին Ղարաբաղի լեռները, Ալագյազը և ալպիական մարգագետիններով ծածկված Հայկական լեռնաշխարհի մյուս վայրերը[42]։ Եթե նշված վայրերը թուրք-թաթարական ցեղախմբերի համար հիմնականում ծառայում էին որպես ձմեռանոցներ և ամառանոցներ, ապա Հայաստանի առանձին շրջաններ դարձել էին նրանց մշտական բնակավայրերը, ուր հողամշակումն իր տեղը զիջել էր քոչվոր անասնապահությանը։

Երկրին ու նրա տնտեսությանը ծանր հարված հասցրեցին պարբերաբար կրկնվող արշավանքները, միջցեղային ընդհարումները, ինչպես նաև թուրքմեն զինվորների տեղաշարժերը։ Թուրքմեն բանակների տեղաշարժերի հետևանքով,

40 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 274։

41 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 138։

42 Տե՛ս Петрушевский И. Очерки... с. 66.

որը հիմնականում տեղի էր ունենում գարնան ու ամռան ամիսներին, ոչնչանում էին ցանքատարածությունները, ամայանում Հայաստանի բերքառատ, բարեբեր հովիտները։ Մուհամմեդ Իբն Հինդուշա Նախիջևանու «Դաստուր ալ-քյաթիբ»-ում (փաստաթղթերի ժողովածու) պահպանվել է գյուղացիների բողոքը դիվանին այն մասին, որ զորքերի տեղաշարժերի ժամանակ ոչնչացել է իրենց բերքը[43]։ Երզնկայում 1446 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ Մահմադ պարոնի եղբայր Ջահանգիրն արշավել է դեպի Երզնկա և ավերել Եկեղյաց գավառի շատ գյուղեր. «Եւ քար և քանդ արար զերկիրս Եկեղեաց, և գեղորայն զամէն այրեց, և եհան յերկրէս յայլ շրջակայ գաւառն՝ զամենայն աւարէ»[44]։ Ջահանշահը 1451 թ. բազմաթիվ զորքով արշավում է դեպի Երզնկա, շատ քաղաքներ և գավառներ կրակի մատնում, իսկ բնակչությանը գերում[45]։

Ինչպես արտաքին պատերազմների ժամանակ, այնպես էլ հետո քոչվոր ազնվականության նպատակը թշնամի երկրների տարածքի ամայացումն ու ոչնչացումն էր, որը ծանր վնաս էր պատճառում հողագործությանն ու երկրի տնտեսությանը[46]։ XV դ. Հայաստանի տնտեսությունը ծանր հարված ստացավ նաև արտադրողական ուժերի ոչնչացման պատճառով։ Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արյունահեղ պատերազմները տասնյակ հազարավոր մարդկային զոհեր խլեցին, ոչնչացվեցին բազմաթիվ աշխատող ձեռքեր, որոնք հողը մշակող հիմնական ուժն էին։ Տեղի բնակիչներին, հատկապես տղամարդկանց, նվաճողները ոչնչացնում էին քաղաքների պաշարման ու գրավման ժամանակ։ Վանը, Սեբաստիան, Երզնկան, Արճեշը, Ոստանը, Երևանը և այլ քաղաքներ ծանր հարված կրեցին։ Ժամանակի աղբյուրներում կան բազմաթիվ վկայություններ, որոնք վկայում են մարդ-

43 Տե՛ս Петрушевский И. Земледелие..., с. 76.

44 ԺԵ, մասն Ա, էջ 602։

45 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 3։

46 Տե՛ս Петрушевский И. Земледелие..., с. 76.

կային այն հսկայական կորուստների մասին, որ կրել է հայ ժողովուրդը XIV—XV դդ.։ Այսպես, ոմն Ռստանցի գրիչ հաղորդում է, որ Սեբաստիայի գրավումից հետո Թամուրը «սրախողխող է արել զամենեսեան», իսկ 3000 մարդ կենդանի թաղել քաղաքի պարիսպների տակ[47]։ Մարդակերպ այդ հրեշը Վանը գրավելու ժամանակ բերդի պարիսպներից ցած է գլորել ավելի քան 7000 մարդ։ Թովմա Մեծոփեցին, նկարագրելով Թամուրի կողմից Հայաստանի ամայացման սխուր պատմությունը, գրել է. «Եւ զայլ ամենայն բազմութիւն հաւատացելոց չարչարէին տանջանօք, սովով, սրով, գերութեամբ, անտանելի չարչարանօք և անագորոյն բարուք անմարդաձայն արարին զամենայն գաւառն Հայոց»[48]։

Աշխատավոր բնակչությունը ոչնչանում էր ոչ միայն արշավանքների ընթացքում, այլև ստեղծված ծանր պայմանների պատճառով։ Գրիչ Թովմա Թավրիզեցին, նկարագրելով Թամուրի արշավանքների հետևանքով ստեղծված ծանր պայմանները, նշում է, որ նրանք, ովքեր ազատվել էին Թամուրից և ապաստան էին գտել քարայրներում կամ հեռավոր լեռներում, մեռնում էին սովից, ցրտից կամ էլ, չկարողանալով տանել ստեղծված ծանր պայմանները, ինքնասպանությամբ վերջ էին տալիս իրենց կյանքին[49]։

Մարդկային կորուստների ծավալով Թամուրի արշավանքները թերևս աննախընթաց էին Հայաստանի պատմության մեջ։ Բնակչության ոչնչացումը Հայաստանում կրում էր զանգվածային բնույթ, ողջ երկիրը անմարդաբնակ դարձավ և ավերվեց. «Աւաղ եւ եղուկ ամենայն Հայոցս զի աւերեցաւ ամենայն երկիրս. զի յԱրճիշոյ մինչեւ ի տունն Վրաց եւ մինչ ի Կուր գետն Աղվանից շաղախեցաւ արեամբ անմեղաց երկիր ամենայն չարչարանօք, սպանմամբ և գերութեամբ»[50]։

47 ԺԵ, մասն Ա, էջ 3։

48 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 19։

49 ԺԵ, մասն Ա, էջ 31։

50 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 32։

Իր երկրորդ արշավանքի ընթացքում Թամուրը ավերել է Մերդին քաղաքը և նրա շրջակայքի 50 գյուղեր, գերի տարել 3000 տուն, 7500 բնակչությամբ[51]։

Թամուրի արշավանքներից մեծապես տուժեց հայ գյուղացիությունը, որի ուսերին էր ծանրացած նրա մեծաթիվ զորքերին պահելու դաժան հոգսը։ Այս ամենին համընթաց, հայ գյուղացին պարտավոր էր տալ բոլոր տեսակի հարկերը և ծառայել հայ ֆեոդալներին ու եկեղեցուն[52]։

Պարբերաբար կրկնվող ասպատակությունները, երկրի ամայացումը, հողագործ և արհեստավոր բնակչության գերեվարումը չդադարեցին նաև կարա-կոյունլուների և ակ-կոյունլուների տիրապետության շրջանում։ Հայկական լեռնաշխարհի բնապատմական պայմանները, նրա բարձր լեռնային ալպիական մարգագետիններն իրենց փարթամ բուսականությամբ իդեալական պայմաններ էին կիսաքոչվոր տնտեսաձևով կառավարվող ցեղերի համար։ Այդ իսկ պատճառով քոչվոր նվաճողները ոչնչացնում կամ երկրից քշում էին տեղաբնիկ ժողովրդին։ Այս վայրագությունների հետևանքով Հայաստանի գավառները գրեթե դատարկվեցին, պտղաբեր հովիտները վերածվեցին արոտավայրերի։ Քոչվոր ցեղերի հաստատումը Հայաստանում ծանր հարված հասցրեց նրա տնտեսությանը։ Նախկին բարձր զարգացած հողագործությունն իր տեղը զիջեց քոչվոր ցեղերի պարզ տնտեսական ձևին[53]։

Բնութագրելով մոնղոլների և թուրքմեն ցեղերի տիրապետությունը Հայաստանում Ի. Պետրուշևսկին նկատել է. «Մոնղոլական իշխանների տիրապետության շրջանը և հատկապես թուրքմեն նվաճողների՝ կարա-կոյունլուների և ակ-կոյունլուների տիրապետությունը Հայաստանում շատ ծանր

51 Տե՛ս նույն տեղում, էջ 45։

52 См. Очерки истории СССР, ч. II, (XIV—XV вв.), с. 719;

53 См. *Еремян С.* Опыт периодизации истории Армении эпохи феодализма, с. 68.

հետևանքներ ունեցավ երկրի համար»[54]: Շարունակելով իր միանգամայն ճիշտ բնութագրումը, Ի. Պետրուշևսկին ավելացնում է, որ արտադրողական ուժերի քայքայման, բնակչության մի մասի հարստահարման ու ոչնչացման, ինչպես նաև մշակույթի հուշարձանների ոչնչացման հետ միասին այս շրջանը երկրին բերեց ուրիշ շատ ծանր հետևանքներ[55]:

Հայաստանին և հայ ժողովրդին պակաս վնաս չպատճառեցին նաև Յուսուֆի, Իսքանդարի և Ջահանշահի վարած պատերազմները, որոնք հիմնականում տեղի էին ունենում Հայաստանում և նրան սահմանակից երկրներում: Յուսուֆը 1416 թ. մեծ բանակով, իր անցած ճանապարհը հրի ու սրի մատնելով, Հայաստանից մտավ Վրաստան և գրավեց Ախալցխա քաղաքը: Գրիչ Թովմա Մինասենցու վկայությամբ 1425 թ. Իսքանդարը հրի ու սրի մատնեց Արևմտյան Հայաստանի նահանգները: Այս ավազակային ասպատակությունից մեծապես տուժեցին Վանա լճի շրջանները՝ մինչև Բաղեշ քաղաքը: Ունեզրկված ու սարսափահար բնակիչները մերկ ու բոկոտն, քաղցած ու անտերունչ ապաստան էին որոնում երկրի այլ վայրերում[56]: Իր կառավարման տարիներին Իսքանդարը ստիպված էր պատերազմ մղել Հարավային Հայաստանում իշխող քրդական ամիրաների դեմ: Երկարամյա պատերազմները և քուրդ ցեղապետերի ասպատակությունները քայքայեցին երկրի տնտեսությունը, հողը չմշակվեց, որի հետևանքով եղան խիստ սովի տարիներ: Ուշանիքի Տայշող գյուղում 1419 թ. գրած հիշատակարանում գրիչ Ստեփանոսը հաղորդում է, որ երկրում տիրում էր սովը և մահ տարաժամը[57]: Ճաշոց նորոգող Հովհաննես քահանան 1413 թ. գրում է, որ սաստիկ սովի պատճառով մի մոթ հացը վաճառվել է 300 դրամով[58], երկրում խիստ սով էր տարածված 1431—1432 թթ.: Այս կապակցությամբ Մեծոփեցին հաղորդում է, որ խիստ սովի պատճառով մարդիկ սկսեցին ուտել իրենց զավակներին. «Եւ պարապեալ պակասեցաւ անասունն. և զիմեցին ի յուտելս եւ ի զաւակս իւրեանց»[59]: Սովն իր հետ բերեց թանկություն, խիստ բարձրացավ հացահատիկի գինը: Ինչպես վկայում է պատմագիրը, այդ ժամանակ Արճեշի շուկայում ցորենի մոթը վաճառվում էր 60 թանկայով[60]: 1432 թ. սովի պատճառը գրիչ Դավիթը համարում է Շահռուխի արշավանքը, որն ավերեց ողջ Հայաստանը և տարավ շատ գերիներ: Այդ պատճառով տիրեց սաստիկ սով, այն աստիճան, որ շատերը կերան պիղծ կենդանիներին, իսկ Թավրիզում մարդիկ իրար էին ուտում, և մարդու յուղը, ինչպես անասունի յուղ վաճառում էին միմյանց[61]: Մեծոփեցին զառնացած բողոքում է, որ սկսած 1431 թ. մինչև Իսքանդարի մահը ամբողջ երկիրը գտնվում էր խռովահույզ վիճակում[62]: Քուրդ ցեղապետերի ասպատակությունների հետևանքով Վանա լճի շրջակայքի հայ բնակչությունը գտնվում էր ծայրաստիճան աղքատության մեջ: Այդ ամենի պատճառն այն էր, գրում է Մեծոփեցին, որ հայերի ունեցվածքն այն աստիճան էին կողոպտել, որ նրանք թե մեծ, և թե փոքր խոտով էին ծածկում իրենց մարմինը և շրջում էին մերկ ու բոբիկ[63]: Հայ ժողովրդից հազարավոր զոհեր խլեցին նաև Ջահանշահի մղած պատերազմները: Դեպի Վրաստան կատարած արշավանքի ընթացքում նա գրավեց Շամշուլդե բերդաքաղաքը և կոտորեց ու գերեց մոտ 12 հազար մարդ:

Հայ ժողովրդի ծանր վիճակը չթեթևացավ նաև ակ-կոյունլուների տիրապետության շրջանում: Ուզուն-Հասանի մահից հետո գահի շուրջ ծավալված ներքին պայքարը ավելի խորացրեց հայ ժողովրդի անմխիթար վիճակը: 1484 թ. Վա-

54 Петрушевский И. Очерки..., с. 64.
55 Տե՛ս նույն տեղում, էջ 65:
56 Տե՛ս ժմ, մասն Ա, էջ 326:
57 Տե՛ս նույն տեղում, էջ 276:
58 Տե՛ս նույն տեղում, էջ 307:

59 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 94:
60 Տե՛ս նույն տեղում, էջ 95:
61 ժմ մասն Ա, էջ 419:
62 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 108:
63 Տե՛ս նույն տեղում, էջ 111:

նում գրած իր ձեռագիր հիշատակարանում Աղարքա գրիչը հայ ժողովրդի վիճակը այսպես է ներկայացնում.

«Որ չգիտեմք թէ ինչ տի լինի Հայոց ազգիս
Ի թինաւոր ազգից միջիս շիւարեալ կանք ողորմելի»[64]։

1485 թ. Սանահնի վանքում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում գրիչ Խաչատուրն իր ապրած ժամանակաշրջանը բնութագրում է դառն ու չար, որովհետև ժողովուրդը նեղվում էր անօրենների բռնությունից[65]։ Անիշխանությունն ու անօրինությունը տիրում էր ամենուրեք։ Հովհաննես գրիչի վկայությամբ ժամանակը շատ դառն էր. այլազգի անօրենները այդ տարի բռնել էին 40 ազատորդու և ստիպել կրոնափոխ լինել։ Դրանց թվում էին Հովհաննես գրիչի եղբայրները՝ պարոն Հայկազը և պարոն Ավագը, որոնք յոթ ամիս բանտում են մնացել, մեծ տուգանք տվել, սակայն քրիստոնեությունից չեն հրաժարվել[66]։ Հայ ժողովրդի կրած բազմապիսի զրկանքների ու հալածանքների մասին է պատմում նաև Բշտունյաց գավառի Շատվան գյուղում 1489 թ. գրված մի ձեռագիր հիշատակարան։ Բոլորին հալածում էին, նեղում և տառապանքների ենթարկում՝ ոմանց ունեցվածքը հափշտակում էին, ոմանց ենթարկում տանջանքների, ոմանց հայհոյում էին, խորտակում շատ եկեղեցիներ, անպատվում խաչն ու ավետարանը[67]։ Անանուն մի գրիչ 1492 թ. ողբում է, որ տարին դառն է, ցորենը արժե 60 թանկա և այն էլ չկա, իսկ կորեկը և գարին 50 թանկա[68]։ 1498 թ. քուրդ հրոսակների կողմից թալանի ու ավերածության մատնվեցին Աղթամար կղզին իր վանքով և Վանա լճի առափնյա շրջանները։ Այսպիսով, ինչպես ցույց են տալիս

64 Ժմ, մասն Գ, էջ 60։
65 Տե՛ս նույն տեղում, էջ 71։
66 Տե՛ս նույն տեղում, էջ 110։
67 Նույն տեղում, էջ 133։
68 Նույն տեղում, էջ 135։

փաստերը, երբեմնի դրախտ հայրենիքը հայ ժողովրդի համար դարձել էր դժոխք, ուր այրվում ու ոչնչանում էին բոլորը, առանց սեռի ու հասակի խտրության։ Ստեղծված ծանր կացության պատճառով հայ ժողովրդի մի մասն արտագաղթում էր։ Գաղթն այն միակ միջոցն էր, որը հայ ժողովրդին փրկում էր ֆիզիկական բնաջնջումից, չնայած որ ապրելու և գոյատևելու համար նրան սպասում էին նորանոր փորձություններ։

Կլավիխոն գրում է, որ Սուրմալուի բնակչության ստվար մեծամասնությունը եղել են հայեր, բայց վերջին տարիներին նրանք տեղահանվել են, իսկ նրանց տեղը հաստատվել են մուսուլմանները[69]։ Կլավիխոյի ճանապարհին հանդիպած բոլոր գյուղերն անմարդաբնակ էին։ Այդպիսին էր նաև Ալաշկերտ քաղաքը, որտեղ մնացել էին միայն մի քանի ծերունիներ[70]։ Թամուրի արշավանքներից մեծապես տուժեցին հատկապես այն նահանգները (Սամխեթը, Լոռին, Աղստևը և այլն), գրում է Ս. Երեմյանը, որոնք գտնվում էին Վրաստանի կազմում։ Այս շրջանի հայ բնակչությունը գաղթեց Քարթլի և Կախեթիա[71]։ Ծանր էր նաև երկրից գաղթողների վիճակը։ Նրանք, չդիմանալով ճանապարհի դժվարություններին, իրենց մահկանացուն էին կնքում օտար երկրներում։ Թ. Մեծոփեցին նկարագրելով հայերի գաղթն Արարատյան երկրից դեպի Վրաստան, գրում է, որ ձմռանը շատերը գաղթեցին այդ կողմերը, սակայն շատերը մեռան օդի խստությունից[72]։ Չդիմանալով թուրքմենների ստեղծած դժոխային պայմաններին Օրբելյան Բեշքեն իշխանը վեց հազար բնակչությամբ գաղթեց Լոռի, որն այդ ժամանակ գտնվում էր վրաց թագավորության կազմում։

Երբ Ալվանդը 1498 թ. Այբա-Սուլթանի հետ երկրորդ անգամ արշավեց Վանա լճի շրջակայքը, տեղի հայերը, ինչ-

69 Տե՛ս Հ. Հակոբյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 109։
70 Տե՛ս նույն տեղում, էջ 138։
71 Տե՛ս Очерки истории СССР, ч. II (XIV—XV вв.), 719։
72 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 94։

պես հաղորդում է ձեռագրի գրիչը, նոր աղետից խուսափելու համար թողեցին իրենց բնակավայրերը և փախան օտար երկրներ[73]:

Ի. Պետրուշևսկին, խոսելով հայ ֆեոդալների և ազգաբնակչության համար ստեղծված ծանր կացության մասին, նշում է, որ հայ ազնվականությունը բացի հոգևոր ֆեոդալների մի մասից, ստիպված էր ժողովրդի հետ գաղթել երկրից, ինչպես օրինակ Օրբելյանները, իսկ մյուս մասը հարկադրված ընդունեց մուսուլմանություն և ձուլվեց նվաճողներին, ինչպես օրինակ Մակուի հայ իշխանը: Իսկ նրանք, ովքեր, փորձեցին դիմադրել նվաճողներին, անխնա ոչնչացվեցին[74]: Եթե գյուղացիական բնակչության մի մասը ժամանակավորապես ապավինում էր Հայաստանի անառիկ լեռներին, ապա քաղաքային բնակչությունը զանգվածաբար գաղթում էր դեպի Վրաստան, Ղրիմ, Ուկրաինա և այլ վայրեր[75]:

Ասպարեզից հայ ֆեոդալներին հեռացնելով, եկվոր քոչվոր ազնվականությունը գրավեց սրանց հողերն ու ունեցվածքը: Տեղական հայ ֆեոդալների փոխարեն իշխել սկսեցին թաթար, թուրքմեն և քուրդ ռազմաքոչվորական ազնվականության ներկայացուցիչները:

Նվաճելով Հայաստանի փարթամ բուսականությամբ հարուստ լեռնաստանները, XV դ. վերջերին Թուրք-Թաթարական ցեղերն իրենց տեղաշարժերն աստիճանաբար դադարեցրին և նվաճված վայրերում դարձան մշտական բնակիչներ: Հաստատվելով Հայաստանում, մոնղոլ և թուրքմեն քոչվոր ցեղերն իրենց հետ բերեցին այլ տիպի ֆեոդալական հարաբերություններ:

Հին հայկական ֆեոդալական հարաբերությունների հիմնական գծերը XV դ. համարյա թե անհետացան: Հետագա

73 Տե՛ս ժե, մասն Գ, էջ 257:

74 См. Петрушевский И., Очерки..., с. 65.

75 Տե՛ս նույն տեղում:

դարերում նրանց հետքերն աղբյուրներում շատ թույլ են երևում: Նույնիսկ հայկական վանքապատկան հողատիրությունը, որը որոշ չափով ամբողջական էր մնացել, պետք է ենթարկվեր նվաճողների հաստատած սոցիալ-քաղաքական կարգին և մուսուլմանական իրավունքի նորմերին[76],

Խարխլվել էին զարգացած ֆեոդալական հարաբերությունների տնտեսական հիմքերը: Արտադրողական ուժերի խիստ պակասը և քաղաքային բնակչության ոչնչացումը հիմնովին քայքայեցին երկրի տնտեսությունը: Թուրքմեն քոչվոր նվաճողները թշնամաբար էին տրամադրված դեպի նստակեցությունը, հողագործությունը և քաղաքային կյանքը: Քոչվորական ֆեոդալական տնտեսաձևը իր հիմքում բնատնտեսական էր: Ռազմաքոչվոր ազնվականությունն իր ձեռքն էր վերցրել արտադրության հիմնական միջոցները, այն է՝ ընդարձակ հողային տարածությունները և քաշող ուժը: Նրանք շահագրգռված չէին գյուղատնտեսության և հողագործության զարգացմամբ, որպեսզի կարողանան այդ տարածքների վրա պահել ավելի մեծ քանակությամբ անասնահոտեր: Այս ամենի հետևանքով անկում ապրեցին գյուղատնտեսությունը, ապրանքային արտադրությունը, արհեստներն ու առևտուրը:

Հաստատվելով Հայաստանում, նրանք երկրի վզին փաթաթեցին իրենց տնտեսաձևը, որի հետևանքով Հայաստանում զարգացած ֆեոդալական հարաբերությունները ժամանակավորապես փոխարինվեցին կիսանահապետական-կիսաֆեոդալականով:

76 Տե՛ս նույն տեղում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԸ XIV—XV ԴԱՐԵՐՈՒՄ

ԴՈՓՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Նախորդ շարադրանքից պարզ դարձավ, թե Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի համար ինչպիսի ծանր հետևանքներ ունեցան Լանկ-Թամուրի, կարա-կոյունլու և ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի աշխարհավեր արշավանքներն ու դաժան բռնությունները:

Հայաստան ներխուժած թուրք-թաթարական կիսաքոչվոր ցեղախմբերի կողմից գործադրված բազմապիսի բռնությունների, ազգային ու կրոնական հալածանքների հետևանքով ծանր կացություն ստեղծվեց նաև հայկական իշխանական տների համար, որոնք ժամանակի հոլովույթի մեջ, մեծ մաքառումների ու կորուստների գնով պահպանեցին իրենց գոյությունը: Հայաստանի լեռնագավառներում իշխող հայկական իշխանական տները, ժամանակի պայմանների համապատասխան, կարևոր դեր խաղացին երկրի քաղաքական կյանքում, համընթաց իրենց նպաստը բերելով տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Վերին Խաչենում իշխում էին Դոփյանները, Ներքին Խաչենում՝ Հասան-Ջալալյանները, Սյունիքում՝ Օրբելյանները, Վայոց ձորում՝ Պռոշյանները, Եղվարդում ու նրան կից շրջաններում՝ Աղիգ-բեկյանները, ինչպես նաև այլ մանր իշխանական տներ՝ Հայաստանի տարբեր շրջաններում:

Նախքան խնդրո առարկա ժամանակաշրջանի Դոփյան իշխանական տան պատմության լուսաբանումը, անհրաժեշտ ենք համարում քննության առնել նրա ծագումնաբանության հարցը:

XIII դ. արշալույսից Արևելյան Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքում աչքի ընկած Դոփյան իշխանական տան ծագման հարցի շուրջ պատմագիտական գրականության մեջ հայտնվել են տարբեր կարծիքներ: Խնդրո առարկա հարցով զբաղվողներից Եսայի կաթողիկոսը, Հ. Շահխաթունյանցը, Մ. Բարխուտարյանցը, Ղ. Ալիշանը, Կարապետ եպիսկոպոսը և ուրիշներ այն կարծիքն են հայտնել, որ Զաքարյան Սարգիս Մեծի դուստր իշխանուհի Դոփի ամուսինը եղել է Ղարա Գրիգորը:

Բ. Ուլուբաբյանը, քննադատելով հիշյալ ուսումնասիրողներին և թյուրիմացության աղբյուրը համարելով Եսայի կաթողիկոսի 1718 թ. կազմած Դոփյան տան ճյուղագրությունը[1], փորձում է ապացուցել, որ Դոփի ամուսինը եղել է ոչ թե Ղարա Գրիգորը, այլ Հասանը[2], զարմանալիորեն մոռացության տալով այն հանգամանքը, որ իրենից առաջ այդ սխալը նկատել և շտկել են նշանավոր բանասեր-պատմաբան Գարեգին Հովսեփյանը, ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը և տողերիս հեղինակը[3]:

Այս հարցը քննելիս, անտեսելով նախորդ հետազոտողների կատարած աշխատանքը, Բ. Ուլուբաբյանը գրում է. «Այնքան երկար կանգ առանք Դոփի ամուսնու անվան աղավաղումների վրա, որովհետև ուսումնասիրողները և նույնիսկ Կարապետ եպիսկոպոսը, որը հատուկ ուսումնասիրություն

1 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 821, թ. 2ա, բ:

2 Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XV դարերում, Երևան, 1975, էջ 154—155:

3 Г. Овсепян, Потомство Тарсамча Орбеляна и Мина-Хатуни («Христианский Восток», т. II, СПб, 1913, с. 222—224. Նույնի՝ Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 20, Հ. Մանանդյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 165, Կիրակոսյան, Մատենագիտական տեղեկություններ Դոփյանների մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 1, էջ 217—218):

է գրել Դոփյան տոհմածառի մասին, Եսայի կաթողիկոսի մի հատիկ թյուրիմացությանը կառչած՝ չեն նկատել աղբյուրներում սփռված բազմաթիվ այնպիսի անճշտություններ, որոնք տալիս են Դոփյան ճյուղի ճշգրիտ ակունքը»[4]։

Իրենից առաջ, առանց բացառության, բոլոր ուսումնասիրողներին մեղադրելով «Դոփյան ճյուղի ճշգրիտ ակունքը» հավաստող փաստեր չնկատելու մեջ, որքան էլ զարմանալի է, Բ. Ուլուբաբյանը վկայակոչում է փաստեր, որոնք տակավին 1913 թ. օգտագործել է Գ. Հովսեփյանը, իսկ հետագայում Դոփյանների պատմությանն անդրադարձած ուրիշ ուսումնասիրողներ։ Բ. Ուլուբաբյանն իր ասածը հիմնավորելու համար վկայակոչում է Գ. Հովսեփյանի կողմից 1951 թ. հրատարակած հիշատակարաններից մեկը, որը դեռևս 1969 թ. օգտագործել ենք նաև մենք, Դոփյանների մասին վերը հիշատակված մեր հոդվածը գրելիս։

1244 թ. ինքնագիր հիշատակարանում Գրիգոր իշխանը՝ Հասանի և Դոփի որդին, խոսելով մոնղոլների արշավանքին իր մասնակցության մասին, գրել է. «Ընդ որս և գրեցայ ես՝ Գրիգոր՝ որդի Հասանայ և Դոփին, քուերորդի սպարապետացն Հայոց և Վրաց՝ Զաքարիայի և Իւանէի»[5]։ Արդ, հարց է ծագում. ինչպե՞ս կարող էր մեծավաստակ հայագետ Գ. Հովսեփյանը հրատարակել այս հիշատակարանը և չնկատել Դոփյանների ծագումը հավաստող այդ փաստը։ Ինչպես արդեն ասվեց, Գ. Հովսեփյանն այդ մասին խոսում է դեռևս 1913 թ. հրատարակած Օրբելյաններին նվիրված իր հոդվածում, իսկ հետագայում՝ Խաղբակյաններին նվիրված հիմնալից աշխատությունում[6]։

4 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 154։

5 Գարեգին Ա. կաթողիկոս, *Յիշատակարանք ձեռագրաց*, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 959։

6 Գ. Հովսեփյան, *Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ*, էջ 19—20, Потомство Тарсамча Орбеляна и Мина-Хатуни, с. 222—224.

Թերևս հարկ չլիներ կրկին անդրադառնալ այս հարցին, եթե Բ. Ուլուբաբյանը Դոփյանների տոհմածառում թույլ չտար որոշ անճշտություններ։ Արդ, ո՞վ էր Դոփի ամուսին Հասանը և ինչ տոհմից էր սերում։ Ըստ Բ. Ուլուբաբյանի, Հասանը սերում էր Հաթերքի իշխաններից. նա Վախթանգ իշխանի որդին էր և Սակարի եղբայրը։ 1182 թ. Դադի վանքում թողած իր արձանագրությունում Հասանը հայտնում է, որ ինքը կառավարել է 40 տարի, ունեցել է վեց որդի, իր բերդերն ու գավառները տվել է նրանց և ինքը կնոջ՝ Մամայի, հետ եկել է Դադի վանք, իր եղբայր Գրիգորի մոտ և դարձել կրոնավոր[7]։ Այս նույն փաստը հաստատում է նաև Հասանի կնոջ՝ Կյուրիկե թագավորի դուստր Մամայի՝ Դադի վանքում 1182 թ. թողած արձանագրությունը[8]։ Հասանի վանք մտնելուց հետո իշխանական տան ավագությունը անցել է նրա Վախթանգ որդուն, որը կառավարել է 1182—1214 թթ.։ Վախթանգն ունեցել է երկու որդի՝ Հասան և տեր Գրիգոր։ Վախթանգի կնոջ՝ Արզու խաթունի, 1214 թ. արձանագրությունից պարզվում է, որ նրանց երկու որդիներն էլ մահացել են երիտասարդ հասակում։ Ի հիշատակ իր որդիների և ամուսնու Արզու խաթունը Դադի վանքին կից կառուցել է եկեղեցի, որին նվիրել է գյուղեր ու ագարակներ։ Այդ առթիվ թողած արձանագրությունից պարզվում է, որ Հասանը՝ նրանց ավագ որդին, սպանվել է օտարների դեմ պատերազմում, որից երեք ամիս հետո մահացել է նաև կրտսեր որդին՝ տեր Գրիգորը[9]։ Այս Հասանը Դոփի ամուսինը լինել չէր կարող, որովհետև արձանագրության բովանդակությունից պարզվում է, որ նա ամուսնացած չի եղել։ Բ. Ուլու-

7 Հ. Շահխաթունյանց, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ*, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 361—362, «Դիվան», պրակ V, էջ 138։

8 Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 362, «Դիվան», պրակ V, էջ 215։

9 «Դիվան», պրակ V, էջ 199, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., էջ 356, Մ. Բարխուտարյանց, *Արցախ*, Բաքու, 1895, էջ 204։

բարյանը գրում է, որ Դոփի որդի Գրիգորի 1244 թ. հիշատակարանում հիշատակված Հասանը կարող էր լինել միայն ու միայն Վերին Խաչենի Վախթանգ իշխանի որդին և Սակոի եղբայրը[10], սակայն այդ միտքը հաստատող որևէ փաստ չի բերում:

Դոփի ամուսին Հասանն ապրել ու գործել է XII դ. երկրորդ կեսին և XIII դ. սկզբին: Նա դեռ ապրում էր, երբ նրա եղբայր Հովհաննեսը 1204 թ. կառուցել տվեց Խադարի կամ Խադայի (Խաթրա) վանքի եկեղեցին. «Ի:ՈԾԳ: (1204) թուին. Ես տր. Յոհաննէս շինեցի զեկեղեցիս եւ ժողովեցի զխաչ եւ զգիրք որ ի սմա եւ արկ/ի զՋոթացն այգին եւ զՄատաղիսն բազում աշխատութբ եւ ետու զվանքն իւր ամէն սահմանաւ իմ ստաց աղբարն Հասանա եւ իւր որդեացն Հաթերքո տեառնն միջնորդութբ...»[11]: Այս նույն եկեղեցու պատին արձանագրություն է թողել նաև Հասանը. «Յանուն այ. այս իմ գիր է Հասանա, որ երբ իմ աղբէրս զեկեղեցին շինեաց ու զվանքս ինձ եբետ, ես) զխնձորոտակս իւր սահմանովն ի յեկեղեցիս տուի...»[12]:

Այս արձանագրություններում ուշագրության է արժանի այն հանգամանքը, որ Հովհաննեսը և Հասանը չեն հիշատակում Հաթերքցիների հետ իրենց ազգակցական կապի մասին: Հասանի արձանագրությունը թվական չունի, սակայն պարզ է, որ այն գրվել է 1204 թ., երբ Հովհաննեսը ավարտել է եկեղեցու կառուցումը: Հովհաննեսի արձանագրությունում ուշագրավ է այն միտքը, որ նա վանքն իր սահմաններով եղբորն է հանձնել Հաթերքի տերերի միջնորդությամբ, իսկ դա նշանակում է, որ Հաթերքի Վախթանգ իշխանը պատրոնի իրավունք է ունեցել Հասանի և Հովհաննե-

10 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 155:

11 «Դիվան», պրակ V, էջ 121, Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 194:

12 «Դիվան», պրակ V, էջ 122, Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 194, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 356:

սի նկատմամբ: Այս միտքն անառարկելիորեն հաստատում է Վախթանգի կին Արզու խաթունի 1214 թ. թողած արձանագրությունը. «...Ես Արզուխաթունս Նուաստ աղախին Քի. դուստր մեծի իշխանաց իշխանին Քրդին եւ ամուսին Վախտանկա թագաւորազնո տն. Հաթերքո եւ ամենայն Վերին Խաչենո...»[13]:

Վախթանգը մահացել է 1214 թ., իսկ մինչ այդ, ինչպես վերը տեսանք, նույն տարում մահացել էին նրա երկու որդիները՝ Հասանը և տեր Գրիգորը: Ժառանգորդ չունեցող Հաթերքի Վախթանգ իշխանի տիրույթներն անցան Իվանեին, իսկ վերջինս դրանք տվեց իր քրոջը՝ Դոփին: Այդ մասին կա Վարդան վարդապետի մի վկայությունը. «Ի վեցհարիւր վաթսուն և երեք (1214) թուին զՀաթերք յԻւանէ տուին տեարք նորա, զի մեռաւ Վաղթանգ բուն տէր նորա և որդիք իւր տարաժամ, և միւս Վաղթանգ Սակռեանց, փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչենոյ»[14]: Այս վկայությունը կարևոր է երկու առումով. նախ որ Հաթերքի և Ներքին Խաչենի Վախթանգների միջև չկա ազգակցական կապ և ապա Սակոյաններ կոչվել են Ներքին Խաչենի իշխանները: Սակայն Բ. Ուլուբաբյանը, որպեսզի իրական դարձնի Ծարի և Ներքին Խաչենի իշխանական տների ազգակցական կապը, Վարդան վարդապետի խիստ պարզ ու հասկանալի միտքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Մենք հակված ենք Վարդանի «միւս Վաղթանգ Սակռեանց»-ի մեջ «միւս»-ը վերագրել ոչ միայն Վախթանգին, այլև «Սակոյանց»-ին, որով կհաստատվի, որ Վերին Խաչենի ճյուղը ևս հնում կոչվում էր Սակոյանց, կամ Ներքին Խաչենի ճյուղից հատվածվել է Սակո Նախնուց սկսած»[15]:

13 «Դիվան», պրակ V, էջ 139, Մ. Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 204, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 356:

14 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», ի Վենետիկ, 1862, էջ 140:

15 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 158:

Վարդան վարդապետի վկայությամբ՝ Բ. Ուլուբաբյանի կատարած «վերահաստատությունը» տեղին չէ և նպատակ ունի կապ ստեղծել Դոփյանների ու Սակոյանների միջև։ Ինչպես տեսանք վերևում, ոչ Հովհաննեսը և ոչ էլ Հասանն իրենց արձանագրություններում (1204 թ.) չեն հիշատակում, որ իրենք ունեցել են Վախթանգ անունով հայր և Սակո անունով եղբայր։ Ինքը՝ Սակոն էլ, 1216 թ. թողած իր արձանագրությունում չի հիշատակում, որ ունեցել է Հովհաննես և Հասան անուններով եղբայրներ. «Թվին։ ՈԿԵ։ (1216). ես Սակո որդի Վախտանգա կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հոգո իմո և ետու զԹ՟ըեկրա այգին իւր հողով և կատապանաւ և Եղնանատին երկիրն ի սուրբ Գրիգոր Բերդաձորա և զԽախերին Մատաղիսն, և զձարեցանց երկիրն և։ ։Ա։ ջաղաց ի ժամատան բե հոգո. փրկութիւն ամուսնո իմո, ի հայրապետութեանն տէր Յոհաննիսի»[16]։ Սակոյի այս արձանագրությունը գտնվում է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի մոտ կանգնեցրած մի խաչքարի վրա։ Նա մի արձանագրություն էլ թողել է Բերդաձորի ս. Գրիգոր եկեղեցին կառուցելու կապակցությամբ. «Թվին ։ՈՀԳ։ (1224) էր. ես Սակո, որդի Վախտանգ/ա, եղբայր Հասանա շինեցի զեկեղեցիս և /ե/տու զորդի իմ զԳրիգորի/ս սպասաւոր...»[17]։ Սակոյի այս երկու արձանագրությունները գրվել են Դոփի ամուսին Հասանի մահից բավական հետո, երբ Դոփը, որպես Ծարի իշխանության իրավական գործերը վարող, ձեռք էր բերել մեծ համբավ։ Իսկ 1214 թ. Վախթանգի մահից հետո, ինչպես վերը ասվեց, Հաթերքի տիրույթները տրվել են Իվանեին, որն իր հերթին դրանք հանձնել է իր քրոջը՝ Դոփին և նրա որդիներին։ Ահա այս ժամանակներից էր, որ գրավոր աղբյուրներում Ծարի իշխանազուններն իրենց կոչեցին Դոփյաններ։ Հետևապես, եթե Սակոյի եղբայր Հասանը Դոփի ամուսին Հասանը լիներ, ապա Սակոն այդ իրողու-

16 «Դիվան», պրակ V, էջ 114—115։

17 Նույն տեղում, էջ 116։

թյունն անպատճառ կարձանագրեր։ Այս ամենից կարելի է հետևեցնել, որ Սակոյի զույգ արձանագրությունում հիշատակված Հասանն ու Սակոն Դոփի հետ չեն առնչվում և չեն կարող լինել նրա ամուսինն ու տագրը։ Մեր այս կարծիքը հաստատում է նաև Սակոյի որդի Գրիգորիսի՝ ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային պատի 1281 թ. արձանագրությունը, ուր Գրիգորիսը չի հիշատակում Դոփյանների հետ իր ազգակցական կապի մասին. «Յիշխանութեան բարեպաշտ ար/քա/ին Ջալալ Դաւլին եւ որդի իւր/ո/յ Իւանոյ Աթաբակին, ես Գրի/գորի/ս, որդի Սակոյի վերստին շինեցի զեկեղեցիս ի թուիս։ ՉԼ(1281)...»[18]։

Խնդրո առարկա ժամանակաշրջանում, ինչպես վկայում են արձանագրությունները, Վաղուհաս և Բերդաձոր գյուղերը պատկանում էին Հասան-Ջալալյաններին։

Բ. Ուլուբաբյանի կազմած տոհմածառի Առանշահիկների ճյուղում կա XI դ. երկրորդ կեսին ապրած մի Վախթանգ-Սակո, որի որդիներն են Գրիգորը և Հասան կրոնավորը (1142—1182)։ Սրանց ենթադրաբար կցված են Հասան Ծարեցին, Հովհաննես եպիսկոպոսը և Սակոն[19]։ Համանաբար Բ. Ուլուբաբյանը երկմտությամբ է Հասան Ծարեցուն, Հովհաննես եպիսկոպոսին և Սակոյին համարում Վախթանգ-Սակոյի որդիներ։ Հաթերքի ճյուղը նա սկսում է այս Վախթանգ-Սակոյով, որի զավակներն են Հասանը (կրոնավորը), Գրիգորը, Սմբատը և Վահրամը[20]։ Այս ճյուղագրություններում նրանց այլևս ենթադրաբար կցված չեն Հասան Ծարեցին, Հովհաննես եպիսկոպոսը և Սակոն։ Հաթերքի ճյուղում կան Վախթանգներ, որոնցից ոչ մեկը, սակայն, Հասան Ծարեցու և Հովհաննես եպիսկոպոսի հայրը չէ, իսկ Բ. Ուլուբաբյանի կազմած Ծարա ճյուղը սկսվում է XII դ. ապրած

18 Նույն տեղում։ Արձանագրությունում Հասան-Ջալալը հիշվում է որպես ապրող, սակայն հայտնի է, որ Հասան-Ջալալը սպանվել է 1261 թ.՝ Արղունի կողմից։

19 Տե՛ս Բ. Ուլուբաբյան, նշված աշխատության տոհմածառը։

20 Տե՛ս նույն տեղում։

ումն Վախթանգով, որը համարվում է Հասան Ծարեցու. Հովհաննես եպիսկոպոսի և Սակոի հայրը[21]: Սակայն, ինչպես արդեն տեսանք, արձանագրություններով դա չի հիմնավորվում և ապացուցվում: Այսպիսով, ինչպես պարզվում է սկզբնաղբյուրների համադիր քննությունից, Դոփի ամուսին Հասանը Սակո անունով եղբայր չի ունեցել: Իսկ թե ի՞նչ ծագում ուներ Դոփի ամուսին Հասանը, այս հարցին առայժմ դժվար է ճշգրիտ և վերջնական պատասխան տալ: Թերևս Հասանը զինվորական ծառայության մե՞ջ է եղել Զաքարյանների մոտ և աչքի է ընկել հավատարմությամբ ու քաջությամբ: Դրա համար էլ Զաքարյանները նրան արժանացրել են իրենց փեսայության պատվին և նորապսակներին, որպես բաժնեկալվածք, տվել Վերին Խաչենը: Միգուցե՞ Հասանը սերում է Վերին Խաչենի որևէ իշխանական ճյուղից, սակայն այս վարկածը ևս կարոտ է ապացուցման:

Ինչպես տեսանք, Հովհաննես եպիսկոպոսի Խադարվանքի արձանագրությունում ոչինչ չի ասվում նրա և Հաթերքի տերերի ազգակցական կապի մասին: Եթե Հասան և Հովհաննես եղբայրները սերած լինեին Հաթերքի Վախթանգյաններից, ապա նրանք և նրանց ժառանգները այդ մասին, կարծում ենք, կհիշատակեին, ինչպես վարվում էին առհասարակ Վախթանգյանները:

Հասան Ա-ի եղբայր Հովհաննեսը XII դ. 70—80-ական թվականներից սկսած աչքի ընկնող դեր է խաղացել եկեղեցական գործերում: Սևորդյաց ձորի 1178 թ. Գիրգոր վարդապետի կանգնեցրած խաչքարի արձանագրության մեջ Սանահնի վանքի առաջնորդ է համարվում Հովհաննեսը. «Եւ ի ՈԻԷ թուին, ես Գրիգոր վարդապետ քուերորդի պատրոնացն՝ նոր շինեցի զայցիս եւ կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Յովհաննիսի՝ վասն յիշատակի նորա և ինձ»[22]:

21 Տե՛ս նույն տեղում:

22 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 188:

Հովհաննես Ա-ն այն վարդապետների թվին էր՝ Մխիթար Գոշ, Իգնատիոս, Վարդան, Դավիթ Քոբայրեցի, Գրիգոր Մոնոնիկ և ուրիշներ, որոնք մասնակցեցին Զաքարեի կողմից հրավիրված եկեղեցական ժողովին և ստորագրեցին այն թղթերի տակ, որոնք պաշտպանում էին հայոց եկեղեցու նկատմամբ բյուզանդական եկեղեցու ոտնձգությունները: Կիրակոս Գանձակեցին, նկարագրելով այդ ժողովի հրավիրման պատմությունը, մասնակիցների թվում հիշատակում է նաև Հովհաննեսին՝ Սանահնի վանահորը, «որ էր զկնի մահուան վարդապետին Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին, սնուցող նոցուն իշխանաց»[23]: Ինչպես պատմիչն է հաղորդում, Հովհաննեսը երկրորդ անգամ է նշանակվում Հաղպատի առաջնորդ, մինչ այդ նա Հաղպատի առաջնորդն է եղել XII դ. 70—80-ական թվականներին:

Վերին Խաչենում, Սանահնում ու Հաղպատում Հովհաննես Ա-ի գործունեությունը հանգամանորեն քննություն է առել Բ. Ուլուբաբյանը և արել շահեկան լրացումներ[24]: Մեզ մնում է ասել, որ Հովհաննես Ա-ի մասին, իբրև Սանահնի և Հաղպատի առաջնորդ, աղբյուրներում կան բազմաթիվ հիշատակություններ, որոնք վկայում են նրա շինարարական և այլ գործերի մասին: Նրա մասին վերջին հիշատակությունը վերաբերում է 1221 թ. «Յամս աստուածազարդ թագաւորացս Թամարա եւ որդո իւրո Գէորգէ եւ Բ հարազատաց Զաքարէի եւ Իւանէի, հրամանաւ սոցա կոչեցա յեպիսկոպոսութիւն սուրբ աթոռոյս Հաղպատու: Ես Յոհանէս ի Խաչենո: Ներողութեամբ Աստուծոյ կացեալ իմ ամս բազում յառաջնորդութեանս սպասաւորեցի սրբոցս ի շինութիւն եւ յառաջադիմութիւն տանս Աստուծոյ: Նախ՝ ի ձեռն շինուածոց ի սբ Նշանս, ի մատենս, ի սպաս զարդուց, կաթողիկէս սալել եւ զգուռնս կազմել, զսբ Գրիգորն նորոգել, զգաւիթս շինել զգաւիթի սբ սեղանոյն եւ զԳ սբ Նշանս... ՈՀ (1221)»[25]:

23 Կիրակոս Գանձակեցի, էջ 171:

24 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 251—261:

25 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 180:

Հասանը վաղ է մահացել և քանի որ նրա զավակները փոքր էին, իշխանության գործերը վարել է Դոփը։ Նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց որդի Գրիգոր իշխանը նշանավոր դեմք էր Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքում, դարձյալ Դոփը օժտված էր մեծ իրավունքներով։ 1225 թ. Դոփը կառուցել է տվել Խադարի վանքի գավիթն ու մատուռը. «Թուին ՈՀԴ (1225) ես Դոփս, դուստր Սարգսի, քոյր Զաքարէի եւ Իվանէի շինեցի զգաւիթս եկեղեցույս եւ զմատուռս եւ տվի զաւետարանս եւ Յանկարա կուց երկիրն եւ զիմ հայկուզենաց մատաղիսն՝ յեկեղեցիս՝ իմ հոգոյ...»[26]։ Հաղպատի մոտ գտնվող Քառասնից վանքի անթվակիր մի արձանագրությունից պարզվում է, որ Դոփի հրամանով ոմն Ջամալարին միաբանել է վանքին. «...հրամանաւ պարոնայն և Դափին ես Ջամալարինս միաբանեցայ սբ. Քառասնիցս»[27]։ Դոփի մասին սկզբնաղբյուրներում վերջին տեղեկությունը վերաբերում է 1225 թ.։ Թե մինչև երբ է ապրել Դոփը, հայտնի չէ։ Նա թաղված է Հաղպատի վանքում, նրա տապանաքարին արձանագրված է. «Զաքարէի եւ Իւանէի քոյրն է Դափին»[28]։

Հասանը և Դոփն ունեցել են երկու որդի. Հովհաննես՝ Սանահնի, ապա Հաղպատի, իսկ վերջում Դադի վանքի եպիսկոպոս և իշխան Գրիգոր, որը մեծ դեր է խաղացել Վերին Խաչենի և Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքում։ Բ. Ուլուբաբյանը գրում է, որ Հասանի ու Դոփի զավակներից աղբյուրներում հիշատակվում են չորսը, Գրիգոր՝ եպիսկոպոս Հաղպատի, Հովհաննես՝ եպիսկոպոս Սանահնի, ապա Հաղպատի, Գրիգոր մեծ իշխանը և Գերգը կամ Գեորգը[29]։ Սակայն սկզբնաղբյուրների ուշադիր քննությունը մեզ բերում է այլ հետևության։ Աղբյուրներում հիշատակված Գրի-

26 «Դիվան», պրակ V, էջ 127։

27 Ս. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 118։

28 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 185։

29 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 160։

գոր վարդապետը, որին Բ. Ուլուբաբյանը համարում է Հասանի ու Դոփի որդին, թերևս Դոփի քրոջ՝ Ներգիսի որդեգրած զավակն է։ Այս Գրիգորին Հ. Ղրիմեցին, Ալ. Երիցյանը, Կ. Կոստանյանցը, Հ. Մանանդյանը[30] և ուրիշներ նույնացրել են Գրիգոր Տուտեորդի Խաչենցու հետ և նրան չեն համարում Հասանի ու Դոփի որդի։

Սևորդյաց ձորում Գրիգոր վարդապետը խաչքար է կանգնեցրել, որի արձանագրության մեջ հայտնում է, թե ինքը Զաքարեի և Իվանեի քրոջ որդին է։ Այդ արձանագրությունը Ս. Ջալալյանցը և Կ. Ղաֆադարյանը վերծանել են որոշ տարընթերցումներով. «Ես տէր Յօհաննէս տնկեցի զայս տնկարկս մեծաւ աշխատութեամբ և ի ՈԽԷ թուին ես Գրիգոր վարդապետ, քուէր որդի պատրոնացն նոր շինեցի զայգիս և կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Յովհաննէսի վասն յիշատակի նոցա և ինձ»[31]։ Կ. Ղաֆադարյանի վերծանածում չկա արձանագրության առաջին մասը. «Եւ ի ՈԻԷ թուին, ես Գրիգոր վարդապետ քուերորդի պատրոնացն՝ նոր շինեցի զայգիս եւ կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Յովանիսի՝ վասն յիշատակի նորա և ինձ»[32]։ Արձանագրության բովանդակությունը հաստատում

30 Հ. Ղրիմեցի, Պատմութիւն հռչակաւոր Վանից Հաղբատայ Սուրբ Նշանին, Վիեննա, 1865, էջ 86։ Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա. (1800—1832), Թիֆլիս, 1894, էջ 213, Կ. Կոստանեանց, Հայոց վանքերը, Մոսկվա, 1886, էջ 58, 60, Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 160։

31 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., մասն Ա, էջ 80։

32 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 188։ Արձանագրության թվականը Կ. Ղաֆադարյանը սխալ է վերծանել, ճիշտը Ս. Ջալալյանցի վերծանածն է՝ ՈԽԷ, որովհետև ՈԻԷ (1178) թ. Լոռին Զաքարյաններին չէր պատկանում։ 1185/1186 թթ. Թամար թագուհին Սարգիս Զաքարյանին նշանակեց ամիրսպասալար և նրան տվեց Լոռին («История восхваления венценосцев», груз. текст перевел, предисловием и примечаниями снабдил проф. К. С. Кекелидзе, Тбилиси. 1954, с. 41—42), Ա. Ի. Շահնազարյան, Վահրամյանների իշխանության պատմությունից (ՀՀ, ԳԱ «Լրաբեր», 1974, № 4, էջ 104—105)։

է, որ Գրիգոր վարդապետը նույնպես Զաքարեի և Իվանեի քրոջ որդին է, սակայն ո՞ր քրոջ: Իր տեսակետը հիմնավորելու համար Բ. Ուլուբաբյանը վկայակոչում է Դադի վանքի մի խաչքարի վրա Գրիգորի թողած արձանագրությունը. «Թվին: ՈԼ: 1181) ես Գրիգոր քուերորդի կանգնեցի զխաչըս եղբաւր իմո Գիորգա...»[33]: Արձանագրությունից պարզ չէ, թե ում քրոջ որդին է եղել այս Գրիգորը և չի նշվում նրա տոհմական պատկանելությունը, հետևապես անվերապահորեն նրան Դոփի և Հասանի որդի համարելը ճիշտ չէ: Բ. Ուլուբաբյանն իր տեսակետը հիմնավորելու նպատակով, ենթադրում է, որ քարի վրա տեղ չլինելու պատճառով քանդակողը չի գրել Զաքարեի և Իվանեի անունները: Անհավանական է նաև նրա այն միտքը, որ Գրիգոր վարդապետը եղել է Դադի վանքի հոգևորական, ուր կրթվել ու դաստիարակվել է[34]: Ո՞վ էր խնդրո առարկա Գրիգորը, նա Սարգիս ամիրսպասալարի ո՞ր դստեր զավակն է եղել: Անհրաժեշտ է պատասխանել այս հարցին: Հայտնի է, որ Սարգիս ամիրսպասալարի Նրջիս և Նանա դուստրերը ժառանգ չեն ունեցել և, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե Գրիգոր վարդապետին համարենք նրանցից մեկն ու մեկի որդեգրած զավակը, որովհետև սկզբնաղբյուրների ուշադիր քննությունը մեզ այդ իրավունքը տալիս է: Այսպես, Հառիճի վանքում Գրիգոր վարդապետի 1235 թվակիր արձանագրությունը և Հովհաննավանքում Նանայի թողած արձանագրությունը հնարավորություն են տալիս ոչ միայն պարզելու Գրիգորի ինքնությունը, այլև մեզ համար բացահայտում վաղամեռիկ ամուսինների հիշատակը որդությամբ պահելու հիասքանչ օրինակներ: Նրջիսը և Նանան երիտասարդ տարիքում զրկվելով իրենց ամուսիններից, զավակներ են որդեգրել և նվիրվել նրանց դաստիարակության ազնիվ ու հայրենանվեր գործին:

33 «Դիվան», պրակ V, էջ 211:

34 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 169:

Հառիճի վանքի արձանագրություններից մեկում կարդում ենք. «Ես Գրիգոր սնուցած մեծին Սարգսի դստերն Նրջիսին տուի ուխտարան զուգաւք ի սուրբ եկեղեցիս ողորմութեամբ... իմոյ եւ հաստատեցին ի տարին գ աւր պատարագ. բ աւրն ինձ եւ ա աւրն Բանուհաշխին ի թուիս ՈՁԳ (1234)»[35]: Այս արձանագրությունը հրատարակել է նաև Ս. Ջալալյանցը. «Ես Գրիգոր սնուցած մեծին Սարգսի դըստերն Նանայի...»[36]: Այս հարցում Սարգիս ամիրսպասալարի դստեր անվան տարընթերցումն էական նշանակություն չունի: Կարևոր այն է, որ, ինչպես պարզվում է արձանագրության բովանդակությունից, Գրիգոր վարդապետը եղել է Նրջիսի կամ Նանայի որդեգրած զավակը, որը վարդապետ է եղել Սանահնում ու Հաղպատում, եղել է նաև Հառիճի վանքի առաջնորդը: Այսպիսով, հերքվում է Բ. Ուլուբաբյանի այն միտքը, որ Գրիգորը եղել է Դադի վանքի հոգևորական:

Քույրերի և նրանց որդեգրած զավակների միջև ստեղծվել է ջերմ ու հոգեհարազատ փոխհարաբերություն: Այս իմաստով առավել խոսուն է Հովհաննավանքում Նանայի թողած արձանագրությունը. «...Ես Նանայս դուստր մեծ հազարապետին Սարգսի որդւոյ Զաքարէի որդւոյ Աւագ Սարգսի կանգնեցի ի վերա նորակերտ վարդապետիս Մարգարէի, որ ի սկիզբն աշակերտութեան իւրոյ որդիացաւ ինձ, եւ առաւել եղեւ քան զծնունդ յորովայնի, եւ հոգայր զաւգուտն հոգւոյ իմոյ»[37]: Ջերմ հարաբերություններ էին առաջացել նաև Գրիգորի և նրան որդեգրած Նրջիսի ու Նանայի միջև, որը և նրան հիմք էր տալիս իրեն համարելու «քուէր որդի պատրոնացն», այսինքն Իվանեի և Զաքարեի քրոջ որդի:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մեկ այլ կարևոր հանգամանքի վրա ևս: Հաղպատում թաղված Դոփյան իշխանական տան ժառանգների տապանաքարերի արձանա-

35 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 162:

36 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 214:

37 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 175:

գրություններից անհերքելիորեն հաստատվում է նրանց պատկանելը Դոփյաններին և ազգակցականությունը Զաքարյանների հետ։ Այսպես, «Զաքարէի եւ Իւանէի քվերորդին Յովհաննէ(է)ս եպիսկոպոս տեղոյս»[38], կամ «Զաքարէի եւ Իւանէի քոյրն է Դուփն»[39]։ Դոփի և Հովհաննեսի շիրիմներին կից է Գրիգորիսի շիրիմը, որին Բ. Ուլուբաբյանը համարում է Հասանի և Դոփի որդի[40], սակայն նրա տապանաքարին արձանագրված է երկու բառ. «Տէր Գրիգորէս»[41]։ Նույն շարքում գտնվող տապանաքարերից մեկի վրա արձանագրված է. «Տէր Գրիգորէսի եղբայրն»[42]։ Ինչպես տեսնում ենք, տեր Գրիգորիսի և նրա եղբոր տապանագրերում ոչինչ չի ասվում Զաքարյանների հետ նրանց ազգակցական կապի մասին։ Խորապես համոզված ենք, եթե այդ կապը իրական լիներ, ապա անպատճառ, որևէ ձևով կնշվեր, ինչպես դա արվել է նրանց արյունակից ազգակիցների տապանագրերում։

Հետևապես, փաստերի համադիր քննությունից պարզվում է, որ Հասան Ա-ն և Դոփը ունեցել են երկու որդի՝ Հովհաննես և Գրիգոր։

Դոփի հետ իշխանության գործերը վարած և նրան հաջորդած Գրիգոր իշխանի մասին առաջին հիշատակությունն առայժմ վերաբերում է 1224 թ.։ Այդ թվականին Հասանի որդի Գրիգորը Դադի վանքին է նվիրել չորս տուն շինական[43]։ Սակայն Բագրատ Ուլուբաբյանը գրում է, որ Գրիգորի մասին առաջին տեղեկությունը վերաբերում է 1220 թվականին[44], և իր ասածը հաստատելու համար վկայակոչում է Խադավանքի 1220 թվականի մի կեսեղծ արձանագրությունը։ Ինչպես գրում է Բ. Ուլուբաբյանը, արձանագրությու-

38 Կ. Ղաֆադարյան, *Հաղբատ*, էջ 184։

39 *Նույն տեղում*, էջ 185։

40 Բ. Ուլուբաբյան, *նշվ. աշխ.*, էջ 160, 162։

41 Կ. Ղաֆադարյան, *Հաղբատ*, էջ 184։

42 *Նույն տեղում*, էջ 189։

43 *«Դիվան»*, պրակ V էջ 201։

44 Բ. Ուլուբաբյան, *նշվ. աշխ.*, էջ 229։

նը ինքն արտագրել է վանքի զանգակատան խորքի պատի մեջ գտնվող Գրիգոր իշխանի կանգնեցրած խաչքարից, որով նա հաստատում է իր ընծաները վանքին։ «Թ. ՈԿԹ» (1220) «Ես Գրիգոր որդի Հասանա||տվի Զարհի այգին||... տ||վի Խադարա վանս... Ե(5)ար... իմ հոգոյ||ով խափանէ...»[45]։ Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ եթե հիշյալ Գրիգորը Հասանի ու Դոփի որդին լիներ, ապա այդ մասին անպատճառ արձանագրությունում կհիշատակեր, մեզ մնում է անըքվագն զարմանալ, թե ինչպես խաչքար կանգնեցնող և արձանագրությունը գրել տվող Գրիգորի հոր Վահրամ անունը Բ. Ուլուբաբյանը դարձրել է Հասան։ Ահա այդ արձանագրությունը վաստակաշատ վիմագրագետ Ս. Բարխուդարյանի ընթերցմամբ. «Թվին։ ՈԿԹ։ (1220), Ես Գրիգոր, որդի Վարհամա [sic] տվի զԱրեւհատանց երկիրն Գորստափին այգին, տվի ի Խադարի վանս, տարումն :Ե: ար ժամ իմ հոգոյս արաբայք սբ. Գորգին»[46]։ Ս. Բարխուդարյանն արձանագրությունն արտագրել է ոչ թե զանգակատան խաչքարից, այլ եկեղեցուն կից կառուցված մատուռի արևմտյան պատից[47]։ Խադավանքի զանգակատան պատերից Ս. Բարխուդարյանն արտագրել է ընդամենը երկու արձանագրություն, որոնք անթվակիր են և ունեն բոլորովին այլ բովանդակություն[48]։

Խաչքարի խաչի թևերի տակ փորագրված է թվականը, իսկ խաչի ներքևում՝ արձանագրությունը, ուր հստակ ընթերցվում է «Ես Գրիգոր, որդի Վարհամա»։

Այսպիսով, ինչպես պարզվում է սկզբնաղբյուրների համադիր քննությունից, Խադարի վանքի մատուռի պատի խաչքարի 1220 թ. արձանագրությունում հիշատակված Գրիգորը Հասան Ա-ի և Դոփի որդին չէ, նրանք նույն անունով երկու որդի չէին կարող ունենալ։

45 *Նույն տեղում*, էջ 230։

46 «Դիվան», պրակ V էջ 126։

47 *Նույն տեղում*։

48 *Նույն տեղում*, էջ 127—128։

XIII դ. 20—30-ական թվականների Հայաստանը ենթարկվեց թաթար-մոնղոլների արշավանքներին: Զաքարյաններն ու նրանց ենթակա հայկական իշխանական տները, այդ թվում նաև Դոփյան իշխանները, հպատակություն հայտնեցին թաթար-մոնղոլներին և մասնակցեցին նրանց արշավանքներին: Վերջիններիս գործած ավերածությունների ու դաժանությունների մասին սրտի ցավով է խոսվում Գրիգոր իշխանի 1244 թ. ստացած ավետարանի հիշատակարանում. «...ի սուր սուսերի մատնեցին զազգն քրիստոնէից, զիշխանսն մեծամեծս և զռամիկ ժողովրդականս և... բզպատառս սրբոյ եկեղեցւոյն Աստուծոյ, զդասս քահանայական, զմիայնակեցունսն և զճգնաւորս, տապալեալ և քանդեալ զեկեղեցիս և զպաշտօն սրբութեան և զնշանս տէրունական յաւար առեալ անարգեցին»[49]: Գրիգոր իշխանը մասնակցել է Բաչու-նոյինի 1242 և 1243 թթ. դեպի Արևմտյան Հայաստան կատարած արշավանքին, որը բազմապիսի փորձություններ պատճառեց հայ ժողովրդին[50]: Գրիգոր իշխանի վկայությամբ թաթար-մոնղոլները նվաճված գավառների իշխաններին ու հեծելազորին տանում էին իրենց հետ և օգտագործում հիմնականում որպես առաջապահ ուժեր. «Եւ ապա սակաւիկ մի թողացուցեալ նահանգիս մերոյ և նուաճեալ ի ծառա/յ/ութիւն եւ ընքեանց զիշխանս և զհեծելազաւրս ընդ ինքեանս տանէին ուր և երթային. ընդ որս և գրաւեցայ ես՝ Գրիգոր՝ որդի Հասանայ և Դոփին, քուերորդի սպարապետացն Հայոց և Վրաց՝ Զաքարիայի և Իւանէի, և անկեալ ընդ նոցին իշխանութեամբ, որ և եհաս մեզ գնալ... /յաշխարհն/ Հայոց և Հոռոմոց»[51]: Արևմտյան Հայաստանի գյուղերն ու քաղաքները նվաճող թաթար-մոնղոլները հափշտակում էին ինչ որ պատահում էր՝ թանկարժեք իրեր, ձեռագիր մատյաններ, եկե-

49 Գարեգին կաթողիկոս, Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա, էջ 959:

50 Նույն տեղում, էջ 959, Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 278—280:

51 Գարեգին կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 959:

ղեցական սպասքներ և այլ սրբություններ ու դրանք հետագայում վաճառում հայերին՝ իրենց համար ստեղծում եկամուտի և հարստանալու աղբյուր: Գրիգոր իշխանը գրում է, որ այդ արշավանքների ընթացքում գնել է «Տաւնականն և միւս այլ Տաւնական... Ճաշոցն և զԱւետարանն և զաջն սրբոյն Ստեփաննոսի, զոր ի քաղաքէն Կանու բերաք և տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի վանիցս»: Հիշատակարանի վերջում Գրիգորը գրել է. «...յիշեցէք առաջի զենման Քրիստոսի զիս՝ զԳրիգոր և զամուսին իմ զՄա... /մք/ան և զհարազատ որդիքս իմ՝ զՀասան և... զՅոհաննէս...»[52]: Կարևոր է, որ Գրիգորի կողմից փաստարկվում է, որ ինքը և Մամքանը ունեցել են երկու որդի՝ Հասան և Հովհաննես:

Գրիգոր իշխանն ինչպես իր հայրենակիցների, այնպես էլ մոնղոլների շրջանում օգտվում էր մեծ հեղինակությունից:

1258—1260 թթ. դեպի Բաղդադ և Միջագետքի մյուս շրջաններ Հուլավուի արշավանքին մասնակցում էին նաև հայ իշխանների զորքերը՝ Պռոշ իշխանի ընդհանուր հրամանատարությամբ: Ինչպես հաղորդում է Վարդան պատմիչը, Մուֆարղինի պաշարման ու գրավման ժամանակ, որը տևեց երկու տարի, սպանվում է «գեղեցիկ երիտասարդն Սևադա Խաչենեցին, որդի մեծ իշխանին Գրիգորի»[53]: Ուսումնասիրողներից շատերը՝ Հ. Մանանդյան, Լ. Բաբայան, Բ. Ուլուբաբյան և ուրիշներ Սևադային համարում են Գրիգորի որդին[54]: Այդ կարծիքը պաշտպանել է նաև տողերիս հեղինակը՝ Դոփյաններին նվիրված մի հոդվածում[55]:

Սակայն Գրիգոր իշխանն իր ինքնագիր հիշատակարանում հիշատակում է միայն իր երկու որդիներին՝ Հասանին

52 Նույն տեղում, էջ 960:

53 Վարդան Վարդապետ, նշվ. աշխ., էջ 152:

54 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., հ. Գ, էջ 246, Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 273, Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 233:

55 Գ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 218:

և Հովհաննեսին: Ահա թե ինչու անվերապահորեն պետք չէ ընդունել, որ Սևադան Գրիգորի որդին է: Հավանաբար Սևադան խաչենցի մեկ այլ Գրիգորի որդին է, մանավանդ, որ այդ ժամանակ Հաթերքում կար Գրիգոր անունով մեկ այլ իշխան:

Թե մինչև երբ է Գրիգորը եղել Դոփյան իշխանության գահերեց իշխանը, դժվար է կոնկրետ որոշել: Հավանաբար նա ապրել է մինչև 1279/80 թ.: 1279 թ. Ծարի սուրբ Սարգիս մայր եկեղեցին շինողներ Օհան երեցը և Օհաննեսը հայտնում են, որ եկեղեցին կառուցել են «ի հայրապետութի. տր. Աթ/անասի. ի պարոնութի. Դոփին որդ/ոյն...»[56]: Ճիշտ է, չի հիշատակված Գրիգոր անունը, սակայն դժվար չէ կռահել, որ Դոփի որդի պարոնը Գրիգորն է:

Գրիգորի և Մամքանի որդիներից Հովհաննեսը դարձավ հոգևորական և որպես Հաղպատի առաջնորդ փոխարինեց իր հորեղբորը՝ Հովհաննես Բ-ին: Նա մինչև դարի վերջը պաշտոնավարել է Հաղպատում, ապա վերադարձել Ծար, իր եղբոր՝ Հասանի մոտ և 1301 թ. հիմնադրել Ս. Աստվածածին վանքը: Այդ մասին նա թողել է ընդարձակ արձանագրություն[57]: Հովհաննես Գ-ի կյանքին ու գործունեությանը հանգամանորեն անդրադարձել են Գ. Հովսեփյանը և Բ. Ուլուբաբյանը[58]: Մեզ մնում է ասել, որ նա մահացել է 1305 թ. և թաղվել Դադի վանքում: Նրա տապանաքարին արձանագրված է. «...Դադէի և խաղաի/ աթոռակալն տէր Յոհաննէս/, եղբայր քաջ զաւրականին /Հասանա արքաշնորհ իշխա/նին, հաւրն գինվորին Գրի/գորո աղաչեմ յիշեք ի քարին. Թվ. ՉԾԴ: (1305)»[59]:

56 «Դիվան», պրակ V, էջ 218:

57 Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 407—408, «Դիվան», պրակ V, էջ 224:

58 Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ..., հ. Բ, էջ 69—71, Բ. Ուլուբաբյան, Ծարեցի իշխանազունները Հաղպատ և Սանահին վանքերի առաջնորդներ, «Էջմիածին», 1974, ԺԱ, ԺԲ, նշվ. աշխ., էջ 262—264:

59 «Դիվան», պրակ V, էջ 214:

Գրիգորին հաջորդել է ավագ որդին՝ Հասան Բ-ն: Ժամանակակիցների վկայությամբ Հասան Բ-ն եղել է քաջ զինվորական և մեծ դեր է խաղացել Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքում: Մոնղոլների վարած պատերազմներին ակտիվ մասնակցելու համար Հասան Բ-ն իր ծառայության դիմաց, որպես պարգև քաջության՝ հետ է ստացել իր հայրենի կալվածքներից Ծարը:

Հասանի կինը եղել է Մամքանը՝ Ամբերդի Քուրդ իշխանի դուստրը: Այդ երևում է Մամքանի թողած բազմաթիվ նվիրատվական արձանագրություններից: Նրա գերեզմանաքարի վրա արձանագրված է. «Այս է հանգի/ստ Մամքանի/ն, ամուսնո Հասանա, դստե/ր Քրդին և խոր/իշահի, մաւր/ Գրի/գորո. աղա/չեմ յիշել ի քարի. Թվ. Չ—Դ»[60]: Ս. Բարխուդարյանը տողատակի ծանոթագրության մեջ իրավացի սխալ է համարում Մ. Բարխուտարյանցի՝ ։ՉԽԷ։ և Տեր-Մովսիսյանի՝ ։Չ։ մահվան տարեթվերի ընթերցումները և գտնում, որ տառանավորի թվականը պետք է լինի։ Կ։[61]:

Մենք պաշտպանում ենք Ս. Բարխուդարյանի կարծիքը, քանզի այն հաստատում է Դադի վանքում Մամքանի թողած արձանագրության թվականը՝ «Աւգնութբ. այ. ես Մամքան, ամուսին արիական/ին Հասան եւ որդի մեր Գրիգոր ատէրք գոլով տեղւոյս հ/այրենուսց եւ մեր պարոնէքն հաստատեցին ի ։ՉԾԶ։ (1307) թվին»[62]: Բ. Ուլուբաբյանը քննության առնելով Մամքանի մահվան թվականի հարցը և անտեղյակ լինելով վերը նշված փաստին, անում է չհիմնավորված զատողություններ[63]:

Մամքանը 1307 թ. Դադի վանքի գմբեթավոր եկեղեցում իր որդի Գրիգորի հետ արձանագրություն են թողել. «...Ես Մամքան, ամուսին արիականին Հասանա եւ որդի

60 Նույն տեղում:

61 Նույն տեղում:

62 Նույն տեղում, էջ 206:

63 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 242—243:

մեր Գրիգոր...»[64]։ Ինչպես տեսնում ենք, 1307 թ. Մամքանը դեռևս ապրում էր։ Ս. Բարխուդարյանը ևս այս հարցում շփոթության մեջ է։ Մի դեպքում Մամքանի մահվան տարին համարում է 1298 թվականը[65], մյուս դեպքում 1312 թվականը[66]։

1307 թ. արձանագրության շարունակությունն է կազմում Գրիգորի արձանագրությունը, որը նա թողել է 1312 թ.՝ Մամքանի և կնոջ՝ Ասփայի հիշատակին Դադի վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ. «Ես Գրիգոր տվի դՋագունանց հողերն զմեր բաժին իր լշրեցովն, որդի իմ տր. Սարգիս եւ միաբանքս սահմանեցին տր. ըՍտեփանոսի տանին ժամն, որ լինի իմ մարն եւ ամուսնո իմ Ասփային... թվին. ։ՉԿԱ։ (1312)»[67]։ Ուրեմն, Մամքանը ապրել է բավականին երկար և մահացել է 1307—1312 թթ. միջոցում։

Բ. Ուլուբաբյանը սխալվում է, երբ գրում է, թե «Մամքանը իր նվիրատվությունների մասին արձանագրություններ է թողել 1267-ին ու հետագա թվականներին»[68]։ Իբրև իր ասածի հավաստում վկայակոչում է Դադի վանքի Մամքանի արձանագրությունը՝ վանքին «...զՄովսաեղ, զՋաջուռանց, զՁոլբեկանց» հողատարածքները նվիրելու մասին և հենվելով նախորդ հետազոտողներին, արձանագրության թվականը վերծանում է ՉԺԶ (1267)[69], որը, ինչպես արդեն տեսանք, ճիշտ չէ։

Հասան Բ-ի մասին գրավոր առաջին տեղեկությունը, որպես տեղի իշխանի առայժմ վերաբերում է 1276 թ.։ Դա Ձագի (Սոդք) եկեղեցու կառուցման վերաբերյալ արձանագրությունն է. «Թվ. «ՉԻԵ։ (1276) ի թագաւորութի. Աբ/ա-

64 «Դիվան», պրակ V, էջ 206։
65 Նույն տեղում, պրակ IV, էջ 318։
66 Նույն տեղում, պրակ V, էջ 215։
67 Նույն տեղում, էջ 206—207։
68 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 243։
69 Նույն տեղում, էջ 239։

ղին, կաթողիկոսու/թի. տր. Ստեփանոսի, պա/րոնութի. Հասանա, /ազնականութի. ամուսին իւրո/ Մամքանին...»[70]։

Դաշքենդ գյուղի Ս. Գևորգ և Ս. Աստվածածին եկեղեցիների արձանագրություններում Հասանի և Մամքանի հետ հիշատակվում են Գրիգորը և Ասփին։ Երկու արձանագրությունները էլ անթվակիր են։ Հետազոտողները իրավամբ գտնում են, որ դրանք գրվել են Հասանի մահից (1287) առաջ[71]։

Այս արձանագրությունների բովանդակությունից կարելի է հետևեցնել, որ Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրությունը գրվել է ավելի վաղ։ Դրա համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ չկա Ասփայի՝ Գրիգորի կնոջ անունը, իսկ Գրիգորը հիշատակվում է որպես պատանի. «...ի աշխարհակալութ. Ապաղա ղանին, իշխանութ. մեծին Հասանա եւ Մամքանա/ եւ ատախանշան որդոյն Գրիգորի...»[72]։ Ս. Գևորգ եկեղեցու արձանագրությունից պարզվում է, որ Գրիգորը, որն արդեն ամուսնացած էր, հանդես է գալիս իր հոր՝ Հասանին հավասար իշխանությամբ. «...իշխանութի. Հասանա ու Մամքանի/ին, Գրիգոր եւ Ասփէին...»[73]։ Հասանի և Գրիգորի համիշխանությամբ հանդես գալու փաստը կարելի է մեկնաբանել Հասան Բ-ի առաջացած տարիքով կամ մարմնական տկարությամբ։ Սակայն Բ. Ուլուբաբյանն այս խնդրի մասին խոսելիս անհիմն կասկածի տակ է առնում արձանագրությունը արտագրողների (Ջալալյանց, Ալիշան, Լալայանց) անսխալությունը և կամ էլ ենթադրում է, որ «Դոփյանների իշխանության մի այսպիսի հախուռն բաժանում կատարել են միաբանները՝ այդ իշխանությունից բա-

70 «Դիվան», պրակ IV, էջ 328, Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 112, Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 629։
71 «Դիվան», պրակ IV, էջ 315, 317, Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 239։
72 «Դիվան», պրակ IV, էջ 317։
73 Նույն տեղում, էջ 315։

ժին հանելով Մամքանին ու Աափեին»[74]: Նախ նկատենք, որ արձանագրության բովանդակությունից ամենևին չի երևում, որ միաբանները կատարել են իշխանության բաժանում և ապա արձանագրություններում բաց կարգի, ինչպես միշտ է կատարվել, թվարկված են իշխանական տան ներկայացուցիչները: Գրիգորը մեծ ակնածանքով, հպարտությամբ ու սիրով է վերաբերվել իր հորը: Դա մենք տեսնում ենք Ծարի Ս. Սարգիս մատուռի մուտքի հարավում կանգնած խաչքարերից մեկի 1289 թ. արձանագրությունից. «Թվիս հայոց ։ՉԼԸ։ (1289)... ես Գրիգոր որդի Հասանայ, քաջ և հաղթող զաւրավարին և մեծի իշխանին Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Ծողգաձո և այլ բազում գաւառաց, կանգնեցի զխաչս ի դեղիս, որ կոչի Ծար, սիրելոյն հաւրն իմոյ հայրենիք և պարգև քաջութեան»[75]: Հասանի կատարած գործերը, հայրենասիրությունն ու քաջագործությունները նրա մահից հետո էլ հիշվել են երկար ժամանակ և ներկայացվել բնորինակելու արժանի: Խաչատուր Կեչառեցին 1295 թ. գրած իր «Ողբ վասն աւերման տանս Արևելեան» չափածո երկում գրում է.

«ԶՀասանն յիշեմ բղխաչենցի,
Որ մականունն էր Ջալալ-Դօլի,
Զմիս Հասանըն՝ զորդի Դօփի,
Զհաւատարիմն և զերկիւղալի:
Հանց ուժընդակ էր ինքն յառենի
Քան զՔրիստոսի նշանն ի բեմբի:
Աւաղ, թէ զո՞րն ասեմ ի լալի,
Զայն հին ու նորքն ի գերեզմանի»[76]:

Հասան Բ-ի մահվան թվականի վերաբերյալ կան տարբեր ենթադրություններ: Կարապետ եպիսկոպոսը կարծում է, որ Հասան Բ-ն մահացել է 1289 թ., և իշխանությունն անցել է Գրիգորին[77]: Գ. Հովսեփյանը Հասան Բ-ի մահը դնում է 1289—1294 թթ. միջոցում, նկատի ունենալով Խ. Կեչառեցու երկի 1295 թ. գրված լինելը[78]: Հասան Բ-ի մահվան թվականը Բ. Ուլուբաբյանը դնում է 1287 թ.՝ հիմք ընդունելով Ստեփանոս եպիսկոպոսի ժամանակագրությունը[79]: Իսկապես Հասան Բ-ն մահացել է 1287 թ.: «Զմեռն խիստ եղև: Մեռան մեծ իշխանք խաչէն՝ Աթաբակ, որդի Ջալալին և Հասան, թոռն Դաւիթին, և ապա մեռաւ Ճարն ի Տփխիս»[80]:

Բ. Ուլուբաբյանը գտնում է, որ Հասան Բ-ն ունեցել է նաև Աթանաս անունով մի որդի, որը եղել է Դադի վանքի առաջնորդը[81]:

Տեր Աթանասը հիշատակված է Դադի վանքի գմբեթավոր եկեղեցու, Գրիգոր տնտեսի անթվակիր արձանագրությունում. «...Ես Գրիգոր տնտես հրամանաւ տն. Աթանասի»[82], ինչպես նաև Սասնա ձեռնավորի 1261 թ. արձանագրությունում. «...Ես Սասնա ձեռնաւոր միաբանեցա սբ. ուխտիս / առաջնորդութբ տր. Աթանասի, ... ։Չժ։ (1261)[83]: 1263 թ. Աթանասը հիշվում է ոմն Ներսեհի արձանագրությունում. «ՉԺԲ։ (1263)... ես Ներսէհ... միաբանեցա սբ. ուխտիս տր. Աթանաս եւ միաբանքս հաւատացին/...»[84]: Դադի վանքի գմբեթավոր եկեղեցու անթվակիր մի արձանագրության բովանդակության համաձայն ոմն Հոհան Աթանասի առաջնորդության ժամանակ միաբանել է եկեղեցուն[85]: 1265 թ. Դադի վանք է այցելել Օրբելյան Սմբատ իշխանը

74 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 241:
75 Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 405, «Դիվան», պրակ V, էջ 222:
76 Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958, էջ 132:

77 Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 65:
78 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք... մասն երկրորդ, էջ 39:
79 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 240:
80 «Մանր ժամանակագրություններ», հ. Ա, էջ 48:
81 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 243:
82 «Դիվան», պրակ V, էջ 204:
83 Նույն տեղում, էջ 205:
84 Նույն տեղում:
85 Նույն տեղում, էջ 208:

և վանքին նվիրել այգի, ձիթհանք և Կանաչավոր գյուղը, «...Ես Սմպատ իշխան, /որդի մեծին Լիպարտի, միաբանեց/ա սբ. ուխտիս Դադու վանից, առաջնորդութբ. տր. Աթանաս/ին... Թվին: ։ՉԺԴ։ (1265)»[86]: 1271 թ. գմբեթավոր եկեղեցու բեմի կորության վրա՝ պատուհանի մոտ, արձանագրություն է թողել Ամիր Հասանի որդի Էաչին, իր մոր՝ Մամքանի հետ, վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ. «...տր Ա/թանաս ետ ինձ պատարագ զամէն եկեղեցիքս... թվին ՉԻ (1271)»[87]:

Մենք ծաղկաքաղ կատարեցինք Դադի վանքի առաջնորդ Աթանասի անունը հիշատակող բոլոր արձանագրություններից, որպեսզի պարզ դառնա, որ նվիրատվություն կատարողներից ոչ մեկը նրան չի համարում Հասան Բ-ի որդի: Ինչպես տեսանք Հասան Բ-ի կին Մամքանը և որդի Գրիգորը թողել են բազմաթիվ գրավոր հիշատակություններ, սակայն ոչ մեկում չեն նշել, որ ունեցել են Աթանաս անունով որդի և եղբայր: Հետևապես, Աթանասին Հասան Բ-ի որդի համարելը, կարծում ենք ճիշտ չէ: Ճիշտ է, Աթանասը երկու գեղեցիկ խաչքար է կանգնեցրել Դադի վանքի զանգակատանը, որոնցից մեկի արձանագրության մեջ ասում է, որ ինքը Հասանի որդին է, սակայն դա բավարար կռվան չէ Աթանասին Հասան Բ-ի որդի համարելու համար: Եթե Աթանասը, Հայաստանում մեծ հռչակ ունեցող Հասան Բ-ի որդին լիներ, ապա արձանագրության մեջ կարտահայտվեր, ինչպես դա երևում է Հասանի կնոջ՝ Մամքանի և որդու՝ Գրիգորի արձանագրություններից՝ «հաղթող զորական», «արիական», «քաջ և հաղթող զաւրավար», «մեծ իշխան» և Հասանի գործին ու անձին համար այլ պատվո տիտղոսներ: Իսկ Աթանասի արձանագրության մեջ դրանք չկան: Համոզվելու համար բերենք Աթանասի կանգնեցրած խաչքարի արձանագրությունը. «Զտր. Աթանաս յիշեցիք ի քս. /Էին այ. դաւթերն. ես տր. Աթանաս, որդի Հասանա, առաջնո/րդ սբ. ուխտիս կանգնեցի զսբ. նշանս յիշատակ հոգո իմ. /թիվն Հայոց ։ՉԼԲ։ (1283)»[88]: Այս խաչքարի կողքին կանգնեցրած նմանատիպ խաչքարի վրա. «Տր/. Գրիգոր սնուցող տր. Աթանասի յիշեցէք»[89]: Կարծում ենք, որ գոնե Աթանասի դաստիարակ Գրիգորը կհիշատակեր, որ Աթանասը մեծ Հասան Բ-ի որդին է: Ամենևին պետք չէ տարակուսել, որ Դադի վանքի առաջնորդ Աթանասը եղել է մեկ այլ Հասանի որդի, միգուցե Հաթերքի ճյուղի Հասանի որդին է, որը ապրել է հենց այս ժամանակներում:

Բ. Ուլուբաբյանը, հավանաբար ընդօրինակելով Մ. Բարխուտարյանցին, վերը բերված 1271 թ. արձանագրության հեղինակներ համարում է Պռոշյան-Խաղբակյան Ամիր-Հասանի որդի Աշոտին ու նրա մայր Թաճերին[90]: Հայտնի է, որ Պռոշյան-Խաղբակյան իշխանական տան պայազատների մեջ Աշոտ անունով իշխանազուն չկա: Այդ արձանագրությունը Դադի վանքի գմբեթավոր եկեղեցու բեմի կորության վրա թողել է մեծ իշխան Պռոշի թոռ Էաչին, իր մոր՝ Մամքանի հետ. «...Ես Էաչի, որդի Ամիր Հասանա, որդո մեծ իշխանին Պռոշա եւ մա/յրն իմ Մամքան միաբանեցաք սբ. ուխտիս եւ տվ/աք զհողս... տր Ա/թան/աս ետ ինձ պատարագ... թվին ՉԻ (1271)»[91]:

Վերն արդեն տեսանք, որ 1287 թ. մահացած Հասան Բ-ին փոխարինել է որդին՝ Գրիգոր Բ-ն: Բ. Ուլուբաբյանը Գրիգոր Բ-ի մասին գրում է, որ նա առաջին անգամ հանդես է գալիս 1267 թ. մոր հետ, Դադի վանքում Մամքանի թողած արձանագրությունում[92]: Սակայն արդեն պարզեցինք, որ այդ արձանագրությունը թվագրված է ոչ թե 1267-ով,

---

86 Նույն տեղում, էջ 206:
87 Նույն տեղում, էջ 214:

88 Նույն տեղում, էջ 213:
89 Նույն տեղում:
90 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 243:
91 «Դիվան», պրակ V, էջ 214:
92 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 315:

այլ՝ 1307-ով։ Թյուրիմացության աղբյուրն ուսումնասիրողների կողմից արձանագրության թվականի սխալ վերծանումն է, որոնց հետևել է Բ. Ուլուբաբյանը։ Հարկ ենք համարում ներքևում բերել այդ արձանագրությունը Ս. Բարխուդարյանի հրատարակությամբ. «...Ես Մամքան, ամուսին արքականին Հասանա եւ որդի մեր Գրիգոր տէրք գոլով տեղոյս հ/այրենաւոր եւ մեր պարոնէքն հաստատեցին ի ։ՉԾԶ։ (1307) թվին/, տվաք ի սբ. ուխտիս զՄովատեղ, զՋաչուտանց, զՉոլբէկ/անց...»[93]։ Արձանագրությունում «տէրք գոլով տեղոյս» արտահայտությունը հավասար վերաբերում է և՛ Մամքանին և՛ Գրիգորին, այսինքն նրանք իրենց համարում են տեղի տերը, հետևապես չենք կարող համաձայնել Բ. Ուլուբաբյանի այն հետևության, թե «այդ ժամանակ Գրիգորը կրավորական անձնավորություն էր, որը մոր հետ ուխտի էր գնացել Դադի վանք»[94]։ Մանավանդ արձանագրության շարունակությունից պարզվում է, որ Գրիգորը Զագռնանց հողերի իր բաժինը հինգ տարի հետո՝ 1312 թ., ավել է իր որդի տեր Սարգսին[95], հետևապես, Գրիգորը հանդես էր գալիս լիիրավ իշխանությամբ։

Հերքվում է նաև Բ. Ուլուբաբյանի այն կարծիքը, թե Գրիգորի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է 1267 թ.։ Գրիգոր Բ-ն առաջին անգամ հիշատակված է Դաշքենդի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցող Ստեփանոս և Սարգիս եղբայրների անթվակիր արձանագրությունում. «...իշխանութ. մեծին. Հասանա եւ Մամքանա/ եւ ատխանշան որդոյն Գրիգորի»[96]։ Գրիգորի անվանը երկրորդ անգամ մենք հանդիպում ենք Դաշքենդ գյուղի Ս. Գևորգ եկեղեցու կառուցողական անթվակիր արձանագրությունում։ Այստեղ արդեն Գրիգորը հիշատակվում է իր ծնողների և կնոջ՝ Սա-

93 «Դիվան», պրակ V, էջ 206։

94 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 315։

95 «Դիվան», պրակ V էջ 206։

96 Նույն տեղում, պրակ IV, էջ 317։

փայի հետ. «...իշխանութի. Հասանա ու Մամքանի/ին, Գրիգոր եւ Սափէին...»[97]։ Պարզ է, որ այս արձանագրությունը գրված է ավելի ուշ՝ քան նախորդը, իսկ Գրիգորը հանդես է գալիս իբրև իր հոր՝ Հասան Բ-ի հետ համաժամանակյա իշխանությամբ օժտված անձնավորություն։

Դաշքենդ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու մի անթվակիր արձանագրություն թողել են Մամքանն ու Գրիգորը։ Հասանի հիշատակին 3 ժամ պատարագ մատուցելու համար նրանք եկեղեցուն են նվիրել «...պ/ձորին ջաղացն, զճային հողըն, Ստեփանոսի/ի ջաղացացատն խառն»[98]։ Արձանագրությունը փորագրված է 1287 կամ 1288 թվականին՝ Հասանի մահից անմիջապես հետո։

1287 թ. Հասան Բ-ի մահից հետո Դոփյան իշխանական տան կառավարումը, մինչև իր մահը, մեծ հաջողությամբ վարել է Գրիգոր Բ-ն։

Ծարի Ս. Սարգիս մատուռ մուտքի հարավային կողմում Գրիգոր Բ-ն իր հոր հիշատակին 1289 թ. կանգնեցրել է խաչքար, որի արձանագրության մեջ գրել է, որ իր հայրը՝ Հասանը քաջ և հաղթող զորավար էր և Ականա, Հանդաբերդի, Սոդքի, Ծաղկավանի և այլ բազում գավառների մեծ իշխանն էր, իսկ Ծար գյուղը համարում է իր հոր «հայրենիք և պարգև քաջութեան»[99]։ Գրիգոր Բ-ի վերջին արտահայտությունը՝ «հայրենիք և պարգև քաջութեան» Բ. Ուլուբաբյանը համարում է «գեղեցիկ խոսք՝ գրված երախտավոր որդու կողմից»։ Այնուհետև նա արտահայտում է այն միտքը, որ Ծար գյուղաքաղաքն ու գավառը եղել են միշտ Հասան-Դոփյան տոհմաճյուղի ավանդական տիրույթը[100]։ Ոչ ոք, այդ թվում նաև Կարապետ եպիսկոպոսը, չի կասկածել, որ Ծարը Դոփյանների ավանդական տիրույթն էր, սակայն չմոռանանք, որ թաթար-մոնղոլները նվաճեցին նաև Ծարը, որից

97 Նույն տեղում, էջ 315։

98 Նույն տեղում, էջ 317—318։

99 Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 405, «Դիվան», պրակ V, էջ 222։

100 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 316։

հետո Հասան Բ-ն մասնակցեց մոնղոլների արշավանքներին դեպի Արևմտյան Հայաստան, Միջագետք և այլ վայրեր և այդ ծառայության դիմաց, որպես «պարգև քաջութեան» վերահաստատվել է նրա իրավունքները Ծարի և մյուս գավառների նկատմամբ, մի երևույթ, որը ընդունված էր թաթարմոնղոլների մոտ։

Գրիգոր Բ-ն և Ասփան հիշատակված են Հովհաննեսի՝ Գրիգորի հորեղբոր Ծարի վանքի 1301 թ. շինարարական արձանագրությունում[101]։ Իսկ Ծար գավառի Մարջումակ գյուղի մոտ գտնվող եկեղեցին կառուցող Գրիգոր և Մեսրոպ քահանաները 1304 թ. թողած արձանագրությունում գրում են, որ եկեղեցին կառուցել են «...իշխանութբ. մեծ/ին Գրիգորո...»[102]։ Գրիգորը եղավ իր քաջ հոր արժանավոր հետևորդը և ինչպես աղբյուրներն են վկայում, Խուդաբանդա խանի ժամանակ Գրիգոր իշխանը մեծ փառքի ու պատիվների է արժանացել։ Նրան շնորհված ածականներից պարզվում է, որ նա եղել է հմուտ ու քաջ զորական։ Այդ մասին պերճախոս վկայություններ կան Թարգմանչաց Ավետարանի հիշատակարաններից մեկում, գրված 1312 թ. «Յայսմ ժամանակի ծագեցաւ ումն, մեծ և երևելի տոհմային պայազատութեամբ, ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց, Գրիգոր իշխան Հայոց՝ տէր և պարոն Փոքր Սիւնեաց՝ Հանդաբերդոյ, և Ականւոյ, և բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչև ի Շաղաւդայ, և գաւառք մեր յանուանէ այս է՝ Սոթ Գլուխ, և Բերդաձոր, և Ճոխանց, Հասկարակս, Աստենին, Կալեր, Ուռխաձոր, և Խոռուագէտ, Դւանոց և այլ իւրեանց միջոց մազրովն ի մեր նախնեաց մնացեալ հայրենիք է, իւրեանց չորս սահմանովն, առոյգ և ճշմարիտ գրեալ կայ յաւետարանիս...»[103]։

101 Հ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 364—365, Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., Ա, էջ 208—209։ Մ. Բարխուդարյանց. Արցախ, էջ 407, 408։ «Դիվան», պրակ V, էջ 224։

102 «Դիվան», պրակ V, էջ 226, «Ազգագրական հանդես», XXV, էջ 79։

103 ԺԴ, էջ 84։

Գրիգոր իշխանն ամբողջությամբ իր իշխանությունը տարածել էր Դոփյանների տարածքների վրա՝ սկսած Հանդաբերդից ու Ակնից մինչև Գեղամա ծովակի ափերը, Սոթքից դեպի հարավ արևելք, մինչև Շաղվադա։

Գրիգոր Բ-ն ամուսնացած էր Օրբելյան Տարսայիճ իշխանի դստեր՝ Ասփայի հետ[104]։

Ասփան Խադարի վանքում երկու անթվակիր արձանագրություն է թողել, որոնցում մեծ սիրով ու հպարտությամբ է խոսում իր ամուսնու՝ Գրիգորի մասին. «...գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի»..., «...ամուսին հսկայազօր իշխանին Գրիգորի...»[105]։ Ծարի Ս. Սարգիս եկեղեցու հարավային պատին 1311 թվականից մնում է Գրիգորի և Ասփայի կիսեղծ արձանագրությունը՝ եկեղեցուն նվիրատվություն կատարելու մասին[106]։

Ասփան մահացել է 1312 թ. «Արդ, յայսմ ամի, որ էր թվին ՉԿԱ (1312) փոխեցաւ յաշխարհէս Ասփայ»[107]։ Այդ նույն հիշատակարանից պարզվում է, որ Ասփան թաղվել է Խաթրա վանքում, և Գրիգորը իր սիրելի կնոջ հիշատակին վանքին է նվիրել. «...ընծայս յոլովս՝ գիւղորայս, այգիս, անդաստանս, և զարդարէ զուլոր ոսկով զանազան սպասիւք և հանդերձիւք, ընդ որս աւրնեալ չքնաղագեղ և սուրբ աւետարանս ոսկենկար կազմածով, և շնորհեաց զերեզմանի նորա և իւր նախնեաց յիշատակ»[108]։ Կնոջ հիշատակին, տարբեր առիթներով, Գրիգոր իշխանը կատարել է նվիրատվություններ։ Այսպես, Դադի վանքի գմբեթավոր եկեղեցու՝ Մամքանի և Գրիգորի 1307 թ. արձանագրության ուղղակի շարունակությունն է կազմում Գրիգոր Բ-ի 1312 թ. արձանագրությունը,

104 Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 428, «Դիվան», պրակ IV, էջ 315, պրակ V, էջ 129, 130, ԺԴ, էջ 84։

105 Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 362—363, Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 205—206, «Դիվան», պրակ V, էջ 129, 130։

106 Նույն տեղում, էջ 218։

107 ԺԴ, էջ 84։

108 Նույն տեղում։

որից պարզվում է, որ Գրիգորը Զագաձանց հողերի իր բաժինը տվել է իր որդի տեր Սարգսին, իսկ միաբանները սուրբ Ստեփանոսի տոնին պատարագ են սահմանել նրա մոր և կնոջ՝ Ասփայի հիշատակին[109]։ Ամաղու Նորավանքի 1312 թ. Գրիգոր Բ-ի արձանագրության համաձայն Գրիգորը 1500 արծաթով Երկու այգի է գնել և նվիրել վանքին, որպեսզի տարին երեք օր պատարագ մատուցեն Ասփայի հիշատակին[110]։

Գրիգոր իշխանը, Ասփայի հիշատակին, 1312 թ. Խաթրա վանքին նվիրել է գյուղեր, այգիներ և այլն[111]։ Հերհերի Ս. Աստվածածին վանքի արևմտյան պատին 1317 թ. գրվել է Գրիգոր Բ-ի արձանագրությունը Ասփայի հիշատակին վանքին մի այգի նվիրելու կապակցությամբ. «...կամաւ այ ես Գրիգոր, Դոփին որդի Յ/ասինձ խաչի տափի/ այգին ի սբ ուխտս տվ/ի վասն ամուսնին իմ Ասփին... Թվ :ՉԿԶ: (1317)»[112]։ Փաստորեն սա Գրիգոր Բ-ի մասին վերջին գրավոր հիշատակությունն է, ուստի կարելի է ասել, որ նա մահացել է 1317 թ.։

Գրիգորը և Ասփան ունեցել են մի քանի որդիներ և դուստրեր։ Դա իմանում ենք Թարգմանչաց Ավետարանի հիշատակարանից. «Ամուսնացեալ ընդ դստեր Տարսայիճ իշխանին, ընդ ամէնօրհնեալ պարկեշտ տիկնոջն Ասփայի, ծնանի ի սմանէ ուստերս և դստերս, իսկ միոյն, որում անունն էր Սարգիս, նուիրէ Քրիստոսի ի սանդղեալ հասակին, որ արժանաւորութեամբ ի կոչմանէ հոգւոյն էանց ընդ ամենայն աստիճանս քահանայութեան, հասեալ ի պատիւ եպիսկոպոսութեան տանն Խաչենոյ...»[113]։ Ինչպես իր նախորդները, Սարգիսը ևս եղել է Հաղպատում, ապա վերադարձել իր հայրենի լեռնաշխարհ. «...ստացեալ ընկալաւ և զհոգևոր պետութիւն»[114]։

109 «Դիվան», պրակ V, էջ 206—207։

110 «Դիվան», պրակ IV էջ 239։

111 ԺԴ, էջ 84։

112 «Դիվան», պրակ III, էջ 55։

113 ԺԴ, էջ 84։

Լ. Խաչիկյանը կարծիք է հայտնել, որ Սարգիսը Գրիգոր իշխանի միակ որդին է[115]։ Չնայած ունեցած գիրքին ու մեծ հռչակին, սկզբնաղբյուրներում Սարգսի մասին սակավ տեղեկություններ են պահպանվել։ Նա հիշատակված է Դադի վանքի գմբեթավոր եկեղեցում 1309 թ. ումն Սարկավագի թողած նվիրատվական արձանագրությունում[116] և Գրիգոր Բ-ի՝ 1312 թ. նույն եկեղեցում թողած արձանագրությունում[117]։ Սարգիսը Դադի վանքում էր մինչև 1333 թ.։ Նա մահացել է 1333-ին և թաղվել է Դադի վանքում. «Զտէր Սարգիս... յիշեցէք ի բարի Թվ. ՉՁԲ»[118]։

Գրիգոր Բ-ի մյուս որդու՝ Վահրամի, մասին մեզ գրեթե տեղեկություններ չեն հասել։ Մ. Բարխուդարյանցը և, հավանաբար, նրան հետևելով Կարապետ եպիսկոպոսը գտնում են, որ Գրիգոր Բ-ին հաջորդել է Վահրամ որդին[119]։

Վահրամին հաջորդել է Սարգիս որդին, որն անվանակից էր իր հորեղբորը՝ Սարգիս եպիսկոպոսին։ Նրա իշխանության մոտավոր ժամանակն է XIV դ. 50—60-ական թվականները։ Ինչպես Վահրամի, այնպես էլ նրա որդու՝ Սարգսի վերաբերյալ հանդիպում են միայն կցկտուր տեղեկություններ, որոնք հնարավորություն չեն տալիս շարադրելու Դոփյան իշխանական տան XIV դ. հանգամանալից պատմությունը։

Սարգսին հաջորդել է որդին՝ Հասան Գ Մարեկին, որի մահվան թվականը ստույգ է՝ 1387 թ.։ Մ. Բարխուդարյան-

114 Նույն տեղում։

115 ԺԴ, էջ XIV։

116 «Դիվան», պրակ V, էջ 205։

117 Նույն տեղում, էջ 207։

118 Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 206։

119 Նույն տեղում, էջ 207, Կարապետ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 45։

ցը Դոփյանների սերնդաբանությունը ներկայացնելիս XIII դ. երկրորդ կեսին ապրած Հասան Բ-ին բերում է XV դ., նրան համարում է XV դ. ապրած Վահրամի որդին[120]։ Իսկապես Վահրամը Հասան անունով որդի ունեցել է, բայց նա Հասան Բ-ն չէր։ Մ. Բարխուտարյանցը Հասան Բ-ին երկի շփոթել է Հասան Գ-ի հետ։ Դոփյանների ճյուղագրությունը, սկսած իր կողմից Դոփի ամուսին համարված Ղարա Գրիգորից, Մ. Բարխուտարյանցը ընդհանրապես ներկայացրել է խառնաշփոթ[121]։

Հասան Գ-ի ժամանակ էր, որ Հայաստանը ենթարկվեց Ոսկե Հորդայի խան Թոխթամիշի, իսկ հաջորդ տարին՝ Լենկ-Թեմուրի ամայացնող արշավանքներին։ Լենկ-Թեմուրը, նվաճելով Վրաստանն ու Աղվանքը, ձմեռում է Մուղանի դաշտում, իսկ 1387 թ. գարնանը ներխուժում է Հայաստանի հյուսիս արևելյան գավառները[122]։ Իր ճանապարհին ավերելով Հայաստանի գյուղերն ու ավանները, մտնում է Սյունիք, ապա իջնում դեպի Արարատյան երկիր և գրավում ու ավերում է Բջնին, Երևանը և այլ բնակավայրեր։ Զինված ուժերի անհավասարության, առանձին վայրերում, հայերը կենաց ու մահու պայքարի են ելնում նվաճողների դեմ։ Ինչպես վկայում է Գրիգոր Խլաթեցին իր «Հիշատակարան աղէտից» պատմական վիպասանությունում, իր հայրենիքի ազատության համար պայքարում շատերի հետ նահատակվեցին Հասան Ծարեցին և իր զավակները.

«Այլ և զՀասանն Ծարեցին
Երեք որդովքըն զենեցին,
Զի բռնեցին ամուրն առին
Եւ զբազումըս գերեցին»[123]։

120 Մ. Բարխուտարյանց, Պատմություն Աղվանից, հ. Ա, էջ 137։
121 Նույն տեղում։
122 ԺԵ, մասն Ա, էջ 275։
123 ԺԵ, մասն Ա, էջ 275—276։

Ծարի Գետամեջ վանքում 1411 թ. գրած հիշատակարանում այս իրադարձություններին անդրադարձել է գրիչ Թովմա Սյունեցին. «Յիշատակ եղիցի և ի սմա հանգուցեալ իշխանացն այսմ նահանգի... Նախ մեծաշուք իշխանին Հասանայ որդւոյ Դաւթին, և ամուսնոյն իւրոյ Խոնձային, և զաւակացն իւրոց՝ քաջ և արի պարոնացն Գրիգորոյ, Սարգսի, Շահշի, Ջհանշի, Աղբուղին, Տրվանին, նաև թագազարմ իշխանին Սադունին, զոր տէրն տէրանց և թագաւորն թագաւորաց՝ ընդ սրբոց թագաւորացն և բարեպաշտ իշխանացն դասեսցէ և պսակեսցէ զնոսա, ամէն։ Յիշատակ եղիցի և ի սմա ազատացն տանս Դաւրեան, նախ՝ ամենայն օրհնութեանց արժանաւոր պարոն Աթապակին և այլ ամենայն ազատաց։ Նաև յիշել ի տէր զամենայն տանուտէրան աստուածաշէն երկրիս Ծարայ, նախ զԱղիկ»[124]։ Այստեղ նկատի պետք է առնել այն կարևոր հանգամանքը, որ այս հիշատակարանը գրվել է ավելի վաղ, քան Խլաթեցու պատմական երկը և գրվել է Ծարի Գետամեջ վանքում՝ Դոփյանների հոգևոր կենտրոններից մեկում, հետևապես ավելի արժանահավատ է ու ստույգ։ Հիշատակարանի գրիչը ժամանակով ու տարածությամբ մոտ է կատարված իրադարձություններին, թերևս նրանց ժամանակակիցն է ու ականատեսը, իսկ Խլաթեցին և ժամանակով, և տարածությամբ հեռու է իրադարձություններից ու հավանաբար շփոթել է իր լսածը։ Նկատի ունենալով այս սկզբնաղբյուրի արժանահավատությունը, ընդունում ենք, որ Հասան Գ-ի և նրա կնոջ հետ սպանվել են նրանց վեց որդիները։ Ինչպես ճիշտ ենթադրում է Կարապետ եպիսկոպոսը, հիշատակարանում հիշատակված թագազարմ իշխան Սադունը Հասան Գ-ի նահատակված որդիներից մեկի զավակն է եղել[125]։ Իսկ Հասան Գ Ծարեցու փոքր որդին՝ Տրվանը, ամուրի է եղել։ Հե-

124 Նույն տեղում, էջ 122—123։
125 Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 85։

տեսապես, Հասան Գ-ի վեց որդիներից երեքը սպանվել են անժառանգ։ Կարապետ եպիսկոպոսի այն կարծիքը, թե Հասան Գ-ի հետ սպանվել են նրա հինգ որդիները, ճիշտ չէ[126]։

Բ. Ուլուբաբյանը ենթադրում է, որ զոհվածների թվում Հասան Գ-ի կնոջ՝ Գոնցայի անունը հիշատակվում է թյուրիմացաբար և որպես այս ենթադրության հաստատում վկայակոչում է Դադի վանքում Գոնցայի և իր որդիների՝ Հասանի ու Վահրամի թողած նվիրատվական արձանագրությունը։ Արձանագրությունը թվական չունի, Բ. Ուլուբաբյանը ենթադրում է, որ այն Գոնցան և կենդանի մնացած իր երկու որդիները թողել են հետագայում[127]։

Երկու պատճառով մենք հակված ենք կարծելու, որ այդ արձանագրությունը փորագրվել է 1387 թ. առաջ։ Արձանագրությունը թողել են Հասանի վաղամեռիկ կնոջ՝ Թաթունի, հիշատակին։ Թաթունը Քուրդ Ամբերդցու դուստրն էր, իսկ վերջինս ապրել ու գործել է XIV դ. առաջին կեսին։ Հետևապես, նրա դուստրը, որը Դոփյանների տուն հարս պետք է եկած լիներ 18—20 տարեկան հասակում, չէր կարող 1387 թ. հետո լինել երիտասարդ։ Հարսի մահից հետո Գոնցան իր երկու որդիների հետ եկել է Դադի վանք և իր սիրելի հարսի՝ Թաթունի հիշատակին նվիրատվություն կատարել։ Անհրաժեշտ ենք համարում բերել այդ արձանագրությունը. «Կամաւն աչ. ես Գոնցէս ու որդիքս՝ Հասան ու Վահրամ, թոռն Դոփանց, տվաք (ի Դադի վանս զմեր հայրենիքն գեաւղ իւր սահմանավն, խասովն, վերին մարգով. վասն սիրական հարսինն մեր Թաթունին, դստերն Քրդին Ամբերդեցի՝ ամուսնո(յ) Հասանա...»[128]։

Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ Թովմա Սյունեցին իր հիշատակարանը գրել է Գետամեջի վանքում, որը

126 Նույն տեղում։

127 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 328։

128 «Դիվան», պրակ V, էջ 203։

Դոփյան իշխանների սիրած վայրն էր և հոգևոր կենտրոններից մեկը։ Հետևապես, Թովմա Սյունեցի գրիչը Հասանի, իր կնոջ ու որդիների նահատակության մասին լսել կամ կարդացել է և մագաղաթին հանձնել այդ իրադարձությունների ճշմարիտ պատմությունը։ Բ. Ուլուբաբյանը Գրիգոր Բ-ից մինչև Սեյտի գծած տոհմածառում Հասան Գ Մարեցու որդիներից Շանշեին կենդանի է համարում մինչև 1430 թվականը, իսկ Տրվանին՝ մինչև 1411 թվականը[129]։ Մինչդեռ, ինչպես վերը տեսանք, 1411 թ. հիշատակարանում Հասան Գ-ի նահատակված վեց որդիների թվում են Շանշեն և Տրվանը։

XIV դ. վերջերին Հասան Գ Մարեցու երեք որդիների գծով Դոփյան իշխանական տունը բաժանվում է երեք ճյուղի, Ուլուբեկենց՝ Շահնշահի գծով, Այտինցոց՝ Աղբուղայի գծով և Ջահանշենք՝ Ջահանշահի գծով[130]։ 1387 թ. Հասան Գ-ի և նրա որդիների սպանությունից հետո Մարում իշխել է Հասան Գ-ի Վահրամ որդին։ Վահրամի իշխանության ժամանակ է գրվել վերը նշված 1411 թ. ճաշոցը. «...Գրեցաւ և դրաւ առեալ աւարտեցաւ տօնագիրք և աստուածամեծար սուրբ գիրքս ի թուաբերութեան հայկազեան տոմարիս ՊԿ. (1411), ի թագաւորութեան Յուսուֆին... և յիշխանութեան տեղւոյս պարոն Վահրամայ, պարոն Տուրսունին, պարոն Տրուանին, պարոն Սատօյին, պարոն Պռօշին, պարոն Գրիգորին, յաստուածաշէն երկիրս Մար կոչեցելոյ, ի վանս Գետամէջս»[131]։

Կարապետ եպիսկոպոսը, հիմք ընդունելով Դադի վանքի արձանագրության բովանդակությունը, Վահրամին համարում է Հասան Գ-ի որդին[132]։ Այնուհետև նա եզրակաց-

129 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 333։

130 Տե՛ս Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 358—359, Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 47։

131 ԺԵ, մասն Ա, էջ 122։

132 Տե՛ս Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 85։

նում է, որ Հասան Գ ունեցել է վեց որդի[133]։ Եթե Վահրամին էլ հաշվելու լինենք, ապա կլինի ոչ թե վեց, այլ ութ որդի։ Որ իրոք Վահրամը Հասան Գ-ի որդին է՝ վկայում է Դադի վանքում Սեյտի և նրա հորեղբոր որդիների թողած արձանագրությունը. «Կամաւն ամենակալին այ. ես Սէյտիս որդի պարոն Շանշին, թոռն պարոն Հասանայ. ես Գրիգորս, Հասանս, Պէկիս, Այթունս որդիք պարոն Վահարամայ, թոռունք պարոն Հասանայ. ես Այտինս որդի պարոն Տուրսունին, թոռն պարոն Աղբուղին. Ես Շանշանս որդի Հասանայ, թոռն պարոն Ջահանշին, մէք չորս եղբարքս տուաք մեր վանոքէիցս Ապահէն...»[134]։ Ինչպես տեսնում ենք, Վահրամի որդիները իրենց համարում են Հասանի թոռները, որը և հիմք է տալիս ասելու, թե իրոք Վահրամը Հասան Գ-ի որդին է։

Վահրամին հաջորդել է նրա եղբորորդի Տուրսունը։ Այս ենթադրության համար մեզ հիմք է ծառայել Դադի վանքում Տուրսունի թողած արձանագրությունը, ուր նա հիշատակված է առաջինը[135]։

Տուրսունի իշխանության ժամանակն ընկնում է մոտավորապես 1411—1429 թթ.։ Վերը բերած Սեյտի արձանագրությունում Տուրսունի անունը չի հիշատակվում[136]։ Այս փաստից կարելի է ենթադրել, որ Տուրսունին հաջորդել է Սեյտին։ Արձանագրության մեջ հիշատակված է նաև Տուրսունի որդի Այտինը։ Այսպիսով, արձանագրություններից պարզվում է, որ XV դ. Ուլուբեկանց, Այտինցանց և Ջահանշահենց ժառանգները, ըստ ավագության կառավարում էին Դոփյան իշխանական տունը։ Այսպես, Աղբուղայի որդին էր

133 Տե՛ս նույն տեղում, էջ 86։

134 «Դիվան», պրակ V, էջ 216, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 360։

135 «Դիվան», պրակ V, էջ 216, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 359։

136 «Դիվան», պրակ V, էջ 216, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 365։

Տուրսունը, որը հաջորդեց իր հորեղբորը՝ Վահրամին, իսկ Սեյտին, որը հաջորդեց իր հորեղբոր որդուն՝ Տուրսունին, Շահնշահի որդին էր։ Կարապետ եպիսկոպոսը Սեյտի եղբայր է համարում Տուրսունի արձանագրությունում հիշատակված Պոռշին։ Նա իր կարծիքը հիմնավորում է այն փաստով, որ Պոռշի անունը գրված է Սեյտից հետո[137]։ Մենք ևս հակված ենք այդպես կարծելու, քանի որ Պոռշից հետո հիշված Գրիգորը և Հասանը նույնպես եղբայրներ են՝ Վահրամի որդիները։

Սակայն Կարապետ եպիսկոպոսը գրում է, որ Գրիգորը որ հիշված է արձանագրության մեջ, դժվար թե Վահրամի որդին լիներ, քանի որ հոր կենդանության ժամանակ Գրիգորին չէին հիշատակի, իսկ Ջահանշահի տունը մատնի անուշադրության և թողնի առանց հիշատակության[138]։ Մենք համամիտ չենք Կարապետ եպիսկոպոսի այս կարծիքին հետևյալ պատճառներով։ Նախ, Տուրսունի արձանագրությունը գրված է Վահրամի մահից հետո և այնտեղ Տուրսունը հիշատակված է առաջինը, որպես Դոփյան տան առաջնային դիրք ունեցող իշխանի։ Ապա, Տուրսունին հաջորդած Սեյտի թողած արձանագրությունում պարզ գրված է. «...ես Գրիգորս, Հասանս, Պէկիս, Այթունս, որդիք պարոն Վահրամայ, թոռունք պարոն Հասանայ»[139]։ Այս անունների հերթականությունը մեզ հուշում է, որ Գրիգորը եղել է Վահրամի մեծ որդին։ Ուրեմն, Գրիգորի՝ Վահրամի որդին լինելը կասկած չի հարուցում։ Կարապետ եպիսկոպոսի մյուս պատճառաբանությունը, թե Ջահանշի տունը չէին թողնի առանց հիշատակության, նույնպես անհիմն է։ Սեյտի արձանագրության մեջ կարդում ենք. «...ես Շահշաս որդի Հասանայ, թոռն պարոն Ջահանշին»։ Ինչպես տեսնում ենք, Ջահանշենց տունը արձանագրություններից մեկում հիշատակված է։

137 Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 86։

138 Տե՛ս նույն տեղում։

139 «Դիվան», պրակ V, էջ 216։

Մի քանի տող ներքև Կարապետ եպիսկոպոսը հերքում է իր կարծիքը, երբ թեականորեն ընդունում է, որ Գրիգորը Վահրամի որդին է[140]։ Կարապետ եպիսկոպոսը Գրիգորից հետո հիշված Հասանին համարել է Ջահանշահի որդին։ Որ Հասանը Ջահանշահի որդին չէ, շատ որոշակի շեշտված է արձանագրություններում, հատկապես Սեյտի արձանագրությունում։ Տուրսունի արձանագրությունում կա հետևյալ ուշագրավ միտքը. «Ես Տուրսունս, Սեյտս, Պօշս, Գրիգորս, Հասանս և եղբարքս...»[141]։ Կարծում ենք, որ «և եղբարքս» արտահայտությունը արված է միայն Գրիգորի և Հասանի կողմից, այսինքն նրանք նկատի ունեն իրենց մյուս եղբայրներին՝ Բեկին և Ալթունին։ Այնուհետև, ինչ տրամաբանությամբ, որ մենք Սեյտից հետո հիշված Պօշին համարում ենք նրա եղբայրը, նույն տրամաբանությամբ էլ Գրիգորից հետո հիշված Հասանը նրա եղբայրն է։ Իսկ Սեյտի արձանագրությունում Գրիգորի և Հասանի եղբայրությունը կասկած չի հարուցում. «...ես Գրիգորս, Հասանս, Պէկիս, Ալթունս որդիք պարոն Վահրամայ, թոռունք պարոն Հասանայ»[142]։ Հասան Ծարեցու Ջահանշահ որդին ևս ունեցել է Հասան անունով զավակ, որը թյուրիմացության մեջ է գցել Կարապետ եպիսկոպոսին։

Սեյտն Տուրսունին է հաջորդել 1430 թ. կամ մեկ, երկու տարի առաջ։ Ծարի վանքի մի խաչքարի վրա թողած Սեյտի արձանագրությունից իմանում ենք, որ 1430 թ. նա տիրում է Դոփյանների ողջ կալվածքներին. «Ես Սայտի, որդի պարոն Տանշին, քաջ և յաղթող զաւրավարին և մեծ իշխանաց յազգէն, ի թուին ՊՀԹ (1430), տեղեացս տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ, Հաթերքոյ և Հանդաբերդոյ և

140 Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 87։

141 «Դիվան», պրակ V, էջ 216, Հ. Շահխաթունյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 359։

142 «Դիվան», պրակ, V, էջ 216, Հ. Շահխաթունյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 360։

ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվարայ, կանգնեցաք զխաչս հաւր մերոյ Տանշին»[143]։ Ինչպես տեսնում ենք, մինչև XV դ. 30—40-ական թվականները Դոփյաններն իրենց ձեռքում էին պահում Փոքր Սյունիքը, Ակնը, Հաթերքը, Հանդաբերդը և Գեղամա ծովակի ափերը, որի վերջին սահմանն էր Շաղվարդն։ Սեյտի մահից հետո Դոփյանների կալվածքների մի մասին տիրել էին մուսուլման նվաճողները։ 1440 թ. իշխանության գլուխ անցած Այտինը մեծ դժվարությամբ կարողացել է հետ ստանալ այդ կալվածքները, որի մասին կխոսենք հետո։

Մենք չենք կարող համաձայնել Լ. Խաչիկյանի այն կարծիքին, թե Այտինը 1430 թ. հաջորդել էր իր հորը[144]։ Նախընթաց շարադրանքից իմացանք, որ Տուրսունին հաջորդել է ոչ թե Այտինը, այլ Ջահանշահի որդի Սեյտին՝ 1430 թ.։ Ուրեմն, 1430 թ. Այտինը Տուրսունին հաջորդել չէր կարող, ինչպես գրում է Լ. Խաչիկյանը։ Նա Սեյտին հաջորդել է 1440 թ.։ Լ. Խաչիկյանը Ծարի վանքի խաչքարի 1430 թ. Սեյտի թողած արձանագրությունը վերագրում է Այտինին[145]։ Նա, որպես հիմք, վկայակոչում է Կարապետ եպիսկոպոսին, բայց վերջինս գրում է, որ Տուրսունին փոխարինել է Սեյտին, որը և 1430 թ. թողել է հիշյալ արձանագրությունը[146]։

Այտինի ժամանակ էր, որ Դոփյանների կալվածքները գրավվել էին Բեկի ուլ-մալի կողմից։ Իր օրինական իրավունքները վերականգնելու համար Այտինը երեք տարի դատ վարեց թուրքմենների արքունիքում և բավական կաշառք տալուց հետո կարողացավ հետ ստանալ իր հայրենի կալվածքները։ XVI դ. մի հիշատակարանում գրիչ Ստեփանոսն այս մասին գրում է. «...գնաց պարոն Այտինն ի գիւան և երեք

143 «Դիվան», պրակ V, էջ 225, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 365։

144 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ LXIX։

145 Տե՛ս նույն տեղում։

146 Տե՛ս Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 88, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., էջ 365։

ամ աշխատեաց. և բազում ինչ տուեալ ապատեաց ի ձեռաց այլազգեացն զվանօրեայքն. և զշինարարէնքն»[147]: Կարապետ եպիսկոպոսը Դոփյանների կալվածքների հափշտակումը դնում է Շահռուխի մահից հետո, երբ տարբեր ցեղերի առաջնորդները գլուխ բարձրացրին կենտրոնական իշխանության դեմ[148]: Հայտնի է, որ Շահռուխը մահացել է 1447 թ., բայց սրանից առաջ, այն է՝ 1435 թ. կարա-կոյունլու թուրքմենների պետությունը գլխավորում էր Ջահանշահը, և այդ պետության կազմի մեջ մտնում էր նաև Հայաստանը, ուստի Դոփյանների կալվածքների բռնագրավումը Շահռուխի մահվան հետ կապելը ճիշտ չէ: Այդ կալվածքները Բեյթու- մալի կողմից բռնագրավվել էին Այտինի իշխանության ժամանակ: Այդ մասին խոսվում է վերը բերած XVI դ. գրիչ Ստեփանոսի հիշատակարանում, կա նաև Եսայի կաթողիկոսի մի վկայությունը, որից օգտվել է Մ. Բարխուտարյանցը. «...ի ժամանակի սորա ի զաւրանալ Իսմայէլացւոցն և ի նուազել տանս Հայոց, ցիր և ցան լինին իշխանացն Հայոց, յորեան այլազգիքն և զմուլքն մեծ իշխանին Հասանայ պէթալմալ արարին. գնաց պարոն Այտինն ի գիւան և երեք ամ աշխատեաց, և բազում ինչ տուեալ՝ ազատեաց ի ձեռաց այլազգեացն զվանորայքս և զշինարէքն...»[149]:

Այտինից հետո Դոփյանների մասին տեղեկությունները փոքր-ինչ սակավախոս են: Նրա մահից հետո Դոփյանների ֆեոդալական տունը, ճիշտ է, թուլացել էր, սակայն Դոփյան իշխանական տան երեք ճյուղի՝ Շահնշենք, Աղբուղենք և Ջհանշենք ներկայացուցիչները XV դ. երկրորդ կեսին և հետագա դարերում շարունակում էին իշխել իրենց հայրենական կալվածքներում, ժամանակի հոլովույթի մեջ, կոնկրետ պատմական հանգամանքներին համապատասխան մերթ ակարանալով, մերթ հզորանալով: Հետևապես, մենք չենք բաժանում Կարապետ եպիսկոպոսի այն կարծիքը, թե Այտինից հետո Դոփյանների մասին եղած պատմական հիշատակությունները սպառվում են և հնարավոր չէ որոշել նրանց հետագա տեղը[150]: Լ. Խաչիկյանը և Բ. Ուլուբաբյանը գտնում են, որ Դոփյանները ենթակա էին Ներքին Խաչենի Հասան-Ջալալյաններին[151]:

1456 թ. Գետամեջի վանքում գրված մի հիշատակարանում կա հետևյալ ուշագրավ միտքը. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մեղքիմ և անընդարբոյս և ամենայն տարփութեամբ զարդարեալ՝ տեսականաւն և գործականաւն՝ Թովմայի կուսակրաւն աբեղայի, ի թվականութեանս հայկազեան տումարի ՋԵ. (1456), ի հայրապետութեան Աղուանից նահանգի տեառն Յոհաննիսի՝ որդոյ մեծի իշխանին Հայոց պարոն Ջալալին, և յաշխարհակալութեանն արեւանարբու բռնաւորին Ջհանշայի, ի սուրբ և ի հռչակաւոր վանքս Գետամիջոյ»[152]: Հովհաննես Աղվանքի կաթողիկոսն էր: Նա առաջին անգամ հիշատակվում է 1428 թ.: Այստեղ խոսքն ամենայն հավանականությամբ հոգևոր ենթարկվածության մասին է: Գետամեջի վանքը Դոփյանների հոգևոր կենտրոններից էր և, անշուշտ, պետք է ենթարկվեր Աղվանքի կաթողիկոսությանը:

Տուրսունի և Սեյտիի թողած արձանագրություններից կամ սիկլիներ-փաստաթղթերից իմացանք, որ Դոփյան իշխանները Ավագ եպիսկոպոսին և նրա եղբայր Մանվել աբեղային են հանձնել վանքերի եպիսկոպոսությունը և պարոնությունը: Այդ փաստերը հիմք ընդունելով, տակավին 1971 թ. հրատարակած մեր մի հոդվածում, հետևելով խոշոր պատմաբան Աշ. Հովհաննիսյանին, այն տեսակետն ենք պաշտպանել, որ դա թուլացած աշխարհիկ իշխանների կող-

---

147 Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, Վաղարշապատ, 1898, հ. Ա, էջ 89:

148 Տե՛ս Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 90:

149 Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 207:

150 Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 92:

151 Տե՛ս ԺԵ, մաս Բ, էջ LXX, Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 311—312, 314:

152 ԺԵ, մաս Բ, էջ 66:

մից հոգևոր ֆեոդալների հովանավորությանն ընդունելու բնորոշ օրինակ է[153]։

Բ. Ուլուբաբյանը, հակադրվելով Աշ. Հովհաննիսյանի արտահայտած և տողերիս հեղինակի կողմից պաշտպանություն գտած տեսակետին, ենթադրում է, որ մենք չենք նկատել, որ հիշյալ արձանագրությունն աղավաղված է, որ ճիշտըն արտագրել է Մակար Բարխուտարյանցը[154]։ Խնդրո առարկա արձանագրությունը կամ սիկիլը ամբողջությամբ հրատարակել է նաև Մ. Բարխուդարյանը, առնելով Եսայի կաթողիկոսի ձեռագիր ընդօրինակությունից։ Համոզվելու համար բերենք այդ փաստաթուղթը.

«...այս մեր գիր է իշխանական հրամանի։

Ես Տուրսունս, Սեյտիս, Պոշս, Գրիգորս, Հասանս, և եղբարքս և որդիքս մեր գալս հաստատ սիկիլս տուաք տր. եպիսկոպոսին և իւր եղբայր Մանուէլ Աբեղային, որ մեր հայրենի աթոռն զԴադի վանս, զԽաթրի վանս, զԳետամէջն, որ մեր գերեզմանատուն է ի մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար, զի վանորայքս մարդ չկար, որ յառաջն կայր և շէն պահէր և զեկեղեցիքս լուսաւորէր. յայս պատճառէս երես դրաք և գալս սր. աթոռնին նոսա ապսպրեցաք ապասպարեցաք. և զերկու իշխանութիւն, որ է եպիսկոպոսութիւն և զպարոնութիւն էլ հէնց ի նոսա յանձնեցաք, որպէս առաջին մեծ կաթողիկոսն մեծ տր. Զաքարիային, տր. Աթանասին և տր. Սարգսին էր տուեալ զԴադի վանս, զԽաթրի վանս, զՀաղբատ իւր վիճակովն, նոյնպէս և այս հոգևոր տր. Գրիգոր կաթողիկոսն գալս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ և շրջաբերական թղթիւ»[155]։ Մենք անհրաժեշտ համարեցինք փաստաթուղթն ամբողջապես մեջբերել, որպեսզի համոզվենք, որ ոչ թե Հովհ. Շահ-

153 Գ. Կիրակոսյան, Վանքապատկան հողատիրության ընդարձակման ուղիները, XIV—XV դդ., ԳԱ «Լրաբեր», 1971, № 4, էջ 82։

154 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 344։

155 Հ. Շահխաթունյանց նշվ. աշխ., հ. Բ, էջ 359, «Դիվան», պրակ V, էջ 216։

խաթունյանցն է ավելացումներ կատարել Եսայի կաթողիկոսի փաստաթղթում, ինչպես գրում է Բ. Ուլուբաբյանը, այլ Մ. Բարխուտարյանցն է կրճատումներով արտագրել։

Խնդրո առարկա փաստաթղթում ուշադրության է արժանի հետևյալ միտքը. «...զի վանորայքս մարդ չկար՝ որ յառաջն կայր և շէն պահէր և զեկեղեցիքս լուսաւորէր, յայս պատճառէս երես դրաք և գալս սր. աթոռնին նոքա ապսպարեցաք... և զերկու իշխանութիւնն, որ եպիսկոպոսութիւնն և զպարոնութիւնն էլ հէնց ի նոսա յանձնեցաք...»[156]։ Մինչև Տուրսունի իշխանության գլուխ անցնելը 1411 թ., Հայաստանը ենթարկվեց Թոխթամիշի և ապա Լանկ-Թամուրի աշխարհավեր արշավանքներին, որոնց պատճառով մեծապես տուժեց նաև Վերին Խաչենը։ Ահա թե ինչու որոշ վանքերում մարդ չէր մնացել, որպեսզի հոգ տաներ վանական հաստատությունների, նրանց վիճակների վերականգնման ու ամրապնդման համար։ Հենց այդ նպատակով էլ Տուրսունը և մյուս իշխանները Ավագ եպիսկոպոսին և նրա եղբայր Մանվել աբեղային են հանձնել հիշյալ վանքերի երկու իշխանությունը՝ եպիսկոպոսությունը և պարոնությունը, այսինքն հոգևոր և աշխարհիկ իշխանությունը։ Բ. Ուլուբաբյանը գրում է, որ իսկական փաստաթուղթն այդպիսի լրացում չունի «...և զերկու իշխանութիւն» արտահայտությունը վերաբերում է երկու թեմերի՝ Դադիվանքի և Ծարա (Խաթրավանքն ու Գետամեջի վանքը միասին) առաջնորդություններին[157]։ Իրականում այստեղ խոսքը վերաբերում է հոգևոր և աշխարհիկ իշխանություններին։ Դոփյան իշխանները Ավագ եպիսկոպոսին և նրա եղբայր Մանվել աբեղային են տվել հոգևոր և աշխարհիկ իշխանության իրավունքը։ Մ. Բարխուտարյանցը սիկիլը թերի է արտագրել, որը և թյուրիմացության մեջ է գցել Բ. Ուլուբաբյանին։

156 «Դիվան», պրակ V, էջ 225, Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 408։ Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 359։

157 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 344։

Դոփյան երեք ճյուղերի ներկայացուցիչների թողած գրության մեջ, որն անվանում ենք Սեյտի գրություն կամ արձանագրություն, թվարկվում են մեծ թվով տարածքներ՝ իրենց սահմաններով Ավագ եպիսկոպոսին հանձնելու մասին: Ուշագրավ է այն, որ նրանք գրում են «...տուաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր ջոջաւոր էր. քանի որ իւր պէտքն է՝ վարէ Աստուծով ազատ է. իսկ թէ այլ մարդ վարէ տասանորդն առնու և տայ վանքին անպատճառ»: Եթե Դոփյան իշխաններն Ավագ եպիսկոպոսին համարում էին իրենց «ջոջավորը» և նրան ազատ գործելու իրավունք էին տալիս, ապա կարելի է եզրակացնել, որ այդ քայլով նրանք ձգտում էին պահպանել իրենց կալվածքների ամբողջությունը և ապահովությունն օտար նվաճողներից: Անգամ Սայտունի նման հզոր իշխանը, որը 1430 թ. Ծարի վանքի խաչքարի արձանագրության բովանդակության համաձայն Փոքր Սյունիքի, Ակունա, Հաթերքի, Հանդաբերդի, Գեղամա ծովակի՝ մինչև Ծաղվագա տարածքի տերն ու պարոնն էր, հարմար էր համարել իր կալվածքների մի մասը հանձնել հոգևոր առաջնորդների տնօրինությանը:

Դոփյան իշխանական տան երեք ճյուղերի XV դ. երկրորդ կեսի ճշգրիտ պատմությունը դեռևս մնում է այդ ժամանակաշրջանի խառը իրադարձությունների մշուշով պատված:

Մ. Բարխուտարյանցը այն կարծիքին է, որ Այտինը Ջահանշահից 1455 թ. ստանում է հարյուրապետի կոչում, լավ հարաբերություններ է հաստատում ինչպես վերջինիս, այնպես էլ նրա որդի Հասան-Ալի-խանի հետ: Սակայն ժառանգություն է ստանում Նիժ և Սուլթան-Նուխի ավանները ու ընտանիքով փոխադրվում Նիժ[158]: Կարապետ եպիսկոպոսի կարծիքով Այտինի գործունեությունից հետո Դոփյանների մասին հիշատակությունները սպառվում են, և դժվար է որոշել թե ով որտեղ հաստատվեց և ինչ եղավ[159]:

158 Մ. Բարխուտարյանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 49:

159 Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 92:

Բ. Ուլուբաբյանն իրավացիորեն քննադատելով Կարապետ եպիսկոպոսին, գրում է. «Վիմագրերն ու ձեռագիր հիշատակարանները մեր առաջ ներկայացնում են այդ իշխանական տոհմի հետագա կյանքի ու գործունեության մի անընդմեջ շղթա, միաժամանակ պարզորոշ ցույց տալով նաև առանձին օղակները»[160]:

Ընդունում ենք, որ Դոփյանների իշխանական տունը XV և հետագա դարերում ներկայացնում էր անընդհատ շղթա: Սակայն այդ շղթայի XV դ. երկրորդ կեսի հատվածը դեռևս կարոտ է հետազոտման և փաստացի լրացման:

Գեղարքունիքում, Դոփյանների տիրույթներին կից կազմավորված մելիքական տների պատմությունը վիմական արձանագրությունների հարուստ փաստերի հիման վրա շարադրել է Ս. Բարխուդարյանը[161]:

Կարապետ եպիսկոպոսը քննության առնելով Տաթևի 1513 թ. փաստաթուղթը ստորագրած Գեղարքունիքի մելիքների ծագումը, որոնք հաստատում են, որ Գեղամա երկիրը ևս Տաթևի թեմ է եղել, գրում է. «Ննշանակէ, Մէլիք Ղուկասը Ծարի մէլիք էր, և եթէ չընդունենք իսկ, թէ նորա պապի օտարոտի Պուղիկ անունը կարող է Ուլուբեկի աղաւաղ ընթերցանութիւնը լինել, պէտք է կարծել այնուամենայնիւ, որ նա Դօփեան Շահանշէի կամ Ջհանշէի ժառանգն էր Ծարում՝ այնպէս, ինչպէս Փիրհամզէն Այտինի ժառանգն Գեղարքունիքում»[162]:

Կարապետ եպիսկոպոսի կարծիքը պաշտպանում է Բ. Ուլուբաբյանը: Նա գտնում է, որ «Այտինը հայրենի տիրույթները փրկելուց հետո իսկապես իրեն է վերցրել նրանց հարավ-արևմտյան մասը, առեղծել ինքնուրույն միավոր, որը և իր որդի Աղբուղայի անունից կոչել է Աղբուղայան»

160 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 336:

161 Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը, ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի «Բանբեր Մատենադարանի», 1967, № 8, էջ 191—225:

162 Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 107:

Բ. Ուլուբաբյանը իր այս միտքը հիմնավորում է նրանով, որ Ծարա և Գեղամա կողմերում խնդրո առարկա ժամանակաշրջանում «Աղբուղայան տոհմանունով ուրիշ իշխող չպետք է լիներ, քան Դոփյան պայազատն էր»[163]: Ապա նա զարգացնում է այն կարծիքը, որ «Հզորացող Ջահանշահյանների (Ծարեցիների) և Ուլուբեկյանների (Սոդքի տերերի) կողքին նրանց այս տոհմակից Աղբուղայան իշխանները պետք է փորձեին ձեռք բերել որոշակի ինքնուրույնություն: Եվ դա էլ նրանց կհուշեր խզել կապերը տոհմակիցների հետ»[164]: Իր այս կարծիքը հիմնավորելու համար Բ. Ուլուբաբյանը բերում է երկու փաստարկ.

«ա) XV դարում եկվոր ոչ մի իշխանական տան ներկայացուցչի մուտքը Գեղարքունիք կամ Գեղամա գավառ չի արձանագրված, հակառակ դեպքում այդպիսի փաստը մոռացության չէին տա հիշատակագրողներն ու ժամանակագիրները...

բ) Թանկրիղուլին ու մյուսներն իրենց տոհմին վերաբերող փաստաթղթերում ու արձանագրություններում համառությամբ լռում են իրենց ծագման ու տոհմակունքների մասին, մի բան, որ չէր կատարվի, եթե նրանք սերված լինեին ուրիշ որևէ հայտնի տոհմից կամ առհասարակ ազնվականներից: Իսկ Դոփյան տոհմակունքը նրանք մոռացության պիտի տային՝ նրա գահերեց օրինական իշխաններից իրենց անկախությունը շեշտելու համար»[165]:

Երկու փաստարկն էլ չեն հիմնավորում Բ. Ուլուբաբյանի կարծիքը: Աղբուղյան կամ Պուղիկյան մելիքական տունը տեղաբնիկներից էր և, ինչպես ապացուցել է Ս. Բարխուդարյանը, կազմավորվել էր XIV դ. երկրորդ կեսին[166]: Այդ պատճառով էլ աղբյուրներում չեն հիշատակվում որպես

163 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 389:

164 Նույն տեղում, էջ 389:

165 Նույն տեղում:

166 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 201:

եկվորներ: Մյուս փաստարկը, թե «Դոփյան տոհմակունքը նրանք մոռացության պիտի տային՝ նրա գահերեց օրինական իշխաններից իրենց անկախությունը շեշտելու համար», ամենևին չի համոզում: Տոհմակունքը մոռացության տալով Աղբուղայաններն իրենց անկախությունը շեշտել չէին կարող, քանզի հարևան տոհմակիցները ազգակցական այդ կապի մասին, եթե այդ լիներ քաջ գիտեին և անհրաժեշտության դեպքում կօգտագործեին այն՝ ազգակից ճյուղին իրենց ենթարկելու համար:

Վերը նշվեց, որ 1513 թ. Տաթևի վանքի փաստաթուղթը ստորագրող Գեղարքունիքի մելիքների ու տանուտերերի ինքնությունը փաստական հարուստ նյութերի հիման վրա շարադրել է Ս. Բարխուդարյանը: Սակայն նա գրում է, որ իր նպատակից դուրս է Գեղարքունիքի մելիքների ազգակցական կապի խնդիրը և ինքը խորամուխ չի լինի այս հարցի մեջ: Միայն անհրաժեշտ է համարում նշել, որ Կարապետ եպիսկոպոսի այն կարծիքը, թե Գեղարքունիքի բոլոր վայրերի մելիքները սերում են Դոփյան իշխաններից, հիմնված է երկու խախուտ նախադրյալների վրա[167]:

Կարապետ եպիսկոպոսը, քննության առնելով Տաթևի վանքի 1513 թ. փաստաթուղթը ստորագրող Փիրհամզայի և Թանկրիղուլի ծագումը, Թանկրիղուլի պապ Ուլուբեկին համարում է Դոփյան Շահնշահի կամ Ջհանշահի ժառանգը Ծարում, իսկ Փիրհամզային՝ Այտինի ժառանգը Գեղարքունիքում[168]: Սակայն սկզբնաղբյուրների ուշադիր քննությունը չի հաստատում Կարապետ եպիսկոպոսի այս կարծիքը: Ուսումնասիրողները այս տոհմի նախահայր են համարում Աղբուղային կամ կրճատ Պուղիկին: Աղբուղայի մասին տեղեկությունները խիստ սակավ են: Նրա անունը հիշատակված է իր թոռան՝ մելիք Թանկրիղուլի 1451 թ. թողած արձանագրությունում[169]:

167 Նույն տեղում, էջ 197:

168 Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 97—107:

169 «Դիվան», պրակ IV, էջ 254:

Ս. Բարխուդարյանը այս տոհմի ծագումը հասցնում է մինչև XIII դարը։ Նա գտնում է, որ XIII դ. Աղբուղա անունը տարածված էր Զաքարյանների, Դոփյանների, Օրբելյանների և այլոց մեջ և հավանական է, որ դրանցից որևէ մեկի հետ կապ ունենա[170]։

Բ. Ուլուբաբյանի կարծիքով նոր ճյուղը գոյացել է Այտին Դոփյանի պապ Աղբուղայի անունից։ Նա ենթադրում է, որ Այտինն իր որդուն կոչել է պապի անունով՝ Աղբուղա, որից և ծագել է այս նոր ճյուղի անվանումը[171]։ Կարծում ենք հարգարժան ուսումնասիրող գիտնականների ենթադրությունները չունեն իրական հիմք և կարոտ են պարզաբանումների։

Աղբուղայի որդին է մելիք Ղուկասը։ Ինչպես պարզ է դառնում սկզբնաղբյուրներից, մելիք Ղուկասը XIV դ. արդեն ունեցել է մելիքի կոչում, հետևապես նշանավոր անձ պետք է եղած լինել։ Առայժմ հնարավոր չէ որոշել նրա իշխանության կոնկրետ տարիները։ Նրա մասին առաջին հիշատակությունը հանդիպում է իր որդու՝ Թանկրիղուլի 1451 թ. թողած արձանագրությունում[172] Թանկրիղուլը հոր մահից տարիներ հետո նրա հիշատակին կանգնեցրած խաչքարի արձանագրությունում գրում է, որ իր հայրը 60 տարի մելիքություն է արել. «Թվ։ ՋՀ։ (1521)... Ի հօր իմ Ղուկասային։ Կ։ (60) տարի մելիքութիւն արար»[173]։

Ինչպես ենթադրում է Ս. Բարխուդարյանը, Ղուկասի որդի Թանկրիղուլը այս խաչքարը կանգնեցրել է տարիներ հետո, քանզի տակավին 1451 թ. արձանագրության մեջ Թանկրիղուլը իրեն մելիք է կոչում, այսինքն այդ ժամանակ հայրը մահացած էր[174]։ Եթե 1451 թ. մահացած մելիք

170 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 201։

171 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 388—389։

172 «Դիվան», պրակ IV, էջ 255։

173 Նույն տեղում։

174 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 201, «Դիվան», պրակ IV, էջ 255։

Ղուկասը 60 տարի մելիքություն է արել, ստացվում է, որ նա մելիքի կոչում է ստացել մոտավորապես 1390 թ.։ Նույնիսկ, եթե համարենք, որ որդին անճշտություն է հանդես բերել Ղուկասի մելիք լինելու խնդրում, ապա վստահ կարելի է ասել, որ Ղուկասը XV դ. առաջին կեսին ունեցել է մելիքի տիտղոս։ Չմոռանանք, որ այդ ժամանակաշրջանում Դոփյանները Սեյաթի, ապա 1440 թ. Այտինի գահերեցությամբ իշխում էին Փոքր Սյունիքում, Հաթերքում, Ակնում, Հանդաբերդում և Գեղամա ծովակի հարավ-արևմտյան ափին մինչև Շողվագ։ Հետևապես չենք բաժանում Բ. Ուլուբաբյանի այն կարծիքը, թե այս ճյուղը իր անվանումը ստացել է Այտինի որդու՝ Աղբուղայի անունից[175]։ Այս դեպքում առաջ է գալիս շփոթ ժամանակի խնդրում։

Մենք բաժանում ենք Ս. Բարխուդարյանի այն կարծիքը, որ Աղբուղայանները կազմավորվել են XIII—XIV դդ., սակայն, որպես առանձին իշխանական տուն։ Իսկ ինչ հանգամանքներից ելնելով ենք Աղբուղայաններին համարում առանձին իշխանական տուն.

ա) Ինչպես համոզվեցինք այս տան նախնիներից Աղբուղան ապրել ու գործել է XIV դ. երկրորդ կեսին, իսկ նրա որդի մելիք Ղուկասը՝ XIV դ. վերջին և XV դ. առաջին կեսին։ Վերը տեսանք, որ մելիք Ղուկասը մահացել է 1451 թ., և Թանկրիղուլի թողած արձանագրության համաձայն նա 60 տարի մելիք է եղել[176], այսինքն XIV դ. 90-ական թվականներից, հետևապես նրա հայր Աղբուղան, որը ապրել ու գործել է XIV դ. չէր կարող լինել XV դ. ապրած ու գործած Այտինի որդին, որին, ըստ Բ. Ուլուբաբյանի, Այտինը կոչել է իր պապի անունով[177]։

բ) Կարևոր է այն հանգամանքը, որ Աղբուղայի որդի Ղուկասը և թոռ Թանկրիղուլը ունեին մելիքի կոչում, իսկ

175 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 388—389։

176 «Դիվան», պրակ IV, էջ 255։

177 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 389։

XV դ. Դոփյան ոչ մի իշխան այդ կոչումը չուներ։ Ազբուղայի ճյուղի ներկայացուցիչ Այտինին, ինչպես գրում է Մ. Բարխուտարյանցը, Ջահանշահը հարյուրապետի կոչում է շնորհել 1455 թ.[178]։

գ) Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ իրենց թողած արձանագրություններում Ազբուղայանները չեն հիշատակում Դոփյանների հետ իրենց ազգակցական կապերի մասին, իսկ Դոփյանները՝ Ղուկասի և Թանկրիղուլի մասին։ Ծարի Գետամեջի վանքում 1411 թ. գրված հիշատակարանում հիշատակված են Ծարա երկրում ապրող և 1387 թ. Լանկ-Թամուրի դեմ անհավասար մարտում հերոսաբար նահատակված Դոփյան բոլոր իշխանները, նույնիսկ մի քանի տանուտերեր ու ազատներ, սակայն չի հիշվում այդ ժամանակ նշանավոր մելիք Ղուկասի անունը[179]։

դ) Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ մելիք Ղուկասի դուստր Դովլաթը Դոփյան Ջահանշահի որդու՝ Միրզաջանի կինն է եղել։ Դովլաթը Ծարի ս. Սարգիս մատուռի արևմտյան կողմում կանգնեցնել է տվել գեղաքանդակ մի խաչքար հետևյալ արձանագրությամբ. «Քրիստոս Աստուած. նշանս բարեխաւս Դաւլաթին. Աստուծով ես Դաւլաթս, ի տանէն Գեղամայ, դուստր մելիք Ղուկասին, ամուսին իմ մեծ իշխան Միրզաջան, որդիքս իմ Տաւիտ բէկ, Մելիք աշէկն կանգնեցինք զխաչս փրկութիւն հոգո. Թվին։ ՋՂԸ։ (1549)»[180]։ Եթե ընդունենք, որ մելիք Ղուկասն Այտինի թոռն է, ապա ամուսիններ Միրզաջանը և Դովլաթը եղբայրներ Ջհանշահի և Ազբուղայի երրորդ կամ չորրորդ սերունդն էին, իսկ այս պարագային նրանց ամուսնությունն արգելվում էր։ Ահա այս հանգամանքներից ելնելով Ազբուղայաններին մենք համարում ենք առանձին կազմավորված իշխանական տուն։

178 Մ. Բարխուտարյանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 49։

179 ԺՆ, մասն Ա, էջ 122—123։

180 «Դիվան», պրակ V, էջ 222։

Մելիք Ղուկասն ունեցել է երկու որդի՝ մելիք Թանկրիղուլ և Մելիքբեկ ու մեկ դուստր՝ Դովլաթ։

Մելիքբեկը մահացել է 1457 թ., երեսուն տարեկան հասակում։ Նրա գերեզմանաքարին քանդակված է թամբած ձի, սանձից բռնած մի մարդ, ձախ ձեռքին երկփողանի սրինգ, կարելի է ենթադրել, որ սրնգահար է եղել. «Այս է հանգիստ Մէլիք պէկին, որդի Ղուկաս աղին, եղբար մէլիք Թանղրիղուլին, որ երեսնամեայ փոխեցօ ի քս, եթող սուք անմխիթար թվ ։ՋԶ։ (1457)»[181]։

Մելիք Ղուկասի մյուս որդին՝ Թանկրիղուլը, հոր մահից հետո Ազբուղայանների տան մելիքն էր, ապրել ու գործել է երկար։ Նրա մասին առաջին տեղեկությունը վերաբերում է 1451 թ. իր հայրենակալվածք և իշխանանիստ Փառականք գյուղի եկեղեցու մոտ կանգնեցրած խաչքարի արձանագրությունում. «Ես մէլիք Թանկրիղուլս, որդի մէլիք Ղուկասին, թ/ոն Ա/զբուղին կանկն/եցի զխ/աչս ի փր/կութի. հոգո իմոյ։ Թվ։ Ջ։ (1451)»[182]։ Այս խաչքարի կողքին մելիք Թանկրիղուլը իր կնոջ՝ Խոնդաթի հոգու փրկության համար 1466 թ. կանգնեցրել է տվել ավելի մեծ ու գեղեցիկ խաչքար, որի արձանագրությունից իմանում ենք, որ Խոնդաթը մելիք Խուտայբախշի դուստրն է[183]։ Մելիք Խուտայբախշի ինքնությունը պարզող որևէ փաստ մեզ առայժմ չհաջողվեց գտնել։ Մելիք Թանկրիղուլի մասին վերջին տեղեկությունը վերաբերում է 1521 թ. իր հոր՝ մելիք Ղուկասի հիշատակին կանգնեցրած խաչքարի արձանագրությունում[184]։ Այսպիսով, ինչպես փաստերը վկայում են, Թանկրիղուլը ապրել ու գործել է շուրջ մեկ դար։

Սկզբնաղբյուրների համաձայն մելիք Թանկրիղուլն ունեցել է չորս որդի՝ Ղասում, Ավանդուկ, Վելիջան և Բաքա-

181 «Դիվան», պրակ IV, էջ 256։

182 Նույն տեղում, էջ 254։

183 Նույն տեղում։

184 Նույն տեղում, էջ 255։

ջան։ Սակայն Բ. Ուլուբաբյանը գրում է, որ Թանկրիղուլն ունեցել է Ղուկաս, Ղասում, Ավանդուկ և այլ որդիներ[185]։

Աղբուղայանների վերաբերյալ եղած սկզբնաղբյուրների ուշադիր քննությունից պարզվում է, որ Թանկրիղուլը Ղուկաս անունով որդի չի ունեցել,

Թանկրիղուլի Ղասում անունով որդին մահացել է 1466 թ., 25 տարեկան հասակում և թաղված է Փառականք մելիքանիստ գյուղի մեծ գերեզմանատանը։ Նրա գերեզմանաքարին նկարված է հեծյալ, որը նիզակով խոցել է վիշապին, իսկ մեկ այլ տեսարանում առյուծը ցատկել է եղան մեջքին և հոշոտում է նրան. «Այս է հանգիստ պարոն Ղասումին, որդի մէլիք Թանղրիղուլին, թոռն մէլիք Ղուկասին, որ Ի:Ե: (5) ամեայ փոխեցաւ ի քս. թվ :ՋԺԵ: (1466)»[186]։

Ճիշտ է նկատել վաստակաշատ Ս. Բարխուդարյանը, որ գրիչը սխալմամբ Ի և Ե տառերն առանձին է գրել, պետք է գրվեր միասին։ ԻԵ։, այսինքն 25։ Այս կարծիքը համոզիչ է երկու առումով՝ հինգ տարեկան մանկան գերեզմանաքարին նիզակով վիշապին խոցող հեծյալ դժվար թե նկարեին, կամ՝ եղան մեջքին ցատկած առյուծ։ Այդ տեսարանները երիտասարդության, ուժի և հզորության խորհուրդ վկաներն են։ Իսկ մյուսը՝ հինգ տարեկան մանկանը դժվար թե պարոն կոչեին։

Թանկրիղուլի մյուս որդին՝ պարոն Վելիջանը (Լելիջան) մահացել է 1536 թ., 30 տարեկան հասակում և թաղվել Աղբուղայանների տոհմական գերեզմանատանը. «Այս է հանգիստ պարոն Լէլիճանին, որդի մէլիք Թանղրիղուլին, թոռն մէլիք Ղուկասին, որ :Լ: (30) ամեաց փոխեցաւ ի ՔՍ... թվ «ՋՁԵ: (1536)[187]։

185 Բ. Ուլուբաբյան. նշվ. աշխ., էջ 388։ Իսկ իր մտքի հաստատում, որ Թանկրիղուլն ունեցել է Ղուկաս անունով որդի, Բ. Ուլուբաբյանը վկայակոչում է «Դիվան», պրակ IV, էջ 255-ը, սակայն այդ էջում և ընդհանրապես այդպիսի փաստ չկա։

186 «Դիվան», պրակ IV, էջ 255։

187 Նույն տեղում, էջ 256։

Թանկրիղուլի երրորդ որդին՝ մելիք Ավանդուկը, որի վերաբերյալ ևս տեղեկությունները սակավ են, երկար չի ապրել, մահացել է 1541 թ. և թաղվել իր եղբայրների կողքին[188]։ Թանկրիղուլի չորրորդ որդին՝ մելիք Բաբաջանը, ապրել է երկար, սակայն նրա մասին ևս քիչ տեղեկություններ են հանդիպում։ Մելիք Բաբաջանը 1550 թ. գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել Գավջալ աղայի հիշատակին[189]։ Հավանաբար կամ ազգակցական, կամ այլ կապով Գավջալ աղան առնչվում է Աղբուղայանների հետ, այդ պատճառով էլ Բաբաջանը նրա հիշատակին խաչքար է կանգնեցրել։

Մելիք Բաբաջանը 1541 թ. Ավանդուկի մահից հետո, մելիքություն է արել մինչև 1578 թ.։ Նրա մասին որևէ այլ հիշատակություն առայժմ չկա, միայն հայտնի է, որ Բաբաջանը մահացել է 1578 թ. և թաղվել հայրենի գերեզմանատանը, իր եղբայրների կողքին. «Այս է հանգիստ մէլիք Պապաճանին. որդի մէլիք Թանկրիղուլին. թվ. ՌԻԷ: (1578)»[190]։

Մելիք Բաբաջանը ունեցել է երկու որդի՝ Ղասումջան և Ադիբեկ[191]։ Ղասումջանը մահացել է 1571 թ. պատանի հասակում և թաղվել նույն գերեզմանատանը։ Նրա տապանաքարի արձանագրությունից իմանում ենք, որ նա ունեցել է Ադիբեկ անունով եղբայր։ Աղբուղայանների մելիքական տան վերաբերյալ սկզբնաղբյուրներում եղած հիշատակությունները առայժմ այսքանով սպառվում են։ Վերը բերած փաստերը նկատի ունենալով, մենք չենք կարող համաձայնվել Կարապետ եպիսկոպոսի և Բ. Ուլուբաբյանի այն կարծիքին, թե Աղբուղայան-Պուղիկյան մելիքական տունն իր անվանումը ստացել է Այտինի որդի Աղբուղայի անունից և Դոփյան Այտինի ճյուղի շարունակությունն է։

188 Նույն տեղում։

189 Նույն տեղում։

190 Նույն տեղում, էջ 257։

191 Նույն տեղում։

Վերը արդեն ասվեց, որ Տաթևի վանքի 1513 թ. փաստաթուղթը ստորագրող մելիքների ու տանուտերերի շարքում առաջինը գրված է Գեղարքունիքի տեր, Եղիշի որդի մելիք Միրզայի թոռ Փիրհամզայի անունը[192]։

Իսկ ո՞վ էր այս մելիք Միրզան և ի՞նչ կապ ուներ Դոփյանների հետ։ Սկզբնաղբյուրներում գրեթե միաժամանակ հիշվում են մի քանի Միրզաներ, որը շփոթության մեջ է գցել Կարապետ եպիսկոպոսին և խնդրո առարկա Փիրհամզայի պապ մելիք Միրզային և Վանավան գյուղի եկեղեցու գավթի արևելյան պատին հենած խաչքարի 1502 թ. արձանագրության մեջ հիշված, Գեղարքունիքի իշխան Միրզային համարել է միևնույն անձը[193]։ Այնուհետև Կարապետ եպիսկոպոսը եզրակացնում է, որ Փիրհամզայից երկու տասնյակ տարի առաջ Գեղամա երկրի իշխանն է եղել նրա պապ Միրզան, որն ունեցել է Եղիշե և Մելիքսեթ անունով որդիներ, առաջինը հաջորդել է նրան և ԺԵ դարի վերջերում, կամ ԺԶ-ի սկզբներում իշխանությունը ժառանգություն է թողել իր որդի Փիրհամզային[194]։ Այս Միրզան, որին Կարապետ եպիսկոպոսը համարում է Փիրհամզայի հայրը, իրականում Սոդքի տեր Միրզաջանն է, որը Միրզա և Միրզաջան ձևերով հիշատակված է իր որդու Մելիքսեթ եպիսկոպոսի արձանագրություններում. «...Մ/էլքսեթ արհի ե/պիսկոպոս որդի պարոն Միրզաջանին ե/ղբար պարոն Մելիքբէկին»[195]։

Ս. Բարխուդարյանն ապացուցել է, որ Փիրհամզայի տոհմի նստավայրը եղել է Կամոյի շրջանի Կարմիր գյուղը[196]։ Իսկ ներկայիս Կամոյի շրջանը չէր մտնում Դոփյանների իշխանության կազմում, որի վերջին սահմանը, ինչպես տեսանք, Շողագա գյուղն էր։ Ինչպես Միրզայի, այնպես էլ նրա որդու՝ Եղիշեի մասին սկզբնաղբյուրները հիշատակություններ գրեթե չեն պարունակում, հետևապես հնարավոր չէ սպառիչ խոսք ասել նրանց մասին։ Կարմիր գյուղի ս. Գրիգոր ավերակ եկեղեցու բակում գտնվում է Փիրհամզայի տոհմի գերեզմանատունը, որտեղ կանգնեցված խաչքարերի ու եղած տապանաքարերի արձանագրությունների քննությունից պարզվում է, որ մելիքական այս տունն առաջացել է XV դ. կեսերին։ Արձանագրությունները կոնկրետ վկայություններ չեն պարունակում Փիրհամզայի ծնողների և տոհմի առաջացման ժամանակաշրջանի վերաբերյալ։ Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան կողմում Փիրհամզան խաչքար է կանգնեցրել իր ծնողների հիշատակին. «Ես Փիրհամզէս կանգ/նեցի սբ. խաչս յիշատակ ծնաւղաց իմոց»[197]։ Արձանագրությունում չեն հիշատակված Փիրհամզայի ծնողների անունները և անթվակիր է։ Ս. Բարխուդարյանը ժամանակը նշանակել է XVI դ. սկիզբը։ Խաչքարը կանգնեցնողը մելիք Փիրհամզան է, չնայած այն հանգամանքին, որ իր մելիքական կոչումը չի նշել։ Նույն վայրում իր Ջոհրապ որդու հոգու փրկության համար մելիք Փիրհամզան 1505 թ. խաչքար է կանգնեցրել, որի արձանագրության մեջ կա «Մանաահ» իմաստ չարտահայտող բառը՝ «որդի Մանաահ»։ Այս բառից սկսած արձանագրությունը եղծված է և դժվար է ասել, թե «Մանաահ» Փիրհամզայի հոր, թե մոր անունն է, թե ուրիշ իմաստ է արտահայտում. «Ես մելիք Համզէս որդի Մանաահ... եաու կազմել տապանս եւ նկարել զխաչս. որք կարդայք յիշեցէք թվ ։ՋԾԴ։ (1505) ես Գրիգոր/էս եպիսկոպոս նկ/արեցի զխա/չս ի խնդրո /Փիրհամզին, /ի փրկութի. հոգո որդոյ իւրոյ Ջաւհրապին»[198]։ Ուրեմն Փիրհամզան ունեցել է Ջոհրապ անունով որդի, որը մահացել է երիտասարդ հասակում։ Նույն թվականին Փիրհամզայի եղբայր Յուսուպշեն խաչքար է կանգնեցրել «Բարեխաւս իշխանին»[199]։ Պետք չէ

192 Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. II, էջ 257—258։

193 Կարապետ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 98—100, 104։

194 Նույն տեղում, էջ 100։

195 «Դիվան», պրակ IV, էջ 80, 125, Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 407։

196 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 194։

197 «Դիվան», պրակ IV, էջ 99։

198 Նույն տեղում, էջ 98։

199 «Ազգագրական հանդես», հ. XVIII, էջ 135, «Դիվան», պրակ IV, էջ 106։

տարակուսել, որ Յուսուպշեն նկատի ունի իր եղբոր՝ Փիր-Համզային, քանի որ ընդունված սովորություն էր իբրև երախտագիտության դրսևորում, կենդանության ժամանակ եկեղեցի կառուցել, կամ խաչքար կանգնեցնել բարերարի կամ իշխանավորի համար: Փիրհամզայի վերաբերյալ վերջին տեղեկությունը վերաբերում է 1549 թ.: Այս թվականին Հացառատ (հնում Անեղ) գյուղի եկեղեցու բակի մի քարի արձանագրության համաձայն Փիրհամզայի կին, պարոն Դավթի դուստր՝ Տատլուղանը նորոգել է ս. Գրիգոր եկեղեցու շրջապատը[200]: Կարելի է ենթադրել, որ այս թվականին Փիրհամզան դեռևս ապրում էր, հակառակ պարագայի կինը կնշեր նրա մահացած լինելու հանգամանքը:

Տաթևի վանքի փաստաթղթերի ստորագրողներից էր նաև Ասատուրի որդի Շաղուպաթը: Ս. Բարխուդարյանը քննության առնելով Շաղուպաթի ինքնությունը, նկատի ունենալով, որ Շաղուպաթն իրեն անվանել է «Թոռն Միրանշի» նրա տոհմը կոչել է Միրանշենց տոհմ[201]: Միրանշենց տոհմի մասին առաջին գրավոր հիշատակությունը այսօր վերաբերում է 1524 թ.: Կամո քաղաքի «Դարի գլուխ» կոչված գերեզմանոցում է գտնվում Շաղուպաթի հոր՝ Աստվածատուր աղայի տապանաքարը. «Այս է հանգիստ Ածատուր աղին, որդի Միրանշին, խանուտէր Գաւառիս. յիշեցէք ի քս. թվ ՋՀԳ: (1524)»[202]: Գրավոր վկայություններ կան պահպանված Աստվածատուր աղայի կնոջ՝ Շահսուլթանի և նրանց որդիների մասին: Աստվածատուր աղայի տապանաքարի մոտ գտնվում է իր կնոջ տապանաքարը, որի տապանագրում ասված է, որ Շահսուլթանը Աստվածատուր աղայի «կողակիցն» է և մահացել է 1531 թ.[203]: Թե կոնկրետ երբ է Շաղուպաթը հաջորդել իր հոր՝ Աստվածատուրին դժվար է ասել: Շաղուպաթը վերանորոգել է տվել Հացառատ (Անեղ)

200 Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. II, էջ 240:

201 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 208:

202 «Դիվան», պրակ IV, էջ 54:

գյուղի եկեղեցին. «Ես Շաղուբաթ իշխան [Անեղայի կառուցի[մ] այս սբ. Ածածին եկեղեցիս ի հիմանէ թվ. փրկչա[կան :ՊՂԸ: 898 և ի թվ. հայոց :ՅԽԸ: 348: [Իսկականի]ն արտագրեցաւ 1893 թ.»[204]: Ս. Բարխուդարյանը ենթադրում է, որ այս արձանագրությունը առաջին անգամ կազմված պետք է լինի XVI դ., մի հնագույն արձանագրության հիման վրա: Երկրորդ անգամ այս արձանագրությունն արտագրվել է 1893 թ. և տեղական անապարծության կամ արձանագրության վնասված լինելու պատճառով Շաղուպաթ Գավառնեցին դարձել է Շաղուպաթ Անեղացի: Եկեղեցու ճարտարապետական ձևերը և շինարարական տեխնիկայի տվյալները վկայում են, որ այն կառուցվել է 899 թ.[205]:

Այդ նույն եկեղեցու գմբեթի հարավ-արևմտյան կողին կա անթվակիր, կիսեղծ արձանագրություն. «Ես Շաղուպաթ, մեք Անեղցիք մեծ և փոքր ի հայրենիքս. ով Անեղու տանուտէրս...»[206]: Ինչպես տեսնում ենք երկու արձանագրություններում էլ շեշտվում է Շաղուպաթի Անեղցի լինելու հանգամանքը: Շատ հնարավոր է, որ նրա նախնիները ծագումով եղած լինեին Անեղից, որը և ակնարկվում է արձանագրություններում: Շաղուպաթը մահացել է 1534 թ.: Սմբատյանցը, Լալայանցը, Ալիշանը և Ջալալյանցը հրատարակել են նաև Շաղուպաթ աղայի տապանագիրը. «...Այս է հանգիստ Շաղուբաթ աղային, որ էր տանուտէր Գաւառին փոխեցաւ առ Քրիստոս. թուին: ՋՁԳ: (1534)»[207]: Որ Շաղուպաթը մահացել է 1534 թ., վկայում է նրա հիշատակին կանգնեցված խաչքարի արձանագրությունը: Դրանք երկու խաչքարեր են կանգնեցված նույն պատվանդանին՝ Շահսուլ-

203 Նույն տեղում:

204 Նույն տեղում, էջ 93:

205 Նույն տեղում:

206 Նույն տեղում, էջ 94:

207 Հ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 58, «Ազգագրական հանդես», հ. XVIII, էջ 112, Ալիշան, Սիսական, էջ 44, Մ. Ջալալյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 125:

թանի, Աստվածատուր աղայի կնոջ և Շաղուպաթի հիշատակին։ Ս. Բարխուդարյանը գրում է, որ խաչքարը կանգնեցրել է Շաղուպաթը[208]։ Կարծում ենք, որ երկու խաչքարերն էլ կանգնեցրել է Թուման, որը 1534 թ. փոխարինել է մահացած եղբորը՝ Շաղուպաթին և խաչքար է կանգնեցրել իր մոր՝ Շահսուլթանի և Շաղուպաթի հիշատակին. «Սբ. խաչս բարէխաւս Շահսուլթանին։ |Թվ, ՋՁԳ։ (1534)», իսկ մյուս «Սբ խաչս բարէխաւս Շաղուպաթ աղին. Թվ ։ՋՁԳ։ (1534)[209]։ Սկզբնաղբյուրներից պարզվում է, որ Աստվածատուրն ունեցել է Շաղուպաթ և Թումա անունով որդիներ։ Թումայի գործունեության մասին ունենք մյուս տեղեկություններ։ Կամոյի գերեզմանատանը նույն պատվանդանին կանգնեցված է երկու խաչքար. մեկը Թումա աղայի հիշատակին «Կանգնեցաւ խաչս ի փրկութիւն Թու/մա աղին. որ է որդի Աստուածատուր աղին»[210], մյուսը՝ նրա կնոջ՝ պարոն Հեղինեի։ Այս վերջին խաչքարի արձանագրությունն ունի 1548 թ.[211]։ Հեղինեի խաչքարի արձանագրությունում հիշատակվում է պարոն Գուլաղան, որը Թումայի որդին է։ Դա մենք իմանում ենք Թումայի տապանագրից. «Այս է հան/գիստ Թում/ին, որ է որդի Ասծա/տուր/աղին/։ Հախնազար, Թոմա, Կուլ/աղա»[212]։ Հախնազարը, Թոման և Գուլաղան Թումայի որդիներն են, որոնք կանգնեցրել են խաչքարերը և շինել տվել տապանաքարը։ Այսպիսի եզրակացության հանգելու համար մեզ հիմք է ծառայում նաև Գուլաղայի անվան հիշատակումը Հեղինեի խաչքարի արձանագրությունում և Թումայի տապանաքարի տապանագրում։ Այսքանով տեղեկությունները գրեթե սպառվում են այս իշխանական տան վերաբերյալ։ Այսպիսով, եթե Շաղուպաթ Գավառնեցին գործել է XVI դ. առաջին կեսին, ապա նրա հոր՝ Աստվածատուրի և պապի՝ Միրանշիի գործունեությունն ընկնում է XV դ., համենայն դեպս մինչև դարի կեսերը, ուստի Միրանշենց տոհմի կազմավորումը գնում է XV դ. խորքերը, և ստացվում է, որ իշխանական այս տունը գոյատևել է շուրջ մեկ ու կես դար։

---

208 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 209։

209 «Էջմիածին», պրակ IV, էջ 54—55։

210 Նույն տեղում, էջ 55։

211 Նույն տեղում։

212 Նույն տեղում։

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ

XIV—XV դարերում Ներքին Խաչենում շարունակում էին իշխել Վախթանգյան իշխանական տան ներկայացուցիչները: Վախթանգի որդի Հասան-Ջալալի անունով XIII դ. վերջերից իշխանական այս տունը կոչվեց Հասան-Ջալալյան: XIII դ. թաթար-մոնղոլական լուծը, ծանր հարկային քաղաքականությունը, իսկ 1261 թ. Հասան-Ջալալի ուխտադրուժ սպանությունը ծանր կացություն ստեղծեց Հասան-Ջալալյան իշխանական տան համար:

Թեև քաղաքական ու տնտեսական այս ծանր վիճակը նկատի ունենալով է Կարապետ եպիսկոպոսը գտնում, որ XIII դ. վերջերից իշխանական այս տունը թուլացել էր, և նրա կալվածքներին տիրում էին հարևան Դոփյանները[1]:

Բ. Ուլուբաբյանն առարկելով Կարապետ եպիսկոպոսին գտնում է, որ նրա կռվանները ի զորու չեն հաստատելու, թե XIII դ. վերջերից մինչև XV դ. վերջը Հասան-Ջալալյան իշխանական տունը նսեմացած էր[2]: *Այս խնդիրը քննության առնելիս Բ. Ուլուբաբյանը քննադատում է նաև Կարապետ եպիսկոպոսի տեսակետը պաշտպանողներին՝ Լ. Բաբայանին և տողերիս հեղինակին*[3]:

1 Կարապետ եպիսկոպոս, *նշվ. աշխ.*, էջ 93:

2 Բ. Ուլուբաբյան, *Ներքին Խաչենի իշխանությունը XIV—XV դդ.* (ՀՍՍՀ ԳԱ *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1972 թ. № 11, էջ 96), նույնի՝ *Խաչենի իշխանությունը X—XV դդ.*, էջ 298:

3 Բ. Ուլուբաբյան, *նշվ. աշխ.*, էջ 97, 300:

Մենք Հասան-Ջալալյան իշխանական տանը նվիրված մի հոդվածում, հրապարակված 1969 թ., թյուրիմացաբար անտեսելով մի փաստ, գրել ենք, թե ճիշտ մեկ հարյուրամյակ՝ 1282—1383 թթ. Հասան-Ջալալյանների մասին հիշատակություններ չկան[4]: *Սակայն հեռու ենք եղել այն մտքից, թե Հասան-Ջալալյաններն ամբողջապես զրկվել էին իրենց ժառանգական իրավունքներից ու կալվածքներից: Երբ գրում ենք, թե Հասան-Ջալալյանների վերաբերյալ փաստերը սակավ են կամ չենք հանդիպում, դա չի նշանակում, որ նրանք ընդհանրապես գոյություն չունեին:*

Ինքը՝ Բ. Ուլուբաբյանը, ևս բաժանում կամ պաշտպանում է Կարապետ եպիսկոպոսի կարծիքը: Նա իր «Ներքին Խաչենի իշխանությունը XIV—XV դդ.» հոդվածում գրում է, որ «թաթար-մոնղոլական տիրապետության հաստատումով թուլացել էր Ներքին Խաչենի իշխանությունը»[5]: *Իսկապես մի քանի տասնամյակ, իսկ դա կարող էր նաև լինել 50 կամ 100 տարի, սկզբնաղբյուրները սակավ տեղեկություններ են հաղորդում Հասան-Ջալալյանների մասին:*

Եթե Հասան-Ջալալի իշխանության շրջանում Ներքին Խաչենի իշխանությունն ապրում էր իր փառքի տարիները, ապա 1261 թ. նրա սպանությունից հետո այն սկսեց թուլանալ: Անշուշտ, այդ հարցում մեծ էր այս տան նկատմամբ թաթար-մոնղոլների վարած հատուկ քաղաքականությունը: Հասան-Ջալալը մեղադրվեց թաթար-մոնղոլների դեմ ապստամբություն կազմակերպելու մեջ: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ մոնղոլները Հասան-Ջալալին մեղադրում էին իրենց օրենքներին ու հավատին առավել թշնամի լինելու հարցում[6]: *Բնական է ու հասկանալի, որ թաթար-մոնղոլները պետք է հալածեին նաև հայրենասեր ու հանդուգն իշխա-*

4 Գ. Կիրակոսյան, *Հասան-Ջալալյան իշխանական տունը XV դ.*, ՀՍՍՀ ԳԱ *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1969, № 5, էջ 88:

5 Բ. Ուլուբաբյան, *նշվ. աշխ.*, էջ 97:

6 Կ. Գանձակեցի, *նշվ. աշխ.*, էջ 390—391:

նի սերունդներին։ Դրան հակառակ XIII—XIV դդ. ավելի արտոնյալ վիճակում էր Դոփյան իշխանական տունը։

Դա կարելի է բացատրել հետևյալ հանգամանքներով.

1. Դոփյան իշխանազունները ակտիվ մասնակցություն ունեցան դեպի Միջագետք թաթար-մոնղոլների արշավանքներին և աչքի ընկան իրենց քաջությամբ ու մատուցած ծառայություններով։

2. Դոփյանները խնամիական կապերով կապվեցին թաթար-մոնղոլական արքունիքում հեղինակություն ունեցող և հզորացող Օրբելյան իշխանական տան ներկայացուցիչների հետ, հանգամանք, որը դրական դեր խաղաց երկրի քաղաքական կյանքում Դոփյանների ազդեցության մեծացմանը։

Հասան Բ-ի ժամանակներից մինչև Հասան Գ Սարեցու մահը՝ 1387 թ., Դոփյան իշխանները կարողացել էին մոնղոլներին ցույց տված ծառայության շնորհիվ գտնվել համեմատաբար արտոնյալ վիճակում։ Այդ ժամանակ է, որ Դոփյանները հզորացան և վերականգնեցին իրենց իրավունքները Դոփյան իշխանական տան տիրույթների նկատմամբ՝ ինչ-որ չափով ընդարձակելով այդ տարածքների սահմանները։ Այդ մասին, ինչպես մենք տեսանք, ասվում է Գրիգոր Բ-ի 1289 թ. Տարում կանգնեցրած խաչքարի արձանագրությունում և 1312 թ. ձեռագրի հիշատակարանում[7]։ Գրիգոր Բ-ի արձանագրությունում ուշագրավ է հետևյալ միտքը. «...կանգնեցի զխաչս ի գեղս, որ կոչի Տար, սիրեցելոյն հաւրըն իմոյ հայրենիք և պարգև քաջութեանն»։ Արժանավոր հոր որդին հպարտությամբ է արձանագրում, որ այդ վայրերը իր հայրը հայրենիք և պարգև է ստացել իր քաջության համար։ Թվարկված վայրերի մի մասը Դոփյանները ստացել են մոնղոլներից՝ իրենց քաջության դիմաց, իսկ Տարը եղել է Դոփյանների հայրենիքը, այսինքն ժառանգական տիրույթը։

7 «Դիվան», պրակ V, էջ 222, Մ. Բարխուդարյանց. Արցախ, էջ 405, ԺԴ, էջ 84։

Բ. Ուլուբաբյանը մեզ վերագրում է մի թյուրիմացություն, որ իբր թե մենք Տարը չենք համարում Խաչենի մասը։ Ասենք, որ մենք հեռու ենք նման կարծիքից, և դա մնում է Բ. Ուլուբաբյանի չհիմնավորված ենթադրությունը։ Երբ գրում ենք, որ XIII դ. վերջից և XIV դ. աղբյուրները տեղեկություններ չեն հաղորդում Հասան-Ջալալյանների մասին, ապա դա չի նշանակում, թե նրանք ընդհանրապես վերացել էին պատմության թատերաբեմից։ Մենք այն կարծիքին ենք, որ XIII—XIV դդ. իշխանական այս տունը թուլացել էր։

Այս կարծիքն անուղղակի առաջ է քաշում նաև ինքը՝ Բ. Ուլուբաբյանը[8]։

XIII դ. վերջից մինչև XIV դ. սկիզբը Ներքին Խաչենում իշխել է Աթաբակի որդի Ջալալը, որն իր նշանավոր պապի անվան կրողն էր։ Տարբերելու համար նրան կոչենք Ջալալ Բ։ Նրա մասին առաջին հիշատակությունը հանդիպում է 1293 թ. Մեծարանց Ս. Հակոբի վանքում Խութլուբեկի թողած արձանագրությունում. «Յիշխանութեն / Ջալալին. ես Խութ/լուբէկ որդի Խոյդանա / միաբանեցա. ընդ. ուխ/տիս ըն-ծայիւք... թվին/: ՉԽԲ: (1293)»[9]։ Ջալալ Բ-ի մասին հաջորդ հիշատակությանը հանդիպում ենք Գանձասարի վանքում Աբուքանի և իր կնոջ՝ Մինախաթունի, 1311 թ. արձանագրությունում. «...Ես Աբուքան և ամուսին իմ Մինախաթուն միաբանեցաք ընդ. ուխտիս ի/շխանութ. Ջալալին... տուաք Չարեքղար և այլ ը-նծ/ա... թվ.—/ին/ :ՉԿ: (1311)»[10]։

Ջալալն այնուհետև հիշատակվում է Գանձասարի գավթի արևմտյան պատի, ուր Գրիգորի և իր կնոջ՝ Մինայի

8 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 297, 300։

9 «Դիվան», պրակ V, էջ 17, Մ. Բարխուդարյանց. Արցախ, էջ 170։

10 И. Орбели. Надписи Гандзасара и Хотаванка, Петроград, 1919, с. 24. Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 376, «Դիվան», պրակ V, էջ 53, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, Երևան, 1981, էջ 136 (Մ. Բարխուդարյանը թյուրիմացաբար :ՉԿ:-ն վերծանել է 1321, պետք է լինի 1311)։

1318 թ. նվիրատվական արձանագրությունում. «...յիշխանու[թ]ե. Ջալալին միաբանեցաք սբ. ուխտիս, տվաք [ըն]ծա...»[11]։

Ոմն Գևորգի որդի Սարգիս քահանայի թողած անթվակիր արձանագրությունում ևս նշվում է միայն Ջալալի իշխանությունը[12]։ Ինչպես տեսնում ենք, բոլոր արձանագրություններում էլ Ջալալն առանձնապես չի մեծարվում պատվո ու քաջության տիտղոսներով, ինչպես իր նախորդները։ Սկզբնաղբյուրներում Ջալալ Բ-ի կյանքին ու հետագա գործունեությանը վերաբերող փաստեր առայժմ չեն հանդիպում։ Ընդհանրապես Ջալալյանների մասին ավելի քան քառասուն տարի սկզբնաղբյուրները խիստ ժլատ տեղեկություններ են հաղորդում։ Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ XIV դ. Հասան-Ջալալյանների իշխանությունը թուլացած էր։ Այս միտքը հաստատվում է նաև Ջալալին հաջորդած Իվանեի վերաբերյալ եղած տեղեկություններով։ Իվանեն սկզբնաղբյուրներում Ներքին խաչենի իշխան է հիշատակված միայն մեկ անգամ՝ Գանձասարի 1361 թ. տեր Կոստանդի նվիրատվական արձանագրությունում. «Թվին ։ՊԺ։ (1361). իշխանու[թ]ե. մեծին Իվանէի ես տր Կոստանդ մեծ. փափաքանաւք գնեցի զզանկականիս ի սբ. ուխտս բերի...»[13]։ Իվանեն, ինչպես ճիշտ ենթադրել է Բ. Ուլուբաբյանը, Ջալալի որդին է, որն անվանակից էր իր պապին՝ Իվանեին[14]։

XIV դ. ութսունական թվականներին Ներքին խաչենի իշխան է հիշատակվում Ջալալ Գ-ն։ Մեծկողմանց եպիսկոպոսարանում 1383 թ. գրված հիշատակարանում Սարգիս

11 И. Орбели, նշվ. աշխ., էջ 25, «Դիվան», պրակ V, էջ 53, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 136։

12 И. Орбели, նշվ. աշխ., էջ 22, «Դիվան» պրակ V, էջ 53, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 137։

13 И. Орбели, նշվ. աշխ., էջ 9, «Դիվան», պրակ. V, էջ 42, Բ. Ուլուբաբյան. Գանձասար, էջ 104։

14 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 302, նույնի նշված հոդվածը, էջ 99։

գրիչը Ջալալի մասին գրել է. «...Ի թվ որ կազմեցաւ սբ աւետարանս ձեռամբ անարժան ծառայիս այ Սարգիս յիշեցէք ի քս։ ՊԼԲ-ն էր մեհեկի ամսի ԻՋ-ն էր որ կազմեցաւ։ Որ է սբ աւետարանս Մեծակողմանց խաչինոյ եպիսկոպոսարանէն մայրաքաղաքէն իշխանուր պարոն Ջալալին եպսութ տր Գրիգորին գեռաքարեցին»[15]։

Բ. Ուլուբաբյանը, քննության առնելով այս հիշատակարանի բովանդակությունը, գրում է. «Ուշադրության արժանի է Գրիգոր Գեռաքարեցու առաջնորդ լինելը Ծարա իշխանության հոգևոր կենտրոն խաթրավանքում (Մեծկողմանց) եպիսկոպոսարանում»։ Այնուհետև, Բ. Ուլուբաբյանը հիմք ընդունելով Գ. Հովսեփյանի կարծիքը այն մասին, որ գեռաքարեցիք Ներքին խաչենի տերերից էին, հանգում է հետևյալ եզրակացությանը. «Վկայակոչված փաստը խոսում է այն մասին, որ Ներքին խաչենի իշխանության հոգևոր ազդեցությունը ևս տարածվում էր Վերին խաչենի կամ Ծարա տարածքի վրա»[16]։ Մենք չենք կարող համաձայնվել Բ. Ուլուբաբյանի այս եզրակացությանը հետևյալ պատճառներով։ Նախ խնդրո առարկա հիշատակարանում խոսք, անգամ ակնարկ չկա Ծարի իշխանության հոգևոր կենտրոն խաթրավանքում Գրիգոր Գեռաքարեցու եպիսկոպոս լինելու մասին։ Ապա հիշատակարան գրողը հայտնում է, որ երանելի Սարգիսը. «գտեալ զսա ի գաւառին Անոյ... ստացաւ զսա ի հալալ (ըն)չից... և [ըն]ծայեաց զսա Մեծ կողմանց եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սնընդեան։ ...ընծայեցաւ կենսայ[բեր] աւետարանս սուրբ Գրիգորիս։ Ի թուականութեանս ՈՀԲ ի յիշխանութեանս հզաւրին Հասանայ որդոյ Վախտանգայ, և հայրապետութեանս տն Յոհաննիս...»[17]։

15 Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983, էջ 259, Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 263։

16 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 303։

17 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 258։

Գ. Հովսեփյանը, քննության առնելով այս իրադարձությունները, հանգել է այն հետևության, որ «Մեծկողմանց կամ Մեծկունից եպիսկոպոսարանը մեկն է Արցախի հնագույն հոգևոր կենտրոններից, որ Զ դարից սկսած որոշ դեր է կատարել Աղվանից իշխանության մեջ: Հիշատակարանի Վախթանգ որդի հզոր Հասանը, ոչ այլ ոք է, բայց եթե Հասան-Ջալալ-Դոլեն կոչվածը: ...Այդ խնդիրը մեզ համար պարզված է հատուկ ուսումնասիրությամբ»[18]: Ուրեմն այստեղ խոսքը վերաբերում է Հասան-Ջալալյանների հոգևոր կենտրոններից մեկի՝ Մայրաքաղաք կամ Տիրամայր վանքի մասին, իսկ Խաթրա վանքը, ինչպես վերը արդեն մենք տեսանք, Վախթանգյանների հոգևոր կենտրոններից էր, որը հետագայում դարձավ Դոփյանների հոգևոր կենտրոններից մեկը: Այս ամենից հետո չի կարելի ընդունել, որ Վերին Խաչենի իշխանությունը ստորադաս էր Ներքին Խաչենի իշխանությանը, մանավանդ, որ XIV դ. երկրորդ կեսին Դոփյան իշխանն էր ըմբոստ ու խիզախ Հասան Գ Սարեցին: Այդ նա էր Արևելյան Հայաստանի իշխաններից, որ դիմադրեց Ծարի տարածքը ներխուժած Լանկ-Թեմուրի հրոսակներին և իր որդիների ու կնոջ հետ քաջաբար զոհվեց այդ անհավասար մարտում: Իր կարծիքը հիմնավորելու համար Բ. Ուլուբաբյանը առավել կարևոր է համարում այն, որ՝ «Սակայն տըվյալ պարագային մեզ համար առավել կարևորը Ծարա հոգևոր կենտրոնում ընդօրինակված ձեռագրի բովանդակությունն է. հիշատակագիրն այստեղ առաջին հերթին հիշում է պարոն Ջալալի իշխանությունը: Դա աներկբայորեն նշանակում է,—շարունակում է իր միտքը Բ. Ուլուբաբյանը,— տեղի իշխանները ստորադասված էին Ներքին Խաչենի տեր Ջալալին»[19]: Մենք արդեն տեսանք, որ խնդրո առարկա հիշատակարանը գրվել է ոչ թե Ծարի Խաթրավանքում, այլ Հասան-Ջալալյանների հոգևոր կենտրոններից մեկում՝ Մայրա-

18 Նույն տեղում, էջ 274:

19 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 303—304:

քաղաք վանքում: Նկատի առնենք, որ հիշատակարանում հիշատակված են միայն պարոն Ջալալը և Գրիգոր Գեաքարեցի եպիսկոպոսը. Հասան-Ջալալյան և Դոփյան որևէ իշխան չի հիշատակվում: Եթե հիշատակագիրը հիշատակեր նախ պարոն Ջալալին, ապա Դոփյան որևէ իշխանի, այս պարագայում հիմք կունենայինք պնդելու, որ պարոն Ջալալն իսկապես գահերեց էր Դոփյանների նկատմամբ:

XIV դ. 80—90-ական թվականներին Հայաստան ներխուժեցին Ոսկե Հորդայի խան Թոխթամիշի և Լանկ-Թեմուրի հրոսակախմբերը: Ժամանակի աղբյուրներում հիշատակվում են այն վայրերը՝ Արարատյան դաշտ, Մեծ Սյունիք, Արտաան, Կարս, Բջնի, Երևան և այլն, որոնք նվաճվեցին նրանց կողմից: Գր. Խլաթեցու վկայությամբ «զերկիրս ամէն չար արարին»: Ինչպես տեսնում ենք, սկզբնաղբյուրներում Ներքին Խաչենը չի հիշատակվում: Այն ինչ-որ պատճառներով զերծ մնաց Թոխթամիշի և Լանկ-Թեմուրի արշավանքներից, և սկսած XIV դ. վերջերից Հասան-Ջալալյանները բռնեցին վերելքի ու հզորացման ուղին, իսկ XV դ. սկզբներում դեր էին խաղում Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքում: Ջալալ Գ-ի իշխանությունը վարել է մինչև XV դ. սկզբները (երևի մինչև 1407 թ.): Մեջլիսի որդի Ուլուբեկի կողմից 1407 թ. Գանձասարի վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ թողած արձանագրությունից իմանում ենք, որ նա եղել է Ներքին Խաչենը կառավարող Ջագա իշխանի ենթականերից. «Կամաւն այ. ես Ուլուբէկս, որդի Մէջլիսին տուի / զիմ հայրենի հողն՝ զՄեղտանոսի կտուրն, որ ի Վարդաբերանց է իւր սարահաթավն ի սբ. ուխտս / Գանձասարա իմ հոգոյս յիշատակ յառաջնորդութն: Մաթէ վարդապետին եւ ի տէրութն/ Ջագին... ի թվին ՊԾԶ: (1407)»[20]: Արձանագրությունում Ուլուբեկի՝ Ջագային ենթարկվելու փաստն ուղ-

20 «Դիվան», պրակ V, էջ 54, И. Орбели, նշվ. աշխ., էջ 23, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 374—375, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 138 (Հ. Օրբելին և նրան հետևելով Ս. Բարխուդարյանը «սար-

ղակի չի ակնարկվում, սակայն այն հանգամանքը, որ Զաքան հիշատակված է որպես տեղի տեր, ասում է այն մասին, որ նա Ներքին Խաչենը կառավարող իշխանն էր։ Զաքայի մասին հաջորդ տեղեկությունը գտնում ենք 1411 թ. Ծարի Գետամեջի վանքում Թովմա Սյունեցու գրած հիշատակարանում[21]։ Այնտեղ որպես Ծարի իշխաններ հիշատակվում են Դոփյան իշխանազունները, իսկ վերջում, որպես Դոփյան ժառանգներ՝ պարոն Աթաբակը և Ծարի բոլոր տանուտերերը՝ «նախ Զաքիկ»[22]։ Աթաբակը և Զաքան, ինչպես ճիշտ նկատել է Բ. Ուլուբաբյանը, Հասան-Ջալալյաններից էին, և սխալվել է գրիչը, երբ նրանց թվարկել է Դոփյանների շարքում[23]։ Սակայն մենք չենք բաժանում Բ. Ուլուբաբյանի այն կարծիքը, թե գրիչը Զաքային «ներկայացնում է իբրև ամբողջ Խաչենի ու Ծարա տանուտերերի (իշխանավորների) գլխավորին»[24]։ Գրիչը նախ հիշատակել է Դոփյան իշխաններին. «յիշխանութեան տեղւոյս (այսինքն Ծարա—Գ. Կ.) պարոն Վահրամայ, պարոն Տուրսունին, պարոն Շրուանին, պարոն Սասոյին, պարոն Պռօշին, պարոն Գրիգորին», ապա հիշատակարանի վերջում գրում է. «Նաև յիշել ի տէր զամենայն տանուտէրսն աստուածաշէն երկրիս Ծարայ, նախ Զաքիկ...»[25]։

հատավն» վերծանել են «չարհատավն»։ Բ. Ուլուբաբյանն ուղղելով Հ. Օրբելու վերծանումը՝ «ձարհատավն» կամ «չարհատավն», գտնում է, որ պետք է լինի «սարհատավն», որը նշանակում է սահման։ Բ. Ուլուբաբյանի ուղղումը տեղին է և ճիշտ, սակայն այս բառի գրության ճիշտ ձևն է սահրաւն (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Դ. հատոր, Երևան, 1979, էջ 163)։ Սահմանի իմաստով «սահրաւն» բառը օգտագործվում է նաև 1456 թ. Առաջաձոր գյուղի եկեղեցում գրված մի հիշատակարանում (տե՛ս Մ. Բարխուտարյանց, էջ 187)։

21 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 122։

22 Նույն տեղում, էջ 122—123։

23 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 306։

24 Նույն տեղում։

25 ԺԵ, մասն Ա, էջ 122—123։

Զաքայի մասին վերջին տեղեկությունը հաղորդում է Մաթեոս Մոնազոն գրիչը՝ 1417 թ. Գանձասարի վանքում գրած ձեռագրի հիշատակարանում։ Դառն գույներով նկարագրելով Հայաստանի ծանր վիճակը, գրիչը ցավով նշում է, որ հայկական իշխանությունները քայքայվել էին, իսկ երկրում տնօրինում էին օտար տիրապետողները և ապա ավելացնում. «...իսկ տանս Խաչենոյ բարեպաշտ ոմն կայր՝ Զաքայ անուն, այն փոխեցաւ յաստեացս, և մնացեալքն յազգէ սորին՝ Ջալալն և որդիք նորին, և որդիք Զաքային՝ Արղութէն և Ջալալադաւլէն, և եղբայրք նորին, Էլէգումն և Էլէգանն՝ են ի ներքոյ ձեռին անօրինացն. և այսպէս պակասեալ է իշխանութիւն տանս Հայկազեան»[26]։

Զաքայի մահից հետո Ներքին Խաչենի իշխանության կառավարումը ստանձնում է Ջալալը։ Բ. Ուլուբաբյանը կարծում է, որ այս Ջալալը 1383 թվականից Ներքին Խաչենի իշխանությունը վարող Ջալալն է։ Իր կարծիքը հիմնավորելու համար նա գտնում է, որ Մաթեոս գրիչի այն միտքը, թե «Ջալալն և որդիք նորին, և որդիք Զաքային՝ Արղութէն և Ջալալադաւլէն... են ի ներքո ձեռին անօրինացն...»[27] «կարող է նշանակել գերություն, բացակայություն Խաչենից»։ Ապա շարունակելով իր հիմնավորումը, Բ. Ուլուբաբյանը գրում է. «...հնարավոր է, որ հենց այդ ամբողջ ժամանակ էլ Ջալալը գերության մեջ եղած լիներ, մի հանգամանք, որ առհմակից Զաքային իրավունք կտար իշխանությունը վարելու»[28]։ Հիշատակարանում խոսք չկա գերության մասին. «...են ի ներքոյ ձեռին անօրինացն. և այսպէս պակասեալ է իշխանութիւն տանս Հայկազեան» նշանակում է անօրենների իշխանության տակ էին, որի պատճառով էլ թուլացել էր «Հայկազեան» տան իշխանությունը։ Աղբյուրներով չի հիմնավորվում այն կարծիքը, թե Ջալալի իշխանությունն ընդմիջվել է Զաքայի տասը տարվա իշխանությամբ։ Այդ մա-

---

26 Նույն տեղում, էջ 194։

27 Նույն տեղում։

28 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 306—307։

սին չկա որևէ փաստ կամ հիշատակություն և մնում է լոկ տրամաբանական ենթադրություն: Գանձասարի վանքում կա մեծ Ջալալի տապանաքարը. «Այս է հանգիստ մեծին Ջալալին. աղաւթս յիշեցէք: Թվին ՊՁ: (1431)»[29]: Կարծում ենք, եթե Ջալալ Դ-ն նորից ստանձնած լիներ Ներքին Խաչենի իշխանական տան կառավարումը, ապա 1417 թ. մինչև 1431 թ. նրա մասին որևէ ձևով սկզբնաղբյուրներում կհիշատակվեր: Իր նկատմամբ օտարների հալածանքներից հետո Ջալալ Դ-ն, իշխանությունից զրկված ապրել է մինչև 1431 թ.:

Քննության առնելով Ջալալյանների և Դոփյանների փոխհարաբերությունները, Բ. Ուլուբաբյանը գրում է. «XV դ. սկիզբը ոչինչ չէր կարող փոխել Խաչենի իշխանության երկու ճյուղերի փոխհարաբերություններում: Դարձյալ գերադաս էին Հասան-Ջալալյանները, և Ծարա Դոփյանները ենթակա էին նրանց»[30]: Իր միտքը հաստատելու համար նա վկայակոչում է 1411 թ. Ծարի Գետամեջի վանքում Թովմա Սյունեցու գրած հիշատակարանը, ուր Ջաղան առաջինն է հիշվում տանուտերերի շարքում և եզրակացնում. «Ուրեմն Ջաղան Խաչենի ամենայն տանուտերերի շարքում նախապատիվն էր»[31]:

Այո, Ջաղան առաջինն է հիշվում տանուտերերի շարքում, բայց ոչ թե իշխանների: Համոզվելու համար նորից դիմենք հիշատակարանի բովանդակությանը. «...Գրեցաւ և գրաւ առեալ աւարտեցաւ ոսնադարդ և աստուածամեծար սուրբ գիրքս ի թուաբերութեան հայկազեան տոմարիս ՊԿ (1411)... և յիշխանութեան տեղւոյս պարոն Վահրամա, պարոն Տուրսունին, պարոն Շրաւանին, պարոն Սատօյին, պարոն Փօշին, պարոն Գրիգորին, յաստուածաշէն երկիրս Ծար կոչեցելոյ, ի վանս Գետամէջ...

29 «Դիվան», պրակ V, էջ 64, И. Орбели, նշվ., աշխ., էջ 29, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 143:

30 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 306, նույնի՝ նշվ. հոդված, էջ 193:

31 Նույն տեղում:

Յիշատակ եղիցի և ի սմա հանգուցեալ իշխանացն այսմ նահանգի... Նախ մեծաշուք իշխանին Հասանայ որդւոյ Դաւթին, և ամուսնոյն իւրոյ Խոնձային, և զաւակացն իւրոց՝ քաջ և արի պարոնացն Գրիգորայ, Սարգսի, Շանշի, Ջհանշի, Աղբուղին, Շրվանին, նաև թագազարմ իշխանին Սաղունին...»: Հիշատակարանի վերջում Սյունեցի գրիչը հիշատակում է. «Յիշատակ եղիցի և ի սմա ազատացն տանս Դաւթեան, նախ՝ ամենայն օրհնութեանց արժանաւոր պարոն Աթապակին և այլ ամենայն ազատաց: Նաև յիշել ի տէր զամենայն տանուտերսն աստուածաշէն երկրիս Ծարայ, նախ Ջաղին...»[32]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Վերին Խաչենում իշխող և հիշատակարանի սկզբում հիշված Վահրամը, Տուրսունը, Շրվանը, Սատոն, Փոշը և Գրիգորը Դոփյան այն իշխաններն էին, որոնք ակնառու կշիռ ունեին երկրամասի քաղաքական կյանքում: Ներքին Խաչենի Հասան-Ջալալյանների նրանց ենթակայությունը ոչ մի ձևով չի ակնարկվում, հետևապես, նրանք չէին կարող ենթակա լինել հիշատակարանի վերջում հիշված տանուտեր Ջաղային:

XV դ. 40-ական թվականներին իշխել է Ջալալի որդին՝ Աղբաստը, հզոր ու ազդեցիկ մի իշխան, որին մեծարանքով են հիշատակում ժամանակի աղբյուրները: Նրա մասին առաջին տեղեկությունը հանդիպում է 1443 թ. Գանձասարի մի արձանագրությունում. «Կամաւն այ. ես տր Վարդան, որդի Ջալալին տվի Ծակ Խաչին հողն ի սր. ուխտս Գանձասարա յիշխանութեր Աղբաստա, առաջնորդութեր տր Եղիշի... Թվին ՊՂԲ: (1443)»[33]: Առաջանոր գյուղի եկեղեցու 1456 թ.

32 ԺԵ, մասն Ա, էջ 122—123:

33 «Դիվան», պրակ V, էջ 55, И. Орбели, նշվ. աշխ. էջ 21, Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 172, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 122 (Բ. Ուլուբաբյանի և մյուս հրատարակիչների վերծանումներում կան որոշ տարընթերցումներ):

հիշատակարանը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Հասան-Ջալալյանների մասին: Հիշատակարանում պատմվում է այն վիճաբանության մասին, որը ծագել է Ջալալի թոռան՝ Մեջլիսի որդի Ուլուբեկի և Աբղուլթինի թոռան, Մեհրապի որդի Ջահանշեհի միջև: Կալվածքների համար վիճաբանությունը այն աստիճան սաստիկ է եղել, որ «պարոն Ուլու պէկին թալեղ մէկ մարդ մեռաւ. Արապայ հողին վերա»[34]: Հողային այս վեճը լուծելու համար կողմերը դիմել են Աղբաստին: Վերջինիս միջնորդությամբ վիճող կողմերը փոխադարձ համաձայնությամբ պայման են կապել, որով «երեք սահրատին վեր արիւն կապեցին»[35], այսինքն որոշվել է վիճող կողմերի հողամասերի սահմանները:

Այս համաձայնությունը վկայել են Եղիան՝ Գանձասարի առաջնորդը, մեծ Աթաբակի թոռ և Ջալալի որդի Հովհաննես կաթողիկոսը, Ջալալի որդի Աղբաստը, Ջալալի որդի Աղեկը, Տուրսունի որդի Միրզային, Պատամը և Ջալալի որդի՝ Ամիր-Հասանը[36]: Հիշատակարանում Ջալալի որդի Աղբաստի հետ հանդես են գալիս նրա եղբայրները՝ Հովհաննես կաթողիկոսը, Աղեկը, Պատամը և Ամիր-Հասանը: Հիշատակարանում Պատամի հոր անունը չի հիշատակվում, սակայն 1471 թ. Գանձասարի վանքում նա թողել է նվիրատվական արձանագրություն, ուր ասում է, որ ինքը Ջալալի որդին է. «Ես Պատամ, որդի մեծին Ջալալին»[37]...

Այն հանգամանքը, որ վիճող կողմերը իրենց միջև առաջացած վեճը լուծելու համար դիմել են Աղբաստին, ասում է այն մասին, որ նա Ներքին Խաչենի գահերեց իշխանն էր:

Խնդրո առարկա հիշատակարանի պայմանները վկայողների վերաբերյալ հետագայում հանդիպում են սակավ տե-

---

34 Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 187:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում:

37 «Դիվան», պրակ V, էջ 43, И. Орбели, Նշվ. աշխ., էջ 7, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 97:

ղեկություններ: Բացառություն է կազմում Ջալալի որդի Հովհաննես կաթողիկոսը: Հովհաննեսը Աղվանքի կաթողիկոս է հիշվում 1428 թ. Շուշի գյուղում գրված Ավետարանի հիշատակարանում. «...ի կաթողիկոսութեան տէր Յոհաննիսի...»[38], 1456 թ. նա հիշատակված է Գետամեջի վանքում գրված հիշատակարանում. «...ի հայրապետութեան Աղուանից նահանգի տեառն Յոհաննիսի՝ որդոյ մեծի իշխանին Հայոց պարոն Ջալալին...»[39], 1464՝ Մալեզկերի վանքում[40] և 1468 թ. Գանձակի երկրում գրված հիշատակարաններում[41]:

Մեծարանցի Ս. Հակոբի վանքի սրահի հարավային պատին Հովհաննես կաթողիկոսը թողել է մի արձանագրություն. «Կամաւն այ. ես տր. Յոհանէս/ կաթողիկոս, որդի Ջալալին մեծ իշ/խանի, կանգնեցի զխաչս ի/փրկութի. հոգոյ իմոյ./ որք երկիրպագեք աղ/աւթս յիշեցէք»[42]: Այս արձանագրությունը հրատարակել են Ս. Ջալալյանցը[43] և Խաչիկ վարդապետ Դադյանը[44], որի հրատարակության վերջում կա նաև թվականը. «Թվ. ՋԺԸ» (1469): Ս. Բարխուդարյանը սրահի հարավային պատի տակ կանգնած խաչքարի արձանագրությունը խիստ վնասված և մամռակալած լինելու պատճառով չի կարողացել վերծանել, միայն արտագրել է թվականը «:ՋԺԸ:» (1469)[45]: Այսպիսով, ըստ Ս. Բարխուդարյանի, Հովհաննես կաթողիկոսի անթվակիր արձանագրությունը գտնվում է Ս. Հակոբի վանքի սրահի հարավային պատին, որի տակ կանգնեցվել է խաչքարը՝ արձանագրությամբ ու թվականով, թեև երկու արձանագրություններն էլ ունեն միևնույն բովանդակությունը, այդ պատճառով նախորդ հրատարակողները հրատարակել են որպես մեկ արձանագրություն:

---

38 ԺԵ, մասն Ա, էջ 384:

39 Նույն տեղում, մասն Բ, էջ 66:

40 Նույն տեղում, էջ 219:

41 Նույն տեղում, էջ 244:

42 «Դիվան», պրակ V, էջ 18:

43 Ս. Ջալալյան, Նշվ. աշխ., հ. Ա, էջ 194:

44 «Բանասեր», Փարիզ, 1901, հ. 3, պրակ Բ, Գ, էջ 138:

45 «Դիվան», պրակ V, էջ 18:

Հովհաննես կաթողիկոսը մահացել է 1470 թ. և թաղվել Ս. Հակոբի վանքում. «Այս է հանգիստ տր. Ովհ/անէս կաթողիկոսին Աղվանից. թվ :ՋԺԹ: (1470)»[46]:

1456 թ. հիշատակարանում վկայակոչված մյուս իշխանազունների վերաբերյալ տեղեկությունները ժլատ են ու սակավախոս:

Աղպաստին հիսունական թվականների երկրորդ կեսին փոխարինել է որդին՝ Սայտունը: Սկզբնաղբյուրներում այս իշխանի մասին խիստ սակավ տեղեկություններ են հանդիպում, հանգամանք, որը թույլ է տալիս եզրակացնել, որ Սայտունն առանձնապես աչքի չի ընկել իր գործունեությամբ: Գանձասարի տաճարի հյուսիսային պատին 1467 թ. արձանագրություն է թողել վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ. «Կամաւն այ. ես Սայտունս որդի պարոն Աղբաստին տվի /իմ հայրենացն զՏանծաձոր ի սբ. ուխտս Գանձասարայ յառաջնորդութբ. տր Եղիային :Թվիս: :ԹԺԶ: (1467)»[47]:

Գանձասարի վանքում կա 1471 թվակիր երեք արձանագրություն՝ մեկը թողել են Պուտաղը, Վախթանգը և նրանց եղբայրները՝ վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ[48], մյուսը Փիրհամզայի որդի Սմբատը՝ «Բեմին հողն» վանքին նվիրելու առթիվ[49], իսկ երրորդը թողել է Սայտունի հորեղբայր, մեծ Ջալալի որդի Պասատամը. «Ես Պասատամ, որդի մեծին Ջալալին տվի Կունձի հողին կալէն վէր ի սբ. ուխտիս Գանձասարայ, յառաջնորդութբ տր Ներսիսի: Թվին :ՋԻ: (1471)»[50]:

Ինչպես տեսնում ենք, երեք արձանագրություններում էլ, այդ թվում նաև իր հորեղբոր՝ Պասատամի արձանագրությունում Սայտունի անունը չի հիշվում: Այդ հանգամանքից կարելի է հետևցնել, որ 1471 թ. Սայտունն արդեն մահացել էր:

46 Նույն տեղում, էջ 17, «Բանասեր», հ. 3, պրակ Բ, Գ, էջ 139:

47 «Դիվան», պրակ V, էջ 42, Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 173, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 100:

48 «Դիվան», պրակ V, էջ 55, И. Орбели, նշվ. աշխ., էջ 14:

49 И. Орбели, նշվ. աշխ., էջ 11, «Դիվան», պրակ V, էջ 43:

50 И. Орбели, նշվ. աշխ., էջ 7, «Դիվան», պրակ V, էջ 43, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 97:

Սայտունին հաջորդել է որդին՝ Վելիջանը, սակայն որ թվականից, դժվար է որոշել: 1473 թվակիր մի հիշատակարանի համաձայն տեղի պարոն է հիշվում Վելիջանը: Այդ հիշատակարանը գրված է Խաչենաձոր գավառում. «Բայց արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառս Խաչենաձորոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի, սուրբ Սքանչելագործ Նշանիս, սուրբ Սարգսի, և ի տէրութեան տեղւոյս պարոն Վէլիջանին...»[51]: Բ. Ուլուբաբյանն այն կարծիքն է հայտնում, որ հիշատակարանը գրվել է Գետամիջի Ս. Աստվածածին վանքում և «...եթե «տեղւոյս տէր» է համարվում Ներքին Խաչենի պարոն Վելիջանը, մանավանդ այն պարագային, երբ Ծարա ճյուղն ինքն արդեն բաժանվել էր երեք մանր ոստերի, պարզ է, որ Ներքին Խաչենի տերն էր ամբողջ Խաչենի տարածքի գահերեց իշխանապետը: Մի հանգամանք, որ նկատելի էր նաև նախորդ դարերում...»[52]:

Ինչպես տեսանք, նախորդ դարերի վերաբերյալ փաստերը հերքում են Բ. Ուլուբաբյանի կարծիքը: Իսկ խնդրո առարկա հիշատակարանը գրվել է ոչ թե Գետամիջի Ս. Աստվածածին վանքում, ինչպես գրում է Բ. Ուլուբաբյանը, այլ Խաչենաձոր գավառում: Գրիչը որոշակի գրում է, որ ինքը հիշատակարանը գրել է «...ի կաթողիկոսութեան Հայոց տէր Ռստակեսի, և հայրապետութեան սուրբ ուխտին Գետամիջոյ տէր Սարգսի և փակակալութեան տեղւոյն Յովհաննէս կուսակրօն աբեղայի»[53]: Այսինքն այն տեղը, ուր գրվել է հիշատակարանը, «փակակալ» էր Հովհաննես կուսակրոն աբեղան, իսկ դա ոչ թե Գետամիջի վանքն էր, այլ մեկ ուրիշ վայր: Ուշադրություն պետք է դարձնել մեկ այլ հանգաման-

51 ԺԵ, մաս Բ, էջ 344:

52 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 311—312:

53 ԺԵ, հ. Բ, էջ 344:

քի վրա, որը մանրուք է, սակայն այս պարագային կարևոր է։ Գրիչ Սարգիսը հայտնում է, որ եղանակը անձրևային էր. «տեղիքս գէճ, և հողս ցրքաշ, և ես մենակ»[54]։ Հայտնի է, որ Գետամիջի վանքը եղել է եպիսկոպոսական կենտրոն, և գրիչ Սարգիսը մենակ չէր կարող լինել, կամ վանքը այն վիճակում չէր կարող լինել, որ անձրևաջրերից հատակը խոնավանար։

Վելիջանը, իր եղբայրների հետ, 1480 թ. Գանձասարին հողամաս նվիրելու կապակցությամբ թողել է արձանագրություն. «Կամաւն այ. ես Վէլիճան եւ եղբայրքս, իմ որդի Սայտունին, թոռն մեծին Աղպաստու, տեառն Խաչինու, տուաք Աշմանայ իւր ։Դ։ սահմանաւն ի սբ. ուխտս Գանձասարա առաջնորդութ. տր. Ներսէսի։ Թվին ՋԻԹ։»[55] (1480)։

Հրատարակողներն այս արձանագրության թվականը տարբեր են ընթերցել։ Այսպես, Ս. Ջալալյանցն ընթերցել է 1491[56], Հ. Շահխաթունյանցը՝ 1500[57]։ Ս. Ջալալյանցը «Ի» տառը շփոթել է «Խ»-ի հետ և չի վերծանել «Թ» տառը։ Հ. Շահխաթունյանցը, ճիշտ է, «Թ» տառը վերծանել է, սակայն, նա ևս «Ի»-ն շփոթել է «Խ»-ի հետ։ Արձանագրության թվականը ճիշտ են վերծանել Կ. Կոստանյանցը[58] և Մ. Բարխուտարյանցը[59]։ Բոլոր վերծանողները սխալ են ընթերցել հողամասի անունը, այն ճիշտ է արտագրել Ս. Բարխուդարյանը, իսկ Բ. Ուլուբաբյանը գրում է, որ ինքը նկարել է խնդրո առարկա արձանագրությունը, մասնավորապես շեշտել է «Աշմանա» հողամասի անունը[60]։ Նրա կողմից վեր-

54 Նույն տեղում։

55 «Դիվան», պրակ V, էջ 44, И. Орбели, նշվ. աշխ., էջ 12, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 113, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 374, Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 187։

56 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., հ. Ա, էջ 187։

57 Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 374։

58 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 174։

59 Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 179։

60 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 312։

ծանած տեքստի միջև կան գրության աննշան տարբերություններ։

Վելիջանն իշխել է մինչև XVI դ. 10-ական թվականները։ Նա 1507 թ. կենդանի էր և այդ թվականին մի խաչքար է կանգնեցրել Գանձասարի վանքում, «Ի թվին ։ՋԾԶ։ (1507) անունն այ. ես Վէլիճանս, որդի պարոն Սէիդոյ, թոռն մեծին Աղբաստոյ կանգնեցի զխաչս»[61]։

XV դ. 80—90-ական թվականներին հիշատակվում են Հասան-Ջալալյան իշխանական տան իշխանազուններից մի քանիսը ևս։ Սայտունի որդիներից, որոնք հիշատակվում են Վելիջանի 1480 թ. արձանագրությունում, Մելիքի վերաբերյալ ունենք գրավոր վկայություն. «Կամաւն այ. ես Մէլիքս, որդի Սայտունին, թոռն մեծի Աղպաստու տվի շուրջառ, բակի, ու այլ ընծայ. Կակաշանց, Փուտուռանուց, Ծաղկավանց ։Բ։ բստակն գնեցի, տվի սբ ուխտս Գանձասար Թվին ։ՋԽԸ։» (1499)[62],

Գանձասարում 1493 թ. նվիրատվական արձանագրություն է թողել մեծ Ջալալի թոռ Տուրսունը. «Ես Տուրսուն թոռն մեծին Ջալալին տվի Մաէրշին հողն ի սբ ուխտս Գանձասարա առաջնորդութ. տր. Ներսիսի թվին ՋԽԲ (1493)»[63]։ Ո՞վ է այս Տուրսունը, որքանով է առնչվում Հասան-Ջալալյանների հետ։ Տուրսուն անվանը մենք հանդիպեցինք 1456 թ. փաստաթղթում, որի մասին խոսվեց վերը, և տեսանք, որ վկաներից մեկը Տուրսունի որդի Միրզալին էր (ըստ Բ. Ուլուբաբյանի՝ Միրզաբեկ), հետևապես Տուրսունը Հասան-Ջալալյան իշխանազուններից է։ Սակայն այն հանգամանքը, որ 1456 թ. փաստաթղթում որպես վկայող հիշատակվում է Տուրսունի որդի Միրզալին, մեզ խորհել է տալիս, որ Միրզա-

61 И. Орбели, նշվ. աշխ., էջ 31, «Դիվան», պրակ V, էջ 66, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 146։

62 «Դիվան», պրակ V, էջ 45, И. Орбели, նշվ. աշխ., էջ 13, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 113—114։

63 И. Орбели, նշվ. աշխ., էջ 8, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 104, «Դիվան», պրակ V էջ 44։

լու հայր Տուրսունը մահացած է եղել, իսկ 1493 թ. արձանագրությունը թողած Տուրսունը՝ մեծ Ջալալի թոռ Միրզալու որդին էր, որն անվանակից էր իր պապին և ոչ թե հայրը, ինչպես ընդունում է Բ. Ուլուբաբյանը և դա հիմնավորում խաչենցիների երկարակեցությամբ[64]։ Ջալալյան երկու իշխաններ՝ եղբայրներ Այտինը և Խիմշեն 1495 թ. Գանձասարի տաճարի հյուսիսային պատի արևելյան մասում թողել են արձանագրություն, որից պարզվում է, որ նրանք Աթաբակի որդիներն են. «Վախմս Աթապակին է։ Ես Այտինս, Խիմշէս, որդի Աթապաակին ավաք Ալմահայ տաբի հողն ի սբ. ուխտս Գանձասարայ առաջնորդութբ. տր. Ներսէսի Թվին ՋԽԴ։» (1495)[65]։ Այտինի և Խիմշեի մասին ուրիշ տեղեկություններ չկան։ Հր. Աճառյանը կարծում է, որ սրանց եղբայրն է եղել Աղվանից Մաթեոս Դ կաթողիկոսը[66]։

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Հասան-Ջալալյաններին էր պատկանում նաև երկրամասի հոգևոր իշխանությունը՝ Աղվանքի կամ Գանձասարի կաթողիկոսությունը և երկրամասի տարածքում գտնվող վանքերի վանահայրությունը։

Հաճախ Գանձասարի կաթողիկոսները ավելի ազդեցիկ դեր ունեին երկրամասի քաղաքական կյանքում, քան որոշ աշխարհիկ իշխաններ։

Դա բացատրվում է նրանով, որ հոգևորականությունը ընդհանրապես, իսկ բարձրաստիճան հոգևորականությունը մասնավորապես, հովանավորվում էին թուրքմեն տիրապետողների կողմից։ Դիպուկ է նկատել Աշ. Հովհաննիսյանը. «Փոշիացող հայ ֆեոդալ իշխանությունների փոխարեն թուրք-

64 Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 310։

65 И. Орбели, նշվ. աշխ., էջ 11, «Դիվան», պրակ V, էջ 44, Կ. Կոստանյանց. Վիմական տարեգիր, էջ 175, Բ. Ուլուբաբյան, Գանձասար, էջ 103։

66 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 226։

մեն իշխողների ժամանակ նշանավոր հեղինակություն է ձեռք բերում հայ եկեղեցական հիերարխիան»[67]։ Այս պատճառով էլ աշխարհիկ ֆեոդալներն իրենց տիրույթները նվաճողներից փրկելու նպատակով նվիրում կամ վաճառում էին վանքերին, կամ ուղղակի հանձնում նրանց տնօրինությանը։

Խոսելով XV դ. նվիրատվության ձևերի մասին, Հ. Փափազյանը գտնում է, որ նույն ֆեոդալական տնից որևէ հոգևորական կալվածքներ էր գնում իր ազգակից աշխարհիկ ֆեոդալներից և նվիրում վանքին, միաժամանակ կտակում, որ իր մահից հետո վանքի տնօրենի պաշտոնը ստանձնի իր մերձավորներից որևէ մեկը։ Այդ բանը մենք տեսնում ենք Գանձասարի կաթողիկոսների մոտ, Տաթևում, Աղթամարում և Հավուց Թառի Ամենափրկիչ վանքում[68]։

Գանձասարի կաթողիկոսների իրավունքները երբեմն օրենքի ուժ էին ստանում թուրքմեն գահակալների, կամ նրանց մերձավորների կողմից տրված հրովարտակներով։ Այսպես, 1462 թ. օգոստոսի 6-ի իր հրովարտակով Ջահանշահի կին Բեգում-խաթունը հաստատում է Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի իրավունքները և միաժամանակ թուրքմեն պաշտոնյաներին հրամայում չանհանգստացնել Հովհաննես կաթողիկոսին և նրան ենթակա հոգևորականներին։ Բեգումը հրամայում է հոգևորականներին ազատել հարկերից և ցույց տալ ամեն կարգի օժանդակություն։ Հրովարտակում ուշագրավ է նաև այն միտքը, որ Աղվանքի ողջ հայությունը Հովհաննես կաթողիկոսին պետք է ճանաչի որպես իր առաջնորդ ու ղեկավար։ Ոչ ոք իրավունք չունի նրան ընդդիմանալու և ոչ էլ միջամտելու նրա գործերին[69]։ Այս հրովարտակի բովանդակությունն ուշագրավ է նրանով, որ նախ վկայում է XV դ. կեսերին Ներքին Խաչենում աշխարհիկ իշ-

67 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, էջ 429։

68 Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ I, էջ 26։

69 Նույն տեղում, էջ 47—48։

խանության թուլացման մասին, ապա՝ Հովհաննես կաթողիկոսին օժտում, երկրամասի գործերում, անսահմանափակ իրավունքներով։

Նոր գահ բարձրացած Ուզուն-Հասանի որդի Յաղուբը 1478 թ. ապրիլի 24-ի հրովարտակով ճանաչում է Գանձասարի Շմավոն վարդապետի իրավունքները և տեղի մելիքներին, գյուղացիներին, քեդխուդաներին հրամայում Գանձասարի վանքից ու հոգևորականներից հարկեր չպահանջել։ Զինվորական առաջնորդներին հրամայում է, որ թույլ չտան զինվորներին իջևանելու վանքապատկան կալվածքներում և չպահանջեն անունդ զինվորների, կեր՝ ձիերի համար։ Յաղուբը ևս հրամայում է, որ Աղվանքի ողջ բնակչությունը Շմավոն եպիսկոպոսին ճանաչի որպես իր առաջնորդ և ենթարկվի նրան[70]։

Այսպիսով, խնդրո առարկա ժամանակաշրջանում Հասան-Ջալալյան իշխանական տան ներկայացուցիչներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել Ներքին Խաչենի թե աշխարհիկ, և թե հոգևոր իշխանությունը և երբեմն ակտիվ դեր էին խաղում ոչ միայն Ներքին Խաչենի, այլև ողջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքում։

70 Նույն տեղում, էջ 50—52։

ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Զաքարյանների ինքնավար իշխանության տարածքում XIII դ. հաստատվեց Օրբելյանների իշխանական տունը։ Հայաստանում իշխանական այս տան հիմնադիրը եղավ Էլիկումի որդի Լիպարիտը։ Օրբելյանների իշխանական տան պատմության ուսումնասիրությամբ զբաղվել են հայագիտության մեծ երախտավորներ Ղ. Ալիշանը, Գ. Հովսեփյանը, Լ. Խաչիկյանը[1] և ուրիշներ։ Օրբելյանների իշխանական տան պատմության ուսումնասիրության ու ամբողջականացման գործում մեծ վաստակ ունի Գ. Գրիգորյանը[2]։

Վրաց Գեորգի III թագավորի դեմ ամիրսպասալար Իվանե Օրբելյանի գլխավորած ապստամբության (1177—1178) ճնշումից հետո, Իվանեի եղբայր Լիպարիտն իր որդիների՝ Էլիկումի և Իվանեի հետ փախավ Պարսկաստան։ Հոր մահից հետո Էլիկումը Մուհամմեդ-Փահլավից կալվածքներ ստացավ Նախիջևանի կողմերում և նշանակվեց Երնջակ բերդի, Ճահուկ ավանի և Քայասարահի զորագլուխ։ Այստեղ եղած ժամանակ Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի և նրա միջև ստեղծվում են մտերիմ հարաբերություններ. Ստեփանոսը Էլիկումին ամուսնացնում է իր քրոջ դստեր,

1 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, Տարսայիճ Օրբելեանի եւ Մինա խաթունի սերունդը, Անթիլիաս-Լիբանան, 1947, Լ. Խաչիկյան, Օրբելյանների Բուրթելյան ճյուղը («Բանբեր Մատենադարանի», թիվ 9, 1969)։

2 Տե՛ս Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան 1981, Очерки истории Сюника IX—XV вв. Ереван, 1990։

մեծահարուստ Արաս Ճահկեցու աղջկա՝ Խաթունի հետ[3]: Այս ամուսնությունից ծնվում է նրանց Լիպարիտ որդին: 1184 թ. Գանձակի ճակատամարտում սպանվում է Էլիկումը: Հայվրացական զինական ուժերի հաղթանակից հետո, Գեղարքունիքն ազատագրող զորավար Բուպան Լիպարիտին ամուսնացնում է իր դստեր՝ Ասփայի հետ: Իսկ վրաց թագավորի հրամանով Իվանե աթաբեկը Լիպարիտին կալվածքներ է տալիս Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում և Կայենում[4]: Այսպիսով, XIII դ. արշալույսին Հայաստանում կալվածքներ ստացած Լիպարիտ Օրբելյանը դարձավ այն հաստաբուն կաղնին, որի վրա ճյուղավորվեց Օրբելյանների իշխանական տունը: Այդ կաղնու հզոր ճյուղերից էր 1290 թ. մահացած Տարսայիճ Օրբելյանը, որն ուներ երկու կին՝ Արղու խաթուն և Մինա խաթուն: Նա Արղու խաթունից ուներ չորս որդի և երկու դուստր: Որդիներից հայտնի են Էլիկումը, Ստեփանոսը (պատմագիր) և Փախրադոլան, իսկ Մինա խաթունից՝ Ջալալ, Ասփա և Մամքան: Տարսայիճի մահից հետո նրա որդու՝ Էլիկումի դեմ իշխանապետության և կալվածքների համար պայքար սկսեցին հորեղբոր՝ Իվանեի որդի Լիպարիտը և անհամամայր եղբայր Ջալալը: Արղունի միջամտությամբ այդ վեճը լուծվեց Էլիկումի օգտին, և նա մոնղոլական արքունիքի կողմից ճանաչվեց Օրբելյանների գահերեց իշխան: Գ. Հովսեփյանի կարծիքով, իշխանապետական իրավունքների համար վեճ հարուցողը Լիպարիտ Օրբելյանն էր, Իվանեի որդին, իսկ Ջալալի վեճը միայն կալվածատիրական ժառանգության խնդիր ուներ[5]: Եղեգիսը իր շրջակայքով մնաց Էլիկումի և իր որդիների ժառանգական տիրույթը, իսկ Ջալալի ժառանգության սահմանները նույնանում էին Ուրծ և Արած գավառակների սահմանների հետ՝

3 Տե՛ս Ստ. Օրբելեան, նշվ. աշխ., էջ 393:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 397:

5 Տե՛ս Գ. Հովսեփեան, Տարսայիճ Օրբելեանի և Մինա խաթունի սերունդը, էջ 9:

Վեդի գետակի միջին հոսանքներում[6]: Էլիկումը դառնալով Օրբելյանների իշխանական տան գահերեց իշխանը, իր եղբայրներին բաժնեկալվածք տալու ճանապարհով ձգտում էր պահպանել իշխանական այս տան միասնությունը. «...Թէպէտ տիրեաց բոլոր հայրենեաց և իշխանութեանց հօրն. սակայն ոչ կամեցաւ զրկութիւն առնել եղբարցն»[7],—գրել է Ստ. Օրբելյանը: Էլիկումը Օրբելյանների իշխանությունը կառավարեց տասը տարի: Քաղաքական առումով դա մի անկայուն ժամանակաշրջան էր: Մոնղոլական արքունիքն ապրում էր ներքին երկպառակությունների շրջան: 1290 թ. Մուղանում իր սիրելի հարճի ձեռքով դեղամահ արվեց Արղուն խանը: Ներքին գահակալական կռիվները, որոնք շարունակվեցին հինգ տարի, ավարտվեցին Արղունի որդի Ղազան խանի հաղթանակով: Նրա գահակալության շրջանում (1295—1304) Իլխանությունն ապրեց համեմատական խաղաղության ժամանակաշրջան: Գահակալական այս կռիվները անդրադարձ ունեցան հայոց ներքին կյանքում և անհանգիստ վիճակ առաջ բերեցին Հայաստանում: Այս անցքերը այնքան են դառնացրել Օրբելյան տան պատմագիր Ստեփանոսին, որ նա երանի է տվել «յարգանդէ վիժելոցն»[8]: Քաղաքական այսպիսի ծանր պայմաններում Էլիկում Օրբելյանն ավելի շատ մտահոգված էր իր հայրենի կալվածքների պահպանության խնդրով: Ժամանակի աղբյուրներում Էլիկումի մասին վկայություններ համեմատաբար սակավ են, սակայն այդ սակավությամբ հանդերձ նա մեզ ներկայանում է ազնիվ, բարեպաշտ և քաջամարտիկ մի անձնավորություն:

Էլիկումի վերաբերյալ վիմագրական տեղեկություն ունենք 1291 թվականից: Կարմրաշեն գյուղի մոտ գտնվող ավերակներում, մի խաչքարի կիսեղծ արձանագրությունում հիշվում է Էլիկումի անունը[9]: 1292 թ. Նորավանքում գրիչ և

6 Տե՛ս նույն տեղում, էջ 11—12:

7 Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 431:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 479:

9 Տե՛ս «Դիվան», պրակ III, էջ 42:

ծաղկող Մոմիկի գրած հիշատակարանում մեծարանքի խոսքերով է հիշվում Էլիկումը. «...յիշխանութեան այսմ նահանգի աւրհնելոյն և բարեպաշտին, գեղեցկածաղիկ երիտասարդին և քաջապահիկ մենամարտին Էլիկումին և եղբարց իւրոց, որդւոց ամէնաւրհնեալ պարոնին աթաբակ Տարսայճին»[10]:

1297 թ. Նորավանքում Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմության» հիշատակարանում նահանգի իշխան է հիշում Էլիկումին. «...յիշխանութեան այսմ նահանգի աւրհնելոյն և բարեպաշտին Ելիկումին՝ որդոյ Տարսաիճին և եղբարց իւրոց...»[11]: Էլիկում Օրբելյանը մահացել է 1300 թ. և թաղվել Նորավանքում՝ Օրբելյանների տոհմական դամբարանում: Քանի որ 1292 թ. հիշատակարանում նա ներկայացված է «գեղեցկածաղիկ երիտասարդ» բնութագրումով, հետևապես Էլիկումը մահացել է երիտասարդ հասակում: Նրա տապանաքարին քանդակված է մարդու գլխով առյուծ և նրա քաջությունը վկայող արձանագրություն. «Թվին ՉԽԹ (1300) գեղեցկատիպն Էլիկում, որդի մեծի Տարսաիճին, որ առյծաբէն խրոխտ մռընչէր ընդէմ այլասեռ գնդին: Աղաչեմ յիշել յաղութս»[12]: Մարդակերպ առյուծը և արձանագրության բովանդակությունը նրա քաջության ու հզորության բազմախոսուն վկայագրերն են: Ամբատի դամբարանում, ամուսնու մահվան կապակցությամբ խաչքար է կանգնեցրել Էլիկումի կինը՝ Թամթա խաթունը. «...բարեխաւսութի գլխի իր մեծափառ իշխանին Էլիկումին, վասն յերկար կենաց զաւակաց իւրոց Բուրթէլին, Բուղ/ային/»[13]: Խաչքարը թվական չունի, սակայն, հայոց սովորության համաձայն, Թամթան խաչքարը կանգնեցրած պետք է լինի ամուսնու մահից անմիջապես հետո, թերևս 1301 թ.:

10 «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1984, էջ 678, այսուհետև ԺԳ:

11 Նույն տեղում, էջ 792:

12 «Դիվան», պրակ III, էջ 237:

13 Նույն տեղում, էջ 243:

Էլիկումի մահից հետո Օրբելյանների տան գահերեցությունն անցավ ավագ որդուն՝ Բուրթելին: Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքում Բուրթել Օրբելյանն ակնառու երևույթ էր և մեծ շուքով կառավարեց շուրջ քառասունութ տարի՝ 1300—1348 թթ.: Դրա վկայությունն այն բազմաթիվ պատվո տիտղոսներն են, որոնց Բուրթելն արժանացել է ժամանակակիցների կողմից՝ («մեծ ամիր», «կոմս և կողմնակալ», «մեծիմաստ պարոն», «հաղթող սպարապետ», «հայոց մեծ սպարապետ», «մեծ սպարապետ հայոց և վրաց»): Պատվո տիտղոսների և վաստակած հեղինակության պատճառով էր, որ Բուրթելի մահից հետո Օրբելյանների իշխանական տան այս ճյուղը կոչվեց «տունն Բուրթելյանց»: Բուրթելի կառավարման տարիների այս վիճակը նկատի ունենալով Մ. Օրմանյանը գրել է. «Լավագույն կացութիւն մը կը տիրէր Սիւնիքի կողմերը, որ Արևելեան հայութեան կեդրոն դարձած էր Օրբէլեանց իշխանութեանց ներքև»[14]:

Մատենագրական, վիմագրական և այլ կարգի բազմաթիվ վկայություններ կան Բուրթելի և նրա եղբոր՝ Բուղդայի մասին:

Բուրթելի մասին առաջին վկայությունը վերաբերում է 1302 թ.: Այս թվականին հիշատակարան գրած Գրիգոր գրիչը հայտնում է, որ այն գրել է Ստեփանոս մետրոպոլիտի և Բուրթելի խնդրանքով[15]: Լ. Խաչիկյանը, սակայն, գրում է, որ Բուրթելի մասին առաջին տեղեկությունը վերաբերում է 1306 թ., որը և համարում է Բուրթելի իշխանության սկիզբը[16]: Գ. Գրիգորյանը ևս Բուրթելի մասին վկայությունները բերում է 1306 թ.[17]:

Ամենայն հավանականությամբ Էլիկումի մահից հետո Բուրթելը կառավարել է իր հորեղբոր, նշանավոր պատմա-

14 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., մ. 1, էջ 1726:

15 Տե՛ս, ԺԳ, էջ 9:

16 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 174:

17 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 98:

գիր, Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի հետ՝ մինչև վերջինիս մահը՝ 1303 թ.:

Բուրթելի մասին հաջորդ տեղեկությունը հաղորդում է Սարգիս գրիչը՝ 1306 թ. Եղեգիսում գրած հիշատակարանում: Գրիչը իշխանաց իշխան Բուրթելի հետ հիշատակում է նաև նրա եղբորը՝ Բուղդային. «...իշխանութեան այսմ նահանգի իշխանաց իշխանի, բարեպաշտ և ամենաւրհնեալ Բուրթէլին և Բուղդաի, որդոց քրիստոսասէր և փառաւոր իշխանաց իշխանի Էլիկումին, որդո մեծին Տարսայիճին»[18]:

1307 թ. մի հիշատակարանում Բուրթելի մասին կան խիստ կարևոր և նրա անձն ու գործը բնութագրող վկայություններ. «Եւ առաջի աշխարհակալացն մեծ մեծարեալ՝ եւ բազում ընծայիւք պատուեալ՝ յա(ստծո)յ յաջողել եւ ի մարդկանէ փառս եւ պատիւ ընկալեալ»[19]: Այնուհետև գրիչը հաղորդում է, որ Բուրթելը Չեարի հետ մասնակցել է Խուդաբանդա-Ուլջեյթու խանի դեպի Թալիշ կատարած արշավանքին և աչքի է ընկել քաջությամբ[20]:

Արատեսի վանքում 1310 թ. օրինակած ձեռագրի հիշատակարանում որպես Սյունյաց իշխաններ հիշատակված են Բուրթելը, Բուղդան և «պարոն Չաչարը»[21]: Իսկ 1314 թ. Գլաձորում գրված հիշատակարանում հիշվում է մեծ ամիր Բուրթելը՝ իր եղբայր Բուղդայի հետ[22]: Բուրթելն ու Բուղդան միասին վերջին անգամ հիշվում են Որոտնավանքի ս. Կարապետ եկեղեցու պատի 1315 թ. նրանց նվիրատվական արձանագրությունում[23]: Բուղդան ապրել է ակտիվ քաղաքական կյանքով, եղել է քաջակորով ռազմիկ, անվեհեր մարտնչել ռազմի դաշտում և զոհվել է 1317 թ. երիտասարդ

18 ԺԴ, էջ 42:

19 «Էջմիածին», 1947, թիվ 9—10, էջ 216:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 217:

21 Տե՛ս ԺԴ, էջ 67:

22 Նույն տեղում, էջ 100:

23 Տե՛ս «Դիվան», պրակ II, էջ 101—102:

տարիքում, հայրենիքից հեռու: Նրա դիակը բերվել է Վայոց ձոր և թաղվել Սմբատի դամբարանում: Նրա դամբարանաքարին արձանագրված է. «Եղբաւր մեծ Բիւրթէլին, գեղահրաշն Պուղտային որ երիտասարդ հասակի չեռ յոլով քաջ մրցմանց տիգախոցեալ զանթառամն ընկալաւ զպսակ. թվ. ՉԿԷ» (1318)[24]: Այս նույն թվականին Բուրթել իշխանը Բուրթելաշեն ս. Աստվածածին երկհարկանի եկեղեցում, հարավային պատին կից մի գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել վաղամեռիկ եղբոր հիշատակին. «Ես պարոն Բիւրթել կանգնեցի զխաչս ի փրկութ. հոգւոյ վասն եղբաւր իմ Բուղտային»[25]: Համաձայն մի ձեռագիր հիշատակարանի վկայության Բուղդան զոհվել է 1317 թ. դեկտեմբերի 18-ին իր փեսայի, Պռոշի թոռ, Հասանի որդի Էաչիի հետ[26]:

1321 թ. Գլաձորում գրված մի հիշատակարանում գրիչ Կորյունը, որպես գավառի զորավարներ և իշխաններ, նախ հիշատակում է Բուրթելին և ապա՝ Պռոշյան Ամիր Հասանին[27]:

Նույն Գլաձորում 1323 թ. գրված հիշատակարանում Բուրթելը հորջորջվում է իշխանաց իշխան և «յաղթող սպարապետ» պատվավոր կոչումներով[28]: 1328 թ., դարձյալ Գլաձորում գրված մի հիշատակարանում, նախ հիշվում են մեծ հաղթող Սիսական տան քաջ իշխան Բուրթելը, նրա զավակներ Բեշքեն և Իվանեն, ապա՝ Պռոշյան Ամիր Հասանը, քաջ Վասակը, Ամիր Ասափը և մանուկ Ջուման[29]: 1331 թ. Արգելան մենաստանում գրած իր հիշատակարանում Հովհաննես գրիչը Բուրթելին կոչում է «իշխանաց իշխան»[30]: Գրիչ

24 Նույն տեղում, պրակ III, էջ 237:

25 Նույն տեղում, էջ 244:

26 Տե՛ս ԺԴ, էջ 128:

27 Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. թիվ 4515, թ. 75, «ԺԴ», էջ 166:

28 Տե՛ս ԺԴ, էջ 182:

29 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4515, թ. 81—82:

30 Տե՛ս ԺԴ, էջ 235:

Կորյունը Նորավանքում 1333 թ. գրած հիշատակարանում գովեստի խոսքերով է հիշում տեղի իշխան Բուրթելին, նրա «...եռկեղազարդ ամուսնոյ նորին պարոն Վախախին, և աստուածապարգև զաւակաց նոցա՝ Պէշքինին և Իւանին»[31]։ 1334 թ. գրիչ Հունանը Գլաձորում ավարտած իր աշխատանքի հիշատակարանում գրում է. «...ի յիշխանութեան և տէրութեան համօրէն գաւառացս մեծ իշխանիս Բուրթելի, և որդոց նորին՝ Պէշգենի և Իւանէի, իսկ ի տեղւոյս տէրութեան՝ թոռանց մեծին Պռոշայ՝ Ամիր Հասանայ և Ջումայի»[32]։ Ինչպես տեսնում ենք, Բուրթելը հանդես է գալիս որպես բոլոր գավառների (Վայոց ձոր, Սյունիք—Գ. Կ.) իշխանությունն ու տերությունն իրագործող մեծ իշխան։ 1337 թ. Սյունիքում գրված մի հիշատակարանում Բուրթելը կոչվում է մեծ սպարապետ հայոց և վրաց, թագազարդ իշխան, «...ի տէրութեան տանն Սիսական մեծ սպարապետին Հայոց և Վրաց՝ թագազարդ իշխանին Բուրթէլին»[33]։ Սուլթանիայում 1341 թ. գրված երկու հիշատակարաններում Բուրթելը կոչվում է հյուպատոս[34]։ Վկայակոչված փաստերը հուշում են, որ Բուրթելը կապված է եղել վրաց արքունիքի հետ որպես հայոց և վրաց զորքերի սպարապետ և նրա դեսպանը Ջալայանների մայրաքաղաքում։ Հենվելով հայ-վրացական քաղաքական կապերի վրա, Բուրթելը ձգտում էր նոր լիցք հաղորդել երբեմնի հայ-վրացական զինական համագործակցությանը և այդ միասնականությունը զորավիգ ունենալով, թերևս մտածում էր ստեղծել անկախ թագավորություն։

Բուրթելը աչքի է ընկել նաև շինարարական գործունեությամբ։ Նրա միջոցներով ու հովանավորությամբ ճարտարապետ Մոմիկը 1339 թ. կառուցել է միջնադարյան Հայաստանի ճարտարապետական հուշակերտ կոթողներից մեկը՝

31 Նույն տեղում, էջ 257։

32 Նույն տեղում, էջ 261։

33 Նույն տեղում, էջ 297։

34 Նույն տեղում, էջ 328, 406։

Բուրթելաշեն ս. Աստվածածին երկհարկանի եկեղեցին[35]։ Բուրթելը և իր որդիները եղել են Գլաձորի համալսարանի հովանավորներ։ Եսայի Նչեցին 1323 թ. Գլաձորում գրած հիշատակարանում երախտագիտությամբ է խոսում Բուրթելի, նրա տիկնոջ՝ Վախախի և որդիների մասին[36]։

Լ. Խաչիկյանը գրում է, որ Բուրթելի մասին որպես ապրողի սկզբնաղբյուրներում վերջին տեղեկությունը վերաբերում է 1344 թ.[37]։ Սակայն Հերհերի ս. Աստվածածին եկեղեցու 1345 թ. Գոնցա իշխանուհու թողած արձանագրության համաձայն Բուրթելը ապրում էր. «Կամաւն այ. ես Գոնցէս թոռն Հասանա /դուստր պարոն Խաւարամկա միաբանեցա/յ սբ. ուխտիս Նորավանից, պարոնութեան իշխանաց իշխան Բուրթէլին եւ տվի զխանդաղճի էգին Ամատին հոգայն... թվ. ։ՉՂԴ։» (1345)[38]։ Բուրթելը մեծ պարոն է կոչվում Հերմոնի վանքի ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին փորագրած իշխանուհի Գոնցայի 1346 թ. նվիրատվական արձանագրությունում. «...իշխանութ. մեծ պարոն Բուրթէլին եւ/ որդոյ իւրոյ Բէշքենա եւ Իւանիկին... թվ. ։ՉՂԴ։» (1346)[39]։

Բուրթելի մահվան ստույգ թվականը հայտնի չէ։ Սակայն նա մահացել է 1347/48 թթ., քանի որ 1348 թ. Հերմոնի վանքում գրված հիշատակարանում Սյունյաց իշխաններ են հիշվում նրա որդիները՝ Բեշքեն և Իվանեն, իսկ Բուրթելի մասին ասվում է. «...մեծ իշխանաց իշխանին Բէշքէնայի և հարազատ եղբօրն նորին Իվանէի՝ որդւոց բարի պաշտմամբ փոխեցելոյն առ Քրիստոս յոյսն ամենեցուն պարոն Բուրթէլին»[40]։

35 Տե՛ս «Դիվան», պրակ III, էջ 210։

36 Տե՛ս ժԴ, էջ 182—183։

37 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 176։

38 «Դիվան», պրակ III, էջ 223։

39 Նույն տեղում, էջ 56։

40 ժԴ, էջ 368—369։

Բուրթելի մահվան տարեթվի մասին մենք անդրադարձել ենք տակավին 1982 թ. մեր մի հոդվածում և հանգել ենք այն կարծիքին, որ Բուրթելը մահացել է կամ 1347 թ. վերջերին, կամ 1348 թ. սկզբներին[41]։

Ինչպես տեսանք, սկզբնաղբյուրներում հիշատակվում են Բուրթելի երկու որդիները՝ Բեշքենն և Իվանեն։ Սակայն Նորավանքի ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցու 1344 թ. արձանագրության սխալ վերծանումը Մ. Սմբատյանցի կողմից թյուրիմացության մեջ է գցել հետազոտողներին։ Մ. Սմբատյանցն արձանագրության «մեղուցեալ» բառը վերծանել է Սամեղ[42] և համարել Բուրթելի վաղամեռիկ որդի, նրան հետևել են Ալիշանը և Լ. Խաչիկյանը[43]։ Խնդրո առարկա արձանագրությունը հմուտ վիմագրագետ Ս. Բարխուդարյանը վերծանել է ճիշտ. «Թվ. :ՉՂԳ: (1344) շնորհիւն այ. եւ պարոնութե. իշխանին հայոց Բուրթէլին, ածատուր զաւակաց իւր Բէշքենայ /եւ Իւանէկին, եւ, մեղուցեալ ծառայ այ Ավագս, վասն յերկար կենդանութե. պարոնաց մերոց, կամակից եղէ շինութեան վանիցս...»[44]։ Այս փաստը և այն, որ սկզբնաղբյուրներում, առանց բացառության, Բուրթելի հետ նրա որդիներ են հիշատակված Բեշքենն և Իվանեն, մեզ համոզում է, որ Բուրթելն ունեցել է երկու որդի։ Եթե Բուրթելը վաղամեռիկ որդի ունենար, ապա նա անպատճառ կհիշատակվեր, ինչպես հաճախ հանդիպում ենք վիմական արձանագրություններում և հիշատակարաններում[45]։

41 Տե՛ս Գ. Կիրակոսյան, Օրբելյանների իշխանական տունը XIV—XV դդ., «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, թիվ 7, էջ 54։

42 Տե՛ս Մ. Սմբատյանց, Գեղարքունիք, Ծովազարդ գավառ, էջ 486։

43 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 47, Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 176։

44 «Դիվան», պրակ IV, էջ 21։

45 Բարի երկու կողմերի վրա փորագրված անթվական մի արձանագրությունում, որը գտնվել է Բուրթելաշեն եկեղեցու բակում, հիշատակված է Սմբատ անունով մի պատանի. «Վարդագույն ազատն Սմբատ, որդի Բուրթէլին» («Դիվան», պրակ III, էջ 244)։ Այս Սմբատը Բուրթել Մեծի

1307 թ. ձեռագիր հիշատակարանում Բուրթելի զավակների մասին կարդում ենք. «Եւ յաւէտ ի խրատ եւ ի վարժումն մտաց եւ ի լոյս ականցաց՝ երկուց աստուածատուր հարազատ զաւակաց իւրեանց Բէշքէնին եւ Իւանէի»[46]։ Այս վկայությունը աներկբայորեն հաստատում է, որ Բուրթելը ունեցել է երկու որդի։

Բուրթելի մահից հետո իշխանությունն անցավ որդուն՝ Բեշքենին։ Նա առաջին անգամ հիշատակված է հոր և եղբոր՝ Իվանեի հետ, Արենի գյուղի ս. Աստվածածին եկեղեցու 1321 թ. արձանագրության մեջ։ Լ. Խաչիկյանը հիշյալ արձանագրության թվականը համարում է 1322-ը, որն ըստ նրա Բեշքենի մասին մեզ հասած առաջին հիշատակությունն է[47]։ Արձանագրությունը թողել է Հովհաննես Օրբել արքեպիսկոպոսը՝ եկեղեցին կառուցելու կապակցությամբ։ Այստեղ ասված է. «Ես տր. Յովհանէս Աւրպել Սիւնեց արհէպիսկոպոս շինող սուրբ եկեղեցոյս յիշել աղաչեմ. եւս եւ զբարեպաշտ իշխանաց /իշխանն պարոն մեծաւորն իմ զքաջ մենամարտ/իկն զԲիւրթէլն եւ զմխոափառ քաղէ/ր զոյգն իւր զՎախախն՝ նորաբողբոջ զաւակաւքն իւրեանց Բէշքէնին եւ Իւանէկին/։ Թվ. :ՉՀ:» (1321)[48]։ Գլաձորում 1323 թ. գրված հիշատակարանում նորից հիշատակվում են Բեշքենն և Իվանեն[49]։

1337 թ. գրիչ Ավագի օրինակած ավետարանի հիշատակարանում մեծարանքի ջերմ խոսքեր կան Բեշքենի գործունեության մասին։ Նա երիտասարդ հասակից մասնակցել է իր հոր կողմից գլխավորած զորախմբի պատերազմական գործողություններին և աչքի ընկել որպես անվախ և հմուտ

որդին չէ։ Հիշյալ Սմբատը հավանաբար 1261 թ. հիշատակված Բուրթելի որդին է, որը, սակայն, չկա Գ. Գրիգորյանի կազմած Օրբելյանների տոհմածառում (նշվ. աշխ., 260 էջի ներդիր)։

46 «Բազմավէպ», 1947, թիվ 9—10, էջ 217։

47 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 176։

48 «Դիվան», պրակ III, էջ 29։

49 ԺԴ, էջ 182։

զորական: Նա իր հոր հետ զինվորական ծառայության մեջ է եղել մերթ Թավրիզում, մերթ Սուլթանիեում, ուր ցուցաբերել է զորահրամանատարի ակնհայտ ունակություններ[50]: Ավագ գրիչը մեծ գովասանքի է արժանացնում նաև Բեշքենի արտաքին ու ներքին վսեմությունները. «...գեր քան զբնաւս յընդրութիւն բարւոյն, գեղաղէշ և շնորհաշուք յարգիս Սիւնի անդրանիկն և Հայոց Մեծաց թագազարմից ժառանգն, տէր տանն Սիսական՝ մեծիմաստ պարոնաց պարոն»[51]: Ավագ գրիչը այդ ավետարանը օրինակել է Բեշքենի պատվերով և նվիրել Տաթևի վանքին: Բեշքենի և Իվանեի քաջակորով զորական լինելու մասին ասված է նաև 1337 թ. Սյունիքում գրած հիշատակարանում, ուր Բուրթելի հետ հիշվում են նաև Բեշքեն և Իվանեն. «...զամիր քաջ զաւակաց նորին Պեշքենի և Իւանէի, որ ամենայնիւ նման զոլ հօրն բարեպաշտին»[52]: Բեշքեն և Իվանեն ծնողների հետ հիշատակված են Բուրթելաշեն եկեղեցու կառուցման առթիվ Բուրթելի թողած արձանագրության մեջ. «Կամաւն այ. ես պարոն Բիւրթէլ իշխանաց իշխան եւ ամուսին իմ Վախախ եւ որդիք իմ Բեշքեն եւ Իւանիկ շինեցաք զէկեղեցիս մեր հալալ արդեանց»[53]: Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը անթվակիր է և, քանի որ Բուրթելաշեն եկեղեցին կառուցվել է 1339 թ., շինարարական արձանագրությունը, կարծում ենք, պետք է վերագրել այդ թվականին: Բեշքենը և Իվանեն հիշվում են նաև 1349 թ. Թուղթան իշխանուհու գնած ավետարանի հիշատակարանում: Նա հայտնում է, որ ավետարանը գնել է. «...իշխանութեան քաջ զաւրավարին Հայոց, աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Բեշքենայ եւ Իւանէի»[54]: Սա սկզբնաղբյուրների, առայժմ, վերջին հիշատակությունն է Բեշքենի վերաբերյալ: Հայրավանքի եկե-

50 Տե՛ս ԺԴ, էջ 292:
51 Նույն տեղում:
52 Նույն տեղում, էջ 297:
53 «Դիվան», պրակ III, էջ 240:
54 ԺԴ, էջ 375:

ղեցու անթվակիր մի արձանագրության համաձայն Բեշքենը և Իվանեն վանքին են նվիրել «Բերդի :Զ: բաժակս» և մեկ ջրաղաց[55]: Անհայտ է Բեշքենի մահվան տարին: Գ. Գրիգորյանը ենթադրում է, որ Բեշքենը մահացել է մինչև 1377 թվականը[56]: Քանի որ 1367 թ. Ցաղաց քարի վանքի արձանագրությունում հիշատակված է միայն Իվանեն[57], կարելի է ասել, որ 1367 թ. առաջ Բեշքենը մահացել էր: Իվանեն, ինչպես արդեն տեսանք սկզբնաղբյուրներում, հիշատակվում է հոր և ավագ եղբոր հետ: Նրա անվանը հանդիպում ենք մի քանի ձևով՝ Իվանե, Իվանիկ, Նանիկ և այլն: Իվանեի մասին առաջին տեղեկությունը, ինչպես ասվեց, հանդիպում է 1321 թ. Արենիի ս. Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ[58]: Ցաղաց քարի վանքի 1367 թ. արձանագրության մեջ, որը թողել է ոմն Լիպանոս՝ իր Սամսոն որդու հիշատակին վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ, Իվանեն հիշվում է տեղի իշխան. «...իշխանութբ. Իւանէի...»[59]: Իվանեի մասին վերջին տեղեկությունը վերաբերում է 1377 թ.: Այս թվականին գրված մի հիշատակարանում գրիչը հայտնում է, որ հայոց իշխանությունը նվազել էր. «և միայն մնացեալ Իվանի, որ կոչի Նանիկ, որդի մեծին Բուրթէլին, ի մէջ այլասեռից, բազում հարկապահանջութեամբ»[60]: Թե մինչև երբ ապրեց Իվանեն, հայտնի չէ, սակայն պարզ է, որ Լանկ-Թամուրի դեպի Սյունիք կատարած արշավանքից (1387 թ.) առաջ նա արդեն մահացել էր:

Նախքան Բեշքեն և Իվանե իշխանների որդիների ու թոռների գործունեության անդրադառնալը, հարկ ենք համարում խոսել XIV դ. ապրած ու գործած Օրբելյան մյուս իշխանների մասին:

55 «Դիվան», պրակ IV, էջ 71:
56 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 105:
57 Տե՛ս «Դիվան», պրակ III, էջ 144:
58 Տե՛ս նույն տեղում, էջ 29:
59 Նույն տեղում, էջ 144:
60 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 96:

Տարսայիճի մահից հետո, գահերեցության համար մղվող պայքարն ավելի խորացավ և պատճառ դարձավ Օրբելյանների ընդարձակ տիրույթների մասնատման՝ առանձին բաժնեկալվածքների[61]։

Օրբելյանների ֆեոդալական տան իշխանապետի պաշտոնի շուրջ պայքար սկսվեց Տարսայիճի որդիների և նրանց հորեղբայր Իվանեի որդու՝ Լիպարիտի միջև։ Միջֆեոդալական այս պայքարը խրախուսում էին մոնղոլ նվաճողները, և այդ վեճը լուծվեց Արղուն խանի միջամտությամբ։ Նա Օրբելյան տան գահերեց իշխան հաստատեց Տարսայիճի որդի Էլիկումին[62]։

1285 թ. մինչև 1302 թ. Սյունյաց մետրոպոլիտն էր միջնադարյան Հայաստանի ականավոր քաղաքական ու կրոնական գործիչ, նշանավոր պատմագիր, Տարսայիճի որդի Ստեփանոս Օրբելյանը[63]։

1302 թվականից այդ պաշտոնը ստանձնեց պատմագրի հորեղբոր թոռ Լիպարիտ Օրբելյանի որդի Հովհաննես Օրբելյանը։ Դա տեղի ունեցավ Ստ. Օրբելյանի մահից մեկ տարի առաջ, այսինքն Հովհաննեսը մետրոպոլիտի պաշտոնը ստանձնեց Ստ. Օրբելյանի կենդանության օրոք։ Ինչպես ապացուցել է Գ. Գրիգորյանը, Ստ. Օրբելյանը այդ ժամանակ եղել է վաթսուն տարեկան[64]։ Հետևապես Սյունյաց մետրոպոլիտությունից Ստ. Օրբելյանը հրաժարվել է առողջական վատ վիճակի պատճառով։

Այս իրադարձությունների մասին 1302 թ. իր ձեռքով գրած հիշատակարանում գրել է. «...ես տէր Յովհաննէս, յազգէ Ուրպելեանց, պատուաթրանուէս Հայոց մեծաց և մետրապոլիտ Սիսական նահանգի. եկայք ի վերին Նորավանս, առ վարդապետն Դաւիթ և Արքայ. խնդրեցին ի մէնջ ժողովուրդ ինքեանց ի սատար սուրբ ուխտիս, և մեք տուաք սոցա ժողովուրդ զՄնկեղի, զՇղիան, զՇըլիկանց Ջոր, զՎաղըցան ի սեպական ժողովուրդ և թեմ, որ զամենայն հասս և զիրաւունս սոքա սոցա տացին... Գրեցաւ ի թուականիս Հայոց ՉԾԱ (1302)»[65]։ Խելացի մտավորական ու հեռատես քաղաքական գործիչ Ստեփանոս Օրբելյանը, նկատի ունենալով իր տոհմի քաղաքական շահերը, դեռևս իր կենդանության օրոք Հովհաննես Օրբելին կարգեց Սյունյաց աշխարհի մետրոպոլիտ և, ինչպես հիշատակարանն է վկայում, նրան օժտեց մեծ իրավունքներով։

1300 թ. Տաթևում Հովհաննես Օրբելը ավարտել է մի ավետարան, որի հիշատակարանում գոհունակություն է հայտնում աստծուն. «...որ արժան արար զիս անպիտանս նուաստ Աւրպէլ Իովանէ հասանել յայս, որ տեսի աչօք իմովք զաւարտ սուրբ Աւետարանիս...»[66]։ Այնուհետև գրում է, որ ինքը Սյունյաց եպիսկոպոսն է, Լիպարիտ և Նանա բարեպաշտ ծնողների ծնունդը, և բարին է հիշում իր նախնիների՝ մեծ Սմբատ Օրբելյանին, Տարսայիճին, նրա որդիներ Էլիկումին, Իվանեին և վերջինիս որդի Լիպարիտին, որոնք մահացել են, իսկ իր հորեղբայր, Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոսին համարում է «երկնի աստղական տանն»[67]։ Ժամանակակիցները մեծ գովեստով են արտահայտվել Սյունյաց նոր մետրոպոլիտի մասին։ 1303 թ. մի հիշատակարանում Հովհաննես Օրբելը հիշվում է իբրև երջանիկ և երիցս երանելի վարդապետ[68], իսկ 1306 թ. հիշատակարանում գրիչ Սարգիսը նրան համարում է սուրբ ընտրյալ, քաջ հռետոր և անհաղթ սոփեստ[69]։ 1310 թ. մի հիշատակարա-

61 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 107։

62 Տե՛ս նույն տեղում։

63 Ստ. Օրբելյանի կյանքն ու գործունեությունը հանգամանորեն տալիս է Գ. Գրիգորյանը, տե՛ս նշվ. աշխ., էջ 193—222։

64 Տե՛ս նույն տեղում, էջ 194։

65 ԺԴ, էջ 7—8։

66 ԺԳ, էջ 857։

67 Նույն տեղում, էջ 859։

68 ԺԴ, էջ 12։

69 Նույն տեղում, էջ 42։

նում կոչված է Սյունյաց նահանգի վերադիտող[70]: Նույն Թեղականի մի խաչքարի արձանագրությունում նրա մասին ասված է. «...յարհիակյան քաչապետութ. տեառն Յովանիսի...»[71]: 1312 թ. Գրիգոր Դոփյան իշխանի Ամաղուի: Նորավանքին նվիրել է այգի, այդ առթիվ Սմբատի դամբարանի հյուսիսային պատին թողած արձանագրությունում նվիրատվությունը կատարել է. «...ի հայրապետութե. տր Աւրպէլի Յովանէսի Սինեց էպիսկոպոսի...»[72]: Հովհաննես Օրբելը 1321 թ. կառուցել է ավել Արենիի ս. Աստվածածին եկեղեցին և արձանագրել. «Ես տր. Յովանէս Աւրպել Սինեց արհեպիսկոպոս շինող սուրբ, եկեղեցույս յիշել աղաչեմ... Թվ. :ՉՀ:» (1321)[73]: 1321 և 1323 թթ. հիշատակարաններում Հովհաննես Օրբելը հիշվում է որպես. «...մետրապաւլիտ եւ այցելու Սինեաց երկոտասան գաւառանայց»[74]: Սկզբնաղբյուրներում Հովհաննես Օրբելի վերաբերյալ 1323 թ. հիշատակությունը վերջինն է: Հակառակ այն կարծիքին, թե չգիտենք երբ է մահացել Հովհաննես Օրբելը[75], ասենք, որ նա մահացել է 1324 թ. և թաղված է Նորավանքում՝ Ստեփանոս Օրբելյանի կողքին: Նրա տապանաքարին արձանագրված է. «Թվիս :ՉԿԳ: (1324) սուն իմաստից եւ հանճարոյ Աւրպէլ զՅովանէս հրաշափառ մետրապաւլիտ Սինեաց»[76]:

Հովհաննես Օրբելի մահից հետո 1324 թ. Սյունյաց մետրոպոլիտ է դառնում Ստեփանոս-Տարսայիճը: Նրա կյանքն ու գործունեությունը քննության է առել Գ. Գրիգորյանը[77]: Ստեփանոս-Տարսայիճը Գլաձորի համալսարանում ուսանելու տարիներին աչքի է ընկնել իր արտակարգ ունակություն-

70 Նույն տեղում, էջ 67:

71 «Դիվան», պրակ III, էջ 60:

72 Նույն տեղում, էջ 239:

73 Նույն տեղում, էջ 29:

74 ԺԴ, էջ 182—183:

75 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 190:

76 «Դիվան», պրակ III, էջ 232:

ներով և երիտասարդ տարիքում արժանացել Սյունյաց արքեպիսկոպոսի հոգևոր բարձր կոչմանը, երբ դեռ կենդանի էր Հովհաննես Օրբելը, և հաջորդել է նրան[78]: Նա դեռևս Հովհաննես Օրբելի կենդանության տարիներին ակտիվ դեր է խաղացել Սյունյաց աշխարհի հոգևոր կյանքում: Նրա մասին 1314 թ. առաջին գրավոր վկայությունում Ստեփանոս-Տարսայիճը հանդես է գալիս որպես Սյունյաց աթոռակալ և Գլաձորի համալսարանի հովանավոր ու օժանդակող[79]: 1314 թ. Գլաձորում գրված մի ավետարանի հիշատակարանում գրիչ Պողոս Կիլիկեցին գովասանքի չափ խոսքերով է հիշում Ստեփանոս-Տարսայիճին. «...զղեաբողբոջ և պտուտաղարդ պատանին զտէր Ստեփաննոս... երանաշնորհ բարուն, դաստիարակ և սնուցիչ...»[80]: Հիշատակարանների բովանդակությունից իմանում ենք, որ նա երիտասարդ հասակում ձեռնադրվել է եպիսկոպոս և կարգվել Սյունյաց արքեպիսկոպոսական աթոռի տեղապահ[81]: Իսկ 1321 թ. Հովհաննես Օրբելի հետ նա հիշվում է որպես. «...վերադիտող տանս Սինեաց»[82]: 1323 թ. Եսայի Նչեցու ընդօրինակած ավետարանի հիշատակարանում Ստեփանոս-Տարսայիճը հիշվում է Հովհաննես Օրբել մետրոպոլիտի հետ: Եսայի Նչեցին, որն այդ ժամանակ Գլաձորի համալսարանի րաբունապետն էր, երախտագիտությամբ հայտնում է, որ. «...մեք բազում գութս և խնամս տեսաք և վայելեցաք ի սոցանէ»[83]: Եսայի Նչեցին ևս վկայում է, որ Ստեփանոս-Տարսայիճը. «...մանուկ տիօք առեալ զաստիճան արհեպիսկոպոսութեան...»[84]: Իբրև Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս-Տար-

77 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 227—232:

78 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 15:

79 Տե՛ս ԺԴ, էջ 99:

80 Նույն տեղում, էջ 100:

81 Նույն տեղում, էջ 99, 104:

82 Նույն տեղում, էջ 166:

83 Նույն տեղում, էջ 183:

84 Նույն տեղում:

ռայինը 1326 թ. այցելել է Վաղադնու վանք, նրա հյուրատանն է նվիրել իր բաժին հարկը և կարգավորել վանքի օգտին գանձվող հարկերը[85]։ 1331 թ. Թորոս փիլիսոփա գրիչը մեծ հիացմունքով գրում է, որ Ստեփանոս-Տարսայիճն ընտրվել է Սյունյաց մետրոպոլիտ և դարձել. «...տէր և վերատեսուչ գահերէց և գլուխ արհիերից աթոռոյս Սիւնեաց Տաթևոյ և Նորավանից և Յաղացքարոյ, պետ երկոտասան գաւառաց...»[86]։ Սա, ինչպես ճիշտ նկատել է Գ. Գրիգորյանը, Ստեփանոս-Տարսայիճի մասին վերջին գրավոր վկայությունն է[87]։ Ստեփանոս-Տարսայիճը Եղեգիս ավանում կառուցել է տվել ս. Աստվածածին եկեղեցին. «Ես տր Ստեփանոս, որդի Ջալալին, թոռն մեծի Տարսաիճին հիմնարկել շինեցի եկեղեցիս յանուն սրբուհոյ Ածածնայ»[88]։ Արձանագրությունը եղծված է, թվականը չկա։ Հավանաբար եկեղեցին կառուցվել է 1324 թ. հետո, երբ նա դարձավ Սյունյաց մետրոպոլիտ։

Տարսայիճի մահից հետո (1290 թ.) Լիպարիտ Օրբելյանը, բացահայտ անհնազանդություն ցուցաբերելով Էլիկումին, ձգտում էր ձեռք բերել գահերեցության իրավունքը, դառնալ Սյունյաց իշխանաց իշխանը[89]։ Գ. Գրիգորյանը հիմք ունենալով «Հին Սալի» գյուղատեղում 1291 թ. կանգնեցրած մի խաչքարի արձանագրության բովանդակությունը, կարծում է, որ Լիպարիտը այլևս չէր ճանաչում Էլիկում Օրբելյանի գահերեցությունը[90]։

Լիպարիտի հինգ որդիներից Սմբատը 1305 թ. մասնակցել է դեպի Մար մոնղոլների արշավանքին, ճակատամարտերից մեկի ժամանակ գերվել և տարվել է Մար։ 12 տարի գերության մեջ մնալուց հետո ազատվել և վերադարձել է հայ-

85 Տե՛ս «Դիվան», պրակ II, էջ 107։

86 ԺԴ, էջ 231։

87 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 231։

88 «Դիվան», պրակ III, էջ 108։

89 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 9։

90 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 108։

րենիք։ Այդ իրադարձությունները նա արձանագրել է ավել Հերհերի ս. Աստվածածին եկեղեցու 1317 թ. արձանագրության մեջ[91]։ 1339 թ. Սմբատը մի այգի է նվիրել Սպիտակավոր Աստվածածնի վանքի միաբանությանը. «Կամաւն այ. ես Սմբատ, որդի Լիպարտի միաբանեցա աւագ անապատիս որ. Կարապետիս եւ Սպիտակաւոր Ածածնիս եւ ետի զՎախթանկենց այգին իւր ամէն հառաւ/վ/ն զծառ եւ տունկ, որ հանապազ զմեզ ի պատարագն յիշեն։ Թվ. ՉՁԸ։» (1339)[92]։ Նվիրատվությունները վկայում են այն մասին, որ վերադառնալով հայրենիք Սմբատը տեր էր դարձել իր հայրենի կալվածքներին։ Սմբատի որդիներից հայտնի է Պենան, որը 1348 թ. իր տիկնոջ՝ Սուսայի հետ այգի է նվիրել Փանասի վանքի ս. Ստեփանոս եկեղեցուն. «Կամաւն ամենակալին այ. ես Պէնա, որդի Սմբատա, թոռն Լիպարտի, տէր Փանծաթաղին եւ ամուսին իմ Սուսա միաբանեցաք սբ. Ստեփանոսիս եւ տուաք ի մեր հալալ հայրէնեաց որ ի Փանձաթաղին զՄադմանենց եւ զՍւանչենց էգին մեր հոգոյս բաժիներն... ։ՉՂԷ։» (1348)[93]։

XIV դ. առաջին կեսին բավական ազդեցիկ դեր ուներ Լիպարիտի կրտսեր որդին՝ Ջեսարը։ Նրա մասին հիշատակություն կա 1310 թ. գրիչ Պողոսի ընդօրինակած ավետարանի հիշատակարանում, ուր նա հիշվում է Հովհաննես արքեպիսկոպոսի, Բուրթելի և Բուղդայի հետ, որպես Վայոց ձորի իշխան[94]։ Ջեսարի համար Ղ. Ալիշանը գրում է, որ նա Սմբատ իշխանի որդին է[95]։ Սակայն Սելիմի իջևանատան դահլիճի արևելյան պատի վրա Ջեսարի թողած արձանագրությունը կարևոր է Ջեսարի ինքնությունը պարզելու համար. «...ի թվ ։ՉՁԱ։ (1332), յաշխարհակալութե. Բուսաիդ

91 Տե՛ս «Դիվան», պրակ III, էջ 55։

92 Նույն տեղում, էջ 98։

93 Նույն տեղում, էջ 81։

94 Տե՛ս ԺԴ, էջ 66—67։

95 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 95։

ղանին, ես Ջհաւար, որդի իշխանաց իշխանին Լիպարտի եւ մաւրն Անաին, թոռն Իվանէի, եղբայր իմ առիւծագեղ իշխանացն Բուրթելին եւ Սմբատա եւ Էլիկումին, յազգէ Աւրբելէնց, եւ կենակից իմ Խորիշահ, դուստր իշխանին Վարդա(ն)ա եւ Դոփին քր...երն, յազգէս Սենիքարիմանց ի հալալ արդեանց մերց շինեցաք զհողնատունս ի փրկութի. հոգոց մեր եւ ծնողաց եւ եղբարց մեր ի քս նուչեցելոց. եւ կեսաց եղբարց իմոց եւ որդոց Սարգսի եւ Հովանիսի քահանաի, Քուրդին «եւ Վարդի»... ի թվիս ։ՉՁԱ։» (1332)[96]։ Արձանագրության մեջ Ջհաւարը հիշում է իր երեք եղբայրներին, «Առիւծագեղ իշխաններ» Բուրթելին, Սմբատին և Էլիկումին, Ջհաւարի եղբայրն էր նաև Հովհաննես Օրբելը, որն ինչպես տեսանք Սյունյաց մետրոպոլիտն էր։ Արձանագրությունից պարզվում է, որ Ջհաւարը ամուսնացել էր Վարդան իշխանի և Դոփի դստեր՝ Խորիշահի հետ։ Ջհաւարը և Խորիշահը ունեցել են հինգ որդիներ՝ Սարգիս, Հովհաննես, Քուրդ, Վարդան և Իվանե։ Ջհաւարի կրտսեր որդին՝ Իվանեն մահացել է մանուկ հասակում և թաղվել Ամաղուի Նորավանքի Օրբելյանների դամբարանում։ Նրա տապանաքարից հրատարակիչները արտագրել են հետևյալ չափածո տապանագիրը.

«Կայ հանգուցեալ յայս տապանի
Զքնաղ մանուկ զարմանալի,
Որ Իւանէ անուն կոչի.
Ընծիւր ծագեալ Աւրբելեցի,
Որդի Ջհաւար մեծ իշխանի»[97]։

Ջհաւար Օրբելյանը վերջին անգամ հիշվում է Հորս գյուղի մի խաչքարի 1349 թ. արձանագրությունում. «Թվ. ։ՉՂԸ։ (1349) իշխանութբ. պարոն Ջհաւարին. ես Տիրի կանկնեցի զխաչս ի փրկութի հոգոյ իմոյ»[98]։

---

96 «Դիվան», պրակ III, էջ 177—178։

97 Նույն տեղում, էջ 233։

98 Նույն տեղում, էջ 166։

Գ. Հովսեփյանը գրում է, որ «Ջհաւարի և յուր եղբայրների կալվածքներն ընկնում էին Ճանղուրթարան և նույն կարավանատան շուրջը եղած լեռների վրա և այնտեղից թեքած վտակի հովտում, որ Եղեգյաց ձորի արևմտյան բերանում, Հառանի գետի մոտ խառնվում է Եղեգյաց գետի կամ Արփայի հյուսիսային ճյուղին»[99]։ Գ. Գրիգորյանի կարծիքով Ջհաւարի և ընդհանրապես Լիպարիտյանների իշխանանիստ կենտրոնը եղել է Հորս գյուղը, ուր կիսավեր վիճակում մնում է իշխանական ապարանքը[100]։

Հերհեր գյուղի շրջակայքում և համանուն գետակի հովտում տիրույթներ ուներ Օրբելյանների վասալ Շահունեցի իշխանական տունը[101]։ XIII—XIV դդ. սկզբնաղբյուրներում բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել Շահունեցի իշխանների վերաբերյալ, որոնցից հայտնի են դառնում, որ Շահունեցի իշխանները զինվորական ծառայության մեջ են եղել Օրբելյանների մոտ և անձնվիրաբար ծառայել են իրենց տերերին ու հայրենիքին։ Վահրամ Շահունեցին Օրբելյանների քաջաբազուկ և մեծ սպարապետն էր, իսկ նրա որդի Ուքանի մասին։ Յաղաց քարի վանքի 1325 թ. արձանագրությունում ասված է. «Զադնին, յետրեալսն և զքաջն ի պարականան զպարոն Ուքանն յիշեցէք»[102]։ Շահունեցի իշխանների պատմությունը հանգամանորեն շարադրել է Գ. Գրիգորյանը[103]։ Թուղթան իշխանուհու պատվերով 1349 թ. ընդօրինակված ավետարանի հիշատակարանն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Օրբելյանների և Շահունեցիների փոխհարաբերության մասին։ Գրիչ Վահանը գրում է, որ Թուղթանը դուստրն էր Թագավորատոհմ և Որոտան դավա-

---

99 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 13։

100 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 112։

101 Տե՛ս «Դիվան», պրակ III, էջ 47, Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 11։

102 «Դիվան», պրակ III, էջ 145։

103 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 58—62։

ռի բարեպաշտ իշխող Իվանեի, որը հարս էր եկել Շահուռնեցիների տունը[104]։ Թուղթանը Վահրամ իշխանի որդու՝ Ամատայի կինն էր, իսկ Ամատան Բուրթելի «նիզակակալ և հրովաձիգ» սպարապետն էր։ Գրիչը տեղեկություններ է հաղորդում Թուղթանի եղբայրների՝ քաջ քարտուղար և երջանիկ բարեպաշտ Հովհաննես վարդապետի, Հասանի և Զաքարիայի մասին[105]։ Քաջաղոր իշխանաց իշխան և Վայոց ձորի «նահանգակալ», «...յաղթէն մեծ Տարսաիճենց» Վահրամի կինն էր «Թագաւորատոհմ եւ իշխանաց իշխան» Գոնցան։ Նրանք ունեցել են երեք որդի՝ Ուքան, Հասան և Ամատին։ Վահրամը մահացել է երիտասարդ հասակում։ Որբ մնացած որդիներին դառը չարչարանքով մեծացրել է Գոնցան, դարձնելով հայրենիքի զինվոր։ Նրանք նահատակվել են նվաճողների դեմ պատերազմներում[106]։ Ամատը և Թուղթանն ունեցել են միայն մեկ դուստր՝ Նաթիլ։ Բուրթելն ու Վախախը իրենց թոռանը՝ Կուկային, Բեշքենի որդուն, ամուսնացրել են Նաթելի հետ և նրանց տնօրինությանը հանձնել Ամատա իշխանի տիրույթները[107]։ Ինչպես արդեն նշվեց, Լանկ-Թամուրի դեպի Սյունիք կատարած արշավանքից առաջ Իվանեն մահացել էր։ Նրա մահից հետո Սյունիքի գահերեց իշխաններն էին որդիները՝ Բուրթելը և Սմբատը[108]։ Գ. Հովսեփյանը այն կարծիքին է, թե Բեշքենից հետո Օրբելյանների ֆեոդալական տունը կառավարում էին Զեսարի ժառանգները[109]։ Բուրթելից և Սմբատից զատ, Իվանեն ունեցել է երկու արու զավակ՝ Ստեփանոս և Գորգուն։ Ստեփանոսը հոգևորական էր և դարձավ Սյունյաց եպիսկոպոս։ Ղ. Ալիշանն այս Ստեփանոսին Սյունյաց եպիսկոպոս է համարում XV դ.

104 Տե՛ս ԺԴ, էջ 375—376։

105 Տե՛ս նույն տեղում։

106 Տե՛ս նույն տեղում։

107 Տե՛ս նույն տեղում։

108 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 96։

109 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, մասն Ա, էջ 250։

առաջին կեսին[110]։ Սակայն փաստերի քննությունը մեզ բերում է այն հետևության, որ Ստեփանոսը Սյունյաց եպիսկոպոս էր XIV դ. երկրորդ կեսին։ Ստեփանոսի մասին տեղեկություն է հաղորդում Մատենադարանի մի ձեռագիր, որի 373-րդ էջի հիշատակարանը գրել է ինքը՝ Ստեփանոսը. «Ես տէր Ստեփաննոս մականուն Սուլթանշահ, թոռն Բուրթելին, որդի Նանիկին եղբայրն Բշքենի պարոնի՝ ի Քրիստոս հանգուցել։ Մեք վկա եմք այս սուրբ Աւետարանիս Վահրամայ և իւր եղբայր, իւրեանց հալալ արդեամբ գնեցին զայս սուրբ Աւետարանս...»[111]։ Գ. Գրիգորյանը Ստեփանոս Սուլթանշահին կոչում է Ստեփանոս եպիսկոպոս Իվանե մականունով[112]։ Խնդրո առարկա ավետարանի 374-րդ էջում կա ոմն Գրիգոր քահանայի հիշատակությունն այն մասին, որ ինքը 1366 թ. իր հալալ արդյունքով գնել է ավետարանը՝ «...յիշատակ ինձ և ծնողաց իմոց եւ եղբարցս։ Ինչպես ապացուցել է Լ. Խաչիկյանը, Ստեփանոս-Սուլթանշահի հիշատակարանը Գրիգոր քահանայի հիշատակարանի անմիջական շարունակությունն է[113]։ Հետևապես, Ստեփանոս-Սուլթանշահի հիշատակարանը գրվել է 1366 թ. կամ դրանից քիչ հետո։ Այս Ստեփանոսը նույնացվել է «Տաղ տէր Ստեփանոսին Սիւնեաց եպիսկոպոսին» պոեմի հերոսի հետ[114]։ Պոեմի բովանդակությունից իմանում ենք, որ Ստեփանոսը պատանի հասակից մինչև հոգևոր կոչում ընդունելը Թավրիզում եղել է զինվորական ծառայության մեջ և աչքի է ընկել իր քաջությամբ։ Նա մեզ անհայտ պատճառներով սպանել է իր խորթ մորը՝ Էլխաթունին, և վերջինիս ազգականների պա-

110 Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 218։

111 Մատենադարան, ձեռ. թիվ 9450, էջ 373։

112 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., Օրբելյանների տոհմածառը (260 էջ ներդիր)։

113 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 179—180։

114 Տե՛ս Ա. Մնացականյան, Միջնադարյան հայրենասիրական մի նորահայտ պոեմ, «Բանբեր Մատենադարանի», թիվ 8, Երևան, 1967, էջ 291—317։

հանգավ հայրը ստիպված է եղել գիտանել տալ Ստեփանոսին[115]։ Ա. Մնացականյանը այն կարծիքին է, որ քննվող պոեմը XIII դ. երկրորդ կեսի, կամ առնվազն XIV դ. սկզբների արգասիք է[116]։ Լ. Խաչիկյանի կարծիքով Ստեփանոս-Սուլթանշահի նահատակությունը եղած պետք է լինի 1366 թ. հետո և 1377 թ. առաջ[117]։ Եթե ընդունում ենք, որ Ստեփանոս-Սուլթանշահը սպանվել է XIV դ. վերջերին, ապա այս ժամանակ էլ ստեղծվել է հիշյալ պոեմը։ 1423 թ. Վայոց ձորի Բերդավանք գյուղում գրված հիշատակարանում թվարկված են այն վարդապետները, որոնք հանգչում են այդտեղ. «...սուրբ վարդապետացն, որ աստ հանգուցեալ կան՝ Տիրատուր վարդապետն, Գրիգոր վարդապետն, Բարսեղ վարդապետն, տէր Սուլտանշէն...»[118]։ Լ. Խաչիկյանի կարծիքով թվարկված վարդապետների հետ այստեղ հանգչող Սուլթանշահը նույն Ստեփանոս-Սուլթանշահն է[119]։ Հետևապես, Ստեփանոս-Սուլթանշահի նահատակությունից հետո նրա աճյունը բերվել և թաղվել է Վայոց ձորում։

Գորգունի մասին, որն Իվանեի չորրորդ զավակն էր, մեզ ավելի քիչ բան է հայտնի։ Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողներից մեկը Գորգունի մասին գրել է. «Ի ՊԼԵ (1386) ամին Թուրքն էառ զբերդն Որոտան՝ և մեծ վարդապետն Կախիկ գնաց փախստական ի Տարայ՝ և Պարոն Գորգունէն դարդամահ եղև»[120]։ Ժամանակագիրը ամենայն հավանականությամբ նկատի ունի Թոխթամիշի արշավանքը, երբ սա Թավրիզից մտավ Նախճավան և Սյունիք ու այնտեղի ավերածություններ գործեց Սյունիքում, որ իշխան Գորգունը վշտահար եղավ։ Գ. Գրիգորյանը խոսելով այս իրա-

115 Տե՛ս նույն տեղում։

116 Տե՛ս նույն տեղում, էջ 300։

117 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 192։

118 ԺԵ, մասն Ա, էջ 301։

119 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 192։

120 Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 170։

դարձությունների մասին, եզրակացնում է, որ Լանկ-Թամուրի զորքերը Որոտանաբերդը գրավել են 1386 թ.[121]։ Լանկ-Թամուրի արշավանքը դեպի Սյունիք տեղի է ունեցել 1387 թ. գարնանը։ Սամուել Անեցու շարունակողը խոսելով Լանկ-Թամուրի արշավանքի մասին գրում է. «Ի սոյն ամի ՊԼԵ. (1386) թվին Լանկթամուրն եկն ի Թավրէզ և ի Նախչուան՝ և անտի ի միում աւուր կալաւ մինչև ի Կարբի և ի Բջնի, ի Գառնի՝ Սուրմարի, ի Կողբ. և անտի գնաց ի Վրացտուն», ավերում է Թբիլիսին, ձերբակալում վրաց Բագրատ թագավորին, կրոնափոխ անում, Վրաստանից գնում է Մուղան ձմեռելու ...և ի գալ տարւոյն՝ յաւուրս աւագ զատկին եկ ի Սիւնիս, և սփռեալ տարածեցաւ...»[122]։

1386 թ. հիշատակությունը միակն է Գորգունի մասին։ Նրա մասին աղբյուրներում հիշատակություններ կան կապված իր որդու՝ Տարսայիճի անվան հետ։ Թ. Մեծոփեցու վկայությամբ Լանկ-Թամուրի երկրորդ արշավանքից հետո Իրանի և Անդրկովկասի կառավարիչ նշանակված Միրզա-Օմարը հինգ հայ իշխանների բռնությամբ հավատափոխ է անում, որոնց թվում Օրբելյան երեք իշխանների՝ Իվանեի որդիներ Սմբատին ու Բուրթելին, Գորգունի որդի, Եղեգիսի տեր Տարսայիճին[123]։ Օրբելյանների նկատմամբ հալածանքը շարունակվեց նաև կարա-կոյունլու Ղարա-Յուսուֆի ժամանակ։ Հերմոնի վանքում 1419 թ. Գրիգոր Ախալցխացի գրիչը Տարսայիճի մասին գրել է. «Գրեցաւ գիրքս այս... ի հայրապետութեան սուրբ ուխտիս և գաւառիս պարոն Տարսայիճին, որդւոյ Գորգունին, որդոյ Իւանիկին, որդոյ Բուրթէլին։ Զի յայսմ ամի յոյժ ի նեղութիւն, ի տառապանս և յաղքատութիւն անկաւ, զի նա, որ բոլոր գաւառիս իշխէր, այժմ ոչ միոյ ագարակի կամ գեղջ ոչ կարէ իշխել զի խլեալ և յափշտակեալ էին ի նմանէ զամենայն գեւղ և զքաղաք, զվանք

121 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 251։

122 Սամուել Անեցի, նշվ. աշխ., էջ 171։

123 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 67—68։

և ղանապատ ի նմանէ. և նայ փախեալ և թագուցեալ էր ի ձերպս վիմաց և ի մայրիս... Եւ ի հայրապետութեան այսմ նահանգի տէր Ստեփանոսի, մականուն Իւանէի, որդի պարոն Սմբատայ և եղբայր պարոն Բէշքէնի...»[124]: Ինչպես տեսնում ենք, նվաճողների դաժան հալածանքներն ու բռնագրավումները Գորգունին հասցրեցին մահվան, իսկ նրա որդի Տարսայիճը հարկադրված ապավինել էր քարայրների և անտառների անառիկությանը: Գ. Գրիգորյանը գրում է, որ «Իվանեի ժառանգներից ձեռագրերում և վիմական արձանագրություններում հիշատակվում է Սմբատն ու Բուրթելը (Բուրթել կրտսերը)»[125]:

Իվանեի որդիներ Սմբատի և Բուրթելի մասին աղբյուրներում տեղեկությունները սակավ են: Սմբատի վերաբերյալ Հակոբ գրիչը 1386 թ. գրել է. «Եւ մինչդեռ անձառ ցնծութեամբ և բերկրալից ուրախութեամբ լցեալ կայք, բազունին Կ. 60 աշակերտօքն, ի բնիկ գաւառն իւր՝ յերկիրն Որոտան, կարդալով և գրելով զսուրբ մատեանս, մեղքն իմ ծովացել եհան զզանգս անօրինացն ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրդելի: Որ եկին և առին զբերդն Որոտան և հայրենազուրկ արարին զպարոն Սմպատն, որդի Նանիկին»[126]: Հիշատակարանից կարելի է եզրակացնել, որ 1386 թ. առաջ Որոտան բերդում իշխում էր Սմբատը՝ Իվանեի որդին:

Ինչպես վերը ասվեց, Միրզա-Օմարը հավատափոխ արեց Իվանեի որդիներ Սմբատին և Բուրթելին ու նրանց ուղարկեց Սամարղանդ: Սակայն նրանց հաջողվեց ազատվել սամարղանդյան գերությունից և նորից տեր դառնալ իրենց հայրենի կալվածքներին: Տաթևցի գրիչ Սիմոնը 1400 թ. գրած հիշատակարանում, նկարագրելով հայոց համար ստեղծված ծանր կացությունը, հայտնում է, որ հիշատա-

124 ԺԵ, մաս Ա, էջ 656:

125 Գ. Գրիգորյան, Նշվ. աշխ., էջ 106:

126 ԺԴ, էջ 560:

կարանը գրել է Սմբատի և Բուրթելի իշխանության ժամանակ[127]:

Ուրեմն 1400 թ. արդեն Սմբատն ու Բուրթելը վերադարձել էին հայրենիք: 1401 թ. Տաթևի վանքում գրած հիշատակարանում գրիչ Սարգիսը հայտնում է, որ իր մատյանը գրել է Սյունյաց նահանգում, պարոն Սմբատի և նրա եղբոր՝ պարոն Բուրթելի, Իվանեի որդիների և մեծ Բուրթելի թոռների իշխանության ժամանակ[128]: Գրիգոր Տաթևացու քեռորդի Առաքել Սյունեցին իր «Ադամագիրք» չափածո երկում 1403 թ. Սմբատի և Բուրթելի մասին գրել է.

«Այլ և իշխանքն մեծ՝ Սըմբատ,
ԶԲիւրթէլ՝ եղբայրն իւր հարազատ,
Զաւակք նոցա ծնընդեամբ արատ,
Յազգէս Հայոց լինել անհատ»[129]:

1406 թ. Տաթևում գրած հիշատակարանում գրիչ Գրիգորը տեղի իշխան է հիշատակում Սմբատին և Բուրթելին. «...իշխանութեամբ տեղիս բարեպաշտ իշխանացն Սմբատի և Բուրթելի, ի թվականիս Հայոց ՊԾԵ (1406)...»[130]: Նույն Տաթևում գրիչ Մովսեսի 1406 թ. գրած հիշատակարանում Սմբատը հիշվում է իր որդիների՝ Բեշքենի և Իվանեի հետ[131]: 1407 թ. Տաթևում Թումա գրիչը օրինակել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանը», որի հիշատակարանում գրում է, որ հիշատակարանը գրել է. «...յիշխանութեան տանս մեր պարոն Սմբատայ և հարազատի իւրոյ պարոն Բիւրթէլի, որդիք Իւանէի, որդոյ մեծին Բուրթէլի, որ յՕրպէլեանցն...»: Այնուհետև Թուման սրտի ցավով գրում է. «Զի եղև կրկին

127 Տե՛ս նույն տեղում, էջ 632:

128 Տե՛ս ԺԵ, մաս Ա, էջ 4:

129 ԺԵ, մաս Ա, էջ 35:

130 Նույն տեղում, էջ 57:

131 Տե՛ս նույն տեղում, էջ 58:

պատուհաս. առաջին՝ շարժ ահագին... երկրորդն՝ մահ տարաժամ, որ յոյժ տրտմեցաք, զի իշխան մեր Բիւրթէլ կոչեցեալ՝ ի Քրիստոս փոխեալ, մանկամ(ր)քն ծաղկեալ»[132]: Երկրաշարժը նկարագրել է նաև Թովմա Մեծոփեցին Տաթևում և ապա Մեծոփա վանքում 1407 թ. գրած հիշատակարանում. «...եղև շարժ ի վերայ երկրի, զի հաստատութիւնք երկրի դղրդեցան, և կարծր բնութիւքն վիմաց պատառեցան, և բազում դիակունք մեռեալ գտան, և ամ մի ի լման, երկիրս շարժեալ: Եւ մինչ ի յայս տագնապի կայաք՝ եկն մահ տարաժամ ի վերայ երկրիս... և այսօր եղբայր Սմբատին պարոն Բուրթէլ՝ հանդերձ որդւովք իւրովք՝ հանգեաւ ի Քրիստոս, և որդի Սմբատին, և այլքս՝ անթուելիք են»[133]: 1407 թ. Վաղադնի վանքում խաչքար է կանգնեցվել ի հիշատակ Բուրթելի և իր զավակների. «Կանգնեցաւ սբ խաչս ի բարեխաւսութի պարոն Բուրթէլին եւ որդոց նորին Թվ. :ՊԾԶ:»[134]: 1408 թ. Տաթևում գրված հիշատակարանում Սմբատի որդին հիշվում է առանց Բուրթելի և զավակների[135]: 1407 թ. Աբու-Բաքրի դեմ Ղարա-Յուսուֆի և Ջելաիրյան Ահմադի մղած պատերազմին, իր հեծելազորով մասնակցել է նաև Սմբատ Օրբելյանը[136]: Լանկ-Թամուրի թոռ Աբու-Բաքրին հաղթելուց հետո, երբ Կարա-Յուսուֆը զբաղված էր ակ-կոյունլուների առաջնորդ Ղարա-Օսմանի դեմ պատերազմելով, օգտվելով հարմար առիթից, Ջելաիրյան Ահմադը 1410 թ. գրավեց Թավրիզը: Սմբատ Օրբելյանը օժանդակեց Ահմադին, որի դիմաց ստացավ Անգեղակոթ գյուղը[137]: Տեղեկանալով կատարվածի մասին, Կարա-Յուսուֆը հաշտություն է կնքում Ղարա-Օսմանի հետ և շտապում Թավրիզ՝ իր դավաճան դաշնակցին պատժելու: Նա գրավում է Թավ-

132 Նույն տեղում, էջ 74—75:

133 Նույն տեղում, էջ 80:

134 «Դիվան», պրակ II, էջ 103:

135 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 87:

136 Տե՛ս նույն տեղում, էջ 82, Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 72—73:

137 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 73:

րիզը և 1410 թ. մահապատժի ենթարկում Ջելաիրյան Ահմադին: Յուսուֆն անպատիժ չթողեց նաև Սմբատ Օրբելյանին. գրավեց նրա նստոց Որոտան բերդը. «...էառ զՈրոտան ի Սմբատայ իշխանէ»[138]: Սմբատ Օրբելյանը Յուսուֆի հալածանքներից ազատվելու նպատակով փախավ Վրաստան: Թե երբ մահացավ Սմբատ իշխանը դժվար է ասել: Ըստ Թ. Մեծոփեցու մահացել է Վրաստանում[139]: Ըստ Լ. Խաչիկյանի Սմբատ իշխանը մահացել է օտարության մեջ 1412—1414 թթ. միջոցում[140]: Գ. Գրիգորյանը, քննության առնելով Սմբատ իշխանի մահվան թվականի տարբերակները, հակված է ընդունելու 1412թ.[141]: Սմբատ իշխանի մասին վերջին տեղեկությունը վերաբերում է 1412 թ.: Հիշատակարանը գրված է Ախալցխայում Մելիքսեդեկ գրիչի ձեռքով. «Արդ, եղև գրաւ գրչութեան սորա յաշխարհս Վրաց, ի թագաւորութեան Կոստանդինի... իշխանութեան տեղոյս պարոն Սմբատի և որդւոյ նորին պարոն Բէշքենի, որ ի յաստմանէ չարին վտարեցան ի հայրենեաց իւրեանց...»[142]:

1415 թ. Տաթևում գրած հիշատակարանում Հովհաննես գրիչը տեղի իշխաններ է հիշում Սմբատի որդիներին՝ Բեշքենին և Շահին[143]: Մաթեոս Մոնոզոն գրիչը 1417 թ. Գանձասարի վանքում գրած հիշատակարանում անդրադառնալով այս անցքերին գրել է. «Քանզի այն, որ կայր մնացեալ շառաւիղն տանն Բիւրթելեանց՝ գնաց փախստական ի Տունն Վրաց, որոյ անուն Սըմբատ կոչիւր, և անդ՝ ի յօտարութեանն վախճանեցաւ: Եւ մնացեալ Բ. որդիք իւր եկին ի հայրենիս իւրեանց, և ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ անօրինաց»[144]: Բերած փաստերից ու վկայություն-

138 Նույն տեղում, Ալիշան, Սիսական, էջ 96:

139 Տե՛ս նույն տեղում:

140 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 181:

141 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 253—254:

142 ԺԵ, մասն Ա, էջ 133:

143 Նույն տեղում, էջ 653:

144 Նույն տեղում, էջ 194:

ներից կարելի է եզրակացնել, որ Սմբատը մահացել է 1412 թ.։

Սմբատն ունեցել է չորս որդի՝ Բեշքեն, Իվանե-Ստեփանոս և Շահ, իսկ նրա չորրորդ որդին, որի անունը սկզբնաղբյուրներում չի պահպանվել, ինչպես տեսանք զոհ գնաց 1407 թ. աղետին՝ իր հորեղբոր՝ Բուրթելի և նրա զավակների հետ։

Սմբատի ավագ որդու՝ Բեշքենի մասին առաջին տեղեկությունը հանդիպում է 1406 թ. Տաթևում գրված մի հիշատակարանում, ուր նա հիշատակված է իր հոր և եղբոր՝ Իվանեի հետ[145]։ Բեշքենը և նրա եղբայր Շահը հիշվում են 1415 թ. Տաթևում գրված հիշատակարանում. «...իշխանութեան տեղոյս մեծատոհմի Բէշքէնի, հարազատով Շահի...»[146]։ Այս վկայությունից կարելի է եզրակացնել, որ հոր մահից հետո Բեշքենին հաջողվել էր հաշտվել Ղարա-Յուսուֆի հետ, վերադառնալ հայրենիք և տեր դառնալ իր հայրենի կալվածքներին։

1419 թ. Գրիգոր Ախալցխացի գրիչը Հերմոնի վանքում գրած հիշատակարանում, ինչպես վերը տեսանք, Հերմոնի վանքի հայրապետ և տեղի պարոն է հիշում Տարսայիճին, իսկ նահանգի հայրապետ՝ Ստեփանոսին. «Եւ ի հայրապետութեան այսմ նահանգի տէր Ստեփանոսի, մականուն Իւանէի, որդի պարոն Սմբատայ և եղբայր պարոն Բէշքէնի»[147]։ Ստեփանոս-Իվանեի և նրա մոր մասին ուշագրավ տեղեկություն է պարունակում 1422 թ. Տաթևում գրված հիշատակարանը. «Գրեցաւ ի վանս Տաթէի, առ ոտս քաջ րաբունապետին մերոյ Մխիթարայ, և յառաջնորդութեան տանս

145 Տե՛ս նույն տեղում, էջ 58։ Իվանեն հետագայում ընդունեց հոգևոր կոչում, դարձավ Տաթևի եպիսկոպոսը, նրա մկրտության անունը եղել է Իվանե, Ստեփանոսը նրա հոգևոր անունն էր, որը ստացել կրոնավոր դառնալուց հետո։

146 Նույն տեղում, էջ 653։

147 Նույն տեղում, էջ 656։

Սիսականաց տէր Ստեփանոսի՝ որդւոյ պարոն Սմբատին, որ և յայսմ ամի գնացեալ ի Տունն Վրաց, առ մայրն իւր՝ փոխեցաւ ի Քրիստոս... և իշխանութեան պարոն Պէշքէնին՝ եղբօր նորին, և Յովհաննէս փակակալին... ի թուին Հայոց ՊՀԱ. (1422), ձեռամբ Թումայի»[148]։ Թումա գրիչը իրադարձությունների ժամանակակիցն է, հետևապես, նրա գրի առածը ճշմարտապատում է, ուրեմն Ստեփանոս-Իվանեն մահացել է 1422 թ.։ Գրիչ Թուման տեղի իշխան է հիշում միայն Բեշքենին, այսինքն չի հիշվում նրա եղբայր Շահը, որը մեր կարծիքով արդեն վաղուց գնացել էր Վրաստան՝ մոր մոտ։

Կարա-կոյունլու նոր գահակալ Իսկանդարն ավելի հանդուրժողական քաղաքականություն վարեց հայկական իշխանական տների նկատմամբ, քան վարում էր նրա հայրը։ Դա նպատակ ուներ իր կողմը գրավել հայ իշխաններին և նրանց ուժերը օգտագործել Թամուրյանների դեմ պայքարում։ Իսկանդարի իշխանության տարիներին Օրբելյանները Սյունիքում հանդես էին գալիս լիիրավ իշխանությամբ։ Որպես Սյունյաց իշխան Բեշքեն հիշատակվում է 1428 թ. Անգեղակոթ գյուղում գրիչ Մովսես Անգեղակոթցու գրած հիշատակարանում. «Գրեցաւ... ի թվկայութիւնս ՊՀԷ (1428), ի հոչակաւոր գեղս Անկեղակութ... ի ղանութիւն Սքանդար միրզին, և յիշխանութիւնն Բէշկ(են)ին...»[149]։ 1429 թ. Բեշքեն Օրբելյանը հանդես է գալիս որպես հաշտարար միջնորդ Սյունիվանքի մի ս. գրքի պատկանելության հետ կապված հարցում. «...ես՝ Բէշկէն, որդի մեծի իշխանին Սմպա(տա)յ, տեսի գաւառապանս, որ բազում ժամանակ ի մեր երկիրս էր ու գնել էր Տանձիկանց Աւագն։ Երեկ Թումայ երէց Սիւնայվանից, թէ այդ մեր եկեղեցուն է, Սիւնեվանից թալան է տարել, ու երդումն կերաւ։ Ես Բեշքէն, որդի պարոն Սմպատին տուի մեզ արեշատութեան ու մեր նախ(ն)եցն յիշատակ ի Սիւնեց վանիցն, որ Սիւնիվանք ասեն։ ...Ամիս արեգ,

148 Նույն տեղում, էջ 292։

149 Նույն տեղում, էջ 382։

Թուական Հայոց ՊՀԸ. (1429)»[150]: 1434—1435 թթ. Շահռուխը երրորդ անգամ արշավեց Իսկանդարի դեմ: Իսկանդարը չկարողացավ դիմակայել Շահռուխին և հեռացավ Թավրիզից: Շահռուխը Թուրքմենների իշխանությունը հանձնեց իրեն հնազանդություն հայտնած Ջահանշահին, Իսկանդարի եղբորը: Իսկանդարի նորից իշխանությունը նվաճելու փորձերը հաջողություն չունեցան, և 1437 թ. նա սպանվեց Երնջակ բերդում[151]: Շահռուխը հալածանք սկսեց Իսկանդարի վասալների, այդ թվում Բեշքենի և նրա որդու՝ Ռուստամ Օրբելյանի դեմ: Վերջինս տարիներ շարունակ Իսկանդարի արքունիքում վարում էր մեծ վեզիրի և արքունի խորհրդականի պաշտոնը[152]:

1437 թ. Սանահինում գրած հիշատակարանում Շմավոն վարդապետը նկարագրում է Շահռուխի երրորդ արշավանքը և հայոց համար ստեղծված ծանր վիճակը: Շահռուխի հալածանքներից ազատվելու նպատակով Բեշքենը և նրա որդին՝ Ռուստամ Օրբելյանը հայերի հոծ բազմությամբ գաղթում են Լոռի, որը 1431 թ. անցել էր վրաց թագավորի իշխանության ներքո[153]: Շմավոն վարդապետը եղել է գաղթողների թվում և դառնացած նկարագրում է հայոց գաղթը. «Եւ զաղէտն և զկոծն և զազգի ազգի վիշտ և զդառնութիւն ժամանակիս ընդ գրով ո՞ կարէ արկել... Եւ վասն աւերման հրեշտակարենակ աթոռոյն մեր Եւստաթէի սուրբ առաքելոյն, զի բնաջինջ աւեր ածին և, առհասարակ, զանէրն այրեցին և զստացուածքն զամենայն կողոպտեցին. և միաբանութք մերովք փախստական և ցանուցիր եղաք աշխարհս Վրաց, աստուածապարգև իշխանաւ //մեր և ամենայն աւրնութեանց

150 Նույն տեղում, էջ 392:

151 Տե՛ս Եժ, մասն Ա, էջ 486, 487:

152 Տե՛ս Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, էջ 88:

153 Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Բ, էջ 140:

արժանաւոր պարոնաց պարոն Բէշքենաւս, և ազատաւք, և ժողովրդաւք: Եւ վասն այս պատճառիս բնակեցաք ի սուրբ ուխտս ի Սանահինս...»[154]: Դեպի Լոռի հայոց գաղթը նկարագրել է նաև Թ. Մեծոփեցին: Նա գաղթողների թիվը հաշվում է ավելի քան 60000[155]: Բեշքեն վրաց Ալեքսանդր Ա թագավորից (1412—1443) ստանում է Լոռու բերդը: Իր հիշատակարանում Շմավոն վարդապետը Բեշքենին և Ռուստամին հիշում է որպես տեղի իշխաններ: «...իշխանութեան տեղոյս իշխանաց իշխանին պարոն Բէշքէնին՝ շառաւիղին Օրբելեանց, և որդոյ իւրոյ պարոն Ըռստամին, որ է ինձ հոգևոր որդի, զոր տէր աստուած պահեսցէ անսասան կենաւք զպարոն Բէշքենն ծաղկեալ զաւակաւն իւր մինչ ի խորին ծերութիւնն»[156]: Սակայն Ալեքսանդր թագավորը, որը Բեշքենի փեսան էր, վախենալով, որ Բեշքենի շուրջը կհամախմբվեն հայերը և վտանգ կստեղծեն վրաց թագավորության համար, 1438 թ. կաշառում է Ամադին անունով մի հայի, որն ուտելիքը թունավորելով դեղամահ է անում Բեշքենին[157]: Բեշքենի դավադրական սպանության ժամանակ նրա Շահ անունով եղբայրն ապրում էր Վրաստանում. «Եւ անարի զանեալ եւ ոչ ի խնդիր եղեալ հայրենի գաւառին»[158]: Թ. Մեծոփեցին իրավացիորեն մեղադրում է Շահին, որը վախեցավ վրեժխնդիր լինել Բեշքենի մահվան համար և պաշտպան կանգնել իր հայրենի կալվածքներին: Տեղի հայերը խիստ դատաստան են տեսնում դավաճանի հետ, ծայրակտոր են անում նրա ոտքերի մատները: Թ. Մեծոփեցին խոր վիշտ ու ափսոսանք է ապրում Բեշքենի մահվան կապակցությամբ. «...վասն զի ճիռ մի կայր ի մէջ ոգւոյս և սաստ

154 Եժ, մասն Ա, էջ 469—470:

155 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 117—119:

156 Եժ, մասն Ա, էջ 468:

157 Տե՛ս Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 117:

158 Նույն տեղում, էջ 119:

մի՝ ի խաւար, գիշերի և անգիր աղաւինի ամենայն քրիստոնէից ազգիս»[159]։

Բեշքենի Ռուստամ որդին Իսկանդարի արքունիքում վայելում էր մեծ վեզիրի և արքունի խորհրդականի պաշտոնը, ակտիվ մասնակցում էր Իսկանդարի վարած պատերազմներին։ Այս ծառայության դիմաց նա Իսկանդարից ստանում է «սոյուրղալներ» Սյունիքում, Արարատյան դաշտում, Արագածոտն, Նիգ, Կոտայք և այլ գավառներում[160]։ 1431 թ. նա Էջմիածնի վանքին է վաճառել յոթ գյուղ։ Այդ առթիվ գրված կալվածագրում Ռուստամը հիշվում է «վեհանձնյա ամիր և տեր, մեծափառ, ազնվաշուք, բարձրաստիճան, բարձրագույն ծառայության արժանացած մեծահարգ վեզիր, նորին կայսերական մեծության՝ սուլթանի մերձավորներից, ամենազոր արքայական պետության սիրելի, մեծագույն սուլթանների խորհրդական, արքաներից ամենից իմաստունի վստահելին, որի անձը վեր է ամեն տեսակ նկարագրությունից ու գովասանքներից, հավիտենականության տեր աստծու ողորմածությամբ իշխանության և կրոնի քաջահաղթ ամիր Ռուստամը, որդի ամիր Բեշքենի, որդի ամիր Սմբատի, ութ հարյուր երեսուն և հինգ թվականի տարի՝ երկրորդ ամսի կեսերին (1431 թ. դեկտեմբերի 20—21), քրիստոնյա հոգևորականների և վանականների պարծանք, խեղճերի և կարոտյալների ապաստան, քրիստոնյաների պարծանք և նրանց միջև ամենից կատարյալ և մաքուր Ֆախր-ուդդովլանի որդի, պարոն Ջալալ բեկի որդի Ուշքիլխայի բնակիչ Գրիգոր կաթողիկոսին վաճառեց, և վերջինս նրանից գնեց ներքոհիշյալ մի քանի մանր մուլքերը»[161]։ Էջմիածնի վանահայր Գրիգոր Մակվեցին յոթ գյուղերի դիմաց Ռուստամ Օրբելյա-

159 Նույն տեղում։

160 Տե՛ս Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, էջ 89։

161 Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ I, էջ 67։

նին վճարել է 540000 դինար[162]։ Հ. Փափազյանը գտնում է, որ այս վաճառքը կրում էր ձևական բնույթ։ Այն այնքան չէր բխում Ռուստամ Օրբելյանի կրոնական ջերմեռանդությունից, որքան նպատակ ուներ ապահովել իր կալվածքների անվտանգությունը[163]։

Գ. Գրիգորյանի կարծիքով Բեշքեն Օրբելյանի գաղթը դեպի Լոռի տեղի է ունեցել 1435 թ., երբ Շահռուխը գրավեց Թավրիզը։ Ռուստամ Օրբելյանը Իսկանդարի մոտ զինվորական ծառայության մեջ էր և հոր հետ չգնաց Լոռի, նա մինչև 1437 թ. Իսկանդարի կողմից կռվում էր Շահռուխի դեմ ու Սոֆյանի մոտ Իսկանդարի կրած պարտությունից հետո միայն ապաստանեց Լոռիում[164]։ Այս կարծիքը որքան ընդունելի է, այնքան էլ կարոտ է փաստացի հիմնավորման։ Շահռուխի և Ջահանշահի թշնամին Ռուստամն էր, և նրանց արշավանքը Հայաստան ուղղված էր Ռուստամի դեմ[165]։ Ռուստամ Օրբելյանը մինչև XV դ. կեսերը մնաց Լոռիում, վրաց թագավորի հովանու ներքո։ XV դ. կեսերին նա նորից Սյունիքում էր։ 1450 թ. Ռուստամ Օրբելյանը Տաթևի վանահայր Շմավոն Անգեղակոթցուն է վաճառել Սվարանց, Տաշու, Եզանց և Տանձատափ գյուղերի իր կալվածքները[166]։ Ռուստամ Օրբելյանի վերաբերյալ թերևս սա վերջին վկայությունն է, թե հետո ինչպես է տնօրինվել Իսկանդարի արքունիքի մեծ վեզիրի ճակատագիրը, դեռևս մնում է անհայտ։ Միայն հայտնի է, որ նա 1450 թ. հիշատակվել է որպես սոսկ ամիրզադա, այսինքն ամիրի որդի։

Ճիշտ է, XV դ. երկրորդ կեսից սկսած Օրբելյանների մասին հանդիպում են սակավ տեղեկություններ, որոնք հնա-

162 Տե՛ս Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, էջ 92։

163 Տե՛ս նույն տեղում, էջ 93։

164 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 263։

165 Տե՛ս նույն տեղում։

166 Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ I, էջ 78—80։

բավորություն չեն տալիս շարադրել Օրբելյան իշխանների այս ժամանակահատվածի հանգամանալից պատմությունը, սակայն նրանք շարունակում էին գոյատևել Սյունիքում և Վայոց ձորում։ Այս ժամանակաշրջանում թուլացած Օրբելյաններից ոմանք հանդես էին գալիս պարոն-տեր հորջորջումով և իրենց ձեռքն էին կենտրոնացրել աշխարհիկ ու հոգևոր իշխանությունը։ Վերը խոսք եղավ 1419 թ. Հերմոնի վանքում գրված հիշատակարանի մասին։ Այդ հիշատակարանը գրվել է. «ի հայրապետութեան սուրբ ուխտիս և գաւառիս պարոն Տարսայիճին, որդւոյ Գուզունին, որդւոյ Ինանիկին, որդւոյ Բուրթէլին»[167]։

Կարմրաշեն և Հերհեր գյուղերի արանքում կա ավերակ գյուղատեղ, ուր մնացել են եկեղեցու հիմնապատերը և խաչքարեր։ Այդ խաչքարերից մեկի վրա կա հետևյալ արձանագրությունը. «Թվ. ։ՋԼԸ։ (1489) (կամաւն այ ես խաչատուր էրէց էրկիլ կանկնեցի զխաչս հոգոյ փրկութե. պարոն Սմպատին, իւր թոռին...»[168]։ Արձանագրությունում հիշված Սմբատը XV դ. առաջին քառորդին Եղեգիսում իշխող պարոն-տեր Տարսայիճի որդին է։ Սմբատի Տարսայիճի որդի լինելու փաստը որոշակի հաստատում է 1495 թ. Եղեգիսում գրված մի հիշատակարանի բովանդակությունը. «Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՋԽԴ. (1495). ի կաթողիկոսութեանն տեառն Սարգսի՝ յաթոռ սուրբ Էջմիածնի. եւ վերադիտող այսմ նահանգի պարոն-տէր Եղիշա արքեպիսկոպոսի՝ որդւոյ իշխանաց իշխանի պարոն Սմպա(տայ), որդւոյ մեծին Տարսաիճի...»[169]։ Եղիշե արքեպիսկոպոսի մասին հիշատակություն ունենք 1475 թ. Վայոց ձորի Բոլորաբերդ անապատում Ավագտեր գրիչի հիշատակարանից. «...և միւս եպիսկոպոսի տէր Եղիշայի՝ մաքուր և սուրբ հայրա-

167 ԺԵ, մասն Ա, էջ 656։

168 «Դիվան», պրակ III, էջ 47։

169 ԺԵ, մասն Գ, էջ 213։

պետի՝ թոռին մեծին Բուրթելեանց...»[170]։ Վերին Նորավանքում 1490 թ. գրված հիշատակարանում գրիչ Աբրահամը Վայոց ձոր նահանգի արքեպիսկոպոս է հիշում Եղիշեին. «...յարհեպիսկոպոսութեան մերոյս նահանգի տէր Եղիշէի՝ յազգէ Բուլթէլանց...»[171]։ XV դ. նա վերջին անգամ հիշատակվում է Աստվածատուր գրիչի կողմից 1496 թ. Եղեգյաց անապատում գրված հիշատակարանում[172]։ Այսպիսով, Բուրթել մեծից սկսած մինչև Եղիշե՝ արքեպիսկոպոսը, Բուրթելյան այս ճյուղը ունի հետևյալ հաջորդականությունը՝ Բուրթել-Իվանե-Սմբատ-Գորգուն-Տարսայիճ-Սմբատ-Եղիշե արքեպիսկոպոս։

1461 թ. Սրկղունքում Դավիթ գրիչի գրած հիշատակարանում տեղի իշխաններ են հիշվում պարոն Ջուման և պարոն Ինանիկը[173]։ Լ. Խաչիկյանը ենթադրում է, որ այս Ինանիկը ծագումով Սյունյաց Օրբելյաններից էր[174]։ 1471 թ. հիշատակարանում Սմբատը տեղեկություններ է հաղորդում իր ծնողների, պապի և մեծ պապի մասին. «Ես՝ պարոն Սըմպատս տուի գիենաբեր Աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ զհայրն իմ Ստեփանոս, մայրն իմ Մարգարիտխաթուն, զպապն իմ Սմպատ, զմեծ պապն Իվանիկ... Ի թվ. ՋԻ. (1471)»[175]։ Սմբատի հայր Ստեփանոսը կամ Ստեփանոս Իվանեն Սյունյաց եպիսկոպոսն էր, Սմբատի որդին։ Ստեփանոս-Իվանեի մասին վերը տեսանք, որ նա գնաց Վրաստան իր մոր մոտ, ուր և մահացավ 1422 թ.։ Այսպիսով, Բուրթելյան այս ճյուղի համար էլ կունենանք հետևյալ հաջորդականությունը՝ Բուրթել-Իվանե-Սմբատ-Ստեփանոս-Իվանե-Սմբատ։ Առայժմ այսպիսին են XV դ. վերջի տեղեկությունները Օրբելյանների մասին։ Օրբելյանների տոհ-

170 Նույն տեղում, մասն Բ, էջ 375։

171 Նույն տեղում, մասն Գ, էջ 147։

172 Տե՛ս նույն տեղում, էջ 229։

173 Նույն տեղում, մասն Բ, էջ 157։

174 Տե՛ս ԺԵ, մասն Բ, LXVIII։

175 Նույն տեղում, մասն Բ, էջ 317։

մը իր խոր հետքը թողեց հայրենի պատմության մեջ, տալով քաղաքական ու մշակութային պայծառ անհատականություններ: Սակայն նվաճողների կողմից ազգային ու կրոնական ծանր հալածանքները թուլացրեցին նրան, և հետագա դարերում թուլացած շառավիղներից ոմանք գնացին ազգային ու կրոնական դիմահեղման ճանապարհով և հաճախ կալվածքների համար, միջոցների մեջ խտրություն չդնելով, պայքարեցին Տաթևի վանքի դեմ[176]:

176 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 187:

ՊՌՈՇՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ

XIV—XV դդ. Հայաստանի քաղաքական կյանքում կարևոր դեր էր խաղում Վայոց ձորի մի մասում և այլ գավառներում իշխանություն հաստատած Պռոշյանների իշխանական տունը: Հայոց պատմության մեջ Պռոշյանների կատարած մեծագործությունների, շինարարական ու մշակութային խնդիրների պատմությունը հանգամանալից քննության է առել հայագիտության անխոնջ մշակ, մեծ գիտնական Գարեգին Հովսեփյանն իր «Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ»[1] աշխատությունում: Թեև հարկ չկար մեծատաղանդ հայագետի ուսումնասիրությունից հետո անդրադառնալ Պռոշյանների պատմությանը, սակայն մեր աշխատանքն ամբողջական տեսնելու մղումով անհրաժեշտ համարեցինք շարադրել XIV—XV դդ. Պռոշյանների քաղաքական պատմությունը՝ կատարել որոշ ճշգրտումներ:

Այս տոհմի երևելի ներկայացուցիչը եղավ Վասակի որդի Պռոշ իշխանը: Նրա կատարած գործերն այնքան հայրենանվեր էին, որ հետագայում՝ ի պատիվ Պռոշի իշխանական այս տունը կոչվեց Պռոշյանների տուն կամ իշխանություն: Պռոշը իշխել է ավելի քան քառասուն տարի, նա մահացել է 1284 թ.: Սակայն Մարտիրոս գյուղի Ս. Աստվածածին վիմափոր եկեղեցու 1286 թ. արձանագրության համաձայն Պռոշը դեռևս կենդանի էր. «Կամաւն այ, ի հայրապետութե. տն.

1 Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Անթիլիաս-Լիբանան, 1969 (այսուհետև Խաղբակյանք):

Յակոբա եւ ի քահանայապետութե. զաւաուիս տր. Սարգսի եւ ի տէրութե. իշխանաց իշխանին Պռոշո և որդոց նորին Պապաքին եւ Հասանա եւ որդո նորին Էաչին եւ մաւր նորին Թաճերոյն, ես՝ Մաթէոս վարդապետս կառուցի եւ կատարեցի զեկեղեցիս... ի թվ ։ՉԼԵ։ (1286)»[2]։ Ինչպես տեսնում ենք, այստեղ Պռոշ իշխանը հիշվում է որպես ապրող։

Պռոշը ունեցել է չորս որդի՝ Պապաք, Ամիր-Հասան, Վասակ, Մկդեմ և մեկ դուստր՝ Գոհար խաթուն։ Մկդեմն ու Գոհարը մահացել են 1268 թ. առաջ, իսկ Վասակը՝ 1268—1273 թթ. միջոցին[3]։ Պռոշին հաջորդել է Պապաքը։ Պռոշի որդիները աղբյուրներում հիշվում են դեռևս նրա կենդանության ժամանակ։ Պապաքը հիշվում է Գեղարդի պահարանի 1268 թ. արձանագրությունում[4]։ Թանահատի վանքի ս. Ստեփանոս եկեղեցու շինարարական արձանագրությունում արի և քաջատոհմ իշխան Պռոշի հետ հիշվում է Պապաքը։ Արձանագրությունը թվական չունի. Ս. Բարխուդարյանի կարծիքով այն արձանագրվել է 1273 թ.[5]։ Գյոմուր գյուղի մի խաչքարի անթվակիր արձանագրության մեջ հիշվում է Պապաքի անունը[6]։ Պապաքը տեղի իշխան է հիշվում 1284 թ. Գլաձորում օրինակած ավետարանի հիշատակարանում. «...յիշխանութեան բարեպաշտ Պապաքին, և ի տէրութեան այսմ ||մենաստանիս պարոն Դավթի...»[7]։ Թանահատի վանքում 1286 թ. գրիչ Հովհաննեսը հիշատակարանը գրել է. «...աստուածապաշտ իշխանաց իշխանին Հասան(այ) որդոյ Պռոշայ, և հարազատ և (պարծան)աց եղբաւր իւրոյ Պապաքին, և գեղ(եցիկ) և (բարե)պաշտ զաւակին Էաչոյ»[8]։ Նորքի վանքում

---

2 «Դիվան», պրակ III, էջ 180։

3 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 72։

4 Նույն տեղում, էջ 74։

5 «Դիվան», պրակ III, էջ 74։

6 Նույն տեղում, էջ 193։

7 ԺԳ, էջ 558։

8 Նույն տեղում, էջ 597։

1287 թ. Պապաքը մի խաչքար է կանգնեցրել իր ամուսնու կենդանության համար[9]։ Պապաքը տեղի իշխան է հիշվում Գյոմուր գյուղից դեպի արևմուտք «Խաչաձոր» կոչված վայրում՝ աղբյուրի մոտ կանգնեցված խաչքարի արձանագրությունում. «Ի թվականիս հայոց ։ՉԼԷ։ (1288) իշխանութեան Պապաքին և Ամիր Հասանայ, ես Սարգիս և որդին իմ Պետրոս շինեցաք զաղբիւրս և կանգնեցաք զխաչս»[10]։ Պապաքն իր տիկնոջ Ըռուզուքանի հետ 1288 թ. կառուցել են Գեղարդի վիմափոր ժամատունը[11]։ Իսկ Կեչառիսի վանքին նվիրատվություն կատարելու կապակցությամբ Պապաքն անթվակիր մի արձանագրություն է թողել Լուսավորչի ժամատան հարավային պատին[12]։ Վայոց ձորի Աղավ անապատում Սաաթեոս վարդապետի 1292 թ. գրած հիշատակարանում Պապաքը հիշված է տեղի իշխան. «...յիշխանութեան որդոցն մեծափառ Պռոշոյ՝ Պապաքին և Ամիր Հասանայ»[13]։ Խոտակերաց Սուրբ Նշան վանքում Շմավոն գրիչի 1292 թ. գրած հիշատակարանում Պապաքը հիշվում է մեծ սպարապետ. «...յիշխանութեան մերոյ նահանգիս մեծ սպարապետացն Պապաքին և Էաչոյ, որդւոյ և թոռին մեծին Պռոշայ, ժառանգք իշխանութեան ամենօրհնեալ ցեղին Խաղբակեանց...»[14]։ Սյունիքում 1298 թ. գրված մի հիշատակարանում Պապաքը բնութագրվում է որպես քաջ և զորեղ իշխան. «...և յիշխանութեան տանս Սիսակայ մեծ պարոն Էլիկումին, որդւոյ Տարսայիճի, և քաջ զօրեղ իշխանացն որդւոցն Պռոշայ՝ Պապաքին...»[15]։ Գ. Հովսեփյանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ստ. Օրբելյանը իր պատմությունն ավարտել է 1299 թ. և կողմնակալ է հիշում Էաչուն, կարծում է, որ

---

9 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 244։

10 «Դիվան», պրակ III, էջ 195։

11 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 75։

12 Տե՛ս նույն տեղում, էջ 76։

13 ԺԳ, էջ 676։

14 Նույն տեղում, էջ 682։

15 Նույն տեղում, էջ 831։

1298/9 թվին Պապաքը վախճանվել էր[16]: Ինչպես պարզվեց 1298 թ. հիշատակարանից, Պապաքը դեռ ապրում էր, ուրեմն նա մահացած պետք է լինի 1299 թ., քանի որ Խատակերաց Ս. Նշանի պահարանի 1300 թ. Էչու թողած արձանագրության համաձայն Պապաքն արդեն մահացած էր[17]: Սրանք վերջին հիշատակություններն են Պապաքի մասին, զարմանալի է, որ չի պահպանվել այս նշանավոր իշխանի ու զորապետի մահարձանը:

Ամիր-Հասանի մասին առաջին հիշատակությունը Գեղարդի պահարանի 1268 թ. արձանագրությունն է[18]: Ինչպես վերը տեսանք Ամիր-Հասանը հիշվում է Թանատի վանքի Ս.Ստեփանոս եկեղեցու շինարարական արձանագրությունում: Ս. Բարխուդարյանն այս արձանագրությունը թվագրված է համարում 1273 թ.[19]: Մարտիրոս գյուղի մի խաչքարի արձանագրության մեջ Ամիր-Հասանը հիշվում է տեղի իշխան. «...իշխանութբ. Ամիր Հասանս, ես Մաթէոս վարդապետ կանգնեցի զնշանս ինձ եւ Պետրոսի եւ ծնողաց իմոց... թվ. :ՉԻԴ:» (1275)[20]: 1279 թ. երկու արձանագրություններում Ամիր-Հասանը հիշվում է հոր՝ Պռոշ իշխանի հետ[21]: Իշխանաց իշխան մեծ Պռոշի և նրա որդի պարոն Հասանի հրամանով Դեղկա որդի Մխիթարը 1283 թ. կառուցել է Մարտիրոս գյուղը և այդ կապակցությամբ գյուղամիջի աղբյուրի մոտ կանգնեցրած խաչքարի վրա արձանագրել գյուղի կառուցման վկայագիրը[22]: Մարտիրոս գյուղի գետակի ձախ ափի բլրակի վրա գտնվող գերեզմանատանը եղել են խաչքարեր՝ Ամիր-Հասանի իշխանությունը վկայող արձանագրություններով: Այսպես, 1284 թ. երեք եղբայրներ

16 Տե՛ս Դ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 76:

17 Տե՛ս «Դիվան», պրակ III էջ 208:

18 Տե՛ս Դ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 74, 76:

19 Տե՛ս «Դիվան», պրակ III, էջ 74:

20 Նույն տեղում, էջ 179:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 181, 184:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 183:

իրենց հոր հիշատակին խաչքար են կանգնեցրել. «Բարեպաշտ իշխանին Ամիր Հասանայ»[23]: Եղբայրներ Ավետիսը և Վահրամն իրենց հոր հիշատակին 1286 թ. «...իշխանութբ Ամիր Հասանայ» խաչքար են կանգնեցրել[24]:

Ամիր-Հասանի կին՝ Թաճերը 1286 թ. պատվիրել և ստացել է մի նարեկ, որի հիշատակարանում գրիչ Հովհաննեսը ջերմ ու պատվական խոսքերով է ներկայացնում Ամիր-Հասանին, Պապաքին և Էչուին. «...երկար կենդանութիւ և բարեխաւս [ա]ռ Տէր՝ իւրն և պատուական գլխոյն իւրոյ աստուածազաւր իշխանաց իշխանին Հասան [այլ] որդոյն Պռոշայ, և հարազատ և [պարծան]աց եղբաւր իւրոյ Պապաքին, և գեղ[եցիկ] և [բարե]պաշտ զաւակին Էչուն»[25]: Գյամուր գյուղից դեպի արևմուտք Խաչաձոր կոչված վայրում գտնվող աղբյուրի մոտ 1288 թ. կանգնեցված խաչքարի արձանագրությունում վկայված է Ամիր-Հասանի իշխանությունը[26]: Ամիր-Հասանի իշխանությունը վկայված է նաև Վայոց ձորի Գյարուս գյուղատեղի եկեղեցու մոտ ընկած մի խաչքարի արձանագրությունում. «Ի թվ. :ՉԼԹ: (1290) իշխանութբ. Ամիր Հասանա: [Ես Դեղ ու այլ եղբարքս կանգնեցաք զխաչս եղբաւր մերո»[27]: Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի Իշխանավանքի մոտի գերեզմանատան 1290 թ. կանգնեցված մի գեղաքանդակ խաչքարի արձանագրության մեջ Ամիր-Հասանը կոչված է բարեպաշտ արքա. «...իշխանթեան [բարեպաշ]տ արքային [Ամիր Հա]սանայ»[28]:

Վայոց ձորի Աղավ անապատում 1292 թ. գրած հիշատակարանում Մաթեոս վարդապետը հետաքրքիր մանրամասներ է հաղորդում Ամիր-Հասանի գործունեության ու մահվան մասին: Մաթեոս վարդապետը Ամիր-Հասանի

23 Նույն տեղում, էջ 181:

24 Տե՛ս նույն տեղում, էջ 182:

25 ԺԳ, էջ 597:

26 Տե՛ս «Դիվան», պրակ III, էջ 195:

27 Նույն տեղում, էջ 197:

28 «Դիվան», պրակ IV, էջ 150:

«Հրամանով և ձեռնտվութեամբ» կառուցել է «զտեղիքս միայբանայքնակ վանս, և ...զեկեղեցիքս և զժամատունս»[29]։ Միաժամանակ նա դառը կսկիծով ու ափսոսանքով գրում է, որ 1292 թվականին մահանում է իշխանաց իշխան Ամիր-Հասանը։ Նրա մահվան կապակցությամբ, շարունակում է Մաթևոս վարդապետը «Հայք և Վիրք, Աւփղազք» և Հոռոմք» ողբի և տրտմության մեջ են ընկել, որովհետև չնայած Ամիր-Հասանն իշխանաց իշխան էր կոչվում, սակայն թագավորներից չէր տարբերվում, բոլորին հասել էր նրա գործերի բարի համբավը, և նրա մահը հեռավորները ընդունեցին ու սգացին, որպես հարազատի մահ[30]։ Այնուհետև Մաթևոս վարդապետը գրում է, որ Ամիր-Հասանն իրեն տեղապահ թողեց իր որդուն՝ Էաչիին, որը հորը գերազանցել էր իր գործերով[31]։

Ամիր-Հասանին մեծարանքի, սիրո ու ափսոսանքի ջերմ խոսքերով է բնութագրել Շմավոն գրիչը՝ Խոտակերից Սուրբ Նշան վանքում 1292 թ. գրած հիշատակարանում։ Գրիչը մռայլ ու դաժան է ներկայացնում իր ապրած ժամանակաշրջանը, խիստ ծանր էր նվաճողների լուծը հայոց համար, քանզի չունեինք քրիստոնյա թագավոր և առաջնորդ, բայց աստված պահեց մեր ազգի մի քանի իշխաններին, որոնք պատերազմներում աչքի ընկան արիությամբ ու քաջությամբ, որոնցից մեկն էր. «...մեծ սպարապետն տանն Աւագին, որդւոյ Իւանէ մեծ աթաբակին, որ կոչէր անուն նորա Ամիր Հասան, որդի մեծին Պռոշա թագաշուք իշխանին»[32]։ Գրիչ Շմավոնն Ամիր-Հասանի մահը համարում է աստծու կողմից եկած պատուհաս. «...եհաս ի վերա մեր պատուհաս յԱստուծոյ, և բարեպաշտն մեր Ամիր Հասան՝ կոչեցաւ ի կոչողէն ընդ հասարակաց բնութեանս մերոյ ճանապարհ, եւ եթող կոծ մեծ աշխարհիս մերոյ և զօրաց իւրոց»[33]։

29 ԺԳ, էջ 676։

30 Տե՛ս նույն տեղում։

31 Տե՛ս նույն տեղում։

32 Նույն տեղում, էջ 682։

33 Նույն տեղում։

Ամիր-Հասանը, շարունակում է իր փառաբանումները գրիչ Շմավոնը, բազմաթիվ պատերազմներում ցուցաբերեց արիություն, հաղթեց Քրիստոսի խաչի թշնամիներին և իր անձի ու ազգի համար քաջ անուն վաստակեց։ Պատերազմներում ցուցաբերած քաջագործությունների համար Հուլավու և Աբաղա խաներից մեծ պատիվ ու պարգևների արժանացավ. «Այնպէս սիրեցեալ էր ի նոցանէ վասն արիական քաջութեան և խոհեմութեան իւրոյ, մինչև զինակիր և յառաջաղէմ լեալ յամենայն գործս արքունի»[34]։ Խելացի ու անձնվեր ծառայության համար բազմաթիվ անգամ նրան զարդարեցին ոսկեհուռ դիպակով և նրա մեջքը կապեցին մարգարիտներով պատված ոսկե շղթա։ Ամիր-Հասանը ձեռք բերեց մեծ հռչակ, նրա համբավը տարածվեց ամենուր, հասավ մինչև հռոմեացիների ու հույների աշխարհը[35]։

Իր նախորդների արժանավոր ժառանգորդը դարձավ Ամիր-Հասանի որդի Էաչի իշխանը, որը հաջորդեց Պապաքին։ Գ. Հովսեփյանի կարծիքով Պապաքը որդի չի ունեցել, այդ պատճառով էլ Պապաքին և Ամիր-Հասանին հաջորդել է Էաչին[36]։ Նա Էլիկում Օրբելյանի դստեր ամուսինն էր։ Ստ. Օրբելյանը այս կապակցությամբ գրում է, որ Էլիկումը իր դստերը «կնության տվեց գեղեցկադաղիկ իշխան ու մեծ կուսակալ Էաչուն, որը Հասանի որդին էր, իսկ սա որդին էր մեծ իշխան Պռոշի, վերջինս էլ որդին էր քաջ Վասակի»[37]։ Պռոշյան իշխանների ու ազատների կողմից Պապաքն ու Էաչին ստորագրեցին Ստ. Օրբելյանի կողմից գրված և Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին հասցեագրված՝ դավանանքին ու եկեղեցական կարգերին վերաբերող թուղթը[38]։ Էաչիի իշխանավարման առաջին տարիները համընկան Ղազան խանի (1295—1304) կառավարման ժամանակաշրջանի հետ, երբ

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում։

36 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 76։

37 Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 343։

38 Տե՛ս նույն տեղում, էջ 363։

Հայաստանում համեմատաբար խաղաղություն էր։ Ղազան խանի կառավարման ժամանակաշրջանը, 1304 թ. մի հիշատակարանում բնութագրվում է այսպես. «Ի սոյն ամի ինքնակալն Ղազանն վճարեցաւ ի կենացս և սուգ մեծ եհաս ամենայն տանս արևելից, ...վասն զի ի սորա ժամանակս խաղաղացաւ երկիր իբր զդրախտ աստուծոյ»[39]։ Հիշատակարանի գրիչը անշուշտ չափազանցնում է Ղազանի ժամանակաշրջանի կացությունը։ Սկզբնաղբյուրներում Էաչին առաջին անգամ հիշվում է Թանատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու շինության 1273 թ. արձանագրությունում. «մանկան Էաչոյ» ձեռվ[40]։ Մեծահամբավ Գ. Հովսեփյանը Էաչու ծնունդը դնում է 1268—1273 թթ. մեջ[41]։ Էաչին, Պապաքի և Ամիր-Հասանի հետ, հիշվում է Մարտիրոս գյուղի Ս. Աստվածածին վիմափոր եկեղեցու հարավային և արևմտյան պատերի 1286 թ. արձանագրության մեջ[42]։ 1286 թ. Էաչին հիշվում է իր մոր՝ Թաճերի ստացած Նարեկի հիշատակարանում. «...և զեզ(եցիկ) և (բարե)պաշտ զաւակին Էաչոյ» ձեռվ[43]։ Արկազու ս. խաչ կոչված ուխտատեղի կիսեղծ արձանագրության մեջ նորից Էաչին հիշվում է «մանկան Էաչոյ» ձեռվ[44]։

Ինչպես վերը տեսանք 1299 թ. Պապաքը մահացած էր, հետևապես Էաչին իշխանությունը ստանձնել է 1299 թ.։ Պռոշյանների իշխանապետ դառնալու հանգամանքը Էաչին նշանավորել է Խոտակերաց Ս. Նշանի արծաթյա պահարանը պատրաստել տալով, որի երեսի արձանագրության մեջ հայտնում է, որ ինքը տիրել է իր հայրենի երկիր Շահապոնքին և այլ գավառների. «Կամաւ կարողին ա(ստուծո)յ. ես Էաչի որդի Հասանիս, որդս Պռոշա, յորդս մեծին Վասակա, յազգէ Հաղ-

39 ԺԳ, էջ 24։

40 «Դիվան», պրակ III, էջ 74։

41 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 97։

42 Տե՛ս «Դիվան», պրակ III, էջ 180։

43 ԺԳ, էջ 597։

44 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 134։

բականց, տիրեցի հայրենի երկրիս իմո Շահապոնեաց եւ այլ յոլով գաւառաց. զարարիչն եւ օգնական ունելով զՔՍ եւ զսբ նշանս Խոտակերաց, որով եւ նախնիքն իմ զօրացան. ետու կազմել պահարան սմին անջինջ յիշատակ։ Որք հանդիպիք սմա զիս եւ զծնողսն իմ զԱմիր Հասան եւ զԹաճէրն եւ զհարեղբայրն իմ զՊապաք յաղաւթս յիշեսջէք, այլ եւ զամենայն նախնիսն մեր եւ զազգատոհմս»[45]։ Արձանագրությունը թվական չունի, պահարանը համարվում է պատրաստված մոտ 1300 թ.[46], հետևապես արձանագրությունը ևս 1300 թ. է։ Էաչին երիտասարդ տարիքից ձեռք բերեց հմուտ զորականի համբավ։ Մատթեոս վարդապետը 1292 թ. գրած հիշատակարանում նկարագրելով Ամիր-Հասանի բարեմասնությունները և պայծառ նրա մահը, գրել է. «Բայց եթող տեղապահ զորդի իւր, որ կոչի Էաչի, որ ամենայն յաջողութեամբ բարգաւաճեալ էր, քան զհայրն...»[47]։ Իսկ Շմավոն գրիչը նույն թվականին Խոտակերաց Սուրբ Նշան վանքում գրած հիշատակարանում Էաչին համարում է մեծ սպարապետ. «...եւ յիշխանութեան մերոյ նահանգիս մեծ սպարապետացն Պապաքին և Էաչոյ, որդւոյ և թոռին մեծին Պռոշայ»[48]։ Երկու գրիչների վկայությունները աներկբայորեն վկայում են, որ Էաչին դեռ պատանի ակտիվ մասնակցություն է ունեցել իր հոր և հորեղբոր կողմից գլխավորած արշավանքներին, ձեռք բերել փորձ ու հմտություն և այդ ասպարեզում գերազանցել նրանց։ Ստ. Օրբելյանի վկայությամբ Լիպարիտ Օրբելյանը և Էաչին մասնակցել են Նավռուզի դեմ Ղազան խանի զորապետ Կութլուշահի արշավանքին, հասել են մինչև Հեր քաղաքը, ուր պարտության են մատնել, ձերբակալել Նավռուզին և խիստ անարգել նրան[49]։ Գ. Հովսեփ-

45 «Դիվան», պրակ III, էջ 208։

46 Նույն տեղում։

47 ԺԳ, էջ 676։

48 Նույն տեղում, էջ 682։

49 Տե՛ս Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 371։

յանն այս արշավանքը դնում է 1295/6 թվականին[50], ուրեմն այդ ժամանակ Էաչին եղել է մոտավորապես 26—27 տարեկան երիտասարդ: Թանատի վանքի ս. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային պատին արձանագրություն է թողել Խութլուբեկը՝ եկեղեցուն հողամաս նվիրելու կապակցությամբ. «Կամաւն այ, ես Խութլուբէկս իմ պարոնացն ողորմութքն. Էաչո, Մամախաթունին զԱղալտեղին հողն եր. Ստեփանոսի տվի...»[51]: Արձանագրությունը թվական չունի, հավանաբար նվիրատվությունը կատարել է Էաչիի իշխանության առաջին տարիներին: 1309 թ. Սիմիանոս անունով մեկը իր հայրենի այգին Ս. Ստեփանոսին նվիրելու կապակցությամբ թողել է արձանագրություն: Նա հայտնում է, որ նվիրատվությունը կատարել է. «...պարոնացն ողորմութք Էաչո, Մամախաթունին եր Ստեփանոսի եւ եր. Նշանիս՝ Մխիթարա հոգոյն... թվիս :ՉԾԸ:» (1309)[52]: Սպիտակավոր Աստվածածնա վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ 1322 թ. արձանագրություն է թողել Էաչին. «Կամաւն այ. ես Էաչի, որդի պարոն Ամիր Հասանա տվի նորակնունք եր. Ածածնիս /ծ/ եւ եր. Կարապետ-/իս/, ի հայրութե. Գրիգոր Հզնաւորի, զՏանձի հող իւր :Դ: հատովն, վերի ու ներքի ճանապարհովն, :Բ: ձորմիջով ու քարարիտ ձորն՝ ցանձհանի սոովն ու ներքի ջր/ախառովն, բերդի ձորովն, տվաք հանդ ու սահման վախմ՝ մեզ ու մեր պարոնաց հոգու/բաժին, ...թվ :ՉՀԱ:» (1322)[53]: Հայտնի է, որ Էաչին մահացել է 1317 թ., սակայն արձանագրությունը 1322 թ. է: Գ. Հովսեփյանն այս հակասությունը բացատրում է նրանով, որ վանքի շինությունը սկսել է Էաչին, սակայն ավարտել է նրա որդին՝ Ամիր-Հասան Բ-ն[54]:

50 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 97:
51 «Դիվան», պրակ III, էջ 79:
52 Նույն տեղում, էջ 76:
53 Նույն տեղում, էջ 96:
54 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 99:

Էաչին հիշվում է 1317 թ. երկու աղբյուրներում՝ առաջինում որպես ապրող, երկրորդում՝ մահացած: 1317 թ. Էաչին նվիրատվություն է կատարել Ցաղաց Քարի վանքին, որի դիմաց միաբանները սահմանել են տարին 4 պատարագ իր, ծնողների և կնոջ՝ Մամախաթունի համար. «Կամաւն այ ես Էաչի, որդի Հասանա, թոռն Պռո/շայ միաբանեցա սբ. ուխտիս Ցաղած Քարո, /եւ ետու յիմ հայրենեաց ի Սրկղունս զմեր ձեռատունկ այգին նորակերտ իւր ջրովն. /մեր եղբայրն տր. Աւրպէլի Ովանէն և միաբանքն/ ի տարին սահմանեցին: :Դ: պատարագ մեզ եւ /ծնողաց մերոց եւ ամուսնոյն իմոյ /Մամախաթունին.../ ի թվ. :ՉԿԶ:» (1317[55]: Էաչին Բուղդայի հետ զոհվել է 1317 թ. դեկտեմբերի 18-ին Աբու-Սայիդ իշխանի զորքի կազմում պատերազմելիս. «Մեծ իշխանն Հայոց՝ թոռն Պռաւշա, որդին Հասանա՝ Իաչի, հանգեաւ ի Քրիստոս թվկ. ՉԿԶ. (1317), քաղոցի Ժ. (10) և դեկտեմբերի ԺԸ. (18), և մեծ սուգ եղև ամենայն քրիստոնէից, աւաղ»[56], գրել է Գլաձորում Կարապետ գրիչը 1317 թ.:

Ինչպես աղբյուրներից պարզվում է, Էաչին և Մամախաթունը ունեին չորս որդի՝ Վասակ, Ամիր-Հասան, Ամիր-Ասատ և Ջումա[57]: Չորս եղբայրներից Պռոշյանների նոր իշխանապետը դարձավ Ամիր-Հասանը, որն անվանակից էր իր նշանավոր պապին, և նրանից տարբերելու համար կոչենք Ամիր-Հասան Բ: Էաչիի որդիները թերևս փոխադարձ համաձայնության են եկել իշխանապետի հարցում: Աղբյուրներում Վասակի, Ամիր-Ասատի և Ջումայի մասին հանդիպում են կցկտուր տեղեկություններ, սակայն նրանցից յուրաքանչյուրը ունեցել է իր բաժնեկալվածքը: Կուքա վանքում 1332 թ. գրված հիշատակարանում Վասակը հիշվում է նահանգի իշխան. «Արդ, գրեցաւ սա...ի յիշխանութեան նահանգիս մերոյ թոռին Պռօշա, զոր ի յազգէն Վարդանանց՝ Վասակա,

55 «Դիվան», պրակ III, էջ 143:
56 ԺԴ, էջ 128:
57 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 107—108:

զոր աստուած յերկարացէ զժամանակս նոցա»[58]: Գրիչը նահանգ ասելով նկատի ունի այն գավառը, որ իշխում էր Վասակը:

Պռոշը Վասակ անունով թոռ չի ունեցել, իսկ «թոռին Պռոշա» արտահայտությունը պետք է հասկանալ ընդհանրապես Պռոշի սերնդից: Խնդրո առարկա Վասակին Գ. Հովսեփյանը նույնացրել է Էաչիի որդիների շարքում հիշված Վասակի հետ, իսկ այս Վասակին. Առաքել Հաղբատեցու՝ «քաջ եւ արի հոլովն Վասակի հետ[59]:

Ջումայի վերաբերյալ ունենք երկու հիշատակություն: Գլաձորում 1334 թ. գրված հիշատակարանում տեղի իշխաններ են հիշվում Ամիր-Հասանը և Ջուման. «...յիշխանութեան և տէրութեան համօրէն գաւառացս մեծ իշխանիս Բուրթէլի, և որդոց նորին՝ Պէշգենի և Իւանէի, իսկ ի տեղւոյս տէրութեան՝ թոռանց մեծին Պռոշայ՝ Ամիր Հասանայ և Ջումայի»[60]: Թանատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու արևմտյան պատին Ջուման և իր կինը՝ Խոանդզեն արձանագրություն են թողել եկեղեցուն ջրաղաց նվիրելու կապակցությամբ. «Կամաւ ամենայկալին աչ. /ես Ջումէս, թոռն Ամիր Հասանայ, որդի Էաչո եւ կենակիցն իմ Խոանդզէն/ ետաք զաւագ ական ջրաղացն սբ. Ստեփանոսի/ գերեզմանիս. վարդապետ, միաբանքս սահմանեցին: :Գ: աւր պատարագ սբ. Խաչին/ տաւնին :Բ: իմ եղբաւրն պար/ոն Ասադին :Ա: Էլխութլոյ...»[61]: Արձանագրությունը թվական չունի, այն կարևոր է նրանով, որ Ջուման տեղեկություն է հաղորդում իր եղբոր՝ պարոն Ասատի մասին, որն արդեն մահացել էր, և նրա հոգու համար Ջուման պատարագ է սահմանել տալիս: Գ. Հովսեփյանը քննության առնելով այս արձանագրությունը եզրակացնում է, որ երկու եղբայրների, պապի և հոր այս պարզ հի-

58 ԺԴ, էջ 247:

59 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 107:

60 ԺԴ, էջ 261:

61 «Դիվան», պրակ III, էջ 80:

շատակությունից հետո, այլևս կասկած չկա նրանց նույնության մասին[62]:

Ամիր-Հասան Բ-ի մասին հիշատակություն ունենք 1318 թ.: Գլաձորում գրած հիշատակարանի գրիչ Սարգիսը հաղորդում է հետևյալը. «Եւ եղև կատարումն գրոցս ի թվ. ՉԿԷ. ((1318), ի գաւառիս Վայոցձորոյ, յանապատս Գլաձոր... յիշխանութեան գաւառիս Ամիր Հասանայ, որդոյ Իւաչէ, որդոյ Ամիր Հասանայ, որդոյ Պռոշայ բարեպաշտի...»[63]: Ինչպես իր նախնիները, այնպես էլ Ամիր-Հասան Բ-ն աչքի է ընկել պատերազմներ վարելու գործում և աղբյուրներում կոչվել է զորավար կամ սպարապետ: Գլաձորում 1321 թ. գրված հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Արդ, գրեցաւ սա ի թվաբերութեան մերոյ հայկազեան տոմարի ՉՀ. (1321)... վերադիտողի տանս Սիւնեաց՝ տէր Յովհաննէսի և տէր Ստեփանոսի, և ի զօրավարութեան և իշխանութեան գաւառաց յորում եմք՝ Բուրթելի և Ամիր Հասանա»[64]:

Ամիր-Հասան Բ-ի կինը՝ Ռուզուքանը 1328 թ. Սյունիքում ստացել է մի ավետարան, որի հիշատակարանի գրիչը նախ հիշում է Էաչուն, ապա շնորհակալություն ու բարի խոսքերով բնութագրում հռչակավոր և մեծ ազգից սերած Ռուզուքանին, որը շինել է տվել հոգևոր տաճարը, զարդարել մարգարեական առաքելական շնորհքներով, իր միջոցներով պատվիրել և ստացել է ավետարանը. «...(յիշ)ատակ ինձ և տե(ա)ռն իմոյ (Ա)միր Հասանայ, ի վաելում թագազարդ և պարծանաց որդոյս մերոյ՝ Էաչոյ, և Թուղաիկին, և հանգուցեալ պարոնացն Վարհամայ, և Մինա Խաթունին, և ուսաք ի վանս Լևայ, զոր էր ընդ իշխանութեամբ մերով և էր մեր մայր գերեզմանատեղ... Արդ, ով ժառանգէք և ընթեռնոյք, ասացէք յի բերանով թէ Քրիստոս աստուած, ողորմի Ռըզուքանին, և Ամիր Հասան(այ), և ծնողացն իւ-

62 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 108:

63 ԺԴ, էջ 136:

64 Նույն տեղում, էջ 166:

ըն(ա)նց...»[65]: Ջումայի մասին խոսելիս տեսանք, որ Ամիր-Հասան Բ-ն և Ջուման տեղի իշխաններ են հիշվում 1334 թ. Գլաձորում Հունան գրչի գրած հիշատակարանում[66]: Սպիտակավոր Աստվածածին վանքի կառուցումը սկսել էր Էաչին, նրա զոհվելու պատճառով շարունակել է որդին՝ Ամիր-Հասան Բ-ն: Այն ավարտվել է 1321 թ.: Վերը տեսանք, որ Էաչիի անունից արձանագրություն կա 1322 թ.՝ վանքին նվիրատվություն կատարելու մասին[67]: Երախտապարտ որդին իր հռչակավոր հոր հիշատակը հավերժացնելու նպատակով, նրա անունից՝ վանքի կառուցումն ավարտելու կապակցությամբ փորագրել է տվել հիշյալ արձանագրությունը: Ամիր-Հասան Բ-ն Սպիտակավոր Աստվածածնի հյուսիսային պատին ունի մի անթվակիր արձանագրություն, որը Ս. Բարխուդարյանը գրված է համարում 1340 թ.: Այս արձանագրության համաձայն Ամիր-Հասան Բ-ն և իր կինը՝ Բոքան, նվիրատվություն են կատարել վանքին. «Յուսովն որ առ. ած. ես Ամիր Հասան, որդի/ Էաչո, ես Բոքա դուստր Ջաքարիա մեր հայրեն/եցն ի Խոտորալէզ՝ զնախազպարառն զՋահէնենց այգին, զԴաւթենց այգ/այանղին կէսն ավաք սբ. անապատիս եւ Գրիգորին գերեզմանիս...»[68]: Ամիր-Հասան Բ-ի արձանագրության մոտ փորագրված է Բոքայի 1340 թ. արձանագրությունը, վանքին մի այգի նվիրելու մասին[69]: Ինչպես աղբյուրներից երևում է Ամիր-Հասան Բ-ն ունեցել է երկու կին՝ Ռուզուքան և Բոքա: Տարակուսանք հարուցող այս երևույթը կարելի է բացատրել երկու հանգամանքով՝ կամ Ամիր-Հասան Բ-ի կինը ունեցել է երկու անուն, և կամ էլ նա ունեցել է երկու կին: Վերջինն ավելի հավանական ենք համարում, ենթադրելով, որ Բոքան եղել է նրա առա-

65 ԺԴ, էջ 207—208:

66 Նույն տեղում, էջ 261:

67 «Դիվան», պրակ III, էջ 96:

68 Նույն տեղում, էջ 97:

69 Տե՛ս նույն տեղում:

ջին կինը, զավակ չի ծնել, դա ենթադրվում է նրա արձանագրությունից, ուր չի հիշվում զավակի անունը, այդ պատճառով էլ Ամիր-Հասան Բ-ն կնություն է առել Ռուզուքանին: Վերը տեսանք, որ Ռուզուքանը 1328 թ. պատվիրել և ստացել է մի ավետարան, որի հիշատակարանում արձանագրված է. «...(յիշ)ատակ ինձ և տե(ա)ռն իմոյ՝ (Ա)միր Հասանայ, ի վաելում թագազարդ և պարծանաց որդոյս մերոյ՝ Էաչոյ, և Թուղտիկին...»[70]: Ամիր-Հասան Բ-ն Ռուզուքանից ծնված որդուն անվանակոչել է իր նշանավոր հոր՝ Էաչիի անունով: Սպիտակավոր Աստվածածնի հարավային պատին կա Ամիր-Հասան Բ-ի անթվակիր, կիսեղծ արձանագրությունը, վանքին նվիրատվություն կատարելու մասին: Արձանագրության մեջ Ամիր-Հասան Բ-ն իրեն համարում է «որդի Պռէաշո»[71]: Ամիր-Հասան Բ-ի պատկանելիության այս ձևը դարձյալ մեզ չպետք է շփոթեցնի, դա նշանակում է Պռոշի սերնդից: Վաստակաշատ Գ. Հովսեփյանն այս արձանագրության թվականը նշանակել է ։Պ։ (1351)[72] և հենց այս թվականն էլ համարել Ամիր-Հասան Բ-ի մահվան տարին, քանզի նա այդ հողերը նվիրել է որպես հոգեբաժին[73]:

XIV դ. 50-ական թվականներից սկսած Պռոշյանների իշխանական տան ներկայացուցիչների մասին աղբյուրներում հանդիպում են սակավ տեղեկություններ, որոնք առայժմ հնարավորություն չեն տալիս հանգամանորեն շարադրել այս իշխանական տան պատմությունը: Պռոշյանների մասին սկզբնաղբյուրների լռությունը մասամբ կարելի է բացատրել Լանկ-Թամուրի արշավանքներով: 1387 թ. գարնանը Լանկ-Թամուրի հրոսակները ներխուժեցին Սյունիք, ապա Վայոց ձոր: Լանկ-Թամուրի զինվորներին համառ դիմադրություն

70 ԺԴ, էջ 207—208:

71 «Դիվան», պրակ III, էջ 100:

72 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, էջ 207:

73 Տե՛ս նույն տեղում, էջ 208:

է ցույց տալիս Շահապոնք ամրոցը, սակայն հրոսակները գրավում են ամրոցը, և իր սովորության համաձայն Լանկթամուրը հրամայում է կոտորել դիմադրողներին: Իրենց հայրենիքի պաշտպանության համար Շահապոնքում հերոսաբար մարտնչած ու զոհված հայորդիներին անշուշտ գլխավորում էին Պռոշյանները:

Պռոշյանների գոյապայքարը շարունակվեց նաև XV դ. երկրորդ կեսին: XV դ. թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր ասպարեզներում Պռոշյանները գերադաս էին Օրբելյանների նկատմամբ: Այս ժամանակաշրջանի գրավոր աղբյուրներում առաջինը հիշվում են Պռոշյանները: 1461 թ. Սրկղունքում գրած հիշատակարանում Վայոց ձորի իշխաններ են հիշվում պարոն Ջուման և պարոն Ինանիկը. «Արդ, գրեցաւ սայ ձեռամբ Դաւիթ սուտ անուամբ իրիցի, որ եմ յետնեալս ամենայնի, ի թուայբերութեանս Հայոց տոմարի ՋԺ. (1461), ի դիտապետութեան տէր Զաքարիայ կաթողիկոսի, իշխանութեամբ պարոն Ջումին և պարոն Ինանիկին»[74]: Նույն Դավիթ գրիչի ձեռքով Սրկղունքում 1473 թ. գրած հիշատակարանում Ջուման տեղի իշխան է հիշվում, առանց Ինանիկի. «...Գծագրեալ եղև սա ձեռամբ յոգնամեղ և անարժեան Դաւիթ սուտանուն իրիցի, որ միայն զանունս ունիմ և ոչ զգործս, ի թվականիս Հայոց ՋԻԲ (1473), ի ղանութեան Հասան-բէկին՝ թոռին Թայմուրրայ, որ տիրեաց բազում աշխ/[ա]րհաց և քաղաքաց, ի կաթողիկոսութեանն Վաղարշապատու տէր Արստակիսի, և մերում նահանգի պարոնութեանս պարոն Ջումին: Եղև գրաւ սորա յերկիրս Վայի-ձորոյ, ի գեւղս որ կոչի Սրկղունս...»[75]: Վայոց ձորի Բոլորաբերդ անապատում 1475 թ. գրած հիշատակարանում Ավագտեր վարդապետը մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ջումայի, արքեպիսկոպոս Հովհաննիսի և Պռոշյան մյուս իշխանազունների մասին: Ջուման ներկայացվում է իշխանաց իշխան և հայոց սպարապետ կոչումներով: Հիշատակարանից իմանում ենք, որ Գեղարդում, Պռոշյանների հոգևոր կենտրոններից մեկում, արքեպիսկոպոս էր աստվածահաճո և մաքուր սուրբ հայրապետ, մեծ Պռոշի թոռ Հովհաննեսը: Նրա հետ էր եղբայրը՝ նորընծա կուսակրոն Ստեփանոսը: Հովհաննեսը և Ստեփանոսը Ջումայի եղբոր որդիներն են և ոչ թե եղբայրները[76]: Հիշատակարանը տեղեկություններ է տալիս նաև Ջումայի որդիների և եղբոր որդիների մասին: Ջուման ունեցել է երեք որդի՝ Լազարբեկ, Ուլուսբեկ, Թումանբեկ, իսկ նրա եղբոր որդիներն են պարոն Հայկազը, պարոն Ամիր-Վասակը, պարոն Հազրակը և պարոն Ամիր-Հասանը, որոնց եղբայրներն են տեր Հովհաննես արքեպիսկոպոսը և Ստեփանոսը. «...Արդ, եղև գրաւ գրադրութեան սորա ի թվականիս Հայոց Մեծաց ՋԻԴ (1475), ի կաթողիկոսութեան տէր Սարգսի ընթհանուր Հայաստանեայց ազգի, և յաՀրիեպիսկոպոսութեան մերում գաւառի տէր Յոհաննիսի՝ աստուածահաճոյ և մաքուր սուրբ հայրապետի՝ թոռին մեծին Պռոշայ, որ է առ դրան սուրբ Գեղարդեան, և եղբաւր նորին տէր Ստեփանոսին՝ նորընծայ կուսակրաւն աբեղայի, զոր տէր աստուած ընդ երկայն աւուրս առնէ, և միւս եպիսկոպոսի տէր Եղիշայի՝ մաքուր և սուրբ հայրապետի՝ թոռին մեծին Բուրթելեանց, ի պարոնութեան մերոյ նահանգիս մեծազգի և երևելի իշխանաց իշխողի և բարեհամբաւ պարոն Ջումին՝ թոռին մեծին Պռոշայ՝ սպարապետին Հայոց, և որդւոց նորին պարոն Լազարբէկին, Ուլուսբէկին, Թումանբէկին, և եղբ/[ա]յրորդոց սորին պարոն Հայկազին, Ամիր-Վասակին, Հազրակին, Ամիր-Հասանին, եղբարց տէր Յոհաննիսին և տէր Ստեփանոսին...»[77]: 1475 թ. Վայոց ձորի Սրկղունք գյուղում Դավթի գրած հիշատակարանում նահանգի արքեպիսկոպոս է հանդես գալիս տեր Հովհաննեսը. «...մերում նահանգի

74 ԺԵ, մասն Բ, էջ 157:

75 Նույն տեղում, էջ 346:

76 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ LXVII:

77 ԺԵ, մասն Բ, էջ 375:

եպիսկոպոսութեանն տէր Յոհանիսի, որ է ի դուռն սուրբ Գեղարդեանն», իսկ նահանգի իշխաններ՝ Ջուման և իր որդիները. «...ի իշխանութեան պարոն Ջումին և որդոցն իւրոց...»[78]: Ջումայի, իր որդիների և եղբոր որդիների մասին, որպես տեղի իշխանների ասված է նաև Վայոց ձորի Բոլորաբերդ անապատում 1476 թ. գրած Զաքարիա գրչի հիշատակարանում: Հիշատակարանի համաձայն Ջուման, իր որդիները և եղբոր որդիները ներկայացնում էին գավառի աշխարհիկ իշխանությունը, իսկ Հովհաննես եպիսկոպոսը՝ հոգևոր[79]: Ջումա Պռոշյանի մասին սա աղբյուրների հաղորդած առայժմ վերջին տեղեկությունն է: Ջուման ամենայն հավանականությամբ Պռոշյանների իշխանապետությունը կառավարել է մինչև 1478 թ.: Այս եզրահանգման համար հիմք է ծառայել այն հանգամանքը, որ Վայոց ձորի Սրկղունք գյուղում Ավագտեր վարդապետի հետ ձեռագրեր օրինակող և հիշատակարաններ գրող, նրա եղբոր որդի Դավիթ երեցը, որն իր հիշատակարաններում միշտ վկայում է Ջումայի իշխանության փաստը, 1478 թ. գրած հիշատակարանում Ջումայի անունը չի հիշում: Այն, որ Դավիթ գրիչը Ջումային հենց այնպես անուշադրության չէր մատնի անուղղակի վկայում է, որ Ջուման 1478 թ. արդեն մահացել էր: Ուրեմն, Ջուման Պռոշյանների իշխանապետն էր մինչև 1477/8 թվականները: Գրիչ Դավիթը հայտնում է, որ իր գիրն ավարտել է հայոց ՋԻԷ (1478) թ., երբ Յաղուբը գրավեց իշխանությունը. «Եւ ի յաթոռակալութեանն Վաղարշապատու տէր Սարգիս կաթողիկոսի և մերում նահանգի եպիսկոպոսութեան տէր Յոհանիս<խս>ի և տէր Եղիշէի՝ հոգևոր եղբարց»[80]: Եղիշե արքեպիսկոպոսը Օրբելյանների Բուրթելյան ճյուղից էր:

Կարելի է ենթադրել, որ Ջումայի մահից հետո աշխարհիկ իշխանությունը ևս առժամանակ անցավ Հովհաննես

78 Նույն տեղում, էջ 378:

79 Տե՛ս նույն տեղում, էջ 400:

80 ԺԵ, մասն Բ, էջ 427:

արքեպիսկոպոսի ձեռքը: Բոլորաբերդ անապատում 1482 թ. գրած Աբրահամ գրչի հիշատակարանում գավառի եպիսկոպոս է հիշվում Հովհաննեսը, Ստեփանոս եպիսկոպոսի հետ, Պռոշյան աշխարհիկ որևէ իշխան չի հիշվում[81]: Նույն պատկերն ենք տեսնում նաև Ստեփանոս գրչի 1484 թ. գրած հիշատակարանում. «...ի յառաջնորդութ(եան) ուխտիս զմեծ գիտապետ զտէր Յոհաննէս արհե(պիսկոպոսի և) զեղբայր նորին զտէր Ստեփանոս եպիսկոպոս»[82]: Սակայն ասվածից չպետք է եզրակացնել, որ ընդհանրապես Պռոշյանների մոտ աշխարհիկ իշխանությունը իր տեղը զիջել է հոգևոր իշխանությանը: Պռոշյան աշխարհիկ իշխաններ կային և գործում էին, սակայն Հովհաննես արքեպիսկոպոսի գերադասության պայմաններում: Հովհաննես արքեպիսկոպոսը 1488 թ. Այրիվանքում գրած հիշատակարանում իր ապրած ժամանակը համարում է խիստ ծանր և անօրինություններով լի: Թավրիզ քաղաքում Մեհդի անունով մի մահմեդական, քրիստոնյա լինելու համար սպանել է «Հայոց մեծ ախոյան» խոջա Միրաքին, իսկ քառասուն ազատորդիներ ձերբակալել են և նրանց հարկադրել հավատափոխ լինել: Ձերբակալվածների թվում են եղել Պռոշյան երկու իշխանազուններ, որոնցից մեկը եղել է Հովհաննեսի եղբայր պարոն Հայկազը, մյուսը՝ պարոն Ավագը. «...այլազգեաց շատ նեղութիւն քաշեցաք, որ յայսմ ամի խ. (40) ազատորդի կալան, թէ տաճկացէք. այլ ողորմածն աստուած ձեռնտու և աւգնական եղև նոցա, յորոց մի էր եղբայրն իմ պարոն Հայկազն, և պարոն Աւագն, որ է(7) ամիս կալուական կացին, և բազում տուգանք տվին, և ի հաւատոցս Քրիստոսի ոչ դարձան»[83]: Հովհաննես արքեպիսկոպոսը խնդրում է աղոթելիս հիշեն իրեն «և զեղբայրն իմ զտէր Ստեփանոս եպիսկոպոս այսմ նահանգիս՝ Կոտայից երկրիս...»[84]: Հիշատակարանում կարևոր է

81 Տե՛ս ԺԵ, մասն Գ, էջ 27:

82 Նույն տեղում, էջ 55:

83 Նույն տեղում, էջ 110:

84 Նույն տեղում:

նաև այն, որ խիստ որոշակի է Հովհաննեսի և Ստեփանոսի եղբայրներ լինելու հանգամանքը, երբ վերջինս արդեն «Կատայից երկրի» եպիսկոպոս էր: Ինչպես Պռոշյան Հովհաննես արքեպիսկոպոսի, այնպես էլ նրա մասին հիշատակարան գրող գրիչները, այդ թվում նաև Ավագտեր գրիչը Ստեփանոսին միշտ համարել են Հովհաննես արքեպիսկոպոսի հարազատ եղբայրը և ոչ թե հոգևոր եղբայրը[85]: Այրիվանքի 1494 թ. մի հիշատակարանից տեղեկանում ենք, որ այդ ժամանակ Հովհաննես արքեպիսկոպոսը դեռ կենդանի էր: Գրիչ Ստեփանը հայտնում է, որ այդ տարի մահացել է Հովհաննես արքեպիսկոպոսի եղբայր Ստեփանոս եպիսկոպոսը, և նրան փոխարինել է մեծ Պռոշի թոռ Բարսեղ եպիսկոպոսը. «Գրեցաւ ձեռամբ Ստեփանի...առաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Յովանիսի և եղբաւր նորին տէր Ստեփանոսի եպիսկոպոսի, որ... ի նոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս, և յառաջնորդ նոցին տէր Բարսեղ եպիսկոպոսի, որ է թոռն մեծին Պաւշայ»[86]: Գ. Հովսեփյանը գրում է, որ Հովհաննես և Ստեփանոս եպիսկոպոսները վերջին անգամ հիշվում են 1492 թ.[87]:

XV դ. 80—90-ական թվականներին Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքում հայտնի դարձավ Պռոշյան Ջումայի որդի պարոն Արղութան, որի վերաբերյալ ցավոք XV դ. վերաբերող միայն մեկ փաստ ունենք: 1498 թ. Ջորավանքում գրած հիշատակարանում գրիչ Վանականը հայտնում է, որ հիշատակարանը գրել է. «...և իշխանց տեղոյս պարոն Արղութայի, թոռն մեծ Ջումային»[88]: Հմուտ մասնագետ-գիտնականներից ոմանք, հիմք ունենալով այս հիշատակարանի բովանդակությունը, գտնում են, որ պարոն Արղութան իշխել է Ջորավանքում[89]: Սակայն դա ամենևին այդպես չէ: Ջորավանքն, ինչպես ճիշտ նկատել է Լ. Խաչիկյանը, Մարտունու շրջանի Ջորագյուղի, կամ Ծովագա գյուղի մոտ գտնվող ավերակ վանքն է[90]: Ծովագա գյուղը, նաև Ջորավանքը գտնվում էին Դոփյանների իշխանական տան տիրույթում: Հետևապես, Պռոշյաններն այնտեղ իշխել չէին կարող: Գրիչ Վանականը իր հիշատակարանը սկսել է գրել Վայոց ձորի Փանձաթաղ գյուղում, սակայն Մուրադ խանի արշավանքի ու հալածանքների պատճառով կիսատ թողած հիշատակարանի հետ փախել է Ջորավանք, ուր մնացել է 30 օր և շարունակել գրել հիշատակարանը, սակայն այստեղ էլ ապահով չլինելով անցել է Ծակքար ձորակը. «...Եղև հալածումն ի յերկրիս Վայի-ձորոյ, փախեաւ ամենայն երկիրս ի լերինս և ի ծերպս վիմաց: Ի սուն ժամանակի եղև իսկիզբ գրոցս, ի գուղս, որ կոչի Փոնձաթաղ. գրեցո մինչև ի Սրբեալ տաճարին: Եւ անդի գնացեալ ի վանկս Ջորիվանս, զաւուրս Լ. (30) փաղչելով գրձագրեցաք, մինչ ի մկրտութիւնն, Եւ անդի փախէաք ի ձորակս, որ կոչի Ծակքար...»[91]: Այստեղ էլ Վանական գրիչը հանգիստ չի գտնում, նրան նորից հալածում են անօրենները, և հարկադրված իր մատյանի հետ թաքնվում է քարայրում և ազատվում իրեն հետապնդող անարգ մուսուլմանից: Իր թաքստոցում Վանականը շարունակել է հիշատակարանը. «մինչ ի կոչումն յապաշխարութիւն», սակայն մի իմից ահաբեկված նորից փախել է Ջորավանք, ուր ավարտել է իր հիշատակարանը[92]: Այդ ժամանակ Այբա-Սուլթանն արդեն պարտության էր մատնել Մուրադ խանին: Երբ գրիչ Վանականը գրում է, որ հիշատակարանը գրել է «իշխանց տեղոյս պարոն Արղութայի,

85 Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 182:

86 ԺՆ, մասն Գ, էջ 194: «Թոռն մեծին Պաւշայ» պետք է հասկանալ Պռոշյան տոհմից ընդհանրապես:

87 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 127:

88 Նույն տեղում, էջ 259:

89 Տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., մասն Բ, էջ LXVIII, Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 183:

90 Տե՛ս Լ. Խաչիկյան, նույն տեղում (տողատակի ծանոթագրությունը):

91 ԺՆ, մասն Գ, էջ 259:

92 Տե՛ս նույն տեղում:

թոռն մեծ Ջումային», նկատի ունի ոչ թե Զորավանքը, այլ այն վայրը՝ Վայոց ձորը, ուր սկսել էր գրել հիշատակարանը, և ուր այդ ժամանակ իշխանապետ էր պարոն Արղութան։

Այսպիսով, ինչպես փաստերով համոզվեցինք, մոնղոլթաթարական տիրապետությունը ծանր հետևանքներ ունեցավ նաև Պռոշյանների իշխանական տան համար, որը շուրջ մեկ հարյուրամյակ Հայաստանի քաղաքական կյանքում ակտիվ դեր չուներ։ XV դ. երկրորդ կեսին այս ֆեոդալական տան ներկայացուցիչներին կրկին հանդիպում ենք Վայոց ձորի աշխարհիկ և հոգևոր առաջնորդների պաշտոններում՝ գրեթե նախկին հզորությամբ։

ԱՂԻԶԲԵԿՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ

XIV—XV դարերում Եղվարդում և նրա շրջակայքում իշխում էր Աղիզբեկյան իշխանական տունը։ Աղիզբեկյանների ծագման մասին աղբյուրներում հավաստի գրավոր տեղեկություն չկա։ Պատմագիր Զաքարիա Քանաքեռցին Աղիզբեկյանների մասին գրում է, որ նրանք ունեն վրացական ծագում։ Ըստ Զաքարիայի, տոհմի նախահայր Աղիպեն մի քանի այլ հայտնի վրացի անձանց հետ պատանդ է եղել Հայաստանում։ Այդ պատանդներից են առաջացել մի քանի իշխանական տներ՝ Թեհինենքը՝ Օհանավանքում, Մոծակենքը, Ղապոնքը՝ Քանաքեռում և Աղիզբեկենքը՝ Եղվարդում[1]։

Զաքարիան գրում է, որ ինքը սերում է Քանաքեռում հաստատված Ղապոնց տոհմից, և որ նա այդ պատմությունը լսել է բանավոր զրույցներից։ Նրա ասածի ճշմարտությանը հավաստող միակ գրավոր աղբյուրը եղել է մի հիշատակարան, որը նրա ասելով կորել է երկրաշարժի ժամանակ[2]։ Սա, իհարկե, պատմական հիմքից զուրկ տեսակետ է։ Եթե Աղիզբեկյանները վրացական ծագում ունենային, ապա կարծում ենք, այդ մասին որևէ ձևով կհիշատակվեր գոնե նրանց թողած արձանագրություններում կամ հիշատակարաններում, ինչպես այդ անում էին Օրբելյանները։

1920-ական թվականներին այս հարցին անդրադարձել է մեծանուն գիտնական Գ. Հովսեփյանը՝ իր «Աղիզբէկենք և

1 Տե՛ս Զաքարիա սարկավագ, Պատմութիւն, հ. 3, Վաղարշապատ, 1870, էջ 43—44։

2 Տե՛ս նույն տեղում։

նրանց շինարարական գործը» պատմա-հնագիտական ուսումնասիրությունում[3]: Մեծահմուտ գիտնականը Ագիգբեկյանների վրացական ծագման մասին Զաքարիա Քանաքեռցու վարկածը համարում է առասպել՝ զուրկ գիտական ճշմարտությունից: Նա Ագիգբեկյան իշխանական տունը համարում է Զաքարյանների իշխանության շրջանում կազմավորված:

Ագիգբեկյանների իշխանության սահմաններն արևմուտքում տարածվում էին մինչև Քասախ գետը, հյուսիսում՝ Արայի լեռը, իսկ արևելքում՝ Թեղենյանց սարից բխող վտակը:

Արդեն XIV դ. երկրորդ կեսին Ագիգբեկենք աչքի ընկնող իշխաններ էին: Այդ է վկայում տոհմի մասին եղած առաջին գրավոր հիշատակությունը, որը 1318 թ. Եղվարդում գրված մի ձեռագիր է: Հիշատակարանը գրել է Ներսես գրիչը՝ պարոն Ագիգբեկի և նրա տիկնոջ՝ Վախվախի, խնդրանքով: Հիշատակարանի բովանդակությունից իմանում ենք, որ Ագիգբեկի հայրն էր պարոն Ավագը, մայրը՝ Թամարը, իսկ նրա կինը՝ Վախվախը, խար Ասլանի դուստրն էր[4]: Պարոն Ավագ Ա-ն ամենայն հավանականությամբ աչքի ընկնող դեր է խաղացել երկրի քաղաքական կյանքում: Նա ըստ երևույթին Զաքարյանների զինվորական առաջնորդներից է եղել: Ավագ Ա-ի մահից հետո իշխանական տան ներսում առաջացած խռովության պատճառով Ագիգբեկ Ա-ն իր տիկնոջ հետ որոշ ժամանակ բացակայել է Եղվարդից: Բայց հետո կարողացել է հաղթել իր հակառակորդներին, վերացնել ներքին երկպառակությունը, վերադառնալ Եղվարդ և տեր դառնալ իր հայրենի կալվածքներին[5]: Ագիգբեկ Ա-ն վերանորոգում է ավերված ավանը և ձեռնամուխ լինում շինարարական աշխատանքներին: «Եկեալ տեսին զբնակութիւն նոցայ աւերեալ և կործանեալ, և զաւանս իւրեանց զԵղիվարդ՝ բնակութիւն աւազակաց... և վերստին նորոգեցին բազմայ բազում տքնութեամբ և չարաչար վաստակօք, մի մի ժողովել զցրուեալսն, բազում և յոլով աշխատութեամբ ծառայութիւն կատարելով մեծափառ տէրանց իւրեանց՝ մեծին Շահնշահի և Խոյանդզային, և հեղաբար և հնազանդաբար շրջէին ընդ նոսայ, մինչև ամենայն զիմաւք հաստատեցին զմեծ մենաստանս՝ զԵղիվարդ, շինել զամենայն քանդեալս»[6]:

Հիշատակարանի համաձայն Ագիգբեկը քաջ զորական էր և որպես անվախ պատերազմողի մեծ համբավ է վայելել. «Քաջ զաւրավարն ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի՝ պարոն Ագիգպէկն»[7],—գրում է Ներսես գրիչն Ագիգբեկի մասին:

Ագիգբեկն աչքի է ընկել նաև իր շինարարական գործունեությամբ: Նա որպես հեռատես և խելոք իշխան վերաշինում է Եղվարդի ավերված ջրանցքը: Ներսես գրիչն այդ ջրանցքի շինարարությունը նկարագրել է այսպես. Ագիգբեկ իշխանը գնում է Արայի լեռան հյուսիսային լանջին գտնվող Աստվածընկալ գյուղը ուխտի, ուր գտնվում էր համանուն եկեղեցին: Նա տեսնում է հին ավերված ջրանցքը, որի միայն հիմքերն էին երևում և որոշում է վերականգնել այն ու ջուրը հասցնել Եղվարդ և նրա շրջակայքը[8]: Ինչպես հաղորդում է գրիչը, հսկայական միջոցներ և աշխատանք ներդնելով, հաղթահարելով տեղանքի դժվարությունները նա վերակառուցել է տալիս ջրանցքը: Քասախ գետից ջրանցքն անցնում էր Արայի լեռան ժայռոտ լանջով, որը պահանջում էր մեծ աշխատանք ու ծախսեր և, ինչպես գրիչն է գրում, այնքան շատ էին դժվարությունները, կատարված աշխատանքը և ծախսերը, որ հնարավոր չէր գրի առնել: Ագիգբեկը վերաշինում է նաև Եղվարդի սուրբ Հակոբ եկեղեցին և

3 Տե՛ս Գ. Հովսեփյան, Ագիգբէկեանք և նրանց շինարարական գործը, Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա և Բ, 1921, 1922 (այսուհետև՝ նշվ. աշխ.), էջ 178:

4 Տե՛ս ժԴ, էջ 142:

5 Նույն տեղում, էջ 140:

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում, էջ 139:

8 Նույն տեղում:

նրան նվիրում շատ այգիներ[9]: Ագիրբեկ Ա-ն ունեցել է չորս որդի և մեկ դուստր: Նրա որդիներն էին Ավագը, Սարանդինոսը, Հովհաննեսը և Սասանաթան[10]: Ագիրբեկ Ա-ի երեք որդիների մասին մեզ ոչինչ հայտնի չէ: Նրանց մասին հիշատակել է միայն Ներսես գրիչը՝ 1318 թ. գրած իր հիշատակարանում: Նրան հաջորդել է ավագ որդին, որը պատմությանը հայտնի է Ավագ Բ անունով: Ավագ Բ-ն ունեցել է երկու որդի՝ Ագիրբեկ Բ և Զաքարիա:

Ագիրբեկ Բ-ն իր հորը հաջորդել է XIV դ. երկրորդ կեսին: Այդ մենք իմանում ենք Բջնիի Մանվել Ա եպիսկոպոսի՝ 1367 թ. գրած մի գանձի բովանդակությունից: Մանվել Ա եպիսկոպոսը հաղորդում է, որ ինքը ժամանակակից է եղել Ագիրբեկ Եղվարդյանին: Այդ հիշատակարանից պարզվում է, որ Մանվել եպիսկոպոսը նկատի ունի Ագիրբեկ Բ-ին:

«Իսկ մերձաւորն իմոյ արեան,
Զմեծն Ագիրբէկ Եղիվարդեան,
Ու Աւագն որդի եւ Զաքարայն,
Եւ ըզթոռունքն իւր միաբան»[11]:

Այսպես է գրել Մանվել եպիսկոպոսն իր և Ագիրբեկի ազգակցական կապի մասին: Հասկանալի է, որ Մանվել Ա-ն նկատի ունի Ագիրբեկ Բ-ին, քանի որ տեսանք, Ագիրբեկ Ա-ն ուներ չորս որդի՝ Հովհաննես, Ավագ, Սարանդինոս և Սասանաթա, իսկ Ագիրբեկ Բ-ի որդիներն են Ավագը և Զաքարիան:

Ագիրբեկ Բ-ն և իր որդին՝ Ավագ Գ-ն կրթական գործի մեծ հովանավորներ էին: XIV դ. վերջին և XV դ. սկզբին Եղվարդը դարձել էր մի յուրահատուկ կրթական կենտրոն, ուր իր գործունեությունն էր ծավալել ժամանակի աչքի ընկնող մանկավարժներից Սիմոն Այրիվանեցին: Նա Եղվարդում գործել է 10 տարի (1394—1404 թթ.): Սիմոն վարդապետը ոչ միայն կրթում ու հոգևոր սնունդ էր տալիս հայ մանուկներին, այլև աշակերտների հետ միասին գրում ու ընդօրինակում տասնյակ ձեռագիր հիշատակարաններ: Ագիրբեկ Բ-ի մահից հետո Սիմոնի սկսած գործը հովանավորեցին նրա որդիները՝ Ավագ Գ-ն և Զաքարիան, իսկ նրանց մահից հետո՝ Մանվել Գ-ն՝ Ավագ Գ-ի որդին[12]:

Որ իրոք, Ագիրբեկյանները հովանավորում և նյութապես օժանդակում էին դպրոցական գործին և ձեռագրերի գրչության ու ընդօրինակելուն՝ վկայում են մի քանի ձեռագրերի հիշատակարաններ: Այսպես, 1318 թ. հիշատակարանում գրիչ Ներսեսը խոսում է այն հոգատարության մասին, որ իր նկատմամբ ցուցաբերել են Ագիրբեկ Ա-ն և իր կին Վախվախը, որոնք նրան սովորեցրել են ամենայն իմաստություն ու նրան սիրել են ծնողի նման[13]: Իսկ 1444 թ. Այրիվանքում գրված մի հիշատակարանում գրիչը Սիմոնի գործունեությունը նկարագրելիս գրել է. «Նախ բնակեցաւ յաստուածաշէն և ի տիրախնամ գեղն Եղիվարդ, ի փոքր վանս, որ ի մէջ գեղին, և բազում արդիւնս արարեալ անդ ի խընդրոյ աստուածասէր և բարեպաշտ, մեծազգի և փառաւոր, աղքատասէր, ազատածին առն Ագիրպէկին և որդւոց նորին՝ Աւագին և Զաքարիային: Բազում կրօնաւորս և աշակերտեալ մանկունս եկեղեցւոյ ժողովեալ յուսուցանել զհինն և զնոր մատեան աստուածաշունչ գրոց, զսուրբ և զարտաքին փիլիսոփայութիւն՝ ամս տասն»[14]:

Ագիրբեկ Բ-ն իշխանությունը վարել է մինչև XIV դ. վերջերը. համենայն դեպս նա կենդանի էր մինչև 1394 թ., երբ գործել սկսեց Սիմոն վարդապետը:

Ավագ Գ-ն իր հորը հաջորդել է XV դ. սկզբին. մեզ նման եզրակացության հիմք է տալիս վերը բերված հիշա-

9 Նույն տեղում, էջ 141:
10 Նույն տեղում:
11 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 204:
12 Տե՛ս նույն տեղում, էջ 195:
13 Տե՛ս ԺԴ, էջ 142:
14 ԺԵ, մասն Ա, էջ 561:

տակարանի բովանդակությունը, ուր ասվում է, որ Սիմոնի գործունեությունը Եղվարդում հովանավորում էին Ազիզբեկ Բ-ն և իր որդիները՝ Ավագն ու Զաքարիան։ Տեսանք, որ Սիմոնը Եղվարդում գործել է 1394—1404 թթ.։ Ուրեմն, 1404 թ. առաջ Ավագ Գ-ն հաջորդել էր հորը։ Թե մինչև որ թվականն Ավագ Գ-ն վարեց իշխանությունը և ինչպիսի գործեր կատարեց, այդ մասին աղբյուրները ոչինչ չեն հաղորդում։

XV դ. առաջին կեսին Ազիզբեկյաններին վերաբերող միակ գրավոր տեղեկությունն Ազիզբեկ Բ-ի փոքր որդու՝ Զաքարիայի 1425 թ. Հովհաննավանքում թողած արձանագրությունն է։ Այն գրված է Մուղնի գյուղը գնելու և ս. Կարապետ վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ. «Թվ. ՊՀԴ Կամաւն անմահին Այ. ես Զաքարիա թոռն Գամրիկէլին եւ որդի պար Ազիզբեկին, գնեցի զգեղն Մողնի հալալ յարդեանց իմոց։ Սբ Գէորգայ մուտքն որ Կարապետին էր, զիմ բաժինն էլ որ Կարապետին տվի յիշատակ ինձ և ծնողաց իմոց...»[15]։ Հավանաբար 1425 թ. առաջ Ավագն արդեն մահացել էր, և այդ պատճառով էլ Զաքարիան իր արձանագրությունում նրա անունը չի հիշատակում։ Հակառակ դեպքում Զաքարիան նրա անունը պետք է որ հիշատակեր որպես իրենից մեծ եղբոր և տոհմի գլխավոր իշխանի։ Կարծում ենք, որ 1425 թ. մինչև դարի հիսունական թվականներն իշխանությունը վարել է Զաքարիան։ Գ. Հովսեփյանը հիշյալ Զաքարիայի Ազիզբեկ Բ որդի լինելը կասկածի տակ է առնում[16]։ Գամրիկելը, ինչպես ճիշտ նկատել է Գ. Հովսեփյանը, Վաչուտյաններից է և Զաքարիայի պապը մոր կողմից[17]։ Քանի որ Մուղնի գյուղը գտնվում էր Ազիզբեկյանների իշխանության սահմաններից դուրս, հավանաբար, այնտեղ, ինչպես նաև Հովհաննավանքում, շարունակում էին իշխել

15 Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները*, էջ 102։

16 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 196։

17 Տե՛ս նույն տեղում։

Վաչուտյանների հետնորդները, որոնցից Գամրիկելը Զաքարիայի պապն էր մոր կողմից, Զաքարիան հիշատակել է նրա անունը, որպես իշխաններից մեկը։

Զաքարիայից հետո Ազիզբեկյան ֆեոդալական տան մեջ աշխարհիկ իշխանությունն իր դիրքերը զիջել է հոգևոր իշխանությանը։ Այստեղ էլ կրոնական վեղարն ու գավազանն էին, որ պետք է որոշ սահման դնեին մուսուլման տիրապետողների ոտնձգություններին և զորավիգ հանդիսանային հայ ֆեոդալներին՝ իրենց ունեցվածքը մուսուլման նվաճողների ընչաքաղց ախորժակից փրկելու համար։ Օրեցօր սաստկացող այս վտանգն էր պատճառը, որ Ազիզբեկյան տան մեջ XV դ. երկրորդ կեսից սկսած հոգևորականներն ավելի մեծ հեղինակություն ու դիրք էին ձեռք բերել։

Ազիզբեկյանների իշխանությունը XV դ. երկրորդ կեսից մինչև դարի վերջը վարում էր Ավագ Գ-ի որդի Մանվել արքեպիսկոպոսը, որը հայտնի է Մանվել Գ անունով։ Նրա մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում էր 1452 թվականին։ Այս թվականին Մանվել եպիսկոպոսը մի երգարան է ստացել։ Նա հաղորդում է, որ ինքը պարոն Ավագի որդին է, պարոն Ազիզբեկի թոռը և այդ երգարանը գնել է իր ունեցվածքով[18]։

Մանվել արքեպիսկոպոսի մասին հաջորդ տեղեկությունը տալիս է Մատթեոս գրիչը՝ 1464 թ. Եղվարդում գրած ձեռագրի հիշատակարանում. «Այդ, գրեցաւ սա ի գաւառիս Արարատեա, ի գեղաքաղաքիս Եղիվարդ... յառաջնորդութեան տեղւոյս տէր Մանուէլի արհեպիսկոպոսի, որդի պարոն Աւագի և թոռ պարոն Ազիզբեկին, որ կամակից և ձեռնտու եղև, զաւրինակս շնորհեաց»[19]։ Ինչպես հիշատակարանի բովանդակությունն է հաղորդում, Մանվել արքեպիսկոպոսը հովանավորել և օժանդակել է Մատթեոս գրիչին՝ հիշատակարաններ գրելու գործում։ Նույն Մատթեոս գրիչը, որը լայն

18 Տե՛ս նույն տեղում։

19 ԺԵ, մասն Բ, էջ 215։

գործունեություն էր ծավալել Եղվարդում, 1465 թ. գրել է մի ավետարան, Ազիզ անունով մի կնոջ համար։ Այս հիշատակարանում գրիչը հիշատակում է նաև Նորգեղի տանուտերերին[20]։ Գ. Հովսեփյանը ենթադրում է, որ Նորգեղի տանուտերերն ազգակցական կապ ունեին Ազիզբեկյանների հետ[21]։ Մեծանուն գիտնականի այս ենթադրության հետ համակարծիք չենք։ Եթե Նորգեղի տանուտերերն Ազիզբեկյանների ազգակից լինեին, ապա այդ մասին գրիչը պետք է որ հիշատակեր։ Ընդունելի է Գ. Հովսեփյանի այն միտքը, որ Նորգեղի տանուտերերը վասալական կախման մեջ էին Ազիզբեկյաններից։

1465—1467 թթ. գրված մի ձեռագրի հիշատակարանում Մանվել եպիսկոպոսի հետ հիշատակված է նրա եղբայրը՝ Բեշքենը[22]։ Գ. Հովսեփյանը վերապահությամբ է ընդունում սրանց եղբայրությունը և ենթադրում է, որ Բեշքենը կարող է Օրբելյաններից լինել[23]։ Տարակուսելու տեղիք չկա, մանավանդ որ գրիչը Մանվելի և նրա եղբոր կապակցությամբ գրում է. «...յառաջնորդութեան վանիցս նմին տէր Մանուէլի եւ եղբօրն՝ Բեշքենի»։ Այդ նույն Բեշքենն է Հովհաննավանքում թողել հետևյալ արձանագրությունը. «ՍԲ պատարագողք Քի զԲեշգեն և ծնողսն իւր յիշեցէք ի Քս. ամէն»[24]։

1469 թ. Եղվարդում գրած ձեռագրի հիշատակարանում գրիչ Մաթեոսը հայտնում է, որ ինքը ձեռագիրը գրել է Եղվարդում՝ տեր Մանվել եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ։ Ձեռագրի ստացողը եղել է Մանվել եպիսկոպոսը[25]։

20 Տե՛ս նույն տեղում, էջ 232։

21 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 197։

22 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 233։

23 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 197։

24 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 79։ Արձանագրությունը թվական չունի։ Կ. Ղաֆադարյանը այն վերագրում է XIII դարին։ Կարծում ենք, որ արձանագրությունը թողել է XV դ. երկրորդ կեսին ապրած Մանվել եպիսկոպոսի եղբայր Բեշքենը։

25 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 283։

Ուշագրավ է, որ այդ նույն հիշատակարանը բերված է Ղ. Ալիշանի «Այրարատ» աշխատության մեջ, որը, սակայն, ավարտվում է այն նույն բառերով, որոնցով ավարտվում է վերը նշված և Լ. Խաչիկյանի կողմից 1465—1467 թթ. գրված ձեռագրի հիշատակարանը. «յառաջնորդութեան վանիցս նմին տէր Մանուէլի և եղբօրն Բիշքէնի»[26]։

Մանվել Գ-ն 1471 թ. Եղվարդի եկեղեցում արձանագրություն է թողել սուրբ Աստվածածնին Աշտարակից մի այգի և մի ջրաղաց նվիրելու կապակցությամբ։ Այնտեղ կարդում ենք. «Ես Մանուէլ եպիսկոպոս, որդի պարոն Աւագին, թոռն պարոն Աղբէկի եռու զիմ այգին Աշտարակ, որ է Ազիզեան, եւ ջաղաց իմ, որ է տեղն բնական վանիցս, եւ հաստատեցի սբ Աստուածածնիս... Թվ. ՋԻ։»[27]։ Ուրծում 1473 թ. ընդօրինակած ճաշոցում գրիչ Խաչատուրը հիշատակում է Մանվելին. «Կատարեցաւ ի հոյակապ և ի հռչակաւոր գաւառս Արարադեան, ի գիւղս որ կոչի Ուրծ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Ստեփաննոսիս, և ի հայրապետութեան տէր Մանուէլ արհեպիսկոպոսին»[28]։ Մանվել Գ. Ազիզբեկյանի մասին վերջին տեղեկությունը հաղորդում է գրիչ Վրթանես կրոնավորը՝ Արարատյան գավառի Ուրծ անապատում 1491թ. ընդօրինակած Հայսմավուրքի հիշատակարանում[29]։

XV դ. վերջից մինչև XVI դ. երկրորդ կեսն Ազիզբեկյանների մասին աղբյուրներում հանդիպում ենք կցկտուր տեղեկությունների, որոնք իրենց սակավախոսությամբ առայժմ հնարավորություն չեն ընձեռում ուրվագծելու ֆեոդալական այս տան ներկայացուցիչների հետագա գործունեությունը։

26 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 198։ Կարծում ենք դա Մաթեոս գրիչի գրած հիշատակարանն է, սակայն հետագայում ընդօրինակելիս վերախմբագրվել է ուրիշ գրիչների կողմից։

27 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 173, Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 126, Ալիշան, Այրարատ, էջ 198։

28 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 347։

29 Տե՛ս ԺԵ, մասն Գ, էջ 169։

Ազիզբեկյանների մերձավոր ազգականներն էին Բջնիի Մանվել Ա և Մանվել Բ եպիսկոպոսները։ Ազիզբեկյան տոհմը XIII դ. վերջին արդեն բաժանված էր երկու ճյուղի. երկրորդ ճյուղի հայտնի ներկայացուցիչն էր Բջնիի Մանվել Արքեպիսկոպոսը[30]։ Բջնին մինչև XIV դ. 60-ական թվականները Զաքարյանների բաժնեկալվածքն էր։ Շահնշահ III-ը թողած արձանագրությունում բողոքում է, որ Մելիք Աշրաֆը (1344—1357) գրավել է Բջնի քաղաքը և «դիր ճորտերին էսիր կացուցեր», ապա Հաջիբեկը հիմքից ավերել է քաղաքը, սրի քաշել նշանավոր մարդկանց, քանդել եկեղեցիները, անմարդաբնակ դարձրել երկիրը և կոտորել քրիստոնյաներին։ Մելիք Աշրաֆի պարտությունից հետո Շահնշահ III-ը վերագրավել է Բջնին և վերականգնել իր իրավունքները[31]։ Այս իրադարձություններից հետո, հավանաբար Բջնիի եպիսկոպոս է դարձել Մանվել Ա-ն, որն այդ պաշտոնը վարել է մինչև 1368 թ.։

Մանվել Ա-ի մասին առաջին տեղեկությունը վերաբերում է 1367 թ.։ Այդ նույն թվականին Մանվել Ա-ն գրել է գանձեր, որոնցում տեղեկություններ է հաղորդում իր պապի, ծնողների և Ազիզբեկ Բ-ի հետ ունեցած ազգակցական կապի մասին։ Նա հայտնում է, որ իր հայրը՝ Շահպուհը ազատ տոհմից էր։

Մանուէլ գհամրակս այս անարժան,
Եպիսկոպոս սրբոյ անպիտան,
Զհաջորդ Բջնոյ ու Արարատեան,
Եւ Վիրապին սբ պահղապան։
Այլ եւ բդիմն ածանման,
Զաեր Վաննական արհիական,
Որ կայ որբնեալ այժմ ի տապան,
Յիշէք յաղաւթըս մաքրական։
Նաեւ առնէք յիշման արժանի
Զմեր մարմնական գծրնօղըն որ եան
Զհայրն իմ Շապուհ յազատ տոհմեան,
Զմայր Զանխաթուն բարի անուան։
Ու որք քան զսոքա յառաջել կան,
Զպապ անուանեալըն մեր բնական,
Զթայինու Արջուկ Զաքարիայն,
Քրիստոս հանգչի հոգիս նոցայն։

. . . .

Իսկ մերձաւորն իմոյ արեան,
Զմեծն Ազիզբէկ Եղվարդեան,
Ու Եւաքն որդի եւ Զաքարայն,
Եւ ըզթոռունքն իւր միաբան։

. . . .

Այլեւ յիշեմ ըզմանկական,
Զեղբաւր որդիքն իմ ծիածան։
Զփոքրն Սարգիս զմեծ Զաքրյն,
Որ կու փայլեն ըստ հարցն անուան։

. . . .

Թվիս ութ հարիւր եւ վեշՏասան,
Ծրեալ եւ ծաղկեալ այս Բուրաստան,
Յովաննիսի գրչի ձեռամբ[32]։

Մանվել Ա-ն Հովհաննես գրչի կողմից հորջորջված է «Մանուէլ գերահռչակեալ», որն ունեցել է մեծ իշխանություն ու հեղինակություն, «իշխան եւ իշխեցող ի վերայ երկոտասան վիճակաց»։ Իր անվան ճոխությամբ և բարքի մաքրությամբ նա փայլել է Արևելյան տան մեջ (այսինքն Արևելյան Հայաստանում), ինչպես արեգակը՝ աստղերի մեջ։ Նա աչքի է ընկել նաև փիլիսոփայական գիտելիքներով և երաժշտական եղանակներ հորինելով[33]։ Մանվել Ա-ն մա-

30 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 191։
31 Տե՛ս Կ. Կոստանյանց, նշվ. աշխ., էջ 169—170, Մ. Սմբատյանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, էջ 320, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 273—274։
32 «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա-Բ, 1921—1922, էջ 203—205։
33 Տե՛ս նույն տեղում, էջ 205։

հացել է 1368 թ.։ Այս թվականին Սանահնում գրած հիշատակարանում Մելիքսեթ ծաղկողը հայտնում է. «Յիշեցէք ի մաքրափայլ եւ յերագընթաց յաղօթս ձեր զստացող գրոցս զտէր Մանուէլ, որ ստացաւ զսայ հալալ յարդեանց յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, եւ ի կատարել գրոցս գրելով ինքն փոխեցաւ առ Քրիստոս»[34]։

Ն. Ակինյանը գտնում է, որ այս հիշատակարանը գրվել է 1428 թ.[35]։ Եթե ընդունենք այս կարծիքը, ապա Մանվել Ա-ի և Մանվել Բ-ի անձերի շուրջ առաջ է գալիս շփոթ։ Վիեննայի վերը վկայակոչված թիվ 55 աստվածաշունչը Մանվել Ա-ի պատվերով Սանահինում 1368 թ. արտագրել է Հովհաննես գրիչը և ծաղկել է Մելիքսեթեկ ծաղկողը։ Նման եզրահանգման գալու համար մեզ կռվան են ծառայել հետևյալ փաստերը։ Նախ, 1367 թ. Մանվել Ա-ի ստացած գանձում հիշված են նրա եղբոր որդիները՝ Սարգիսը և Զաքարիան[36]։ Վիեննայի աստվածաշնչի հիշատակարանում ևս հիշված են Զաքարիան և Սարգիսը՝ որպես Մանվելի հարազատներ։ «Զամենաիմաստ եւ զերջանիկ արքեպիսկոպոսն զտէր Մանուէլ, զմեծափափաք տենչմամբ ցանկացող զԱստուածաշունչ տառիս, հանդերձ հարազատովքն իւրովք՝ Զաքարիաիւ եւ Սարգսիւ աղաչեմ յիշել ի տէր»[37]։ Հատկանշական է, որ գրիչը նկատի ունի Մանվել Ա-ին և նրա եղբոր որդիներին՝ Զաքարիային և Սարգսին։ Ապա Մելիքսեթեկ ծաղկողը գրում է, որ այդ թվականին մահացել է Մանվելը, իսկ աստվածաշունչը մնացել է տեր Հովհաննեսի ձեռքում, որն էր «մանուկ գալով հասակաւ եւ լի ամենայն առաքինութեամբ...»[38]։ Հետևապես, 1367—68 թթ. հիշատակարաններ և գանձեր

34 ԺԴ, էջ 484։

35 Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1958, թիվ 10, էջ 372։

36 Տե՛ս «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, էջ 294։

37 «Հանդես ամսօրեայ, 1958, թիվ 10, էջ 373։

38 Նույն տեղում, էջ 372։

գրող Հովհաննեսը չէր կարող 1428 թ. լինել հասակով մանուկ։ Վերջապես, Մելիքսեթեկ ծաղկողը գրել է.

Առնել յիշման զիս արժանի,
Զմեղսամակարթս յոյժ եղկելի,
ԶՄելիքիսեթեկ վա(տ)թարս, մեղօք ի լի,
Որ եմ ծաղկող այսմ տառի։
Նայ եւս էր թիւն տումարին
Ութհարիւր Հայկեան ազգին,
Տինայ է տասն յաւելուածին,
Այլ եւս եւթն շարամանին[39]։

Այսինքն 800+10+7=817+551=1368, այսպես են ընդունել Հ. Տաշյանը, Գ. Հովսեփյանը և Լ. Խաչիկյանը, որը և մենք վերը վկայակոչված փաստերի հիման վրա համարում ենք ճիշտ։ Սակայն Ն. Ակինյանն այս թվականը կարդացել է Ը+Ճ+Է+Ժ+Է 800+70+7=877+551=1428[40]։ «Տինա է Ժ յաւելուածին» տողում «է»-ն մեր կարծիքով էական բայն է, որը Ակինյանը կարդացել է 7, ապա բազմապատկել 10-ով ստացել է 70, որը ճիշտ չէ։ Այս ամենից հետո կարելի է եզրակացնել, որ Մանվել Ա-ն մահացել է 1368 թ.։ Մանվել Ա-ին հաջորդել է Վանական Գ-ն, որի միայն մահվան թվականն է հայտնի։ Թ. Մեծոփեցին և Գ. Խլաթեցին հայտնում են, որ 1387 թ. Լանկ-Թամուրը գրավեց Բջնին և սպանեց Վանական եպիսկոպոսին[41]։

Վանական Գ-ից հետո Բջնիի եպիսկոպոսական աթոռին նստած էր Մանվել Բ-ն, որը դարձյալ Ազիզբեկյաններից էր։ Նա, հավանաբար, Բջնիի եպիսկոպոսական աթոռին է բազմել 1388/90 թ., եղել է նաև Արարատյան թեմի առաջնորդը։ Մանվել եպիսկոպոսը 1405 թ. Երևանում գրած հիշատակարանում իր մասին գրել է.

«Զտէր Մանուէլ՝ համբակ վերջին,

39 ԺԴ, էջ 485։

40 Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1958, թիվ 10, էջ 372։

41 Թ. Մեծոփեցի, նշվ. աշխ., էջ 18—19, ԺԵ, մասն Ա, էջ 275։

Յաջորդ Բջնոյ ու Այրարատին,
Որ ծըրեցի ծայրօք մատին
Չյիշատակաց գիծս վերջին...»[42]:

Ն. Շնորհալու ընդհանրականի 1294 թ. օրինական ձեռագրի վերջում Մանվել Բ-ն 1406 թ. գրել է. «Զանրուժս ի բարեաց եւ զանջեղս ի չարեաց զհանդիպողս այժմ հայրենական եւ կանոնական սահմանադրութեանս, զտեր Մանուէլ նուաստ եպիսկոպոս Բջնո, եւ Այրարադեան նահանգի, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր... Թվ, ՊԾԵ» (1406)[43]:

Մանվել Բ-ի անվանը հանդիպում ենք նաև 1414 թ. Օշականում գրված մի ճաշոցի հիշատակարանում. «...յիշեսջիք ի Քրիստոս զտէր Մանուէլն արհեպիսկոպոս Բջնոյ և Արարատեան, և զտէր Յովհաննէս, որք բազում աշխատութեամբ օգտակարք եղեն աստուածաշունչ տառիս...»[44]:

Թե մինչև երբ ապրեց Մանվել Բ-ն և ինչպիսի գործունեություն ունեցավ, դժվարանում ենք ասել: Ն. Ակինյանը գրում է, որ Մանվել Բ-ն մահացել է 1426/27 թ.[45], սակայն, ինչպես վերևում տեսանք, դա ճիշտ չէ:

* * *

XIV—XV դդ. Հայաստանի տարբեր շրջաններում շարունակում էին իրենց գոյությունը պահպանել հայկական մի քանի իշխանական տների շառավիղները: Արևելյան Հայաստանում այդպիսիներից էին Վաչուտյան երբեմնի հզոր ֆեոդալական տան ժառանգները: XIV դ. սկզբներից Անբերդում իշխել է Քուրդ Անբերդցին, որի իշխանությունը տարածվել է պատմական Արագածոտն գավառի մեծ մասի վրա: Նա սկսել է իշխել հավանաբար Ղազան խանի ժամանակներից[46]: Նրա

42 ԺԵ, մասն Ա, էջ 51:
43 «Հանդես ամսօրյա», 1958, թիվ 10, 372—373:
44 ԺԵ, մասն Ա, էջ 162:
45 Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1958, թիվ 10, էջ 373:
46 Տե՛ս ԺԴ, էջ 270—271:

մասին XIV դ. վերաբերող առաջին տեղեկությունը Ուշի գյուղի եկեղեցու 1329 թվակիր մի արձանագրություն է: Արձանագրություն գրող Հոռոմ երեցն իր տիկնոջ՝ Ուլու խաթունի հետ «ողորմութեամբ պարոն Քուրդին» Հաղարամանի այգին նվիրել են եկեղեցուն[47]: Քրդի մասին հաջորդ տեղեկությունը հանդիպում ենք 1335 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում: Դրա բովանդակությունից պարզվում է, որ Քուրդ իշխանը մեծ դեր է խաղացել երկրի քաղաքական կյանքում և բարձր հեղինակություն վայելել վերջին էլխանների մոտ: Հիշատակագրի վկայությամբ այդ ազդեցության և դիրքի շնորհիվ էր, որ հայոց գավառներն անվնաս են մնացել այն «դառն ժամանակներում»: Նրա ձիերի դոփյունից և նիզակների փայլից,—շարունակում է իր միտքը գրիչը,—սարսափում էին նրա բոլոր թշնամիները: Իր թշնամիների դեմ մղած պատերազմներում նա տարել է բազմաթիվ հաղթանակներ, հսկել է Հայաստանի վրա՝ իբրև առյուծ[48]: Քրդի մասին 1335 թվակիր մի հիշատակարանում կարդում ենք. «...և յամենայն չուք և պատիւ և խիլայ ընդունեալ, պահէր խնամօքն և ողորմութեամբն աստուծոյ զգաւառս և զվաներս ի խաղաղութեան, և այլոց գաւառակցացն բազում կարեկից և օգնական լինէր»[49]: Քրդի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1338 թ.: Նա այս թվականին Կարբի գյուղի եկեղեցում թողել է մի արձանագրություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Թվ. ՉՁէ. ես Քուրդ Անբերդեցի իշխանաց իշխան, որդի Տայիրին, որդոյ Քրդին, թոռն Անբերդեցի Վաչէ իշխանի, առն քաջի եւ պատերազմողի, եւ ամուսին իմ Խուանդ խաթուն, դուստր Ամրպէկին, թոռն Աթարակ Աւագինի, եւ հարազատ որդի մեր Զրքին, տէր Անբերդոյ գաւառիս»[50]: Արձանագրության բովանդակությունն ուշագրավ է

47 Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 164:
48 ԺԴ, էջ 271:
49 Նույն տեղում:
50 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 166:

այն իմաստով, որ Քուրդն իրեն համարում է «իշխանաց իշխան»: Այս տիտղոսը վկայում է Քուրդ իշխանի ազդեցիկ դիրքի և մեծ հեղինակության մասին: Սա Քուրդ իշխանի մասին մեզ հասած վերջին տեղեկությունն է: Ինչպես աղբյուրներն են վկայում Քուրդ Անբերդցին պատվի ու լավ ընդունելության է արժանացել մոնղոլ զորապետների կողմից. «...ես Քուրդ՝ որդի Վաչէի... հաճո եղե(ա)լ այլազգի զաւրացն նետողաց...»: Նույն միտքը հանդիպում է նաև Զաքարիա Քանաքեռցու մոտ[51]:

Քուրդ Անբերդցուն հաջորդել է որդին՝ Թեոդորոսը, Ջրբին մականունով: Թե կոնկրետ ո՞ր թվականին Թեոդորոսը հաջորդեց Քրդին, դժվար է ասել, որովհետև աղբյուրներում այդ մասին ոչ մի հիշատակություն չկա: Հովհաննավանքի 1350 թ. մի արձանագրությունում, որը Թեոդորոսը թողել է վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ, կարդում ենք. «...Ես Թէոդոս մականուն Ջրբին իշխանաց իշխան, որդի անբերդեցի Քրդին իշխանաց իշխանին, որդո Տայիրին, թոռն մեծ Քրդին, արի եւ քաջին Վչէի, զայս հաստատ արձան գրեցաք եւ տվաք ի մեր պապանց հալալ գանձագին հայրենիք՝ ի հանդէն Սերկեւլո ի սբ Կարապետն եւ ի սբ Կաթողիկէն, որ եղե(ա)լ է չիրիմ պարոն հայրն իմ՝ Այբաքատին աէրն»[52]:

Արձանագրությունն ուշագրավ է այն իմաստով, որ Թեոդորոսն իր հորը՝ Քրդին, համարում է Այրարատի տերը: Ըստ երևույթին Քրդի իշխանությունն Անբերդի գավառից բացի տարածվել է նաև Արարատյան գավառի մի մասի վրա: XIV դ. երկրորդ կեսից աղբյուրները Վաչուտյանների մասին պարունակում են շատ սակավ տեղեկություններ, որի հետևանքով այս տոհմի ամբողջական պատմության շարա-

51 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 103, Զաքարիա Քանաքեռցի, նշվ. աշխ., էջ 18:

52 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 92:

դրանքը դժվարանում է: Ինչպես մյուս իշխանական տների, այնպես էլ Վաչուտյանների համար խիստ ծանր հարված են եղել Լանկ-Թամուրի արշավանքները, մանավանդ առաջին արշավանքը, երբ Լանկ-Թամուրի հրոսակներն արյունով ողողեցին ողջ Արևելյան Հայաստանը: Ինչպես վկայում է Սամուել Անեցու շարունակողը, Լանկ-Թամուրը 1386 թ. գրավել է Երևանը, Բջնին, Կարբին, Գառնին, Սուրմարին և Կողբը[53]: Հավանաբար հենց այս ժամանակ էլ Լանկ-Թամուրի կողմից Վաչուտյանների տիրույթները նվաճվել են և, ըստ երևույթին, Լանկ-Թամուրին դիմադրություն ցույց տալու պատճառով նրանց նկատմամբ կաղ բռնակալը գործել է ավելի դաժան: Այս ժամանակներից սկսած Վաչուտյանների մասին հանդիպում ենք միայն անորոշ և կցկտուր տեղեկությունների, որոնք մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ թուլացած Վաչուտյանները, ծվարած Արագածի լանջերին, իրենց գոյությունը շարունակել են նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Այսպես, 1442 թ. Սերկևիլի գյուղում, որը Վաչուտյանների ժառանգական տիրույթն էր, Հովհաննես Թմուկեցի գրիչն իշխան Շալուի պատվերով գրել է մի ձեռագրի հիշատակարան: Գրիչը որպես տեղի իշխաններ հիշատակել է պարոն Ալիբեկին, պարոն Շալուին, պարոն Վաչուտին, պարոն Քրդին և պարոն Սարգսին[54]: Հիշատակված իշխաններից վերջին երեքը հավանաբար Վաչուտյանների հետնորդներն էին, որոնք շարունակում էին գոյատևել իրենց հայրենի Սերկևիլի գյուղում: Նման ենթադրության հիմք են Վաչուտ, Քուրդ և Սարգիս անունները, որոնք Վաչուտյաններին տոհմին հատուկ և ընդունված անուններ էին: Վաչուտյան այս պարոնները տոհմի թուլացած ժառանգներն էին, և այդ պատճառով էլ նրանք հիշատակվել են երկրորդական պլանի վրա: Զաքարիա Ագիգբեկյանը Հովհաննավանքի 1425 թ.

53 Սամուել Անեցի. շարունակող, էջ 171:

54 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 534:

արձանագրությունում իրեն համարում է Գամրիկելի թոռը[55]։ Գ. Հովսեփյանը ճիշտ է նկատել, որ Գամրիկելը Վաչուտյաններից էր՝ Զաքարիայի պապը մոր կողմից[56]։ Ինչպես տեսնում ենք, փաստերը ցույց են տալիս, որ Վաչուտյանները XV դ. շարունակում էին իրենց գոյությունը Արագածոտն գավառում։

* * *

Աղթամարում XII դ. սկզբներին կազմավորվեց Սեֆիդինների իշխանական տունը։ XII դ. սկզբին Աղթամարի կղզին ու կաթողիկոսությունը դարձան Սեֆիդինների ընտանիքի ժառանգական սեփականությունը։ Սեֆիդինի որդի Ստեփանոսից սկսած Աղթամարի կաթողիկոսությունը մինչև XIX դ. սկիզբը տիրում էին այս ընտանիքի ժառանգները[57]։ Անանուն վենետիկցի վաճառականի վկայությամբ Աղթամար կղզում կար մի փոքրիկ քաղաք՝ 600 տուն հայ բնակչությամբ։ Ահա թե Աղթամարի կղզին ինչպես է նկարագրել հիշյալ ճանապարհորդ վաճառականը. «Կղզու... վրա կա մի փոքրիկ քաղաք, երկու մղոն շրջագծով, քաղաքն ունի այնքան տարածություն, որքան կղզին։ Այս քաղաքը կոչվում է Արմենիկ, շատ բազմամարդ և միայն հայ քրիստոնյաններն են բնակվում այնտեղ, առանց ոչ մի մահմեդականի. ունի շատ եկեղեցիներ, բոլորը հայ քրիստոնյաների պաշտամունքի համար։ ...Քաղաքի կամ կղզու դիմաց գտնվում է մի ծովածոց հիանալի մի դաշտով, որն ունի բազմաթիվ գյուղեր՝ բնակված հայ քրիստոնյաներով»[58]։ Աղթամարի կաթողիկոսների իշխանությունը տարածվել է նաև կղզու սահմաններից

55 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 102։

56 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 196։

57 Տե՛ս Ն. Ակինյան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 42։

58 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 300—301։

դուրս։ Խիզանում 1404 թ. Ստեփանոս գրիչը ընդօրինակել է մի ավետարան, որում Աղթամարի կաթողիկոսությունը համարել է նաև թագավորություն. «... ի մերոյ հայրապետութեանս տեառն Դաւթի Ախթամարեցոյ, զոր տէր աստուած պահեսցէ անսասանելի զաթոռ հայրապետական և զթագաւորական»[59]։

XIV դ. սկզբներին Աղթամարի կաթողիկոսական աթոռին նստած էր Զաքարիա Ա Սեֆեդինյանը։ Նա եղբայրն էր Ստեփանոս Սեֆիդինյանի, որին և հաջորդեց։ Ն. Ակինյանը գրում է, որ նա կաթողիկոս էր 1296—1336 թթ.[60]։ Զաքարիա Ա-ն հիշատակված է 1301—1303 և այլ թվականների ձեռագրերի հիշատակարաններում։ 1310 թ. Լիմ անապատում գրված հիշատակարանից իմանում ենք, որ Զաքարիան իր ազգակից Հովհաննես եպիսկոպոս Արծրունու աջակցությամբ հիմքից վերանորոգել է Լիմ կղզու վրա գտնվող սուրբ Գևորգ զորավորի տաճարը. «...ես նուաստ տէր Զաքարիայ վերադիտող Աղթամարայ ի հիմանց նորոգեցաք զտաճարն սրբոյ Գէորգայ զաւրավարին ի Լիմ կոչեցեալ կղզւոջ, աջակցութեամբ Յովհաննէս եպս Արծրունոյ, ազգակցին իմոյ վանահայր սոյն անապատիս»[61]։ Նրա մասին վերջին հիշատակությունը հանդիպում ենք 1336 թ. Խիզանում գրված մի հիշատակարանում[62]։ Հավանաբար Զաքարիային աթոռակից է եղել Ներսեսը, որը 1319 թ. Աղթամարում գրված մի հիշատակարանում հիշված է հայոց հայրապետ. «ի հայրապետութեանս հայոց սուրբ և անբիծ և երջանիկ տեառն Ներսէսի և տեառն Զաքարիայի»[63]։ Զաքարիա Ա-ն մահացել է

59 ԺԵ, մասն Ա, էջ 46։

60 Տե՛ս Ն. Ակինյան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 46։

61 Մեսրոպ Մագիստրոս, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, համ. 133, էջ 24։

62 Տե՛ս ԺԴ, էջ 289։

63 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 4515, էջ 73, ԺԴ, էջ 155։

1336 թ.։ Նույն թվականին Մոկաց գավառի Դաշտ գյուղում գրած հիշատակարանում գրիչ Առաքելն Աղթամարի կաթողիկոս է հիշում տեր Ստեփանոսին. «...ի կաթողիկոսութեան Հայկազեանց ազգի տեառն Ստեփանոսի Աղթամարցւոյ, և ի թագաւորութեան նստեալ ի գահն»[64]։ Զաքարիա Ա-ին հաջորդել է Ստեփանոսը։ Սակայն Հ. Ոսկյանը գրում է, որ Զաքարիայի մահվան թվականը հայտնի չէ[65]։ Վերևում տեսանք, որ 1336 թ. գրված երկու ձեռագիր հիշատակարաններից մեկում կաթողիկոս է հիշված Զաքարիան, մյուսում՝ Ստեփանոսը։ Ուստի Զաքարիան մահացել է 1336 թ., իսկ նրան նույն թվականին հաջորդել է տեր Ստեփանոս Գ-ն՝ 1336—1346 թթ.։ Ն. Ակինյանը 1336 թ. Ստեփանոս Գ-ի կաթողիկոս դառնալու տարին հարցականի տակ է դրել, իսկ մահվան համար գրում է, որ նա մահացել է 1346 կամ 1348 թթ.[66]։ Վերը նշված հիշատակարանից տեսանք, որ Ստեփանոսը Զաքարիային է հաջորդել 1336 թ., հետևապես երկմտելու հարկ չկա։ Իսկ մահվան երկու տարեթիվ ընդունելու հարցում Ն. Ակինյանին ապակողմնորոշել են նրա գերեզմանաքարի արձանագրության տարեթվերի տարընթերցումը։ Գ. Լևոնյանն ընթերցել է ՉՂԵ[67], իսկ Լալայանը՝ ՉՂԷ[68]։ Ահա այդ արձանագրությունը. «Ի թվին ՉՂԵ վախճանեցաւ աղքատասէր հայրապետն մեր տէր Ստեփանոս կաթողիկոս ամենայն հայոց, ազգաւ Արծրունի. Աստուծոյ ողորմութիւն աթոռակից առասցէ ընդ սրբոց հայրապետացն, ամէն»[69]։ Ինչպես տեսնում ենք, Ստեփանոսն իր ծագումով

64 ԺԴ, էջ 288—289։

65 «Հանդես ամսօրյա», 1939, էջ 61։

66 Տե՛ս Ն. Ակինյան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 58—61։

67 Տե՛ս «Բիւզանդիոն» 1900, էջ 1194։

68 Տե՛ս «Ազգագրական հանդես», 1910, էջ 210։

69 Ն. Ակինյան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 61։

Արծրունի է։ Նրա մասին հիշատակություններ ենք հանդիպում 1338 և 1340 թթ.[70]։

Դավիթ Բ-ն՝ 1346—1368 Զաքարիա կաթողիկոսի եղբայր Գուրգենի որդին էր։ Դավիթն ունեցել է երեք եղբայր՝ Ամիր Սահմանդին, Ամիր Գուրջիբեկ և Ամիր Սեֆեդին։ Դավիթը կաթողիկոս է դարձել իր եղբայրների՝ Ամիր Գուրջիբեկի և Ամիր Սեֆեդինի օգնությամբ։ Ն. Ակինյանը գրում է, որ իրեն հայտնի չէ Դավթի ժամանակ գրված հիշատակարան[71]։ Մինչդեռ Դավիթ կաթողիկոսը հիշված է 1354 թ. Աղթամարում Կարապետ գրիչի գրած հիշատակարանում. «Յամին յութհարիւրերորդի և երրորդի թուաբերութեանս Հայոց (1354) գրեցաւ սուրբ աւետարանս... ի հայրապետութեան տէր Դաւթի հայոց վերադիտողի, ի դառն և ի վշտալից ժամանակիս»[72]։

Զաքարիա Բ-ն (1369—1393 թթ.) Դավիթ կաթողիկոսի եղբորորդին էր։ Ն. Ակինյանը ենթադրում է, որ 1376 թ. հիշված Գուրջիբեկը և Մելիք խաթունը նրա ծնողներն են[73]։ Զաքարիա Բ-ի անվանը հիշատակարաններում հաճախ ենք հանդիպում։ Նա հիշատակված է 1370, 1377, 1378, 1385, 1389, 1390, 1391 թթ. գրված հիշատակարաններում[74]։ Վերջին հիշատակությունը կապված է 1393 թ. Զաքարիա Բ-ի նահատակության հետ։ Այս թվականին Գր. Խլաթեցին Ցիպնա վանքում գրել է. «զտէր Զաքարիայն ի յՈստան քարկոծ արարին»[75]։ Զաքարիա Բ-ի նահատակության առթիվ գրած իր ողբում Գր. Խլաթեցին ողբալով նրա եղերական մահը, միաժամանակ գրել է նրա հաջորդի և եղբոր՝ Դավթի մասին։

70 Տե՛ս ԺԴ, էջ 313, 324։

71 Տե՛ս Ն. Ակինյան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 64։

72 ԺԴ, էջ 408։

73 Տե՛ս Ն. Ակինյան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 67։

74 Տե՛ս ԺԴ, էջ 495, 522, 527, 554, 479, 583, 587, 604, 605։

75 Նույն տեղում, էջ 600։

«Շնորհել մեզ հովիւ բարի՝ զհարազատն քո սիրելի,
Զտէր Դաւիթ հոգւովն արի, լի շնորաւք յաջորդ աթոռի»[76]:

Դավիթ Գ-ն՝ 1393—1433 թթ., ինչպես տեսանք Գր. Խլաթեցու «ողբից»՝ Զաքարիայի եղբայրն է: Զաքարիայի և Դավթի եղբայրության մասին գրել է նաև Հովհաննես գրիչը՝ 1400 թ. Խիզանում գրած հիշատակարանում. «Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս... ի մերոյ հայրապետութեան Ռշտունեաց, որ յԱղթամար կղզի՝ տեառն Դաւթի՝ եղբաւրն տեառն Զաքարիայի...»[77]: Դավիթը հիշված է 1404, 1417 և 1420 թթ. գրված հիշատակարաններում[78]: Դավթի մասին վկայությունները շատ են. նա հիշատակվում է 1431 թ.՝ Խիզանցի Ներսես գրիչի կողմից[79]: 1431 թվականին քուրդ Փիրի Բեկը հարձակվել է Աղթամարի վրա և գրավել կղզին, իսկ Դավիթ կաթողիկոսը վանականների հետ փախել է կղզուց[80]: Երկու տարի նա հալածական թափառել է մի վայրից մյուսը, ի վերջո նրան հաջողվել է 1433 թ. նորից վերադառնալ Աղթամար, որտեղ և հենց այդ ժամանակ էլ մահացել է[81]:

Զաքարիա Գ-ն՝ 1434—1464 թթ. դեռևս 1419 թ. հիշված է որպես Դավթին աթոռակից. «...ի հայրապետութեան տէր Դաւթի, և փոքր Զաքարիայի»[82],—գրել է 1419 թ. գրիչ Ստեփանոսը Ռշտունիքի Տալշող գյուղում: Որ իրոք Զաքարիան Դավթին հաջորդել է 1434 թ., վկայում է մի խաչքարի վրա նրա թողած արձանագրությունը. «Թվ ՊՁԳ (Են) Հայոց կաթողիկոս տէր Զաքարիայ կարողութեամբն Աստուծոյ կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հոգւոյն իմոյ»[83]: Զաքարիայի կաթողիկոսության տարիներին Աղթամարի հոգևոր և աշխարհիկ իշխանությունն ավելի քան հզորացավ և ամրապնդվեց: 1459 թ. ռոժիկ քրդերը Սեիդ-Ալու գլխավորությամբ ասպատակել են Գավաշից երկիրը: Նրանք 12 օր մնացել են Ախվանց գյուղում և պատրաստել են երկու լաստանավ՝ Աղթամար մտնելու և կաթողիկոսարանի հարստությունը հափշտակելու նպատակով: Զաքարիա կաթողիկոսը հավաքել է մարդկանց, կռվել քրդերի դեմ, խլել լաստանավերը և նրանց հետ շպրտել Վանա լճի ափերից: Այնուհետև Զաքարիան գնացել է Ջահանշահի մոտ, նրան տեղեկացրել քրդերի կատարած ասպատակությունների մասին և օժանդակություն խնդրել: Ջահանշահն, ընդառաջելով Զաքարիայի խնդրանքին, քրդերին պատժելու մտադրությամբ եկել է Վասպուրական[84]: Այսպիսով, համարձակ և ձեռներեց Զաքարիան կարողացել է վերացնել կաթողիկոսարանին սպառնացող վտանգը: 1460 թ. Ջահանշահի օժանդակությամբ Զաքարիային հաջողվել է գրավել էջմիածնի կաթողիկոսական աթոռը և դառնալ ողջ Հայաստանի հոգևոր առաջնորդը: Օգտվելով իր ունեցած դիրքից ու հեղինակությունից և զորավիգ ունենալով Ջահանշահի հովանավորությունը, Զաքարիան նպատակադրվել էր Վասպուրականում ստեղծել թագավորություն: Որպես թագավորի թեկնածու նա առաջ քաշեց իր եղբոր՝ Գուրջիբեկի որդի Սմբատին, սակայն սրա թագավորության հանդիսությանը, որը տեղի ունեցավ 1465 թ., Զաքարիան չմասնակցեց: Այդ հանդիսությունից առաջ նա մահացել էր: ԺԵ դարի հիշատակարաններում Զաքարիա կաթողիկոսը հաճախ է հիշատակվում: 1460 թ. Աղթամարում գրած հիշատակարանում գրիչ Հովհաննեսը նրան էջմիածնի կաթողիկոս է համարում. «...ի հայրապետութեանն տեառն Զաքարիայի, որ տիրեաց էջմիածնի սուրբ աթո-

---

76 Նույն տեղում, էջ 601:

77 Նույն տեղում, էջ 630:

78 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 46, 47, 199, 238, 247:

79 Նույն տեղում, էջ 412:

80 Տե՛ս նույն տեղում, էջ 433:

81 Տե՛ս Ն. Ակինյան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 74:

82 ԺԵ, մասն Ա, էջ 226:

83 «Հանդէս ամսօրեայ», 1919, էջ 54—55:

84 Տե՛ս ԺԵ, մասն Բ, էջ 117:

ռոյն»[85]։ Իսկ Վանեցի գրիչ Վարդանը 1461 թ. հայտնում է, որ մի տարի է, ինչ Զաքարիան նստած է էջմիածնի կաթողիկոսական աթոռին։ 1462 թ. Զաքարիան կրկին Աղթամարում էր[86]։ 1464 թ. Շատվան գյուղում գրիչ Ատոմը Զաքարիայի մահվան առթիվ գրում է. «...ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, և ի նորընծայ հայրապետիս մերոյ տեառն Ստեփաննոսի...»[87]։ Զաքարիայի մահից հետո էր, որ Սմբատը՝ նրա եղբոր որդին, 1465 թ. օծվեց Վասպուրականի հայոց թագավոր։ Սմբատ թագավորն իր օրապակաս թագավորությամբ, առանձնապես աչքի չընկավ։ Նրա մասին վերջին տեղեկությունը հանդիպում է 1471 թ.՝ Աղթամարում Ներսես արքեպիսկոպոսի գրած հիշատակարանում։ Այս նույն Ներսեսի կողմից 1475 թ. գրված հիշատակարանում Սմբատի անվանն այլևս չենք հանդիպում[88]։

Զաքարիային հաջորդել է Ստեփանոս Դ-ն՝ 1465—1489 թթ.։ Ստեփանոս Դ-ի եղբայրն է Ներսես արքեպիսկոպոսը, որը մի քանի անգամ հիշատակված է նրա հետ։ Ներսես արքեպիսկոպոսը գրում է, որ Ստեփանոսն իր հարազատ եղբայրն է[89]։ Ստեփանոս Դ-ի և Ներսես արքեպիսկոպոսի մասին վերջին հիշատակությունը հանդիպում ենք Աղթամարում Հովհաննես գրիչի գրած հիշատակարանում։ Հովհաննեսը հայտնում է, որ 1489 թ. վախճանվել է տեր Ստեփանոս կաթողիկոսը, որից հետո մի տաճիկ Ներսեսից պահանջել է փոխ տված դրամը։ Ներսեսը մի սուրբ գիրք գրավ թողնելով, գնում է Ոստան դրամ բերելու։ Սակայն երկու տարի հետո՝ 1491 թ., Ներսեսը մահանում է, և սուրբ գիրքը մնում է տաճիկի մոտ։ Հովհաննեսն իր հալալ արդյունքից վճա-

85 Նույն տեղում, էջ 143։

86 Տե՛ս նույն տեղում, էջ 185, 186։

87 Նույն տեղում, էջ 224։

88 Տե՛ս նույն տեղում, էջ 309։

89 Տե՛ս նույն տեղում, էջ 385։

րելով հետ է ստացել սուրբ գիրքը և նվիրել Աղթամարի Ս. խաչին[90]։ Անշուշտ, սխալվում են Ա. Պուտուրյանը և Գ. Հովսեփյանը Ստեփանոսի հաջորդը համարելով Ատոմին։ Ա. Պուտուրյանը գրում է, որ Ստեփանոսը մահացել է 1495 թ.[91]։ Նրանք Աղթամարի կաթողիկոսների ցուցակից դուրս են թողել Զաքարիա Դ կաթողիկոսին։

Ստեփանոսի հաջորդն էր Զաքարիա Դ-ն՝ 1489—1494 թթ.։ Շատվանցի գրիչ Ատոմ քահանան 1489 թ. գրած հիշատակարանում հիշում է տեր Զաքարիա նորընծա կաթողիկոսին[92]։ Այնուհետև նա հիշված է մի քանի հիշատակարանում[93]։ Վերջին անգամ Զաքարիա Դ-ն իբրև հանգուցյալ հիշված է 1495 թ. աղթամարցի գրիչ Թումայի հիշատակարանում. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուա[կանութեանս] Հայոց ՋԽԴ. (1495) ի սուրբ և աստուածաբնակ և աստուածապահ աթոռս Աղթամար կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Փրկչի տաճարիս և սուրբ Գէորգ զաւրավարիս։

Այլ և յանցեալ ամին փոխեցաւ ի Քրիստոս կաթողիկոսն մեր տէր Զաքարիայն, որ իր յարմատոյ և ի ցեղէն մեծ թագաւորին Գագկայ, և եթող մեզ և ամենայն քրիստոնէից սուգ անմխիթար...»[94]։ Հիմք ընդունելով գրիչ Թումայի վկայությունը, որն ապրել է Աղթամարում և Զաքարիայի մահից մեկ տարի հետո է գրել այս հիշատակարանը, չենք կարող համաձայնվել Ն. Ակինյանի և Հ. Ոսկյանի այն կարծիքին, թե Զաքարիան կաթողիկոս էր մինչև 1496 թ.[95]։ Ն. Ակինյանը ենթադրում է, որ Զաքարիան Սմբատ թագավորի որդին էր, Գրիգորիս Աղթամարցու հորեղբայրը և Ստեփանոս կաթողիկոսի հորեղբորորդին[96]։

90 Տե՛ս ԺԵ, մասն Գ, էջ 167։

91 Տե՛ս «Բազմավէպ», 1905, էջ 493, «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 48։

92 Տե՛ս ԺԵ, մասն Գ, էջ 138։

93 Տե՛ս նույն տեղում, էջ 153, 176, 187, 191, 202։

94 Նույն տեղում, [illegible]։

95 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ» 1919, էջ 77, 1939, էջ 67, 68։

96 Նույն տեղում, 1919, էջ 75։

XV դ. վերջին և XVI դ. սկզբին Աղթամարի կաթողիկոսն էր Ատոմը 1494/5—1510 թթ.: Ատոմի կաթողիկոս դառնալու թվականի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ. Ն. Ակինյանը ընդունում է 1496 թ.[97], Գ. Հովսեփյանը՝ 1490 թ.[98], Հ. Ոսկյանը՝ 1496 թ.[99]: Մենք այն կարծիքին ենք, որ Ատոմը կաթողիկոս է դարձել 1494 թ. վերջին կամ 1495 թ. սկզբին: Զաքարիա Դ-ն մահացել է 1494 թ., հետևապես Ատոմը չէր կարող կաթողիկոս լինել 1490 թ., երբ դեռ կենդանի էր Զաքարիան: Գրիչ Թուման 1495 թ. Աղթամարում գրած հիշատակարանում այդ առթիվ գրել է. «Այլ և յանցեալ ամին փոխեցաւ ի Քրիստոս կաթողիկոսն մեր տէր Զաքարիայն, որ էր յարմատոյ և ի ցեղէն մեծ թագաւորին Գագկայ...»[100]: Չենք ընդունում Ն. Ակինյանի, Ա. Պուտուրյանի և Հ. Ոսկյանի կողմից ընդունված 1496 թ., քանի որ Զաքարիան արդեն երկու տարի է ինչ մահացել էր: Ճիշտ է, Ատոմի մասին առաջին հիշատակությունը հանդիպում ենք 1496 թ. Աղթամարում գրված մի հիշատակարանում[101], սակայն կարծում ենք, որ երկու տարի կաթողիկոսական աթոռը չէր կարող թափուր մնալ: Ատոմը որպես Աղթամարի կաթողիկոս հիշատակարաններում հիշվում է բազմաթիվ անգամ[102]:

* * *

Քննարկվող ժամանակաշրջանում բավականին ուժեղ իշխանություն գոյություն ուներ Սասունում: Առայժմ դժվար է սպառիչ խոսք ասել Սասունում գոյություն ունեցող իշխանության տեղի ու դերի մասին: Սակայն մի բան պարզ է, որ հավատարիմ մնալով լեռնաշխարհի մարդկանց ըմբոստ

97 Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1919 թ., էջ 76:

98 Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1930 թ., էջ 48—49:

99 Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1939 թ., էջ 67—68:

100 ԺԵ, մասն Գ, էջ 211:

101 Տե՛ս նույն տեղում, էջ 230:

102 Տե՛ս նույն տեղում, էջ 230, 228, 244, 245, 284:

ոգուն, XV դ. կեսերին այս իշխանության ներկայացուցիչները ակտիվ մասնակցություն են ունեցել օսմանյան թուրքերի դեմ կազմակերպվող դաշնակցային միությանը: Այսպես, 1460—1470-ական թվականներին, երբ ընդդեմ օսմանյան պետության կազմակերպվեց արևմտյան և արևելյան պետությունների ու իշխանությունների դաշնակցային միությունը, նրա վավերագրերում, որպես դաշնակցային միության անդամ, հիշատակված է նաև Սասունի իշխանությունը[103]: Սասունը ոչ միայն անդամագրվել էր այդ միությանը, այլև իր կողմից որպես պատվիրակներ, Լուկարի վկայությամբ, Վենետիկ էր ուղարկել Հեթում և Ռուբեն հայ իշխաններին[104]: Այս փաստերը վկայում են, որ XV դ. Սասունում գոյություն է ունեցել ուժեղ կազմակերպված իշխանություն, որի զինական ուժերը եվրոպական պետությունները ցանկացել են օգտագործել օսմանյան թուրքերի դեմ: Ինչ խոսք, որ Սասունի իշխաններն իրենց հերթին, նկատի ունենալով թուրքերի կողմից սպառնացող վտանգը, շահագրգռված են եղել թուրքերի դեմ միություն կազմելու խնդրում: Մեր որոնումները՝ նոր փաստեր գտնելու Սասունի իշխանության մասին, ցավոք, ապարդյուն անցան:

* * *

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կիսանկախ, բավականին ուժեղ իշխանություն գոյություն ուներ Համշենում[105]: Ինչպես վկայում է Կլավիխոն, XV դ. առաջին կեսին Համշենում իշխել է պարոն Առաքելը[106]: Նա իշխանությունը վարել է մինչև 1422 թ.: Պարոն Առաքելին հաջորդել է Դավիթը, որն առաջին անգամ հիշատակվում է որպես Համշենի

103 Տե՛ս Վ. Տոմաշեկ, Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները, մասն Ա, Վիեննա, Մխիթարյան տպարան, 1896, էջ 57:

104 Տե՛ս նույն տեղում:

105 Այդ մասին տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ XLVII—XLIX:

106 Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 142:

իշխան 1425 թ. գրված մի հիշատակարանում[107]։ Դավիթը իշխանությունը վարել է բավականին երկար։ Նա 1440 թ. Խուժկա վանքում Աստվածատուր դպրի կողմից ընդօրինակված հիշատակարանում հիշատակվում է իր որդու՝ պարոն Վարդի հետ[108]։ Փաստերի խիստ սակավությունը հնարավորություն չի տալիս շարադրելու հայկական այս իշխանության հետագա պատմությունը։ Հավանաբար այս իշխանությունը իր գոյությունը պահպանել է մինչև 1461 թ., երբ թուրքերը գրավել են Տրապիզոնի հունական կայսրությունը։ Ըստ երևույթին, այս ժամանակ էլ Համշենի հայկական իշխանությունը իր անկախությունը կորցրել է։

* * *

XV դ. երկրորդ կեսին Քեղվա ձորում իշխում էին Զաքարիա Հավուց-Թառեցին և սրա տոհմի ազատորդիները, որոնք իրենց համարում էին Գրիգոր Պահլավունու սերնդից սերված։ XV դ. 80-ական թվականներին սրանց կալվածքները բռնագրավվել են Բեյթ-ուլ-մալի կողմից։ Այս շրջանում իշխող Զաքարիա Հավուց-Թառեցի վարդապետը 1489 թ. հինգ հազար սպիտակ արծաթ դինար վճարելով, իր հայրենի տիրույթներից յոթ գյուղ և երկու ագարակ ազատել է բռնագրավումից[109]։ Այս մասին գրված կալվածագրից կարելի է եզրակացնել, որ Զաքարիա վարդապետի ժառանգական կալվածքների սահմանները բավականին ընդարձակ են եղել։ Զաքարիա վարդապետը հանդես է եկել որպես պարոն-տեր և աշխարհիկ իշխանությունը զուգակցելով հոգևոր իշխանության հետ, կառավարել է Հավուց Թառում և նրա շրջակայքում։

107 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 344։

108 Տե՛ս նույն տեղում։

109 Տե՛ս Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ 1-ին, էջ 82—83։

* * *

1424 թ. Սանահինում գրված մի հիշատակարանում հիշատակված են պարոն-տեր Հովհաննեսը և իշխանաց իշխան Զալալին[110]։ Իշխան Զալալին և տեր Հովհաննեսը մահացել են 1432 թ.։ Այս թվականին Տփխիսում գրված հիշատակարանում նրանք հիշատակված են որպես «որդիք պարոն Փաշի»[111]։ Ուրեմն, XV դ. առաջին կեսին Սանահինում և նրա շրջակայքում եղել է հայկական փոքրիկ մի իշխանություն։

* * *

Հոռոմայր գյուղում 1494 թ. գրված մի հիշատակարանից իմանում ենք, որ Լոռիում այդ տարիներին իշխել է պարոն Ղզըր։ Լոռվա իշխանությունն ունեցել է իր դատարանը, որի դիվանապետն է եղել պարոն Դավիթը, հիշատակված է նաև սրա եղբորորդին՝ պարոն Ամիրջանը[112]։ Այս փաստը վկայում է, որ Լոռվա իշխանությունը եղել է կազմակերպված և ամուր։

* * *

1469 թ. Բյուրականում գրված մի տաղարանից պարզվում է, որ այստեղ իշխել է պարոն Բաբաջանն իր կնոջ՝ իշխանուհի Թամարի և իրենց զավակների հետ։ Ըստ երևույթին, Բաբաջանի իշխանությունը բավականին ուժեղ է եղել, ահա թե ինչ է գրում գրիչն այդ կապակցությամբ.

«Որ են թիկունք մեզ ի յերկրի՝
Դէմ այլազգեաց բռնաւորի»[113]։

110 Տե՛ս ԺԵ, մասն Ա, էջ 316։

111 Տե՛ս նույն տեղում, 420—421։

112 Տե՛ս նույն տեղում, մասն Գ, էջ 201։

113 Նույն տեղում, մասն Բ, էջ 288։

Այս կարգի մանր իշխանություններ կային նաև Հայաստանի այլ մասերում՝ Բջնիում, Կեչառիսում, Մակվում և մի շարք այլ վայրերում։ Այս իշխանությունները թեև երկրի քաղաքական կյանքում որոշիչ դեր չէին կարող խաղալ, քանի որ բավականաչափ թույլ էին և զրկված տնտեսական հզորությունից, բայց և այնպես իրենց գոյությամբ հույս էին ներշնչում ազատագրական պայքարի բավիղներում դեգերող բազմաչարչար հայ ժողովրդին։ Դարերի հոլովույթում իր պետականությունը կորցրած հայ ժողովուրդը լեցուն էր հավատով, որ խոշոր ու մանր այդ իշխանությունները ի վերջո կմիաբանվեն, կհզորանան և կիրագործեն նրա վաղեմի երազանքը՝ կստեղծեն հայոց միասնական պետություն։

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաղա խան—183, 293
Աբաս Ճահկեցի, մեծահարուստ—250
Աբդլ-Ազիզ, ամի—109
Աբդուր—Ռեզակ Սամարղանդի, պատմիչ—47, 80
Աբեղյան Մ.—27
Աբրահամ, դրիչ—285, 305
Աբու-Բաքր, Թամուրյան զորապետ—276
Աբու-Սայիդ, իշխան—297
Աբու Սայիդ, որդի Ղարա Յուսուֆի—95
Աբու Սայիդ (Բուսաիդ), Սուլթան—109, 119—121
Աբու-Բաքր, Լանկ-Թամուրի թոռ—276
Աբուքան, նվիրատու—231
Ագիբեկ, որդի Մելիք Բաբաջանի (Փապաջանի)—221
Ազարիա, գրիչ—133, 164
Ազիզ, ավետարան ստացող—316
Ազիզբեկ Ա.—310—313
Ազիզբեկ Բ. Եղվարդյան, որդի Ավագ Բ-ի 312—315, 317—319
Ազիզբեկյան—309, 310, 315, 318, 325
Ազիզբեկյաններ—168, 309, 310, 312, 314, 316—318, 321
Ազիզբէկներ—22, 309, 310
Ազիզյան—317
Ազիկ, Ծարի տանուտերերից—201
Ազիպե—309
Աթաբակ (Իվանե-Աթաբակ), որդի Հասան-Ջալալի—175, 191, 231, 240
Աթաբակ, որդի Ջալալ Բ-ի—201, 236, 239
Աթալմիշ, Լանկ—Թամուրի զորապետ—62
Աթանաս, կաթողիկոս Աղվանից—186
Աթանաս, եպիսկոպոս Դադի վանքի—191—193, 200
Ալեքսանդր Ա, վրաց թագավոր—100, 165, 281
Ալթուն, որդի Վահրամի—204—206
Ալի բեկ, թուրք զորապետ—128
Ալիբեկ, պարոն (Վաչուտյան)—323
Ալի-Զադե Ա.—29, 30
Ալիկե Կուկելտաշ, Շահռուխի զորապետ—91
Ալիշան Ղ.—11, 21, 22, 88, 95, 96, 110, 169, 189, 225, 249, 258, 261, 267, 270, 271, 277, 317, 318, 326
Ալիշաքար բեկ, Ջահանշահի զորապետ—114
Ալվանդ, թոռ Ուզուն-Հասանի—140—145
Ակինյան Ն.—23, 320, 321, 327—330, 333, 334
Ահմադ, թուրք փաշա—125, 126
Ահմադ, Շաքիի կառավարող—80
Ահմադ, Օշտունիքի ամիրա—89
Ահմադ Սուլթան—49, 62, 63, 66, 76, 78, 79, 81, 276, 274
Ահմադ, որդի Ուզուրլու Մահմադի—139, 140, 154
Աղբաստ, որդի Ջալալի—230, 242, 244, 245

Աղբուղա (Պուղիկ), Աղբուղայանների տոհմի նախապապ—215—219
Աղբուղա, որդի Այտինի—213, 217
Աղբուղա, պապ Այտինի—16
Աղբուղա, որդի Հասան Գ. Դոփյանի—54, 201, 203, 204, 239
Աղբուղայան—213, 214
Աղբուղայան-Պուղիկյան—221
Աղբուղայաններ—215—221
Աղբուղներ—208
Աղեկ, որդի Ջալալի—240
Աճառյան Հր.—231, 246
Ամադին, ամն—281
Ամատ, որդի Վահրամ Շահառնեցու—257, 270
Ամբրոսիո Կոնտարինի, ճանապարհորդ—20
Ամիր Ասատ (Ասաֆ), որդի Էաչու—255, 297, 298
Ամիր Գուրջիբեկ, եղբայր Դավիթ Բ կաթողիկոսի—329
Ամիր Հասան, որդի Պառշ իշխանի—192, 193, 288—297, 299
Ամիր Հասան, որդի Էաչու—255, 256, 296—301
Ամիր Հասան, եղբորորդի Ջումայի—303
Ամիր Հասան, որդի Ջալալի—240
Ամիր Շարաֆ (Շարաֆ), Բաղեշի և Խութի ամիրա—55, 60, 111
Ամրպեկ (Ամիրբեկ) Զաքարյան—323
Ամիրջան, պարոն—337
Ամիր Սահմանդին, եղբայր Դավիթ Բ կաթողիկոսի—329
Ամիր Սեֆեդին, եղբայր Դավիթ Բ կաթողիկոսի—329
Ամիր Սուլեյման, որդի Բայազետ I-ի—68
Ամիր Վասակ, եղբայր Ջումայի—303
Այրա-Սուլթան—307
Այվազյան Ա.—39, 45
Այվազովսկի Գ.—67, 68, 126, 128, 129
Այտին, որդի Աթաբակ Գ-ի—246
Այտին, որդի Տուրսունի—204, 207—209, 212, 213, 215—218, 221
Այտինցոց—203, 204
Անա, մայր Չեսարի—268
Անանիա եպիսկոպոս—37
Անանուն Սեբաստացի—15
Աշոտ, ամն—193
Աշուրբեկլի Ս.—29, 30, 39—42
Առանշահիկ տոհմ—39—41
Առանշահիկներ—175
Առաքել, գրիչ—328
Առաքել Հաղբատեցի—298
Առաքել, Համշենի իշխան—335
Առաքել Սյունեցի—275
Առաքելյան Վ.—38
Ասատուր (Աստվածատուր), հայր Շաղումաթի—224, 226, 227
Աստվածատուր, գրիչ—285
Աստվածատուր, գրիչ—336
Ասփա, կին Լիպարիտի—250
Ասփա, կին Գրիգոր Դոփյանի—188—190, 194—198, 210
Ավագ, գրիչ—258, 260
Ավագ, վանքի շինության օժանդակող—258
Ավագ, եպիսկոպոս—209, 323
Ավագ Ա, հայր Աղիգբեկ Ա-ի—310
Ավագ Բ, որդի Աղիգբեկ Ա-ի—312, 313
Ավագ Գ, որդի Աղիգբեկ Բ-ի—312—315, 317, 319
Ավագ Զաքարյան—292, 323
Ավագ պարոն, Պռոշյան—164, 305
Ավագանի, վարդապետ—284, 302, 304, 306
Ավանդուկ, որդի Բանկրիդուլի—219—221
Ավետիս, խաչքար կանգնեցնող—291
Ատոմ, Աղթամարի կաթողիկոս—333, 334
Ատոմ, գրիչ—332, 333
Արալի, որդի Իսկանդարի—90, 95
Արամ, նահապետ—152
Արապշահ, Ջահանշահի զորապետ—107, 109, 113, 114
Արղու խաթուն, կին Վախթանգի—171, 173
Արղու խաթուն, կին Տարսայիճի—250
Արիստակես, Ռստակես, կաթողիկոս—243, 302
Արծրունի—328, 329
Արղութա, որդի Ջալալի—237, 240
Արղութա, որդի Ջումայի—306—308
Արղուն խան—175, 250, 251, 262
Արշուկ Զաքարիա, եպիսկոպոս Բջնիի—319
Արքա, ամն—263

Բաբա խոջա, Կավերգինի ամիր—80
Բաբա Նիկ—75
Բաբայան Լ.—27—29, 157, 185, 228
Բարաչան, որդի Բանկրիդուլի—219, 221
Բարաչան, պարոն—337
Բագրատ V, վրաց թագավոր—52, 63, 273
Բայազետ I Իլդրում—62, 64, 65, 67, 68
Բայազետ II, որդի Մահմադ Բ-ի—127, 129, 133
Բայազետ, որդի Ղարա-Օսմանի—98
Բայանդուր, որդի Յաղուբի—135—139
Բայանդուր (Պայանտուր), հայր Հասան բեկի—302
Բայանդուր բեկ Բիժան Օղլի, Ղոչ Միրզա, Ուզուն-Հասանի զորապետ—122, 133, 135
Բանուհաշ, ամն—181
Բաշու—184
Բարխուդարյան Ս.—16, 171, 187, 188, 194, 210, 213—217, 220, 222—226, 231, 235, 241, 258, 288, 290, 300
Բարխուտարյանց Մ.—23, 169, 171—173, 186, 187, 190, 193, 195, 196, 199, 200, 208, 210—212, 218, 230, 231, 233, 236, 240, 244
Բարսեղ, գրիչ—142, 143, 152
Բարսեղ, եպիսկոպոս—306
Բարսեղ, վարդապետ—272
Բարթոլդ Վ.—29, 30, 79
Բեգում-խաթուն, կին Ջահանշահի—247
Բեկի (Պեկի), որդի Վահրամ Դոփյանի—204—206
Բենիամին—37
Բեշքեն, որդի Ավագ Գ-ի—316, 317

Բեշքեն, որդի Բուրթելի—91, 100, 165, 255—261, 270, 271, 298
Բեշքեն, որդի Սմբատի—274, 275, 277—283
Բիստամ Զագիր, տեր Արտաարբիլի—80
Բորա, կին Ամիր Հասան Բ-ի—300
Բոսֆորտ Կ.—76, 97, 107, 115, 117, 120, 145
Բուդաղ-բեկ—134
Բուղդա, որդի Էլիկումի—252—255, 267, 297
Բունիաթով Զ.—35—37
Բուպա, զորապետ—250
Բուսաիդ խան—267
Բուրթել, որդի Իվանեի (Նանիկ)—270, 273—276, 278
Բուրթել մեծ, որդի Էլիկումի—252—260, 270, 271—275, 284, 285, 289
Բուրթել, որդի Լիպարիտի—267, 268
Բուրթել, վարդագույն տղա—256, 259
Բուրթելյան—26, 249, 285, 304
Բուրթելյանց—253, 277, 285, 303

Գագիկ I, Վասպուրականի թագավոր—334
Գամրիկել, պապ Զաքարիա Աղիզբեկյանի—314, 315, 326
Գավչալ տղա—221
Գեորգի III, վրաց թագավոր—249
Գեորգի VII, վրաց թագավոր—63, 69, 77
Գեորգե, որդի Թամար թագուհու—177
Գոհար խաթուն, դուստր Պողչի—288
Գոնցա, կին Վահրամ Շահունենեցու—257, 270
Գոնցա (Խոնձա), կին Հասան Գ. Դոփյանի—201, 202, 239
Գոնցալիս դե Կլավիխո—19, 60, 68, 72, 76, 148, 158, 165, 335
Գորգի Մելիք, տանուտեր—91
Գորգուն, որդի Իվանեի—270, 272—274, 284, 285
Գրիգոր, գրիչ—92
Գրիգոր, գրիչ—106
Գրիգոր, գրիչ—130
Գրիգոր, գրիչ—253
Գրիգոր, գրիչ—275
Գրիգոր Ախալցխացի—273, 278
Գրիգոր, դատավորակ Աթանասի—193
Գրիգոր, ճգնավոր—296
Գրիգոր, նվիրատու—231
Գրիգոր, ոմն—300
Գրիգոր, տնտես—191
Գրիգոր, քահանա—211
Գրիգոր քահանա, եկեղեցի կառուցող—196
Գրիգոր Անավարդեցի, կաթողիկոս—293
Գրիգոր, կաթողիկոս Աղվանից—210
Գրիգոր Գետաբարեցի, առաջնորդ Խաթրավանքի—233, 235
Գրիգոր, եղբայր Հասան Հաթերքցու—171
Գրիգոր, եպիսկոպոս Հաղբատի—178—181
Գրիգոր Մակվեցի, կաթողիկոս—252
Գրիգոր Մոնոնիկ, վարդապետ—177
Գրիգոր, որդի Վախթանգի, թոռ Հասան Հաթերքցու—171, 173
Գրիգոր, եղբայր Հասան Հաթերքցու—171
Գրիգոր Տաթևացի—6, 9, 275
Գրիգոր Տուտեորդի—177, 179
Գրիգոր (Գրիգորիս) վարդապետ, Ներքին Հոգեգավակ—176, 178—182
Գրիգոր, վարդապետ Բերդավանքի—272
Գրիգոր Ա, որդի Հասանի և Դոփի—170, 172, 178, 182—187
Գրիգոր Բ, որդի Հասան Բ Դոփյանի—186—199, 202, 264
Գրիգոր Դ, որդի Հասան Գ. Սարեցու—201
Գրիգոր, որդի Վահրամի, թոռ Հասան Գ-ի—203—206, 210, 236, 238
Գրիգոր Խլաթեցի (Ծերենց)—10, 11, 49, 52, 54, 64, 71, 84, 86—88, 90, 200, 201, 321, 329, 330
Գրիգորիս Աղթամարցի—333
Գրիգորիս, որդի Սակոի—174, 175
Գրիգորիս, եպիսկոպոս—223
Գրիգորյան Գր.—28, 29, 249, 252, 259, 260, 262, 264—266, 269, 271—274, 277, 283, 306, 307
Գրյագնևիչ Պ.—97
Գուլար, թուրքմեն զորապետ—136
Գուլադա, որդի Թումայի—226
Գուրգեն, հայր Դավիթ Բ Աղթամարի կաթողիկոսի—329
Գուրջիբեկ, հայր Զաքարիա Բ Աղթամարի կաթողիկոսի—329
Գուրջիբեկ, եղբայր Զաքարիա Գ Աղթամարի կաթողիկոսի—331
Գեորգ, գրիչ—54
Գեորգ, ոմն—178, 180

Դադյան Խ.—23, 208, 241
Դանիել, գրիչ—149
Դավթակ քերթող—44
Դավիթ Ա, Աղթամարի կաթողիկոս—317
Դավիթ Բ, Աղթամարի կաթողիկոս—329
Դավիթ Գ, Աղթամարի կաթողիկոս—329, 330
Դավիթ, գրիչ—132
Դավիթ, գրիչ—92
Դավիթ, գրիչ—163
Դավիթ, գրիչ—285, 302—304
Դավիթ, Համշենի իշխան—335, 336
Դավիթ Մերդինցի—15, 103, 107
Դավիթ, որդի վրաց Բագրատ V թագավորի—63
Դավիթ, պատրոն—288
Դավիթ, պարոն—397
Դավիթ, պարոն—224
Դավիթ, վարդապետ Վերին Նորավանքի—263
Դավիթ Քոբայրեցի—117
Դավուդ փաշա—127
Դեղ, խաչքար կանգնեցնող—291
Դեղկ, հայր Մխիթարի—290
Դովլաթ, դուստր մելիք Ղուկասի—218, 219
Դոփ, կին Հասան Ա-ի—169—175, 178—180, 182—184, 186, 190, 191, 198, 200, 201, 239
Դոփ, կին Վարդանի—268
Դոփյան—16, 168—170, 181, 184, 186, 195, 199, 201, 203—206, 208, 209, 211,

212, 214—216, 218, 221, 230, 234—236, 239
Դոփյաններ—168, 171, 174, 175, 182, 189, 212, 213, 216—218, 222, 228, 230, 234, 236, 238, 307
Դոփյանք—23

Եզդի, պատմագիր—48
Եզդի, Վանի և Ոստանի ամիր—56, 62
Եզդի, Ռշտունիքի ամիր—76
Եզդինշեր, Ոստանի ամիր—137
Եղիա, Գանձասարի առաջնորդ—229, 240
Եղիշ, հայր Փիրհամզայի—222, 223
Եղիշ արքեպիսկոպոս, որդի Սըմբատ Օրբելյանի—284, 285, 303, 304
Եսայի, կաթողիկոս Աղվանից—169, 170, 208, 210, 211
Եսայի Նչեցի—257, 265
Եվագր Թագավոր—37
Երեմիա Հայրապետ—37
Երեմյան Ս.—27, 28, 41, 95, 156, 161, 165
Երիցյան Ալ.—179

Զազա, Հասան Ջալալյան իշխանազուն—235—239
Զահիր բեկ, թուրք—144
Զաքարե, հայր Սարգիս Հաղպատեցու—181
Զաքարե, որդի Սարգիս Հաղպատեցու—170, 177—182, 184
Զաքարիա Ա Սեֆեդինյան, կաթողիկոս Աղթամարի—327—329
Զաքարիա Բ, կաթողիկոս Աղթամարի—57, 329, 330
Զաքարիա, Գ, կաթողիկոս Աղթամարի—109—112, 302, 330—332
Զաքարիա Դ, կաթողիկոս Աղթամարի—333, 334
Զաքարիա, կաթողիկոս Աղվանից—210
Զաքարիա, գրիչ—130
Զաքարիա, գրիչ—304
Զաքարիա, եղբայր Թուղթանի—270
Զաքարիա, հայր Բորա իշխանի—300
Զաքարիա, որդի Ակիգրեկ Բ-ի—313—315, 319, 325, 326
Զաքարիա, որդի Ավագ Բ-ի—312, 313
Զաքարիա, եղբորորդի Բջնիի Մանվել Ա-ի—319, 320
Զաքարիա, Հավուց-Թառեցի—336
Զաքարիա Քանաքեռցի—309, 310, 324
Զաքարյաններ—176, 179, 182, 184, 216, 249, 310, 318
Զեյնալ, որդի Ուզուն-Հասանի—127, 129
Զոհրապ, որդի Փիրհամզայի—223
Զուլալյան Մ.—28, 29, 57, 60, 65, 129

Էաշի, որդի Ամիր-Հասան Ա-ի—192, 193, 255, 288—300
Էաշի, որդի Ամիր-Հասան Բ-ի—299, 301
Էլեգան, եղբայր Զազայի—237
Էլեգում, եղբայր Զազայի—237
Էլիկում Ա—249, 250, 263
Էլիկում, որդի Տարսայիճ Օրբելյանի—250—254, 262, 266, 289, 293
Էլիկում, որդի Լիպարիտի—268
Էլթուն, խորթ մայր Ստեփաննոս եպիսկոպոսի—271
Էլխութլ, կին Ամիր Ասափի—298
Էֆենդիև Օ.—35, 36

Թաթուն, դուստր Քուրդ Ամբերտցու—202
Թահերթեն, Երզնկայի իշխան—60, 67, 148
Թաձեր, կին Ամիր-Հասանի—193, 288, 291, 294, 295
Թամար, թագուհի—177, 179
Թամար, մայր Ակիգրեկ Ա-ի—310
Թամար, իշխանուհի—337
Թամթա, կին Էլիկում Բ-ի—252
Թամուրյաններ—10, 32, 75, 91, 95, 100, 103, 106, 108, 112, 117, 119—121, 124, 279
Թանկրիղուլ, որդի մելիք Ղուկասի—214—221
Թարխան Օղլի, Ջահանշահի զորապետ—104, 105
Թեփնենք—309
Թեոդորոս Չորին, որդի Քուրդ Ամբերտցու—323, 324
Թոխթամիշ—49—52, 59, 61, 62, 72, 200, 211, 235, 272
Թոմա, որդի Թումայի—226
Թովմա, աբեղա—209
Թովմա Մեծոփեցի—6, 9, 10, 24, 31, 49, 51, 52, 55—62, 69—71, 76, 77, 79, 82—87, 89—91, 93—103, 149, 160, 163, 165, 273, 276, 277, 281, 321
Թովմա Սյունեցի—201—203, 236, 238
Թորոս փիլիսոփա, գրիչ—266
Թուկլուղ-Թամաար, Մավերաննահրի կառավարիչ—48
Թուղթան, կին Ամատա Շահուռնեցու—260, 269, 270
Թուղաիկ, կին Էաշու—299, 301
Թումա, գրիչ—71, 160
Թումա, գրիչ—57, 70, 149, 150, 333, 334
Թումա, գրիչ—275, 279
Թումա, եղբայր Շաղուպաթի—226
Թումա, Սյունեվանքի երեց—279
Թումա Մինասենց, գրիչ—13, 88—90, 103, 150, 162
Թումանբեկ, որդի Ջումայի—303
Թումաշա, գրիչ—107

Իբն Արաբշահ—47, 48, 63—66, 69, 71, 72
Իբրահիմ, Բաղեշի կառավարող—122
Իբրահիմ I, շիրվանշահ—39, 61, 69, 75, 78—81
Իբրահիմ Ակյա սուլթան, բայանդուր ցեղի առաջնորդ—137—144, 165
Իբրահիմով Ջ.—29—34, 155
Իգնատիոս, վարդապետ—177
Իլյաս, Մավերաննահրի կառավարող—48
Ինանիկ—285, 302
Իսա Մուսա, որդի Բայազետ I սուլթանի—68
Իսկանդար—10, 13, 27, 85—100, 118, 150, 162, 163, 279, 282, 283

Իվանե Աթաբակ — տե՛ս Աթաբակ Իվանե
Իվանե աթաբակ Զաքարյան — 179, 173, 174, 177—180, 182, 184, 250, 292
Իվանե ամիրսպասալար — 249
Իվանե, եղբայր Տարսայիճի — 250, 262, 268
Իվանե, որդի Լիպարիտ I-ի — 249, 263
Իվանե, Իվանիկ, Նանիկ, որդի Բուրթելի — 51, 255—261, 270—273, 275, 284, 285, 298
Իվանե, հայր Թուղթանի — 270

Լազար, Սերբիայի թագավոր — 67, 68
Լազարբեկ, որդի Ջումայի — 303
Լալայան Ե. — 23, 189, 225, 328,
Լանկ-Թեմուր — 7, 9, 10, 11, 15, 19, 21, 23, 25, 28—32, 39, 40, 47—49, 51—74, 76, 81, 97, 147, 148, 156, 157, 159, 161, 165, 168, 200, 211, 218, 234, 235, 261, 270, 273, 276, 301, 302, 321, 325
Լիպարիտ, որդի Էլիկում Ա-ի — 192, 249, 250
Լիպարիտ, որդի Իվանեի, հայր Հովհաննես Օրբելի — 250, 262, 263, 266—268, 295
Լիպարիտյաններ — 269
Լողմադան, Լանկ-Թեմուրի զորապետ — 55
Լուկար, եվրոպացի հեղինակ — 335
Լևոնյան Գ. — 328

Խաթուն, կին Էլիկումի — 250
Խալիդ իբն Եզդի, Շիրվանի կառավարող — 42
Խալիլ (Միրզա Խալիլ), որդի Միրանշահի — 68, 74
Խալիլ, որդի Ուզուն-Հասանի — 127
Խալիլուլլահ I, շիրվանշահ — 85, 95
Խալկ Կոնդիլես, ճանապարհորդ — 65
Խաղբակյանք — 22, 169, 170, 191, 249, 270, 287—289, 293, 294, 296, 297, 298, 301, 306
Խաղբակյաններ — 170
Խաղբակյանց — 289
Խայսում, որդի Խալիդ-իբ Եզդիի — 42
Խանդեմիր — 189
Խաչատուր, գրիչ — 164
Խաչատուր, գրիչ — 107
Խաչատուր, գրիչ — 317
Խաչատուր երեց — 284
Խաչատուր Կեչառեցի — 190
Խաչիկյան Լ. — 11—13, 25, 26, 57, 80, 81, 87, 96, 105—107, 115, 131, 153, 199, 207, 209, 249, 253, 257—259, 264, 271, 272, 277, 285, 303, 307, 317, 321
Խաս Մուրադ փաշա, թուրք զորապետ — 127, 128
Խաս Ասլան, հայր Վախվախի — 310
Խիմշե, որդի Աթաբակ Գ-ի — 246
Խուանդզե, կին Ջումայի — 298
Խուանձա, կին Թանկրիղուլի — 219
Խոշանդզա (Գոնցա), կին Շահնշահ Զաքարյանի — 311
Խոյզան, ամի — 231
Խոջա Միրաք — 124, 305
Խոսրովիկ, հայր Գոնցայի — 257
Խորիշահ, կին Հասանի — 187
Խորիշահ, կին Զաքարի — 268
Խուանդ խաթուն, կին Քուրդ Ամբերդցու — 323
Խուդաբանդա — 196, 254
Խութլուբեկ, նվիրատու — 231
Խութլուբեկ, նվիրատու — 296
Խութլուշահ, Ղազան խանի զորավար — 295
Խուտայբախշ մելիք, հայր Խոնձաթի — 219

Ծեր Ահմադ, Շաքիի կառավարիչ — 75

Կախիկ վարդապետ — 272
Կայմուրաս, որդի Իբրահիմ I-ի — 78, 79
Կատերինո Զենոն, ճանապարհորդ — 20, 124—126
Կարապետ, գրիչ — 53, 70, 97
Կարապետ, գրիչ — 102, 109
Կարապետ, գրիչ — 297
Կարապետ, գրիչ — 329
Կարապետ, գրիչ — 149
Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան — 23, 169, 190, 191, 195, 199, 201—203, 205—209, 212, 213, 215, 221, 222, 228, 229
Կարապետ, կրոնավոր — 56
Կիրակոս Գանձակեցի — 44, 177, 184, 229
Կիրակոս Ռշտունեցի, ժամանակագիր — 15
Կիրակոսյան Գ. — 163, 181, 210, 229, 258
Կյուրիկե, թագավոր — 171
Կոմնենոսներ — 123
Կոնստանդ, նվիրատու — 232
Կոնստանդին, վրաց թագավոր, Բագրատ V որդի — 63, 80—82
Կոստանդին, վրաց թագավոր — 138, 277
Կոստանյանց Կ. — 16, 23, 179, 239, 242, 244, 246, 317, 318, 323
Կորյուն, գրիչ — 255, 256
Կուլաղա, որդի Թումայի — 226
Կուկա, որդի Բեշքեն Օրբելյանի — 270

Հախնազար, որդի Թումայի — 226
Հակոբ, գրիչ — 51
Հակոբ, գրիչ — 120
Հակոբ, գրիչ — 145
Հակոբ, գրիչ — 274
Հակոբ, Ապիրանեցի, գրիչ — 78
Հակոբ հայրապետ — 288
Հակոբ Նաքարեց, գրիչ — 144
Հակոբյան Թ. — 61
Հակոբյան Հ. — 19, 38, 60, 68, 69, 72, 76, 123, 125—131, 145, 158, 165, 321, 335
Հակոբյան Վ. — 15, 27, 28, 100, 101, 105
Հաղբակ, Ջումայի եղբորորդի — 303
Հաղբակյանց — 294—295
Համդալլահ Ղազվինի — 156
Համզա, որդի Ղարա Օսմանի — 87
Հայկազ պարոն, Ջումայի եղբորորդի — 164, 303, 305
Հայկազունի — 40
Հաջի բեկ, թուրք ցեղապետ — 93
Հաջի բեկ, ասպատակող — 318
Հասան Ա, ամուսին Դոփի — 169—173, 175, 176, 178—180, 182—184
Հասան Բ, որդի Գրիգորի — 185—192, 194—196, 200, 230
Հասան Գ. Ծարեցի — 10, 54, 199—206, 208, 230, 234, 239

Հասան Դ.—200, 204—206, 210
Հասան, Հաթերքի իշխան—171, 173, 175, 193
Հասան, եղբայր Թուղթանի—270
Հասան, որդի Վահրամ Ճահուկենցու—270
Հասան, պապ Դոնցայի—257
Հասան-Ալի, որդի Ջահանշահի—109, 112, 114, 118—120, 212
Հասան-Դոփյան տոհմաճյուղ—195
Հասան-Ջալալ-Դոլա—175, 190, 191, 228, 229, 233, 234
Հասան-Ջալալյան—16, 229, 235, 245, 248
Հասան-Ջալալյաններ—168, 175, 209, 228, 229, 231, 232, 234, 236, 238, 240
Հաֆեզ Աբրու—47
Հեթում, Սասունի իշխաններից—335
Հեղինե, կին Թումայի—226
Հենրիխ Գ., Կաստիլիայի թագավոր—19, 72
Հերովդես—131
Հիմաթ, Արճեշի ոստիկան—61
Հոհան, ամն—191
Հոռոմ, երեց—323
Հովհան Որոտնեցի—6, 10, 50, 51
Հովհաննես Արծրունի, եպիսկոպոս—327
Հովհաննես, Արճեշի տանուտեր—94
Հովհաննես, գրիչ—331, 332
Հովհաննես, գրիչ—97
Հովհաննես, գրիչ—148
Հովհաննես, գրիչ—101—103
Հովհաննես, գրիչ—151
Հովհաննես, գրիչ—135, 138
Հովհաննես, գրիչ—319, 320, 321
Հովհաննես, գրիչ—12
Հովհաննես, գրիչ—77
Հովհաննես, գրիչ—69, 77, 149, 330
Հովհաննես, գրիչ—85
Հովհաննես, գրիչ—277
Հովհաննես, գրիչ—255
Հովհաննես, գրիչ—288, 291
Հովհաննես, գրիչ—322
Հովհաննես, եղբայր Թուղթանի—270
Հովհաննես, եպիսկոպոս, եղբայր Հասան Ա-ի—172, 174—177
Հովհաննես, եպիսկոպոս, որդի Դոփի—178, 182
Հովհաննես, եպիսկոպոս, որդի Գրիգորի—185, 186, 196
Հովհաննես, եպիսկոպոս Գեղարդի—164, 302—306
Հովհաննես, եպիսկոպոս Տաթևի—279
Հովհաննես Բժնկեցի, գրիչ—325
Հովհաննես, կաթողիկոս Աղվանից, որդի Ջալալի—209, 240—242, 247, 248
Հովհաննես, կուսակրոն աբեղա—243
Հովհաննես, հայրապետ Աղվանից—233
Հովհաննես Մանկասարենց, գրիչ—113, 120
Հովհաննես, որդի Աղիգրեկ Ա-ի—312
Հովհաննես, որդի Չեսարի—268
Հովհաննես, պարոն-տեր—337
Հովհաննես, քահանա—162
Հովհաննես Օրբել—259, 262—265, 267, 297, 299
Հովհաննիսյան Աշ.—27, 28, 102, 157, 162, 209, 210, 246, 247
Հովնաթան, Մաշտոցի աշակերտ—37
Հովսեփ, գրիչ—103, 149
Հովսեփ, գրիչ—130
Հովսեփյան Գ., Գարեգին Ա. կաթողիկոս—22, 169, 170, 184, 186, 191, 233, 234, 249, 250, 265, 266, 269, 270, 287—290, 293—299, 301, 306, 309, 310, 312, 314, 316, 318, 321, 326, 333, 334
Հուլավու, խան—185, 293
Հունան, գրիչ—256, 293
Հուսեյն Ալի, եղբայր Իսկանդարի—118
Հուսեյն Կազագան, Մավերաննահրի կառավարողներից—48

Ղազան խան—251, 293—295, 333
Ղազունք—303
Ղասում, որդի Թանկրիղուլի—220
Ղասում բեկ, Ամիդի և Մերդինի կառավարող—142, 143, 154
Ղասում բեկ, Յարբի կառավարող—140
Ղասումջան, որդի մելիք Բարաջանի—221
Ղվարղվարե, վրաց պարոն—138
Ղարա Գրիգոր—169, 200
Ղարա Մահմադ, կարա-կոյունլու ցեղի առաջնորդ—55, 68
Ղարա Յուլուք Օսման (Ղարա Օսման, Օթման), ակ-կոյունլու ցեղի առաջնորդ 78, 83, 85, 87, 90, 92, 93, 97, 98, 276
Ղարա Յուսուֆ, կարա-կոյունլուների առաջնորդ, որդի Ղարա Մահմադի 10, 15, 35, 39, 55, 59, 61—63, 66, 76—87, 97, 149, 150, 162, 203, 273, 276—278
Ղափադարյան Կ.—16, 27, 28, 176—179, 182, 314, 316, 324, 326
Ղըր, պարոն—337
Ղլիճ-Ասլան, Վանի կառավարող—109, 110, 150
Ղրիմեցի Հ.—179
Ղուկաս (Մելիք Ղուկաս)—213, 216—220

Ճար, որդի Ումեկի—151
Ճնտոյան Ն.—23

Մաթե, վարդապետ—235
Մաթեոս, գրիչ—315—317
Մաթևոս վարդապետ—288, 289—292, 295
Մաթևոսյան Ա.—252
Մահմադ Բ (Չթախ, խոփանդբար), Թուրքիայի սուլթան—121, 123, 125—129
Մահմադ, եղբայր Ջահանգիրի—159
Մահմադ, թոռ Ուզուն-Հասանի—135, 136
Մահմադ Միրզա, որդի Ջահանշահի—105
Մահմադ սուլթան, թոռ Լանկ-Թամուրի—68
Մամա, կին Հասան Հաթերցու—171
Մամախաթուն, կին Էաչուի—296, 297
Մամեդովա Ֆ.—42—45
Մամքան, կին Ամիր Հասանի—192, 193
Մամքան, կին Գրիգոր Դոփյանի—185, 186
Մամքան, կին Հասան Բ-ի—187, 189, 190, 192—195, 197

Մամքան, դուստր Տարայիճի—250
Մանանդյան Հ.—24, 25, 50, 51, 55, 59, 62, 63, 66, 67, 69, 73, 169, 179, 1[illegible]
Մանսա, ան[illegible]—223
Մանվել արեգա—203, 210, 211
Մանվել Ա, եպիսկոպոս Բջնիի—312, 318—321
Մանվել Բ, եպիսկոպոս Բջնիի—318, 320—322
Մանվել Գ, որդի Ավագ Գ-ի—318, 315—317
Մատթեոս, գրիչ—316, 317
Մատթեոս Դ, կաթողիկոս Աղվանից—246
Մատթեոս Մանուչե, գրիչ—237, 277
Մատթեոս, վարդապետ—76, 81
Մարգարե, վարդապետ—181
Մարտիրոս, տանուտեր—50
Մյուրսուզ բեկ, որդի Ուզուն-Հասանի—132, 135
Մելիք, որդի Եզդի ամիրայի—76
Մելիք խաթուն, մայր Զաքարե Բ-ի—329
Մելիք Աշրաֆ—318
Մելիք-Ասադ, Վանի կառավարիչ—89
Մելիք, որդի Սալտանի—245
Մելիք բեկ, որդի Միրզաջանի—218, 222
Մելիքբեկ, որդի Ղուկասի—219
Մելիք-Մահմադ, Ավրեյի կառավարիչ—88
Մելիք Շահանդարյանք—28
Մելիքսեթ, գրիչ—130
Մելիքսեթ, գրիչ—138
Մելիքսեթ, ծաղկող—320, 321
Մելիքսեթ եպիսկոպոս, որդի Միրզաջանի—222
Մելիքսեթ-Բեկ—280
Մելիքսեդեկ, գրիչ—277
Մեհդի, իմամ—305
Մեհրապ, որդի Արղութայի—240
Մեչլիս, որդի Ուլուբեկի—240
Մեչլիս, հայր Ուլուբեկի—35
Մեսիհ, որդի Ուզուն-Հասանի—135, 136
Մեսրոպ Մագիստրոս—327
Մեսրոպ Մաշտոց—37, 169, 255, 327
Մեսրոպ, քահանա—196
Միհրական (Միհրան յ ա ն ն ե ր) տոհմ—40
Միհրյան, Միհրանյանների տոհմի նահապետ—40
Մինա, նվիրատու—231
Մինա խաթուն, կին Վահրամ Շահոնենցու—299
Մինա խաթուն, կին Տարայիճի—169, 170, 249, 250
Մինախաթուն, նվիրատու—231
Մինորսկի—107
Միրանշահ—52, 53, 61—63, 68, 74, 75, 77, 78
Միրանշե, պապ Շաղուպաթի—224, 227
Միրանշենց, տոհմ—224, 227
Միրզա, պապ Փիրհամզայի—222
Միրզա-Աբու Բաքր, որդի Միրանշահի—75—77
Միրզա Իբրահիմ, Թամուրյաններից—108
Միրզա Խալիլ, որդի Ուզուն-Հասանի—132
Միրզա Յուսուֆ, Ուզուն-Հասանի զորավարներից—126
Միրզա Ռուստամ, Ռուստամ փադիշահ—135—139
Միրզա Օմար, որդի Միրանշահի—74, 75, 77, 273, 274
Միրզաբեկ—245
Միրզալի, որդի Տուրսունի—240, 245, 246
Միրզաջան (Միրզա), ամուսին Դովլաթի—218, 222
Միրխոնդ—47
Միքայել Մոնոզոն, գրիչ—81
Մխիթար, գրիչ—134
Մխիթար, գրիչ—92
Մխիթար Գոշ—177
Մխիթար, Դեղկա որդի—230
Մխիթար քարտնապետ—278
Մխիթարյան—335
Մկդեմ, որդի Պողշի—288
Մկրտիչ, գրիչ—13
Մկրտիչ, գրիչ—116
Մկրտիչ, գրիչ—153
Մնացականյան Ա.—271, 272
Մոծանկենք—309
Մովրի—252, 256
Մովսես, գրիչ—116, 122, 125, 136, 137
Մովսես, գրիչ—275
Մովսես, գրիչ—279
Մովսես Կաղանկատվացի—37—40, 44
Մուղաֆարյան Շահ Մանսուր—59
Մութավարրիլ խալիֆ—42
Մուրին աղ-դին Նատանզի, պատմագիր—47
Մուհամադ, որդի Ջահանշահի—117
Մուհամադ, թոռ Ուզուն-Հասանի—143, 145
Մուհամմեդ Իբն Հինդուշա Նախիջևանի—159
Մուհամմեդ-Փահլավ, Ատրպատականի կառավարողներից—249
Մումինով Ի.—29—31
Մուստաֆա, որդի Բայազետ I—68
Մուստաֆա, որդի Մահմադ Բ-ի—125, 126, 127, 129
Մուրադ, Արծկեի տանուտեր—94
Մուրադ, որդի Յաղուբի—140—143, 145, 146, 153, 307

Յակուբովսկի Ա.—29, 30, 48, 62
Յաղուբ, ակ-կոյունլուների առաջնորդ 13, 132—135, 140, 141, 152—154, 248, 304
Յասայի բեկ, եղբայր Յաղուբի—135
Յար-Ալի, եղբայր Յուսուֆի—12
Յար Ահմադ, կարամանլու ցեղի առաջնորդ—75
Յուսուպշե, եղբայր Փիրհամզայի—223, 224
Յուսուֆ, Ուզուն-Հասանի զորապետ—124

Նաթիլ, դուստր Վահրամ Շահոնենցու—270
Նանա, դուստր Սարգիս Զաքարյանի—180, 181
Նանա, մայր Հովհաննես Օրբելի—263
Նավռուզ—295
Նեռ—70, 71
Ներսեհ, իմն—191
Ներսես, առաջնորդ Գանձասարի—242, 244—246
Ներսես արքեպիսկոպոս, եղբայր Ստեփանոս Դ-ի—332
Ներսես, գրիչ—310—313
Ներսես, հայրապետ Աղթամարի—327
Ներսես Շնորհալի—322
Նիզամ-ադ-դին Շամի, պատմագիր—47

Նովրասեյցի Ա.—29, 30, 48, 78
Նչրիս, դուստր Սարգիս Զաքարյանի—179—181
Նուրալի բեկ, Դիարբեքիրի ամիր—137

Շալուռ, իշխան—325
Շահ, որդի Սմբատ Օրբելյանի—277—279, 281
Շահ-Ալի, փառնակ ցեղի առաջնորդ—135
Շահ Իսմայիլ—145, 146
Շահխաթունյանց Հ.—23, 169, 171—173, 196, 197, 203, 204, 206, 207, 210, 211, 222, 224, 231, 235, 244, 317
Շահ-Կուրաղ, որդի Իսկանդարի—99
Շահնազարյան Ա.—28, 29, 179
Շահնշահ Զաքարյան—311, 318
Շահնշեն (Շահշե), որդի Հասան Գ-ի—54, 201, 203—207, 213, 215, 239
Շահնշեններ—208
Շահռուխ (Միրզա Շահռուխ), որդի Լանկ-Թամուրի—10, 15, 68, 74, 75, 77, 83—87, 91, 92, 95—100, 103, 106, 163, 208, 280, 283
Շահումենց, իշխանական տուն—269, 270
Շահսուլթան, կին Աստվածատուր աղայի—224—226
Շաղուպաթ Անեցացի, Գավառնեցի—224—226
Շամի, պատմագիր—48
Շամս—ադ-դին, Բաղեշի և Խլաթի կառավարող—76, 89
Շապուհ, հայր Մանվել Ա-ի—318, 319
Շարաֆ—խան-Բիթլիսի—57, 62, 63, 76, 77, 85, 122
Շեյխ Իսմայիլ—տե՛ս Շահ Իսմայիլ
Շեյխ Հեյդար—134, 138
Շերեֆ ադ-դին Եզդի, պատմագիր—47
Շիրվանշահ Մազյադիդներ—42
Շիրվանշահեր—35, 39, 41, 42
Շմավոն, գրիչ—289, 292, 293
Շմավոն, վարդապետ Անգեղակոթցի—18, 248, 280, 281, 283
Շրվան, որդի Հասան Գ-ի—54, 201, 203, 236, 239

Ոսկյան Հ.—23, 328, 333, 334
Որդի Ալեքսանի, գրիչ—70

Չալապի, որդի Փաշայի—337
Չամչյան Մ.—21, 50, 57, 83, 84, 86, 89, 96, 110
Չեսար, որդի Լիպարիտի—254, 267—270
Չինգիզ խան—47, 73
Չորտանյաններ—11, 256

Պապ, եպիսկոպոսական զորքի հրամանատար—133
Պապաք, որդի Պռոշի—288—291, 293—295
Պաստամ, որդի Ջալալի—240, 242
Պատկանյան Ք.—23
Պենա, որդի Սմբատի—267
Պետրոս, խաչքար կանգնեցնող—289, 290
Պետրոս, ոմն—232
Պետրուշևսկի Ի.—21, 29, 30, 74, 78, 80, 85, 91, 92, 95, 96, 107—109, 114, 115, 118—133, 135, 137—140, 143, 145, 154—156, 158, 159, 161, 162, 166
Պողոս, գրիչ—267
Պողոս Կիլիկեցի, գրիչ—265
Պողոս, վարդապետ—57
Պողոսյան Ս.—27
Պռոշ Խաղբակյան—185, 193, 255, 256, 287—290, 292—295, 297—299, 301, 303, 306
Պռոշ, որդի Վահրամի, թոռ Հասան Գ-ի—203, 205, 206, 210, 236, 238
Պռոշյան—293, 302, 304—306
Պռոշյան-Խաղբակյան—193
Պռոշյաններ—168, 287, 294, 301—303, 305—308
Պռոշյանք—22, 169, 170, 249, 287
Պուղիկ—213, 215
Պուղիկյան, իշխանական ճյուղ—214
Պուտաղ, նվիրատու—241
Պուտուրյան Ա.—333, 334

Ջալալ Բ, որդի Աթաբակի—231, 232
Ջալալ Գ.—232—235, 238, 245, 246
Ջալալ Դ, հայր Աղաբատի—209, 237—242
Ջալալ, որդի Լիպարիտ Օրբելյանի—250
Ջալալ, որդի Տարսայիճ Օրբելյանի—266
Ջալալ բեկ, հայր Գրիգոր Մակվեցու—282
Ջալալադավլե, որդի Ջալալի—237
Ջալալյան—246
Ջալալյաններ—232, 238
Ջալալյանց Ս.—23, 178, 179, 181, 189, 196, 197, 225, 241, 244, 294
Ջահանգիր, որդի Համզայի—15, 104, 105, 107, 113, 114, 159
Ջահանշահ, որդի Ղարա Յուսուֆի—15, 36, 87, 96, 97, 99—121, 145, 150, 151, 159, 162, 163, 208, 209, 212, 218, 247, 288, 331
Ջահանշահ Բահաթուր, Լանկ-Թամուրի զորապետ—61
Ջահանշահյաններ—214
Ջահանշահ, Ջահանշե, որդի Հասան Գ Դոփյանի—54, 201, 203—206, 213, 215, 218, 239, 280
Ջահանշե, որդի Մեհրապի—240
Ջահանշենց, Ջահանշոնց տուն—205, 300
Ջահանշեներ—203—205, 208
Ջամալարի, ամն—178
Ջանխաթուն, մայր Մանվել Ա. Բջնեցու—319
Ջելաիրյաններ—11, 79
Ջոզեֆ Բարբարո, ճանապարհորդ—19
Ջոնգա, որդի Շահռուխի—98
Ջովանի Մարիա Անջիոլելո, ճանապարհորդ—20, 126, 127, 130
Ջումա, որդի Էալի Ա-ի—255, 256, 297, 298, 300
Ջումա, որդի Էալի Բ-ի—285, 302—304, 306, 308

Ռուբեն, Սասունի իշխաններից—335
Ռուբրուկ Վ., ճանապարհորդ—38

Ռուզուքան, կին Ամիր Հասան Բ-ի—299, 301
Ռուզուքան, կին Պապաքի—289
Ռուստամ, թոռ Լանկ-Թամուրի—61
Ռուստամ բեկ, Ջահանշահի զորապետ—114
Ռուստամ Օրբելյան—6, 18, 27, 280, 282, 283

Սադուն, թոռ Հասան Գ-ի—54, 201, 203, 239
Սակո, որդի Վախթանգի—171—176
Սակայաններ—173, 174
Սահանդ, Արծկեի կառավարող—55
Սամուել Անեցի—49—51, 53, 57, 60, 63—66, 272, 273, 325
Սասանա, ձեռնավոր—191
Սասանաթա, որդի Աղիզբեկ Ա-ի—312
Սասանյան—40, 41
Սավալա, Բաղեշի քուրդ ամիրա—90, 94
Սավալու բեկ, Ջահանշահի զորապետ—114
Սարանդրինոս, որդի Աղիզբեկ Ա-ի—312
Սարգիս, աղբյուր շինող, խաչքար կանգնեցնող—289
Սարգիս, գրիչ—64, 275
Սարգիս, գրիչ—99
Սարգիս, գրիչ—150
Սարգիս, գրիչ—232, 233
Սարգիս, գրիչ—254, 299
Սարգիս, գրիչ—244
Սարգիս, գրիչ—263
Սարգիս, եկեղեցի կառուցող—194
Սարգիս, եղբորորդի Մանվել Ա-ի—319, 320
Սարգիս Երանելի, վաճառական—233
Սարգիս կաթողիկոս—144, 284, 303, 304
Սարգիս Սևանցի, կաթողիկոս—32, 43
Սարգիս, հայրապետ Գետամեջի վանքի—243
Սարգիս Մեծ Զաքարյան—169, 178—181
Սարգիս եպիսկոպոս, որդի Գրիգոր Բ-ի—188, 197—199, 210
Սարգիս, որդի Հասան Գ-ի—54, 201, 239
Սարգիս, որդի Վահրամի—199
Սարգիս, որդի Չեսարի—268
Սարգիս, պարոն—325
Սարգիս քահանա, նվիրատու—232
Սարգիս, քահանայապետ Վայոց Ձորի—288
Սարգսյան Ն.—23
Սարկավագ, նվիրատու—199
Սեյիդ-Ալի, քուրդ ասպատակող—109, 331
Սեյիդ-Ալի, որդի Շեյխ Հեյդարի—138
Սեյիդ-Հայդար, տեր Արդաբիլի—120
Սեյտի (Սայտուն, Սատտո), որդի Շահնշահ Դոփյանի—203—207, 209, 210, 212, 217, 236, 238, 242—245
Սենեքերիմանց ազգ—268
Սեֆեդին, հայր Ստեփանոսի—326
Սեֆիդիններ, տոհմ—326
Սեֆյաններ, Սեֆյան տոհմ—35, 36, 134, 135, 145
Սիմեոն, նվիրատու—206
Սիմոն Աշրիկանեցի—312—314
Սիմոն, գրիչ—274

Սիսակյան տուն—289
Սմբատ, նվիրատու—242
Սմբատ, որդի Լիպարիտի, թոռ Էլիկումի—191, 192, 252, 255, 263
Սմբատ, որդի Լիպարիտի, թոռ Իվանեի—266—268
Սմբատ, որդի Իվանեի, թոռ Բուրթելի—51, 78, 270, 273—279, 285
Սմբատ, որդի Ստեփանոս—Իվանեի—285
Սմբատ, որդի Տարսայիճի, թոռ Գորգունի—284, 285
Սմբատ, որդի Բեշքենի—99
Սմբատ, հիշված վարդագույն պատանի ձևով—258, 259
Սմբատ, որդի Սակոյի—175
Սմբատ Սեֆիդինյան—6, 331—333
Սմբատյանց Մ.—23, 189, 225, 258, 318
Սոֆի խալիլ, Ուզուն-Հասանի զորապետ—122, 132, 135—137
Սպանդիար (Սպան), որդի Ղարա Յուսուֆի—10, 86, 87
Ստեփանոս, կաթողիկոս Աղթամարի—326—328
Ստեփանոս, կաթողիկոս Աղթամարի—328
Ստեփանոս, կաթողիկոս Աղթամարի—332, 333
Ստեփանոս, գրիչ—12
Ստեփանոս, գրիչ—133
Ստեփանոս, գրիչ—151
Ստեփանոս, գրիչ—207, 208
Ստեփանոս, գրիչ—305
Ստեփանոս, գրիչ—151
Ստեփանոս, գրիչ—327
Ստեփանոս, գրիչ—162
Ստեփանոս, եկեղեցի կառուցող—194
Ստեփանոս Անեցի—153
Ստեփանոս եպիսկոպոս, ժամանակագիր—191
Ստեփանոս, եպիսկոպոս Սյունյաց—44
Ստեփանոս, եպիսկոպոս Գեղարդի—303, 305, 306
Ստեփանոս եպիսկոպոս (Սուլթանշահ, տեր Սուլթանշէ), որդի Իվանեի—270—272
Ստեփանոս-Իվանե, եպիսկոպոս, որդի Սմբատի—274, 275, 278, 279, 285
Ստեփանոս Ոշականցի—330
Ստեփանոս Սյունեցի—44
Ստեփանոս-Տարսայիճ, որդի Ջալալի—264—266, 299
Ստեփանոս Օրբելյան, պատմիչ—32, 43, 197, 250—254, 262—264, 289, 293, 295
Սրվանձտյան Գ.—23
Սուլեյման Բեկ Բիժան-Օղլի, Ուզուն-Հասանի զորապետ—121, 122, 132, 134, 136, 137
Սուլեյման Չելեբի, որդի Բայազետ I-ի—65
Սուլեյման Սուֆի, խորեզմի շահ—49
Սուլեյման Հուսեյն, թոռ Ջահանշահի—145
Սուսա, կին Փենա Օրբելյանի—267
Սևադա Խաչենցի—185, 186

Վալքան, Սերբիայի Լազար թագավորի որդի—68
Վախթանգ, ամն—176

Վախթանգ (Վաղթանգ), Հաթերքի իշխան—171—174
Վախթանգ, հայր Հասան-Ջալալի—228
Վախթանգ, նվիրատու—242
Վախթանգ, որդի Հասան-Ջալալի—233, 234
Վախթանգ-Սակր—175
Վախթանգյան, Վախթանգյաններ—176, 228, 234
Վախախ, կին Բուրթելի—256, 257, 259, 260, 270
Վախվախ, կին Աղբուղա Ա-ի—310, 313
Վահան, գրիչ—269
Վահրամ, ավետարան գնող—271
Վահրամ, խաչքար կանգնեցնող—291
Վահրամ, հայր Գրիգորի—183
Վահրամ Շահունեցի—269, 270, 299
Վահրամ, որդի Վախթանգ-Սակրի—175
Վահրամ, որդի Գրիգոր Դոփյանի—199
Վահրամ, որդի Հասան Դոփյանի (Ծարեցի)—200, 202—206, 236, 238
Վահրամ, որդի Հասան Դ-ի—200
Վահրամյաններ—28, 29, 173
Վանական, գրիչ—141, 153, 306, 307
Վանական, վարդապետ Բջնի—318
Վանական Գ, եպիսկոպոս Բջնի—321
Վաչագան, թագավոր—40, 41
Վաչե, իշխան Ամբերդի—323, 324
Վաչուտ, պարոն—325
Վաչուտյան, Վաչուտյաններ—314, 315, 322, 324—326
Վասակ, հայր Պռոշ իշխանի—255, 287, 293, 294, 297
Վասակ, որդի Պռոշ իշխանի—288
Վասակ, որդի Էաչի Պռոշյանի—297, 298
Վասակ Մանուկ—37
Վարդ, Համշենի իշխան—336
Վարդ, որդի Ջհաար Օրբելյանի—268
Վարդան, գրիչ—106
Վարդան, գրիչ—112, 332
Վարդան, գրիչ—149
Վարդան, իշխան, հայր Խորիշահի—268
Վարդան, որդի Ջալալի—239
Վարդան, պատմիչ—173, 174, 177, 185
Վարդանանց—297
Վելիչան, որդի Ճանկրիդուլի—219, 220
Վելիչան, որդի Սայտունի—243—245
Վրթանես, կրոնավոր—317

Տահիր, որդի Ահմադ Ջելաիրյանի—63
Տանձիկաց Ավագ, ավետարան գնող—279
Տաշյան Հ.—321
Տայիր, հայր Քուրդ Ամբերդեցու—323, 324
Տալուղան, կին Փիրհամզայի—224
Տարսայիճ, որդի Գոգունի—273, 274, 278, 284, 285
Տարսայիճ Օրբելյան—169, 170, 197, 198, 249, 250, 252, 254, 262, 263, 266, 289
Տարսայիճենց, ազգ—270
Տեր-Հովհաննիսյան Ա.—63
Տեր-Մովսեսյան Մ.—187
Տիզենհաուզեն Վ.—52, 61, 67
Տիրատուր, վարդապետ—272
Տիրացու, կրոնավոր—70
Տիրի, ամն—208
Տոմաշեկ Վ.—335
Տուղրիլ բեկ—47
Տուրսուն, որդի Աղբուղայի—203—207, 209—211, 236, 238
Տուրսուն, հայր Միրզալու—240, 245
Տուրսուն, որդի Միրզալու—245, 246

Ուզուն-Հասան (Հասան պակ)—15, 20, 35, 105—108, 113—121, 123—132, 134, 135, 140, 146, 151, 163, 248, 302
Ուլուբաբյան Բ.—28, 29, 169—175, 177—179, 181, 183, 185—187, 189—191, 193—195, 202, 203, 209—211, 213, 214, 217, 220—222, 228, 229, 231—239, 242—246
Ուլուբեկ, ամն—213, 215
Ուլուբեկ, որդի Մեջիթի—235
Ուլուբեկ, որդի Ջումա Պռոշյանի—303
Ուլուբեկենց ճյուղ—203, 204
Ուլուբեկյաններ—214
Ուլու խաթուն, կին Հասան Երեցի—323
Ուղրլու Մահմադ, որդի Ուզուն-Հասանի—20, 127, 129, 130, 139
Ուվայիս բեկ, եղբայր Ուզուն-Հասանի—113
Ուքան, որդի Վահրամ Շահունեցու—269, 270

Փախրադուլա, որդի Կյապարիսի—250
Փաշա, հայր Ջալալի—337
Փափազյան Հ.—17, 18, 27, 247, 280, 282, 283
Փիլիփոս գրիչ—134
Փիր-Ալի, Ամյուկ բերդի տեր—149
Փիր-Ահմադ, Ղարամանիայի կառավարող—124, 125, 127
Փիր բեկ, քուրդ ապստամբող—95, 114, 330
Փիր-Բուդաղ, որդի Ղարա-Յուսուֆի—83, 111, 112
Փիրհամզա, Գավառի իշխան—213, 215, 222—224
Փիրհամզա, նվիրատու—242
Փիր-Հուսեյն, Բաղդադի կառավարող—149
Փիր-Օմար, Երզնկայի կառավարող—83

Քարիմ, քուրդ աղա—122
Քուրդ Ամբերդցի—173, 187, 202, 322—324
Քուրդ, հայր Տայիրի—323, 324
Քուրդ պարոն, Վաչուտյան—325
Քուրդ, որդի Ջհաար Օրբելյանի—268

Օհան Երեց, եկեղեցի կառուցող—186
Օհաննես, եկեղեցի կառուցող—186
Օհաննես Թմոգվեցի, գրիչ—101
Օմար բեկ, Ուզուն-Հասանի զորապետ—124

Օսմանյան—20, 99, 123, 124, 127, 129, 335
Օրբելի Հ.—16, 231, 232, 235, 236, 238, 239, 240, 242, 244—246
Օրբելյան—16, 26, 80, 100, 230, 251, 261, 273, 284
Օրբելյաններ—28, 29, 166, 168, 170, 216, 249—253, 258, 259, 262, 268—271, 273, 279, 283—285, 302, 304, 309, 316
Օրբելյանց—253, 262, 268, 275, 281
Օրմանյան Մ.—61, 112, 353

Ֆարաջ, Եգիպտոսի սուլթան—62, 76
Ֆարուխ Յասար, շիրվանշահ—120, 134, 137, 138

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ագուլիս—45
Աբխազիա—69, 102
Ադրբեջան—30—39, 74, 115, 155
Ադիգրենդ, գյուղ—143
Ալադաղ, Մաղկանց լեռներ—158
Ալաշկերտ—19, 72, 82, 165
Ալաշկերտի դաշտ—60
Ալբանիա—41
Ալեքսանդրիա—154
Ալմաձա, հողակտոր—246
Ախալցխա—82, 99, 103, 139, 140, 162, 277
Ախվանց, գյուղ—109, 331
Ական, ավան—190, 195—197, 206, 212, 217
Ահար—50, 139
Ապարանք, հողակտոր—296
Աղանց, գյուղ—18, 283
Աղավ, անապատ—289, 291
Աղբակ, գավառ—89, 144, 152
Աղթամար—23, 70, 88, 90, 95, 103, 106, 109, 112, 144, 149, 150, 164, 274, 326—334
Աղի, գյուղ—62, 94
Աղհոփա, գյուղ—9, 143
Աղջաղալա, բերդ—տե՛ս Տիգրանա բերդ
Աղջոց վանք—106
Աղստև, գավառ—165
Աղվանից, Աղուանք, բերդ Խլաթի մոտ—87, 88
Աղվանք, Աղվանից աշխարհ, նահանգ, իշխանություն—23, 33, 39—43, 200, 209, 212, 218, 234, 241, 242, 246—248
Ամասիա—20, 127
Ամաստրիս, քաղաք—123
Ամենափրկիչ վանք Հավուց Թառի—247
Ամիդ—60, 94, 104, 105, 114, 142, 146
Ամիդի դաշտ—136
Ամյուկ, բերդ—93, 113, 136, 149
Անբերդ—322—324
Անգեղակոթ, գյուղ—78, 276
Անդրկասպյան երկիր—59
Անդրկովկաս—33, 41, 42, 47, 49, 69, 81, 157, 273
Անթիլիաս—22, 249, 287
Անի—61

Անի, գավառ—233
Անկարա—67, 68
Անկեղի, գյուղ ?—263
Այնթափ—134
Այրիվանք—տե՛ս Գեղարդ
Այրարատյան նահանգ—322, 324
Այրարատ—21, 88, 95, 96, 110, 181, 317, 318, 322
Աշմանա, հողակտոր—244
Աշտարակ—317
Առան—40, 79
Առաջաձոր, գյուղ—236
Առաջավոր Ասիա—156
Առնեղ—տե՛ս Հացառատ
Առորիր—63, 67, 84, 88
Առափնակ, գյուղ—142
Ավագ վանք—151
Ավանշենց այգի—267
Ավրեղ, գավառ—88
Ավնիկ բերդ—60, 64, 67, 72, 76, 86, 143
Ատրենի—196
Ատրպատական—33, 39, 75—79, 81, 83, 86, 95, 97, 99, 110, 114, 115, 117—120, 145, 155, 156
Արաբական Իրաք—79, 120, 145
Արաբական խալիֆաթ, խալիֆաթ—37, 41—44
Արագած—325
Արագածոտն—283, 322
Արած, գավառ—250
Արայի լեռ—310
Արայա, հողակտոր—240
Արատեսի վանք—254
Արարատյան գավառ, դաշտ, երկիր 6, 12, 23, 27, 50, 61, 77, 95, 98, 101, 110, 112, 152, 165, 200, 235, 282, 315, 317, 324
Արաքս, գետ—42, 43, 46, 54, 120
Ար[...]յան, մենաստան—255
Ար[...]ճիք (Ագուլիս), գավառ—43
Արդաբիլ—32, 36, 75, 79, 120, 134, 145
Արենի, գյուղ—259, 261, 264
Արևելյան Անդրկովկաս—156
Արևելյան Իրան—49, 107, 109
Արևելյան Հայաստան—27, 54, 169, 178, 187, 234, 235, 248, 253, 280, 282, 283, 306, 319, 322, 325
Արևելյան Պարսկաստան—108, 110
Արևելյան Վրաստան—52
Արևիք, գավառ—43
Արևմտյան Հայաստան—8, 28, 54, 130, 162, 184, 196
Արևհասանց, հողակտոր—183
Արևմտյան Իրան—106, 117
Արևմտյան Պարսկաստան—119
Արզրում—տե՛ս Էրզրում
Արծափ—96
Արծկե—10, 55, 56, 83, 86, 90, 94, 122, 144, 145
Արծկո երկիր—136
Արկազ, գյուղ—294
Արղն—104
Արճեշ—56, 61, 83, 86, 90, 94, 111, 113, 120, 143, 159, 163
Արճեշ, գավառ—150, 160
Արմենիկ, փոքր քաղաք—326
Արշարունիք—61
Արցախ—7, 10, 23, 36, 39, 44, 53, 171, 190, 195, 196, 199, 208, 230, 233, 234, 240
Արցախ-Ուտիք—41
Արփա, գետ—269

Բաբելոն—82, 120

Բարերդ—104, 128
Բաղարան—12, 149
Բաղարիչ, գյուղ—148
Բագրատունի բերդ (Անի)—61
Բագրևանդ, գավառ—82, 85
Բաղարշալ—138, 141, 153
Բալկանյան Թերակղզի—123
Բախերի Մատաղիս, հողակտոր ?—174
Բաղդադ—49, 59, 60, 63, 67, 79, 85—87, 102, 103, 107, 108, 112, 154, 185
Բաղեշ, քաղաք—55, 56, 76, 86, 89, 90, 108, 111, 114, 121, 162
Բաղեշի շրջան—144
Բաղք, գավառ—43
Բայազետ, քաղաք—54, 72
Բասենի, գավառ, դաշտ—60, 76, 86, 87, 143
Բարդուղ լեռ—50
Բաքու—23, 30, 35—37, 39, 42, 74, 138, 171
Բեհիսար, գյուղ?—126
Բեմի, հողակտոր—242
Բեյրութ—61
Բեսարաբիա—123
Բերդաձոր—174, 175, 196
Բերդավանք, գյուղ—272
Բերդի, հողակտոր—261
Բզնունյաց երկիր—122
Բիթլիս—60, 76, 80, 122
Բյուրական—337
Բջնի—50—52, 200, 235, 273, 312, 318, 321, 322, 325, 338
Բոլորաբերդ, անապատ—տե՛ս Սպիտակավոր Աստվածածին
Բոխտան երկիր—122

Գայլ, գետ—104
Գանձակ, գավառ, երկիր—44, 241, 250
Գանձասարի վանք—81, 231, 232, 235, 237—240, 242, 244, 246, 248, 277
Գառնի—51, 273, 325
Գավաշ, գավառ—109, 136, 331
Գավառ—222, 224, 225
Գարդման, գավառ—40
Գեղամա ծովակ—196, 197, 207, 212, 217
Գեղարդ—288—290, 303—306
Գեղարքունիք, Գեղարքունի, Գեղամա գավառ, երկիր, տուն—23, 43, 138, 213—215, 218, 222, 249, 258, 318
Գետամեջի վանք—54, 201—203, 206, 207, 209, 212, 218, 236, 238, 241, 243, 244
Գիլան—108
Գլակա վանք (Ս. Կարապետ)—125
Գլաձոր—254—257, 259, 264, 265, 288, 297—300
Գյարուտ, գյուղատեղ—291
Գյանջա—32, 39
Գյումուր, գյուղ—288—291
Գողթ—23, 42, 43
Գորատափ, այգի—183
Գորի—129
Գուգարք—23, 138

Դադի վանք—171, 178, 180—182, 186—188, 191—194, 197, 199, 202, 204, 210, 211
Դաշտ, գյուղ—328
Դաշտային Ղարաբաղ—119
Դաշքենդ, գյուղ—189, 194, 195
Դամասկոս—67
Դավթենց, այգի—300
Դարի գլուխ, գերեզմանոց—224
Դերբենտ, քաղաք—95
Դերբենդի ամիրայություն—41
Դերբենտ—Ձոլ—42, 63
Դերջան, Ներքին, Վերին—20, 98, 104, 125, 129
Դիադին, գավառ—54
Դիարբեքիր—76, 83, 137
Դսեղ—138
Դվանոց, գավառ—196

Եգիպտոս—15, 62, 63, 66, 68, 99, 126
Եղնանատի, հողակտոր ?—174
Եղեգիս, ավան—250, 254, 266, 273, 284
Եղեգյաց անապատ—285
Եղեգյաց գավառ—99, 159
Եղեգյաց գետ—269
Եղեգյաց ձոր—269
Եղիան, գյուղ—263
Եղիկյան Ձոր, գյուղ—263
Եղվարդ—168, 309—317
Երասխ գետ—տե՛ս Արաքս գետ
Երևան—11—13, 15—17, 19, 24, 25, 27, 28, 39, 41, 43, 45, 50, 51, 159, 171, 190, 200, 231, 235, 236, 246, 249, 252, 271, 293, 321, 325
Երզնկա, Յեզնկա—20, 54, 60, 64, 67, 72, 76, 78, 83, 103, 104, 107, 108, 116, 125, 127, 139, 147, 159
Երզնկայի դաշտ—127
Երիշատ, գավառ—43
Երնջակ, բերդ—50, 61, 63, 89, 92, 96, 99, 136, 137, 249, 280
Երնջակ, գավառ—23, 43
Երուսաղեմ—22, 63, 66
Եփրատ, գետ—66, 120, 136, 158

Զաքարյան Հայաստան—154
Զեյթուն—7
Զենջ, քաղաք—91
Զող, Սողք—188
Զոել, բերդ Շատախում—102

Էջմիածին—6, 9, 18, 22, 23, 27, 110, 144, 171, 282, 331, 332
Էրզրում—54, 72, 86, 96, 97, 138, 143
Էրնկան, գյուղ—152

Թալիշ—254
Թանատի վանք—267, 287, 290, 294, 298
Թավրիզ—19, 20, 32, 49—51, 72, 75—84, 86, 87, 89, 92, 96, 97, 99, 100 109, 110, 118, 119, 130, 131, 135, 137—146, 163, 260, 271—273, 276, 280, 283, 305
Թբիլիսի—66, 273
Թեոդուպոլիս—տե՛ս Կարին
Թեղենյանց սար—310
Թերեք, գետ—62
Թիֆլիս—9, 23, 179
Թլկուրան—104
Թղկերա, այգի—174
Թոխատ—20, 66, 87, 98, 125, 127
Թորթում—72

Իշխանավանք, Վարդենիկ գյուղի—291
Իսպանիա—72
Իսպիր, Սպեր—72
Իրան—17, 30, 33, 49, 140, 273
Իրաք—59, 63, 117, 135, 136, 140

Լիբանան—249, 287
Լիմ անապատ, կղզի—93, 113, 327

Լոռի—7, 99, 100, 138, 165, 179, 280, 281, 283, 337
Լորիստան—120
Լևա վանք—299

Խաթրավանք—172, 176, 178, 182, 183, 186, 197, 198, 210, 211, 233, 234
Խանգահ, այգի—257
Խաչաձոր—289, 291
Խաչեն—28, 29, 169, 177, 191, 228, 231, 233, 236—238, 243, 244
Խաչենաձոր—243
Խաչենախոռ, գավառ—43
Խառաբաստի վանք—9, 10, 64, 150
Խարբերդ—98, 104
Խիզան—327, 330
Խլաթ—6, 56, 87, 89, 108, 111, 122
Խլաթի բերդ—88
Խնձորաբակ, գյուղ ?—172
Խնուսի դաշտ—55
Խոյ—72, 110, 111, 132, 331
Խոյի դաշտ—119
Խոտ, գյուղ—18
Խոտակերաց Սուրբ Նշան—289, 290, 293, 295
Խորասան—59, 95, 99, 102, 103, 108, 113, 120, 157
Խորեզմ—49
Խորուագետ, գավառ—196
Խատորալեղ, գյուղ—300
Խուց, հողակտոր—202
Խութ, գավառ—55, 56
Խութի լեռներ—55
Խուժկա վանք—336

Ծակ խաչ, հողակտոր—239
Ծակքար ձորակ—307
Ծաղկավան, հողակտոր—245
Ծաղկոտն, գավառ—54
Ծար, գավառ—53, 54, 173, 175, 187, 190, 196, 201, 203, 213—215, 218, 231, 233, 234, 236, 238, 239, 243, 272
Ծար, գյուղ—186, 190, 195, 218, 230
Ծարի վանք—տե՛ս Գետամեջի վանք
Ծղար, գյուղ—88
Ծովատեղ, հողակտոր—188, 194

Կալեր, գավառ—196
Կախեթիա—165
Կակաչանոց, հողակտոր—245
Կահիրե—154
Կամախ, քաղաք—66, 103, 104
Կամո, շրջան—222
Կամո, քաղաք—224, 226
Կայեն գավառ—250
Կանաչավոր, գյուղ—192
Կաշկա-Դար, թուման—48
Կապույտ բերդ—52
Կասպիականի ափ—119, 120
Կասպից ծով—41
Կատալիա—19
Կավերդին, ամրոց—80
Կարբի, գյուղ—50, 51, 273, 323, 325
Կարին, Կարնո, Կանու քաղաք—54, 55, 64, 67, 86, 87, 143, 185
Կարմիր, գյուղ—222, 223
Կարմրաշեն, գյուղ—251, 284
Կարնո դաշտ—60
Կարս, բերդ—61, 235
Կեղի—104
Կեշ, քաղաք—48
Կեչառիս, վանք—289, 338
Կիլիկիա—67
Կիպրոս—124
Կողարակ, գավառ—43

Կողբ—50, 51, 61, 273, 325
Կոճկան, ավան—104
Կոնիա, քաղաք—125, 126
Կոստանդնուպոլիս, Կ. Պոլիս—23, 123, 130, 154
Կովկաս—120, 179
Կովկասյան Աղվանք—42
Կովկասյան լեռներ—41
Կովառն, գյուղ—134
Կոտայք, գավառ, երկիր—50, 250, 282, 305, 306
Կտուց անապատ—149
Կունճի, հողակտոր—243
Կուր, Աղվանից գետ—39, 41, 45, 52, 80, 120, 160
Կուրի վանք—288, 297

Հագարաման, այգի—323
Հաթերք—171—176, 186, 193, 206, 207, 212, 217
Հալեպ—66, 67
Հալիձոր, գյուղ—18
Հակուգենց մատաղիս, այգի—178
Հաղբատ, Հաղպատ վանք—101, 144, 177—179, 181, 182, 186, 198, 210
Համադան—63, 135, 136
Համշեն—26, 335, 336
Հայաստան—5, 7, 9—17, 19—31, 33, 36, 38, 41, 43, 45—47, 49—54, 57—59, 62—64, 69, 71—74, 76, 77, 79, 81, 82, 85—87, 92, 94, 95, 98, 100, 104, 114, 120, 126, 127, 130, 133, 136, 138, 139, 141, 142, 145, 154—159, 161—163, 166—168, 178, 184, 192, 200, 208, 211, 235, 237, 249—251, 256, 262, 280, 283, 287, 294, 303, 308, 310, 319, 320, 323, 331, 338
Հայկական լեռնաշխարհ—158, 161
Հայկական Պար—54
Հայոց աշխարհ—տե՛ս Հայաստան
Հայոց Արևելից կողմ—39
Հայրավանք—260
Հանդաբերդ, գավառ—190, 195—197, 206, 207, 212, 217
Հառիճի վանք—180, 181
Հասանի, գետ—269
Հասկարակ, գավառ—196
Հավապտուկ, վանք—231
Հավուց Թառ—22, 247, 336
Հարավային Աղրբեջան—տե՛ս Ատրպատական
Հարավային Հայաստան—13, 54, 91, 93, 99, 121, 136, 142, 143, 162
Հացառատ, գյուղ—224, 225
Հեր, գավառ, քաղաք—103, 295
Հերաթ—49, 96, 108, 109
Հերհեր, գյուղ—257, 267, 269, 284
Հերմոնի վանք—257, 273, 278, 284
Հեշատ—144
Հին Սալի—266
Հյուսիսային Կովկաս—61, 62
Հյուսիսային Միջագետք—83
Հնդկական Օվկիանոս—120
Հնդկաստան—63
Հոռոմայր, գյուղ—337
Հոռոմաց աշխարհ, տուն 125, 127, 184
Հովհաննավանք—28, 180, 181, 314, 316, 324—326
Հորս, գյուղ—268, 269
Հռոմ—124
Հռոմկլա, քաղաք—83
Հունգարիա—124

Ջաղունանց, հողակտոր—188, 194, 198
Ջորագյուղ—307
Ջորավանք—141, 153, 306—308

Ղազովա, քաղաք—127
Ղազվին, քաղաք—91, 108
Ղարաբաղ—34, 39, 67, 69, 73—75, 80, 118, 135, 157, 158
Ղարաբաղի լեռներ—158
Ղարադաղ—34
Ղարամանյա—123—125, 127
Ղափան—107
Ղոչ, դաշտ—145
Ղրիմ—166

Ճակատ, գավառ—50, 61
Ճահուկ, ավան—249
Ճահուկ, գավառ—43
Ճանդուրթարան լեռներ—269
Ճապաղջուր, գավառ—55, 114, 115
Ճալի, հողակտոր—195
Ճարեցանց, հողակտոր—174
Ճոխանց, գավառ—196

Մազմանեց, այգի—267
Մալաթիա—64—67, 127
Մալազկերտի վանք—241
Մակու, բերդ, քաղաք—34, 72, 77, 91, 141, 166, 338
Մայրաքաղաք կամ Տիրամայրի վանք—233—235
Մանազկերտ—136
Մանածկերտի դաշտ—136
Մավերաննահր—48, 49
Մատագիս, հողակտոր—172
Մատենադարան—17, 18, 24—26, 169, 213, 247, 249, 255, 271, 282, 283, 327, 336

Մարաղա—32
Մարանդ—77, 118, 119
Մարաստան—83
Մարգումակ, գյուղ—196
Մարտակերտ, շրջան—174
Մարտիրոս, գյուղ—287, 290, 294
Մարտունի, շրջան—291, 307
Մարութա սար—56
Մաքենացոց վանք—153
Մեծարանց, Մեծ կողմանց, Մեծկունեից Ս. Հակոբի վանք—231—234, 241, 242
Մեծ Հայք—23
Մեծոփա վանք—9, 150, 276
Մերդին—60, 67, 78, 86, 87, 104, 105, 142, 161
Միջագետք—31, 59, 60, 62, 63, 66, 67, 79, 84, 85, 87, 102, 185, 196, 230
Միջերկրականի ափ—123, 125
Միջին Ասիա—30, 31, 49, 73, 157
Միջին Հունաստան—123
Մծբին—60
Մոկաց գավառ, երկիր—149, 328
Մոսկվա—27, 57, 179
Մսերչի, հողակտոր—245
Մար—62, 132, 266
Մուղան—52, 61, 62, 74, 80, 158, 200, 251, 273
Մուղնի, գյուղ—12, 152, 314
Մուշ, Մշո բերդ, դաշտ—55, 56, 60, 78, 84, 108, 111, 115—117, 122, 124
Մուսուլ—60, 86, 87
Մուֆարղին—185

Յանկարա կուց, հողակտոր—178
Յաոինճ խաչի տափ, այգի—198

Նախապարտա, այգի ?—300
Նախիջևան, Նախճավան, Նախչուան—23, 32, 34, 38, 39, 42—45, 51, 77, 80, 140, 145, 249, 272, 273
Նախիջևանի ԽՍՍՀ—45
Նեապոլի թագավորություն—124
Ներքին Խաչեն—168, 173, 209, 228, 229, 231—234, 236—240, 243, 247, 248
Նիգ, գավառ—280
Նիժ, ավան—212
Նիկսար, ամրոց—127
Նյու Յորք—22
Նորավանք Ամաղու—198, 252, 256, 257, 264, 266, 268
Նոր Բայազետ—23
Նորգեղի—316

Շահապոնք, ամրոց—53, 302
Շահապոնք, գավառ—294, 295
Շամ—65, 120, 134
Շամախի—19, 32, 134, 140, 141
Շամբի Գոլա, բնակավայր—79
Շամշուլդե, ամրոց-քաղաք—15, 100—102, 162
Շապին Գարահիսար—20, 127
Շատվան, գյուղ—164, 332, 333
Շարուր, Շարուրի դաշտ—77, 145
Շարուր-Դարալագյազ—23
Շաքի, քաղաք—75, 79
Շաքիի ամիրայություն—41
Շենուհեր, գյուղ—18
Շիրազ—107, 108, 111, 112, 120, 130, 144
Շիրակ—181
Շիրևան, բնակավայր—104
Շիրվան—39—42, 52, 61, 80, 82, 95, 96, 134, 137, 140 145, 155, 15
Շիրվանի ամիրայություն—41
Շողվագա, գավառ—190, 195, 196, 207
Շողվագա, գյուղ—207, 222, 307
Շուշի—241

Ոզմ, գավառ—7
Ոսկե Հորդա—59, 200, 235
Ոստան—49, 62, 65, 106, 109, 136, 142, 150, 159, 160, 329, 332
Ոստան, գավառ—89
Որոտան բերդ—50, 51, 235, 272, 277
Որոտան, գավառ, երկիր—269, 274
Որոտնավանք—254

Չալդրանի դաշտ—86
Չաղաթա, երկիր—108
Չաղատա, գետ—158
Չինաստան—69
Չմշկածագ—151

Պարսկական Իրաք—79, 106, 109, 120, 145
Պարսկական ծոց—120
Պարսկաստան—40, 41, 59, 120, 130, 134, 142, 146, 249
Պելոպոնես—123
Ս. Պետերբուրգ—16, 23

Ջահր, այգի—183
Ջահնենց, այգի—300
Ջաղացաձոր, գավառ—43
Ջաջուռանց, հողակտոր—188, 194
Ջեզիրան—60, 87, 122
Ջենովա—123
Ջերմուկ, բերդ Արևմտյան Հայաստանում—105 106
Ջոթաց, այգի—172

Ջոլբեկանց, հողակտոր—188, 194
Ջուլամերկ, բերդ—102
Ջուղա—43, 45
Ջուղայի դաշտ—139, 140

Ռաուլեն, քաղաք—104
Ռեյ, քաղաք—96, 108
Ռևանդուզ—140
Ռշտունիք, Ռշտունյաց գավառ, երկիր—76, 89, 90, 144, 162, 164, 330

Սալմաստ—91, 144
Սամարղանդ—19, 48, 49, 62, 69, 73, 86, 157, 274
Սամյուր, գետ—52
Սանահին—16, 28, 164, 176, 177—179, 181, 280, 281, 320, 337
Սանահին վանք—տե՛ս Սանահին
Սանջախ, բնակավայր—115, 116
Սասուն—7, 54, 56, 60, 111, 334, 335
Սասունի լեռներ—55, 56
Սատաղ—104
Սարըրուզ, բնակավայր—78
Սարմատա—41
Սեբաստիա, քաղաք—20, 64—67, 98, 134, 148, 159, 160
Սելիմի իշխանություն—267
Սերկևիլի, գյուղ—101, 324, 325
Սիս, քաղաք—6, 9
Սիսական, տուն, նահանգ—72, 225, 249, 255, 260—262, 267, 270, 277, 279
Սիսիան—23
Սյունիվանք—279
Սյունիք—6, 28, 36, 37, 42—44, 50—53, 95, 96, 98, 99, 168, 200, 235, 249, 253, 256, 260, 261, 270—273, 279, 282—284, 293, 299, 301
Սյունյաց, նահանգ, տուն—43, 254, 257, 259, 262—266, 268, 271, 275, 299
Սոդք, Սոթք Գլուխ—188, 190, 195—197, 214, 222
Սոմխեթ—162
Սոֆյան—283
Սպահան, Ասպահան—107, 140
Սպատկեր, անապատ—70
Սվարանց, Սվարի, գյուղ—18, 283
Ստեփանոսի ջաղացադուռ, հողակտոր ?—195
Սրկղունք—285, 297, 302—304
Սուլթանիե—32, 84, 87, 91, 96, 256, 260
Սուլթան-Նուրի, ավան—212
Սուխարա վանք—տե՛ս Խառաբասափի վանք
Սուկավ, լեռ—60, 143
Ս. Աստվածածին Արենիի—259, 261, 264
Ս. Աստվածածին Եղեգիսի—266
Ս. Աստվածածին Ծարի—186, 189, 194, 195, 198, 243
Ս. Աստվածածին Հացունատի—225
Ս. Աստվածածին Հերհերի—257, 267
Ս. Աստվածածին Հերմոնի—257
Ս. Աստվածածին Մարտիրոսի—287, 294
Ս. Գևորգ Աղթամարի—333
Ս. Գևորգ Դաշբենդի—189, 194
Ս. Գևորգ Լիմի—327
Ս. Գևորգ Հովհաննավանքի—314
Ս. Գրիգոր Բերդաձորի—174, 175
Ս. Գրիգոր Լուսավորիչ Նորատուսի—258
Ս. Գրիգոր Խաթրավանքի—183
Ս. Գրիգոր Կարմիրի—223
Ս. Գրիգոր Հաղբատի—177
Ս. Երրորդություն Նախիջևանի—38
Ս. Խաչ Աղթամարի—333
Ս. Կարապետ անապատ—տե՛ս Սպիտակավոր Աստվածածին վանք
Ս. Կարապետ Հովհաննավանքի—314, 324
Ս. Կարապետ Որոտնավանքի—254
Ս. Ղազար (Առաքելոց) վանք, Մշո դաշտում—116
Սուրմարի, Սուրբ Մարի, Սուրմալի—50, 51, 61, 72, 165, 273, 325
Ս. Նշան Արկազի—294
Ս. Նշան Թանատի—296
Ս. Նշան Հաղբատի—177
Ս. Նշան Սեբաստիայի—134
Ս. Սարգիս Ծարի—186, 190, 195, 197, 218
Ս. Ստեփանոս Թանատի—267, 290, 294, 295, 298
Ս. Փրկիչ Աղթամարի—333
Ս. Փրկիչ Մալաթիայի—66
Սևանա լիճ—52, 53, 145
Սևորդյաց ձոր—176, 179

Վախթանկեց, այգի—267
Վաղադին, վանք—266, 276
Վաղարշապատ—23, 51, 169, 208, 302, 304, 309
Վաղուհաս, գյուղ—174, 175
Վաղրան, գյուղ—263
Վայոց ձոր, աշխարհ—41, 43, 54, 141, 168, 250, 256, 267, 270, 272, 284, 285, 287, 289, 291, 299, 301—304, 307, 308
Վան, քաղաք—56, 57, 89, 90, 103, 127, 136, 137, 142, 150, 157, 160, 163—164, 333
Վանա լիճ—55, 56, 76, 87, 93, 110, 113, 144, 162—165, 331
Վանա բերդ, դաշտ—57, 96, 97, 109, 137, 144
Վանանդ, գավառ—43, 61
Վանավան, գյուղ—222
Վասպուրական, Վասպուրականվան—6, 9, 11, 23, 32, 43, 57, 61, 90, 92, 109, 110, 114, 136, 142, 331, 332
Վանիարեան դաշտ, Կուրի ափին—81
Վարազ—76
Վարդաբերանց, հողակտոր ?—235
Վարդենիկ, գյուղ—291
Վենետիկ, Վենետիկի Հանրապետություն—20, 21, 23, 67, 123, 124, 173, 335
Վիեննա—23, 179, 320, 335
Վիրապ (Խոր-Վիրապ)—313
Վերին Խաչեն—168, 172, 173, 176—178, 211, 233, 234, 239
Վերին Հայաստան—տե՛ս Հայաստան
Վերին Նորավանք—262—263, 285
Վրաստան, Վրաց աշխարհ, Վրացտուն—15, 19, 20, 31, 51, 52, 63, 64, 66, 69, 74, 77, 79, 95, 100, 103, 130, 131, 133, 160, 162, 163, 165, 166, 200, 273, 277, 279—281, 285

Տաթևի վանք—18, 43, 63, 76, 78, 213, 215, 222, 224, 247, 260, 263, 274—278, 283, 286
Տայրաղ, գյուղ Ռշտունիքում—162, 330
Տանձի, հողակտոր—296
Տանձաձոր, այգի ?—242

Տանձատափ, գյուղ—18, 283
Տարոն, գավառ—54, 84, 92, 124, 125,
Տարոն-Տուրուբերան—23
Տիգրիս—158, 335
Տիկրանա, բերդ Բագարանի մոտ—12, 115, 149
Տրապիզոն, քաղաք—72, 120, 336
Տրապիզոնի կայսրություն—123

Ցաղաց քարի վանք—261, 266, 269, 297
Ցիպնա վանք՝ Բզնունիքում—10, 90, 107, 329

Ուկրաինա—166
Ուղտանոս, հողակտոր—235
Ուշի, գյուղ—323
Ուչքիլիս—տե՛ս Էջմիածին
Ուշան, բ՞ակավայր—84
Ուտիք—40
Ուրգենչ, քաղաք—49
Ուրծ, գավառ—250
Ուրծ, գյուղ—317
Ուրմիա—90

Փանձաթաղ, գյուղ—267, 307
Փառականք—219, 220
Փարիզ—9, 49, 241
Փորակն, գավառ—43
Փոքր Ասիա—33, 60, 63, 64, 67—69
Փոքր Հայք, Հայս—23, 98, 99
Փոքր Սյունիք, Սյունյաց—196, 206, 207, 212, 217
Փուտուռանց, հողակտոր—245

Քալաարա՞—249
Քանաքեռ—309
Քաջբերունիք, Քաջբերունյաց, գավառ—9, 54, 84, 85, 92, 93, 142
Քառասնից, վանք—178
Քասախ, գետ—310
Քարթվել—165
Քարպա՞, գավառ—89
Քեղվա ձոր—336
Քիրման, Քրման—107, 108, 120
Քուշան—108
Քութահիա—126
Քուրդստան, Քրդստան—76, 79, 114, 120, 143

Օթրար—69
Օհանավանք—309
Օշական—322
Օսմանյան կայսրություն—133
Օրդավատ, գավառ—43

Ֆարս—59, 83, 106, 109, 120, 140, 145։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Աղբյուրների և գրականության համառոտ տեսություն . . . 9

Հայաստանի քաղաքական վիճակը 14-րդ դարի վերջին քառորդին և 15-րդ դարում

Լենկ-Թեմուրի արշավանքները Հայաստան 47

Հայաստանը թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում

Կարա-կոյունլուների իշխանությունը Հայաստանում 74
Ակ-կոյունլուների իշխանությունը Հայաստանում 118
Լենկ-Թեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների հետևանքները հայ ժողովրդի համար 147

Հայկական իշխանական տները 14—15-րդ դարերում

Դոփյան իշխանական տունը 168
Հասան-Ջալալյան իշխանական տունը 228
Օրբելյանների իշխանական տունը 249
Պռոշյանների իշխանական տունը 287
Ագիզբեկյանների իշխանական տունը 309
Ցանկեր 339

ԳԵՂԱՄ ԵՂԻՇԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386—1500 թ.թ.)

Հրատ. խմբագիր Ա. Վ. Հովակիմյան
Տեխ. խմբագիր Լ. Ա. Ազիզբեկյան

Հանձնված է շարվածքի 7. 06. 1996 թ.: Ստորագրված է տպագրության 11. 03. 1997 թ.: Չափը 84×108 1/32: Թուղթ № 1: Տառատեսակ «[illegible]» սովորական, բարձր տպագրություն: Պայմ. 19,2 մամ., տպագր. 22,2 մամուլ: Ներկ. մամուլ 23,2: Հրատ.-հաշվարկ. 21,4 մամուլ: Տպաքանակ 600: Հրատ. №8035: Պատվեր № 16: Գինը պայմանագրային:

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ 23, 15-րդ տողի փոխարեն կարդալ՝ 30 Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1896,

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
26	2 ն.	XLVIII–L	LXII—LXXI
27	3 ն.	1991	1951
60	15 վ.	Մահմուդ	Մահմադ
99	9 ն.	1438 թ.	1437 թ.
207	12 ն.	Բեյլի ուլ-մալ	Բեյթ ուլ-մալ
327	8 վ.	Սեֆեդինյան	Սեֆիդինյան
350	17 վ.	Մանուչոն	Մանողոն
361	19 վ.	Մոծանկենք	Մոծակենք